

ՌՌԻԲԵՆ ՍԵՎԱԿ

ԵՐԿԵՐ



Man 3.8.1900
Cher fiancé.
Mon adoré élève, le 23 juillet 1900
& autres




Old India
TEA-ROOM
GRAND SALON
AU PREMIER
RESTAURATION
Galérie St. François
Lausanne

MAGASIN
DE VENTE
CONFISÈRE - PATISSÈRE
TRÈS GRANDS
VINS FINS & LIQUEURS

TELEPHONE : MAGASIN n° 1226
SALON n° 2958

Li 4



ՈՌԻԲԵՆ ՍԵՎԱԿ

Ե Ր Կ Ե Ր

ՀԱՏՈՐ 2

ԵՐԵՎԱՆ «ԼՈՒՅՍ» 1996

Cet ouvrage a été publié avec le concours de la
FONDATION DES FRERES GHOUKASSIANTZ
(Genève, Suisse).

**Այս գիրքը լույս է տեսնում «Ղուկասյան եղբայրներ»
(Ժնև, Շվեյցարիա) հիմնադրամի օգնությամբ:**

Կազմեց և ծանոթագրեց Ալեքսանդր Թովիչյանը

Սևակ Ռ.

U 411 երկեր (նամակներ): Հատոր 2 (Կազմ. և ծանոթագր. Ալ Թովիչյանը:
Եր.: «Լույս», 1996.— 289 էջ: 8 նկ.:

Ռուբեն Սևակի երկերի երկրորդ հատորն ամբողջությամբ նվիրված է բանաստեղծի հարուստ նամակագրությանը, որի մի պատկանելի, թերևս, առավել արժեքավոր մասն են կազմում իր ապագա կնոջը՝ Յաննի Ապելին հասցեագրված նամակները: Յուրաքանչյուր մեծ բանաստեղծի նամակագրությունն, անշուշտ, նրա ստեղծագործության յուրովի շարունակությունն է, սակայն Ռուբեն Սևակի պարագայում այս սիրային նամակագրությունը պարզապես գրական գլուխգործոցի արժեք է ստանում: Սա իսկապես մի գեղեցիկ, բարձրարժեք սիրավեպ է, որի նմանը կարող ենք գտնել եվրոպական մեծ արվեստագետների՝ Շոպենի, Ժորժ Սանդի, Լիստի, Չայկովսկու և այլոց նամակագրության մեջ:

Այս հատորում ներկայացվող Ռուբեն Սևակի նամակների երեք թաղանթից ավելին լույս է տեսնում առաջին անգամ:

U 4702080100(44) 191 96
702 (01) 96

ԳՄԴ 8421-4

ISBN 5-545-01322-9

© Ալ. Է. Թովիչյան, կազմելու և ծանոթագրելու համար, 1996

Հրանտս

... Միջերկրականի ավազներեն կդառնամ. այս քաղաքը չեմ գիտեր ի՞նչ մ'ունի, որ կհուսահատեցնե զիս. ու ծովը, անսահման ծովը, տարօրինակ կերպով կճզմե հոգիս: Ես չգտա այն անդորր երանությունը, զոր կ'երազեի վայելել կապույտներու երկրին մեջ: Ո՛չ ծովուն անհունը, ո՛չ երկնքին լայն երազը, ո՛չ արմավենիներուն փառքը, ո՛չ ալ նարնջենիին տարաշխարհիկ հրապույրը, ոչի՛նչ: Կ'զգամ, որ հոգիս չ'ուզեր կապվիլ այս բոլորին. Հոգիս ո՛ւր է որ. ա՛հ, չարաղետ կարոտը հեռավոր պաշտելիին: Ո՛չ մեկ շունչ, ո՛չ մեկ ձայն... սև պատկերներ կմթնեցնեն աչքերս. հոգիս անօրինակ տեսիլներով կտանջվի. լալու, պոռալու պետքը կ'զգամ. ա՛հ, ահավոր որոշումը հեռավոր պաշտելիին...

Միջերկրականի ավազներեն կդառնամ: Ի՛նչ տրտում էր վերջալույսն այս իրիկուն. ու ձա՛յնը, փշրվող, տանջվող, մաքառող, մեռնող ալիքներուն ձայնը. ու ավազներուն հուսահատեցուցիչ հեծքը. ու ջո՛րը, անսահման ու անըմբռնելի այդ տարրը. ու հեռավոր մանիշակե թրթռացումները ու պաշտելի՛ն, որ քովս չէ. ու տարօրինակ, ահռելի զգացումը մեծ անհունին մեջ լուծվելու, անէանալու, մեռնելու... այս բոլորը, աղվորս, փոթորկոտ ծովու մը պես կ'ուռեցնեն հոգիս. ու ես տրտում, ճմլված, կվերադառնամ Միջերկրականի ավազներեն: Ո՛ւհ, աչերս կսառին իրենց խոռոչին մեջ, ու հոգիս ամայի է՝ տրտմությանցս ծովուն մեջ կորսված ժայռե կղզիի մը պես: Ա՛հ, սերը, սե՛րը... ու դուն, Հրանտս, որ կլռես...

Եղբայրդ՝ Ռ. ՍԵՎԱԿ

Լոզան, 29 Ապրիլ, 1912

Հրանտս

Եթե բժիշկ եղած չըլլայի, ամենամեծ փափաքս էր երկրագործ ըլլալ. ու նույնիսկ դեռ հիմա ամենավերջին փափաքս է օր մը կարենալ գյուղ քաշվիլ ու կյանքիս վերջին տարիները դաշտերուս ու հողերուս վրա անցնել լուռության ու բնության մեջ: Եկուր տե՛ս որ երիտասարդները չեն հասկնար այս բաները. Եվրոպա նետվիլ կ'ուզեն իսկույն, մինչդեռ հոն 7 տարի ապրող մը միայն կրնա գիտնալ թե ի՞նչ է քաղաքակրթությունը, «զարգացած կյանքը». ամեն բան սուտ ու կեղծիք, շպար ու ամոթ: Ասիկա իմ համոզումս է:

... Կռան Սեն Պեռնառ անուն վանք մը կա Ալպյանց գագաթը, ձյուններուն ու լուռության մեջ կորսված, երկինքին ու երկրին մեջ առկախ, ժամանակին պես

դարավոր ու մահվան պես անխախտ: Քանի՛ քանի անգամներ երազած եմ հոն քաշվիլ, հոն թաղվիլ, բանտարկվիլ իմ երջանկությանս հետ, դո՛ւրս նետվիլ այս զզվելի օրենքեն, որ «կյանքի պայքար» կկոչվի, ապրիլ երազին ու խորհուրդին մեջ, աստվածորեն ապրիլ, հավիտենության խաբկանքն ունենալ, լուրթյունը խոսեցնել... Ինձ այնպես կու գա, որ հոն, բնության մենության մեջ, ժամանակին ձայնը պիտի լսեի, և թե հոգիները, որոնք օդին մեջն են, այո՛, պիտի խոսեին ինձ հսկայական բաներ, Մովսեսին լսած պատգամներուն պես: Եվ այն ատեն պիտի զգայի, որ կ'ապրիմ, մինչդեռ հիմա՝ քաղաքակրթության ու խուժանին մեջ նետված՝ ավելի կտարվիմ, կքշվիմ, կհրվիմ քան թե կքալեմ Բնության մեջ, հին հսկաներու քայլովը: Բայց պատանությունն ի՛նչ կհասկնա ասկե. անիկա ոսկեզօծ սուտերն ու աղմուկները կսիրե. ես ալ անանկ չեի՛ տեսնիս:

... Ու այս բոլորին վրա, ավելցո՛ւր նաև Պոլսո մղձավանջը, այն հորիզոնը, որ քանի մը տարիեն իմի՛նս պիտի ըլլա, և ուր հեռուեն կտեսնեմ արդեն Սողոմի մուխն ու Գոմորի մեղքին բոցը: Եվ ըսե՛լ թե այս մենակյաց փիլիսոփայության հասնելես հետո, դեռ պետք պիտի ըլլա ինձ այդ զարհուրելի ոստանին մեջ ապրիլ, ամենո՛ւն հետ, ամենո՛ւն պես...

Քույր՝ ՌՈՒԲԵՆ

ՊԱՏՐԱՐՔ ՕՐՄԱՆՅԱՆԻ

16 Փետրվար, 1908, Լոզան

Ամենապատիվ

S. S. Մաղաքիա պատրիարք Օրմանյան

Կ. Պոլիս

Բարեգութ հայր,

Ձերդ սրբազնության ներողությունը կհայցեմ Ձեր բարձր ուշադրությունը վայրկյան մը հրավիրելու համար նվաստ ծառայիս վիճակին վրա: Թշվառության վերջին աստիճանի մեջ է, որ կգտնվիմ, աննեցուկ ու գրեթե անոթի. առանց Ձեր բարձր միջամտության ինձի կմնա մեռնիլ անսվաղ. կպաղատիմ Ձեզի, Ամենաողորմ հայր, վայրկյան մը մտածեիք իմ վրաս. Դուք ա՛յնքան աղքատ ուսանողներու պաշտպան գտաք այս տարի. արցունքներուս լեզվովը կ'աղաչեմ Ձեզի, Ամենապատիվ հայր, փոքրիկ-շա՛տ փոքրիկ օգնություն մը գտնեիք ինձ համար, երկու տարի միայն մնաց բժշկությունս ավարտելու, ու ես

չեմ ուզեր ասպարեզս թողուլ կիսավարտ՝ այնքան տառապանքներե ու հաջողություններե վերջ: Չնչին նպաստ մը բա՛վ է ինձ, օրական չոր հացի նպաստ մը: Ձեր մե՛կ բառը կրնա զիս փրկել այս հետին թշվառութենես, Ամենագութ հայր, Ձեր ծունկերուն կփարիմ ու չեմ ուզեր հուսահա՛տ վերադառնալ Ձեր գրկեն:

Ձեր թշվառ ծառան
Ռուբեն Շիլինկիրյան

Լոզան, 16 Մայիս, 1908

Ամենապատիվ
Սրբազան պատրիարք հայր,
Կ. Պոլիս

Ամենաողորմ հայր,

Խորին շնորհակալությամբ ստացա Ձեր հայրական քաջալերիչ երկտողը՝ ընկերացած երկու հարյուր ֆրանքի նպաստի մը: Այս գումարը գործածեցի հիվանդանոց մտնելուս առթիվ պետք եղած բժշկական անհրաժեշտ մի քանի գործիքներու և գրքերու: Շատ երախտապարտ եմ Ձեզ, որ Ձեր անսահման բարութենեն կենսարար բաժին մ՛ալ ինձ հատկացուցիք: Պիտի աշխատիմ արժանանալ Ձեր գնահատումին, և իմ սրտիս երախտագիտությունը ուսանողական հաջողություններով թարգմանել: Թույլ տվեք ինձ հուսալ, որ սույն նպաստը պարբերաբար պիտի կրկնեք մինչև մոտալուտ ավարտումը բժշկական ընթացքիս, որովհետև, ամենագութ հայր, նյութական հազար և մի մտատանջությունները լուրջ արգելք մը կհանդիսանան մտամփոփ և բոլորանվեր աշխատության: Չեմ կարող բացատրել Ձեզի սրտիս երախտագետ զգացումներուն թափը՝ երբ վեցամսյայի վճարքներուն առթիվ զգացած մտահոգություններուս մեջ հանկարծ իմ առջիս գտա Ձեր հայրագորով երկտողը՝ երջանկության ճառագայթի մը պես: Կմաղթեմ Ձեզի ա՛յնքան երջանկություն, որքան անկեղծորեն կրնա մաղթել ստույգ և երկար տառապանքե փրկվող հոգի մը: Եվ կիսնդրեմ, որ Ձեր Սրբազնությունը չի մերժե խոնարհ զավակ մը, որ որդիաբար և անարժանաբար Ձեզի կնվիրվի:

Ռուբեն Շիլինկիրյան

19 Ապրիլ, 1910, Լոզան

Ամենապատիվ Ա. Եղիշե Արք. Դուրյան
Պատրիարք Կ. Պոլսո

Գերագույն Հայր

Երջանկության ամենաբուռն արտահայտումն է, որ կբերեմ Ձերդ Սրբազնության՝ այն հայրական սիրույն համար, զոր ցույց կուտաք անարժան և հեռավոր որդյակի մը: Իմ տառապանքի օրերոս մեջ միշտ զՁեզ ունեցա իբր քաջալերիչ հույս մը, և ահա այդ հույսը այսօր՝ շնորհիվ Ձեր հայրագործ կարգադրության, իրականություն մը եղավ: Այս երկչոտ տողերովս կ'ուզեմ իմ երախտագիտությունս հայտնել Ձերդ Բարձրության այն երկու հարյուր ֆրանքի գումարին համար, զորս ստացա անցյալ ամիս Տիար Հրանտ Նազարյանի միջոցով, և որոնք արդեն հատկացուցի համալսարանական հին պարտքերու: Ընդունեցեք կանխավ իմ ջերմ շնորհակալություններս ամսական 50 ֆրանքի Ձեր բարերար որոշումին համար, և հավատացեք, որ այդ սերմերը ապերախտ հողի մը վրա չի պիտի իյնան:

Ներեցեք ինձ համբուրել Ձեր աջը որդիական սերով:

Ռ. Զիլինկիրյան

Թեոդոսիոս

Լոզան, 10 Օգոստ., 1910

Սարսռալով կարդացի «Ամիս մը Ռ Կիլիկիա»-ն: Առանց շաղակրատ հառաչանքի, առանց փռցուռույց երեմիականներու, առանց բանաստեղծության այդ գիրքը սրտիս մեխվեցավ տեգի պես: ՅԱՎին գիրքն է այդ, ալեւի ճիշդ՝ ԶԱՅՐՈՒՅԹի՛ն գիրքը: Ու ես մխիթարվեցա հոն գտնելով այն էական միտքը, զոր ջանացեր էի դնել «Կարմիր գիրք»-իս մեջ: Այո՛, հարգելի հեղինակուհի, հացը աշխատողինը չէ՛, հացը գողցողինն է, ու մեռնողին իրավունքը մեռցնողեն հարցնելը եղերական անստություն մըն է: Սակայն թշվառական, ու անզազրույթ, ու անիմաստ, ու անվրեժխնդիր Հայության մը հազարներով ջարդվիլը նկարագրել է վերջ, ինչպե՛ս քաջալերեցուցիչ է ա՛փ մը Տյորթ-Յուլցի հայ քաջերուն աստվածային ու հոյակապ դյուցազնությունը, որ գիրքը կվսեմացնե, կավարտե ու կպսակե զայն հոմերական հերոսներու վայրագ ու արյունոտ պսակով...

Սիրելի Թեոդիկս.— կղրկեմ «Վերջին Հայերը» զոր մասնավորապես Տարեցույցիդ համար պատրաստեցի: Ջանացի «Ազատ Հայուն փոքրիկ Հանրագիտարան»-ին մեջ բացատրել ստրուկ Հայուն մեծ վերքերը: Աշխատեցա հոն ցուցադրել «նախասահմանադրական» շրջանի մեր գաղթական Հայերուն հոգին՝ իր բոլոր լացնող պարզությանը մեջ: Չեմ գիտեր թե հաջողեցա՞. ամեն պարագայի մեջ կհուսամ որ հրատարակությունն օգտակար կ'ըլլա՝ ժողովուրդը արտագաղթե զգուշացնելու տեսակետեն: Կվախնամ, որ ուշ մնացի քիչ մը, բայց «Արևուն տակ ամենո՛ւն ալ տեղ կա» կ'ըսեն, ու կհուսամ, որ խոշոր գիրքիդ մե՛ջ պզտիկ բանաստեղծի մը համար անկյուն մը կ'ըլլա միշտ:

Լոզան, 8 Մարտ, 1911

Շնորհակալ եմ քեզ՝ բարեկամական ա՛յնքան գեղեցիկ տողերուդ համար: Ու այս առաջին անգամը չէ, որ կգրես. ես միշտ ծուլացեր եմ գրելու, չեմ ծուլացեր՝ ստիպվեր եմ չգրելու, ու մի՛շտ ալ ցավեր եմ: Աջ կողմս հիվանդ, ձախ կողմս դիակ, ողջերու հետ զբաղելու ժամանակ կա՞ որ: Մեղքս հասկցար. գրե՛ ինձ երկար ու հաճախ. եթե երբեմն ծուլանամ՝ ներե՛ ինձ: Եվ որպեսզի ներելուդ առաջվընե վստահ ըլլամ, կղրկեմ քեզի Թուլսթոյի գլուխ-գործոցը: Չըլլա՞ որ միտքեդ անցնես, թե ասիկա պարզապես փոխարինության համար է «ժամանակ»-ի մեկ տարվան նվերիդ համար. ո՛չ, բարեկամության մեջ փոխարինության զգացում մը երբ մտնե՛ սրտին մեջ վաճառականությունը մտած կ'ըլլա:

... «Վերջին Հայերը»-ս շատ գնահատվեր է, կ'ըսես, պոլսահայերեն շնորհակալ եմ: Երեկ եգիպտոսեն եկած Հայե մը իմացա, որ այդ վատասերած Հայության մե՛ջ ալ գտեր է խանդավառության ցույցեր: — Հոս կ'ավարտեմ նամակս. պետք է իսկույն հիվանդանոց վազեմ: Տեսեսություն:

Լոզան, 7 Մայիս, 1911

Կվախնամ, որ վշտացար՝ նամակիդ պատասխանն ուշացնելուս համար: Եթե գիտնայիր, որ ես ի՛նչ կրակներու մեջ էի, գիշերս ցորեկիս խառնած՝ ի՛նչ աշխատության մեջ, ի՛նչ հևիհև ու ջղային ուսմունքի մեջ, վստահ եմ, որ պիտի ներեիր: Պիտի ներեիր, որովհետև *La fin justifie les moyens*¹ և այս վերջավորությունը շատ փայլուն եղավ, քանի որ բժշկական կաճառին առջև շնորհավորություններով անցուցի քննություններուս այս շարքն ալ:

Կարոտալի համբույրներով՝ քուկդ
Ռ. ՍԵՎԱԿ

¹ Նպատակն արդարացնում է միջոցը: (Ֆր.)

Սիրելի ընկերս Պ. Մ...

Այս առտու ստացա նամակդ:

Ինքզինքդ արդարացնելու համար շատ միամիտ փաստ մը գտեր ես՝ իբրև թե առաջվընե որոշած ես եղեր արդեն ուշացնել նամակդ, իբրև թե կսպասես եղեր, որ անհամբերության նշաններ ցույց տամ Գեղամին գրած նամակներուս մեջ:

Բայց, բարեկամ, ասոնք փաստեր չեն: Ասոնք ոչ մեկ կերպով կ'արդարացնեն այսքան երկար հապաղում մը:

Լոզան հասնելուս, նամակ մը քեզի գրեցի, նամակ մը Գեղամին: Գեղամը գրությունս առած օրն իսկ պատասխանը դրկեց, իսկ դուն երկու ամիսեն հաճեցար բան մը գրելու ինծի: Իրողությունը շատ պերճախոս է ինքնին, պետք չկա երկարելու: Միայն չի մոռնամ ըսելու, որ եթե տարիներո՞վ ալ սպասեիր, անհամբերության նշան մը չպիտի տեսնեիր իմ կողմես: Պատճառ, պատճառը շատ պարզ է. վշտացեր էի քեզի դեմ այս ծուլը հապաղումիդ համար:

Այս անհամ լռությունդ շատ աղվոր պացցույց մը չէր այն բարեկամության համար զոր ցույց տալ կ'ուզեիր իմ մասիս:

Գեղամը մի քանի նամակներ դրկեց ինձ այն ատենն ի վեր, Աշոտը նամակ մը դրկեց՝ առա՛նց կանխավ ինձմե նամակ մը ստացած ըլլալու, Զարֆձյանը նմանապես և ուրիշներ ալ: Մինչդեռ դո՛ւն...

Եվ առանց քաշվելու ալ նամակիդ մեջ երկու հատ տասը սանթիմնոց բուլ² կղնես: Բայց, պարո՛ն բարեկամս, արդյոք ծաղրե՞լ կ'ուզես զիս, թե կծծի ընկերոջ մը դեմ կկարծես ինքզինքդ:

Շնորհակալ եմ այդ երկու հատ տասը սանթիմնոց բուլերուն համար. քեզի կվերադարձնեմ զանոնք, որպեսզի այդ բուլերով անմիջապես պատասխան մը գրես ու դրկես ինծի՝ առանց նորեն սպասելու, որ անհամբերության նշաններ ցույց տամ...

Կտեսնես, որ բարկացեր եմ, բայց կտեսնեմ, որ դուն ալ հետզհետե կբար-

¹ Այս բոլոր նամակներն ուղղված են Լոզանեն ի Պոլիս, Պերպերյան վարժարանի իր դասընկերներեն մեկուն Պ. Մ.-ի, բացի տասներկուերորդեն, որ ուղղված է երկու ընկերի՝ Պ. Մ. և Զ: Երկուքն ալ Պոլիս ապրելուն՝ ստիպված եմ չիրատարակել անունները: Բնագիրերը կպահվին իմ թուղ: Բոլոր իրավունքը վերապահված ՉԻԹՈՒՆԻ:

² Նամակագրոշմ:

կանաս՝ կարդալով այս խիստ տողերս. ուրեմն կդադրեցնեմ նամակիս հանդիմանական (!) մասը ու կ'ուզեմ մի քանի կարճ գիծերով գոհացում տալ հարցումներուդ:

Եթէ ինձի աղվոր նամակներ գրես, հարկ չկա ըսելու, որ բարկությունս կ'անցնի (!) ու ավելի լավ կերպով կպատասխանեմ բոլոր նամակներուդ:

Բայց քանի որ վշտացուցիք զիս, ես ալ...չի պիտի վշտացնեմ թեզի!: Ու ահավասիկ պատասխանեմ.

Բժիշկ ըլլալու անհուն տենչ մը ունիս եղեր: Գնահատելի է փափագդ:

Եվրոպա գալու մեծ իղձ մը ունիս եղեր: Կգովեմ նպատակդ:

Խնայելու ահագին պետք ունիս եղեր: Խնայելը լավ բան մըն է:

Նպատակիդ իրագործման համար force motrice¹ պետք ունիս եղեր: Աս ալ աղեկ:

(Մատանան կորոզե կոր զիս՝ ասանկ խեղկատակ պատասխաններ տալ հարցումներուդ, պատժելու համար զթեզ, քու երկամսյա լռությանդ համար: Բայց ես կմեղքնամ կոր թեզի ու չեմ ուզեր կոր «ատամն ընդ ատաման» օրենքով վարվիլ թեզի հետ: Ահա լուրջ տեղեկություններ թեզի):

Եթէ եվրոպիո մեջ բժշկություն ուսանելու միտք ունիս, թեզի համար ամենն հարմար տեղն է Լոզանը: Ինչո՞ւ. 1. Որովհետև հոս հանդարտ գլխովդ կրնաս աշխատիլ: Բարիզի պես մոլորություններով, գայթակղություններով, հաճույքներով լեցուն խո՛ւլ քաղաք մը չէ ասիկա, հապա խելոքիկ ու հանդարտիկ վայր մը՝ աշխատելու և հառաջանալու համար շատ համար:

2. Սքանչելի համալսարան մը ունի, որ է՛ն առաջնակարգն է բոլոր Զվիցերիո համալսարաններուն մեջ, մանավանդ բժշկական ճյուղը շատ երկիրներու նույնօրինակ հաստատությանց հետ կրնա մրցիլ: Վիրաբուժությունը մանավանդ շատ հառաջ գացած է:

3. Եվրոպիո մեջ այն միակ քաղաքն է, ուր մարդ կրնա ապրիլ ամենն քիչ դրամով: Ահավասիկ թե ո՛րքան ամսական պետք է ունենա մարդ հոս կարենալ ապրելու համար իբրև ուսանող:

Սենյակի ծախքիդ՝ 20—25 ֆրանք:

Ճաշարանի ծախքիդ՝ 45—60 ֆրանք:

Լվացքի ծախքիդ՝ 3—5 ֆրանք:

Գրպանի ծախքիդ՝ 5—10 ֆրանք:

Գումար 73—100 ֆրանք:

Ուրեմն մարդ մը, որ 100 ֆրանք ամսական ունի կրնա հանգիստ կերպով ապրիլ հոս: Կրնաս 70 ֆրանքով ալ ապրիլ, եթէ շատ խնայող ես:

¹ Շարժիչ ուժ, մղիչ զորություն:

Միայն թե համալսարանին համար բժշկական ուսանող մը պետք է վճարե 16 գաղղ. ոսկի՝ առաջին տարվույն համար, հաջորդ տարիներուն համար վճարելիքը հազիվ 7-8 ոսկի է տարեկան:

Մանրամասնությունները հաջորդ նամակովս:

Բարևներս ծնողքիդ, եղբայրներուդ և քեզի:

ՌՈՒԲԵՆ ՉՈՒՆԿՈՅԱՆ

Հ. Գ. Պ. Գեղամին կբարևես:

ՆՈՒՅՆ

1906, Ապրիլ 2, Լոզան

Սիրելի ընկերոջս Պ. Մ..ին

Ստացա նամակդ, ուրախ եմ:

Առանց երկար ձևաբանություններու մեջ մտնելու, պիտի խոսիմ քեզի ուղղակի քու խնդրույդ վրա: Այս անգամ շատ կարճ պիտի գրեմ քեզի՝ որովհետև այս անգամ շատ նամակներ ունիմ պատասխանելու:

Եթե կ'ուզես ծանրանամ քիչ մը դրամական խնդրույն վրա: Կ'ըսես թե շատ խնայող կյանք մը պիտի ունենաս հոս. ուրեմն դուն ալ ճիշտ ինձի պես պիտի ապրիս, հետևաբար, լավ է, որ իմ ծախքերուս վրա խոսիմ քեզի:

Ես սենյակի համար 20 (քսան) ֆրանք կվճարեմ: Օննիկին հետ երկու անկողիննոց մեծ սենյակ մը վարձած ենք՝ ամսական քառասուն ֆր.-ի փոխարեն: Եթե կ'ուզես առանձին սենյակ մը վարձել, կրնաս ամսական 23-27 ֆր.-ով կոկիկ սենյակ մը գտնել, կան 15 ֆրանքնոց սենյակներ ալ, բայց հոն 15 օրեն կմեռնի մարդ: Ուրեմն պետք է անպատճառ 25 ֆր.-ի մոտ գումար մը հատկացնես սենյակիդ համար: Անկողինը՝ իր բոլոր կազմածովը, lavabo մը (այսինքն՝ փայտե կամ մարմարե սեղան մը, լվացվելու համար պետք եղած կուժերովը), աշխատության սեղան մը՝ իր ծածկոցովը, թիկնաթոռ մը կամ պարզ աթոռ մը (վճարած ամսականդ գիտե), divan մը (այսինքն՝ շիլթեներով աղվոր նստարան 2-3 հոգիի համար), պատին վրա մի քանի պատկերներ (չըջանակով կամ ոչ՝ դրամդ գիտե), սեղան մը, մեծկակ հայելի մը արդուզարդիդ համար, abat-jourով* լամպա մը, armoire* մը հագուստներու համար: Ահա թե ինչե՛ կբաղկան սենյակին բոլոր պարունակությունը¹:

Չմեռը սենյակիդ մեջ զոպա² վառելու համար պետք է տաս 3-4 ֆրանք ամսական:

¹ Գծված պատրաստ décor, ուսանողի մը սենյակին, բեմական դրվածքի մը համար:

² Վառարան:

Հիմա գանք ճաշարանին:

Էն առաջ եկած ատենս ճաշարան մը մտա՝ ամսական 50 (հիսուն) ֆրանքով.
Déjeuner, diner, souper*:

Նախաճաշիս համար կուտար գավաթ մը կաթ և ballon մը (ballonը փոքրիկ կլոր հաց մըն է՝ 5 սանթիմ արժողությամբ):

Ցորեկվան կուտար ապուր մը, միս մը (եզի կամ խոզի միս)՝ բաթաթետով կամ բանջարեղեններով և dessert մը (dessertը միայն կտոր մը անուշեղեն էր):

Իսկ գիշերը կուտար ապուր, բաթաթես, dessert և սուրճով կաթ:

Այս կերակուրները ա՛յնչափ գեշ էին, որ ստամոքսս հիվանդացավ և սկսավ արգելք ըլլալ աշխատություններուս: Երկու ամիս հոն ճաշելի վերջ, գտա ուրիշ ճաշարան մը՝ ամսական 60 (վաթսուն) ֆր.-ով: (Երբ ճաշարան կ'ըսեմ, պետք չէ հասկնալ հասարակաց ճաշարանները, ուր ամեն մարդ կրնա ճաշել՝ վճարելով 2—3 ֆր. յուրաքանչյուր ճաշին համար: Իմ ճաշարան ըսածս անանկ տեղ մըն է, ուր abonnéները* միայն կրնան ճաշել (որոնց ամենքն ալ étranger¹ են ընդհանրապես: Այս տեսակ ճաշարանները կկոչեն pension):

Արդ՝ այս երկրորդ pensionին* մեջ հանգիստ էի. շատ քիչվոր էինք հոս՝ 3 Գերմանացի, 1 Գաղղիացի, 3 Պուլկար, 2 Հայ:

Օր մը պզտիկ պատճառով մը մեծ կռիվ մը ըրի մեր chef de pensionին* հետ և ելա անկեց: Գտա ուրիշ pension մը՝ ամսական 55 ֆրանքով. մե՛կ, որ միայն ճաշեցի հոս և մնաս բարովը կոխեցի, որովհետև չափազանց աղտոտ էր այստեղը:

Հիմա ուրիշ pension մը գտած եմ ամսական 60 (վաթսուն) ֆրանքով: Շա՛տ, խի՛ստ գոհ եմ այս տեղեն: Աքանչելի կերակուրներ կուտա կոր:

Առավոտուն ուզածիդ չափ հաց, ուզածիդ չափ սուրճով կամ զուտ կաթ, ուզածիդ չափ անուշեղեն և կարագ:

Ցորեկին աղվոր ապուր մը, հետո entrée մը (այսինքն թեթև կերակուր մը, որ է հավկիթի կամ ձուկի, կամ միսի զանազան պատրաստություններ), հետո միս և salade, հետո dessert (աղվոր անուշեղեններ կամ պտուղներ), հետո... ճաշը կլմննա:

Գիշերն ալ ճիշտ այս կարգով:

Շա՛տ գոհ եմ ասկեց, մինակ թե մեկ անպատեհություն մը ունի. այն է, որ ամսականը պետք է ամսուն սկիզբը վճարել:

Ի՛նչևէ, շատ մաքուր ու շատ ազնվական տեղ է հոս, եթե դուն ալ գաս գալ տարի, քեզ շիտակ այս pensionը պիտի առաջնորդեմ...

ՈՌՈՒԲԵՆ ՉՈՒՆԿՈՒՅԱԼ

¹ Օտարական:

Հ. Գ. Պահարանիս մեջ կ'գտնես ուրիշ պահարան մը. եղբորդ Ա.-ի հետ զանիկա Բառնասարյանին դրկե՝ կարելի եղածին չափ շուտով:

Պատասխանդ ալ շուտ դրկե:

Բարևներս հարգելի ծնողացո, եղբայրներուդ և քեզի:

Ռ. 2.

Հ. Գ. Այս նամակս ավարտած էի արդեն, երբ ստացա 16 մարտ թվակիր գրությունդ:

Հասցես փոխված է. Tchilinguirian, Square de Georgette 3 Lausanne (Suisse):

1906, Ապրիլ 16. Լոզան

այսօր Ապրիլ 21

Սիրելի ընկերս,

Քիչ մ'առաջ ստացա նամակդ:

Պզտիկ դիտողություն մը, եթե կներես. դուն քու նամակներուդ մեջ ո՛չ մեկ լուր, ո՛չ մեկ հետաքրքրական նորություն կպատմես հոնտեղի կյանքին վրա և իմ ընկերներուս ու ծանոթներուս կյանքին վրա: Մի՛միայն հարցումներով կլեցնես նամակդ և կ'ուզես, որ իմ նամակիս մեջ ալ մի՛միայն քու հարցումներուդ պատասխանը տեսնես:

Մեկ խոսքով քննե ստացած նամակներս (թվով 4 հատ կարծեմ) զուրկ են ինձ համար որևէ շահեկանութենե:

Եթե կ'ուզես, որ մանրամասնորեն պատմեմ քեզի հոստեղի եղածները, պետք է որ դուն ալ ինձ պատմես հո՛նտեղի եղածները, ապա թե ո՛չ... ես չեմ ըլլար տուժողը:

Ահավասիկ քեզի նախաբան մը!:

Հիմա գանք քու հարցումներուդ:

Անցագրի մասին դյուրին միջոց մը հարցուցեր ես ինե: Դյուրին մե՛կ միջոց մը կա, այն ալ դրամն է:

Եթե դրամ ունիս կրնաս մե՛կ շաբթվան մեջ անցագիրդ հանել և ճամբա ելլել:

Մեկը կճանչնամ, որ շատ ձեռնահաս է այսպիսի գործերու մեջ և հարյուրին հարյուրը կհաջողցնե զքեզ. մե՛կ պայմանով մը... դրամով:

Ասիկա Ֆերի գյուղի եկեղեցվույն մեջ պաշտոնավարող Տեր-Գեորգ քահա-

նա Անանյանն է: Շատ բարի ու ազնիվ անձնավորություն մըն է ինքը: Եթե կ'ուզես տեսնել զայն, առտու մը Բերայի Սուրբ Երրորդություն եկեղեցին գնա՝ ժամկոչին հարցուր և ան կ'ըսես քեզի ուր ըլլալը:

Կխոսիս իրեն հետ, կ'ըսես, թե Պերլին պիտի երթաս բժշկություն ուսանելու համար, կսակարկես, և ան կհաջողեցնես քու անցագրիդ խնդիրը: Միայն թե պետք է 10-13 ոսկի մը աչքեդ հանես:

Անցագրիդ մասին ասշափ: (Չի մոռնամ ըսելու, որ իմ մասիս խոսք չ'ընես քահանային):

Հիմա գանք նամակիդ մյուս կետերուն:

Շատ միամիտ կհամարես զիս գալ տարի Լոզան հասնելուդ հավատալուս համար:

Ներե ուրեմն, որ կասկածիմ ես քու որոշումիդ և քու կամքիդ վրա:

Ա՛յն, որ կ'որոշե, ա՛յն, որ կամք ունի, անիկա կհաջողի: Իսկ այն, որ կկասկածի իր որոշումին վրա, անիկա բնա՛վ չի պիտի կրնա հաջողիլ:

Հոս ընդօրինակեմ քեզի մաս մը այն նամակես, որ անցած տարի Ջատիկեն առաջ Օննիկին դրկեր էի. «Ո՛հ, Օննիկ, անկարելի բան չիկա: Կամքս կամք է, նպատակս նպատակ, գալ տարի անպատճառ հոն պիտի գամ»:

Ի՛մ այս տողերուս հետ բաղդատության դիր քու տողերդ: Ի՛նչ անկում. քու նամակներուդ մեջ միա՛յն կասկած կա, միա՛յն վախ կա, միա՛յն անորոշություն կա:

Կամքի տեր մարդ մը, երկաթե՛ կամքով մա՛րդ մը բնավ չպիտի գրեր այնպիսի խոսքեր.

«Դեռ ծանր խնդիրներ կան...»: «Իցի՛վ թե դյուրությամբ կարգադրվեր...» և այլն, և այլն:

Որոշե՛, պայքարե՛, կամքո՛վ և հավատքո՛վ հառաջ մղե՛ նպատակդ ու հաջողությունը պիտի հասնի քեզի:

Այս խոսքերս կ'ուզեմ, որ մղիչ զորություն¹ մը ըլլան քեզի համար:

Գալով այն տեղեկություններուն, զորս պահանջեր ես ներքին կյանքիս վրա և դասախոսությանս եղանակին վրա և վարժարանին մանրամասնությանց վրա, այս տեղեկությունները չպիտի կրնամ տալ քեզի սա պատճառով, որ շատ տաղտկալի ու ձանձրալի աշխատություն մ'է ինձ համար նստիլ և գրի առնել առօրյա կյանքը, զոր կ'ապրիմ հոս և որ կփոխվի վայրկյանե վայրկյան:

Ասոնք անանկ մանրամասնություններ են, որք գրելով չեն բացատրվիլ, հապա կզգա մարդ զանոնք ապրելո՛վ միայն այն տարօրինակ ու հազվագյուտ ու գերերջանիկ կյանքը, զոր ուսանողի կյանք կկոչեն:

¹ Առաջին նամակին մեջ հիշված force motriceին կ'ակնարկե ուղղակի:

Բաց աստի դուն պետք չունիս անոնց, ինչպես նաև բնավ պետք չունիս programmeին, զոր պահանջեր ես: Ասոնք շատ երկրորդական խնդիրներ են: Նախ քանա՛ կարգադրել հիմնական խնդիրներդ. առաջինը, որ դրամն է, երկրորդը, որ անցագիրն է:

Ասոնք կարգադրվելեն վերջ ոչինչ կմնա քեզի ընելիք, եթե ոչ պայմանադրական կառախումբով հասնիլ Լոզան, ուր մե՛կ օրվան մեջ պիտի կրնաս կարգադրված տեսնել մյուս բոլոր երկրորդական խնդիրներդ:

Կամք ու պայքար: Ասո՛նք են հաջողության ծնողքները:

ՌՈՒԲԵՆ ՉՈՒՆ.

Հ. Գ. Բարևներս հարգելի ծնողացդ և եղբայրներուդ:

Գեղամին շատ շնորհակալ եմ, որ այսքան ուշացուց նամակիս պատասխանը: Տակավին մինչև ե՛րբ պիտի սպասենք իր գրության:

ՆՈՒՅՆ

Հ. Գ. Գեղամին նամակը այսօր ստացա:

ՆՈՒՅՆ

Հ. Գ. Programme չեմ դրկեր, որովհետև Շահանին Le livre de L'Étudiant¹ անուն գիրք մը դրկած ենք, մեջը ամեն բան գրված է: Եթե կ'ուզես, ա՛ն Շահանեն և կարդա:

ՆՈՒՅՆ

1906, Մայիս 11, Լոզան
այսօր 1 Հուլիս

Պ. Մ բարեկամիս,
Ստացա նամակդ:

Շատ զարմանալի տեսիլքի մը պատմությունը ըրեր ես ինձ՝ բաղնիքի մը մեջ: Ասիկա առիթ մըն է, որ ես ալ խոսիմ քեզի այս տեղի բաղնիքներուն վրա:

¹ Ուսանողի գիրքը:

Հոս տեղ, երբոր բաղնիք ըսես, պետք է որոշել, թե ո՞ր տեսակ բաղնիք է ուզածդ. որովհետև ամեն տեսակն կա հոս. թրջական, ռուսական, ամերիկյան և տեղական, և ուրիշ զանազան բաղնիքներ:

Ամենն աժանը *douche*ն* է. առանձին-առանձին խցիկներ են ասոնք (մի-միայն մեկ հոգինոց), ուր մարդ կրնա *douche*ի տաք կամ պաղ լոզանք մը ընել 25 սանթիմի փոխարեն:

Ես ընդհանրապես *bain ordinaire*ը¹ կհաճախեմ: Ասոնք ալ մեկ հոգինոց աղվոր խցիկներ են, ուր խոշոր պանեռ մը կա՝ ջուրով լեցուն (բարեխառնությունը կրնաս փոխել) որուն մեջ ժամ մը փառավոր կերպով կպառկիս, կ'երգես և կցնծաս, ցնծալով նաև մեկ ֆռանքը!

Տակավին կան նաև բաղնիքներու հազար մեկ ձևեր. *bains de fumigation*, *bains de massage*, *bains de luxe*² և այլն, և այլն: Ամեն բան գրպանիդ պարունակած դրամի համեմատ է հոս: Հարկավ դուն՝ գալ տարի *bains de luxe*ին պիտի հաճախես, հուսամ!

Ահավասիկ քեզի մեր բաղնիքներուն նկարագրությունը:

Մեկուկես երեսը լեցավ արդեն, հիմա ի՞նչ գրեմ, որ մնացյալ երեսներն ալ լենան: Չեմ ուզեր ամբողջ նամակ տեսիլքի մը պատմությունով լեցնել (ինչպես որ դուն սատանայաբար ըրեր էիր): Պիտի գրեմ քեզի ուսանողի կյանքին խոշ կողմերուն վրա!

Հոս շատ մը ռուս ուսանողներ ու ուկիներ կան: Ասոնք գաղղիներնը լավ չեն կրնար խոսիլ: Բժշկության *cours*³ երուն հետևողները մեծ մասով ուկի են:

Այնպես որ, երբ մեր *auditoire*ը⁴ գաս պիտի տեսնես, որ *auditeurs*ներուն⁵ հարյուրին ութսունը աղջիկ է:

Արդ օր մը քովի աղջիկս տարօրինակ հարցում մը ուղղեց ինձ.

— *Pardon, Monsieur, est-ce que vous pouvez me donner un cadeau?*⁶

Զարմացած ըսի իրեն, թե նվեր մը չունիմ իրեն տալիք:

Բայց աղջիկը շիկնեցավ և պնդեց, թե ունիմ.

— *Mais je l'ai vu, vous avez un cadeau.*⁷

¹ Սովորական բաղնիք:

² Շոգիի, մարձումի, պերճանքի բաղնիք:

³ Դասընթացք:

⁴ Դասարան:

⁵ Ունկնդիր:

⁶ Ներողություն, Պարոն, արդյոք կրնա՞ք նվեր մը տալ ինձ:

⁷ Բայց ես տեսա, դուք նվեր մը ունիք:

Խնդիրը երկարեցավ, հարկ եղավ, որ ուրիշ ռուս աղջիկներ միջամտեն գործին և հասկցնեն ինձի, թե ի՞նչ կ'ուզեր կոր քովի աղջիկս: Ու այն ատեն միայն հասկցվեցավ թե խեղճ աղջիկը գաղղիերեն չէր գիտեր և պարզապես canif¹ ըսել կ'ուզեր: Tableau²!

Հոս այս ռուս ուսանողները այնքան շատ են, որ մարդ ստիպված է ռուսերեն սորվելու՝ անոնց հետ կարենալ ապրելու համար դասարանին մեջ:

Ես հիմա քիչ շատ կհասկնամ իրենց լեզուն: Եվ եթե կ'ուզես գործածական բառերեն քանի մը հատ ըսեմ քեզի, այս բառերը դո՛ւն ալ սորվե (զալ տարի շատ պետք պիտի ըլլա քեզի!):

— Խարաշո - գեղեցիկ, Զակ բաժի վայրթե - ի՛նչպես եք, զտրասթվուիչեի - բարև, սբասիպո - մերսի, դլո՛ւպի - ավանակ, տուուաք - ապուշ, պառուաքի տիեզ նայու - ռուսերեն չեմ գիտեր:

Ինչպես ըսի, մեր դասընկերներուն մեծ մասը աղջիկներ են՝ ճերմակ մազերով, խորշոմած երեսներով, blonde³ մազերով, վարդ երեսներով, լեցո՛ւն են, ամեն տեսակն ալ լեցուն են մեր դասարաններուն մեջ:

Քանի մը հատ ալ հայ աղջիկներ կան (ռուսահայ), որոնք, սակայն, խոսքը մեջերնիս, չափազանց ծուլլ են և հազիվ երկու շաբաթը անգամ մը դասարան ոտք կկոխեն:

Հայ մանչեր ալ կան քանի մը հատ (ռուսահայ), որոնք բժշկություն սորվելու միտք ունին եղեր, բայց անմրցելի ծուլլեր են: Մեկը միայն շատ լուրջ ու շատ ազնիվ ուսանող մ'է, որ կնիկն ու զավակները Կովկաս ձգած է՝ հոս բժշկություն ուսանելու համար: Մի՛այն իրեն հետ կխոսիմ, ռուսահայ լեզվով բնականաբար:

Ահավասիկ քեզի անկապ խոսքերու շարք մը, որ հակառակ իր ոչնչության կրնա հետաքրքրական և զավեշտական կողմեր ունենալ քեզի համար թերևս:

Պայմանադրական չորս երեսներս լեցան, հիմա ինձ կմնա այս նամակը բոսթայի հանձնել (ինչ որ քանի մը օր կտևե անպատճառ) և սպասել հաջորդ

¹ Ջմելի:

² Տեսարան:

³ Դեղձան:

Նամակիդ (որուն մեջ շա՛տ աղվոր գիտեմ, թե հետաքրքրական ո՛չ մեկ բան գրված է) և պատասխանել անո՛ր ալ:

Այս անգամ այսչափ:

ՌՈՒԲԵՆ ՉՈՒՆ.

Հ. Գ. Եզնիկեն ո՛չ մեկ գրություն ստացեր եմ: Կցավիմ, որ կորսվեր է իր նամակը: Ես իր հասցեն չեմ գիտեր, որ գրեմ: Մասնավոր բարևներս իրեն և մյուս բոլոր ընկերներուս, ինչպես Զարֆճյանին և Գեղամին:

1906, Հուլիս 1

Հարգելի բարեկամս Մ...

Ստացա վրայե վրա դրկած երեք նամակներդ:

Լուրջունս տարօրինակ կգտնես և պատճառ մը չես կրնար գտնել այս հապաղումիս համար:

Ուրեմն կմոռնաս, որ աշխարհքի վրա հազարամեկ անակնկալներ կան. կմոռնաս, որ աշխատությունը հոգնություն առաջ կբերե, և հոգնությունը՝ հիվանդություն, հիվանդությունն ալ լուրջո՛ւն:

Կ'երևակայեմ, որ ինչե՛ր ըսիք ինձ համար, երբ ձեր նամակներուն պատասխանը այսքան ուշացուցի՝

Գեղամը ըսավ. «Ա՛լ եվրոպացի եղավ անիկա, ճանըմ, մեզի կարևորություն կուտա՞ մի յա...»:

Զարֆճյանը ըսավ. «Նամակ դրկեցի՝ պատասխան չիկա, բառթ դրկեցի՝ պատասխան չիկա. աս ի՛նչ ինսաֆսըզություն է պե, մեյ մըն ալ գրեմ նե երկուք ըլլա»:

Դուն ըսիր. «Իր բարեկամությունը ասանկ է եղեր. երեք եղավ նամակ կգրեմ, տակավին տող մը չառի. Լոզան գնաց, մեզի մոռցավ»:

Ու դեռ շատեր այսպես մտածեցին հարկավ:

Եկու տես, որ անանկ չէ!

Ո՛չ ծուլություն, ո՛չ մոռացում կա գործին մեջ:

Զի գրելուս պատճառները երեք էին: Նախ՝ բացարձակապես ժամանակ չունենալս (քննություններուն մոտենալուն պատճառով): Հետո՝ հիվանդություն մը, որ բավական ատեն անգործության մատնեց զիս. և հետո ավելի լուրջ պատճառ մը, զոր հիմա չեմ կրնար ըսել դժբախտաբար և որ գալ տարի կ'իմանաս, երբ հոս գաս...

Հիմա քեզի կղրկեմ այն նամակը, զոր գրեցի Մայիս 22-ին առաջին նամակդ ստանալուս պես և որ հիվանդությանս պատճառով չի կրցա դրկել:

Երբ այսօր կկարդամ գրեթե ամիս մը առաջ գրած այդ նամակս՝ խնդալս կուզա: Ի՞նչ տղայական բաներով լեցուցեր եմ երեսները:

Հիմա ի՞նչ գրեմ քեզի, որ բան մը արժե, որպեսզի ներես ինձի այս երկար հապաղումս:

Անցագիրդ ի՞նչ ըրիր. գործողությունները սկսա՞ր: Եթե չսկսար, աճապարե շուտ: Մինչև որ ամսական 100 (հարյուր) ֆրանք չ'ապահովես քեզի համար, ճամբա մ'ելլար: Որովհետև երբ աշխատությունդ շատ ըլլա, իսկ ամսականդ քիչ, անպատճառ կհիվանդանաս: Այս տեղին կերակուրները շատ կվնասեն մեզի. ո՛ր ես մեր պոլսական պատվական կերակուրները:

Առա՛տ կեր այդ տեղի կերակուրներեն, որովհետև վերջը եթե հոս գաս, շատ պիտի կարոտնաս զանոնք:

Տոմաթեը նարինջի պես հարգի է հոս, բաթիճանը 30 սանթիմ է մեկ հատը:

Ամեն բան սուղ է վերջապես. ո՛ր կփնտռես մեր Դոլսո աժանությունները ու առատությունները:

Հարդե գլխարկ մը (համեստ գլխարկ մը) 8-10 ֆր. կ'արժե, բոթին մը 25 ֆրանքով հազիվ կարելի է գնել (պաշլաման 5.50 ֆրանք է): Հազնվելիք պարզ հագուստ մը 60-80 կ'արժե: Եվ դեռ ինչե՛ր:

* * *

Նյութը փոխենք: Եթե կ'ուզես խոսիմ քեզի այս տեղի էտudiantներուն վրա: Étudiant* մը կարելի է ճանչնալ 100 մեթր հեռուեն. կարմիր, կանաչ կամ կապույտ քասքեթ մը դրած է գլխուն վրա՝ շեղակի: (Գույներեն կհասկցվի, թե ո՞ր sociétին կպատկանի): Նույն գույներով ժապավեն անցուցած է ելեկին վրայեն՝ շեղակի: Նույն գույներով թաշկինակ մը ցուցադրած է ժաքեթին վերի գրպանեն՝ շեղակի:

Այս etudiantները ամեն երևակայելի խենթությունները կ'ընեն քաղաքին մեջ, և ամեն մարդ կսիրե զանոնք, և ամեն մարդ կհավնի իրենց խայտառակություններուն, որովհետև étudiant են:

Étudiantները ամենեն երջանիկ և ամենեն սիրելի դասակարգն են եվրոպացիներուն մեջ:

Կնայիս, որ մեկը կսուլե և ամեն ծակերեն դուրս կուզան étudiantները, կարգ կ'ըլլան, կ'սկսին աղաղակներ նետել օդին մեջ, մարշ մը կ'երգեն ու կհառաջանան, խենթումենթ շարժումներ ընելով կվազեն, կհոգնին ու վերջապես brasserieի¹ մը մեջ կ'երթան օրինյալ պիրայով լեցնելու իրենց փորը:

¹ Գարեջրատուն:

Շատ երջանիկ արարածներ են այս գունավոր քասքեթներով պարոնները, մինակ թե աշխատություն մի՛ հարցներ. ու ահա՛ ինչու համար կարմիր կամ կապույտ քասքեթ մը չունիմ գլխուս վրա!

Նամակս կ'ավարտեմ:

Անկեղծորեն ներողություն կ'իսնդրեմ նամակիս ուշանալուն համար, որուն պատճառը կամքես բոլորովին անկախ էր:

Խոսե՛ ընկերներուս ալ. հասկցո՛ւր չի գրելուս պատճառը. ամենքն ալ թող ներեն ինծի:

Ներողություն կ'իսնդրեմ նաև մեծահարգ ուսուցիչես՝ Մուրատյան էֆենտի-են, իրեն նամակին պատասխանը առայժմ չի կրնալ գրելուս համար:

Բարևներ:

Ռ. ՉԻԼԻՆԿԻՐՅԱՆ

Հ. Գ. Հիվանդությունս, որ ստամոքսի թեթև խանգարում մըն էր, կատարելապես անցած է:

ՆՈՒՅՆ

Հ. Գ. Վաղը Ջարֆճյանին քառթ մը կղրկեմ. իրեն իմացուր:

ՌՈՒԲԵՆ

1906, Օգոստ. 31

Սիրելի բարեկամս Պ...,

Վարպետության ծուծը հաներ ես ա՛լ, Մ...

Bravo! վեց երես սըխր-սըխր նամակ մը լեցնե՛լ... առանց բան մը գրած ըլլալու! Է՛հ, աս վարպետությունը ամեն մարդու չէ տրված:

Նամակդ կ'ստանամ, անհամբեր կպատռեմ պահարանը ու կ'սկսիմ կարդալ՝ նախ հառաջաբան մը, հետո մեկ քանի խորհրդածություններ, հետո Պերպերյանի հանդեսը, հետո էֆենտիին «Հուսկ Բանք»-ը, նորեն խորհրդածություն. խորհրդածություններ օդին վրա. մեկ քանի խորհրդածություն ալ գալուդ կամ չի գալուդ վրա, ու եղավ վե՛ց երես: Ա՛շք օլտուն, Պ...

Ու երևակայե, որ այս երկար նամակիդ մեջ որոշ խոսք մը անգամ չի կար թու գործիդ վրայոք: Աշխատեցա՛ր, հաջողեցա՛ր, անցագրի գործերը սկա՛ր, հույս կա՛, պիտի գա՛ս, չի՛ պիտի գաս: Մա՛րդ Աստուծո, որոշ մեկ խոսք մ՛ըսե, որ ես ալ բան մը հասկնամ գրած նամակեդ:

Ահավասիկ նորեն կգրեմ կոր քեզի:

Ամսական 90-100 ֆրանքով շատ հանգիստ կրնաս ապրիլ հոս:

Առաջին տարին համալսարանին պետք է վճարես 350 (երեք հարյուր հիսուն) ֆրանքի գումար մը. վճարելի՛ առաջին և երկրորդ վեցամսյակի սկիզբը:

Այս գումարը պիտի վճարես իբրև մուտքի ծախք, իբրև *labortoire* ներուդ,¹ ծախքը և իբրև հետևելիք *cours* երուդ ծախքը:

Երկրորդ տարին պետք չէ այդչափ մեծ գումար մը վճարել. այդ գումարը տարվե-տարի կազտիկնա:

Շատեր կան, որ կ'ապրին միայն 70 (յոթանասուն) ֆրանք ամսականով, բայց ասոնք խեղճ են:

Գիրքերը բավական սուղ կ'արժեն: Ես այս տարի գրքի համար վճարեցի 25 (քսանհինգ) ֆրանք: Եթե հաջողիմ քննություններուս մեջ՝ այս տարի պիտի ծախեմ գիրքերս և պիտի գնեմ նոր գիրքեր երկրորդ տարիին համար: Անանկ որ գիրքերը շատ մեծ ծախք մը չեն ներկայացներ ուսանողին *budget* ին մեջ:

Եթե հոս գալու միտք ունիս՝ կոչիկներդ, հագուստներդ, ճերմակեղեններդ, Պոլիսեն հետդ բեր, որովհետև հոս շատ սուղ են:

Հագնվելիք սանկ կոչիկ մը կ'արժե 20—25 ֆրանք, պարզ *costume* մը վաթսուն ֆրանքի կնայի, հապա գուլպանե՛րը, շապիկնե՛րը, ճերմակեղեն-նե՛րը, ամենքն ալ սուղ են:

Բոթինի պաշլամա մը 25 դրուշեն վար չըլլար հոս:

Աղեկ, որ ես եկած ատենս ամեն բան առատ-առատ բերի, այնպես որ շատ բաներ գնելու պետք չեմ ունենար կոր:

Մինակ թրաշ ըլլալը աժան է հոս. ամեն տեղ 30 (երեսուն սանթիմ): Բայց շատ *perfectionnée* եղած է: Մազ կտրել 50 սանթիմ, մազ լվալ 50 սանթիմ: Տեսնելու բան է հոս *coiffeur*² խանութները. մազերդ լվալե վերջ չորցնելու համար պետք չիկա խավիլներով ֆրչաներով երկար բարակ գլուխ արդուկե-լու. ելեքորական գործիք մը անմիջապես չոփչոր կ'ընե մազերդ:

Մեյ մըն ալ թրամվեյը շատ աժան է: Հարկ չի կա ըսելու, որ ձիով թրամվեյ գոյություն չունի հոս. ամենքն ալ ելեքորական են: Քաղաքը ծայրե ծայր

¹ Աշխատանոց, տարրալուծարան:

² Սափրիչ:

կրնաս պտտիլ միմիայն 10 սանթիմով (2 մեթալիք) :

Կամուրջեն անցնելու համար տասնոց մը ցնծալու ստիպված չես:

Նավերն ալ աժան են (այսինքն՝ նավակները) . ժամը 1 ֆրանք:

Շոգեկառք ու շոգենավ ultra աժան:

Ձի՝ ժամը 5 ֆրանք:

Automobile չեմ գիտեր, բայց շատ սուղ է կ'ըսեն կոր:

Գանք սնունդին:

Կաթ՝ զվիցերիական զմայլելի, անխառն կաթ՝ օխան 50 բարա:

Հավկիթ՝ է՛ն թարմ հավկիթները, 1 ֆրանք տուգինան:

Հաց՝ շատ աժան ու շատ պատվական:

Chocolat չե՛ս գիտեր, որ Ջվիցերիա շոքուլային հայրենիքն է:

Alcool չայ և կաթ եփելու համար, օխան երեք դրուշ:

Շաքար՝ sucre cassé regulier¹ տուփերու մեջ, քիլոն 50 սանթիմ:

Ջուր՝ Ալպյաններուն զմայլելի՛ ջուրը, առանց կո՛տի...

Անավասիկ քեզի հաշիվ:

Այս անգամ նամակս վաճառականի տետրակ դարձավ. բայց ինչևէ, Étudiantի նամակ է, ատանկ կ'ըլլա:

Չես գիտեր, թե որքան հաճույք կ'զգամ, երբ այսպես գիներու և հաշիվներու վրա կգրեմ: Դուն ալ, եթե հոս գաս, պիտի հասկնաս իմ ըսածս: Շուտով պիտի սորվիս, թե ի՛նչ պատվական բան է դրամը և թե աշխարհիս վրա չիկա ավելի անուշ բան մը, որքան ֆրանքը և սանթիմը:

Բարևներս հարգելի ծնողացո, եղբայրներուդ (փոքր եղբայրդ կշնորհավորեմ իր շրջանավարտ ելլելուն առթիվ), Գեղամին, Ջարֆճյանին, ամենուն, քեզի:

ՉԻԼԻՆԿԻ

Tchilinguir, Mont-Charmant, Lausanne, Suisse.

¹ Կոտրած շաքար, կանոնավոր, քառակուսի կանոնավոր շաքար:

Մ..., հոգի՛ս,

Պատասխանս ուշացուցի նորեն. այս այսպես եղավ մի՛շտ ու միշտ ալ այսպես պիտի երթա կարծեմ:

Որովհետև (ինչպե՛ս ըսեմ) պարագաներս ծանոթ են արդեն քեզի, ու երկար բարակ փաստաբանելու պետք չունիմ ներողությանդ կոչ ընելու համար, չէ՛:

Տասնչորս երեսնոց նամակդ մեծ հաճույք պատճառեց ինձի: Պիտի ուզեի նույնքան երեսներով ուրախացնել զքեզ, բայց ի՛նչ անկարելի երազ...

Հազար նամակներ կան, որոնց պատասխանելու է, Մասիսին ու Լուսին խնդրած ոտանավորները հասցնելու է, դասեր կան զորս սորվելու է, դիակներ կան, որ կտրտելու է... Ու կտեսնես, որ ինչպե՛ս բռնված են ժամերս:

Ֆրանսերեն բանաստեղծությունդ սիրուն էր: Պիտի ուզեի հարցնել, թե ինչո՞ւ մանավանդ ֆրանսերեն և ո՛չ հայերեն:

Գիտեմ, թե կսիրե՛ս բանաստեղծությունը ու շա՛տ բնական կգտնեմ քու գրչիդ տակ զայրույթի թափը, զոր ինձ կ'ուղղես ո՛չ-գրական նամակներուս համար:

Հոգի՛ս, դժբաղդաբար շատ ճիշդ են ըսածներդ, ու հակառակ անոր, որ ամեն մարդ միաբերան գոչեն, թե «ժամանակը ոսկի է», թե «Կյանքը կարճատև է», թե «Բանաստեղծությունը հիմարություն է», հակառակ այս բուրրին կ'ըսեմ, **դժբաղդաբար**, բանաստեղծը բանաստեղծ կմնա միշտ...

Ու չես զարմանար, երբ մսակույտերու զանգվածին մեջեն, երբ գիտություններու թոհուբոհին մեջեն ու հացի կովին մեջեն ժամանակ գտնեմ հոգիս գինովցնելու քանի մը, քանի մը ումպ... տողերու մեջ:

Մարդեր կան, որոնց համար գրելը քրտնիլ է. անոնք կգրեն ճակատնին պոստեցնելով ու գրիչնին կճրտեցնելով, ու որքա՛ն համառ են հանգերը, ու որքա՛ն անտանելի ոտանավորին կշռությունը...

Ինձ համար գրելը երգել է: Բոլոր մխիթարությունս սա երկաթի փոքրիկ գրչիս մեջն է: Ու մենավոր ապաստանիս մեջ՝ ձմրան գիշերներ, ինձմե՛ս ավելի երջանիկ մարդ չէ՛ կարելի երևակայել՝ ոտանավորի մը ավարտումեն վերջ:

Այս ալ այսքան, եթե կ'ուզես:

Չպուքձյանին շնորհակալ եմ իր մտերմիկ երկտողին համար: Խե՛ղճ տղան: Գոնե եթե գո՛րծ մը գտած ըլլար մինչև հիմա:

Ամեն առավոտ, որ իր վրա մտածեմ՝ հին տող մը կ'իյնա միտքս (կարծեմ Պերպերյանեն). «Դուև լավագույն բաղդի էիր արժանի...»:

Պերպերյանին գրականությունը չեմ սիրեր: Ճիգով reminiscencend¹,

¹ Որոճացում, վերհիշում (բնագոգրեն):

ինքնօգնությամբ, կարդալով, հավաքելով, մանավանդ քրտնելով գրված բերթվածներ բոլորն ալ (արձակին վրա չէ՛ խոսքս), որոնց մեջ originalitéն * կպակսի ու չես տեսներ հանճարին հափշտակիչ հո՛րը:

Բայց այդ տողը չեմ գիտեր ինչո՞ւ միշտ աչքիս մե՛ջ կցցվի մեխի մը պես ամեն ատեն, որ Չպուքճյանի վրա՛ է խոսքը:

Իրա՛վ, լավագույն վիճակի մը արժանի էր մեր ազնիվ բարեկամը, բայց ոչի՛նչ չենք կրնար վճռել. ո՛վ կրնա արգելել մեզ հավատալու, որ թերևս ճի՛շդ իր այդ խեղճ կացությունն է, որ օր մը փառքի ու անմահության դռները պիտի բանա իր առջև:

Չէ՛ որ մարդկության բոլոր հերոսները առա՛նց բացառության թշվառության ծոցեն ծնան:

Եղբայրս բոլորովին ապաքինած է*:

Իրավացի՞ խոստովանություն մըն է, զոր կ'ընես ինձ՝ ըսելով, թե երիտասարդությունը առհավետ խույս տված է ա՛լ քենե: Ես երբեք չի պիտի սիրեի հավատալ, որ ճի՛շտ ըլլար այդ հոռետես մտածումը:

Մե՛ղք քեզի, բարեկամս:

Ո՛վ ներշնչեց քեզ մարդատյացի այդ հոռետես ներշնչումներդ: Ինչո՞ւ կ'զգաս, որ երիտասարդությունը կխուսափի քենե: Հապա որո՞ւ համար են ապրելո՞ւ հաճույքը, տեսնելո՞ւ փափաքը, սիրելո՞ւ կիրքը ու տենչալո՞ւ տենչը: Որո՞ւ համար են արվեստները, գեղեցի՛կը, բնությունը, կի՛նը, համբո՛ւյրը, առավոտը, գիշերին խորախորհուրդ բանաստեղծությունը, որո՞ւ համար այս բոլորը...

Չէ, հոգի՛ս, դեռ շատ երիտասարդ ես՝ այդպիսի հոռետես գաղափարներով թունավորելու համար կյանքիդ կոկոնը:

Սիրե՛ կյանքը սրտիդ բոլոր արյունովը ու բազուկներուդ բոլոր ույժովը. այս է իմ վերջին խոսքս:

ԽՈՍԹԸ ՄԵՋԵՐՆԻՍ. Մ. Պարսամյան անցյալ օր իր «Անրջանքը» և «Պատրանքին ծաղիկները» անուն երկու հեղինակությունները ինձ կղրկե, հետև ալ գեղեցիկ նամակ մը, ուր հիացումի տողերով կ'ողջունե «տաղանդը Չիլիսկիրյանին, որ իր փափուկ երազանություններով կ'օծե մեր այնքան աղկաղկ բանաստեղծությունը»: Ու իր հիացումի թափեն տարված՝ կշարունակե. «Ձեր վերջին բանաստեղծությունները այնքա՛ն հաճույք պատճառեցին ինձ, որ չեմ կրնար դիմադրել զձեզ շնորհավորելու բաղձանքիս»:

Ու ըսել, որ բնավ չեմ ճանչնար զինքը:

Այս գրածս դուն քեզի պահե, որովհետև «բերնե բերան կ'ըլլա գերան և կհասնի ի Պարսամյան!», ինչ որ շատ անխորժ կ'ըլլա հարկավ իրեն համար:

Կ'ուզե կոր բարեկամություն հաստատել. ինչո՞ւ չէ. ան իր որոշ ուղղությունը

ունի, ես իմ որոշ ճամբաս ունիմ գրականության մեջ: Անիկա հավետ պիտի մնա բանաստեղծը «անո՛ր զոր պիտի սիրե»: Անիկա հավետ պիտի ըլլա երևակայող ու օդային բանաստեղծը:

Ես ավելի իրապա՛շտ եմ, ամեն բանե առաջ իրականությունը զիս կգրավե. ամեն իրականութենէ վեր մե՛կ իրականություն մը կճանչնամ ես՝ ապրվա՛ծ, զգացվա՛ծ կյանքը և ո՛չ թե երևակայված կյանքը:

Շատոնց ստացեր եմ Մեծարենցի երկրորդ հատորն ալ: Այս տղան սիրած եմ իր մեկ քանի զգայուն և խո՛ր տողերուն համար: Ավա՛ղ, որ շուտ ցաղեր եղավ¹. անուն շինելու տենչը ավրեց զինքը: Ամե՛ն թերթի մեջ ու ամե՛ն շաբաթ գրելու, իր ստորագրությունը երևցնելու կի՛րքն է, որ գեշ ազդեց իր գրչին, ու իր վերջին գիրքը sur commande et à la hate² գրականության մը բոլոր ախտանիշերը ունի դժբաղդաբար:

Որքա՛ն պիտի ուզեի ճանչցած ըլլալ զինքը և ըսել իրեն, որ քի՛չ գրե մանավանդ բանաստեղծությունը: Quantitéին մեջ չէ՛, qualité³ մեջն է, որ կփնտռվի, չէ՞ մի որ Առվեր իր մեկ sonnetովը անմահացավ:

Այս բոլոր բաները կգրեմ քեզի, որովհետև գրականությունը շատ կշահագրգռե քեզ ու բոլոր գեղարվեստները ա՛ռհասարակ՝ իրենց հրապույրը ունին քեզ համար:

Առողջությունս լա՛վ է, քուկի՛նդ:

Օդերը շատ լավ են. այս տարի ձմեռ չեղավ հոս:

Եղբորդ մեծ հաջողություններ կմաղթեմ musiqueի մեջ: Աշխատությունով ու ձիրքով մարդ ամե՛ն բարձունքի կհասնի: Հոն ինչպե՛ս է՝ չեմ գիտեր, հոս musicienը⁴ շատ սիրված ու շատ լավ վճարված է մանավանդ:

Աշխատի՛ւ, աշխատի՛ւ. ու դեռ Բաբելյանը այնպես կհավտա, որ մարդ տունը նստիլ սուրճ խմելով musicien կ'ըլլա և թե հանճարը հանճա՛ր ըլլալու համար ամեն բանե առաջ ծուլլ ըլլալու է...

Հարգանքներս սիրելի ծնողացդ ու եղբայրներուդ: Չփութեճանին ու Ջարֆ-ճյանին ու բոլոր դասընկերներուս կբարևեմ (անցյալ օր քառթ մը ստացա Թ. Աֆյանեն, որ 'ի Գընճըլար):

Պատասխանդ շուտով, չէ՛:

Ռ. ՉԻԼԻՆԿԻՐ

R. Tchilinguir, Villa Chaumont,
Ave de Rumine, Lausanne

¹ Շփացավ:

² Ապսպարանքի վրա և աճապարանքով:

³ Բանակին մեջ չէ, որակին մեջն է:

⁴ Երաժիշտ:

Սիրելիս, Մ...

Այսօր ստացա նամակդ. չ'ուրախացա, զարմացա. եղբայր, քանի որ զիս կսիրեիր, ինչո՞ւ կլռեիր մինչև հիմա, քանի որ չեիր սիրեր, ինչո՞ւ գրեր ես:

Ես կհասկնամ նամակը այսպես.

Նամակն է թուղթ մը, որուն մեջ մարդ մը ուրիշ մարդու մը բաներ մը կ'ըսես: Արդ, դուն նամակներուդ մեջ ոչի՛նչ չես գրեր:

Երևակայե, որ մեկը Պոլիսեն նամակ ստանա, անհամբեր բանա, կարդա և ի՛նչ գտնե մեջը՝ ոչի՛նչ:

Բարեկամս, կմտածեմ, որ քու նպատակիդ չհասնելուդ վիշտը շատ խոր ազդեր է մտքիդ վրա, որովհետև բոլոր նամակներուդ մեջ ալ շա՛տ հոռետես, շատ տխո՛ւր և շատ տխրամած և մթամած հոգի մը կտեսնեմ:

Ես կ'ուզեմ որ երբոր բարեկամ մը ինծի նամակ մը կգրես, այդ նամակին մեջ ինծի անկեղծորեն ըսե ի՛նչ որ ըսել կ'ուզես: Իսկ դուն ինծի նամակ կգրես, երկու տարիե ի վեր, և տակավին բա՛ն մը, բնա՛վ բան մը չես հայտնած:

Տակավին չես ըսած, թե բժի՛շկ ըլլալ կ'ուզես, թե գրագի՛ր ըլլալ կ'ուզես, թե էնժենյո՛ր ըլլալ կ'ուզես, բայց ես իմ խելքովս հետևցուցի, որ փափագդ է բժիշկ ըլլալ:

Տակավին չես ըսած ինծի, թե 'դրամակա՛ն նեղությունս ունիս, ընտանեկա՛ն պատճառներ ունիս, թե անցագրի դժվարություն:

Տակավին ինծի խոսք մը չես ըսած՝ ի՛նչ միջոցներ ձեռք առիր նպատակիդ հաջողության համար, թե որքա՛ն աշխատեցար, թե որքա՛ն հաջողեցար:

Արդ ի՛նչ կ'ուզես, որ գրեմ քեզի:

Դուն ինծի կ'ըսես, թե տխուր ես, ես ալ քեզի կպատասխանեմ, թե «ջանա՛ ուրախ ըլլալ»: Ահավասիկ այսչափ:

Ես չեմ սիրեր մութ և անորոշ գործերը, ես կսիրեմ պարզությունը և անկեղծությունը: Եթե կ'ուզես, որ ես քեզի որո՛շ բաներ գրեմ, նախ դո՛ւն ինծի որոշ բաներ գրե:

Ես գրած նամակներուդ ոճեն (ա՛յն ոճեն, որով չորս երես նամակ կլեցնես՝ առանց բա՛ռ մը տեղեկություն տալու քու մասիդ կամ իմ ընկերներուս մասին առհասարակ), ես այդ ոճեն ա՛յնպես հետևցուցի, որ դուն իմ բարեկամությունս կ'ուզես փորձել:

Եղբայր, եթե բա՛ն կ'ուզես ըսել, ըսե՛, ինչո՞ւ կբաշվիս: Իսկ եթե բան մը չունիս ըսելու, ինչո՞ւ ըսել կձևացնես:

Անկեղծորեն կցավակցիմ ես քեզի և խո՛րապես կհուզվիմ՝ կարդալով ամեն նամակիդ մեջ վիշտերուդ միևնո՛ւյն պատմությունը, որ միշտ ու միշտ կկրկնվի:

Այս խոսքերս կարդալով պիտի զարմանաս ու պիտի մտածես. թե արդյոք այս տողերը գրողը իրավցնե Զիլիսկիրյանն է: Այո՛, սիրելիս, այս տողերը գրողը

Չիլիսկիրյանն է, քու բարեկամդ և քու ամենն՝ն անկեղծ բարեկամդ, որ կմեղ-
քընա քեզի և չ'ուզեր քաջալերել զքեզ քու տխրամոլ զգացումներուդ մեջ:
Անկեղծորեն և ցավակցորեն

Ռ. ՉՈՒՆԿԻՄՅԱՆ

Հ. Գ.. Եվ մի՛ մոռնար, որ այս նամակը գրողը թերևս ա՛յն անձն է, որ ամե-
նե՛ն ավելի սիրեց քեզի:

Ռ. ՉՈՒՆԿԻՄՅԱՆ

23 Հունիս, 1907

Սիրելիս, Մ:

Անկեղծ ուրախությամբ մը կարդացի նամակդ: Merci: Երախտապարտ եմ
8 երկար երեսներուդ և մտերմական ազնիվ զգացումներուդ համար:

Իրավո՛ւնք ունիս, երբ ինձի կ'ըսես, թե կյանքիս մասին տեղեկություն չեմ
տար քեզի:

Ահավասիկ կա՛րճ պատմությունը վարած կյանքիս

Առավոտյան 7-ը. նախաճաշ, քիչ մը ընթերցում և անմիջապես վարժարան:
Anatomie descriptive, Histologie, Physiologie, Embryologie¹: Այս
չորս դասերը ունիմ ամեն օր մինչև ցորեկ:

Ցորեկին 12-ը. ճաշ, խոսակցություն, կատակ կամ վեճ. տեղն է հիշելու
մասնավոր պարագա մը. ճաշարանիս մեջ ծեր կին մը կա գերմանացի, որ ամեն
օր իր հիացումը կհայտնե գերմանացիներուն վրա, Վիլհելմին վրա ու գերմա-
նական լեզվին վրա... զոր շատ քաղցրահնչուն կգտնե:

(Կգուշակես, որ երբ մեկը իմ առջև այս տեսակ խոսքեր ընե, ես չեմ կրնար
հանգիստ ճաշ ուտել: Հետևապես ամե՛ն օր վեճ կա, իրարանցում, հուզում ու
ամեն օր ալ ճաշեն վերջ... կպարըշվինք դարձյալ!):

Ճաշեն վերջ (2-6). Physiologieի կամ Histologieի Laboratoire: Եր-
կուքն ալ շա՛տ հետաքրքրական են:

Առաջինիս մեջ գորտեր, նապաստակներ, շուներ կկտրենք, բժշկական փոր-
ձեր կ'ընենք, բնախոսական շատ զարմանալի երևույթներ կդիտենք և կ'ու-
սումնասիրենք այդ կենդանյաց վրա:

Երկրորդին մեջ մարդուն զանազան գործարաններուն բջիջային հյուսված-
քը և մանրադիտական կազմությունը կքննենք microscopներով, հիանալի
laboratoire մըն է:

¹ Արարագրական, հյուսվածաբանական, կազմական և սաղմաբանական մարդակազմություն:

Ընթրիքեն վերջ (8-12) քիչ մը պտույտ, եթե ժամանակ ունիմ: Ուշի (Լեմանի ափը) կ'իջնեմ, եթե գեղեցիկ է գիշերը:

Հիանալի տեղ մըն է հոս: Լեման, լուսնյակ գիշեր, Ալպյանները, համազգային¹ զբոսաշրջիկներու խումբեր, աղջիկներ, ուսանողներ, նավակներ: Այս բոլորը եթե կարենաս երևակայել, հիացումեդ կխենթանաս, մե՛կ խոսքով:

Բնության այս զմայլելի հրաշալիքը դիտելն և ըմպելն վերջ (ըմպելը ճի՛շդ բանն է. մարդ այնպես կ'ըմպե, որ կգինովնա հիացումեն, այնպե՛ս, որպես թե Մալակայի հին գինի մը ըմպած ըլլա՛ր...), կդառնամ սենյակս, կկարդամ, կգրեմ, *anatomie*իս վրա գլուխ կհոգնեցնեմ և կքնանամ կես գիշերին!

Ահավասիկ, թե ինչպես կ'անցնի օրս:

Հուսամ, թե ստացած ես քառթս: Կներես նամակիս այսքա՛ն ուշանալուն համար: Պատճառը ժամանակի չգոյությունն է:

Այս հինգշաբթի երկու ընկերներով անգղիական նավակ մը վարձեցինք և անընդհատ թիավարելով հասանք Ֆրանսա: Հոն իջանք Էվիան քաղաքը, որ ֆրանսական *aristocratie*ի² լավագույն ամառանոցը կնկատվի, պտտեցինք, զբոսնեցանք, քաղաքին գեղեցկագույն շինությունները և նշանավոր արձանները տեսանք, խմեցինք, ուրախացանք և գիշերը դարձյալ թիավարելով անցանք մեր գեղեցիկ Լոզանը:

Կ'երևակայես, թե ի՛նչ հոգնած էինք և ի՛նչ լավ քնացանք գիշերը:

Այս կիրակի Լոզան (այսիքն Լեմանի վրա) տեղի ունեցավ *Grande Régate internationale*³:

Մասնակցեցան եվրոպական գրեթե ամեն պետություն՝ իրենց թիավարողներով և իրենց մրցումի մասնավոր նավակներով, զորս իրենց հետ բերած էին:

Եղավ նավային տասը մրցում. 2.000 մեթրոնոց ճամբա մը պետք էր թիավարել 5 վայրկյանի մեջ: Լիճը ալիքոտ էր և շրջող նավակներ եղան. մրցանակը լոզանցիները և միլանցիները, ցյուրիխցիները բաժնեցին:

Գիշերը *Grande retraite aux flambeaux. Fête.*⁴

Ահավասիկ քեզի կյանքիս վրա լուրեր և քաղաքիս վրա լուրեր:

Հուսամ, թե այս անգամ ա՛լ գոհ կ'ըլլաս, չէ՛:

Շնորհակալություններս կհայտնեմ քերթվածներուս մասին արտահայտած հիացումիդ համար:

Բարևներս հարգելի ծնողքիդ և եղբայրներուդ:

Ռ. Զիլինկ.

¹ Համաշխարհային, միջազգային (*Internationale*) ըսել կ'ուզե:

² Ազնվական դասակարգը:

³ Միջազգային մեծ նավամրցում:

⁴ Մեծ ջահագնացություն, տոն:

Սիրելիս, Մ...

Հավատա՛, որ ծուլություն չէ պատճառ, երբոր նամակս ուշացուցի այսքան: Նամակ մը կ'առնես կկարդաս, կ'ուրախանաս, հեռավոր բարեկամի մը գիրը տղու մը պես կիրճվեցնես զքեզ, լավ humeurի* մեջ ես, կ'ուզես անմիջապես նստիլ և պատասխանը գրել: Բայց... «բայցը» չեմ գիտեր, սա միայն գիտեմ, որ պատասխանը անմիջապես չես կրնար գրել!

Պետք է անցնի շաբաթ մը, երկու շաբաթ, որպեսզի տեսակ մը ամոթխածությամբ գրիչը ձեռքդ առնես և թուղթիդ ճակատը փակցնես... «Սիրելի Պ...»:

Այս անգամ քեզի պիտի գրեմ կատարած excursionներու¹ վրա:

Lacs d'anthémoz (2100 m). Երկու փոքրիկ վճիտ լճակ՝ 2100 մետր բարձրության վրա՝ ժայռերուն² և ձյուններուն մեջտեղը:

Կմտածեմ, որ մեր խեղճ Դուրյանը, որ «Մելամաղձոտ լճակ իմ»-ը գրեց առանց լճակի երես տեսած ըլլալու, գրական ի՞նչ զուլվագործոց մը պիտի արտադրեր, եթե տեսներ այս զույգ լճակները՝ երկու աչքերու պես գեղեցիկ...

Col de loux (1924 m). Ասիկա սահմանագլուխ է Ջվիցերիա և Ֆրանսայի. մեկ ոտքդ գաղղիական հողին վրա կկոխես, մյուս ոտքդ հելվետական հայրենիքին վրա և մեկ ակնարկով կ'ընդգրկես Սավոյայի ամբողջ վայրենի գեղեցկությունը և Ալպյաններուն սպիտակ բարձունքները, և Ջվիցերիո, անսման Ջվիցերիո, հոյակապ լեռնաշղթաները:

Glacier de Susaube (2172 m). Սառույցի, կապտորակ հիանալի՛ սառույցի լեռներ, ուր լույսը իր հազարամեկ մոզական խաղերը կ'ընէ, ուր աչքը կսահի մինչև հեռավոր սպիտակ հորիզոնները, ուր սառ է համակ և ամայություն, և մեռելություն...

Glacier de Soix (2267 m). Միջադեպ մը. վերադարձին ճամբան կորսընցուցինք և մուրրեցանք անտառի մը մեջ. գիշեր և մո՛ւթ. անկարելի՛ է քայլ մը առնել. սխալ քայլ մը կրնա մահացու ըլլալ՝ այնքան առատ են գահավեժները:

Անտառին մեջ լույս մը. կ'ուղղվինք դեպի հոն. գեղջուկ տնակ մըն է. բարի գյուղացին 10 լապտերով կ'առաջնորդէ մեզի մինչև Շամբերիի մերձակայքը: Երբ հժե՛լ կհասնինք՝ կես գիշեր է. guide³ մը դրկեր են մեզի փնտռելու համար!

Morgins (1343 m). Քանի մը ֆրանսացի բարեկամներու հետ գացինք Մորժէն կոչված գյուղը, անցնելով Port du Soleil-ն, Port de L'Hivert-ն

¹ Ուսումնարշավ:

² Կամ ծառերուն (ղժվարընթեռնելի է ձեռագիրը):

³ Ուղեցույց:

և Lac Vertեն¹ (կանաչ գեղեցիկ լճակ մը 2161 մետր բարձրության վրա) հրաշալի panorama! Ալպյաններու ամբողջ լեռնաշղթան աչքիդ առջև կպարզվի հոյակապ նկարի մը պես:

Tour d'Ai (2400 մետր). Տասնվեց ժամ անընդհատ լեռնարշավ! Կես ճամբուն վրա կտանվի Leysin կոչված գյուղը, որուն անունը հարկավ գիտես, որովհետև աշխարհքիս լավագույն Sanatoriumները հոս կտանվին: 1400 մետր բարձրության վրա փոքրիկ գյուղ մը, բոլորովին նոր, հիանալի ու հսկա պալատներով լեցուն. այս պալատները վերջին կայանն են անոնց, որոնք պիտի մեռնին...

Հասկցար հարկավ, թե խոսքս թոքախտավորներուն համար է:

Տրտո՛ւմ ու արցունքո՛ւտ կ'անցնինք այս գեղեցիկ գյուղեն, ուր մարդ միա՛յն գունատ դեմքեր կտեսնես և փոսացա՛ծ աչքեր, և կհասնինք Tour d'Ai, նեղ ու բարձրաբերձ ժայռ մը, շա՛տ վտանգալից. անոր համար, որ ոտքի փոքրիկ թեքում մը կրնա 1500 մետր գահավիժել զքեզ անդունդին մեջ:

Արևուն մարը մտնելը կդիտենք 2400 մետր բարձունքե մը, Լեմանը, Ալպյանները, Իտալիան, Ֆրանսան, Մոն' Պլանը՝ համակ ոսկեգոծ...

Dent du Midi. (3260 m). Պատմած բոլոր excursionներս ըրի միա՛յն անոր համար, որ լա՛վ montagnard² մը ըլլամ և բավական վարժություն ունենամ կարենալ մագլցելու համար Dent du Midi կոչված հսկա լեռան մը վրա՝ Ալպյաններուն ամենաբարձր և ամենագեղեցիկ գագաթներեն մին, որ գրեթե Ջվիցերիո ամե՛ն կողմեն կ'երևա: Եվ հիրավի օգոստոս 24-ին շաբաթ գիշերը guidi³ մը առաջնորդությամբ բարձրացա գագաթը:

Տեսարա՛ն, ալա՛ղ, ամպե՛րը միայն... Վարը, ոտքերուդ տակ, ամպերուն ծովը, լայն, անծի՛ր, անծա՛յր. ամպերեն վեր, քանի մը գագաթներ և... այս տողերը ստորագրողը՝

Ո. ՉՈՒՆԿՈՅԱՆ

Հ. Գ. Champéry ինքնին կտանվի 1050 մետր բարձրության վրա: Կբարևեմ հարգելի ծնողացդ և եղբորդ:

Հ. Գ. Նամակիս եթե շուտով պատասխանես, ավելի հետաքրքրական բաներ կպատմեմ քեզի:

Ներփակ նամակը Չպուբճյանին տուր:

ՉՈՒՆԿ.

¹ Արևի Դուռ, Չմասն Դուռ, Կանաչ Լիճ:

² Լեռնական, լեռնցի:

Սիրելի բարեկամս, Պ...

Կներես, սպասուցիք թեզի. նույնիսկ շատ սպասուցիք: Այսպես են մարդերը՝ երբոր իրենց դիմաց complaisant¹ մեկը ունին, կշահագործեն ու կշարագործեն անոր համբերությունը:

Առաջ ալ դուն ինձի ատանկ չէի՞ր ըներ, պատասխանի նամակը դարերով կ'ուշացնեիր...

Բայց առանց ավելորդ նախաբաններու մեջ մտնելու լավ է, որ ուղղակի բուն ըսելիքներս ըսեմ:

«Գիտություն» լրագիր մը. լսեցի, որ հոս կա եղեր այդպիսի բան մը. մեարիֆեն² վավերացված և Պոլիս մուտքը ազատ (տեսա՞ծ ես հոն այսպիսի թերթ մը). հրատարակիչ, տեր, տնօրեն, խմբագիր, խմբագրապետ, սրբագրիչ՝ միմիայն նալպանտյան էֆենտին. երբե՞ք գործունեություն չեմ ունեցած այդ թերթին մեջ (արդեն արտասահմանի ո՛չ մեկ թերթի չեմ մասնակցիր) և տո՛ղ մը չեմ կարդացած մեջեն. ինձ ըսին, թե տարիէ մը ի վեր գոցված է եղեր արդեն. լավ է ըրեր, երանի թե բնավ չբացվեր:

* * *

Տիգրան Չիթճյանը³ ինչո՞ւ համար ինձ հարցնելո՞ւ չի կրցա հասկնալ. իր անունը շատ անգամ տեսած եմ Բյուզանդիոնի առաջին երեսին վրա. ընդհանրապես լուրջ ու լավ գրողի մը տպավորությունը կրած եմ:

* * *

«Նամակին մեջ խայթի՞չ բան մը...»: Տարօրինակ գաղափարներ ունիս երբեմն, Պ... Բարեկամական նամակներու մեջ «խայթիչ բան» կրնա՞ գոյություն ունենալ. նույնիսկ եթե գոյություն ունենա՞ կկարծե՞ս, որ վշտանամ. ես բարեկամությունը կ'ըմբռնեմ իր լա՛յն առա՞մին մեջ. անկե՞ղծ, բարի՞, անձնվեր, լայն, լա՛յն բարեկամությունը...

¹ Հաճոյակատար:

² Կրթական նախարարություն:

³ Այն տեսները Չիթճյան կ'ստորագրեի ես և Բյուզանդիոնի ու պոլսահայ թերթերու կ'աշխատակցեի, Պ... (դրուն ուղղված են այս նամակները) Սևակին հարցուցած է իմ մասին, թե կճանչնա՞:

Ու կկարծե՞ս, որ այսպիսի բարեկամության մը մեջ «խայթիչ բաներ» գրտնըվին:

Ես իմ մասիս անկեղծ խոսող ու անկեղծ գրող մըն եմ. եթե բան մը խայթե գիս, պարզապես կ'ըսեմ, որ խայթեց և ոչ թե կլռե՛մ. իսկ եթե շատ անգամ կլռեմ, վստահ կրնաս ըլլալ, որ պատճառը նամակիդ մեջ փախած «խայթիչ բան» մը չէ, այլ զբաղումներս, հավիտենակա՞ն, անվերջանալի զբաղումներս:

Մի՛ կարծեր, որ մարդ չափազանց զբաղելու համար անպատճառ... հայ վաճառականի գրագիր ըլլալու է. կբավե՛ անգամ մը բժշկության երրորդ տարվո ուսանող ըլլալ՝ ըմբռնելու համար, թե ի՞նչ է ժամանակ չունենալը:

* * *

Շատոնց ի վեր կհարցնես ինձի տեսած դասերս և աշխատությունները:
Ահավասիկ.

Առաջին տարին ըրի Chimie, Physique, Botanique, Zoologie և Anatomie Comparée¹.

Երկրորդ տարին ըրի Anatomie humaine, Histologie, Physiologie և Embryologie.²

Այս տարի մինչև Ջատիկ պիտի շարունակեմ այս միևնույն ճյուղերը և ուրիշ մի քանի théorique դասեր ալ. ինչպես նաև պիտի շարունակեմ dissectionը³, (որ երկրորդ տարիին սկիզբեն ի վեր սկսեր եմ):

Ի՞նչ է dissectionը. dissectionն է՝ դիակները դանակով կտոր-կտոր ընել՝ ուսումնասիրելու համար մարդկային գործարանավորությունը: Մինչև հիմա ուսումնասիրեր եմ ոտքը և ձեռքը, հիմա կ'սկսիմ գլուխը (ահռելի դժվար է գլուխը) և պիտի աշխատիմ գլխուն վրա երեք ամիս. անկեց վերջ կա սիրտը, փորոտիքը և ծննդական գործարանները, որոնք պետք է ավարտած ըլլամ մինչև Ջատիկ:

Ջատիկեն վերջ կմտնեմ հիվանդանոց՝ հիվանդները ուսումնասիրելու համար:

Ահավասիկ քեզի ընդհանուր հաշիվ մը տեսած դասերուս:

¹ Զիմիա, Բնագիտություն, Բուսաբանություն, Կենդանաբանություն և Բաղդատական Կազմախոսություն:

² Մարդկային Կազմախոսություն, Հյուսվածաբանություն, Բնախոսություն և Սաղմնաբանություն:

³ Անդամահատություն:

³ Ռ. Սալ

* * *

Արամիտ ոճով մը (որուն համար կշնորհավորեմ քեզ) կգծես մեր պոլսահայ գրականության caricature¹:

Իրավ որ խղճալիք crise² մը կ'անցընենք կոր՝

Պերպերյան մեռավ, Եղիա հիվանդ է, Ջոհրայա լըռեց, Սիպիլ պառաւցավ, հրապարակը... Պարսամյան և Ընկերության մնաց (խեղճ հրապարակ):

Պետք է զորավոր ցնցում մը առաջ բերել, նոր գրականություն մը, նոր արվեստ մը, նոր ոսկեդար մը ծնելու համար. պետք է որ նոր ուժեր հրապարակ նետվին, արվեստին սիրովը վառված, աշխատած, զարգացած. պետք է որ արվեստին անունովը հրապարակ նետված կեղծ ու պատիր զգացումները դադրեցվին իսպառ, պետք է որ արվեստին դրոշմը անկեղծությունը ըլլա միայն (գրել միայն ինչ որ կ'զգա մարդ, և գրել ամեն ինչ որ կ'զգա... առանց կեղծ ամոթխածության քողին). պետք է որ իրենց ուլժին գիտակցությունը ունեցող գրիչներ (նոր ու թարմ գրիչներ) սկսին վերածննդյան այս մեծ գործը: Որովհետև առանց այս վերածննդյան մեր պոլսահայ գրականությունը է՛ և պիտի մնա «ձպուռի մը անիմաստ երգը»՝ քու երջանիկ բացատրությանդ համեմատ:

Կ'երևա թե շատ կհետաքրքրվիս գրականությամբ: Հայ վաճառականի մը գրագիր ըլլալդ քեզի արգելք չէ՛, որ մտածես գեղարվեստին վրա: Այս զգացումը կրեցի՝ կարդալով վերջին նամակդ և այդ տպավորության տակ է, որ գրի առի այս մի քանի տողերս:

* * *

Ուրիշ բաներ չունիմ քեզի ըսելու:

Կարդացիր հարկավ, թե Ջունդյան Կտակին թեկնածու առաջարկեցի ինքզինքս՝ Ս. Պատրիարքին ուղղված նամակով մը:

Գիտես թե (խոսքը մեջերնիս) շատ նեղության մատնված եմ Պերպերյանի մահեն ի վեր և թե բավական ծանր դժվարություններ ունիմ դեռ կրելիք, եթե բացասական պատասխան մը հասնի ինձ Ջունդյան Կտակեն:

Որովհետև գիտես, որ մեր մեջ արժանավորագույնը չէ՛, որ կհաջողի շատ անգամ. վարդապետի cousin ըլլալը այսպիսի պարագաներու մեջ, ավելի կփնտռվի, քան թե խելացի և աշխատող ըլլալը:

¹ Ծաղրանկար:

² ձգնաժամ:

Ինչևէ. Աստված մեծ է...

Այս մասին կհուսամ, թե գաղտնապահ կ'ըլլաս:

Ներքին կղրկեմ Չպուքճյանին նամակ մը, որուն մեջ կրնաս կարդալ ավելորդ տեղեկություններու համար:

Բարևներ հարգելի ծնողացո, եղբայրներուդ, բարեկամներուս (Ջարֆճյանին քառթ դրկեցի և պատասխան չստացա) և բոլոր զիս սիրողներուն:

Անկեղծորեն բարեկամդ՝

Ռ. ՉԻԼԻՆԿԻՐ

R. Tchilinguir

27 Beau-Séjour, Lausanne.

Սիրելի Մ... և Սիրելիս Չպուքճյան. ¹

Այս անգամ մի միակ նամակով մը կպատասխանեմ Ձեր երկուքին:

Շնորհակալ եմ Չպուքճյանին իր 14 մտերմական սիրալիր երեսներուն համար և Մ...ին՝ իր սրտակից բարեկամի անկեղծ շեշտին համար:

Սաստիկ տակնուվրայության մեջ է, որ կգրեմ Ձեզի այս նամակս. տակնուվրայություն սրտի, տակնուվրայություն գործերու, դասերու, դրամի, ապագայի:

Ամբողջ ուսանողական շրջանիս մեջ ասկեց անպիտան շրջան չէ՛ի ունեցեր:

Ուրիշ մը, իմ տեղս քաջություն չպիտի ունենար շարունակելու իր կյանքը...

Ես ձեզի եղբոր տեղ կղնեմ և իբրև ա՛յն կգրեմ այս տողերս. մինչև հիմա լռություն կպահեի, գրականության և օդին վրա կխոսեի Ձեզի հետ ու ծիծղուն տողերու մեջ ծածկել կջանայի այն ահռելի ողբերգությունը, որ ի՛մս է:

Կտեսնեմ, որ անցողակի մտերմական կապ մը չէ՛, որ կ'ուզեք ունենալ հետս, ու ձեր նամակներուն շեշտը ինձ ցույց կուտա, թե դուք անոնցմե չե՛ք, որոնք բարեկամներ կ'ըլլան վայրկյանի մը համար (oiseaux de passage! ² ինչպես կ'ըստ ֆրանսացին):

Պոլսո հետ թղթակցություն չունիմ. միա՛յն Նազարյանին կգրեմ. չեմ սիրեր շատ բարեկամներ ունենալ (j'en ai souffert trop!) ³: Այս նամակս կարդացեք եղբայրորեն, գլուխ գլխի: Հեռավոր հողերու վրայեմ բարեկամ մըն է, որ կխոսի ձեզի:

¹ Այս նամակը թվական չունի, բայց որոշ է, որ նախորդ նամակեն անմիջապես հետո գրված է շղագրգիռ վիճակով:

² Տեղ փոփոխող, գաղթող թռչուն, անհարատև:

³ Այդ կողմեն շատ տառապած եմ:

Ու ահավասիկ պատմությունը:

Գիտե՞ք, որ Ջուլիայան Կուակին candidat ներկայացա՞: Այս պատճառով դադարեցուցի գրականությունը (լավ տպավորություն չ'ըներ, չէ՛)։ այս պատճառով չեմ գիտեր քանի՞ նամակ գրեցի աջ ու ձախ, անձնվեր բարեկամներ գտնվեցան (ինչպես Նազարյան, Չիֆթե-Սարաֆ, Ելքենճյան, Թեյլան, Արմեն, Քեչյան և այլն), որոնք գործեցին ինձ համար, աշխատեցան, հոգնեցան, ամիսներով, ամբողջ ամիսներով (գիտե՞ք, թե ի՞նչ դժվար է մեր մեջ հաջողիլը և թե որքա՞ն սուղ կ'արժե արդարության հաղթանակը), վերջապես ըրի՛ն ինձ համար ինչ որ կարելի էր ընել:

Կ'երևակայե՞ք իմ վիճակս ալ հեկիհե, սպասողական, ջղային, հիմա՛ր վիճակ մը: Ասոր վրա ավելցուցե՞ք դրամական ահռելի տագնապն ալ, որուն ենթարկված էի վերջին մի քանի ամիսներե ի վեր և որ այս օրերս իր ծա՛յր աստիճանին հասավ ա՛լ. ավելցուցե՞ք ասոր վրա մեծ եղբորս հիվանդությունը, 41 աստիճան ջերմություն, յոթը շաբաթներե ի վեր անկողնին գամված, հուսահատակա՛ն (ի՛նք է, որ կճարե այն քիչ մը դրամը, որուն պետք ունիմ կարենալ ապրելու համար հոս)։ ավելցուցե՞ք ասոր վրա դասերս ալ, այնքան շա՛տ, շա՛տ (այս տարի գլուխ բերելու վայրկյան մը չունիմ), ու պիտի ունենա՞ք իմ հոգեկան վիճակիս վրա փոքրիկ գաղափար մը:

Պոլսեն նամակ մը երջանիկ լուր մը կբերե ինձ. հաջողությո՛ւն, գրեթե որոշվեր է իմ ընտրությունս, այնքա՛ն մոտեցեր եմ երջանկության...

Հանկարծ... (ա՛խ, գրիչս կդողա կոր բարկութենես ու ատելութենես) հանկարծ, մարդակերպ արարած մը, որ ինձ իբրև մտերիմ եղբայր դավաներ է այնքա՛ն ատեն խոսքով ու նամակով, մարդակերպ արարած մը Պատրիարքին կներկայանա ու այնպիսի ահարկու ու սարսափեցուցիչ գրպարտություններ կպատմե իմ վրա, որ Պատրիարքը անմիջապես կզրկե՛ զիս գերագույն երջանկութենեն, որուն այսքան մոտեցեր էի...

Եղբայրնե՛րս, այս մարդակերպ արարածը Օսնիկ Պերպերյան կկոչվի:

Երբոր այս բանը պատմող նամակը ստացա, արյունը գլուխս ցատկեց, չէի կրնար կարդացածիս հավատալ:

Աստված իմ, կարելի՞ էր այսքա՛ն մահացու հարված մը ամենամտերիմ բարեկամի մը կողմես...

Գիշերը բարեկամներ եկած էին ինձի. պատմեցի եղածը. ոչ ոք ուզեց հավատալ. կարդացի՞ իրենց նամակը. այն ատեն հոգիներու կատաղի լռության մը մեջ ամենքս ալ որոշեցինք մեր ամբողջ կյանքովը ատել ու հալածել այդ վա՛տը... Ա՛խ, վրեժ, վրեժ...։

Ու ըսե՛լ, որ ե՛ս էի իր միակ բարեկամը, երբ ո՛չ մեկ մարդ կխոսեր իրեն հետ իր ամբողջ ուսանողության շրջանին, թե ե՛ս էի, որ ստացա Մեծ-Մարդուն մահվան հեռագիրը և պատմեցի իրեն, թե ե՛ս էի, որ միակ խորհրդակից ու

մխիթարող բարեկամն էի իրեն, երբ ամեն մարդ (առա՛նց բացառության) կ'ատեր զինքը, թե ես էի, որ հակառակ ծայր աստիճան թշվառության դատապարտվելուս, իրեն կուտայի գրպանիս բոլո՛ր ունեցածը՝ ամե՛ն անգամ, որ եղբայրորեն ձեռք կկարկառեր ինձի, մինչև վրայիս շապի՛կը, գուլպա՛ս, բժիշկին դրա՛մը...

Ու ըսե՛լ, որ երբոր Լոզանեն հրաժեշտ կ'առնեք, այսպես կ'ըսեր ինձի. «խե՛ղճ Ռուբենս, գիտեմ որ ինչպե՛ս նեղը մնացած ես, երբոր Պոլիս հասնիմ, առաջին անգամ թու գործդ պիտի շտկեմ»:

Պոլիս գնաց ու ահա՛ իր առաջինը գործը...

Ա՛խ, նախանձը, յոթն անգամ անիծված նախանձը...

Այս նամակը գրեցի Ձեզի, որովհետև չէի կրնար չի գրել: Բարկութենես կկատողիմ, կ'ուզեմ բողոքել, կ'ուզեմ պոռալ բոլոր ույժովս, թե եղածը վատությունն է, զրպարտությունն է, սուտ է: Սրտիս կատաղութենեն աչքերս կլենան: Մարդ ի՛նչ սիրտ ունենալու է՝ կարենալ տալու համար այսպիսի վատ հարված մը:

Վրե՛ժ, վրե՛ժ, վրե՛ժ:

Երբոր ավելի լայն ժամանակ ունենամ պիտի պատմեմ Ձեզի երկարորեն ու դուք պիտի ճանչնաք այս déçagé¹ եղած արարածը, որ հիմա ձեր մոտ կգտնվի: Ատեցե՛ք զինքը:

Բողոքի թուղթ մը ղրկեցի Պոլիս ու ըսի, որ ամբողջ Լոզանը տակնուվրա ընեն, տնօրեններուս և բրոֆեսորներուս գրեն ու եթե մե՛կ հոգի մը ըլլա, որ կրկնե Օննիկին ըսածները, ես սիրով կիրաժարիմ Ջունդյան սան ըլլալե:

Բացարձակ գաղտնապահություն կպահանջեմ Ձենե. կպահանջեմ, որ բացարձակ լռություն պահեք այս մասին, և այս նամակս չ'առածի պես ըլլաք:

Հիմակուհիմա այսչափ:

Գրեցեք ինձի:

Ձերդ անձնվեր

Ռ. ՉՆԻՆԿԻՐ

1907, 25 Դեկտ.

Սիրելիս, Մ...

Նամակդ ստացեր եմ շատոնց:

Այսօր ծնունդ է, իրա՛վ որ ձանձրալի ծնունդ մը: Մի քանի օրե ի վեր արձակուրդի մեջ եմք: Կիուսամ քիչ մը հանգստանալ եռամսյա ահռելի հոգնություններես:

¹ Այլասերած, վատասերած:

Նամակների հաճույք կպատճառեն ինձ, մանավանդ իրենց անկեղծ ու մտերիմ ոճին համար:

Կտեսնես, որ շատ գրականություն չեմ դներ նամակներուս մեջ, պատճառը այն է, որ ժամանակը ոսկի է ինձ համար, կգրեմ այնպես, ինչպես ձեռքիս կուգա:

Մեր բարեկամ Չպուքճյանը ի՞նչ կ'ընե, խեղճը հիվանդ է արդյոք, դեռ չի կրցա՞վ մտնել Հայտար-Բաշայի կայարանը: Իրմե նամակ չստանալուս համար անհանգիստ եմ իր վիճակին վրա:

Կյանքը այսպես է. ամեն ատեն լավագույն հոգիները չէ՛, որ լավագույն պայմաններու մեջ կգտնվին. ընդհակառակը:

Քիչ մը վշտացրե եմ քեզի: Ելեր ես ըսածներուս չես հավատար և Շահանին ըսածներուն ականջ կկախես:

Բայց մտածե՛, որ ես այդ խոսքերը քեզի գրելու համար որքա՛ն մտածած կշռած ու քննած եմ խնդիրը: «Պեն մալըմ թանըրըմ»¹: Բոլոր եղելությունը շատ ճիշդ է դժբաղդաբար ու դուն ավելորդ տեղը կ'ելլես ու տարակույսի տակ կդնես բան մը, որ այնքա՛ն ճիշդ է:

Դեռ լուր մը չունիմ Ջունդյան խնդիրեն, ամեն պարագայի մեջ ինձի համար ալ ունէ հույս չեմ կարծեր, որ ըլլա:

Գրե ինձի, թե ինչպե՛ս են մեր բարեկամները, շրջանավարտ ընկ՛րները, ծանոթները: Եղբայրդ կ'աշխատի՞ musiqueին, ե՛րբ հոս գալու միտք ունի: Բաբեյանը միշտ մանտոլինի դասե՞ր կուտա, խե՛ղճը: Ահարոնյանը² ի՞նչ ջուրերու վրա է, Թաշճյանը միշտ երկար մազե՞ր ունի, Շահանիկը մեծցա՞վ: Օսնիկը ի՞նչ կ'ընե կոր, կրնա՞ կոր դասավանդել, տղաքը կ'անսա՛ն կոր իրեն: Վարժարանը ի՞նչ ջուրերու վրա է, գիշերօթիկներուն թիվը կ'ավելնա՞, դժգոհներուն թիվը կքիչնա՞:

Չե՛ս գիտեր, թե որքա՛ն կհետաքրքրվիմ այդ վարժարանով և որքա՛ն նախանձախնդիր եմ անոր պապգային:

Կաղանդի առթիվ հաճույք մը պատճառած կ'ըլլաս ինձ, եթե այս բոլորին վրա մանրամասնորեն խոսիս ինձի:

Ե՛ս: Առողջությունս հիմակուհիմա գեշ չէ. ստամոքսս քիչ մը կկաղա կոր: Ամենեն շատ Պոլստ կերակուրները կարոտցած եմ: Հոս ո՛չ խմածիդ ինչ ըլլալը գիտես, ո՛չ կերածիդ. Եվրոպա ամե՛ն բան լավ է, բացի կերակուրներեն:

Դասե՛րը: Խի՛ստ շատ: Գլուխ քերելու ժամանակ չի կա: Չմոռնամ ըսելու, որ

¹ Ես իմ ծաղիկս կճանչնամ:

² Ծանոթ բանաստեղծ Ահարոնն է հիշվածը:

գանկի և abdomenի¹ dissection երկու օրէ ի վեր հաջողապէս ավարտեր եմ:

Օդերը: Տուրտ և ձյուն. սովորաբար գերոյն 2-3 աստիճան վար է հիմակուհիմա, բայց ձմեռ ատեն մինչև 25 աստիճան կ'իջնա:

Այսօր ծնունդ է ըսի: Ի՛նչ ըրինք ծնունդը տոնելու համար, առտուն քիչ մը ուշ արթնցանք, ցորեկին քիչ մը լավ ճաշեցինք, իրիկուն՝ դեմ, Ուշի (լճափ) իջանք, ու հիմա, որ գիշեր է արդեն, այս նամակս կգրեմ քեզի:

Տխո՛ւր ծնունդ արդարև:

Իրա՛վ որ խեղճ կյանք է պանդուխտի կյանքը. ծնողքե հեռու, բարեկամներե հեռու, մի՛ս մինակ՝ աշխատության սեղանին առջև:

Երազդ (երանելի երա՛զդ, որ ինձ գրեր էիր) դժբախտաբար շատ հեռու է իրականության հորիզոններեն: Եթե ատիկա երազ չըլլար, բայց կարելի՞ բան է ատիկա...

Ժամանակը ուշ է արդեն, ստիպված եմ նամակս փակել և անկողին մտնել, որովհետև քունը աչքերես կվազե կոր:

Սիրելի ծնողքիդ, եղբայրներուդ, ... յանին, ² Չպուքճյանին (թող գրե ինծի), Օշինին, Իսախրյանին (գրականություն կ'ընե՛ կոր), Զարֆճյանին և դեռ մյուս բոլոր Պերպերյանի ծանոթներուս շնորհավոր ծնունդ կմաղթեմ:

Քեզ ալ մտերմական անկեղծ ու սիրալիր շնորհավորություններ:

Մաղթենք, որ հաջորդ ծնունդը ավելի՛ երջանիկ սրտով տոնենք:

Բարի ծնունդ ամենուն:

Քուկդ՝

Ռ. Չ. ՉՈՒՆԿՈՒՅԱՆ

1908 Հունիս 22

Սիրելիս, Մ...

Վերջապէ՛ս...

Նամակդ քիչ մը կծու էր, այնքա՛ն կծու, որ ավելի չի կրցա ուշացնել պատասխանս: Կկարծես որ ծուլությունս է միայն պատճառ քեզի չի գրելուս: Գիտես, որ ա՛յնքան ալ ծուլ չեմ, մանավանդ գրելու համար: Սակայն ժամանակը կպակսի, հոգիս, ժամանա՛կը:

Երևակայե, որ ես ո՛չ թե միայն քեզի պետք է պատասխանեմ, այլ նաև ուրիշ շա՛տերու, որոնք քեզի պես կհանդիմանեն զիս լռությանս համար:

Դո՛ւն, որ կճանչնաս զիս, կրնաս ձեռքդ խղճիդ վրա դնելով ըսել, որ իմ քեզ հանդեպ ցույց տված բարեկամությունս անկեղծ է, անկե՛ղծ անոր համար,

¹ Փոր, որովայն:

² Անընթեռնելի:

որ մեր շրջանավարտ ընկերներուն մեջն միայն քեզի է, որ կգրեմ կանոնավորապես:

Ուրեմն ինչո՞ւ կասկածներ կհայտնես մտերմությանս վրա, փոխանակ ժամանակի սղությունը նկատի առնելու:

«Յոսմայա՛ նամակ» կ'անվանես այս գրելիքս: Դժբաղդաբար այդ անցնող երեք ամիսներու միջոցին ո՛չ մեկ աչքի զարնող դեպք չի պատահեցավ, որ գրեի հիմա քեզի: Հիմա լուրը քենե՛ պետք է գա, որովհետև մութ ու ամպամած շրջան մը անցնելու վրա եք: Ես չի պիտի գրեմ քեզի (հայտնի պատճառներով) ¹ կենսական հարցերու վրա: Եթե կ'ուզես տեսակցիսք քիչ մը քեզ հետ առօրյա մեր կյանքին վրա:

Իմ կյանքս ծանոթ է քեզի. առավոտն մինչև իրիկուն գրքերու, դեղերու ու հիվանդներու մեջ կ'անցնի կյանքս, Զատիկեն ի վեր, երբ հիվանդանոց ընդունվեցա:

Իսկ թու առօրյա գործունեությունդ բոլորովին մութ է ինձ համար: Միշտ տո՞ւնդ կմնաս, ինչո՞վ կպարապիս, գործնական կյանքը դեռ չե՛ս ընդգրկեր, բոլորովին հրաժարեցա՞ր եվրոպական համալսարան հաճախելու իտեալեդ, թե կպատրաստվիս՝ գրքեր կարդալով բժշկական արվեստին վրա:

Ահավասիկ քեզի հարցումներ, որոնց մասին կրնաս երկարորեն գրել ինձի և այսպիսով մեծ հաճույք մը պատճառել: Բայց դուն այդպես չես ըներ, կ'ուզես, որ մի՛շտ ես ըլլամ հանցավորը, քիչ գրողը, մոռցողը, ու սրամտությանդ տեղը կործնիս կմխես:

Ես ոչի՛նչ չեմ գտներ ըսելու, որովհետև գրելով չի բացատրվիր աշխատութենե, տընութենե, խենթութենե, զվարթութենե, մտտութե շինված այն տարօրինակ խառնուրդը, որ ուսանողի կյանք կկոչվի:

Զգալու համար ապրելո՛ւ է այդ կյանքը:

Ու զարմանալի է, որ ամեն ընկեր, որ նամակ կգրե, կ'ուզե, որ ուսանողական ամենամտերիմ մանրամասնություններուն վրա գրեմ իրեն:

Բայց ինչպե՛ս գրել: Բաներ կան, որոնք չեն ըսվիր նամակի մեջ, կխոսվին միայն:

Ու հետո միշտ կ'զգուշանամ քեզի Լեմանի կամ Զվիցերիո անճառելի գեղեցկություններուն վրա գրել: Այս բաները դուն ինձմե աղէկ գիտես արդեն Լամարդինի և Մյուսեի ա՛յնքան հրաշալի քերթվածներուն մեջն:

Իսկական ու էական հրապույրը նամակին՝ նամակագրին մտերմիկ ո՛ճն է (որուն վրա կասկած չունիս կարծեմ):

Գրե՛ ինձի թու պարագաներուդ, զբաղումներուդ, երազներուդ վրա. եղբորդ

¹ Համիտյան գրաքննութենեն զգուշանալով:

վրա, որ կպատրաստվեր կարծեմ Վիեննա երթալու. բարեկամներու վրա, և գիտցիր, որ եթե քեզի նո՛ւյնիսկ չի կարենամ շուտ պատասխանել, գոնե՛ հոգեկան մեծ հաճույք մը զգացած կ'ըլլամ՝ հեռավոր բարեկամի մը ձեռքեն ելած նամակ մը շոշափելով:

Դասերս, առողջությունս, վիճակս, ամե՛ն բան, նույնիսկ օդերը շատ լավ են:

Ժամանակս քիչ կուգա կոր քիչ մը, ասոր համար չեմ կրնար կոր քերթվածներ հասցնել անհագ ու անկուշտ Մամուլին:

Չպուքճյան բարեկամը շատոնց է, որ ձայն ձուն հանած չունի. ի՞նչ կ'ընե: Հարգալիր բարևներս ծնողացոյ և զիս սիրող բոլոր բարեկամներու:

Քուկո՛

Ռ. ՉՈՒՆԿԻՄՅԱՆ

ԵՆՈՎՔ ԱՐՄԵՆԻՆ

1906 Ապրիլ 9, Երկուշաբթի

Ենովք Արմենին

Հարգելի բարեկամ

Կներեք, որ Ձեր նամակին պատասխանը ուշացուցի քիչ մը: Ինքզինքս արդարացնելու համար չպիտի խոսիմ Ձեզի դասերուս առատության և ժամանակիս սղության վրա. ասոնք ծանոթ են արդեն Ձեզի:

Դժբաղդաբար այս նամակս այնքան երկար չպիտի ըլլա, որքան Ձերինը, քանի որ այս մասին կպակսի ինձ ժամանակը, կպակսի մանավանդ դյուրութիւնը, զոր Դուք ունիք ա՛յնքան արագ ու ա՛յնքան երկար գրելու:

Ի՛նչ բան գրեմ Ձեզի ուրեմն, որ թե՛ կարճ ըլլա, թե՛ հետաքրքրական: Վստահ եմ, թե եթե մեր համալսարանական COURSE-երուն վրա խոսիմ, բնավ չպիտի շահագրգռվիք, եթե մեր քաղաքին նկարագրությունը ընեմ, շուտով պիտի ձանձրանաք, ու եթե փորձեմ Լեմանի աղվորության ու Ալպայաններուն վսեմության վրա խոսիլ Ձեզի, պիտի ըսեք յուրովի. «Շատ ենք կարդացեր մենք այդ բաները»:

Ուրեմն! Ուրեմն պիտի խոսիմ Ձեզի այս տեղի ազգայիններուն վրա:

Թվով գրեթե հիսուն հոգի են անոնք, գրեթե ամենքն ալ Ռուսաստանէն: Ջարմանալի է իրենց լեզուն ումբերով, իսբերով լեցուն լեզու մը: Մեծամասնութեամբ ուսանող են: Գրպանին մեջ շատ քիչ անգամ միայն դրամ ունին անոնք, բայց միշտ բավական խելք ունին իրենց գանգին մեջ՝ առանց մեկ սուփ մը ամիսներ ամբողջ ապրելու համար, հոս ու հոն թափառական: Ընդհանրապես սիրուն ԵՄԵՐ են բոլորն ալ. սև աչեր, սև մազեր, սև մորուք մը ծնոտին վրա.

ահա՛ իրենց գլխավոր հատկանիշները: Ոմանք համալսարան կհաճախեն, ուրիշներ առանձին իրենց զբաղումը ունին, ոմանք bibliothèquesներու մեջ կ'անցնեն իրենց օրը, ուրիշներ (օ՛հ, այդ երջանիկ ուրիշները) անոնք կպտտուին, ամեն օր կպտտին անոնք, լճին եզերքը, բլրակին կուշտին, անտառակին խորքը, կպտտին անոնք, միշտ կպտտին սիրուն հելվետուհիներու հետ...

Ռ. ՉԻԼԵՆԿԻՅԱՆ

Հունվար 26, 1907

Սիրելի բարեկամս Ե. Արմեն

«Մասիս»-իդ մեջ մրցումի ենթարկված «Առվերի Չայնյակին պատասխանը» թարգմանելով արդեն դրկեցի քեզի:

Այցյալ տարվան մեր ամբողջ թղթակցությունը երկու փոքրիկ նամակներու փոխանակութենեն անդին չ'անցավ: Ներե՛, որ անկեց ի վեր երկտող մը անգամ չի կրցա դրկել. պատճառը՝ ժամանակի չգոյություն:

Այս նամակովս կ'ուզեմ մտերմորեն սեղմել ձեռքդ և շնորհավորել զքեզ «Կին»իդ համար, original կին մը իրա՛վ, որ մեր գրականության մեջ նորություն մը եղավ իր տեսակին մեջ, կրկնապե՛ս շահեկան իր պարունակությունովը և այն լեզվական փորձովը, որ մեր Աշխարհաբարին «դարավոր փյունիկը» իր քունեն արթնցնելու բնույթը ուներ:


Ինչպե՛ս չշնորհավորել նաև այն հսկա հաջողությունը, որ ունեցար ձեռք անցընելով «Մասիս»-ը, մեր ամենե՛ն .գրական և aristocrate թերթը, որ կհավտա՛մ, թե պիտի կրնաս շատ նախանձելի վիճակի մը հասցնել, ընելով զայն է՛ն գեղեցիկ ժամադրավայրը մեր գրագետներուն, և է՛ն փնտռված հանդեսը մեր «ինտելիքենցիա»ին:

Ես (վերջացնելու համար նամակս) պիտի փափաքեի երբեմն ոտանավոր թարգմանություններ դրկել հանդեսիդ՝ գաղղիացի նորագույն բանաստեղծներեն, հուսալով, որ հաճելի պիտի ըլլա «Մասիս»-ի ընթերցողներուն՝ գաղղիական արդի գրականության հետ շփման մեջ ըլլալ:

Իսկ գալով «Առվերի Չայնյակին պատասխան»-ին քու ճաշակիդ և քու գնահատությանդ կհանձնեմ զայն: Բնա՛վ հավակնությունը չունիմ մրցանակի արժանանալու. զայն թարգմանեցի պարզապես իբրև փորձ մը. իսկ եթե արժանի կդասես զայն մրցանակի պատիվին, tant mieux ma foi.

Բարեկամորեն կսեղմեմ ձեռքդ


Ռ. ՉԻԼԵՆԿԻՅԱՆ



Ռուբեն Սևակ, Լոգան, 1911 թ.



Ильичъ Ульянъ, 1912 г. (с)



Ռուբեն Սևակ, Արշակ Չոպանյան, Կոմիտաս




Ռուբեն Ստեփանյան, 1914 թ. Փոլսոյ



Ռուբեն Սևակ, վերջին լուսանկարը, 1915 թ.



Տրլին Յաննի Սեազը զավակները Շամրոսի և Լևոնի հետ, 1916 թ.



Շամիրամը և Լևոնը 1980 թ., Լոցցա



Զախից՝ Ռուբեն Սևակի գաղմիկը՝ Հովհաննես Չիլինցիյան և որդին՝ Լևոն Չիլինցիյան

Սիրելի Ենովջ

Այս առավոտ ստացա նամակդ: Դիտողությունդ շատ արդարացի կգտնիմ. փափաքիդ համաձայն կսրբագրեմ անկատար բայերը սահմանականի և կզըտնեմ, որ շատ ավելի կյանքոտ հանգամանք մը կ'ստանա պատկերին ամբողջությունը:

Պիտի խնդրեի, որ մասնավոր ուշադրությամբ մը հրատարակեիր այս քերթվածս, որովհետև փոքրիկ անուշադրություն մը, տպագրական չնչին սխալ մը կրնա վիրավորել ամբողջին աղվորությունը:

Հրանտին միջոցավ քեզի դրկեցի «Դրամին աղոթքը» և «Լեման» վերնագրով երկու քերթված: Առաջինը լուրջ և խոր, երկրորդը ավելի սիրային և քնքույշ: Մոտ օրեն հույս ունեմ հրատարակված տեսնել անո՛նք ալ Մասիսիդ մեջ:

Չեմ գիտեր, թե հոդ ինչպե՛ս է: Գալով այստեղին՝ շվարած եմ այդ խանդավառ ընդունելության համար, զոր կ'ընեն հոս իմ քերթվածներուս:

Շնորհակալություն entrefiletին համար, զոր այնքա՛ն լավ կերպով զետեղած էիր Մասիսիդ վերջին երեսը:

Հանդեսդ եվրոպական լուրջ հրատարակություններու նմանցնելու ջանքերըդ արդարև շատ շնորհավորելի են: Ու իրա՛վ ալ բազդատաբար շատ կարճ ժամանակի մեջ Մասիսդ առաջնակարգ դիրքի մը հասցուցիր գրականապես (չե՛մ գիտեր նյութականը) ու մեր պոլսահայ բոլորովին թեթև ու սնամեջ գրականության մեջ կրցար բավական լուրջ գրական հանդես մը սնուցանել:

Կշնորհավորեմ քեզի ու կսեղմեմ ձեռքդ:

ՌՈՒԲԵՆ ՉՄԻՆԿԻՄՅԱՆ

1907, Հոկտեմբեր 2

Մտերմական

Սիրելի Ենովջ,

Կյանքիս պայմանները անծանոթ չեն քեզի. գիտես, թե բարեկամներու օգնությամբ է, որ կ'ապրիմ, գիտես նաև, թե այս օրերս Պատրիարքին դիմեցի՝ խնդրագիր նամակով մը, իբրև Ջունդյան սանի թեկնածու: Նամակիս մեջ բացատրեցի վիճակս. ըսի, թե ինչպե՛ս Պերպերյան հանձն առած էր իմ պաշտպանությունս և թե ինչպես Պատրիարքին վրա բարոյական պարտականություն մը կծանրանար մտածելու իմ վրա՝ հիմա որ ինք հանձն առած էր

Պերպերյանի վարժարանին վերին հսկողությունը և անոր զավակներուն բարոյական հայրությունը: Ըսի իրեն թշվառության բոլոր անասելի ձևերը, որոնք ճանչցա՝ անթի չմեռնելու համար հոս, ստորնացումները, որոնք հանձն առի ձեռք կարկառելու համար աջ ու ձախ, դժվարությունները, որոնք ենթարկվեցա՝ հացին պայքարը մղելով հանդերձ երկու տարի հաջորդաբար առաջինը հանդիսանալու համար ամեն ազգի բոլոր ուսանողներուն մեջեն:

Ս. Պատրիարք, իբրև բոլոր պատասխան խնդրագրիս, ծածկեր է զայն: Կ'երևի թե «առաջուց արդեն որոշված երանելի՝ թեկնածու մը կա, որ հիմնական վանել կուտա մեր ներկայությունը «Ջունդյան մրցումեն», ինչպես գրեր էիր «Ջունդյան սան»-իդ մեջ:

Այդ թեկնածուն կթվի ըլլալ Կորյուն վարդապետին cousinը և Ս. Պատրիարքին պաշտպանյալը: Ի՛նչ արդարություն է ասիկա. Ջունդյան իր գերեզմանեն նայեր և տեսներ անգամ մը այն բոլոր մութ շահատակությունները, որոնք բո՛ւյն է դարձեր իր կտակը: Մենք այստեղ տանջվինք, տառապինք, աշխատինք, մուրանք ոամունքին սիրույն համար ու անհայտացնե՛ն մեր նամակը՝ մի՛միայն անո՛ր համար, որ cousin մը հաջողի՛! Արդոք Ջունդյան պայման դրա՛մ, որ իր սանը անպատճառ վարդապետի cousin և պատրիարքի պաշտպանյալը ըլլա... Չէ՞ մի որ աղքատ ըլլալ պետք է, աշխատող ըլլալ պետք է ու պատվավոր ըլլալ պետք է Ջունդյան սան ընտրվելու համար: Ու այս երեք պայմանները ինձմե ավելի ո՛վ լրացուց մինչև հիմա. Պերպերյանի մեջ ամեն տարի առանց բացառության առաջին հանդիսանալս, համալսարանի մեջ մասնավոր հիշատակության արժանանալս ու նույն ինքն Պերպերյանի կողմե պաշտպանվիս անժխտելի ապացույցներ չե՛ն արդեն աշխատասիրությանս: Կներես այս ինքնագով տողերուս, որովհետև երբ մարդ այսպես վատո՛րեն կլքվի անօգ ու անպաշտպան, երբ կլքվի մանավա՛նդ անոր համար, որ վարդապետի cousin մը կա մրցումին մեջ, է՛հ, այն ատեն մարդ պետք է ի՛նք ինքզինքը պաշտպանե. այսպիսի պարագաներու մեջ համեստությունը և լռությունը չէ՛, որ արդարության հաղթանակը պիտի տանին:

Երբ Ջունդյան մրցումը բացվեցավ մի քանի տարի առաջ, ամեն մարդ ուզեցին, որ «Կեդրոնականի աշակերտ» մը ըլլա ընտրվողը: Կեդրոնականի աշակերտը գնաց և «շոշո՛րդ» ելավ՝ երջանիկ բացատրությամբ համեմատ:

Անցած տարի «Լուստիե»-ի աշակերտ մ'եր դրկվողը: Իրավո՛ւնք է, որ այս տարի ալ Պերպերյանի սան մը ընտրվի, և ասիկա մեկե ավելի պատճառներով: Երբ Պերպերյան մեռավ շատեր նվիրատվություններ ըրին անոր վարժարանի հարատևության համար, ս. Պատրիարքը անոր զավակներուն հոգևոր հայրությունը ստանձնեց, վարժարանը պ. Կարապետյանին խնամքին հանձնվեցավ, իսկ Պերպերյանին որդեգրա՛լը, ոչ ո՛ք չի մտածեց այդ խեղճ արարածին վրա... Պետք չէ՛, որ ազգը գոնե ողբացյալ ուսուցչապետին հիշատակին ի հարգանք՝

խնամեր անոր որդեգրյալը:

Պերպերյան ազգին ա՛յդքան խեղճերը պաշտպանեց, մարդ ըրավ, չ՛ըլլար, որ ազգն ալ անոր մե՛կ որդեգրածը պաշտպանե...:

Սիրելիս ենովք, չես գիտեր, թե որքա՛ն չեմ սիրեր այսպիսի գործերը. բռնի՛ իրավունքը ճանչցնել տալ, ըսել, որ «ես արժանի եմ, ան անարժան է», պահանջել, որ ինձի օգնեն, փոխանակ ուրիշին օգնելու. այս բոլոր բաները չես գիտեր, թե որքա՛ն նողկանք կպատճառեն ինձի: Բայց երբ կմտածեմ, թե երկու ամիսեն Մարթեն էֆ. Հակոբյան պիտի դադրեցնե իմ ամսականը, մյուս կողմե բժշկական ծախքերս պիտի ավելնան (գործիք, գիրք և այլն), մյուս կողմե ծնողքս, որ առաջվան չափ չեն կրնար օգնիլ ինձ, որովհետև խեղճը կրցածեն ավելին ըրավ արդեն, երբ կմտածեմ, թե քանի մը ամիսեն պիտի սկսի արդեն թշվառությունը, ծա՛նր, իրական, մեռցնո՛ղ թշվառությունը և աշխատությունը (որ այսպիսի պայմաններու մեջ աշխատանք չե՛ ալ, այլ մահացու տանջա՛նք): Երբ կմտածեմ այս բոլորին վրա, իրա՛վ, որ զայրույթս չեմ կրնար զսպել: Ինչո՛ւ պահել իմ նամակս և այսպեսով գրկել զիս Ջունդյան կտակեն, որուն այնքա՛ն արժանի եմ...:

Սիրելի ենովք: Նազարյան ինձ գրեց, թե իմ մասիս բա՛ն մը կուգե գրել Մասիսի մեջ: Կխորհիմ, որ ասիկա կրնա մեծապես օգտակար ըլլալ ինձ. «Մասիս»-դ մեր մեջ սիրված հանդես մը և լուրջ մըն է: Մի՛ մերժեր ինձի օգնություն մը, որ այնքան դյուրին է ընել քեզ համար և որ ա՛յնքան կենսական է ինձ համար: Գիտես, որ Բյուզանդիոն՝ այս մասին լուր մը զետեղեց ազգային լուրերու բաժնին մեջ: Արդ չե՛ս կրնար դուն ալ, իբրև թե լուրը Բյուզանդիոնեն առնելով, լավ դարձվածքով մը ընդլայնել լուրը, ո՛չ թե բողոքելու համար, որ ինչո՛ւ պահվեր է իմ նամակս (այսպիսի փորձ մը կրնար մահացու ըլլալ գործիս համար), այլ պարզապես ըսելու համար, թե Զիլինկիրյան Ջունդյան սանի մը ամեն առավելությունները կմիացնե իր վրա և թե հուսալի է, որ իրե՛ն պիտի տան առաջնության ջվեն՝ իբրև արժանավորագույնին:

Կրնաս գեղեցիկ կերպով դարձված գրութենով մը՝ մեծապես օգտակար ըլլալու իմ դատիս և ըսե՛լ, որ հասնող մը կարենա լսելի ընել տալ իր իրավունքը:

Հոկտեմբերի 15-ին (ը. ե.) արդեն կբացվին համալսարանները. պետք է գործել, պետք է շտապել, պետք է տաք-տաք ծեծել երկաթը:

Բարեկամորեն և երախտապարտորեն կսեղմեմ ձեռքերդ և կհուսամ սուր գրիչիդ վրա...

Մտերմորեն՝
Ռ. ԶՈՒՆԿԿՐՅԱՆ

Սիրելի Ենովք

Կներես անշուշտ, որ ուսանողի հազար ու մեկ զբաղումներու մեջ ժամանակ չի գտա մինչև հիմա փոքրիկ նամակ մը գրելու հասցեիդ, ու թերևս դեռ երկարեր այս լռությունս, եթե հիմա՝ չստանայի Լազարյանի միջոցավ ինձ անջատաբար դրկված Մամուլի հոդվածդ:

Չի կրցա շնորհավորություններս ըսել այն գրական գեղեցիկ սկզբունքիդ վրա, որով կտարբերիս մեր շատ մը խմբագիրներեն՝ անգույն ու հարափոփոխ: Հարկ կա՞ ըսելու, որ Մեծարենցին, Մսրյանին և իրենց ընկերներուն տված շառաչուն դասերդ անմոռանալի պիտի մնան: Դժբաղդաբար չի կրցար գտնել պետք եղած նյութական օժանդակությունը «Մասիս»-ը՝ մեր գրական այդ classique orgaը, կանոնավորապես շարունակելու համար: Բոլոր մադթանքներս կդրկեմ քեզի ապահովել կարենալու համար «Մասիս»-իդ գոյությունը: Մե՛ղք, որ օգտակար չի կրցա ըլլալ քեզ այլապես, քան թե նիհար քերթվածներու տրցակով մը:

Մտերմական համբույրներով՝
Ռ. ՉՆԻԿԻՄՅԱՆ

ԾՆՈՂՆԵՐԻՆ

1910, Ապրիլ 28, Լոզան

Սիրելի հայր իմ և անույշ մայր իմ

Անցյալ շաբաթ ստացած եմ հինգ ոսկվո գումարը խորին շնորհակալությամբ: Շատ լավ և հանգիստ եմ, և Ձեր առողջության աղոթող եմ ամեն վայրկյան: Այսօր հինգշաբթի ըլլալով չորս օրեն հայկական Զատիկ է և հույս ունիմ, որ այն քառթերս Ձեր ձեռքը կհասնին և Ձեզ կհայտնեն իմ ամենաջերմ շնորհակալություններս ս. Զատիկի առթիվ:

Այս քառթս կներկայացնե այն հիվանդանոցը, ուր ամեն օր կ'աշխատիմ:

Համբույրներով՝
ՌՈՒԲԵՆ

26 Ապրիլ, 1911, Լոզան

Պարոն խմբագիր,

Ձեր «Գարուն» Ալվանախին Բ. թիվին մեջ ինձմե բանաստեղծություն մը (անտիպ) տպեր էիք, կխնդրեմ իմ հասցեիս ուղարկել թե այդ հատորը (և եթե կարելի է Ա. հատորն ալ), թե հոնորարս: Եթե հաջորդական թիվերուն մեջ կցանկաք ինձմե բանաստեղծություններ ունենալ՝ լավագույնն է դիմել իմ հասցեիս:

Ձերդ՝ Ռ. ՍԵՎԱԿ

ԳԱՐԵԳԻՆ...-ԻՆ

Լոզան, 22 Պեկտ., 1912

Սիրելի Գարեգին,

Որքա՛ն կ'ընե մե՛կ տարի, երկո՛ւ տարի որ մեկնեցար Լոզանեն, ու հագիվ կես պաշտոնական երկտող մը ստացա քենե՝ տղուս ծննդյան շնորհավորության համար: Լավ որ ուրեմն տղա մը ունեցեր եմ... Պիտի ըսես որ ես քենե ավելի պերճախոս չի գտնվեցա այս տարիներու ընթացքին, իրավունք ունիս և սակայն հավատա՛, որ ես ինքզինքս շատ անգամ հանդիմաներ եմ արդեն այդ ծուլության համար: «Ծուլություն»-ը այնքան ալ ճիշտ բառ չէ. մեկ կողմե իմ ամենօրյա զբաղումներս հիվանդանոցի մեջ՝ իբրև ներքին բժիշկ, մյուս կողմե իմ առօրյա այցելություններս քաղաքին մեջ զանազան հիվանդներու, ու հետո տան մեջ իմ մշտնջենական զբաղումներս իբև ընտանիքի հայր, շա՛տ շատ քիչ ժամանակ կձգեն՝ ձեռքս առնելու այն գրիչը, որուն դաշնավոր թռիչքը զիս բավական խանդավառեր էր ատենին, գիտե՛ս: Այս բոլոր terre à terre աշխատություններուս մեջ, ուր երբ հոլանի ստինք մը սեղմեմ մեջի թարախը պարպելու համար է կամ երբ փափուկ թև մը շոյեմ՝ մեջը դեղ սրսկելու համար է, կտեսնես որ շատ քիչ տեղ կմնա sentimental Սևակին...

Եվ սակայն... Ճիշդ է որ բժշկությունը իր բոլոր բարոյական վսեմության հետ մեկտեղ՝ լավ գրված հնչյակ մը չ'արժեր. ճի՛շդ է որ օրենսգիտությունը իր բոլոր մտային խորություններուն հետ մեկտեղ սա՛ փայտի կիթառիդ վրա թրթռված սպանիական սերենատ մը չ'արժեր. ճիշդ է որ կյանքը, իր բոլոր արհեստներեն անկախաբար, միայն կյանք ըսված բանը՝ կուսական վաղանցուկ

երազ մը չ'արժեր, ճիշդ է, որ բոլոր նյութական զբաղումներն դուրս, մարդ ըլլաու արհեստը, այն արհեստը, որ դպրոցներու մեջ կսորվեցնեն և որ դըպրոցն դուրս կշարունակենք սորվիլ մինչև մեր կյանքին վերջին օրը, այդ մարդ ըլլալու արհեստը կ'ըսեն, բոլոր արհեստներն ավելի զգվելի ու ավելի prosaïque է ինքնին...

Եվ սակա՛յն... Երբեմն լուսնակ գիշերով, այսպես սա պատուհանիս առաջըր կանգնած, երբոր քնացող քաղաքին ու կայծկլտացող լապտերներուն կնայիմ վերե՛ն, թևածող ձյուններուն մեջեն ու մահագին լուռության մեջեն, միայնակ, արթուն՝ սա բոլոր մահկանացուներու քաղաքին վրա, ուր ամենքն ալ իրենց ճղճիմ երազներով կքնանան, ո՛չ ոք և ոչինչ չի կրնար արգիլել զիս զգալու այն գերմարդկային, այն աստվածային բաները, որոնք կըզգամ և որ գիտեմ թե ո՛չ ոք չէ զգացեր ու չի պիտի զգա ինձմե վերջ... Ոչ ոք և ոչինչ չի կրնար արգիլել զիս այդ սև գիշերին ու ճերմակ ձյունին լուռ տոնին մեջ գինովնալու, մոռնալու կյանքը ու իր հոգերը, ու վայրկյան մը գոնե լսելու սրտիս ձայնը, այն սրտին ցավը, որ բոլոր դարերու ու բոլոր ազգերու դավաճան գիտությունը ու ես ինքս խեղդել ջանացեր ենք... Ո՛չ ոք ու ոչինչ չի կրնար զիս արգիլել, այս լուսնակ գիշերով, կոտրելու նյութին երկաթե սահմաններն ու բերդերը, հեգնելու վաղվան հոգնություններն ու հուսախաբությունները, մոռնալու նույնիսկ սա մեր գյուղերուն մեջ մեր հայրերու գլխին վրա թափվող պատերազմին արյունը, ու ազատ թողուվ միտքը իր քնարական նժույգին վրա թռելու հեռուները, շա՛տ հեռուները, կապո՛ւյտ հեռուները, Ալպերեն անդին, ծովերեն անդին, փարավոններուն ու մոմիաներուն աշխարհը, ուր, ո՛վ գիտե, սա՛ լուսնակ գիշերին, սա՛ կուսական վայրկյանին, հեռավոր բարեկամ մը, քնացող անբարոյական քաղաքին վրա, ոսկիներու ու անոթիներու հին քաղաքին վրա, աստվածային կիթառի մը թրթռները կթափե իր աղքատիկ սենյակեն՝ իր երևակայությունը Վենետիկյան Կոնտոլի մը ծփանքներուն հանձնված... Երանի՛ քեզ, բարեկամ, բյո՛ւր երանի: Ու եթե այդ երկնային վայրկյաններուդ նախկին սրտակիցդ տակավին տեղ ունի քու հիշատակներուդ մեջ, գրե իրեն կյանքիդ մասին, մարող ջահերուդ ու վառվող աստղերուդ մասին, երիտասարդությանդ ու սերերուդ մասին, ամեն բանի մասին: Ու իցի՛վ թե այս տողերս կարենային հրահրել այն կայծերը, որոնք կան և որ վստահ եմ թե դեռ չեն մարած սրտիդ մոխիրներուն տակ:

Քուկո՛
Ռ. ՍԵՎԱԿ

Սիրելի Սիամանթո

Այսօր իսկ հոս, այս սրճարանին մեջ, Պարոն Տրդատ Գազազյանեն իմացա որ ծնն կգտնվիս: Իմացա և տխրեցա. տխրեցա, որովհետև կ'սպասեի, որ իբրև հին ընկեր մը, ինձ դո՛ւն իսկ հայտնեիր գալուստդ. մանավանդ որ քեզ երկտող մը գրած էի ամիսներ առաջ Ազատամարտի հասցեով: Ձեռագիրներդ այսքան սուղ պետք չէր ծախել մտերիմի մը... Ահա սակայն ըսելիքս: Կ'ուզեմ հոս քեզ համար ընկերական փոքրիկ ընդունելություն մը սարքել այս շաբաթ գիշեր: Կանխավ հայտնեմ, որ հոս հայերը քիչվոր են, բայց քեզ սիրողները կ'ուզեն անպատճառ իրենց մեջ տեսնել հայության մեծագույն երգիչը, գոնե գիշեր մը:

Ուրեմն պատասխանե ինձ, որ... անպատճառ պիտի գաս այս շաբաթ գիշերվան համար, որպեսզի անոր համեմատ հայտարարեմ: Հայտնե նաև, թե որ ժամուն կհասնիս, ցորեկեն վերջ, որպեսզի կայարանը ըլլամ: Ջանա, որ... գիրդ ընթեռնելի ըլլա երկդիմության տեղի չտալու համար:

Եղբայրական համբույրներով՝
Ռ. ՍԵՎԱԿ

ՅԱՆՆԻ ԱՊՊԵԼԻ ԾՆՈՂՆԵՐՈՆ

Սիրելի Տիկին և Պարոն *

Ես ձեզմե ներոմ կխնդրեմ, առանց ձեզ ճանչնալու պատիվն ունենալու, այս նամակը գրելու ազատության համար: Եվ կաղաչեմ, որ ծնողական ներողամտությամբ կարդաք այս բառերը, որովհետև ես հիրավի չափազանց հուզված եմ գրելու համար այնքան լուրջ հարցի մը վրա:

Խնդիրը ձեր դստեր՝ Օրիորդ Յաննիի և տողերիս գրողի երջանկության կվերաբերի:

Ինչ ամիս առաջ մենք զիրար ճանչցանք Շամբերի գյուղին մեջ: Մեր հանդիպման առաջին իսկ օրեն անկեղծ համակրանք մը զգացինք իրար նկատմամբ, փոխադարձ մտերմություն մը, որ ավելի ու ավելի անդիմադրելի սիրո վերածվեցավ: Եվ հիմա, որ սրտի խորունկ ցավով իմացա օրիորդ Յաննիին

* Այս և հաջորդ բոլոր նամակները Ռ. Սևակը գրել է ֆրանսերեն: Արևմտահայերեն թարգմանել է Արրահամ Ալիքյանը:

մեկնումը մեր քաղաքեն, կփութամ սրբազան պարտականություն մը կատարել: Մեր երջանկության օրերուն մենք բոլորովին լուրջ, խստապահանջ և տևական սեր մը խոստացանք իրարու, և ես խոսք տվի իրեն ձեզմե խնդրելու իր ձեռքը: Ահա այդ խոստումն է, որ կուզեմ կատարել այսօր:

Ճիշդ է, որ դուք պիտի չուզեք անմիջապես վճռել ձեր դատեր բախտը ուսանողի մը հետ, զոր չեք ճանչնար տակավին:

Բայց ձեզմե խնդրածս շտապողական ամուսնություն մը չէ, որովհետև ես դեռ չափազանց երիտասարդ եմ՝ քսաներկու տարեկան: Կուզեի միայն խնդրել ձեզմե, որ նշանեիք մեզ հիմա և թղթակցելու ազատություն տայիք մեզի: Ես դեռ պետք է երկու տարի սորվիմ բժշկության տոքթյորի աստիճան ստանալու համար, իսկ նշանտուգի այդ երկու տարիներու ընթացքին դուք կրնաք լավագույնս ճանչնալ զիս, ուշադիր քննել իմ բնավորությունս և սովորություններս, խորազննել սիրտս. և եթե զիս կատարյալ գտնեք, այն ատեն միայն թույլ կուտաք մեր ամուսնությունը:

Նախ և առաջ կուզեի ձեզմե խնդրել, որ օրիորդ Յաննիի նկատմամբ տածած զգացումս թեթև ու անցողիկ սեր մը չնկատեիք: Անոր նամակներեն զրկվելես ի վեր կզգամ, թե կյանքն ինձ համար տառապագին կդառնա, իսկ աշխատանքը՝ անկարելի, և չեմ կարծեր, որ օրիորդ Յաննին ալ երջանիկ ըլլա առանց իմ լուրերուս:

Ես այն ջերմիկ հավատքն ունիմ, թե դուք բարի կըլլաք ձեր դատեր և ինծի նկատմամբ, որ կուզեմ ձեր զավակն ըլլալ: Տվեք մեր սիրույն ձեր ծնողական օրհնությունը, և ես կխոստանամ կարելիս ընել, որպեսզի հաճո ըլլամ ձեզի, հավատարիմ ու հնազանդ, որպեսզի ձեզի արժանի զավակ մը դառնամ:

Մեր նշանտուգի և ամուսնության ամբողջ տևողության ես իմ մեծագույն հույսս դրած եմ ձեր հաճության և իմաստուն խորհուրդներուն վրա: Դուք կրնաք լիովին վստահիլ ինձ և ապահով ըլլալ, որ ես շատ ճշգրտորեն և ամենայն անկեղծությամբ կպատասխանեմ ձեզ հետաքրքրող բոլոր հարցերուն:

Այն հույսով, թե ձեզմե ուրախալի պատասխան մը կստանամ, որ ձեր դատեր և ինձ հավերժական երջանկություն պիտի պարգևե, մնամ, սիրելի Տիկին և Պարոն,

ձեր շատ խոնարհ և շատ հնազանդ զավակը՝
Ռյուֆինս Չիլինկիր (բժշկ. ուս.)

Փետրվար 4, 1908, Լոզան

Սիրելի ծնողներս,

Ես երջանկություն ունիմ հաղորդելու ձեզի, որ ստացա վեց տարիներն ի վեր այնքան երազված բժշկության տոբթյորի աստիճանի վկայականս: Առաջին պարտականությունս է երախտագիտությունս հայտնել ծնողներուս. այսպես, իմ հարազատ ծնողներուս նվիրեցի վկայականս՝ այնքան տարիներու աշխատանքի պտուղը, իսկ ձեզի ալ ձոնեցի ավարտական թեզս՝ իմ գիտական ուսումնասիրություններուս առաջին գիրքը: Այսպես վարվելով, կկարծեի, թե հաճույք կպատճառեմ ինչպես ձեզի, այնպես ալ կնոջս: Ուստի հույս ունիմ, որ մոռցնել կուտամ ձեզի անցած օրերու հակամայս տրված մորմոքները, և սիրելի է ինձ հավատալ, թե ասկե ետքը ամեն ինչ ավելի լավ ընթացք կստանա...

Գալով կնոջս, հարբուխ մը արգելք եղավ իր ճամբորդելուն. բայց հիմա լավ է արդեն և վաղը, հինգշաբթի, կմեկնի Լոզանեն: Կաղաչեմ, մի՛ մտահոգվիք իր ուղևորության վերաբերյալ. ան ողջ ու առողջ կհասնի ձեզի:

Ձեր որդին՝ Ռուբեն

ՅԱՆՆԻ ԱՊՊԵԼԻՆ (ՍԵՎԱԿ)

Սեպտեմբեր, 1907

Սիրելիս,

Շաբաթ գիշեր է, ժամը 10.30: Լիճեն կվերադառնամ և աչքերս զոցելե առաջ կուզեմ սիրո ու մտերմության քանի մը անուշ բառեր ըսել Ձեզի: Այս իրիկուն Ուշի էի, և այնքան գեղեցիկ էր հոն: Շատ մեծ, անհավատալիորեն մեծ ու կարմրավուն լուսին մը կար լիճին մեջ արտացոլող ձյունոտ լեռներուն վրա, Շամբերիի կողմեն... Իսկ Քոյերու, Լեյզենի, Ֆրանսայի կողմեն հազարավոր լուսեղեն աչուկներ կհայլփլեին: Լիճին վրա կային կարապներ, պզտիկ նավակներ, կային տակավին ուրախության կանչեր, հեռալուր երգեր, որ կհասնեին մեղմիկ այլակներուն վրա մանրամաղվող արծաթյա լուսնափոշիին մեջեն... Աշխարհիս մեջ բարեբախտաբար անկյուններ կան, ուր կարելի է սպրիլ առանց երբեք ձանձրանալու, չքնաղ բնության գիրկը: Ի՞նչ է կյանքը: Ի՞նչ է երջանկությունը: Աստված իմ, այնքան քիչ բան է պետք երջանիկ ըլլալու համար: Երբ աչքիդ առջև ունիս այս գեղեցիկ բնությունը, այնքան քաղցր, այնքան խորունկ ու խաղաղավետ, կրնաս ուրիշ բանի մասին մտածել, բացի երջանկութեն: Երբ ամեն առավոտ արթննալով, այս կախարդական անհուն կապույտեն ծվեն մը կտեսնես, որ իր ջուրերուն մեջ կցոլացնե սպիտակ Ալպերուն

զագաթները, կզգաս, թե սիրո և իտեալի համար ես լավագույնս ստեղծված, այնպես չէ՛: Աղվո՛րս, ամեն բանն ավելի սիրե բնությունը: Միայն բնությունն է բարի, գեղեցիկ և իտեալական: Միայն մարդերն են գեշ, երկրային և շինծու: Եվ երբ սորվիս պետք եղածին պես սիրել բնությունը, այն ատեն միայն կհասկնաս, թե ինչ է սերը, երջանկությունն ու հոգեկան խաղաղությունը: Օրինակ, զիս ոչինչ կրնա ավելի հանգիստ ու ավելի երազուն դարձնել, քան գեղեցիկ մայրամուտ մը հորիզոնի անսահմանության մեջ:

Անցնի՛նք: Կինդդեմ, ըստ սիրելի ծնողքիդ, թե ես արդեն իսկ հորդ գրած եմ իմ դիտավորություններոս մասին: Հուսով եմ, որ նպաստավոր պատասխան մը կստանամ: Կուզեի ուղղակի ծնողքիդ գրել այս բանը, եթե անոնց հասցեին դրկած չըլլայի մեկն ավելի նամակներ, որ անպատասխան մնացին:

Կտեսնեմ, որ կհառաջադիմես հայերենին մեջ, շատ շնորհակալ եմ: Մանավանդ մի՛ մռռնար դաշնամուր նվագելը կատարելագործել: Երզը մեկ կողմ չես ձգեր, չէ՛:

Շատ գոհ կմնայի, եթե բան մը ունենայի քեզմբ: Բայց կկարծեմ, թե քեզի համար դժվար կըլլա նաշխուն չփակ մը հյուսելը, այնպես չէ՛: Համենայն դեպս, ես չեմ որ պիտի ուզեի հրաժարիլ քեզմբ եկող նման հիշատակե մը: Շնորհակալ եմ:

Այս ամառնային կիսամյակին կաշխատիմ բժիշկ Պուրծեի հետ, որ ստամոքսային հիվանդությանց մեծագույն մասնագետներեն մեկն է աշխարհի մեջ: Ան կվարե Percussion-ի և Auscultation-ի (բառարան նայե՛) դասընթացները: Ատկե զատ կհետևիմ obstétrique Normale-ի դասընթացներուն, ինչպես նաև ուսուցչապետ Կալի-Կալլերիի Առողջագիտության: Ամառնային այս դասընթացները չափազանց ուսանելի են, բայց քիչ մը ծանրաբեռնված:

Հիմակուհիմա ահա քեզի քանի մը տեղեկություններ ալ մեր սիրելի լեզվի մասին.

mon (ma) — ըս	}	ավելցնել բառի վերջավորության:
ton (ta) — ըդ		
son (sa) — ը		

mon nez — քիթս (nez — քիթ)
 ta lettre — նամակդ (lettre — նամակ)
 son livre — գիրքը (livre — գիրք)

j'ai — ունիմ	je suis — եմ
tu as — ունիս	tu es — ես
il a — ունի	il est — է

j'ai reçu — առի ai - je reçu — առի?
tu as reçu — առիր as - tu reçu — առիր?
il a reçu — առավ a - t-il reçu — առավ?

j'ai reçu ta lettre — նամակդ առի
j' ai reçu ta longue lettre — երկար նամակդ առի
as-tu reçu ma carte — բացիկս առիր?

et — եւ
ce matin — այս առավոտ (ce - այս)
mais — բայց

ma mère a reçu une lettre ce matin — մայրս առավ մեկ նամակ
այս առավոտ:

pour écrire — գրելու համար
pour aimer — սիրելու համար
pour baiser — համբուրելու համար (baiser — համբուրել)

lundi — երկուշաբթի
mardi — երեքշաբթի
mercredi — չորեքշաբթի
jeudi — հինգշաբթի
vendredi — ուրբաթ
samedi — շաբաթ
dimanche — կիրակի (քի-րա-քի)

envie — փափաք
grand — մեծ
j'ai grande envie de t'embrasser — ունիմ մեծ փափաք քեզի համ-
բուրելու:

mon doux chéri — անուշ սիրելիս
aujourd'hui j'ai reçu ta longue lettre — այսօր առի երկար նամակդ:
je n'ai pas le temps d'écrire une longue réponse — չունիմ ժամանակ
գրելու մեկ երկար պատասխան:
je t'aime beaucoup — շատ կսիրեմ քեզի:
et je t'aimerai éternellement — եվ քեզի պիտի սիրեմ հավիտենապես:

hier as-tu reçu ma carte? — երեկ առիր բացիկս?

mille baisers, ta Yanni — հազար համբույր, քու Յաննիդ:

Կվերջացնեմ նամակս, ճշմարիտ սիրո հազար երկու համբույր դրկելով քեզի:
Կխնդրեմ, ջերմ բարևներս հաղորդե սիրելի հայրիկիդ ու մայրիկիդ:

Bonne nuit (գիշեր բարի), իմ շատ, շատ, շատ սիրելի նշանածս:

Քու հավատարիմ Ռուբինսդ:

(Նամակին սկիզբը կպակսի)

Ինչ կվերաբերի Հայաստանի մեջ տեղի ունեցող խռովություններուն, վտանգավոր բան չկա: Թերթերը ժամանակ առ ժամանակ որոշ ջարդերու լուրեր կիրատարակեն, որպեսզի մեծ տերություններուն ուշադրությունը հրավիրեն սուլթանին վրա: Բայց իրականության մեջ ոչինչ կա: Եվ հետո եթե նույնիսկ դժբաղդություններ պատահին, Հայաստանի ներսերը տեղի կունենան: Իսկ իմ ծնողքս, որ Կոստանդնուպոլիս կապրին, բոլորովին գերծ են վտանգե:

Հիվանդ չե՞ս արդոք: Տխո՛ւր ես առաջվա պես: Շա՛տ ես ջղայնացած վրաս, որ հաճախակի և ըստ բավականին երկար չեմ գրեր քեզի:

Երեկ հաճելի պտույտ մը ըրի ղեպի Պոնավո և անկե՝ Պարմազ: Մինչև օրս ուրիշ շրջագայության չեմ ելած: Վաղը թերևս Սյուզոֆ սառցադաշտը երթամ: Պեռլինաբնակ գերմանացի տիկին մը և իր որդին, Ուլի (Ուլրիխ) անունով, խնդրեցին, որ իրենց ուղեկցեմ մինչև Պոնավո առաքելական աթոռը, բայց ես կնախընտրեմ մինակս երթալ, քան Էլխուք տիկիններու և Հերց Ուլրիխ պարոններու հետ:

Այնքան տաք է այստեղ, այնքա՛ն տաք: Էրֆո՛ւրտ ալ այսքան տաք կընե:

Ահ, ա՛յո: Ըսե, ինչո՛ւ չես ուզեր գերմաներենի դասեր տալ ինծի, ծուլի՛կըս:

Գուցե կարծեցիր, որ լուրջ չե՛մ ես: Բայց ո՛չ, լրջորեն: Գործի անցնիսք քու հաջորդ պատասխանեդ սկսյալ, կուզե՛ս: Մի՛թե կհոգնեցնե քեզ, չեմ գիտեր:

II

Ահա հիմա անկողին պիտի մտնեմ, որովհետև այսօր շատ եմ հոգնած: Ա՛լ չեմ կրնար գրել: Կնախընտրեմ աչքերս գոցել և երազել քու, միշտ քու մասիդ, իմ աղվոր, աղվո՛ր Յաննիս: Պատուհանեդ երկարե մազերդ, կուզեմ համբուրել զանոնք: Ո՛ւր ես դուն, սիրեցյա՛լս: Ի՛նչ կըլլա, քիչ մը թուս եկուր, քիչ մը, քչիկ մը: Դիր շրթներդ աչքերուս վրան, գոցե զանոնք, մատներովդ գզվելով և հետո մեղմորեն, շատ մեղմորեն մոտեցուր կուրծքդ կուրծքիս, սիրտդ սրտիս, ձուլե թներդ թներուս, և այդպես երկնային սիրո մը մեջ ննջենք երջանկորեն ու

տարփագին, ինչպես միահյուսված երկու մարմարե արձաններ:

Գիշեր բարի, սիրելի՛ս:

Անցյալ շաբաթ Շամբերին հինավուրց ռազմիկի մը գլուխ ներկայացնող պզտիկ զարդասեղ մը գնեցի, որ վարպետ ձեռքի գործ է, և կկարծեմ, թե քեզի հաճույք պիտի պատճառե: Չեմ կրնար փոստով դրկել զայն, կուզեմ Լոզանի մեջ մեր առաջին իսկ հանդիպման տալ քեզի: Ասիկա հիշատակ մըն է այն գյուղական, ուր անցուցինք մեր երիտասարդության գեղեցկագույն օրերը և ուր սիրեցինք զիրար Տան տը Միտիի վսեմ գազաթներուն առջև, արծաթյա սուրբ Կույսի շշուկներուն ունկնդիր, մեր սիրո կախարդական լուսնալույսին տակ: Օհ, շատ էր հմայագեղ մեր սերը Շամբերին մեջ, գիշերները լեցուն էին հույզերով, ցերեկները՝ տենչանքներով...

Հիմա որքա՛ն կուզեմ համբուրել քեզ, համբուրել, համբուրե՛լ, սրտիս ամբողջ տարփանքով, շրթներուս բովանդակ ուժով, ջիղերուս ամբողջ խենթութամբ, աչքերուս ամբողջ թախծով:

Որքա՛ն քաղցր ես դուն, ղզվոր Յաննի՛ս, որքան քաղցր է քու հիշատակը և որքա՛ն անուշ է սիրո տխրությունը...

Շատ անգամ, քու նամակներդ կարդալես հետո, գինովություն մը կպարուրե զիս, երազի և հույզերու գինովություն մը, որ իր թևերուն վրա զիս կտանի դեպի անսահմանությունը, և մենք հոն կգտնենք զիրար, կգրկախառնվինք, կմիաձուլվինք սիրո և տխրության հավերժությամբ և կթափենք տարածության մեջ երկու թեթև ամպերու նման... Յաննի՛, Յաննի՛...

Եվ մտածել, որ դուն զիս կսիրես այդպիսի՛ սիրով: Օհ, երջանկություն է սիրել և սիրվիլ, երջանկություն է գոցել աչքերդ և երազել անհունորեն քաղցր բաներու մասին, երջանկություն է կարենալ արտասվել բացակա սիրեցյալի մը համար...

Անուշ Յաննի՛ս, ես տխուր եմ ու երջանիկ քու պատճառովդ, ես քեզի շատ երջանկություն կպարտիմ և շատ արցունքներ...

Եկո՛ւր, սիրելի Յաննի՛ս, բաց ինձի սիրտդ, կուզեմ սիրո արցունք մը կաթեցնել հոն, ինչպես ծաղիկին մեջ կայլակող ցողի շիթը...

Դուն իմ ծաղիկն ես, բոցս, երջանկությունս...

Շրթներուդ համար:

Բարեկամդ՝

Կարգադրված է արտատպել և տպագրելու ըստ հիշյալ հոդվածի: Ռ. 2.
Սեպտեմբեր 6, 1907

Անուշ Յաննիս,

Կկարծեմ, թե այս անգամ բավական գրելիք ունիմ քեզի: Նախ և առաջ կուզեմ ըսել, թե այլևս Շամբերի չեմ: Օրերե ի վեր կսպասեի նամակիդ և քիչ մը անհամբեր էի դարձած: Երկուշաբթի առավոտ առի զայն, կարդացի և այնքան ինքզինքես ելած էի, որ այլևս չէի կրնար Շամբերի մնալ... Ամիջապես մաքրեցի տիկին Պերրայի հետ հաշիվը և մնաս բարով ըսի իմ սիրելի փոքրիկ Շամբերիին: Շատ զվարճալի էր ճամբու վրա մեզ տեսնելը: Ես մանտոլին կնվագեի (հիանալի մանտոլին մը ունիմ), իսկ բարեկամս մեր դժբախտ երկրի տխուր երգերեն կերգեր... Եվ կքայեինք նվագելով ու երգելով, և մանտոլինի հնչյունը կթրթռար թռչնակի մը մեկամաղձոտ կանչին պես: Տխուր էր հեռանալ այդ գեղեցիկ բնութենեն, վսեմ ու սեզ լեռնագագաթներեն: Իրոք, շատ տխուր էր բաժնվիլ այդ երկրային դրախտեն, բայց ես ա՛լ չէի կրնար մնալ այն վայրերուն մեջ, ուր ատեն մը այնքան երջանիկ էի, ուր ամեն ինչ Յաննին կհիշեցներ, ուր ես միս-մինակ էի հիմա... Կուզեի հեռանալ, հեռանալ այդ թախծագին հիշատակներեն... Եվ մանտոլինը կդողդղար ձեռքերուս մեջ թիթեռնիկի դժբախտ սրտիկի մը նման...

Պատմություն մը.

Մենք էկլեն մեկնեցանք իրիկվան ժամը յոթին, և շոգեկառքը Վեվին առջևն էր ժամը ութին: Մեր ուսանողական գլխարկները փաթթեր էինք թուղթի մեջ և վակոնին մեջ դրեր էինք մեր թուփկը: Վեվեյ իջնողները տարին փոքրիկ փաթեթը, ուր մեր գլխարկներն էին: Ամիջապես իջանք մեր գլխարկներու ետևեն, բայց ավա՛ղ, ամեն ինչ վերջացած էր: Այն ատեն Վեվեյ ճաշեցինք և վերջին՝ ժամը տասնի շոգեկառքով հասանք Լոզան: Ահա պատմությունը, կարճ ու տխուր: Այդ գլխարկները կարծեին 24 ֆրանք, բայց դրամը չէ, որ կափսոսամ, այլ պիտակը...

* * *

Ուրիշ պատմություն.

Ուրբաթ առավոտ բարեկամիս հետ գացի Տան Պլանշ բարձրանալու համար: Գիտես, որ այդ վերելքը ավելի դժվար է, քան Տան տյու Միտի բարձրանալը: Եղանակը հիանալի էր: Երեք ժամ քալելէ ետքը, երբ արահետը անհետացավ, որպես առաջնորդ պզտիկ հովիվ մը վերցուցինք մեզի հետ: Բավական վտանգավոր էր և գլխու պտույտ պատճառող: Գրեթե հասեր էինք գագաթին, երբ ամպեր կուտակվեցան, սկսան որոտոմներն ու տեղատարափը: Ամիջապես ետ դարձանք, սարսափահար: Չոր թել չմնաց մեր վրա: Ժայռերը այնքան սայթա-

քուն էին դարձած, որ չիյնալու համար աչքերնիս չորս կբանայինք: Շատ նեղ անցք մը կա հոն, ուր այս տարի, անձրևոտ օր մը, երեք հոգի իրենց մահը գտեր են: Երևակայե, թե ինչպես կդողդոլայինք այդ անցքին վրա... Բարեբախտաբար անվտանգ իջանք և հեղեղանման անձրևին տակ երեք ու կես ժամ վազելե ետքը, խխում կտրած, հասանք Շամբերի... Ահա պատմություն մը, որ շատ պիտի տխրեցնեք ձեզ: Դուն թերևս մտածես, թե ես կապվելիք խենթ մըն եմ, չափազանց անխոհեմ, թե ձեռք եմ քաշած կյանքես և այլն: Բայց մի՛ բարկանար, աղվո՛րս, իմ խելքս ավելի քան տեղն է, ես չեմ ուզեր վտանգներու ընդառաջել, քանի որ կսիրեմ ձեզ...

Ուրիշ պատմություն: (Մի՛ վախնար: Այս մեկն արդեն ուրախ պատմություն է):

Գեղեցիկ բանաստեղծություն մը գրած էի: Կոստանդնուպոլիս դրկեցի: Այդ քերթվածը տպվեցավ Մասիս շաբաթաթերթին մեջ, որ Կոստանդնուպոլսո ամենահայտնի գրական շաբաթաթերթն է: Ընթերցողները այնքան սիրած են այդ բանաստեղծությունը, որ շաբաթաթերթին արտոնատերը շնորհակալական և շնորհավորական նամակ մը դրկած է ինձի: Այդ քերթվածը կկոչվի «Գինով սեր» և ձևաված է օրիորդ Յաննի Ապպելին (քու անունդ տպված է ֆրանսերեն):

Բոլոր անոնք, որ անունդ կարդացեր են բանաստեղծության վրա, նամակներ են գրած ինձի գիտնալու համար, թե ո՛վ է օրիորդ Յաննին: Ես պատասխանեցի, թե նշանավոր դերասանուհի մըն է այդ օրիորդը:

(Բայց դուն օր մը նշանավոր դերասանուհի պիտի դառնաս, այնպես չէ՞):

Երբ Լոզան գաս, կուզեմ այդ շաբաթաթերթեն հատ մը տալ ձեզի: Իհարկե դուն չես հասկնար քերթվածը, բայց առնվազն կտեսնես անունդ, որ ֆրանսերեն է: Գո՛հ ես հիմա, պզտիկ արվեստագետս: Ուրախ ես, որ Հայաստանի մեջ ամեն տեղ պիտի կարդան անունդ և իմանան, թե աշխարհի մեջ գոյություն ունի Յաննի անունով սքանչելի եակ մը:

Դուն չէիր գիտեր, որ քու նշանածդ բանաստեղծ է: Երբ Լոզան գաս, կտեսնես այն բոլոր բանաստեղծությունները, զոր ես հրատարակած եմ մինչև հիմա արվեստի և գրականության մեր գլխավոր հանդեսներուն մեջ: Հայ ժողովուրդը շատ կսիրե զիս, և թեպետ շատ երիտասարդ եմ, արդեն իսկ հանրաճանաչ կեսավիմ: Հույժ զգացական կհամարեն զիս: Մեկ խոսքով, երբ ձեզի հայերեն սորվեցնեմ, դուն ինքդ կկարդաս և հասու կըլլաս մտքերուն և զգացումներուն այն պտղլիկ արարածի, որ քու նշանածդ է...

* * *

Ուրիշ պատմություն: Կիրակի օր. Սառա Պետնարը պիտի գա Լոզան Քամելիազարդ տիկինը խաղալու համար: Պիտի գա իր ամբողջ խումբով: Պետք է որ հետաքրքրական ըլլա: Ես գնեցի իմ տոմսը, պզտիկ նախանձո՛ւտս: Եթե այստեղ ըլլայիր, միասին կերթայինք թատրոն ծափահարելու համար թատերական այդ մեծ տաղանդը: Շատ ափսոս, որ Լոզան չես, այնպես չէ՛, իմ շատ սիրելի Յաննի՛ս:

* * *

Այն ուղևորությունը, զոր ծրագրած էի դեպի Շամոնի և Մեր տը Կլաս, չկատարեցի ամպամած ու ցուրտ եղանակին պատճառով: Օր մը, թերևս, կարենամ քեզի հետ երթալ հոն...

Խորապես շնորհակալ եմ այն գործվածքի համար, զոր կիյուսես ինձի համար: Քու մատներեդ ելլելիք այդ բանվածքը շատ մեծ հաճույք և ուրախություն պիտի պատճառե ինձի: Երախտապարտ եմ, աղվո՛րս:

Փոքրիկ կատուին բոժոժը չհանեցի վիզեն: Այդ բոժոժը այնքա՛ն կվայլե անոր, որ դաժան բան կըլլար հանելը: Քու հիշատակդ ձգեցի կատուին վրան, որպեսզի ան առտու-իրիկուն իր թրթռուն զնգոցով մեր սիրավեպը պատմե այդ գեղեցիկ արարածին...

Մոռցա քեզի ըսելու, որ ստացած եմ Էվիանի բացիկը: Ռուլլեն մեկնելեդ առաջ պետք է այդ գյուղի տեսարաններեն դրկես ուղղակի իմ հասցեիս (27, Պո-Սեժուր, Լոզան): Այդ բացիկները սքանչելի հիշատակներ պիտի ըլլան այն գեղեցիկ գյուղակեն, ուր դուն բանտարկված էիր, ինչպես չքնաղ թռչնիկ մը իր ոսկի վանդակին մեջ...

Պարոն Իերսենը (ձեր քահանան) ինձմե արևելյան դրոշմաթուղթեր խընդրած էր: Օրերս քանի մը հատ դրկեցի իրեն և նամակ մը առի իրմե, ուր Լոզան վերադարձիս Ռուլլ կիրավիրեր զիս: Ես Լոզան եմ արդեն, բայց դեռ չեմ պատասխանած իր նամակին... Մեյ մը մտածե. ես ապո՛ւշ եմ, որ Ռուլլ երթամ և գլուխ դնեմ ժերան օրիորդներու՝ այդ ծեր մկնիկներու և տիմար ու խեղճ ոչխարներու նման գիշերօթիկ աշակերտուհիներուն հետ... Երևակայե մեյ մը, Յաննի՛, ես արդեն կսկսիմ խենթի պես խնդալ... Օ՛, ո՛չ, ես Ռուլլ զացողը չեմ:

Դուն պետք է անմիջապես գրես ինձի, առանց վայրկյան կորսնցնելու (որովհետև այս անգամ շատ ուշ ստացա պատասխանդ՝ միայն երեկ առավոտ): Պետք է գրես, թե ո՛ր օրը և ո՛ր ժամուն կհասնիս Լոզանի կայարանը: Ռուլլեն ո՛վ պիտի գա հետդ: Մինա՛կ պիտի ճամբորդես: Տեր և տիկին Սփիեսները կայարան պիտի գա՛ն: Պետք է ամենայն մանրամասնությամբ գրես ինձի այս բոլորը:

Եթե մինակ գաս, մենք կրնանք աղվոր պտույտ մը ընել, նախքան Սփիես գիշերօթիկնոց երթալը, կրնանք լրջորեն խոսիլ (որովհետև կուզեմ հետո խոսիլ ոսկի շղթայի կապակցությամբ) և կրնանք մեր ուզածին չափ համբուրվիլ... Այդ պտույտը շատ-շատ կես ժամ կտևե: Ատկե ետքը Սփիես գիշերօթիկնոց կառաջնորդեմ քեզ...

Բայց եթե տիկին Սփիեսը կայարան ըլլա, ամեն բան կվերջանա. ես չեմ կրնար կայարան գալ, որովհետև քեզ տեսնել ու չհամբուրե՛լ...

Ուրեմն, պետք է մտածես, պետք է կարգադրես գործը: Դուն հնարամիտ ես, կրնաս միջոցներ գտնել:

Ըսե իրենց, թե մինակդ կրնաս գտնել Սփիես գիշերօթիկնոցը, որովհետև Լոզանի կայարանի սպասման սրահին մեջ երիտասարդ ուղևոր աղջիկներու գործով զբաղող խնամակալ կին մը կա:

Ամեն պարագային, եթե մինակ չգաս, կամ եթե պարոն Սփիեսը կայարան ըլլա, մեր գործը կդժվարանա...

Մտածե և շուտ գրե ինձի:

Հազար համբույր և ցտեսություն, սիրելի՛ս... Ռ. 2.

Լոզան, Սեպտ. 25, 1907

Սիրելի բարեկամուհիս,

Գոհ ես, չէ՛, որ այսքան խենթ սիրահար մը ունիս: Դեռ չեմ ստացած նամակիս պատասխանը, ահա ուրիշ մը կգրեմ: Պատճառն այն է, Յաննի՛, որ կսիրեմ քեզ... Կհավատաս ինձի, այնպես չէ՛:

Կհիշեմ մեր ծանոթությունը Շամբերիին մեջ: Երբ քեզի հարցուցի, թե կսիրե՞ս զիս, դուն շատ տարտամ, շատ վարանոտ ձևով մը պատասխանեցիր ինձի... Ես ըսի, թե շատ կսիրեմ քեզ: Շա՛տ... Այդպես ըսելը քիչ էր: Քեզ սաստիկ կսիրեի, խենթի պես, բայց այս ձևով չէի արտահայտվեր, որովհետև... Այս «որովհետև» բացատրելը դժվար է. ես չափազանց հպարտ բնավորություն ունիմ: Եթե աղջիկ մը չի սիրեր զիս, ես երբեք չեմ կրնար ըսել, թե խենթի պես կսիրեմ իրեն... Բայց հիմա կզգամ, որ դուն կսիրես զիս և կսիրես պետք եղածեն ալ ավելի: Ահա թե ինչու այդքան սիրահարական եմ քեզի գրած նամակներս:

Ես չեմ ճանչնար քու բնավորությունդ: Քեզմե ամբողջ գիտցածս այն է, որ դուն գեղեցիկ ես, զգացական, արվեստագետ: Ուրիշ բան չեմ գիտեր: Կկարծեմ նաև, թե բնավորությամբ անկեղծ ես: Այսքանն իսկ բավական է. գեղեցկություն, արվեստ, անկեղծություն:

Ասկայն կուզեմ քեզի ըսել բան մը, միայն մեկ բան. այն, որ դուն չափազանց արվեստագետ ես: Յաննի՛, քու զգացումներդ այնքա՛ն սաստիկ են, այնքա՛ն բուռն, որ անոնք քեզ համակ կրակ կդարձնեն, համակ բոց ու խենթություն: Ես կսիրեմ սիրո, երազի ու սրտի այդ վսեմ խենթությունը, այդ խենթությունը իտեալական: Բայց զգո՛ւյշ, Յաննի՛, վտանգավոր է այդ խենթությունը. ան կայրե սիրտդ, կզոցե աչքերդ...

Շատ հաճախ կմտածեմ, որ անզգա սիրտ ունեցողները ավելի երջանիկ են, քան մենք՝ արվեստագետներս: Եվ հաճախ կանիծեմ սիրտս, այնքա՛ն զգայուն, որ ամենաթեթև զեփյուռեն իսկ կողողողա աշնան տերևի մը պես, այնքա՛ն տխուր, որ կուզե լալ, երբ կմտածե, այնքա՛ն փխրուն, որ կուզե մեռնիլ, երբ կսիրե...

Ինծի կթվի, թե արվեստագետեն ավելի դժբաղդ մարդ գոյություն չունի: Նայե շուրջդ, տես՝ ինչքա՛ն գոհ են մարդիկ իրենց բախտեն: Կաշխատին ապրելու, կապրին աշխատելու համար: Երբ սանկ-նանկ սեր մը ունին, շատ գոհ են, երբ ունին կին մը, գերերջանիկ են ուղղակի: Կյանքը այնքա՛ն պարզ է և այնքա՛ն դյուրին անոնց համար:

Մինչդեռ մենք, մենք շատ դժբաղդ մարդեր ենք, որովհետև չափազանց զգայուն սիրտ ունինք: Կսիրենք, կսիրվինք, հետո կբաժնվինք իրարմե, կսպասենք, կզրենք, կմտածենք, անհամբեր ենք, տխուր ենք, երազներ ունինք, ունինք արցունքներ մեր աչքերուն մեջ...

* * *

Թերթերով ազդարարելե, կայարան հեռագրելե, վարձատրություն մը տալե ետքը երեկ իրիկուն ղրկեցին ինծի գլխարկս: Օհ, տեսներ՝ որքա՛ն երջանիկ էի: Դուն ալ երջանիկ ես, չէ՛, չար աղջիկ:

* * *

Տասը ժամ թիավարություն:

Լավ լսե, զվարձալի պատմություն մըն է ասիկա: Շաբաթ օր. (սեպտ. 21) կեսօրեն ետքը ժամը երկուքին, անգլիական թեճակներով մակույկ մը նստած՝ ես և բարեկամս մեկնեցանք Ուշիեն (Լոզան): Եղանակը սքանչելի էր: Ժամը երեքին Սեն Սյուփլիս էինք, չորսին՝ Մորթ, հինգին՝ Սեն Փթի, վեցին՝ Ռոլլ էինք արդեն: Որոնեցինք ձեր տունը և գտանք զայն մեր սրճարանին թովիկը: Միայն ճաշարանին մեջ լույս կար: Ես երկար մնացի ձեր տան առջև, որովհետև չէի կրնար Ռոլլեն հեռանալ, առանց իմ գեղեցիկ բարեկամուհիս տեսնելու: Այն ատեն, հանկարծ, երկու պատուհանով սենյակին մեջ, վերը, ձախին, լույս

տեսա և աղջիկը մը, որ երկար կեցավ հոն՝ հայելիին առջև (կարծեմ, հայելի էր տեսածս): Այդ աղջիկը նման էր քեզի... (անընթեռնելի)... վազելով դեպի խտեալը և համբուրվելով անվերջ... Ահ, քաղցր Յաննիս, երանի բարեկամիս տեղ դուն ըլլայիր մակույկին մեջ: Միասին կթիավարեինք հեռու, շա՛տ հեռու, լուռ լիճին վրա: Հետո կլքեինք թե՛ ճակները, կգրկախառնվեինք և շուրթ շուրթի, կոպեր կոպերու վրա, կուրծք կուրծքի կփարեինք իրար, կփարեինք, կփարեինք... Օհ, սիրելի՛ս, սիրելի՛ս... Ինչո՞ւ մեզի չէ տրված սիրել զիրար գեղեցիկ բնության մեջ, ազատորեն, անհունորեն, տարփագին...

Լուսնի պայծառ լույսին տակ թիավարեցինք, թիավարեցինք, թիավարեցինք և երբ Ուշի հասանք, գիշերվան ժամը մեկն էր: Այսպիսով, ես թիավարեցի տասը ժամ շարունակ և ի՛նչ տեսա: Ոչինչ: Կիսամեռ վիճակ ունեի, երբ անկողին մտա:

Տեսա Սառա Պեռնարը: Հայ նշանավոր դերասան մըն էր անոր խաղընկերը: Ես շատ տխուր էի: Մեկե ավելի անգամներ արցունք եկավ աչքերուս: Ներկայացումեն հետո անոնք սրճարան էին, իմ սեղանիս թուղ: Ընթրեցին: Կնայեի Սառա Պեռնարին և թու մասիդ կմտածեի, սիրելի դերասանուհի՛ս:

1907, Սեպտեմբեր 30

Քաղցր Յաննիս,

Ստացա նամակդ, բարի՛, բարի՛ նամակդ: Շնորհակալ եմ այն գողտրիկ լուսանկարին համար, զոր դրկած ես ինձի: Ջայն երկար պիտի պահեմ իբրև հիշատակ այն գյուղակեն, որ այնքա՛ն երջանկացուց զիս, այն պզտիկ պանդոկեն, որ երանության բույն մը դարձավ ինձի համար և այն փոքրիկ կատուեն, որուն այնքա՛ն կնախանձեի: Շնորհակալ եմ, աղվո՛րս:

Այն օրը Լոզանի Սովապլըն գեղեցիկ անտառն էի գացած: Մինակ էի և տրտում- տխուր կքալեի, դիտելով անսման ջրվեժները, միախուսված ծեր ծառերը, կտրտած ճյուղերը, թափած տերևները: Անտառը կստվերոտեր ու կմթներ: Հանկարծ կանգ առի. թավուտին խորքը տեսա զույգ մը՝ ոտքի, կուրծք կուրծքի դեմ, ձեռքեր վիզերու շուրջ, գլուխ գլխու, վերացած, արբշի՛ռ... Երկար, ահ, շատ երկար նայեցա անոնց և հետո, սրտաբեկ ու տխուր, դուրս եկա անտառեն, որպեսզի չխանգարեմ այդ երանավետ հոգիները: Բավական տարիքոտ էին այդ սիրահարները, բայց դեռ երիտասարդ էր սիրտերնին:

Համրաքայլ վերադարձաւ տուն: Գիշերը քուն չեկաւ աչքերու: Կմտածեի մեր թախճալից, թշվառ, անմունչ, համբույրներե, գրկումներե և ամեն ինչե զուրկ սիրո մասին, իմ խեղճ, խեղճ Յաննիս...

Կըսես, թե դուն կերկարես թներդ, զլուխդ կդնես կուրծքիս, կբանաս շրթներդ, բոլոր համբույրներ կդրկես ինձի: Ավա՛ղ, այդ համբույրները չեն բավեր կարոտիս: Անոնք օդին մեջ են, թուղթին վրա: Ես կուզեմ տաք, տաք համբույրներ, համբույրներ կենդանի, իսկական: Կուզեմ շրթներդ, աչքերդ, թարթիչներդ, այտերդ: Ես քե՛զ կուզեմ, Յաննի՛...

Օհ, բնավ մտքես չէլլեր սիրո այդ տեսարանը, անտառին խորքը: Մենք լեցուն ենք սիրով, հրայրքով, երիտասարդությամբ, բայց եկուր տես, որ չենք կրնար երթալ անտառի մը խորքը, իրիկնամուտին, ջուրերու, ծառերու, թռչուններու հետ տոնելու համար մեր սերը... Օհ, Յաննի՛, քա՛ղցր եակ, դուն ալ տխուր ես, այնպես չէ՛: Եվ կուլա՛ս...

Կըսես, թե սիրո սկիզբը մարդիկ տխուր կըլլան, իսկ վերջավորության՝ ուրախ: Մերը ճիշդ հակառակը եղավ. մենք ուրախ սկսանք, հավանորեն տխուր վերջացնենք... Եվ մտածե անգամ մը. եթե դուն Գերմանիա երթա՛ս... այս գաղափարը զիս խենթության կտանի: Չեմ կրնար այդ մասին խորհիլ:

Կփափաքիս, որ բանաստեղծություններս ֆրանսերենի թարգմանեմ, բայց ես չեմ ուզեր և ունիմ պատճառներս. իմ քերթվածներուս մեջ մա՛նավանդ երաժըշտություն կա, ուստի եթե զանոնք թարգմանեմ ֆրանսերենի, երաժշտությունը կկորսվի: Իսկ երաժշտությունը զեղչելու պարագային, սիրային արտահայտությունները կդառնան հասարակ, անարվեստ ու աններդաշնակ: Ահա թե ինչու չեմ ուզեր թարգմանել զանոնք: Երբ Լոզան գաս, քեզի կբացատրեմ յուրաքանչյուր տողը, և դուն կտեսնես՝ կեղծա՛ծ եմ, թե ոչ զգացումներս... Ո՛չ, ո՛չ, Յաննի՛, ես չեմ կեղծեր, ինչ որ կգրեմ, անկեղծ է, պարզ ու բնական:

Շնորհակալ եմ Ռուլլի տեսարան-բացիկներուն համար: Շատ գեղեցիկ էին: Դուն արվեստագետի նուրբ ճաշակ ունիս: Կուզեմ միշտ քովս պահել զանոնք և քեզի ցույց տալ քանի մը տարի հետո, երբ դուն դերասանուհի դառնաս, ես՝ բժիշկ:

Շղթայի պատմությունը բնավ հաջող չէ, որովհետև պարոն Սփիեսը իսկույն կհասկնա, որ խաղ մը կա ատոր տակը: Ես շատ լավ, ընտիր գաղափար մը ունիմ: Ուշադիր լսե.

Երբ կայարան իջնես, ազնիվ տիկին մը կմոտենա ու կգրկե քեզ, ըսելով. «Բարև, Յաննի՛, ինչպե՛ս ես» և այլն, և այլն: Եվ հետո քեզմե բաժնվելով, պարոն Սփիեսին կըսե. «Դուք ինձի թույլ կուտաք, այնպես չէ՛, որ ես երբեմն այցելեմ Յաննիին: Ցտեսություն»:

Մի՛ վախնար, Յաննի՛: Այդ տիկինը իտալուհի մըն է: Իմ մտերիմ հայ

բարեկամիս կինը, որ շատ բարի է ու շատ սիրալիր:

Երբ հետո պարոն Ափիեսը քեզի հարցնե, թե ով էր այդ տիկինը, իրեն կըսես. «Ան իմ շատ մտերիմ բարեկամուհիս է, Շամբերի միասին էինք, Ռուլլ ինծի նամակներ կգրեր: Աքանչելի կին է» և այլն, և այլն:

Քանի մը օր ետքը այդ իտալուհի տիկինը (կրչվի տիկին՝ Էնրիքեթա Արսլանյան) Ափիես գիշերօթիկնոցին մեջ այցելություն կուտա քեզի, իսկ ժամանակ անց՝ կհարցնե պարոն Ափիեսին, թե դուն կրնա՞ս իր հետ դուրս գալ իր տան մեջ թեյելու համար (դուն պարոն Ափիեսին կըսես, թե տիկին Արսլանյանը հաճախակի Ռուլլ կուգար): Եվ այս ձևով մենք կրնանք դյուրությամբ տեսնվիլ:

Ասիկա շատ հաջող գաղափար մըն է: Հիմա դուն ինծի պետք է գրես Լոզան հասնելուդ ճշգրիտ օրը:

Գո՛հ ես, պզտիկ չարաճճի՛: Դուն շատ խելացի ես և կրնաս ամեն ինչ կարգադրել տիկին Արսլանյանին հետ: Շատ հնարամիտ, շատ հաջող, շատ ճարտար բան կըլլա:

Անհապաղ գրե ինծի: Երրո՞րդ, թե երկրորդ կարգով կուգես գալ (քեզ դյուրությամբ գտնելու համար):

Ասիկա վերջին նամակս է, Յաննի՛: Հուսով եմ, որ Լոզան երջանիկ կըլլանք և կրնանք մեր ուզածին պես սիրել զիրար:

Ուրեմն, ցտեսություն, անուշ բարեկամուհի՛ս: Տոտեսություն: Համբույր մը, վերջին համբույրը թուղթին վրա...

Միշտ քույր՝ Ռ. 2.

Ուրբաթ, Հոկտեմբեր 25, 1907

Ի՞նչ անուշ, անո՛ւշ բարեկամուհիս,

Երեկ իրիկուն ստացա երկտողդ (Սուրբ Ֆրանսուայի հրապարակ): Այնքան էի հուզված, որ անմիջապես վազեցի տիկին Ա.-ին քով: Անոր հետ կարգի դրի մեր բոլոր ծրագիրները և վստահ էի (շա՛տ վստահ), որ երեքշաբթի քեզ կու-նենամ թևերուս մեջ:

Հետո, գիշերը, «Ազատ Միտք»-ի ժողովին էի, որմե ետքը սրճարան գացի և բարեկամներուս հետ խմեցի սիրեցյալ Յաննիի կենացը: Դուն կճանչնաս բարեկամներս (Տյով. և Ազ.): Անոնք երջանիկ էին իմ ուրախությունս տեսնելով:

Տուն վերադարձա գիշերվան ժամը 11-ին և անկողնիս մեջ կարդացի շատ

հետաքրքրական գիրք մը՝ «Ազատ սերը»:

Գիրքն ավարտեցի ու զոցեցի աչքերս:

Տարօրինակ գիշեր մը լուսուցի: Պետք է քեզի պատմեմ անոր մասին: Երբք այդքան երջանիկ չէի եղած: Ամբողջ, ամբողջ գիշերը լեցուն էր երազներով, խորհրդանիշներով, պարիկներով, համբույրներով, երջանկությամբ, ճշմարիտ, ճշմարիտ երջանկությամբ...

Մինչև վաղորդյան առաջին շողերը քեզի հետ էի...

Առտուն նամակ մը առի: Քեզմէ էր:

Օհ, ի՞նչ դժբաղդություն: Օհ, ի՞նչ ձախորդություն: Օհ, թշվառական նամակ: Օհ, դավաճանություն, ստորություն, չարություն մարդկային: Օհ, մեր խեղճ, հազարապատիկ խեղճ սեր: Եվ դո՛ւն, տարաբաղդ բարեկամուհի՛ս...

Շատ երջանիկ են անոնք, որ կրնան արտասվել: Իսկ ես արցունք չունիմ, իմ հոգիս է, որ կարտասվե...

Աղվճո՛րս, դուն չես գիտեր, կտոր-կտոր ըրիր, փշրեցիր սիրտս: Ճզմեցիր, ծվատեցիր զայն...

Այդ ի՞նչ կպատմես, աղվճո՛րս: Ուրեմն այդքան վայրագ բանե՞ր կրցան ընել քեզի: Ի՞նչ, ուզեցին կորզե՞լ սերդ հոգիեդ: Լացուցի՞ն քեզ մանուկի մը պես: Եվ դուն բան չըրիր: Չճչեցի՞ր, որ այդ սերը հավերժական է, որ մարդ չի կրնար պոկել զայն հոգիեդ: Չգոռացի՞ր, որ բարբարոսություն է իր դժբաղդ սիրո համար երիտասարդ աղջիկ մը լացնելը: Չպոռացի՞ր, որ իրենց ըրածը ստորություն է, չարություն, նախանձի արդյունք: Գոնե չըսի՞ր, որ դուն չես կրնար ապրիլ առանց սիրո, որ դուն ավելի շուտ կմեռնիս, քան կբաժնվիս քու խեղճ սիրահարեդ... Ահ, ահ:

Գեղեցկությունն ու բարությունն է, որ կտիրեն բովանդակ տիեզերքին մեջ: Աստղերը գեղեցիկ են, լուսինը՝ քաղցրահամբույր, ծաղիկները՝ անմեղ, ծառերը՝ գեղազարդ, բոլոր բույսերն ու կենդանիները՝ բարի, միայն մարդերն են չար, տգեղ, ահավոր, դաժան, արյունարբու, նախանձոտ, դժնե, սոսկալի... Օ, ես ինչպե՛ս կվախնամ մարդոցմե և ինչպե՛ս կատեմ զանոնք... Չկա ավելի չարաբարո անասուն, քան մարդ անասունը...

Օհ, դժբաղդ բարեկամուհի՛ս, դուն միևնակ ես պայքարելու համար այդ անասուններուն դեմ: Մի՛ վախնար, խեղճ բարեկամուհի՛ս. քեզ սիրող, քեզ միշտ սիրել ուխտած բարեկամ մը ունիս, որ պատրաստ է ամեն զոհողության քեզի և միմիայն քեզի համար:

Մանավանդ մի՛ մոռնար, որ եթե անոնք վայրագ անասուններ են, մենք ըստ հարկին ավելի վայրագ կըլլանք: Ո՛վ իրավունք ունի դժբաղդացնելու երկու սիրող սրտեր: Ոչ ոք, ո՛չ ոք. ո՛չ գիշերօթիկնոցի դաստիարակները, ո՛չ ուսուցչուհիները, ո՛չ ծնողքը: Բայց եթե կարենան մեզ ընդմիշտ բաժնել իրարմե, փշրել մեր սրտերը, մեզ ցկյանս դժբաղդացնել, որևէ հույս չձգել մեզի, թող

զգույշ ըլլան: Կա հատուցումը, հատուցումը, հատուցո՛ւմը...

Ինչո՞ւ լացիր, երբ դավաճանեցին քեզի: Որքան լաս, այնքան տկար ես: Բնավ լալ պետք չէ, պետք է ուժեղ ըլլալ, ուժեղ: Ինչո՞ւ անոնց երեսին չգոռացիր. «Ես երիտասարդ աղջիկ եմ և ոչ թե քարի կտոր: Ինչպես բոլորը, ես ալ սիրտ ունիմ ու կսիրեմ, և դուք իրավունք չունիք բռնանալու սրտիս վրա: Կրնաք վստահ ըլլալ, որ ես հիմարություն չեմ ընէր»:

* * *

Աղվո՛րս, նամակդ ստանալուս պես ամեն ինչ ներեցի քեզի: Ես շատ կսիրեմ բնականությունը, պարզությունը, անկեղծությունը: Կրնաս վստահ ըլլալ, որ քեզմե ոչինչ կծածկեմ, ոչինչ, ոչի՛նչ: Դուև ալ պետք է ինձի պես ընես, պետք է ըսես ինձի ինչ որ կմտածես, կկատարես ու կցանկանաս: Առանց անկեղծության ճշմարիտ սեր չկա: Կրնաս վստահ ըլլալ, որ նամակդ ճգմեց սիրտս, կործանեց բոլոր երազներս, բոլոր ծրագիրներս, բոլոր հույսերս, հոգիիս հասցուց վերք մը, որ թերևս, միշտ պիտի կոտտա... Բայց կրնաս վստահ ըլլալ նաև, որ ի սրտե, ի սրտե ներած եմ քեզի... Կրնաս հավատալ, որ միշտ կսիրեմ քեզ և հավիտյանս, մինչև վերջին շունչս պիտի սիրեմ...

Իմ քաղցր, իմ սիրելի, իմ սիրեցյալ Յաննի՛, միակ մտածումս, երազս, ապագաս, ներշնչումս, կյանքս, էությունս... Մի՛ լար, միշտ մտածե ապագայի մասին և հավատա, որ պիտի ծագի այն օրը, երբ պիտի երջանիկ ըլլանք, ազատ, գեղեցիկ, վսեմ, ինչպես թռչունները, ծաղիկները: Պիտի երթանք ամեն տեղ՝ աշխարհի մեկ ծայրեն մյուսը, պիտի կտրենք լեռներ, լիճեր, օվկիանոսներ, հովերու պես խենթ, ծիծեռնակներու պես երջանիկ, երկինքի բոլոր աստղերուն պես զվարթուն: Ոչ ոք պիտի խանգարե իրար հետ խոսելու, իրար նայելու, իրար վրա սքանչանալու, համբուրվելու մեր ազատությունը... Ոչ ոք պիտի ըսե մեզի. «Մեկ վայրկյան հանդիպումն իսկ բավական է, գացե՛ք»: Ի՛նչ է մեկ վայրկյանը, մեկ խոսքը, մեկ նայվածքը, մեկ համբույրը, իմ շատ սիրելի Յաննի՛ս, մեզի ամբողջ հավիտենականությունն է պետք...

Ավա՛ղ դուն կուզես մեկնիլ ապրիլին, կուզես տարիներով, տարիներով մինակ ձգել գիս, միս-մինակ... Որքա՛ն խորտակված երազներ: Ի՛նչ, մի՞թե անգամ մըն ալ չպիտի երթանք տեսնելու բնության այն չքնաղ անկյունը, ուր սիրեցինք զիրար: Մի՞թե չպիտի կրնանք համբուրվիլ այդ հմայիչ բնության մեջ, սեզ լեռնագագաթներու դիմաց: Մի՞թե չպիտի տրվի մեզի անգամ մըն ալ Տան տը Միտի բարձրանալ, ստուգելու համար, թե արդյոք ճերմակ ձյունը ջնջա՞ծ է մեր անունները փայտե խաչին վրա: Ո՛չ, ո՛չ, ո՛չ... Մնա՛, Յաննի՛, քիչ մըն ալ մնա: Երբ գարունը գա, երբ ծաղիկները փթթին, թերևս մեր թշվառ սերն ալ վերընձյուղի, այս անգամ արդեն ավելի գեղեցիկ, ավելի բախտավոր...

Կուգեմ վերջացնել նամակս: Պետք է, որ հիմա քեզի տամ զայն. ժամն է: Միայն, կխնդրեմ, մի՛ տխրիր: Կսիրեմ և պիտի սիրեմ քեզ միշտ, միշտ, միշտ, Յաննի՛... Մի՛ մոռնար, որ մենք հավերժական սեր մը խոստացած ենք իրարու... Եվ քեզ երջանկացնելու համար (գիտեմ, թե որքան տխուր ես հիմա) պիտի կոչեմ քեզ «նշանածս»...

Հազար, հազար համբույր՝
Ռ. 2.

Հինգշաբթի, Նոյեմբեր 28, 1907

Աղվորիկ նշանածս,

Կեսգիշեր է: Չեմ գիտեր՝ ինչու կեսգիշերները կտրտեցնեն զիս: Ինծի կթվի, թե Շամբերիի հուշը և անոր բաշխած գերագույն երջանկության հիշատակն է, որ զիս մելամաղձիկ կդարձնե ամեն գիշեր: Հոգևին կսիրեմ քեզ, Յաննի՛: Կսիրեմ քեզ ավելի, քան որևէ բան, ավելի, քան կյանքս, ավելի, քան ինքզինքս... Կսիրեմ քեզ և պիտի սիրեմ ամբողջ ավյունովս, ամբողջ գոյությամբս: Դուն իմն ես, չէ՛: Ոչ ոք կրնա խափանել մեր սերը, և անցողիկ դժբաղդությունն մը ետքը մեր սերը պիտի պատկանի ինծի, կհասկնաս, ինծի՝ թու գեղեցիկ հոգիդ, մարմինդ, հունական վաղընջուց արձանի պես, թախտով ու բաղդությամբ լեցուն աչքերդ, բուրավետ վարդի նման շրթներդ, դուն, ամբողջովին: Պիտի ըլլաս իմս, իմս, ի՛մս...

Գիշեր է հիմա: Ահա հագեր ես ամենաթեթև, ամենաբանաստեղծական զգեստներդ (ինչպես բեմին վրա), դաշնամուրին առջև մելամաղձոտ երգեր կերգես ինծի, հետո երկարորեն, երկարորեն կհամբուրվինք բազմոցին վրա, հետո, ինչպես օփերաներուն մեջ, դյուրական պարեր կպարես ինծի համար, կեռանդոտիս և երկնային հափշտակության մը մեջ, երջանկության արցունքներ աչքերուդ, կիյնաս գիրկս... Օհ, չքնա՛ղ Յաննիս, հավատա՛ ինծի. մենք պիտի ըլլանք աշխարհի ամենաերջանիկ, ամենաերջանիկ զույգը: Եվ ապա՝ ուղևորություններ: Օվկիանոսներու վրա. լեռներու, բարբարոս ու քաղաքակիրթ ոստաններու մեջ, ամենուր՝ աշխարհի չորս ծագերուն: Եվ երբեմն չպիտի մոռնանք սիրո ուխտագնացությունն մը դեպի զվիցերական այդ փոքրիկ գյուղը...

Օհ, աղվոր Յաննի՛ս, արդարև շնորհակալ եմ քեզմե սիրույդ համար: Ճիշդ է, որ այդ սերը զիս դարձուց դժբաղդ, տխուր, խեղճ: Ճիշդ է, որ կորսնցուցի ծիծաղներս, ժպիտներս և բոլոր զիս սիրողները: Այս ամենը ճիշդ է, բայց և այնպես երախտապարտ եմ քեզի, որովհետև թու մեջդ գտա այն էակը, զոր

կփնտռեի, էակ մը իտեալական, երկնային, եզական...

Յաննի՛, ինծի կթվի, թե մեր բնավորությունները բոլորովին նման են իրար: Կկարծեմ նաև, թե մեր միատեղ կյանքը (ամուսնանալեն ետքը) պիտի ըլլա միշտ ներդաշնակ, միշտ սիրով ու երջանկությամբ թաթափուն:

Որքան տխուր եմ, որ չեմ կրնար համբուրել քեզ հիմա, դնել այտս այտիդ, զգվել մազերդ կուրծքիս վրա: Ահ, Յաննի՛, ինչպե՛ս խենթորեն կսիրեմ քեզ:

Մի՛ թե երբեք չպիտի կարենանք գրկվիլ ազատորեն... Ահ, աղվորիկ նշա-նա՛ծս...

Գրե ինծի, Յաննի՛, որ իմս պիտի ըլլաս ի հեճուկս բոլոր արգելքներու, ի հեճուկս ամեն մարդկային նախանձի և չարության: Գրե ինծի, խոստացիր, մխիթարե զիս... Եթե անկեղծորեն խոստանաս, որ կյանքիս մեջ ուղեկիցս կըլլաս, ես եղբոր մը նման հավատարիմ կմնան քեզի տարիներ ամբողջ, կաշխատիմ քեզի համար, միշտ կմտածեմ քու մասիդ (ահ, արդեն իսկ միշտ, միշտ կմտածեմ) և կընեմ ինչ որ մարդ մը ի վիճակի է ընելու իտեալական կնոջ մը համար... Խոստացիր ինծի, Յաննի՛, անկեղծորեն, մտերմորեն, լրջորեն...

Երեկ գիշեր տարօրինակ երազ մը տեսա: Երազ չէր, այլ գրեթե տեսիլք, քանի որ բաց էին աչքերս: Կյանքիս ճամբեն կքալէի: Խոտերու և ծաղիկներու մեջ կորսված լեռնային արահետի մը վրա պզտիկ, շատ սիրուն առարկա մը նշմարեցի: Սիրեցի զայն և կուզեի վերցնել ու հետս տանիլ, բայց ինծի ըսին. «Ինչո՞ւ ուշադրություն կդարձնես այդ առարկային, թո՞ղ զայն: Դուն կրնաս ավելի գեղեցիկները գտնել»: Երբ ես, մտքերու մեջ ինկած՝ կուզեի հեռանալ, խոտերու ու ծաղիկներու մեջ կորսված պզտիկ առարկան լեզու առավ ու ըսավ ինծի. «Վերցուր զիս, ես թանկագին գանձ մըն եմ, կատարյալ իտեալական: Քու կարծածե՞ր ավելի գեղեցիկ եմ ես: Եվ եթե ինծի հոգ տանիս, ես մեկ հատիկ կըլլամ աշխարհիս մեջ: Դուն զիս չես ճանչնար: Ես կկոչվիմ Յաննի...»

Ես որոշած եմ. քեզ պիտի դարձնեմ հավիտենական բարեկամուհիս, սփոփիչ հրեշտակս, պերճաշուք դշխոս, աստվածուհիս... կինս:

Ամեն անգամ, որ կխորհիմ մեր ապագա երջանկության շուրջ (իսկ ապագան հեռու չէ՝ ևս երեք տարի), ամեն անգամ որ կխորհիմ մեր կազմելիք երանավետ ընտանիքի մասին, ուրախութենես կխենթենամ: Մեյ մը մտածե...

Վերջին նամակդ ցավ պատճառեց ինծի: Գիտեմ, որ շատ կսիրես զիս, դուն ալ գիտես, որ ես ի սրտե կսիրեմ քեզ: Արդ, ինչո՞ւ կուզես խոնարհեցնել անձդ, ինչո՞ւ կխոսիս շունի և անոր տիրոջ մասին: Ո՛չ շուն կա, ո՛չ տեր: Մի՛ մոռնար, որ դուն իմ նշանածս ես... իմ աստվածուհիս... իմ գեղեցիկ Յաննիս:

Այսօր, հինգշաբթի, առավոտուն ստացա նամակդ: Երախտապարտ եմ քեզի տասնվեց էջերուդ համար, քաղցր համբույր մը քեզի: Ըսած եմ, թե ամեն շաբաթ մեծ հաճույք կպատճառեն ինձի նամակներդ: Գրե բոլոր մտածումներդ, նկարագրե գիշերօթիկնոցի ամեն օրդ, ամբողջ կյանքդ: Այդ բոլորը սաստիկ կհետաքրքրեն զիս: Կուզես գիտնալ, թե ինչպես կանցնեմ օրերս: Ահա. անկողնես կելլեմ ժամը յոթին: Կհագնվիմ, կնախաճաշեմ, կկարդամ նամակներդ (չորեքշաբթի առտուն ի՛նչ խայտանք, կամ հինգշաբթի օր, նամակ կստանամ քեզմե և ուրախութենես կպոռամ...): Ժամը ութին արդեն Բժշկական համալսարան եմ մինչև կեսօր: Ճաշ: Եթե եղանակը լավ է, կիջնեմ Ուշի: 2.30-ին պետք է Համալսարան ըլլամ, ուր հերձուհով կզբաղիմ մինչև 6.30: Բայց եթե օրն արևոտ է, մեկ կողմ կձգեմ հերձումը և ժամը հինգի ատենները քիչ մը կպտտիմ Ավանեն Շյոր տանող ճամբուն վրա: Ժամը 7-են 7.30՝ ընթրիք: Երբեմն ժամը ութին կանցնիմ գիշերօթիկնոցիդ առջևեն, որպեսզի պատուհանին մեջ տեսնեմ սովերդ կամ պարզապես մութ ու թափուր պատուհանդ: Ամեն չորեքշաբթի իրիկուն ժողովրդական տուն կերթամ, ուր սեմֆոնիք նվագախումբը համերգներ կուտա, իսկ շաբաթ իրիկուն՝ Քյուրսաալ (պետք է ըսեմ, որ այդտեղ, փոխանակ ուրախ ըլլալու, շատ հաճախ տխրություն կուգա վրաս, չեմ գիտեր՝ ինչու. կկարծեմ, թե պատճառը դուն ես...)

Հինգշաբթի կամ կիրակի իրիկուն կերթամ թատրոն: Մյուս իրիկունները կաշխատիմ տունը: Կեսգիշերը չինչաձ՝ անկողին կմտնեմ: Ամեն, ամեն գիշեր, առանց բացառության, քնանալե առաջ մտովի քեզի հետ եմ: Կխորհիմ գեղեցիկ աչքերուդ, կրքոտ թևերուդ, տաք շրթներուդ, մեկ խոսքով, քու մասին, Յաննի՛, իմ աղվոր Յաննի՛ս: Քանի մը տարի հետո որքա՛ն երջանիկ պիտի ըլլանք: Մեզի համար գիշերները պիտի դառնան սիրո, հեշտանքի, երանության գիշերներ... Կունենանք երկտեղանի շատ գեղեցիկ մահճակալ մը, մահճակալ մը դյուրական, ինչպես բույն մը թռչնային...

Ահա իմ ամբողջ օրս: Չորեքշաբթի և ուրբաթ օրերը Սուրբ Տրանսուայի հրապարակը կերթամ քեզ տեսնելու համար: Անկեղծորեն, չեմ ուզեր հոն երթալ, որովհետև

(նամակի շարունակությունը չկա)

Կիրակի, Դեկտեմբեր 8, 1907

Միրելիս,

Չորեքշաբթի գրած նամակիս մեջ շատ կարևոր բան մը մոռցա ըսելու քեզի:

Անհրաժեշտ է, որ մենք միասին տոնենք Ծնունդը, անհրաժեշտ է: Ահա թե ինչպես պետք է ընես. պետք է ընտիր նվեր մը կամ շնորհավորական գեղեցիկ բացիկ մը դրկես Ալիսին, հետո՝ խելոքիկ նամակ մը, իրեն ըսելու համար, թե Ծնունդին չես ուզեր գիշերօթիկնոց մնալ, կուզես միայն մեկ օր մը Ռուլ ըլլալ և իր ընտանիքին հետ տոնել զայն: Ալիսին կխնդրես, որ Լոզան գա քեզ: Ռուլ տանելու համար: Տիկին Սփիեսին կըսես, թե կփափաքես այցելել նաև ժորան (Ռուլի քու նախկին գիշերօթիկնոց): Ալիսը չի կրնար մերժել քեզի. քու ետևեդ Լոզան կուգա: Հետո, ես ալ չեմ գիտեր՝ հետո ի՞նչ... Ուզածիդ պես կարգադրե Ալիսին հետ: Միայն, Ռուլ երթալու տեղ, Ծնունդի գիշերվան համար կուգաս քովս:

Ահա պատմությունը: Պզտիկ կատակերգություն մը: Միշտ կըսես ինձի, թե դերասանական մեծ տաղանդ ունիս: Օ՛ն ուրեմն, հիմա կուզեմ տեսնել՝ իսկապես ունի՞ս այդ մեծ տաղանդը, թե ոչ: Գրեթե անվտանգ դեր մըն է այս մեկը: Քաջություն: Ահա երեք ամիս է, որ չենք համբուրված... Ես ծարավ եմ քեզի, Յաննի, ծարավ. սոսկալի է մեր սերը: Չեմ գիտեր, թե դուն ինչպես կհամբերես մինչև հիմա. դուն անխռով, խելոքիկ և անտարբեր տեսք ունիս:

Քիչ մը ընկերուհիներուդ պես դարձար... Առաջ բոլորովին ուրիշ էիր. իրոք որ դերասանուհի էիր՝ սիրահար, խենթ... Ամեն անգամ քեզ տեսնելուս կողոզայի ջղագարի մը պես: Ահ, Յաննի՛, գիտե՛ս, լավ չըրիր Լոզան Սփիես գիշերօթիկնոց գալով: Քեզ բոլորովին փոխեցին: Փոխեցին նույնիսկ աչքերդ (հավատա՛ ինձի), նույնիսկ աչքերդ... Որովհետև առաջ կրակ ու բոց աչքեր ունեիր: Այո՛, լավ չըրիր Լոզան գալով:

Կհիշե՛ս, թե առաջին գիշերը ինչպես կառաջնորդեիր զիս պարտեզին մեջ: Այն ատեն դուն վախ չունեիր: Իսկ հիմա... ավա՛ղ, մարդ ինչպե՛ս կփոխվի... Այդ տնօրենուհին է, որ քեզ այսպես փոխեց:

Յաննի՛, վերջին անգամ ըլլալով կըսեմ քեզի, որ կարելի չէ այսպես շարունակել: Պետք է սրտոտ ըլլալ: Ինչո՞ւ կվախնաս: Եթե այն երկյուղն ունիս, թե կրնան քեզ գիշերօթիկնոցեն արտաքսել, կսխալիս: **Քեզ երբեք չեն արտաքսեր:** Շատ-շատ շաբաթ մը կարգելափակեն: Հո՛գդ... Ինչո՞ւ կվախնաս: Միշտ կգրես ինձի, որ եթե մայրդ լսե, դժբաղդ կզգա իրեն: Բայց ինչո՞ւ: Դուն լուրջ, շնորհքով բժիշկ նշանած մը ունիս: Ինչո՞ւ պիտի դժբաղդ զգա:

Հիմա դուն շատ ես խելոք: Պետք եղածեն ավելի... Հարկ է խենթություն մը ընել: Եվ դուն այդ խենթությունը պետք է ընես Ծնունդի առթիվ: **Գիշերը պետք է քովս գաս**, հասկցա՛ր: Խենթություն է այս: Որովհետև սերը առանց խենթության ոչխարներու սեր է: Նամակներդ մեկուն մեջ ինձի պատմած ես բոցին մեջ նետվող ցայգաթիթեռի մը մասին... Ուրեմն, Յաննի՛, հանուն սիրո պետք է մեռնիլ, կհասկնա՛ս, մեռնիլ, մեռնի՛լ...

Քատրոնեն վերադառնալես հետո է, որ կշարունակեմ նամակս: «Փարիզի չքավորները» և «Օքթավ» թատերակներն էին: Դուք երբևիցե թատրոն կերթա՞ք, և ո՞ր օրերը: Եթե պատահաբար հանդիպինք թատրոնին մեջ, դուն ընկերուհիիդ հետ պետք է միջանցք դուրս գաս (ընդմիջման): Բոլոր գիշերօթիկները այդպես կընեն: Այն ատեն կտեսնվինք և գուցե խոսինք...

Այսօր հայու հետ ամուսնացած անգլիացի տիկնոջ քովն էի: Բան չըսավ ինձի: Կարծեմ տիկին Սփիեսը չէ խոսած իմ մասին:

Ես սրդողած եմ շաբաթ օրվան երեկույթի առթիվ: Դուն պետք չէ պարեիր, ո՛չ ոքի հետ:

Անհամբերությամբ կսպասեմ պատասխանիդ Մունուդի գիշերվան վերաբերյալ: Եթե գիշերը չկարենաս, եկուր ցերեկը, միայն եկուր... Պետք է պատասխանես ինձի, որովհետև, եթե չգաս, ես հավանորեն Լոզանեն մեկնիմ: Բայց եկուր, Յաննի՛, ահ, եկուր, եկուր, եկուր: Պետք է ընես այդ խենթությունը, պետք է, ալ չեմ կրնար: Պետք է, որ քեզի հետ խոսիմ, կհասկնա՞ս: Պետք է, պետք է... Գիտե՞ս՝ ուր է իմ տունս. պարի դպրոցին (թատրոնի) ճիշդ դիմացը, կամարին տակ: Չեմ կարծեր, որ Ալիսը մերժե քեզի: Անտարակույս կուզա Լոզան, որպեսզի Մունուդի համար քեզ Ռոլլ տանի: Այն ատեն, անգամ մը որ ելլեք «Կրավեյ թատրոնեն», Ալիսին կըսես. «Երթանք թատրոնի ծառուղիեն»: Եվ կանցնիք տունիս առջևեն: Ես դուրս կելլեմ: Կտեսնեմ քեզ, կվազեմ քովդ և կհամբուրվինք, թերևս... Ես կըսեմ Ալիսին. «Ներեցեք, օրի՛որդ, ես ձեզ չեմ ձանչնար, բայց անհունորեն շնորհակալ եմ, որովհետև դուք կաշխատիք մեր երջանկության համար: Չէի՞ք ուզեր պահիկ մը զալ իմ տունս և բաժակ մը թեյ խմել մեզի հետ»: Այն ժամանակ կուզաք տունս: Թեյեն հետո Ալիսին կըսես, թե կուզես քիչ մըն ալ մնալ քովս: Մենք միասին կխնդրենք անկե (ինչպես բեմի վրա): Ան չի կրնար «ոչ» ըսել մեզի, որովհետև կհուզվի երկու ճշմարիտ սիրահարներ տեսնելով (քիչ մըն ալ կնախանձի անշուշտ, բայց խնդիր չէ): Կերթա պզտիկ պտույտ մը ընելու: Այն ատեն կըսկսի մեր երջանկության պահը... իսկական երջանկության:

Եթե տեսնենք, որ Ալիսը շատ ազնիվ է մեզի հետ, դուն կըսես իրեն. «Լսե, սիրելի բարեկամուհի՛ս, ավելի լավ է, որ ես Մունուդի գիշերը մնամ այստեղ, դուն կրնաս Ռոլլ երթալ: Կաղը առտուն ես ալ կուզամ հոն: Նշանածս շոգեկառքին մեջ կուղեկցե ինձի»: Այս ձևով կրնանք ամեն ինչ կարգադրել: Բայց եթե Ալիսը վախնա քեզ քովս ձգելեն, ավելի վատ: Կերթաս իր հետ:

Քեզի կըսեմ, որ խենթություն է այս, բայց սիրային խենթություն: Դուն պետք է ընես այդ խենթությունը հանուն մեր սիրո: Ինձի կթվի, թե այս անգամ շատ, շատ երջանիկ կըլլանք: Քաջություն, Յաննի՛, ի գործ դիր վերջին ճի-

գերդ, քաջութիւն: Ես քեզ անչափ, անչափ կսիրեմ: Պետք եղածն ավելի կսիրեմ քեզ: Կսպասեմ պատասխանիդ: Քեզի կգրեմ ամեն կիրակի: Դուն ալ պետք է ամեն կիրակի գրես ինծի: Ուրեմն՝ հինգշաբթի կամ չորեքշաբթի առտուն, երբ ստանաս նամակս, ես ալ ստացած կըլլամ քու կիսիդ, և մենք կկարդանք ու երջանիկ կըլլանք նույն պահուն:

Պետք է իմ կողմէս շնորհակալություն հայտնես Էրֆուրտցի բարեկամուհիիդ իր անձնավեր ծառայության համար: Կկարծեմ, թե ան իսկապես կսիրե քեզ: Կուզեմ մերթ ընդ մերթ շնորհակալական բացիկ մը դրկել իրեն, բայց ծանոթ չեմ հետը:

Դեկտեմբեր հինգին, ուրբաթ, կեսօրեն ետքը ժամը երկուքին հանրակառքերու կայանը քեզի կսպասեի: Անձրև կուգար: Տեսա, որ մինակդ նկարչատուն մտար: Ես ալ կուզեի մտնել, բայց դժբաղդաբար տնօրենուհին ետև դարձավ: Իջեցուցի հովանոցս, սակայն ան տեսավ զիս և փճացուց գործս: Քանիցս ըսած եմ քեզի, որ պետք է գրես ինծի, երբ մինակդ կերթաս նկարչատուն:

Կվերջացնեմ նամակս, քնքշորեն համբուրելով քեզ: Սաստիկ կսիրեմ քեզ, իմ դժբաղդ նշանա՛ծս:

Միշտ քույրդ՝ Ռ. 2.

Չորեքշաբթի երկար նամակ մը դրկեցի քեզի, շաբաթ օր՝ սկզբնատառբացիկներ, որպեսզի «Յաննի» գրես պատիդ վրա, իսկ այսօր՝ ահա այս նամակը:

Ամեն կիրակի նամակ մը պիտի գրեմ քեզի:

Ինչո՞ւ կիրակի օրերը ուղղակի Լոզանի հասցեիս նամակ չես դրկեր: Մի՞թե ծնողքիդ նամակներուն հետ չես կրնար տուփին մեջ ձգել:

Պետք է գրես ինծի, թե ինչ ըրիք շաբաթ երեկոյան գիշերօթիկնոցին մեջ: Ո՞ր ուսանողները կային:

Գրե ինծի, թե Ս. Օ.-ն միշտ կխոսի՞ իմ մասիս Տիկնոջ հետ:

Շատ, շատ կսիրեմ քեզ:

Գիշեր բարի, հրեշտակս, երազս, սերս, գիշեր բարի՛:

Ռ. 2.

Ներփակ քեզի կուղարկեմ էտըլվեյս մը այն փունջեն, զոր Շամբերիեն իբրև հիշատակ կպահեն քովս: Այդ փունջը միշտ պատիս վրան է, աշխատասեղանիս առջև: Բազում համբույրներ այս էտըլվեյսին հետ:

Սիրելի պզտիկ Յաննի,

Շնորհակալ եմ նամակիդ համար: Ինչո՞ւ այսքան կարճ: Ի դեպ, հետաքրքիր ես գիտնալու, թե քանի էջ նամակներ ես գրած ինչի մինչև հիմա: 130 էջ: Թերևս ես այլ մոտավորապես 130 էջ եմ գրած: Այսպիսով կունենանք 260 էջնոց վեպ մը... Մեծահատոր վեպ մը սիրային: Եվ Աստված գիտե, թե քանի հազար էջ պետք է գրենք տակավին հասնելու համար գերագույն երջանկության... Աստված գիտե: Միշտ հուսանք, որ մեր սերը հավիտյանս չպիտի մնա թուղթի վրա, այլ պիտի գա օր մը, երբ իրարու նամակներ տալու փոխարեն, համբույրներ պիտի տանք մեկգմեկու... Օհ, համբույրներ անվախ, անթիվ, անվերջ: Համբույրներ ու համբույրներ մինչ ի մահ:

Առաջ, ինչպես դուն կըսես, ամեն մատիս քսան կին կիյնար: Հիմա վերջացած է ատիկա: Մինչև քեզի հանդիպիլս, բնավ սիրույն անձնատուր չէի եղած, բնավ: Հաճույքե և կիրքե մղված՝ կսիրեի կիները: Լուրջ սեր չէի զգացած: Ինծի համար աղջիկները հաճույքի առարկա էին, ուրիշ ոչինչ: Բայց տարօրինակ է: Առաջին անգամ որ քեզ սեղմեցի թևերուս մեջ (առաջին գիշերը) որևէ մեղավոր դիտավորություն չունեի: Գիշերն ի բուն դողացիր դուն. կողոզար ձայնդ, կողոզային շրթներդ, և միաժամանակ այնքան անմեղ և այնքան կրքոտ տեսք ունեիր, որ չար մտքեր չէին հաճախեր ուղեղս... Կզգայի, որ կսիրեմ քեզ: Առաջին անգամ էր, որ սեր կզգայի սրտիս մեջ, ճշմարիտ սեր: Սոսկալի էր: Չէի կրնար ո՛չ քնանալ, ո՛չ շախատիլ, ո՛չ գրել: Կարծես, թուլություն մը, հիվանդություն մը իջած ըլլար վրաս: Եվ հետո (կուզե՞ս ճշմարտությունը) քիչ մը կամչնայի ինքզինքես... որովհետև ես շատ հպարտ եմ, և կկատողեի, որ աղջկան մը խաղալիք եմ դարձած... Հետո, երբ դուն զացիր Շամբերիեն, քանի մը արշավներու ձեռնարկեցի ինքզինքս հոգնեցնելու, միտքերս ցրվելու, քեզ մոռնալու համար... Անկարելի էր: Ինձմե ավելի կսիրեի քեզ: Եվ ահա կտեսնեմ, որ այդ սերը ավելի ու ավելի հզոր կդառնա, խենթ, խորունկ, և կկարծեմ, թե Գերմանիա մեկնիլդ շատ ցավագին, շատ երկարատև վիշտ մը պիտի ըլլա ինծի համար: Այո՞, դժվար պիտի ըլլա, բայց մենք տոկուն կամք ունինք և կորովի սիրտ, անպայման կդիմանանք:

Անցյալ օր թուս հին բարեկամուհի մը եկած էր, որ շատ ջերմ զգացումներ կտածե ինծի հանդեպ: Անընդհատ կհամբուրեր զիս... «Խեղճ բարեկամուհի՛ս,— ըսի իրեն,— թու շրթունքներդ ինծի համար չեն, համբույրներդ կսառեցնեն սիրտս, կամչնամ ինքզինքես, ձգե զիս, որ մտածեմ իմ իսկական բարեկամուհիիս մասին: Ահ, ինչքան տաք են անոր համբույրները: Դուն կսառեցնես սիրտս, խեղճ բարեկամուհի՛ս...»: Արտասովեց, զնաց, և ան վերջին բարեկամուհին էր, որ կհեռանար իմ թուս...

Որովհետև ես միշտ թու պատկերդ ունիմ աչքիս առջև: Ինձի կթվի, թե գձուձուություն է եղծել ձեռքերս ուրիշ աղջիկներու հետ, այն ձեռքերը, որ հպած են թու հրեշտակային մարմնիդ: Ո՛չ, ո՛չ, սիրելի Յաննի՛ս, ես բոլորովին փոխված եմ, **ամբողջովին** կպատկանիմ քեզի: Մտածումներս, հոգիս, աչքերս, թևերս, սիրտս, բոլորը թուկդ են և թուկդ միայն: Ոչ մեկ բարեկամուհի ունիմ հիմա: Միայն դու և կաս, և պիտի տեսնես, **խտեալական ամուսին** պիտի ըլլամ քեզի համար, կվստահեցնեմ քեզ, **կվստահեցնեմ**:

Քեզի կղրկեմ փոքրիկ լուսանկարս, զոր սիրող բարեկամ մը քաշեց: Բավական լավ է, կարծեմ: Կուզեմ անպայման ունենալ թու լուսանկարդ: Ինչո՞ւ նկարչատուն չես երթար: Գիշերօթիկնոցե՞ն չեն ձգեր:

Կփափաքիմ նոր տարվա պզտիկ նվեր մը ընել քեզի: Անկեղծորեն ըսե՛ ի՛նչ կնախընտրես: Հարմար չէ անշուշտ այսպես հարցընելը, բայց չե՛ որ մենք մտերիմ բարեկամներ ենք... Ըսե նաև, թե ինչպես կրնամ դրկել նվերը:

Ինչո՞ւ կնքամոմով կոցցես նամակներդ: Կվախնա՛ս, որ էրֆուրտցի ընկերուհիդ կկարդա: Պե՛տք է, որ նույնը ես ընեմ:

Քանի որ կուզես, որ իսկական բարեկամի պես խոսիմ հետդ, ահա քեզի փոքրիկ պատմություն մը.

Երբ հրատարակեցի «Յաննի Ապպելին» ձոնով քերթվածս, բազմաթիվ նամակներ ստացա, ուր կհարցընեին ինձի, թե ով է Յաննին: Ես կպատասխանեի, թե այդ բանաստեղծությունը գրած եմ շատ հայտնի դերասանուհիի մը մասին և այլն... Հետո հայրս ալ հարցուց ինձի նույն բանը, և ես անոր ալ նույն պատասխանը տվի... Խեղճ հայրիկս չի գիտեր, որ այդ սատանա Յաննին օր մը իր զավկին կինը պիտի դառնա: Հիմա այլևս չեմ գրեր թու մասիդ, որովհետև աշխարհիս մեջ չափազանց շատ են հետաքրքրասերները: Ինձի կթվի, թե դու նաև շատ բանաստեղծական և շատ թարմ հույզեր ունիս: Անգամ մը որ ամուսնանալ, երկուքս ալ կգրենք: Դու նաև քիչ մը կսորվիս հայերենը (շատ դյուրին է), և մենք բանաստեղծություններ, սիրային վեպեր կգրենք միասին: Այն ժամանակ ալ կտեսնեն, թե ով է Յաննին: Եվ կուենանք մեր լուսանկարները զրքերուն և թերթերուն մեջ: Հիանալի կըլլա: Հայերը շատ կսիրեն բանաստեղծները, կիսաստվածներու պես կմեծարեն զանոնք, տոնախմբություններ, պսակահանդեսներ կսարքեն անոնց պատվին: Մեկ խոսքով, փառահեղ բախտ:

Մինչև հիմա կկարծեի, թե շատ երիտասարդ է մեր սերը: Երեկ հաշիվ մը ըրի և զարմանքով հաստատեցի, որ արդեն **կես տարի** է անցած: Կտեսնե՛ս, թե ինչ սեր է մերը: Վեց ամիսներն անցան վեց շաբաթներու պես, չնկատեցինք անգամ: Դեռ երկուք ու կես տարի կմնա: Շատ չե՛: Ճիշդ է, որ ես քիչ մը անհամբեր եմ, բայց ոչինչ, դու նաև ինձի սպասել կսորվեցնես, համբերություն կուտաս, և այդպես կհասնինք մեր երկարատև **թշվառության** ծայրը: Դո՛ւն կկասկածիս, թե

ես գուցե քեզ մոռնամ... Ինչ կկարծես, Յաննի՛, մի՞թե կարելի է այդ: Նման բաներ մի՛ ըսեր ինձի: Երբ այնքան խենթությամբ, այնքան հրայրքով, այնքան թշվառությամբ ու դժբաղդությամբ կսիրեմ, ինչո՞ւ ինձի միշտ կհարցնես, թե քեզ չե՞մ մոռցած արդյոք... Սոսկալի է, Յաննի՛, այդպիսի չարություններ մի՛ գործեր իմ դեմ: Քեզի միշտ կթվի, թե ես քիչ մը շատ կվազեմ կիներու ետևեն... Անկեղծորեն գրե ինձի. այս է քու համոզումդ, այնպես չէ՛... Եթե այդ, չարաչար կսխալիս: Ճիշդ է, որ ես քիչ մը շատ եմ կրակոտ, ճիշդ է նաև, որ ինձի համար դժվար է խելոք մնալը, բայց անկեղծորեն կըսեմ քեզի, որ քեզ սիրելես ի վեր ոչ մեկ աղջկա ուշադրություն եմ դարձուցած, ոչ մեկ աղջկա, կհասկնա՞ս: Կուզես, որ քեզի հետ խոսիմ բարեկամի պես: Ես ալ կփափաքեմ, որ դուև իսկական բարեկամուհիի նման խոսիս հետս, առանց ոչինչ ծածկելու, նույնիսկ ամենադուրյն բաները: Եկուր սկսինք այս նամակեն իսկ: Ես քեզի պիտի գրեմ, ինչպես մտերիմ ընկերուհիի մը, նույնը պիտի ընես նաև դուն: Ուրեմն ահա.

Դեռ երեկ Կոստանդնուպոլսեն նամակ մը ստացա, ուր ինձեմ բանաստեղծություններ կխնդրեին շուտով լույս տեսնելիք գրական մեծ ամսագրի մը առաջին թիվին համար: Ես քերթված մը դրկեցի, բայց չեմ կրնար միշտ գրել, որովհետև այնքան ընելիք ու սերտելիք կա, որ բնավ ազատ ժամանակ չունիմ: Եվ կվախնամ, որ Լոզան մնամ Ծնունդի արձակուրդին: Մեյ մը մտածե, որ արդեն մարտին պետք է ավարտեմ Բժշկական համալսարանը, որպեսզի Հիվանդանոց մտնեմ: Իսկապես, չափազանց զբաղած եմ, չափազանց, չափազանց:

Չեմ ուզեր գրել Ալիսին. կարիք չկա: Պատասխան մը ստացա՞ր իրմե: Շուտ ըրե, շուտ, ժամանակ չունինք: Ընդամենը 12 օր կմնա Ծնունդին:

Կարգադրեցի՞ր եսթերի և ժուլիայի հետ: Ինչպե՞ս: Կրնա՞մ ամեն ուրբաթ ձեռնահարկ գալ: Լավ կըլլար, եթե գործը գլուխ բերեիր բարեկամուհիիդ հետ, բայց կվախնամ, որ ան նախանձի քիչ մը: Զգուշ եղիր:

Կարծեմ ամեն հարցի մասին գրեցի արդեն: Պետք է որ քու պատասխանդ ալ շատ երկար ըլլա: Գրե ինձի ամեն կիրակի, ես այս կիրակի ալ նամակ պիտի գրեմ քեզի:

Ծնունդին պետք է գաս քովս գոնե քանի մը վայրկյան, գոնե:

Շուտով եմ, որ արդեն ստացած ես նամակներս ու բացիկներս Գերմանիայեն:

Ես քեզ շատ կսիրեմ ու պիտի միշտ սիրեմ: Ամբողջ ուժովս և սիրույս սաստկությամբ կհամբուրեմ քեզ:

Հավիտյանս քույր՝
Ռ. 2.:

Գեղեցիկ աչքերուդ համար:

Գրե ինծի կիրակի օրը: Պատմե՛ ձեր երեկույթներն: **Ծնունդին կսպասեմ**
քեզ:

Ասիկա շրթներուդ համար, որ վառեցին սիրտս:

Ասիկա ուներուդ համար, զոր օրորեցի թևերուս մեջ:

Պեկտեմբեր 19, 1907

Թանկագինս,

Ստացա այսօրվան (հինգշաբթի) նամակդ: Կուզե՛ս՝ ըսեմ ճշմարտությունը: Քիչ մը ջղայնացած եմ մտքերուդ պատճառով: Եվ հետո այդ երեկույթի պատմությունը տհաճ էր ինծի համար: Չխոսինք այդ մասին:

Կուզես, որ քիչ մը ամեն ինչ պատմեմ քեզի: Ի՛նչ խոսք, իրավունք ունիս: Բայց թավափկներու այդ պատմությունները այնքան նման են իրարու, որ ինծի համար ձանձրալի պիտի ըլլա բոլորը պատմելը: Միշտ նույն բանը. կտեսնենք աղջիկ մը: Եթե տգեղ է, կռնակ կդարձնենք իրեն: Եթե գեղեցիկ է, կհետապնդենք, կիմանանք իր տունը, կծանոթանանք հետը, քաղցր խոսքեր կըսենք իրեն և օր մըն ալ... կտիրանանք: Կերջացավ: Մնաս բարով: Կփնտռենք ուրիշ մը... Ահա ամբողջ պատմությունը:

Չեմ հասկնար, թե դուն ինչո՞ւ հետաքրքրական կսեպես այս պատմությունները: Անոնք բոլորն ալ իսկապես ձանձրալի են ինծի համար: Ես շատ կսիրեմ խենթություններ ընել, չեմ սիրեր պատմել զանոնք, որովհետև, ըսի, միշտ նույնն են այդ պատմությունները:

Եվ հետո, Յաննի՛, կա բան մը, զոր պետք է գիտնաս: Դուն գեղեցիկ ես, շատ արտահայտիչ աչքեր ունիս, սքանչելի մարմին, բայց այս բոլորի համար չէ, որ կսիրեմ քեզ (կհասկնաս անշուշտ): Եթե միայն մարմնիդ համար սիրեի քեզ, կրնաս վստահ ըլլալ, որ կես տարի շարունակ չի տառապեր... Շատ մեծ տխմարություն կըլլար աստիկա: Կայրկյանի մը հաճույքին համար մարդ կես տարի չի տվայտիր: Կգրկե, կհամբուրե և երկու օրեն կմոռնա... Այնքան դյուրին է մոռնալը:

Ես քեզ քու զգացումներուդ, սրտիդ, հոգիիդ համար է, որ կսիրեմ...

(անավարտ նամակ)

Իմ շատ գեղեցիկ նշանածս,

Առավան 4.30-ն է: Քիչ առաջ տուն վերադարձա և ահա կգրեմ քեզի այս նամակը: Չեմ գիտեր ինչու, տարօրինակ զգացում մը ունիմ առավան այս ժամուն: Բուրբուրվի հոգնած եմ, աչքերս կոցվին, բայց չեմ ուզեր քնանալ, կուզեմ թու մասիդ մտածել և թու մասիդ մտածելով ալ ավարտել 1907 տարին... Ինծի կթվի, թե այս պահուս դուն իմ մասիս կերագես... Թերևս: Որովհետև օդին մեջ կզգամ բան մը, որ կանցնի անմունչ գիշերվան մեջեն և կթափանցե հոգիիս մեջ, բան մը, որ կուզե գիս գգվել, համբուրել, սիրել... Այդ բանը թու երազդ է, կարծեմ:

Ես այս իրիկուն որպես **Օթելլո** էի դիմակավորված: Ծպտեցա ճիշդ ու ճիշդ այնպես, ինչպես թատրոնի մեջ. կրծքաբաց, խելագար աչքեր, արյունարբու դեմք, սուրեր և այլն... Կրնամ ըսել, թե դիմակահանդեսի լավագույն հանդերձանքն էր իմս: Դուն գիտես աչքերս և կրնաս երևակայել, թե քանի կիներ և գիշերօթիկ սանուհիներ համբուրեցի այս գիշեր՝ ժամը 9-են մինչև 4-ը:

Կկարծեի, թե քեզ ալ կգտնեմ և որոշած էի խենթի պես համբուրել քեզ, իսկական **Օթելլոյի**՝ անձնվեր սիրահարի նման... Փստռեցի քեզ ամեն տեղ: Բազմաթիվ գիշերօթիկնոցներեն օրիորդներ կային, բացի ձերինեն: Ես դիմակահանդեսի աստղն էի, և պետք էր տեսնել, թե ինչպես այդ բոլոր օրիորդները կնայեին աչքերուս մեջ, կհուզվեին, կտոչորեին և հանկարծ կկարմրեին շրթներուս տակ:

Հիմա, որ տուն եմ վերադարձած, սրունքներս կկթոտին խոնջնքես, կզգամ նաև, որ շրթներս աղտոտած են հազարավոր համբույրներե...

Յայգալույսի այս ժամուն սիրտս լեցուն է քեզմով, իսկ աչքերս՝ արտասուքով: Որքա՛ն անուշ է սերը: Կմոռնամ հոգնությունը, ջունը, ամեն ինչ: Եվ իմ հաճույքս է այս նամակը գրել քեզի: Յաննի՛, կհասկնաս զիս, այնպես չէ՛: Դուն արվեստագետ ես և գիտես, թե ինչ է արվեստագետի մը հոգին ու սերը: Այս առավոտ այնքան ալ չէի սիրեր քեզ: Բայց հիմա կզգամ, թե սխալած եմ, թե չեմ կրնար արգելք ըլլալ հոգվույս քեզ սիրելու... Այս պահուն ավելի սիրահար եմ, քան երբևիցե, երբևիցե: Օհ, քաղցր նշանածս, ի՛նչ լավ կըլլար, եթե, երկուքս ալ դիմակավորված՝ միասին անցընեինք գիշերը, աստվածներեն ավելի երջանիկ... Եվ կհամբուրվեինք գիշերն ի լույս և համբուրվելով, կողջունեինք 1908-ի առավոտը:

Այս ժամուն, որ կգրեմ նամակս, Նոր տարի է արդեն: Կմաղթեմ քեզի գեր-

երջանիկ տարի մը երկուքիս համար: Օհ, նույնիսկ այս իրիկուն պիտի ուզէի ըլլալ քեզի հետ...

Բարի լույս, թանկագի՛նս, կհամբուրեմ շրթունքներդ ու ճակատդ...

Շնորհավո՛ր Նոր տարի... Չափազանց կսիրեմ քեզ: Նշանածո՛՝ Ռ. 2.:

1908

Այսօր

Նոր տարի է

Շատ սիրելի նշանածս,

Հիմա չեմ կրնար արգիլել զիս քեզի գրելու: Բոլորովին գիտով եմ: Այս գիշերօթիկնոցին մեջ գիտով եմ բոլորը: Կխմեն, կերգեն, կպարեն, կպոռան, կխմեն... Կուզեմ հիմա նամակ մը գրել քեզի: Գրելիքս գիտով նամակ մը պիտի ըլլա, բայց կարևոր չէ:

Յաննի՛, ուրեմն լսե զիս. կսիրեմ քեզ, շատ, շատ կսիրեմ քեզ, Յաննի՛: Նշանածս, կինս, սիրելիս, հրեշտակս, պզտուկիկ կինս, աղվոր դերասանուհիս, թանկագին Յաննիս, Յաննիս, Յաննիս, միշտ, միշտ թու մասիդ կմտածեմ:

Յաննի, Յաննի, Յաննի, ամբողջ սրտով կսիրեմ քեզ, ամբողջ հոգիով...

Ինչպես կտեսնես, բոլորովին գիտով եմ, գիտով, գիտով, գիտով:

Ինչո՛ւ չես գրեր ինձի: Չքնաղ դերասանուհի՛ս, կուզէի հիմա քեզ ունենալ թւերուս մեջ և խենթի պես փայփայել... Շունչս շամփայն կբուրե: Հիմա Ուշի պիտի իջնեմ, գուցե տեսնեմ քեզ: Գուցե...

Նշանածո՛

Ռ. 2.

Հունվար 2, 1908

հինգշաբթի իրիկուն

Սիրելի Յաննի,

Ահա քանի օրեր է ի վեր քեզ չեմ տեսած, մինչդեռ այնպե՛ս կուզէի տեսնել, որպեսզի սիրատոչոր նայվածքով մը շնորհավոր Նոր տարի մաղթի քեզի:

Ինչպե՛ս ես, սիրելի՛ս:

Ստացա՛ր վերջին նամակս: Շատ ափսոս, որ քրոջդ չկրցա ուղարկել 50 ֆրանք գումարը: Ի՛նչ ծրագիր ունիս հիմա: Շուտ գրե ինձի: Բայց ես բացարձակապես կուզեմ, որ թուս գաս: Այս անգամ շատ կարևոր է գալդ, շատ կարեւոր:

երեկ (Նոր տարի) ժամը չորսին Ուշի կիջնեի քեզ տեսնելու համար: Տեսա, որ ձեր գիշերօթիկնոցի օրիորդները Սուրբ Ֆրանսուայի հրապարակը կերթային, բայց դուն անոնց մեջ չէիր... Ինչո՞ւ: Հիվանդ ես արդյոք: Ի՞նչ ունիս, սիրելի՛ս: Ահա քանի օր է՝ քեզ չեմ տեսած:

Ի՞նչ ըրիր Կաղանդի իրիկունը: Ես խմեցի և գինով եմ տակավին:

Ի սրտե շնորհակալ եմ սիրուն կարկանդակին համար, զոր ստացա Նոր տարվան առավոտուն... Դուն չէ, որ ղրկած էիր զայն, բայց դո՞ւն էիր պատճառը... Շատ շնորհակալ եմ:

Երեկվան գինովությունը դեռ չէ անցած: Գլուխս քիչ մը տաք է դեռ...

Անհամբեր կսպասեմ քեզ. եկուր, եկուր, եկո՛ւր...

Ե՛րբ կուզես սկսիլ գծագրության դասերը: Արդյոք երեքշաբթի օրե՛րն ալ դասեր պիտի ունենաս: Համաձայնության եկա՛ր դասընկերուհիիդ հետ: Ե՛րբ կրնամ հոն գալ քեզ գրկելու համար: Մենք կրնանք այսպես կարգադրել. ընկերուհիդ օրիորդ Լորանին կըսե, թե դուն այսօր այցելություն մը ունիս և չես կրնար դասի գալ: Այն ժամանակ քովս կուգաս մինչև ժամը 4-ը:

Շատ զվարճալի (բոլորովին զվարճալի) պատմություն մըն է, զոր կուզեմ պատմել քեզի, երբ ըլլամ թներուդ մեջ: Այո՛, իրոք որ զավեշտական է, և դուն շատ պիտի խնդաս:

Կուզեմ լուսանկարդ ունենալ: Թերևս շատ գեղեցիկ չէ, բայց կարևորություն չունի: Օր մը միասին կնկարվինք Նիթշե լուսանկարչատունը (Լոզանի մեծ լավագույնը, Մեծ կամուրջին վրա) կամ գծագրության դասի ատեն, այնպես չէ՛:

Ամբողջ ուժովս կգրկեմ քեզ և անհամբեր կսպասեմ:

Նշանածո՝ Ռ. 2.:

Հունվար 10, 1908

Սիրելի Նշանածո,

Մենք գեշ սկսանք 1908 տարին: Ծնունդի առավընե ի վեր չեմ տեսած քեզ: Ամենուրեք կփնտռեմ քեզ, շատ մտահոգ եմ, կվախնամ, որ հիվանդ ես: Պետք է ինձի գրես, թե ուր ես, ինչ կընես և ինչու այսքան ատենե ի վեր նամակ չես ղրկած: Այն նկարը, զոր քեզի համար շրջանակել տվի (համբույրը) կմնա սենյակս: Կնայիմ անոր, և աչքերս կլցվին արցունքով: Տուր ինձի հասցեդ, որպեսզի ուղարկեմ զայն:

Շատ մտահոգ եմ քեզի համար: Երկտող մը գրե, ազատե գիս մտատանջութենե:

Միշտ՝ մինչև վերջին շունչդ դուն պետք է վստահ ըլլաս իմ սիրույն: Հա-
կառակ բոլոր խոչընդոտներուն, ցկյանս պիտի սիրեմ քեզ:

Դուն ոչինչ պետք է ընես, նախքան ինձի գրելդ:

Եղիր զգոն և մտացի:

Քու դժբաղդ նշանածդ Ռ. Չ.:

Հ. Գ.

Այս իրիկուն, շաբաթ, «Հայոց տարեկան մեծ երեկույթը» Պանդոկ-Սեսիլի
մեջ: Պիտի կատարվին նաև ազգային տարազներով հայկական պարեր: Կխոս-
տանամ (և պիտի չկրնայի ուրիշ կերպ ընել) բոլոր մտքերս քեզի նվիրաբերել
այս իրիկուն:

Քու սիրելի ծնողքիդ նախօրոք չեմ կրնար ըսել Էրֆուրտ հասնելուս ոչ օրը,
ոչ ժամը, քանզի չեմ գիտեր՝ կուզե՞մ Հեյտելպերկ իջնել թե ոչ: Կնախընտրեմ
չմնալ այնտեղ:

Ստացա չորս լուսանկարներդ: Երախտապարտ եմ: Երեկ (ուրբաթ) իրիկուն
անոնցմե մեկուն առջև մոմ մը կվառեր, որպեսզի սքանչացոմս դառնար Պաշ-
տամունքի սեղան և սերս՝ Կրոնք:

Ռուբինս

Հ.Գ. Այս նամակը գրվեցավ շաբաթ օրը: Մեր երեկույթին պատճառով չկըթ-
ցա նույն օրն իսկ ուղարկել զայն: Կղրկեմ այսօր, երկուշաբթի: Ներփակ կզըտ-
նես մեր Պարերուն հայտագիրը: Վաղը կգրեմ քեզի: Դուն ալ գրե: Շուտ:

Հունվար 12, 1908 Լոզան

Իմ խեղճ Յաննիս

Ինձի միշտ կթվի, թե դժբաղդություն մը պատահած է քեզի: Շատ հաճախ
կանցնիմ պատուհանիդ տակեն և հոն չեմ գտներ քու հրեշտակային վսեմ կեր-
պարանքդ: Կկարծեմ, թե դուն, թերևս, հիվանդ ես սիրով կամ թունավորված...

Ահավոր են այդ մարդիկը: Ինչո՞ւ հանգիստ չեն ձգեր քեզ: Ինչո՞ւ կչարչարեն
շարունակ: Մի՞թե ոճիր է սերը: Ո՞վ է իրենց իրավունք տվեր խոշտանգելու քու
անմեղ խեղճ սրտիկդ:

Ո՞վ գիտե, գուցե իրավունք ունին: Որովհետև շատ հաճախ աղջկա մը
պատիվը փրկելու չափ լուրջ չէ սերը: Շատ հաճախ կսիրեն թեթևորեն, խենթի
պես, առանց կշռադատելու, միայն հաճույթ և կիրքե մղված: Ահա այս պատ-

ճառով չեն ձգեր քեզ, որ սիրես:

Ընելիք մեկ բան կա միայն: Դուն ոչինչ պետք է ծածկես, պետք է ամեն ինչ գրես ծնողքիդ, բացատրես անոնց մեր պատմությունը սկիզբեն մինչև վերջ, առանց ոչինչ պարտկելու: Պետք է անկեղծ ըլլաս ծնողքիդ հետ. առանց անոնց թույլտվության չենք կրնար մեր տեղեն շարժիլ: Ճիշդ է, որ քեզի համար քիչ մը դժվար է պատմել ծնողքիդ մեր սիրո բոլոր մանրամասնությունները (որովհետև քիչ մը չափեն ավելի մտերմիկ մանրամասնություններ կան), բայց, ինչ ալ ըլլա, կրնաս անոնց ներողամտությունն ու թույլտվությունը խնդրել:

Գիտեմ, որ մայրիկդ չափազանց խիստ է (բազմիցս պատմեր ես ինձի այդ մասին), բայց ան քու մայրդ է և չուզեր իր աղջկան դժբաղդությունը, չի կրնար քեզ թշվառության մատնել:

Ուրեմն, նամակս ստանալուդ պես լավ մը կխորհիս և լուրջ նամակ մը կգրես մորդ: Կըսես, թե մեր սերը թեթև ու անցողիկ զգացում մը չէ, այլ լուրջ, մտածված, կշռադատված: Խոստովանե ամբողջ ճշմարտությունը: Հույս ունիմ, որ մըտմտալե ետքը, կպատասխանե քեզի:

Գալով ինձի, ես բան չեմ գրած ծնողքիս: Թերթին մեջ հրատարակված բանաստեղծության առթիվ անոնք հարցուցին ինձի, բայց ես դեռ չեմ կրնար ըսել: Որովհետև անչափ կսիրեմ զիրենք և չեմ ուզեր վիշտ պատճառել: Կուզեն զիս ամուսնացնել աղջկա մը հետ, որ հարուստ է և գեղեցիկ (դուն անոր լուսանկարը տեսար սենյակիս մեջ): Բայց ես կնախընտրեմ ամուսնանալ քեզի հետ: Ոչ դրամը կրնա զիս հրապուրել, ոչ գեղեցկությունը: Երկու տարի հետո, երբ բժիշկ դառնամ, դրամի պակաս չեմ զգար:

Նախանցյալ օր նամակ մը դրկեցի քեզի: Չպատասխանեցիր: Ինձի կթվի, թե չես ստանար նամակներս: Ուրիշ հասցե մը խնդրած էի քեզմե և քանի որ դեռ չունիմ այդ հասցեն, ահա այս նամակին մեջ կգրեմ այն բոլոր կարևոր բաները, զոր կուզեի ըսել քեզի: Լրջորեն մտածե և եթե կրնաս, պատասխանե: Կվախանամ, որ գիշերօթիկնոցին մեջ կհսկեն վրադ և չեն ձգեր, որ գրես ինձի:

Ինչ կվերաբերի ինձի, ես շատ զբաղած եմ հիմա. կաշխատիմ, որ մարտին ավարտեմ Բժշկական համալսարանը և հիվանդանոց մտնեմ: Կիրակի է այսօր: Ժամը հինգի առենները Ուշի պիտի իջնեմ քեզ տեսնելու հույսով: Գծագրության դասերդ կանոնավոր կշարունակե՞ս: Այս կիսամյակին գործերս իրար կուտեն: Քեզի ավելի երկար գրելու ժամանակ չունիմ:

Ռ. 2.

(Խելացի եղիր: Մարդ համբերությամբ ամեն ինչի կհասնի: Կհամբուրեմ քեզ):

Սիրելի Յաննի,

Շատ շնորհակալ եմ բացիկներուդ համար, որոնք իսկապես զմայլելի են: Դուն արվեստներու աննման ճաշակ ունիս, որ զիս ուղղակի կիպարտացնէ:

Մեծապես ուրախ եմ, որ միշտ կմտածես իմ մասիս և ամեն օր քանի մը բարեկամական բառեր կուղարկես: Բայց գիտես, որ ես չեմ կրնար նույնը ընել. պետք է ուսանիմ, կարևոր է մեր ապագային համար: Հուսով եմ, որ չես նեղանար, եթե երբեմն պատասխաններս ուշանան: Բայց կխոստանամ, շաբաթը առնվազն երկու նամակ գրել քեզի: Հերիք է, չէ՞:

Կլննդրեմ, դրկե ինծի մանտոլինով լուսանկարս, զոր մոռցա քովդ: Չեմ սիրեր այդ լուսանկարը. շատ է մանկական, և հետո, չեմ սիրեր, որ ընկերներ գտնվին հետս նույն լուսանկարին վրա: Խոսք կուտամ օրերս ուրիշ մը դրկել քեզի, համաձայն ես:

Այսօր կդրկեմ քեզի «Լոզանի լրագիրը», ուր քննադատած են անցյալ տարվան հայկական երաժշտական երեկույթը: Կարդա մորդ այդ հոդվածը, որպեսզի ան տեսնե, թե Զվիցերիո մեջ կգնահատե՞ն հայերը: Ներփակ կգտնես նաև պզտիկ լուսանկար մը, որ կներկայացնե բանախոսը, երաժիշտը և հայ դասախոս մը, զոր հրավիրած էր «Արմենիա» ընկերությունը, որուն նախագահն եմ ես 1907- են ի վեր:

Ուրիշ ի՞նչ գրեմ: Եթե սիրտ ունիս լսելու, կըսեմ քեզի, որ ես հիմա կաշխատիմ երեսուներկու տարեկան թիկնավետ ամերիկացիի մը հետ, որ Արժանթինի հանրապետության նախագահի որդին է: Կրնա ըլլալ, որ Լոզանի մեջ տեսած ես զինքը. միշտ Սուրբ Ֆրանսուայի հրապարակն է իր ցլաշունին հետ:

Հուսով եմ, որ արդեն ստացած եք թու սիրելի ծնողքիդ հասցեագրած նամակս: Քիչ մը շատ ուշացուցի զայն, բայց, գիտեմ, կներեն ինծի, եթե նկատի ունենան, որ ես բնավ ազատ չեմ:

Ահա քանի մը դրոշմաթուղթեր. բարեհաճե հանձնել զանոնք մայրիկիդ:

Հետզհետե կուղարկեմ ուրիշներ ալ, երբ նամակներ ստանամ Կոստանդնուպոլսեն:

Լսե, Յաննի՛, եթե ժամանակ ունիս, կրնամ քեզի դրկել ֆրանսերեն գիրքերես քանի մը հատ, որպեսզի կարենաս ավելի լավ սորվիլ ֆրանսերենը և կամաց-կամաց խորանալ գրական ուսումնասիրություններու մեջ, կուզե՞ս:

Ահա մոտավորապես տասը օր է արդեն, որ բաժնված ենք իրարմ: Ի՞նչ շուտ կանցնի ժամանակը: Մտածե անգամ մը, որ երկու ամիս կա միայն, երկու կարճիկ ամիս, և հետո, պզտիկ սիրելի, և հետո մտածե այն անհուն երջան-

կուռքայան մասին, որ մերը պիտի ըլլա... Չես գիտեր հիմա, թե ինչի մասին կխորհիմ ես: Կխորհիմ այն դերասանական արտասանություններուդ մասին, զոր կընեիր ինծի այնտեղ՝ ճաշասենյակին անկյունը, աթոռի մը վրա, այնքա՛ն սիրունիկ, գեղեցկությամբ ու սիրով այնքա՛ն արտահայտիչ:

Սիրելի՛ս, հազարապատիկ սիրելիս, ինչո՞ւ է մարդ այդքան երախտա, երբ կսիրես: Ես անձամբ շատ զվարճալի կհամարեմ այս վիճակը: Կզգամ, որ մանուկ կդառնամ ամեն անգամ, երբ կմտածեմ քու մասիդ: Բայց ամեն անգամ որ աչքերս կիյնան բժշկական ցմփոր գիրքերուն վրա, յուրովի կըսեմ. «Օհ, ո՛չ, այլևս մանուկ չես, պետք է ուսանիս, պետք է նախապատրաստես ապագան»: **Պետք է, չէ՞ Յաննի՛:**

Քնքշորեն կհամբուրեմ քեզ և կկնքեմ նամակս երթալ քնանալու համար: Գիշեր բարի, սիրելի՛ս:

Քույր՝ Ռուբինս:

Շաբաթ, Մայիս 25, 1908

Սիրեցյալս,

Կուզե՛ս՝ հինավուրց նշանածներու պես ընեմ. ամեն անգամ որ սիրային նամակ մը կուզեին գրել, կխոսեին եղանակի մասին: Ուրեմն, թույլ տուր, որ քիչ մը մեր եղանակեն գրեմ, քանի որ իսկապես տարօրինակ եղանակ մը կընես: Ահա օրեր շարունակ կանձրևե, իսկ այսօր կեսօրեն ետքը երկու ժամ մեծ փաթիլներով ձյուն եկավ: Այնքան անսովոր էր ձյունի պսպղուն ճերմակության ընդմեջեն դալարիքին և ծաղիկներուն նայիլը: Իսկ հիմա՝ իրիկվան ժամը իննին (շաբաթ) տեղատարափ անձրև կուգա:

Շնորհակալ եմ այն գեղեցիկ բացիկներուն համար, զոր ղրկած էիր: Ես զանոնք քեզի համար կհավաքեմ մասնավոր Ալպոմի մը մեջ: Դժբաղդաբար չեմ կրնար զբաղիլ ամեն օր քեզի գեղարվեստական բացիկներ ղրկելով: Փոխարենը կուզեմ քեզի նվիրել պզտիկ ալպոմ մը, ուր երեք տարվան ընթացքին ժողված եմ ցուցասրահներու լավագույն նկարները: Կկարծեմ, թե այսպիսով քչիկ մը հաճույք կպատճառեմ քեզի, չէ՞:

Ժամացույցով լուսանկարի պատմության առթիվ, զոր կհիշեցնես, չմոռնամ ըսելու քեզի, թե անցյալ իրիկուն փոքրիկ մակույկի մը մեջ ընկերովի զվարճանալու ատեն ժամացույցս լիճն ինկավ: Եվ հիմա պետք է գոհանամ մեր գիշերօթիկնոցի պատի ժամացույցով և Սուրբ Ֆրանսուայի զանգով:

Ի՛նչ կուզեի դեռ պատմել քեզի: Կհարցնես, թե մի՞շտ կսիրեմ քեզ և հաճա՛խ կմտածեմ քու մասիդ: Սիրելի՛ս, շատ լավ գիտեմ, թե ինչ կա լեզվիդ տակ:

Կուզես ըսել, թե հաճախակի չեմ գրեր քեզի: Բայց դուն գիտես, որ ժամանակ չունիմ. բժշկական այս բոլոր ստվար հատորները կլափեն ամբողջ ժամանակս, կհոգնեցնեն զիս. դժվար է բժշկությունը: Բայց կկարծե՛ս, թե ակնթարթ մը կմոռնամ քեզ: Եվ մի՞թե դուն կձգես, որ քեզ մոռնամ. ամեն առտու նամակաբերը բացիկներովդ կարթնցընես զիս: Խեղճը միայն չէր գիտեր, որ ես «Baron» (՝) տիտղոսն ունիմ: Եվ հետո այնքան զվարճալի են հայերեն բացիկներդ: Սպասուհին անչափ հետաքրքիր է գիտնալու, թե ինչ կնշանակեն այդ բաները...

(Նամակը պակասավոր է)

Մայիս 27, 1908

Սիրելի նշանածս,

Իրիկվա ժամը ինն է, չորեքշաբթի: Պզտիկ արշավե մը կվերադառնամ, զոր կատարեցի դեպի Կուրգի աշտարակը: Վաղեմի դրյակ մըն է այդ, որ կերևի Լոզանեն, եթե նայիս Ռոշե տյու Լուայեի ուղղությամբ, բայց ավելի մոտիկ: Բոլորովին հոգնած եմ և պիտի ուզեի անմիջապես անկողին մտնել, բայց վաղը տոն է, կրնամ մինչև ժամը ութը քնանալ: Ուրեմն կարելի է հիմա քանի մը բարեկամական բառեր գրել քեզի:

Նախ և առաջ կուզեի ըսել, որ իրոք տհաճ է ինձի, երբ ամեն անգամ տխուր բառեր կուզան գրիչիդ տակ, և անձնատուր կըլլաս ցավագին մտածումներու, հուսահատական հույզերու: Լսե, դուն իրավունք չունիս կյանքեն դժգոհելու: Կսիրես, սիրված ես (և ինչպե՛ս ...), սրտիդ ազատ ընտրությամբ ես նշանված. ոչինչ կպակսի քեզի, բացարձակապես ոչինչ: Ինչո՞ւ այդքան անհամբեր կդառնաս, այդքան տրտում, այդքան հոռետես: Անկեղծորեն, ես քեզի թույլ չեմ տար, որ տրտնջաս. ո՛չ, հազար անգամ ո՛չ: Այնքան հոգնություններե, նամակներե, հուսահատություններե ետքը ահա, վերջապես, հաղթական ելանք: Հիմա ժամանակն է, որ ուրախ ըլլանք ու երջանիկ: Անգամ մըն ալ կըսեմ քեզի. թույլ չեմ տար, որ հոռետես մտքերու գերին դառնաս: Միշտ խորի՛ն բոլոր անոնց մասին, որ ավելի դժբաղդ են, քան դուն, որ ծնողք անգամ չունին, որ չոր հացի կտորի մը կարոտը կքաշեն, որ երբեք չսիրվեցան (խեղճերը), որ նշանված են բռնի՝ դրամի համար, որ ապրելու դատապարտված դժբաղդներ են: Ուրեմն, պետք է քիչ մը մտածել այս բոլորի մասին: Տխրելու դույզն իրավունք չունիս դու: Լսե, մեղք է քեզի. պետք չէ կյանքը լալով անցընել, գեշ տեսություն մըն է այդ: Ես, եթե երբեք Աստված մեկ կամ երկու զավակ պարգևե ինձի, ես պիտի ըսեմ անոնց. «Լսեցեք, զավակնե՛րս, կյանքը կարճ է, ձեր կարծածեն շատ ավելի

կարճ: Ջանացեք լավագույնս օգուտ քաղել ձեր կյանքեն: Միշտ գոհ եղեք և երջանիկ, որովհետև օր մը օրանց, ուզած-չուզած, պետք է փակեք ձեր աչքերը: Եվ անգամ մը որ մեռնիք, մեռած եք հավիտյանս հավիտենից»: Եվ դեռ պիտի ուզեի շատ բաներ ըսել անոնց, շատ լավ բաներ: Քանզի մարդիկ ըստ բավականին չեն գիտեր ամենահասարակ ճշմարտությունները: Կապրին այնպես, կարծես անմահ ըլլային, երբեք չեն մտածեր, որ պիտի մեռնին, թերևս վաղը: Մարդիկ, բոլորը, կոպիտ են, եսասեր, ամբարտավան, սնապարծ: Այնքան քիչ բան է պետք երջանիկ ըլլալու համար, իսկ անոնք կուզեն ամեն ինչ ունենալ և երբեք երջանիկ չեն: Բանաստեղծ մը (Լամարթին) այսպես կըսեր Նափուլեոն Պոնաբարթի գերեզմանին վրա. « Ան կուզեր տեր դառնալ ամբողջ հողագունդին, հիմա երկու թիզ հողը չափազանց շատ է իր դիակին համար»: Եվ ասիկա կվերաբերի ոչ միայն Նափուլեոնին, այլ բոլոր մարդոց: Միշտ կուզեն չափեն ավելի ունենալ, մինչև որ օր մը դառնան նեխած միսի կույտ մը, անզգա, բացարձակապես անպետք: Ջանա կյանքը ճանչնալ իր առաջին ճըշմարտություններուն մեջ: Գոհացիր այն քիչով, որ ունիս (իսկ քու ունեցածդ այնքան ալ քիչ չէ), սիրե կյանքը, քանի դեռ կենդանի ես, գործե այնքան բարիք, ինչքան կրնաս և ուղեղիդ մեջ քանդակե այն միտքը, թե օր մը անհրաժեշտաբար, անխուսափելիորեն պետք է մեռնիս: Հիմա չես կրնար հասկնալ այն ամենը, որ կա այս խոսքերուն մեջ, որովհետև չափազանց երիտասարդ ես տակավին: Բայց կուգա օր մը, երբ լավ կըմբռնես զիս և այն ատեն է, որ երջանիկ կըլլաս: Ինծի պես ըրե. մեծագույն վշտի պահերուս, երբ կմտածեմ, թե կենդանի եմ դեռ, այս միտքը այնքան երջանիկ կդարձնե զիս, այնքան երջանիկ... Խորի՛ս, իմ մասիս, որ կսիրեմ քեզ սիրով մը անկարելի, աներևակայելի և անհավատալի: Խորի՛ս մեր ապագայի, մեր երջանկության, մեր երազներու, մեր գալիք այնքան՝ քաղցր և այնքան՝ ներդաշնակ փոքրիկ ընտանիքի շուրջ, խորի՛ս նույն սիրով և նույն մտորումներով միաձուլված մեր զույգ անձերու մասին, և ես վստահ եմ, որ երբեք արցունք չես ունենար աչքերուդ մեջ...

Սիրելի՛ս, իմ գեղեցիկ ու բարի սիրելի՛ս...

Քույր՝ Ռուփինս:

Բարևներ սիրելի ծնողքիդ և շնորհավոր տոն: Հազար համբույր քեզի: Ռուփինս:

Յաննի՛ս, ինչո՛ւ կուզես, այսպես, առտու կանուխ ցավ պատճառել ինծի: Ինչո՛ւ չես ուզած հասկնալ նամակս: Սակայն շատ լավ գիտես, որ քու բարիքիդ համար են գրված այդ բոլորը: Թեպետև դուն խելացի ես (նույնիսկ՝ շատ խելացի), բայց դեռ բոլորովին երիտասարդ, միամիտ ու արվեստագետ աղջիկ

մըն ես, որ **գաղափար անգամ չունի** մարդոց շարութեան մասին: Ինչո՞ւ կբարկանաս, երբ քանի մը **բարեկամական, զուտ բարեկամական** խորհուրդներ կուտամ քեզի: Գիտես, Յաննի՛, որ ես ամեն անգամ կբարկանամ, երբ դուն կուլաս, մանավանդ երբ կուլաս նամակիս պատճառով: Ինծի նայե, մի՞թե կնախընտրես, որ ես կատարելապէս անմասն ու անտարբեր մնամ քու ընթացքիդ: Ինչո՞ւ չես ուզեր հասկնալ, թե իմ սերս, քեզի հանդեպ զգացած **անհուն** սերս է, որ ըսել կուտա ինծի քիչ մը կարծր խոսքեր: Եթե քեզ չսիրեի այնպէս, ինչպէս կսիրեմ, կգրեի քեզի այն բոլոր սիրահարական խոսքերն ու շոյիչ բառերը, որ կան բոլոր լեզուներու բառարաններուն մեջ, ինչպէս կընեն ընդհանրապէս բոլոր նշանածները: Բայց, Յաննի, ես չեմ ուզեր ուրիշներու պէս նշանած ըլլալ քեզի համար՝ կեղծավոր, սուտ-սիրահար նշանած: Դուն գիտես արդէն բնավորությունս: Ես քեզ կսիրեմ, կճանչնամ քեզ և չեմ ուզեր ոչինչ ծածկել քեզմէ: Դուն **չափազանց արվեստագետ** և քու նմաններեդ, **չափազանց բարձր** աղջիկ մըն ես: Կապրիս իտեալի ամպերուն մեջ: Ես ալ ճիշդ քեզի նման էի, երբ շատ երիտասարդ էի տակավին: Իմ աչքերս ոչ ոք բացավ առօրյա կյանքին անողորմ իրականության վրա: Կամաց կամաց ինքս տեսա ամեն ինչ և սորվեցա կյանքի առաջին ճշմարտությունները: Հիմա կուզեմ օգնել քեզի, Յաննի՛, կուզեմ ըսել այն ամենը, զոր լավ կսեպեմ, օգտակար և կարևոր: Եթե ժամանակ առ ժամանակ արվեստագետի քնքուշ սրտիդ համար քիչ մը շատ կարծր բառեր կգործածեմ, ներե ինծի, Յաննի՛: **Գիտցիր, որ միշտ, միշտ քու բարիքիդ համար կըսվին անոնք:** Հիմա կարդողիս, կխոցես սիրտս, կհեծկլտաս, ազդվելով խոսքերես, բայց **պիտի գա օր մը, երբ երախտապարտ պիտի ըլլաս ինծի** և սրտնեղիչ նամակներով ցավ պատճառելու տեղ, շնորհակալական համբույրներով պիտի ծածկես զիս: Գիտեմ, պիտի գա այդպիսի օր մը... Միայն քիչ մը շատ ուշ, ավա՛ղ... Բայց եթե կա դեռ բան մը, որ կսփոփե զիս, այդ ալ այն **գիտակցությունն է, թե կսիրես զիս: Երբեք, երբեք** չեմ կասկածիր քու սիրույդ, ինչպէս չեմ կասկածիր առաքինությանդ ու հավատարմությանդ: Բնավ-երբեք: Ընդհակառակը, գիտեմ, որ անհուն սեր կտածես այս տողերը գրողին հանդեպ, սեր մը աննման և անսահման, զոր ցայժմ ոչ մեկ աղջիկ կրցած է զգալ իր սրտին մեջ: Գիտեմ այս ամենը և գիտեմ նաև, որ քու բոլոր ցանկություններդ իմ հաճույքս ունին որպէս նախապայման: Միայն, Յաննի՛, գիտես, երբեմն այս սերը այնքա՛ն **կսկծագին** կդառնա սրտիս համար, այնքա՛ն ցավոտ, թշվառ, սոսկալի, որ ինքզինքս չափազանց **դժբաղդ** կզգամ, այո՛, երբեմն **դժբաղդ՝** սիրույս պատճառով: Կդառնամ ջղային, անկորով, և ինծի կթվի, թե գուցե չկարենամ ապրիլ մինչև մեր վտեմ, հավերժական միաձուլման օրը... Այդ պահերուն տեսակ մը հուսահատություն, անպարագիծ նվաղում կիջնե վրաս: Բայց ամեն անգամ որ ձեռք կառնեմ գրիչս, զվարթ ու քաջալերիչ բաներ կգրեմ քեզի, քանզի գիտեմ, որ քու **նուրբ** ու ջղագրգիռ

կերտվածքդ զվարթանալու և քաջալերվելու կարիք ունի: Եվ խորունկ վշտով լեցուն այդ վայրկյաններուն էթե սրտիդ ցավ պատճառող բաներ մը կգրեմ, ներե ինծի և փոխանակ հոգիս ա՛լ ավելի կեղեքելու, ջանա զիս զվարթացնել ու քաջալերել... քանզի, գիտե՛ս, Յաննի՛, քեզի հանդեպ զգացած սերս մեծ, մեծ սեր մըն է, այնքա՛ն մեծ, որ իմ փոքրիկ սիրտս չի կրնար պարունակել զայն, և ես կտառապիմ ու կտառապիմ ահռելիորեն...

Ահա այն ամենը, զոր կուզեի ըսել քեզի: Եթե կշռադատես այս բառերես յուրաքանչյուրը, պիտի լավ ճանչնաս այն մարդը, որ գրեր է զանոնք, և արտասուք պիտի զգաս աչքերուդ մեջ... Բայց եթե հապճեպով կարդաս այս նամակը և չափազանց կարճ համարես զայն, քեզի կըսեմ, թե ես չեմ գրեր էջեր լեցնելու համար, ես կգրեմ միայն թեթևցնելու համար սիրտս:

Քույր՝ Ռուբինա:

Հունիս 14, 1908, Կիրակի

Սիրելի նշանածս,

Գրեր էի արդեն ներփակ նամակը, բայց այնքա՛ն արտորանքի մեջ էի, որ ժամանակ չունեցա Լոզանի թղթատարով առաքելու զայն: Ահա այստեղ՝ Էվիանի զվարճատունին մեջ կգրեմ այս երկտողը ըսելու համար քեզի, թե լավ ժամանակ անցուցի ինքնաշարժ մակույկին մեջ. ուղեկիցներս ուրախ մարդիկ էին, իսկ սպանացիները՝ չափազանց աղմկոտ: Էվիանի քարափին վրա անմիջապես մտածեցի թու առաջին բացիկիդ մասին, զոր Էվիանեն էիր Շամբերի դրկած ինծի գրեթե տարի մը առաջ: Որքա՛ն հիշատակներ և հեռավոր խոհեր: Այսօր չափազանց շատ զգացի բացակայությունդ: Պզտիկ բացիկ մը դրկեցի քեզի Էվիանեն, թերևս ստանաս: Կըսեմ «թերևս», քանզի Ֆրանսայի թղթատարական սպասարկությունը չափեն ավելի անկանոն կաշխատի: Այս պատճառով ալ Էվիանեն չեմ դրկեր այս նամակը, պիտի ուղարկեմ Լոզանեն:

Սիրելի Յաննի՛ս, շատ տխուր եմ, քանզի գուցե չկարենամ ծննդյանդ տարեդարձի օրը հասցընել փոքրիկ նվերս: Վաղը (երկուշաբթի) առտուն ժամը 8-ին Լոզանեն պիտի դրկեմ զայն: Եթե երեքշաբթի չհասնի նվերս, հույս ունիմ, որ կբարեհաճիս ներելու ինծի, քանի որ շատ կշտապեի:

Ինչպե՛ս է առողջությունդ: Հուսով եմ, որ լավ ես և ուրախ պիտի անցընես տարեդարձիդ տոնը: Այնքա՛ն պիտի ուզեի ըլլալ այնտեղ, թու կողքիդ, բազմոցի այն հարմարավետ անկյունը, ուր այնքան լավ կզգայինք մենք մեզ երկու ամիս առաջ: Դժբաղդաբար, էրֆուրտը Էվիանի պես չէ, ուր ուզած ատենդ կրնաս երթալ: Բայց կարևոր չէ. երեքշաբթի ամբողջ օրը, մինչև կեսգիշեր,

հոգիս քեզի հետ պիտի ըլլա, սիրելի բարեկեմուհի՛ս: Պիտի գա օր մը, երբ այսպես երկար-բարակ ճառերով քեզ շնորհավորելու տեղ, քաղցրիկ համբույր մը պիտի դրոշմեմ աչքերուդ: Միայն քիչ մը չափազանց ուշ պիտի գա այդ օրը: Բայց մի՛ մոռնար մեր սուրբ տարեդարձի օրը՝ հուլիս 17-ը: Չես մոռնար, չէ՛:

Հազար անուշ համբույր

քու Ռուբենեղ՝¹

«Յուկենդ» շաբաթաթերթի վերջին թիվին մեջ տեսա՛ր Էրֆուրտի գեղեցիկ նկարը, որ Լյուրցինկ անունով ոմն պարոնի գործն է: Նկարը կնեղակայացնե՛ ձեր մայր տաճարը, զոր ես խորունկ վերհուշներով (միտդ բեր Ջատիկի օրը) կախեցի սենյակիս մեկ անկյունը:

Այդ Էրֆուրտաբնակ գերմանացի ուսանողը Հոֆման չէր կոչվեր: Շատ դժվար անուն մը ուներ, ես չկրցա միտքս պահել: Կարճահասակ էր, խելացի, ուրախ: Եվ խմելեն ետքը անոր հետ է, որ վալս պարեցի, տապալելով սըր-ճարանի սեղանները: Ան Մյունխի վերադարձավ: Գերմանացի ուսանողներու տրամադրությունը կբարձրանա միայն այն ատեն, երբ քանի մը տակառ Մյունխի գարեջուր կոնծեն: Եվ ես կերակայեմ, թե այս իրիկուն որքան գարեջուր պիտի լեցնենք մեր ստամոքսին մեջ Պիսմարքի կենացը: Կերակայեմ նաև այն բոլոր գերմաներեն ճառերը, որոնցմե բառ մը անգամ չպիտի հասկընամ:

Գիշեր բարի, սիրելի հրեշտա՛կ, և անուշ երազներ:

Կիրակի

Երեկ կայացավ գերմանական երեկույթը: Այնտեղ է, որ ծանոթացա ձեր Էրֆուրտցի նշանավոր Յոժեն Հոֆմանին հետ: Չըսի իրեն, թե կճանչնամ ձեզ, քանզի պետք է միշտ զգուշավոր ըլլալ այդօրինակ մարդոց հետ: Մնաց որ բավական... չեմ գիտեր ինչպիսի կերպարանք ուներ: «Այո՛, այո՛, այո՛» (միշտ երեք անգամ). ահա անոր խոսած ֆրանսերենը: Առտվան ժամը երկուքի ատենները, երբ դասախոսները ավարտեցին իրենց ճառերը, և երբ բոլորն ալ գինով էին ինչպես (անընթեռնելի) ես արտասանեցի գերմաներեն (՝) ճառ մը, զոր գերմանացի ընկեր մը գրած էր ինձի համար: Կրնաս երևակայել խելագար ծիծաղները և « հուռռա » աղաղակները:

Իսկ հիմա ահա քեզի հիմար պատմություն մը: Առտվան ժամը երեքի կողմերը ուսանողներեն մեկը կմոտենա ինձի, կառաջնորդե՛ զիս դեպի ամայի պարտեզը, երկար սիրավեպեր կպատմե, կուլա (և ինչպե՛ս) և կխնդրե ինձմե, որ չերթամ Պարի դպրոցի պարահանդեսին (երեքշաբթի), որովհետև այդ պարահանդե-

¹ Նամակին մեջ՝ հայերեն (ծ. թ.):

սին հրավիրված պիտի ըլլա նաև իր նշանածը, որ մեր տղուն ըսած է, թե ես արվեստագետի գեղեցիկ տիպար մըն եմ: Դուև կրնաս կռահել անշուշտ. խեղճ սիրահարը կվախնա, որ այդ պարահանդեսին ես իր նշանածին սիրտը կգողնամ, գուցե և մագնիսեմ (՝) զայն աչքերուս սև գույնով (իսկ խեղճ սիրահարը բոլորովին խարտիշահեր է): Նախանձության պատմությունը: Հե՛ք տղա: Չի գիտեր միայն, որ ես նշանված եմ արդեն, խոսեցյալ, ցկյանս կապված ուրիշի մը հետ: Եվ չի գիտեր, թե աշխարհի բոլոր գեղեցկությունները անգոր պիտի ըլլան սասանելու սիրտս, որ ինծի չի պատկանիր արդեն... Ինչպե՛ս կկարեկցեի իրեն. մանուկի մը պես կուլար (անշուշտ այստեղ դեր ուներ նաև իր խմած գարեջուրին քանակը): Մխիթարեցի իրեն, խոստացա, որ անտարբերությամբ կվերաբերիմ իր սիրելի Տորային (այսպես կկոչվի օրիորդը): Բայց ասիկա հերիք չէ մեր սիրահարին: Կուզե, որ ես աղջկան գրեմ, թե չեմ սիրեր իրեն, թե ինքն ալ պետք չէ սիրե գիս: Տղան չի ուզեր, որ պարահանդեսի երթամ և այլև, և այլև... Խնթթ կոնծաբանի պատմություն: Հետո զիս կառաջնորդե Կայարանի ծառուղին՝ իր նշանածի պատուհանին առջև, կսուլե, անձրևին տակ, առավան ժամը չորսին ցայգանվազ կկատարե (և ի՛նչ ցայգանվազ...): «Ահ, պարոն Չիլի՛նկ, չեք գիտեր, թե ինչպես կսիրեմ այդ աղջիկը, որ այլևս չի ուզեր սիրել զիս: Կխնդրեմ ձեզ... Դուք զիս ուղղակի երջանիկ պիտի դարձնեք...»: Կամացուկ մը գլուխս կազատեմ իրմե և կվերադառնամ տուն: Կյանքիս մեջ շատ արտասովոր, շատ վիպական բաներ տեսած եմ: Բայց ոչինչ զիս հուզած է այնքան, ինչքան այդ շիկահերը, որ կուլար: Սիրտս կտոր-կտոր եղավ: Որքա՛ն դաժան է կյանքը և սերը՝ որքա՛ն դժվար: Երբեմն աղջիկն է, որ խենթ կդառնա, երբեմն՝ տղան: Եվ աշխարհիս մեջ ավելի հազվագյուտ բան չկա, քան համերաշխությունը սիրո մեջ, խորունկ, հավերժական համերաշխությունը զույգ սրտերու, որ կսիրեն զիրար **բացարձակ, մաքուր, անհեղի, մահվան պես զորավոր** զգացումով մը... Եվ այդ համերաշխ սերը (փառք Բարձրյալին) մերն է: Երբ դեռ քեզ չէի ճանչնար, կտառապեի, սուկալի կտառապեի (այո՛, սուկալի), մտածելով, թե գուցե երբեք և ոչ մեկ տեղ չկարենամ գտնել ճշմարիտ սեր մը, և թե ամբողջ կյանքս պիտի խորտակվի առանց ճանչցած ըլլալու իտեալական սիրտ մը, որ պիտի հասկնար սիրտս: Ընորհակալ եմ, հազարապատիկ շնորհակալ: Դժվար թե (գիտես, որ ես միշտ անկեղծորեն կխոսիմ քեզի) ամբողջ երկրագունդին վրա կարենամ գտնել քեզի չափ իտեալական աղջիկ մը: Անկարելի է: Ոչ ոք կրնա հասնիլ քու բարձրությանը: «Դուև Հրա՛ջքն ես, դուև Երա՛զն ես, դուև Սե՛րն ես...»¹: Խոսքս քու գեղեցկությանդ մասին չէ միայն, քանզի մարմնական գեղեցկությունը, **առանց հոգեկան գեղեցկության**,

¹ Ուրբեմ Սևակ այստեղ թարգմանաբար կմեջբերե Յաննիին ձուլված իր «Գինով սեր» բանաստեղծության առաջին տողը (ծ. թ.):

կդառնա անտանելի, տաղտկալի և նաև անիմաստ բան մը, այնպես չէ՛: Քեզ չափազանց գեղեցիկ դարձնողը դեմքիդ պայծառափայլ ու մտացի արտահայտությունն է մանավանդ և երազի երկու լիճերու նման *քաղցր* ու խորունկ աչքերդ...

Այսքան: Ա՛լ չեմ ուզեր շարունակել: Ինչպես կտեսնես... Նաև այս իրիկուն, էրֆուրտեն հետո, ես քիչ մը շատ կսիրեմ քեզ և բառեր չեմ գտներ արտահայտելու համար բոլոր նրբին զգացումներս: Այս իրիկուն: Այսինքն՝ ամեն իրիկուն, ամեն օր, ամեն ժամ: Երբ կքնանամ ու կաշխատիմ: **Նմանը չունեցող** սեր մըն է քեզի հանդեպ զգացած սերս: Ուրեմն ինչո՞ւ կխնդրես, որ անգամ մըն ալ գրեմ, թե ցկյանս պիտի սիրեմ քեզ: Մի՞թե չես գիտեր, որ քուկդ եմ հավիտյան: Պետք ունի՛ս, որ ականջդ ի վար շարունակ շշնջեմ ամենաքաղցր, ամենաքընքուշ, ամենաբարեհունչ, ամենասնկեղծ բառերը. «Կսիրեմ քեզ...»: Այո՛, կսիրեմ քեզ և պիտի սիրեմ ցկյանս, ցմահ և, թերևս, ո՛վ գիտե, նաև հետ մահու:

Շատ ուշ է արդեն, կեսգիշերն անց: Պետք է որ բաժնվինք իրարմե, սիրելի Յաննի՛, որպեսզի քիչ մը քնանամ, այնպես չէ՛:

Կշարունակե՛ս սորվիլ մեր լեզուն: Բավական հառաջադիմեր ես արդեն: Կտեսնեմ, որ կսկսիս զիս սրբագրել: Այո՛, իրավացի ես. «**Ունիմ, ունիս**» պետք չէ ըլլա, այլ «**ունի, ունիս**»:

Կուզե՛ս, որ ֆրանսական քնարերգության ուրիշ հավաքածոներ դրկեմ քեզի: Չեմ ուզեր գրադարաններն գիրք վերցնես, քանզի դժվար թե էրֆուրտի մեջ ամեն ընթերցումե ետքը **հականեխես** գրքերը: Գիտես. այնքան ընթերցողներ կան, ինչքան մանրէներ:

Ս-ն, Տ-ն, Հ-ն, Լ-ն ջերմագին բարևներ կդրկեն քեզի և մեկ հատիկ ու գմայլելի կհամարեն քեզ:

Որդիական զգացումներու հավաստիքը սիրելի ծնողքիդ: Կվերջացնեմ նամակս (որ շատ ալ կարճ չէ, կարծեմ) հազար երկու կիզիչ համբույրներով:

Չմոռնանք հուլիս 17-ը:

Բացարձակապես խելոք նշանածո՛՝ Ռուբինս:

Հունիս 21

1908

Հունիս 27, 1908

Շարաք իրիկուն

Յաննի՛ս,

Միայն այսօր է, որ բավական լավ կզգամ զիս քեզի գրելու համար, քանզի անցյալ օր, պարերեն հետո, լավ մը մսեցա և մինչև օրս հարբուխ ունեի: Շնորհակալ եմ պարահանդեսեն ներշնչված և միջանկյալ գողտրիկ բանաստեղծություններով լեցուն նամակիդ համար: Ո՛չ, Յաննի՛, հավատա ինձի, որ ես կարծածիդ չափ չար չեղա այդ երեկույթին: Միայն տխուր պատմություն մը

ունեցա, շատ տհաճ, զոր չեմ գիտեր, պե՛տք է պատմել քեզի, թե ոչ: Ահա՛. այդ խարտիշահերը երեկույթի սկիզբէն իսկ զիս կներկայացնէ իր նշանածին (որ եկած էր ծնողքին հետ) և կխնդրէ, որ ամբողջ պարահանդեսի ընթացքին հորդորեմ զայն: Առջի բերան ես բան չէի հասկնար: Հետո այդ նշանավոր աղջիկը տակավ կպատմէ ինծի, թե ինքը ինը ամիսէ ի վեր պաշտոնապես նշանված էր այդ տղայի հետ, թե բաժնված է հիմա (կռահէ որո՛ւ պատճառով) և կնախընտրէ (ի՛նչ միամտութիւն, Աստված իմ), մտերմանալ ինծի հետ...

«Ճիշդ է,— կըսէ ինծի,— ձեզի հետ չեմ ծանոթացած, բայց քանի մը տարիէ ի վեր կճանչնամ ձեզ և ունիմ բոլոր տեղեկութիւնները ձեր մասին:

— Բացի մե՛կ տեղեկութենէ,— կըսեմ ես:

— Ո՛ր:

— Այն, որ ես նշանված եմ արդեն...

— ... " " " ...

Աղջիկը մեկենիմեկ գնաց պարահանդեսն: Ես դեռ մնացի մինչև առտվան ժամը 4.30, բայց շատ էի սրտնեղած այս տխուր պատմութեան պատճառով: Ըսավ, թե իր նշանածը չափազանց թեթևամիտ է, և թե ինքը անպայման դժբաղդ պիտի ըլլար, ամուսնանալով անոր հետ: Անշուշտ իրավունք ունի, բայց այդ մասին պետք է մտածեր նշանտուքէն առաջ. մարդ նշանած չի փոխեր... հագուստ փոխելու պէս: Հիմա արդեն գիտեմ, որ այդ աղջիկը լոզանաբնակ ֆրանսացի հասատեր բժիշկ Պերժոյի դուստրն է: Չէի ուզեր պատմել քեզի այս բոլորը, քանզի կվախնայի, որ նախանձութեան կասկածներ կունենաս: Բայց վերջին նամակիդ մեջ կըսեիր, թե մենք դժբաղդ նշանածներ ենք, որ միասին չենք պարած տակավին: Հիմա հասկցար անշուշտ, որ շատ ավելի դժբաղդ նշանածներ կան... Անոնք, որ չեն սիրեր զիրար, ինչպէս այդ Տորան և Նոշը և դեռ բազում ուրիշներ, զոր, եթէ աչք ունիս, կնկատես շուրջդ... Եվ եթէ քիչ մը մտածես ապագայի մասին, կտեսնես, որ մեր բարձրութեան վրա եղող ուրիշ զույգ մը չկա դեռ: Ճիշդ է, մենք չենք պարած. պարը հաճույք է, երջանկութիւնը՝ ուրիշ բան...

Բայց անգամ մըն ալ վերադառնանք մեր թշվառական պարահանդեսին: Այդ տաղտկալի պատմութենէն ետքը քիչ մը պարեցի օրիորդ Պենսֆորտի հետ (անգլիացի ընտանիքի մը՝ լոզանաբնակ հասատերերու աղջիկը), զոր կճանչնայի շատոնց: Հետո Հէյտելպերկեն եկած գերմանացի օրիորդի մը հետ, որ իր հասցեն տվավ ինծի, որպէսզի այդ քաղաքէն անցնելու ատեն հանդիպիմ իրեն (""): Անկէ ետքը՝ թխահերի մը հետ, որ սպանացիի հովեր կառներ, բայց ոչ այլ ոք էր, քան հրեուհի... Հետո՝ քանի մը շատ երկրորդական կարևորութիւն ունեցող ուրիշներու հետ: Կային միայն 3-4 ուսանողներ և մենամարտի արգասիք սպիներով ծածկված դեմքով գերմանացիներ... (Չեմ կրնար հասկընալ երշիկի պէս դեմք կտրելու այս տարօրինակ նորաձևութիւնը. ո՛վ գիտէ,

թերևս ավելի խելացի երևալու համար...)

Կհարցնես ինձի (իսկ ինչո՞ւ այդքան տխուր բաներ կհարցնես), թե շատ համբուրվեցա՞ պարահանդեսին: Չեմ գիտեր Գերմանիո մեջ տիրող սովորույթ-յունը, բայց այստեղ լավ աչքով չի դիտվիր երեկոյթներու ատեն համբուրվիլը: Բացի ատկե, ոչ մեկ գնով պիտի ուզեի եղծել շրթներս օտար դեմքերու վրա: Այս շրթունքները, որ քեզ ճանչնալու անհուն երջանկությունն ունեցան, այլևս ոչ ոք պիտի ճանչնան, ոչ ոք: Եվ ահա շատ տեղին պատմություն մը, զոր լսած եմ և կուզեմ պատմել քեզի: Այն հին, բարի ժամանակները կային մահմետականներ, այնքա՛ն մոլեռանդ, որ Մուհամեթի մզկիթը տեսնելէն ետքը հանել կուտային իրենց աչքերը, որպեսզի ավելի գեղեցիկ բան չտեսնեն այլևս մինչ ի մահ: Շատ կոպիտ, շատ բարբարոս օրինակ մըն է այս, բայց լավ կբացատրե իմ առանձնակի զգացումս քեզի հանդեպ: Շատ կուզեի վարվիլ այնպես, ինչպես այդ քաջարի մոլեռանդները, սակայն, գիտես, ես իմ աչքերուս անչափ կարիքն ունիմ.. Շամբերիին մեջ անցընելիք արձակուրդիս, քեզ վերստին տեսնելու համար, չէ՞...

Վերստին վերստին քեզ տեսնել, օ, բարեբարի՛ երգ... Քեզմե բաժնվեցա արձակուրդին նորեն տեսնվելու լուրջ խոստումներով: Հիմա հազիվ երկու ամիս է անցած, և ահա խնդիրը գույն կփոխե. հիմա արդեն Թյուրիսի մատառներուն խոսքը մեջտեղ ելավ: Օհ, չընաղագեղ անտառներ... սակայն **անտառներուն** համար չէ, որ դուն կուզեիր Շամբերի գալ: Եվ ամենայն վստահությամբ այնտեղ շատ ավելի պիտի նիհարիս, քան էրֆուրտի մեջ: Հաստատորեն: Ըստ իս, լավագույնը կըլլա արձակուրդը անցընել տիկնանց գիշերօթիկնոցի մը մեջ, ուր կրնաս խաղաղիլ, կազդուրվիլ, գույնդ տեղը բերել և դեռ ու մանավանդ ընձեռել հազարավոր ուրիշ բաներ... չէ՛, Յաննի՛...

Իսկ ինչ կվերաբերի Մուռնդին, կուզեմ ըսել, թե էրֆուրտ գալու հաստատ խոսք չեմ կրնար տալ քեզի: Այս ձեռք շատ աշխատանքներ մեզ կսպասեն բժիշկ Ռուփի հետ, և չեմ գիտեր, թե ան կուզե՞ կարճ արձակուրդ մը շնորհել ինձի: Քիչ հավանական է, նույնիսկ անկարելի:

Կուզե՞ս պզտիկ անակնկալ մը, շատ պզտիկ... Այս լուսանկարը քաշված եմ ինքնաշարժ մակույկին մեջ սպանացի և ամերիկացի ուսանողներու հետ: Թերևս հոն տեսնես դեմքեր, որոնց հաճախ հանդիպած ես Սուրբ Ֆրանսուայի հրապարակը: Ամենամոտիկը Տ.-ն է, հետո՝ Ա.-ն, հետո՝ **Ռուփիս Չիլիսկը**: Քովինս Փերեզն է՝ իմ ընկերն ու լավագույն բարեկամը, Ուրուկուայի (Հարավային Ամերիկա) նախագահի որդին: Ինքն է, որ արձակուրդին Օսթենտ կիրավիրեր զիս: Ամենահեռուն կեցողը, անզխարկ, ածիլված պեխով, Նոշն է՝ նշանված խարտիշահերը...

Դեռ կսպասեմ լուսանկարիդ: Բայց հուսով եմ, որ լուսանկարեն առաջ քեզ պիտի տեսնեմ, քանզի քանի մը օրեն հուլիս 17-ն է: Պետք չէ մոռնալ...

Այժմ կուզե՛ս, որ վերջացնեմ նամակս: Շատ ուշ է արդեն, և ես այնքա՛ն եմ հոգնած, այնքա՛ն պիտի փափաքեի գոցել աչքերս երազիս մեջ քեզ տեսնելու համար: Գիտե՛ս ավելի անուշ բան, քան սիրահարի զմայլելի երազը: Կրնա՛ս ըսել, թե ինչ պետք է ընել միշտ քու մասիդ երազելու համար: Հապա իրականությունը: Ի՛նչ է երազը իրականության քով: Այն կենսախայտ իրականության, ուր ձեռքերով մեկգմեկու կհպինք, ուր իրար կլսենք քաղցրորեն, ուր կհամբուրվինք, կսեղմվինք իրարու, նորեն ու անվերջ կհամբուրվինք... ուր մենք մեզի ավելի զորավոր կկարծենք, քան Մահը, ավելի անմահ, քան աստվածները... Ահ, այդ իրականությունը, քանի մը օրեն պիտի տեսնե՛նք զայն արդյոք Շամբերիին մեջ... Ամեն պարագային, դուն ինձի մեծ ցավ պատճառած կըլլաս, եթե ձգես զիս, որ Տան տյու Միտիի վե ս գազաթներուն առջև միս-մինակս տոնեմ այդ անմահական հուլիս 17-ը...

Հիմա տուր ինձի ձեռքդ, որ հազար ձևերով համբուրեմ զայն՝ շատ մեղմորեն, շատ նվաղկոտորեն, տուր նաև շրթներդ, նաև աչքերդ և նաև մազերդ ու կրկին մազերդ... անուշ, երկար համբույրներ...

Խորին հարգանքը կբարևեմ սիրելի ծնողքդ:

Միշտ քու շատ հավատարիմ
Ռուբինսոյ:

Սիրելի նշանածս,

Երեքշաբթի առավոտ է, ժամը 7.30: Ահա նամակդ փոքրիկ սեղանին վրա: Շատ աղեկ: Եվ յաիա ես մեծ աշխատասեղանին առջև: Շատ գեշ: Ինձմե բացատրություններ կխնդրես լռությանս վերաբերյալ: Ես կփնտռեմ բոլոր կարելի չքմեղանքները և ոչ մեկ հատ կգտնեմ: Արդ, ի՛նչ պետք է գրել: Բայց և այնպես ասկե-անկե բաներ մը պետք է ձարեմ ինքզինքս արդարացնելու համար: Նույնիսկ շատ բաներ:

Նախ և առաջ. առո՛ղջ ես արդյոք այնքան օրերե ի վեր: Ինչո՞ւ մոռցած էիր գրել այս մասին: Եվ դեռ ուրիշ բաներ, որ սաստիկ տաղտուկ կպատճառեն ինձի: Մանավանդ այդ իենացի հռչակավոր բժիշկ Լեյտելը, որ դեռ չի գիտեր, թե ուր կգտնվի Շամբերին (ի՛նչ կարևորություն ունի), բայց կարգիլե քեզի այնտեղ երթալ: Թշվառակա՛ն: Այստեղ խնդիրը ավելի կամ պակաս բարձր դիրքին չի վերաբերիր, այլ պարզ ի պարզո քանի մը շաբթվան կարճ արձակուրդի մը, զոր երկու սիրահար հոգիներ կխոստանան իրարու և կտառապին, որ չեն հաջողիր: Եղած-չեղածը այս է: Իսկ այդ նշանավոր բժիշկը կանգիտանա այս սիրային պզտիկ մանրամասնությունները: Շատ կուզեի հավատալ իրեն, որ Շամբերին վնասակար է առողջությանդ, եթե ինքս ալ Բժշկական համալսարանի ուսանող չըլլայի: Մեր դասախոսները հարյուրավոր հիվանդ-

կախ մարդիկ կուղարկեն Վալեի այդ հանրահռչակ նահանգը: Եվ ահա թե ինչ է գրված բժշկական բառարանիս մեջ. «Շամբերի. լեռնային կայարան: Մաքուր օդ, շատ խաղաղ, շնորհիվ բարձր լեռներու, որ կըրջապատեն զայն: Բավական երկարատև արևկայությունն հովիտի ընդարձակության պատճառով: Մեղմ ու բարեխառն կլիմա, որ կպատշաճի ջղային, թույլ ապաքինյալներուն»: Եթե բժիշկ Լեյտեյը անգամ մը իր բառարանը բանալու ձանձրույթը հանձն առներ...

Այս պատմությունն է, որ հատկապես կերավ ջիղերս: Եվ դեռ ոչ այս պատմությունը, այլ ուրիշ բան. քեզ ինձի հետ չուղարկելու ծնողքիդ բացորոշ դիտավորությունը: Եթե ես էրֆուրտ գալ ուզեմ, երբեք բժիշկի մը չեմ հարցներ, թե էրֆուրտի կլիման լա՛վ է ինձի համար... Ոչ թե կլիմայի, այլ քեզի համար է, որ էրֆուրտ կուգամ: Անշուշտ կհասկնաս, թե ինչ ըսել կուզեմ...

Եվ հետո (եթե անքաղաքավարություն չէ հարցնելը) չեմ հասկնար, թե այդ ի՛նչ հիվանդության մասին կխոսիս ամեն օր: Զատիկին, ճիշդ է, քիչ մը տժգույն էիր, և միայն այսքան: Տժգունությունը հիվանդություն չէ: Չեմ գիտեր, ես խելապակա՛ս եմ, թե ոչ, բայց միշտ, անխախտորեն կհավատամ, թե այն երկու-երեք շաբաթները, զոր ինձի հետ պիտի անցնես, քեզ ավելի առողջ կդարձնեն և ավելի ուժեղ, քան երբեք: Ապացույց՝ իմ այցելությունս Զատիկին. միայն մեկ շաբաթվան մեջ անհավատալիորեն փոխվեցար:

Մտածել, որ հուլիս 17-ին քեզ ստանալու փոխարեն, բաճկոնակ մը պիտի ստանամ... Այս միտքն իսկ արդեն բավական չէ՛ կորատելու համար ջիղերս... Մեկ հարվածով խորտակել սիրո մեր փառահեղ տարեդարձի բոլոր հույսերն ու համբույրները... Ահա սուկալին...

Հիմա ես ինձի հարց կուտամ, թե ինչպե՛ս բերանդ կբռնե ըսելու, թե ես կզվարճանամ: Այսպիսի տխուր մտորումներով ինչպե՛ս կարելի է ուրախանալ: Առաջ նամակներդ կարդալով կզգայի այնպես, կարծես, երանության, հույսի ծովու մը մեջ եմ սուզված... Հիմա ամեն ինչ փոխված է: Յուրաքանչյուր բացիկի մեջ կգտնեմ նույն բաները. հուլիս 17-ը խափանված, հիվանդ: Տոտ-սուություն մինչև Մունուդը: Նորեն հիվանդ: Եվ անհամբեր, և տխուր... Արդ, ինչպե՛ս կուզես, որ ես ի վիճակի ըլլամ երջանկությամբ լեցուն երկար, շատ երկար նամակներ գրելու արիության...

Ես ուժեղ եմ (թերևս ոչ ոք ինձի չափ ուժեղ կամք ունի), նաև շատ համբերատար, միայն ինձի ցավ կպատճառե հույսի մեր բոլոր հոյաշեն դրյակներուն տապալումը աչքիս առջև...

Իսկ պարահանդեսներու առնչությամբ կհիշեմ «Հանրիեթ» օփերայի մեկ գեղեցիկ դրվագը. պարանցիկ երեկույթի մը ընթացքին սիրունատես երիտասարդ մը կմոտենա սևազգեստ աղվոր աղջկա մը, որ նշանված է իրեն չսիրող և հեռու երկիրներ մեկնած մարդու մը հետ: Երիտասարդը պարի կիրավիրե զայն: «Ես ուրիշին եմ խոսք տված»,— կըսե աղջիկը:— «Իսկ հաջորդ վալ-

սի՛ն»:— «Ես ուրիշին եմ խոսք տված բոլո՛ր պարերու համար և ցմահ, իսկ այն մարդը, որ ինձմե խոսք է առած, մեռած է ինծի համար...»

Ուրկե՛ կհիշեմ այս պատմությունը: Ինչո՛ւ կգրեմ զայն քեզի: Չեմ գիտեր բնավ: Կարդալով նամակդ, հանկարծ միտքս եկավ օփերայի այս հոյակապ դրվագը: Ես իտեալական բաներ կսիրեմ: Իմ խենթությունս է այդ: Եվ ազնիվ արարքի մը, վեմական բառի մը, հպարտ ու բարձրահոն նայվածքի մը համար չեմ գիտեր ինչպես կուզեի կյանքս նվիրաբերել: Իտեալը իմ տկարությունս է: Կսիրեմ այն ամենը, որ ինծի մտածել կուտա իտեալականության մասին: Եվ, ընդհակառակը, չեմ կրնար տեսնել ինչ որ չափազանց երկրային, չափազանց մարդեղեն է և իրական: Կըսես, որ լավ կճանչնաս զիս: Դուն զիս ըստ բավականին չես ճանչնար: Երբեմն այնքան մարդկային հարցումներ կուղղես ինծի, զոր երբեք պիտի չուզեիր ուղղել, եթե բավականաչափ ճանչնայիր զիս: Բայց ասոնք հազվադեպ բացառություններ են: Ընդհանրապես, կարդալով նամակներդ, ինքզինքս կզգամ մաքուր զգացումներու բարձր ոլորտներուն մեջ: Եվ դուն կատարելապես այն հոգին ես, որ իտեալական ներդաշնակություն մը պիտի կազմեր հոգիիս հետ... Բայց կխնդրեմ, այլևս այսօրինակ հարցումներ մի՛ ուղղեր. «Նեղացա՛ր, որ բաճկոնակը չղրկեցի քեզի...»

* * *

Բաժանման այս երեք կետերը դրի այստեղ, մոռնալով, որ նույն նյութի շուրջ քանի մը փոքրիկ մանրամասնություններ ալ կփափաքեի ավելցնել: Կուզեի խնդրել քեզմե, որ երբեք չգրեիր ինծի ոչ ոմն զեկուցողի, ոչ Կոլֆրեն անուն մեկու և իր լուսանկարի, ոչ ալ ոմն Ժ... սիրահարի մասին: Այս ամենը շատ է մարդեղեն: Եթե ես քեզի կխոսիմ այս կամ այն սեռին պատկանող մարդու վրա, պարզ այն պատճառով, որ դուն ինքդ կուզես: Այլապես պիտի ցանկանայի քեզի գրել մաքուր, վեմ, իտեալական բաներու մասին: Ջանանք միշտ ավելի իտեալական ըլլալ, այնպես չէ՛, Յաննի՛:

* * *

Հիմա ահա քեզի փոքրիկ տեղեկություն մը. այն ռուս ուսանողուհին, որ սենեկակից է ինծի և քանի մը տարիէ ի վեր նշանված է զվիցերացի բժշկական ուսանողի մը հետ, կուզե հուլիս 15-ին ամուսնանալ: Հատուկ իր պսակադրության համար մայրն ու եղբայրը եկան հեռու Ռուսաստանեն: Քեզի ալ նույն երջանկությունը կմաղթեմ:

* * *

Տիկին Իլսա Ֆրափան-Ակունյանը գերմանացի գրող մըն է, որ ամուսնացած է հայ ուսուցչապետի մը հետ: Հիմա Թիֆլիս կգտնվին: Տիկինը քանի մը գիրք

է գրած և բազմաթիվ զեկուցումներ կարդացած հայերու մասին:

* * *

Վաղը քեզի կղրկեմ ուսանողներու անվանացանկը, զոր խնդրած էիր: Դուն կրնաս ամենայն իրավամբ խնդալ բացարձակ տգիտության վրա այն խմբագիրներուն, որ կգրեն, թե Արևելքեն եկողները Ջվիցերիո մեջ ռուս կկոչվին: «Ապացույցը կազմակերպություններն են: Ամեն ազգ իր ուսանողական միությունն ունի և դրոշը, բացի ռուսներեն, որ ո՛չ միություն ունին, ո՛չ դրոշ»:

Այս առթիվ ըսեմ, որ Ջվիցերիո մեջ չեն սիրեր ռուսները: Թե՛ ոստիկանությունը, թե՛ համալսարանը և թե միություններ շատ խիստ կվարվին անոնց հետ: Բայց այս ամենը թող չխռովե քեզ: Լոզանի համալսարանն արդեն Գերմանիո կաճառական մամուլին մեջ կպատասխանե այդ գերմաներեն հողվածներուն:

* * *

Դեռ չեմ գիտեր, թե երբ պիտի մեկնիմ Շամբերի: Ինծի առաջարկեցին Տիապլերե երթալ, բայց մերժեցի: Համենայն դեպս, հուլիս ունիմ, որ Լոզանեն կմեկնիմ հուլիս 15-են առաջ: Կկարծեմ, թե Շամբերի կըլլամ արձակուրդիս:

* * *

Ահա հատուկ քեզի համար դրկված երկու բացիկներ, զոր ստացա Կոստանդնուպոլսեն: Երախտապարտ եմ քեզի այնքա՛ն գեղարվեստական բացիկներուն համար: Կուզեմ ավարտել նամակս: Կխոստանամ գրել քեզի երկու օրեն: Հուսով եմ, որ երջանիկ նամակ կըլլա...

Կհամբուրեմ քեզ ճշմարիտ սիրով և կխնդրեմ, որ բարևներս հաղորդես սիրելի ծնողքիդ:

Հուլիս 7, 1908

Քու շատ հավատարիմ
Ռուբինսոյ

Պաշտելի Յաննի,

Որքա՛ն կսիրեմ քեզ, Յաննի՛, իմ Յաննի: Եվ որքա՛ն երջանիկ եմ, որ կրնամ հաղորդել քեզի երջանկաբեր լուրը: ԾՄողբս երկար թղթակցութեն հետո, որուն չէի ուզեր քեզ տեղյակ պահել, ինծի իրավունք տվին: Անոնք կվախնային, որ թեթև զգացում մը կրնա ըլլալ իմ սերս, և կփափաքեին տեսնել, թե ես պիտի ուզեմ արդյոք համառիլ մեր միության մեջ: Քուկիններդ ալ կկարծեին, թե

մեր հարաբերությունը ոչ այնքան լուրջ հիմքեր ունի, բայց շուտով նկատեցին իրենց մոլորանքը: Տեսան, որ սովորական սեր մը չէր կրնար այնքան դժբաղդ պայմաններու մեջ ամբողջ տարի մը տևել, և որ ամենաուժեղ զգացումները ոչինչ էին մեր վեհ ու խստամբեր ու հավերժական սրտակցության բով: Ահա կըսեմ քեզի, որ արդեն ինձի համար (և քեզի համար ալ, կարծեմ) բաժանումը անկարելի է, անկարելի է վերջին աստիճան: Ճիշդ է, որ մեկ տարին այնքան ալ շատ չէ: Բայց ինձի կթվի, թե մենք կսիրենք զիրար ոչ թե մեկ տարի, այլ արդեն վաղեմի, շատ վաղեմի ժամանակներե, կյանքիս, թերևս, առաջին օրերեն ի վեր: Քու մասիդ մտածելով, ինձի կթվի, թե կմտածեմ իմ էությանս մյուս կեսի մասին: Քեզ իմ մե՛ջս կզգամ: Եվ ասիկա այնքան բնական է, որ բնավ չեմ կրնար երևակայել կյանքս առանց քեզի... Անկարող եմ ինքզինքս լավ բացատրելու, բայց կկարծեմ, թե կհասկնաս զիս, այնպես չէ՛: Միշտ, միշտ աչքիս առջև ունիմ քեզ: Եվ բարեկամներու հետ խոսելու ժամանակ անգամ շատ քիչ կպատահի, որ պահ մը դադրիմ մտածելե քու մասիդ: Ամեն վայրկյան կըսեմ ինքզինքիս. «Հիմա Յաննին այսպես կըներ: Հիմա այսպես կըսեր: Այնքան պիտի զմայլեր այս լիճին վրա: Այսօր կմխիթարեր զիս իր թևերուն մեջ: Զիս կկշտամբեր, եթե տեսներ այս ըրածս...»: Եվ կկարծեմ, թե ճշմարիտ սերը ասոր մեջ կկայանա: Ամեն ինչի առջև քեզ քովիկս կզգամ, քեզմե խորհուրդ կհարցնեմ, գրեթե կխոսիմ քեզի... (Վստահ եմ, որ չես լսեր զիս): Մեկ խոսքով, կընեմ այնպես, կարծես իրապես քեզի հետ ըլլայի: Բայց եթե այնքան քիչ անգամ կգրեմ քեզի, պատճառն այն է, որ իմ նամակներս շատ միօրինակ, շատ ձանձրալի կթվին ինձի: Քանզի, Յաննի՛, ամեն վայրկյան այնքան քաղցր, այնքան բազմազան, այնքան ներդաշնակ հույզեր ունիմ... Բայց ամեն անգամ որ գրիչը ձեռքս կառնեմ, կգրեմ քեզի հասարակ տեղիք, շատ սովորական բաներ, չափազանց հայտնի, ծթած բառեր... Չեմ գիտեր՝ ի՛նչն է պատճառը: Կան զգացումներ, զոր ի վիճակի չես բացատրելու էջեր գրելով և սակայն կրնաս արտահայտել տեղին սլաքված նայվածքով մը... Այն ատեն, անշուշտ կհասկընաս զիս, Յաննի, կատեմ նամակներս, որ այնքա՛ն հասարակ են: Հատուկ քեզի համար ինձի պետք էին բոլորովին նոր բառեր, երբեք չգործածված նախադասություններ, փայփայող խոսքեր, որ արժանի ըլլային քու հրեշտակային, անհավատալի և առասպելյալ գեղեցկությանդ... իմ իշխանուհի Յաննի՛... Բայց և այնպես պիտի գրեմ քեզի և պիտի օրհնեմ կրցածիս չափ լավ գրել, միայն միշտ ի մտի ունեցիր, որ բոլոր նամակներս ոչինչ են, ոչինչ, ոչինչ այն անհունորեն հեշտագին զգացումներուն հետ բաղդատած, զոր սիրտս ունի քեզի համար իր մեն մի թիք-թաքին մեջ...

Ո՛ր էր նամակիս սկիզբը: Այո՛, կխոսեի ծնողքիս պատասխանի մասին: Էի ուրեմն, կուզեի քեզի ըսել նաև, որ պետք է հիմա արդեն լրջորեն սորվիս մեր

լեզուն, քանզի ծնողքիս գրեթե եմ, թե դուն բավական լավ գիտես զայն: Պարզապես անոնց անակնկալ մը ընելու, հաճույք պատճառելու համար: Եվ ես ալ, ավելի ուշ, երբ քիչ մը ավելի ժամանակ ունենամ տրամադրությանս տակ, պիտի ջանամ գերմաներեն սորվիլ միայն ու միայն հաճույք պատճառելու համար քու սիրելի մայրիկիդ: Նույնիսկ, եթե կուզես, կրնանք սկսիլ այս շաբաթ: Դուն ինծի գերմաներեն դասեր կուտաս ամեն նամակիդ մեջ, ես ալ կշարունակեմ հայերենի դասընթացքս: Մեզմե ամեն մեկը միաժամանակ կըլլա ուսուցիչ և աշակերտ, միայն թե կվախնամ, որ ես չպիտի կարենամ ցուցաբերել նույն ընդունակությունը, զոր դուն դրսևորեցիր հայերենի մեջ: Մեկ խոսքով, պիտի ջանանք: Միակ խնդրանքս. շատ երկար դասեր չտալ ինծի...

Հիմա կուզե՞ս, որ քանի մը պզտիկ տեղեկություններ հաղորդեմ քեզի մեր Լոզանեն: Նախ և առաջ, Ուշիին մեջ արդեն երեք օրե ի վեր տեղի կունենա նավարկության տոնը: Ժողովրդական քվեարկություն (շատ մեծ աղմուկով և իրարանցումով) բացարձակապես արգիլելու համար օշինդրողին ամբողջ Ջվիցերիո մեջ: Ազնավուրին հայրը, մայրը, քույրն ու փոքրիկ զարմիկը քանի մը ամսվան համար Լոզան եկան ու տեղավորվեցան «Պանդոկ Ժիլպոն»-ին մեջ: Հայ բարեկամի մը նշանտուգը անգլուհիի մը հետ (ինը ամիս առաջ ծանոթացեր են Նյոշաթելի մեջ, ուրեմն մենք ավելի հին ենք): Անոնք ալ շատ դժվարություններ ունեցան, խեղճերը. անգլիական ընտանիքը չափեն ավելի եսասեր էր: Բացի անկե, տղան առաջին տարին է, որ բժշկություն կուսանի: Բայց և այնպես հաղթեց իրենց սերը և փառավորապես՝:

Ուրիշ գրելիք չունիմ: Ահ, այո՛, շուտով Տյովլեթյանը կմեկնի Կոստանդնուպոլիս: Շատ հավանական է, որ տեսնե ծնողքս: Ինչպե՞ս կնախանձիմ իրեն... Ախ, նորեն մոռցա անվանացանկը, զոր մասնավոր քեզի համար պիտի վերցնեի Համալսարանեն: Կուղարկեմ վաղը, եթե Համալսարանի քարտուղարությունը դեռ ունի: Ի դեպ, քեզ կհետաքրքրե՞ն այսպիսի լուրեր. Համալսարանին մեջ գերմանացի ուսանողներուն քանակը երթալով կավելնա: Իրավաբանական բաժինին մեջ մոտավորապես երկու հարյուր հոգի են հիմա:

Երեկ իրիկուն նվազախումբի ղեկավար մը ընտրելու համար կայացած մրցույթ-համերգին զացի: Քանզի մեր գեղեցիկ Պիրմհանը Պեռլին կմեկնի: Թեկնածուն բարձր տաղանդի տեր մեկն էր, Բատերևսկիին բարեկամն ու հովանավորյալը: Հիանալի ղեկավարեց նվազախումբը, որ կատարեց Պեթրովենի 5-րդ սեմֆոնին, զոր ես չեմ կրնար առանց սարսռալու լսել: Ջարմանալի բաներ կզգամ: Այնքան վիթխարի է այդ Պեթրովենը, որ ես բրածեծ կենդանիի, անբան անասունի մը նման կիյնամ իր մեծության առջև: Սարսափելի է ու ցավազին կարենալ այսպես զգալը: Իսկ դուն, ի՞նչ երաժշտություն կնախընտրես դուն: Համենայն դեպս, կկարծեմ, թե գերմանական երաժշտությունը անմրցելի և անզուգական պիտի մնա աշխարհի մեջ:

Ահա հիմա ա՛լ պետք է ավարտեմ նամակս: Վաղը չէ մյուս օր նորեն կգրեմ քեզի, քանզի եկա այն եզրակացության, որ դուն իրավունք ունիս կշտամբելու զիս իմ անմոռնչ ծուլությանս համար: Եվ հետո, հիմա հույս ունիմ նաև, որ մայրիկդ այնքան ալ խիստ չըլլար և կփափաքի անգամ մը քեզ տանիլ տիկնանց գիշերօթիկնոց մը Շամբերիին մեջ: Չե՛ս կարծեր: Իսկ ես այդպիսի նախազգացում մը ունիմ: Եվ ինձի կթվի, թե հույսս ի դերև չելլեր: Վերջապես: Ես միշտ շատ լավ կզգամ զիս և քեզի ալ կմաղթեմ քաջառողջություն, նաև սքանչելի սրտիդ արժանի երջանկություն... Դուն իսկապես բոլոր կիներուն մեջ աննման, մեկ հատիկ կին-գոհար մըն ես: Ուրիշ կերպ չեմ կրնար մտածել այսօրվան զմայլելի և երկար և անմոռանալի նամակդ կարդալես ետքը... Ահ, որքա՛ն պաշտելի և բարի ես դուն, Յաննի՛ս, և ինչպե՛ս կհասկնա զիս հոգիդ...

Շատ քաղցրիկ համբույրներ քեզի և ջերմ բարևներ սիրելի ծնողքիդ:

Նշանածո՝ Ռուբինս:

Հուլիս 9, 1908

Հուլիս 20, 1908

Սիրելի և զմայլելի նշանածս,

Կիրակի իրիկուն է, և ես կգտնվիմ Շամբերի... Որքա՛ն հիշատակներ ու հիշողություններ: Բայց ծայրեն սկսինք. Լոզանեն Նիս կմեկնիմ երեքշաբթի առտուն: Ժընև-Լիոն ճամբուն վրա շոգեկառքը կփճանա, և մենք երկար կսպասենք, որ ուրիշ շոգեկառք մը գա ու մեզի տանի Լիոն: Լիոնի մեջ՝ Հուլիս 14-ի մեծ տոնը: Մարսեյի մեջ՝ ելեքտրականության ցուցահանդես. մեծ ռուզեռ և ուրախություն: Կհասնիմ Նիս և ուղիղ կերթամ այն խեղճ հայուն քով, որ հարուստ էր առաջ և երկար առտեն է վեր կապրի Նիս, բայց վերջերս կորսընցուցեր է իր ունեցվածքը (կարծեմ՝ թղթախաղի մեջ) և խելքին է եկեր... այսինքն՝ խենթոցեր է: Տանտիրուհին անմիջապես գրեր է անոր ծնողքին, Կոստանդնուպոլիս, և անոնք ինձմե խնդրեցին, որ անհապաղ երթամ Նիս և պարզեմ խնդրի էությունը: Ուրեմն, մեկ օր մնալե հետո կմեկնիմ Նիսեն: Հուլիս 17-ը անհուն տպավորություններով լեցուն օր մըն էր: Եղա ժենովա և Միլանո (Մայլենտ), տեսա Լյուկանո, Քոմո, Մաճիորե լիճերը (վերջինը՝ փառահեղ), Կոթարի փապուղին (շատ հետաքրքրական), Զյուկի չորս նահանգներուն միջև գտնվող համանուն լիճը և գիշերը հասա Լյուսեռն: Ինչպես կտեսնես, հուլիս 17-ին լավ մը քալեցի... Լոզանի մեջ մոռցա ամբողջ հոգնությունս ուղևորությանս ընթացքին քու կատարած առաքումներուդ հսկա

դեզին առջև: Ուրեմն, քեզմե ստացեր եմ նամակ մը, բացիկ մը, կենդանիներու վերաբերյալ անտվոր ու զվարճալի գիրք մը և բաճկոնակը: Չեմ գիտեր, ղրկածներուդ մեջ կորսված բան կա՞, թե ոչ: Քանդակագործության դպրոցի այս լուսանկարն ալ հույժ հետաքրքրական է: Շատ կսիրեմ զայն. շրջանակել տվի սենյակիս համար: Շնորհակալ եմ նաև, որ ղրկեր էիր եվայի նկարը:

Միայն մեկ օր մնացի Լոզան և քանի որ սենյակ փոխելու գործով շատ էի զբաղած, ազատ վայրկյան մը չգտա քեզի գեթ երկտող մը գրելու համար: Ճիշդ է նաև, որ վերջերս կանոնավոր չեմ գրեր քեզի, բայց այսօրվընե կխոստանամ հաճախակի և նաև զվարթ ոճով գրել, քանզի, գիտես, Յաննի՛, դուն զվարթանալու կարիք ունիս. թու տարիքիդ մարդ պետք է ուրախ ըլլա, և իրոք, թու հասակիդ համար դուն չափազանց տխուր ես, որով երկյուղ կառթես ինծի ապագայիդ հաշվին, Յաննի՛ս, որովհետև մելամաղձոտությունը կջլատե քեզ, հիվանդկախ և անկորով կդարձնե: Կիսնդրեմ, քիչ մը ավելի ուրախ եղիր, մի՛ գրեր ինծի, թե մեր կացության մեջ, դեռ մեր քաշելիք դժբաղդություններուն դիմաց անկարելի է ուրախ ըլլալ: Այդպես մի՛ ըսեր, կիսնդրեմ: Կվստահեցնեմ քեզ. մարդոցմե ամենադժբաղդները չենք: Ընդհակառակը: Մենք տերն ենք երջանկության մը, զոր ուրիշ նշանածներ չունին, և սերն է այդ երջանկությունը: Այո՛, մենք սերն ունինք, և ատիկա բավական է մեզի: (Չեմ գիտեր, մայրիկդ կկարդա՞ արդյոք նամակներս: Համենայն դեպս, եթե կկարդա, լավ մը կիսնդա մեր արտաքո կարգի սիրահարական խոսքերուն վրա): Ուրեմն աշխատե, Յաննի՛ս, ըլլալ առույգ, ուրախ ու զվարթ, միշտ մտածե երջանիկ բաներու մասին: Եվ եթե ուրախ բան չգտնես, խորի՛ն թու սիրելի Մարգրիտիդ պարտապանաց քիթի մասին... քեզ շատ կուրախացնե ատիկա...

Ուրեմն, այս առավոտ (կիրակի) Լոզանեն մենեցա ժամը 9.30-ին և Շամբերի հասա 12.30-ին: Սոսկալի անձրև մը: Ես ինծի կհարցնեի, թե արդյո՞ք Շամբերիի երկինքը կուլա, շոգեկառքեն, առանց քեզի, միևնաճակ ելլելու տեսնելով... Բայց ձգեմք այս տխուր մտքերը: Չեմ ուզեր քեզ անգամ մըն ալ լացնել: Միայն գիտցիր, որ շատ երջանիկ պիտի ըլլամ, եթե ինծի գրես, թե մռայլ մտքերով չես տարված հիմա և որ կուզես այնքան ուրախ ըլլալ, ինչքան եթե Շամբերի հետս ըլլայիր: Թույլ տուր, որ ըսեմ նաև, թե շատ թախծոտ կերպարանք մը առած է մեր խեղճ Պել-Վյու գիշերօթիկնոցը: Մարդ չկա հոն: Տիրուհին բուրբուրվի նոր ու շատ հարմարավետ տուն մը փոխադրված է հիմա («Շալե էկլանթին»), մեծ Թեննիսին մոտ: Ուրեմն ես այստեղ եմ: Առաջին իսկ առիթով Տիրուհին հարցուց ինծի թե ...«Ժորան գիշերօթիկնոց»-ը կուզե՞ր գալ այս տարի, կարծես թե ես Ռուլի տեղեկատու գրասենյակը ըլլայի: Եվ հետո (առանց իմանալու, որ ես նշանված եմ քեզի հետ) հանկարծ թու մասիդ խոսեցավ. «Չե՞ք ճանչնար երիտասարդ աղջիկ մը, թխադեմ-շիկաեի, բարձրահասակ ու վայելչագեղ, Յաննի էր անունը»: Ըսավ, թե մայրիկդ անցյալ

տարի Շամբերի էր եկած, որովհետև ժերանները գրեր էին իրեն, որ անմիջապես գա քեզ տանելու: Իսկ ինչո՞ւ էին գրած: Ես միշտ կկարծեի, թե մայրիկդ եկավ, որովհետև պարզապես դուն ինքդ կուզեիր հեռանալ այդ գիշերօթիկանոցն, այնպես չէ՛:

Ուրեմն կսպասեմ այն նամակին, զոր մայրիկդ կուզե դրկել ինձի: Իմ հասցես. Ռ.Չիլինկ, «Էկլանթին գիշերօթիկանոց», Շամբերի ան Վալուա, Զվիցերիա:

Շնորհակալ եմ Նիս դրկած բացիկիդ համար, զոր հոս՝ Շամբերի ստացա, որովհետև փոխեր էի Լոզանի հասցես: Կկարծեմ, թե ոչ մեկ առաքում կորսըված է:

Քեզի երկու բացիկ կուղարկեմ Շամբերիեն: Քանի մը հատ Նիսեն և մեկ հատ ալ Զյուլկեն դրկած էի, առի՞ր:

Հուլիս 17-ի առթիվ կուզեի արևելյան գործվածք մը դրկել քեզի, զոր քանի մը շաբաթ է վեր, մեջտեղը լուսանկար մը դրած, կախեր էի սենյակիս պատեն, բայց նամակատան մեջ չընդունեցին փաթեթս, ըսելով, թե ծանր է, անճարակ և այլն, և այլն: Այն ատեն ժամանակ չունեի, կպատրաստվեի Նիս մեկնիլ, իսկ այստեղ ցարդ չեմ ստացած պայուսակներս: Քանի մը օրեն, զանոնք ստանալուս պես, ճամբու կղնեմ բանվածքը, որ, նախօրոք ըսեմ, երևելի նվեր մը չէ, այլ սովորական բան մը: Հիմակուհիմա որպես միակ նվեր կրնամ քեզի դրկել քաղցր, քնքուշ, վայրենաբարո, մեկ խոսքով, սիրահարական հազար տեսակ համբույրներու հսկա փաթեթ մը միայն... Վստահ եմ, որ այս անգամ փաթեթս այնքան ալ անճարակ չէ, ի՞նչ կըսես...

Պանդոկին մեջ անցյալ տարվան քանի մը ծանոթներու հանդիպեցա. լիոնցի վաթսուևամյա երկու պառված աղջիկներուն, այրի և խուլ անգլուհիին, որ... երաժշտություն կսիրե, նյոշաթելցի ընտանիքին, տիկին Պերրայի երախային, որ մեծցած է ու գեղեցկացած, և դեռ ուրիշներու:

Տեղատարափ անձրև կուգա, ջրհեղեղ է կարծես: Ո՛չ Տան տյու Միտին կերևա, ո՛չ Տան Պլանշը, ոչինչ: Եղանակը գեղեցիկ է իր տխրությամբ: Բայց և այնպես այցի գացի **Խաչելություն**, որպեսզի այստեղ փնտռեմ մեր առաջին հանդիպման հազար ու մեկ շատ անուշ և շատ յուրահատուկ հիշատակները: Հետո եղա Պել-Վյուին առջև ու, թրջված հավ դարձած՝ մտա մեր «Էկլանթին գիշերօթիկանոց»-են ներս:

Զիս շատ կզվարձացնե այն, որ քուկիներդ տեղեկություններ կհավաքեն իմ անձիս և ընտանիքիս անդամներուն մասին: Փոխանակ բոլոր հավատարմատարները գործի լծելու, այդ տեղեկությունները **ինձմե իսկ** հարցընելն ավելի դյուրին է և հաճելի: Ես ավելի մանրամասն ու ավելի ճշգրիտ կհաղորդեի զանոնք ձեզի: Պետք է ըսեմ, որ Կոստանդնուպոլիս տեղեկատու գրասենյակներ չկան. հոն բնակիչներու մասին գաղափար չունին, ուստի կինարեն:

Այնքան դյուրին է հնարելը: Կգերադասեի, որ ինձմե հարցնեին այն բոլոր տեղեկությունները, զոր կուզեն ձեռք բերել գրասենյակներեն: Կկարծեմ, թե ես բավական ազնիվ մարդ եմ խոսքերուս վստահության արժանի ըլլալու համար:

Եղիր զվարթ և երջանիկ: Շնորհակալ եմ շատ հավատարիմ սիրուդ համար:
Եշանածո՛ր՝ Ռուբինա:

Պաշտելի Յաննիս,

Հաստատորեն, Յաննիի՛, ես շատ գեշ նշանած մըն եմ: Սուկալի է: Քեզի կխոստանամ հաճախակի գրել, իսկ կգրեմ հազվադեպ: Կարելի՛ է գտնել ինձմե ավելի ծուլ մեկը. կկասկածիմ: Եվ ամոթես կուզեի գետինը մտնել, երբ այս իրիկուն ալ ստացա գեղեցիկ ճարմանդները: Ուրեմն զիս այդքան կսիրես: Ամեն ռոպե ընելիք անակնկալ մը ունիս ինձի: Կուզես, որ քեզ չմոռնամ ոչ մեկ վայրկյան: Իսկ ես նամակ գրելու մեջ այնքան ծուլ եմ: Բայց լսե. չգրելուս մեղքը վերագրելի է ոչ միայն ինձի, այլ նաև եղանակին, որ այնքան տրտում է, այնքան ձանձրալի ու վհատիչ: Շամբերի գալես ի վեր իրոք որ ահռելի է եղանակը: Ամպերու մեջ կապրինք: Դեռ չեմ գիտեր՝ Շամբերիին արևը կարմիր է, թե կանաչ. տակավին չեմ տեսած զայն: Կարելի չէ դուրս գալ. ցեխաթաթախ են փողոցները: Բանտարկված ենք սրահին մեջ. կխոսինք, կշաղկրատենք, կձանձրանանք: Եվ այս պայմաններուն մեջ, անշուշտ լավ կհասկնաս, իսկապես սիրահարական ոչինչ կարելի է գրել: Ձանձրացող մարդը կրնա միայն մեկ բան ընել. հորանջել: Սակայն ես ամենաքաջն եմ պանդոկի բնակիչներեն: Օրական երկու անգամ դուրս կելլեմ այն հույսով, որ նամակատունը քեզմե բան մը զիս կսպասե: Եվ այս ձևով է, որ ստացա Նիս հասցեագրված հուլիս 17, 18, 19 թվակիր բացիկներդ: Որքան՝ գոհ կմնամ, երբ որևէ բան կուզա էրֆուրտեն, այն հիասքանչ քաղաքեն, զոր ճանչցա միայն Սիրո շնորհիվ և լոկ Սիրո համար... Ուստի ամեն անգամ որ տեղ մը կլսեմ «էրֆուրտ» բառը, ան աշխարհագրական անուն չի թվիր ինձի, այլ, ավելի շուտ, մեկն այն հին ու խորհրդանշական անուններեն, որ երազել կուտան հեշտավետ ու խենթ, չքնաղ ու հեռավոր բաներու մասին... էրֆուրտ... որքան սիրային երանություն կա երկու վանկերուդ մեջ:

Բայց Շամբերիի մասին կխոսեինք, այնպես չէ՛: Ամեն նամակիս մեջ քեզի պիտի գրեմ այնքան զվարճալի մանրամասնություններ, որ իրոք դուն քեզ Շամբերիին մեջ պիտի կարծես: Բայց այսօր ըսելիք ոչինչ ունիմ: Դեռ շատ բան չեմ տեսած: Միայն այն, որ բավական փոխված է մեր գյուղը: Կա կայարան-շալե մը, իսկ քովիկը՝ կայարանի ըմպելարանը, որ ավելի մեծ է, քան կայարանն ինքը: Շուրջը, ամենուրեք՝ գեղատեսիլ շալեներ: Գյուղին մեջ՝ «Մեծ Պանդոկ» մը «Տան տյու Միտի»-ի կողքին, շատ ավելի մեծ, քան վերջինս: Սափրիչանոց մը՝ գերշքեղ: Մեծ դեղարան մը: Պանդոկի կառքեր կսպասեն

կայարանին առջև: Մեկ քանի հրեական գիշերօթիկնոցներ: «Էկլանթին» գիշերօթիկնոցը՝ շատ սիրուն, «Փըթի Փարատի»-ի ճամբուն վրա: Ամերիկացիներ, անգլիացիներ, անձրև ու ամպեր: Ահա այն ամենը, զոր կրնաս գտնել Շամբերիին մեջ, եթե վաղը հանկարծ իջնես Մոնթեյ-Շամբերի շոգեկառքեն: Ի դեպ, այս շոգեկառքը աղվոր մը կաղավաղե վայրի բնության գեղեցկությունը: Ես կնխընտրեի հին թղթատար կառքը, դանդաղ ու նկարեն, իր բոժոժներուն հավերժական երգով՝ գլի՛նկ, գլի՛նկ: Իսկ հիմա՝ փա՛թ, փա՛թ: Հիմա ձանձրալի աղմուկն է երկաթին, որ կշաչե, անիվին, որ կդառնա, էլեքտրականության, որ կմրմռա. փա՛թ, փա՛թ, փը՛սսթ:

Ահա կտեսնեմ, որ դուն կսկսես ձանձրանալ այս միապաղաղ գլինկ-գլինկեն ու փաթ-փաթեն: Նույնիսկ կուզես զիս սաստել: Անհամբեր կդառնաս: Պզտի՛կ չարաճճի: Այո՛, ասկե իսկ կտեսնեմ, որ կփափաքես նամակիս մեջ լսել սիրո բառերու, շրթներու հծծյունի, սրտերու բաբախման անուշ ու լուռ երգը: Ահ, ինչպե՛ս կհասկնամ քեզ...

Բայց, քաղցրիկ Յաննի՛, զմայլելի և անմման Յաննի՛, ես զիս այնքան տաղտկալի և միօրինակ կզգամ ամեն անգամ որ կգրեմ սիրո մասին: Երեկ կկարդայի Էդմոն Ռոսթանի «Ափրանո տը Պերժըրաք»-ը (խորհուրդ կուտամ քեզի կարդալ զայն, եթե գտնես Էրֆուրտի մեջ): Այնտեղ կային այնքան՝ նուրբ սրամտություններ, սիրո այնպիսի՛ հմայիչ խոստովանություններ, այնքան՝ հոգեզմայլ խոսքեր, որ յուրովի կըսեի, թե արդյո՞ք անմիտ չէ քեզ ձանձրացնել այդքան հասարակ, հին ու հազար անգամ հեղեղված սիրային բառերով: Սիրելի՛ս, ես այն մարդոցմ եմ, որոնք ամեն բանե ավելի կսիրեն Արվեստը, և պիտի ուզեի ամբողջ կյանքս զոհաբերել Իտեալի մեկ վայրկյանի համար: Չեմ սիրեր, երբ սեր կընեն տխմարորեն, (ինչպես անգլիացիները), քմահաճորեն (ինչպես ամերիկացիները), թեթևորեն (ինչպես ֆրանսացիները), վաճառականորեն (ինչպես գերմանացիները): Կուզեմ, որ զիրար սիրեն քիչ մը սիրահարական ձևով... որ գիտնան իրենց սիրտն արտահայտել ամենաանլուր բառերով, ամենաթարմ խոսքերով... որ սեր ընեն վեի ու աստվածային պարտականության մը պես... և որ քիչի մը սրսփան, կարդալով հետևյալ տողերը.

«Ավա՛ր... Ինչո՛ւ չունիմ ես այն հզոր ու մոգական խոսքը, անոր մեջ դնելու համար փոքրիկ մասնիկ մը այս լայն, լայն սրտեն, որ չի կրնար ինքզինք զսպել այս կուրծքին տակ և կըրձա հասկցվիլ քեզմե...»

«Ափրանո»-ին մեջ կա հատված մը, ուր աղջիկը կերթա իր սիրահարին քով, որպեսզի անոր թևերուն մեջ արտասպե ու ներողություն խնդրե ոճիրի մը համար: Ի՛նչ ոճիր: Որովհետև իր սիրեցյալը սիրած է անոր գեղեցկության համար: Հիմա կտեսնես, որ զայն կսիրե ոչ թե անոր դեմքին, այլ հոգիին գեղեցկության համար... Օ՛, գերահրաշ ու հրեշտակային ու աստվածային ու վեսմական սիրող կին...

Եվ ի՞նչ ոճիր քեզ սիրել միայն գեղեցկությանդ համար, իմ գեղեցիկ Յաննիս՛ս: Ի՞նչ ոճիր: Ի՞նչ է մարմնական գեղեցկությունը քու աստվածային հոգիիդ վսեմագույն մաքրության և սիրահարի աղվոր սրտիդ զգլխիչ ու մե-լամաղձիկ ու ցնորաբեր խորության թով... Ի՞նչ ոճիր:

Այս պահուն այնքա՛ն կուզեի անգամ մը քեզ տեսնել, հեռուն, գեթ երկ-վայրկյան մը, ի՞նչ փույթ: Ճիշդ է, որ ես ավելի շուտ կսիրեմ հոգիիդ գեղեց-կությունը, և որ ոճիր է քեզ սիրել միայն մարմնական գեղեցկությանդ համար, բայց, ոչինչ, այնքա՛ն քաղցր ոճիր մըն է իմ այժմյան բաղձանքս: Եվ ոչ մեկ գնով չեմ կրնար հրաժարիլ այնքա՛ն անուշ ու խելահեղիչ աչքերեդ, այնքա՛ն թավշային ու նուրբ շրթներեդ, այնքան հրաշալիորեն մեկամաղձոտ դեմքեդ, հասակեդ, թևերեդ, քու ամբողջեդ, ամբողջեդ, որ զիս դարձյալ արբշռանքեն կլացնե՛ս...

Ահ, ի՞նչ ոճիր...

Նշանածո՛ր՝ Ռուբինս:

Հուլիս 24, 1908

Շամբերի

Խեղճ բարեկամուհի՛ս: Այդ ինչպե՛ս եղավ, որ ինկար: Տավ զգացի՛ր: Եվ միսմինա՛կ էիր, առանց սիրելի նշանածո՛րդ: Եվ լացի՛ր, իմ խեղճ, խեղճ Յան-նի՛ս: Եվ այդ ոչխարներն ու տնօրենուհի՛ն հոգ տարին քեզի: Ահ, որքա՛ն կնախանձիմ իրենց, որքա՛ն կուզեի ըլլալ կողքիդ, արգիլել հպելու քեզի, որքա՛ն կսիրեմ բժշկել քեզ համբույրներովս, զգվանքներովս, նայվածքներովս և խնամել, գրկելով...

Ես այլևս արշավ չեմ կատարեր, որովհետև ձյուն կա լեռներուն վրա, և վտանգավոր է վերելքը: Կրնաս բնավ չանհանգստանալ, քանզի միշտ քու մասիդ կմտածեմ և խույս կուտամ վտանգներե: Բացի անկե, չեմ ուզեր երկար մնալ հոս՝ Շամբերի, որովհետև սաստիկ ցուրտ է արդեն: Մտադիր եմ գիշերօթիկնոցեն դուրս գալու սեպտեմբեր 17-ին և պզտիկ ուղևորութեն մը ետք վերադառնալ Լոզան: Ուրեմն պետք է դեռ օգուտ քաղես այս վերջին տասնը-հինգ օրերեն ինձի նամակ ուղարկելու համար:

Նամակներդ մեծ հաճույք կպատճառեն ինձի. դուն իրոք արվեստագետ ես, իմ պզտիկ բանաստե՛ղծս: Քու սիրտդ մեծ սիրտ մըն է, բերնե բերան լեցուն երազներով, բանաստեղծությամբ, արվեստով, տարփանքով: Դուն չափազանց շատ հոգի ունիս, աղվո՛ր ծաղիկս...

Կուզես գիտնալ, թե դուն պիտի վառե՛ս թևերդ, ինչպես հանկուցիչ բոցին մեջ նետվող ցայգաթիթեռը: Քու բոցդ քու հոգիդ պիտի ըլլա, մատողաշ նշա-նա՛ծս: Դուն անչափ զգայուն, անչափ արվեստագետ ու սիրատենչ հոգի

ունիս... Ջգո՛ւյշ, խեղճ ցայգաթիթե՛ն, սիրո մը համար դուն կրնաս արտասվել, կրնաս մեռնիլ...

Սաստիկ ցուրտ է Շամբերիին մեջ. երեկ նորեն ձյունեց Տան տյու Միտիի և Տան Պլանշի վրա: Ի դեպ, անցյալ շաբաթ երկու օրիորդներ կուզեին ինծի հետ, միս-մինակ, Տան տյու Միտի բարձրանալ և գիշերել Պոնավո (կերևակայես...): Բայց ես մերժեցի, պատրվակելով, թե ժամանակ չունիմ: Գո՛հ ես հիմա, փոքրիկ նախանձկո՛տ: Ընդհանրապես ես այնքան ալ բարի պտուղ մը չեմ (կխոստովանիմ), բայց մեր բաժանումեն հետո սրտիս մեջ կա բան մը, որ չի ձգեր հիմարություններ ընել, և այդ «բանը» քու հիշատակդ է, նամակներդ են, սերը, լուսանկարդ, զոր միշտ գրպանս կպահեմ, որպեսզի տխուր պահերուս համբուրեմ զայն...

Ահա նորեն սեղանիս առջևն եմ: Առողվան ժամը վեցն է, բոլորը կքնանան գիշերօթիկնոցին մեջ, նույնիսկ... դեռատի աղախինը: Ես շատ շուտ կարթըննամ, պտույտ մը կընեմ դեպի Խաչեչուրությունը, կնախաճաշեմ և կսկսիմ աշխատիլ: Օրական կաշխատիմ յոթը ժամ: Հերիք է, չէ՞, սիրելի պզտիկ նշանա՛ծս: Արդեն վերջացուցի սաղմնաբանությունը (և համառոտ շարադրանքով ամբողջ տետրակ մը լեցուցի), այսօր կուզեմ սկսիլ բնախոսությունը, զոր, կարծեմ, կավարտեմ մինչև սեպտեմբեր տասնհինգը, պետք եղածին պես աշխատելով: Քանզի հարկ է, որ աշխատիմ, այնպես չէ՞, աղվոր բարեկամուհի՛ս, այլապես ո՛չ կրնամ երեք տարվա ընթացքին բժիշկ դառնալ, ո՛չ ալ քեզի հետ, օգոստոսի սկիզբը, գլուխ բերել երկար ճամբորդությունս... դեպի Թյուրինժի անտառները, ուր ավելի լավ պիտի հանգստանամ, քան Շամբերիի մեջ: Շատ կցավիմ, որ չպիտի կրնամ հոն գալ, քանի որ Շամբերի փոխադրվիլը արդեն ահագին հոգնության դուռ բացավ, իսկ ձեր Թյուրինժը այնքա՛ն է հեռու: Այստեղ պետք է որ սերտեմ, մինչդեռ այնտեղ՝ բոլորովին ուրիշ բան... Դուք իրավունք ունեիք հոն երթալու: Հոս չգալուդ համար չեմ նեղացած. ամեն ոք իր ծրագիրներն ունի: Եվ հետո, եթե այս անգամ չեղավ, ուրիշ անգամ կհաջողի:

Բայց (շա՛տ եմ չար արդյոք) լավ կըլլար, եթե առնվազն լուսանկարդ ղըրկեիր, զոր երկու ամիս առաջ ես խոստացած ինծի:

Ներփակ պիտի գտնես թերթի կտրոն մը, ուր հայու մը ամուսնության պատմությունն է ֆյուրսթենպերկցի իշխանուհիի մը հետ:

Քեզի նկարագրեցի օրերս, միայն մոռցա գրելու գիշերային համերգներու մասին, որոնց ծանոթ ես արդեն: Էհ ուրեմն, տուն կվերադառնամ ժամը 9.30-ին, կանոնավոր կերպով:

Հիմա ամեն ինչ գիտես: Անկասկած դուն ինծի պատմելու ես կյանքդ, անգամ մը որ անտառներուն մեջ ըլլաս: Սակայն հիմակվընե կըսեմ քեզի. պետք է ըստ հնարավորին ուրախ կյանք վարես և կարելիդ ընես լավ մը կազդուրվելու համար:

Կգրեմ քեզ ճշմարիտ սիրով և նամակիս հետ կծրարեմ ջերմագին բարևներս սիրելի հայրիկիդ ու մայրիկիդ:

*Քու հավիտենական բարեկամդ և նշանածո՝
Ռուբինս Չիլինկ*

Հուլիս 27, 1908
Երկուշաբթի

Օգոստոս 11, 1908

Պաշտելի Յաննի, նշանածս,

Գո՛հ ես Կրոս-Թապարկեն: Լավ կզվարճանա՛ս: Շատ չե՛ս բարկացած ծուլ լռությանս վրա: Ամեն պարագային ես շատ երջանիկ եմ այս օրերը, որովհետև ծնողքս **անչափ լավ** են հիմա հետս: Ընորհակալ եմ քեզմե ամեն օր գեղեցիկ բացիկ մը դրկելու **անհուն բարությանդ** համար: Տեր և տիկին Ազնավուրները, (որոնք սեղանիս շուրջն են հիմա), չեն կրնար հավատալ, որ դուն **ամեն, ամեն** օր բացիկ մը դրկելու չափ կսիրես զիս: Շատ հաճելի է, Յաննի՛, կեցցե՛ս:

Ահա քեզի զվարճալի պատմություն մը, զոր մոռցա պատմելու նախորդ նամակիս մեջ: Քանի մը գերմանացի ուսանողներ (ապագա իրավաբաններ Լոզանի համալսարանեն) քիչ մը շատ կկոնծեն (ահ, գերմանական ընտիր գարեջո՛ւր) և կուզեն ճաշարանի սպասյակին քիթ-բերանը մեկ ընել: Ոստիկանները վրա կհասնին, բանտ կառաջնորդեն զանոնք ու կպահեն ամբողջ գիշեր: Հաջորդ օրը հետմիջօրեին Սուրբ Ֆրանսուայի հրապարակը գտնվող բոլոր ուսանողները տեսան, թե ինչպես այդ թշվառականները իրենց **Գերմանիա գլխարկներով**, շղթայակապ, խուզարկու ոստիկանության մարդոց ուղեկցությամբ կերթային դեպի զվիցերական Ռճրադատ առյանի բանտը... Ահա թե ինչպիսի՛ կտրիճներ են անոնք... ճաշարանի խեղճուկրակ սպասյակի մը քիթ-բերանը մեկ ընելու մեջ:

Ես քեզի շատ երախտապարտ կըլլամ նաև, եթե դուն Թապարկի փողոցներուն մեջ ամեն անգամ հանդիպելուդ ամենածաղրալից դեմքով դիմավորես Լոզանի համալսարանեն արտաքսված մեծն դասախոս Քուիլենպեքը: Ան աշխարհի ամենավարնոց մարդն է:

Երեկ քեզի դրկեցի **օտարերկրացիներու թերթը**, անցյալ օր՝ երկար նամակ մը, բայց **Կրոս-Թապարկ** չգրեցի, այլ միայն՝ **Թապարկ**: Հուսով եմ, որ չեն կորսվիր:

Ջղայնացած ես, որ քանի մը օր նամակ չեմ գրած քեզի: Պատճառը հասցեիդ փոփոխությունն էր: Նոր հասցեիդ կսպասեի, որպեսզի նամակներս չկորսվեին էրֆուրտի մեջ: Բայց ահա կտեսնեմ, որ արդեն իսկ կմոլեզնիս, կվշտանաս, կուզես գլուխս ջախջախել, եթե անմիջապես սիրո խոստովանություն մը չընես... Ահ, Յաննի՛, ես սոսկալի նշանած մըն եմ, չար մարդ, սատանայի ծնունդ մը թերևս, այնպես չէ՞... Ըսե, որ զայրույթեդ չես ուզեր հռչակել զիս: Գիտեմ, որ հանցավոր եմ, բայց իմ մեծագույն հանցանքս հիմա, այս վայրկյանին Թապարկի մեջ չըլլալս է: Եթե հոն ըլլայի, ամեն ինչ տարբեր ընթացք կստանար. դուն կարիք չէիր ունենար նամակ կամ բացիկ դրկելու, իսկ ես կազատեի սիրո խոստովանություն գրելե... Բայց Թապարկ չգալը, գիտես, իմ մեղքս չէր, ուստի կներես ինձի, այնպես չէ՞:

Եթե ըսեի, թե գրելու ժամանակ չունեի, մեծ սուտ մը խոսած կըլլայի: Սակայն գիտես ինչ, Յաննի՛, երկար լռությանս բուն պատճառը ուրիշ բան չէ, եթե ոչ մեծ սերս: Այո՛, Յաննի՛, որովհետև քեզ չափազանց կսիրեմ: Եվ հետո, որովհետև ես չափազանց զգայուն եմ: Ամեն անգամ որ նամակ կգրեմ քեզի, զայն կսկսիմ գերագույն ուրախության զգացումով և կավարտեմ մեծագույն տխրությամբ: ԻՆչո՞ւ: Որովհետև կզգամ, որ դուն երիտասարդ տարիքիդ զվարճանալու կարիքը ունիս, ուստի կջանամ ուրախ և զվարճալի պատմություններ ընել քեզի, հետո կամաց-կամաց կմտածեմ, կկշռադատեմ, թե ավելի հնարամիտ կըլլար, եթե այդ հիմար նամակին տեղ ինքս ելլեի և ճամբա իյնայի դեպի քեզ: Այն ատեն կերևակայեմ մուտքս սենյակեդ ներս, տեսության առաջին խնթությունդ, երջանկության ճիչեր, արցունքներ, խելագար ու տաք համբույրներ և ամբողջ մնացյալը: Եվ հանկարծ կվերադառնամ ինքզինքիս. մեություն, ուսանողի սենյակ, դիմանկարներ, հիշատակներ, թախծություն... Այն ժամանակ, կերևակայես անշուշտ. գրիչս կսկսի կաղալ, ջլատիլ, քեզի ըսելու բառ չեմ գտներ և կշտապեմ ավարտել նամակս... Ջայն նամակատուփ նետելուս պես կդառնամ ամենատխտոր մարդը (ինչո՞ւ), չար, անտրամադիր, հուսահատ: Ցանկություն կունենամ ինձի ժպտող առաջին աղքկան ոսկորները քարդուփշուր ընելու... Ահա ամեն անգամ ինչպես կսկսիմ ու կվերջացնեմ նամակներս: Ասիկա իմ ջղային վիճակիս հոգեբանությունն է, շարժիչ ուժը երբ քեզի նամակ գրելու համար սեղանին առջև կնստիմ: ԻՆչո՞ւ այս բոլորը: Մի՞թե այն պատճառով, որ կնախանձիմ 25 սանթիմով դեպի քեզ ուղևորվող անպիտան նամակը տեսնելով... Մի՞թե որովհետև սիրահար դեմքիդ գեթ անգամ մը նայելու անհուն կարոտն ունիմ... Օհ, այո՛, իմ հրեշտակային, իմ խոնավական, իմ արվեստագետ Յաննի՛ս...

Իսկ դո՞ւն, ինձի պես դո՞ւն ալ ունիս նույն զգացումները, երբ նամակ կամ բացիկ կգրես ինձի: Ճիշդ է, չէ՞, որ մարդ ծայր աստիճան դժբաղդ է, երբ գերզգայուն սիրտ ունի: Այո՛, դժբաղդ, դժբաղդ: Բանզի մենք կրնանք եր-

ջանկության անհունորեն նուրբ թրթիռներ զգալ, որ աշխարհի մյուս սիրահարները ընդունակ չեն ըմբռնելու: Մենք ուրիշներու պես չենք, մենք ուրիշ ենք: Եվ ի՞նչ լավ է այսպես, ի՞նչ լավ, այնպես չէ՞, սիրուն մանկի՛կա: Որովհետև մենք չափազանց նման ենք իրար: Բոլոր նրբագույն զգացումները, բարձրագույն նպատակները, ամենաինքնատիպ գաղափարները նույնն են թեզի և ինծի համար: Անհավատալի է այս նմանությունը: Եվ ամենատարօրինակն այն է, որ շատ հաճախ նամակներուդ մեջ կկարդամ, օրինակ, նախադասություններ, զոր թեզմե առաջ ես եմ մտածած և ուզած եմ գրել թեզի: Մենք միևնույն արյունն ունինք մեր երակներուն մեջ: Երջանիկ միություն, վսեմ ամուսնություն և երանելի երախաներ, որ պիտի ծնին այս կողակցութենն:

Հիմա գանձ այստեղի կյանքիս: Պետք է ըսեմ, որ այս տարի աչքի զարնու ոչինչ կա: Մեծավ մասամբ այն մարդիկն են, որ կային անցյալ տարի: Բավական ձանձրալի է: Ես անգամ մը գացի Անթեյի լիճերը, անգամ մը Պոնտիկ և Պեոմակ, անգամ մը՝ Խաչելություն և իր ջրվեժը, երկու անգամ եկեղեցի և սրճարան, անգամ մը՝ Մեծ Թեննիսես դեպի սուրբ Կույսի ճամբան, քանիցս Պեոմակի դաշտերը և ամեն առտու և իրիկուն կերթամ Փոթի փարատի: Ահա երեք շաբթվան կյանքս: Պետք չէ մոռնամ նաև ըսելու, որ ամեն առավոտ ժամը 5. 30-ին կելլեմ անկողնեն սերտելու համար: Ինչպես կտեսնես, բավական միօրինակ կանցնին օրերս: Միակ ուրախությունս և հպարտությունս (այո՛ր, հպարտությունս) ամեն օր ճաշին բացիկ մը ստանալն է: Հուսով եմ, որ Թապարկի մեջ դուռն ավելի կզվարճանաս, քան ես: Պետք է օգուտ քաղես այն քանի մը շաբաթեն, զոր կուզես անցընել հոն կազդուրելու համար ջիղերդ, որոնք չափազանց կարիք ունին հանգստանալու (պետք է լավ մտածես այս մասին): Մի՞թե բժիշկը հատուկ ռեժիմ չէ նշանակած թեզի: Կեր այնքան, ինչքան կրնաս, պտտե ավելի, քան կրնաս: Մնուևդու ու զվարթությունը կընեն իրենց բարի գործը: Շատ մի՛ կարդար: Մեկ խոսքով, քանա միշտ աչքիդ առջև ունենալ առողջությանդ և երախաներուդ ապագան: Եվ կկարծեմ, որ թիչ առնեն, եթե թեզ վերստին տեսնեմ, ուղղակի պիտի հիանամ գերզանց առողջությանդ և սիրահարի վառվռուն այտերուդ վարդագունության վրա:

Կոստանդնուպոլսեն պատասխանի մըն ալ կսպասեմ, որպեսզի որոշեմ ուղևորությունս դեպի մեր տուն: Հայրենի հարկի տակ գտնվելուս պես ահագին անակնկալներ պիտի ունենամ թեզի համար: Եվ հետո, գիտես, Յաննի՛, շատ ուրախ եմ, որ վերջապես ընտանիքիս հետ պիտի ըլլամ: Ահա երեք տարի ի վեր ո՛չ ընտանիք կճանչնամ, ո՛չ բերկրանք, ո՛չ մայրական հոգածություն, ոչինչ: Բացի անկե, պետք է անձամբ բացատրեմ ծնողքիս, թե ով է նշանածս, ինչ բնավորություն և դիտավորություններ ունի, ինչպես կպիտե գիս: Ես մականերով պետք եղածին պես չեմ հաջողիր հասկոցնել իրենց, թեպետ արդեն

հայտնեցին իրենց հաճությունը (զոր քանի մը օր առաջ գրած եմ քեզի) : Ինչպես կտեսնես, միայն ինձի համար չէ, որ կուզեմ Կոստանդնուպոլիս երթալ, այլ դարձյալ քեզի և մեր ապագային համար :

Հ.-ն ստացեր է բոլոր բացիկներդ ու նամակներդ : Կուզե պատասխանել : Ուղղակի հիացած է մաքրութենէն ու սաստկութենէն այն բոլորանվեր զգացումներուն, զոր դուն կտածես սիրեցյալիդ և նշանածիդ հանդեպ :

Ռ. Չիլինկ

Հոկտեմբեր 7, 1908

Յաննի,

Հազար անգամ ներողություն, որ այդպիսի հուսահատական կացության մտոնեցի քեզի : Բայց պետք է գիտնաս նաև, որ ես այնքան ալ բարվոք վիճակ մը չունեի : Հոգնած էի շարաչար, կիսամեռ ըլլալու աստիճան :

Ստացած եմ բոլոր նամակներդ, բայց շատ կվախնամ, որ իմիններս չեն հասած ձեռքդ, քանզի, պետք է ըսել, ես այնքան ալ ծուլ չեմ եղած : Անցյալ շաբաթ, կարծեմ մեկ նամակ գրեցի քեզի, իսկ վերջին շաբաթը՝ չորս : Երեկ երկու կարճ նամակ գրեցի : Տեսար, որ շատ ալ ծուլ մեկը չեմ : Եվ հետո դուն գրեր էիր, թե, գուցե, հոկտեմբեր 4-5-ին քրոջդ հետ Ջվիցերիա ուղևորվիս : Կվախնայի, որ նամակներս կկորսվին հասցեիդ փոփոխության պատճառով :

Ըսե, Յաննի՛, ուրեմն իրո՞ք շատ ես ջղայնացած : Հա՛ : Չե՛ս սիրեր զիս : Ի՛նչ ընեմ, որ ներումիդ արժանանամ : Ըսե, ի՛նչ պետք է ընել քեզ վերստին ուրախացնելու համար : Խոսե՛ : Երեկ, երբ ստացա հեռագիրդ, այնքան տազնապեցա, որ օրն ի բուն չկրցա ո՛չ որևէ բան մտածել, ո՛չ գրել, ո՛չ ծիծաղել, ո՛չ լալ : Բոլորովին ջլատած էի, անկարող դույզն շարժման : Արդ, ի՛նչ ընել, Յաննի՛ : Պե՛տք է գալ էրֆուրտ : Ի՛նչ պատահեցավ քեզի : Ուրեմն իրո՞ք «խելագար վիճակ» ունիս : Հիվանդ ես արդյոք, ջղային, անտրամադիր : Իսկ եթե բան չունիս, ինչո՞ւ էիր այդպիսի հեռագիր տված : Ի՛նչ : Զիս հիվանդացնե՛լ է միտքդ : Կաղաչեմ, երբ այս նամակն ստանաս, երկար, երկար պատասխան մը գրե : Քանզի, խեղճ Յաննի՛ս, պետք է գիտնաս, որ ես ավելի մտահոգ եմ, քան դուն՝ քեզի համար : **Շատ, շատ մտահոգ :**

Այս իրիկուն կուզեմ ուրիշ նամակ մը գրել, քանզի դեռ շատ ազդված եմ հեռագիրդ. չեմ գիտեր՝ ի՛նչ պետք է գրել :

Կավարտեմ նամակս, սիրո համբույրներ ուղարկելով քեզի, համբույրներ ավելի տաք և ավելի տխուր, քան որևէ համբույր մարդկային :

Հոկտեմբեր 12, 1908

Կոստանդնուպոլիս

Սիրելի Յաննի՛ս,

Մեծագույն անակընկալը, զոր ըրած ես ինձի կյանքիս մեջ, նամակիդ պահարանն էր, գրված հայերեն: Օհ, Յաննի՛: Բայց դուն ինչպե՛ս կրցար պատճառել ինձի այս անհուն հաճույքը: Ո՛վ սորվեցուց քեզի հայոց գիրերը: Իսկապես դո՛ւն գրեցիր զանոնք: Ամեն պարագային, լավ անակնկալ էր, շա՛տ լավ, անհավատալի՛: Եթե իրոք կուզես սորվիլ մեր լեզուն, կրնամ քեզի ուղարկել բոլոր անհրաժեշտ դասերը: Ուրեմն այսօրվընե կսկսիմ դրկել քեզի մեր այբուբենը: Կարդալն ու գրելը շատ դյուրին են: Ես գեղագիր մը չեմ բնականաբար, և իմ ձեռագիրս այնքան ալ օրինակելի չէ: Ամեն պարագային, կրնա օգտակար ըլլալ քեզի: Հուսով եմ, որ շաբաթե մը ի վիճակի պիտի ըլլաս արդեն հայերեն գրելու ինձի: Չմոռնամ ըսելու, որ հասցեն (հայերեն) գրված էր գրեթե տպագիր տառերով: Իրապես կա գրության երկու տեսակ. **տպագիր և ձեռագիր**: Ուրեմն, քուկինդ տպագիր էր:

Խոստացած էիր տասը լուսանկար ալ դրկել ինձի: Ստացա միայն չորսը: Թերևս կուզես քիչ մը համբերությունս փորձել... Ամեն պարագային, այս չորս դիմանկարները հիանալի էին:

Ահա քանի մը նշմարներ Կոստանդնուպոլսո կյանքեն:

Սահմանադրությունը տակավին միանգամայն լավ կգործե: Ամենուրեք ազատություն է, խաղաղություն կտիրե Հայաստանի մեջ: Յաննի՛ս, դուն պետք չէ ականջ կախես գերմանական թերթերուն, քանզի գերմանական քաղաքականությունը հակառակ է Թուրքիո Սահմանադրության: Ձեր կայսրը կուզե պայքարիլ մեր ազատության դեմ: Ինչո՛ւ: Որովհետև առաջ մեր երկիրը ստրկության մեջ էր, գերմանական առուտուրն էր, որ կհափշտակեր մեր հարստությունը: Հիմա երկիրը ազատ է, հիմա մենք է, որ կուզենք ընել մեր սեփական առուտուրը և զբաղիլ արդյունաբերությամբ, և ասիկա գերմանացիներու գործին չի գար: Ուրեմն, ինչպես կտեսնես, ամենուրեք եսասիրությունն է, որ կտիրե:

Կոստանդնուպոլսո մեջ հայերը ունին 10 թերթ, թուրքերը՝ 9, հույները 5, ֆրանսացիները՝ 4, անգլիացիները՝ մեկ, իտալացիները՝ մեկ, գերմանացիները՝ մեկ:

Այժմ Պուլլարիո և Ավստրիո հարցն է, որ մեծ աղմուկ կհարուցե մեր թեր-

թերուն մեջ, բայց երբեք, ոչ մեկ պարագային, մենք չենք ուզեր պատերազմի: Ամբողջ ժողովուրդը խաղաղություն կաղաղակե...

Շատ կուզեի ձեզ հետս Կոստանդնուպոլիս բերել, բայց կվախնայի թաղաքական դեպքերեն: Հուսանք, որ ավելի ուշ կարենաս գալ և հիանալ մեր Արևելքի աներևակայելի գեղեցկության վրա:

Ծրագրած եմ հոսկե մեկնիլ հոկտեմբեր 21-ին (չորեքշաբթի), որպեսզի հոկտեմբերի 25-ին Լոզան հասնիմ և նախապատրաստվիմ հիվանդանոցի դասընթացներուն, որ կսկսին նոյեմբեր մեկին:

Կուզե՛ս քրոջդ հետ Պեռն գալ: Քու կողմեղ շատ մեծ սիրալիրություն կըլլար: Այնքա՛ն կուրախանայի: Հը, ի՛նչ կըսես, պզտիկ նշանա՛ծ...

Ծնողքս շնորհակալություն կհայտնեն այն ջերմ բարևներուն համար, զոր կուղարկես իրենց:

Հիմա պետք է որ վերջացնեմ նամակս: Կաղաչեմ, լավ սորվե հայերեն դասը, զոր հազար անգամ խնդրեցիր ինձմ: Շատ, շատ գոհ կըլլայի, եթե հայերեն երկտող մը դրկեիր ինձի, հայերեն տառերով:

Ինչպե՛ս է առողջությունդ. ջղագրգռությունդ, թուլություններդ անցա՛ն:

Ջւսնասիրությամբ կշարունակե՛ս դաշնամուր նվագել, իսկ ...¹ վերջացավ: Քանի որ գիտեմ, թե վաղը և մյուս օր նոր նամակ գրելու ժամանակ չպիտի ունենամ, եկուր քիչ մըն ալ երկնցնեմ անգամ մը սկսած այս նամակս: Այս քանի մը բացիկներով պիտի կարենաս մոտավոր գաղափար մը կազմել մեր թաղաքի մասին: Իրականության մեջ Կոստանդնուպոլիսը շատ ավելի գեղեցիկ է, բայց լավ բացիկներ չկան այստեղ: Ասոնք լավագույններն են, զոր ընտրեցի ձեզի համար: Այստեղ ամենագեղեցիկը ծովն է, երկինքը: Անսման են մայրամուտները ծովուն վրա, գիշերն ու խորհրդավոր Արևելքի ամբողջ մթնոլորտը...

Վերջապե՛ս: Երկու շաբաթեն պիտի վերստին տեսնեմ Լեման լիճը, Ուշին, Ալպյաններն ու անտառները և գուցե տեսնեմ շատ ավելի մեծ, շատ ավելի գեղեցիկ և իր հմայքով շատ ավելի փողփողուն բան մը, և այդ պիտի ըլլաս դուն ինքդ, գուցե...

Ուրեմն ցանա Պեռն ըլլալ երկու շաբաթեն, եթե կարելի է: Կխնդրեմ:

Կուղարկեմ ձեզի ամենատաքուկ համբույրներս և ամենաանկեղծ անձնվիրությանս հավաստիքը: Սիրե գիս և հետևե ինձի կյանքի դերբուկ ճամբուն վրա:

Հազար ջերմ բարև սիրելի ծնողքիդ և Միննա քրոջդ: Ձեզի հոգևին հավատարիմ

Ռութիսոյ:

¹ Անցնթեոնելի:

Շատ սիրելի Յաննիս և ավելի սիրելի նշանածս,

Ահա վերջապես նամակ մը օրեր տևած լուրսնեդ հետո: Հաստատորեն իմ ուղևորությունս Կոստանդնուպոլիս շատ ալ երջանիկ չեղավ քեզի համար մեր թղթակցության իմաստով (քանզի պետք է խոստովանիմ, որ շատ քիչ գրեցի քեզի): Բայց այս ճամբորդությունը ծայր աստիճան օգտակար եղավ, եթե նկատի ունենանք մեր ապագան: Անգամ մը որ մտածես այն բոլոր խոչընդոտներու մասին, զոր ես հարթեցի, որպեսզի կարենամ բոլորովին հանգստացնել ծնողքս և ցնդունիլ տամ անոնց իմ կյանքիս շաղկապումը քեզի հետ, անգամ մը որ հաշվի առնես այս ամենը, պիտի ըսես, թե ես շատ ծուլ չեմ եղած Կոստանդնուպոլս մեջ:

Բայց հիմա ահա Լոզան եմ: Մեր սրտի սիրելի քաղաքին մեջ: Հասա երեք-չաքթի իրիկուն, իսկ չորեքշաքթի բացիկ մը գրեցի քեզի, հինգշաքթի՝ ուրիշ մը և նամակ մըն ալ այսօր (ուրբաթ): Դուն գիտես արդեն հասցես. Կիլիս Ռզիթա, Ռյոմինի ծառուղի: Այնքան կուզեի, որ նոր հասցեիս քեզմե հասներ առաջին նամակը: Քանզի նշանածեն ստացված առաջին նամակը բախտ կբերե:

Յաննի՛, կիսնդրեմ, շատ մաքրություն մի փնտռեր այս նամակին մեջ, ոչ ալ կարգ ու կանոն: Հոգնած եմ երկար ճամբորդութենեն, հետո շատ գործեր ունիմ, կշտապեմ:

Չմոռցած՝ կուզեմ քեզմե բան մը խնդրել. քովս եղած քու բոլոր լուսանկարներդ ձգեցի մեր տունը: Բարեբախտաբար շատ պզտիկ լուսանկար մըն ալ կար ժամացույցիս մեջ: Առանց ատոր ոչինչ պիտի ունենայի քեզմե: Եվ կրնաս հավատալ անշուշտ, որ տխուր է, երբ երազանքի և մելամաղձության պահերուն աչքերդ հանգստացնելու համար թանկագին բանի մը չես նայիր: Արդ, կաղաչեմ, քանի մը լուսանկարներ դրկե: Ու նաև, եթե մեծ, աներևակայելի հաճույք մը կուզես պատճառել ինձի, ուղարկե մեծցված դիմանկարդ, զոր կփափաքիմ շրջանակել տալ նոր սենյակիս համար: Կարծեմ, «այո» ըսիր, այնպես չէ՛:

Այդ ի՛նչ անակնկալ կուզեիր ընել փոքրիկ զարմիկիս: Կոստանդնուպոլիս ուղարկե՛ր ես արդեն նվերդ: Հակառակ պարագային հասցեագրե զայն ինձի այն զույգ գրքուկներուն հետ, զոր խոստացեր էիր ատենին: Ո՛ր ես անոնք:

Ներփակ պիտի գտնես Ազնավուր բարեկամիս «Մեղեդի» գեղեցիկ բացիկը (առիթուն օգտվելով կուզեմ խնդրել, որ... լրջորեն հետևիս դաշնամուրի դասերուդ): Բացիկ մըն ալ ես կիղեմ՝ «Համբուլթը», որպեսզի սիրո իրական համբուլթի պատրանքը հարուցեմ քու տաք, տաք այտերուդ վրա...

Մ. Տյովլեթյանը Լոզան չէ արդեն: Գնաց Լիեթ (Պեճիքա). կուսանի մեքե-

Նագետներու բարձրագույն դպրոցին մեջ:

Երեկ անցա ժանսիի դոյակին առջևեն: Բյուր հիշատակներ, քա՛ղցր հիշատակներ:

Ձերմ բարևներս տուր հայրիկիդ ու մայրիկիդ: Հազար համբույր քու Ռուբինսեդ:

Նոյեմբեր 5, 1908

Երկուշաբթի

Յաննի՛,

Օրհնյա՛լ ըլլա այն ձեռքը, որ իմ մայրենի լեզվովս այս քանի մը բառերն է գրեր... Օրհնյա՛լ ըլլաս դուն, Յաննի՛... Նոր ստացա անակնկալ նվերդ, զոր դրկեր ես զարմիկիս համար հայերեն բացիկի մը հետ: Եվ օրհնյա՛լ ըլլա նաև այն օրը, երբ քու մատներդ այսպիսի սպիտակավարդագույն գլխարկ մըն ալ մեր սեփական երախայի պաշտելի գլխիկին համար պիտի հյուսեն: Օրհնյա՛լ ըլլա այդ հեռավոր օրը:

Ապագայի երազներ, զգվիչ հույսեր, որոնք օր մը օրանց իրականություն պիտի դառնան: Պատրանքներ, հիասքանչ խոստումներ հավերժության ի խընդիր...

Եվ ներկան, և անցյալը և ապագան... Անվերջանալի երազանքներու անսման քաղցրություններու, երանավետ արցունքներու, երջանկութենեն իսկ երջանիկ դժբաղդություններու ամբողջ շարան մը և տակավին հազար ու մեկ բաներ, որ, սիրույն միախառնված՝ կլացընեն մեզ... Շոյիչ տենչերու, հրայրքներու, խենթություններու, սիրո հեծքերու տողան մը ամբողջ... Ահ, ցկյանս, ցկյանս...

Որքա՛ն պիտի ուզեի, որ բովանդակ կյանքս երկարաձիգ երազանքներու գիշերի մը պես, սիրո նվաղկոտ զրույցի մը նման ըլլար քեզի հետ: Ըլլար, ինչպես անբաժանելի գիրկընդխառնում մը, ինչպես երկու բերաններու, երկու շունչերու միացումը, ինչպես հոգիներու ծորանքը սիրո սրբանտթի մը մեջ...

Ես իմ երազներս ունիմ, իմ պատրանքներս: Թերևս կսխալիմ: Ի՞նչ փույթ: Իմ կյանքս է այդ:

Մտածե երբեմն, Յաննի՛, որ մենք օր մը պիտի կրնանք հյուսել մեր սիրո պզտիկ բույրը: Մտածե, որ այդ օրը պիտի գա անպայման, նախքան մեր աչքերուն հավիտենապես զոցվիլը: Մտածե այս մասին, նշանա՛ծդ իմ, հավերժության բարեկամուհի՛ս...

Ահ, հավերժությունը: Կզգա՛ս այս անագորույն բառին ահռելի ծաղրը: Ի՞նչ է հավերժությունը: Կսիրենք, կերազենք, կտենչանք, հետո կհամբուրվինք ու

կերթանք: Մեր աչքերեն, մեր շրթունքներեն, մեր սրտեն կմնա միայն թշվառական բուռ մը հող: Ահա այն, որ Հավերժություն կկոչեն:

Ահ, Յաննի՛, մի՛թե չես կրնար հավատացնել ինձի, որ այո՛, ո՛չ մեր՝ երկուքիս անձը, ո՛չ մեր սիրտը, ո՛չ մեր սերը, ո՛չ մեր շրթունքները պիտի ճանչնան ցրտությունը Մահվան...

Բայց ո՛չ, մեռնիլը սարսափելի չէ, միևնաջ մեռնիլն է դժվար...

Հերիք է: Ձգենք այս սև մտածամները անոնց, որոնք ըստ բավականին ապրեր են արդեն: Չէ՛ որ մենք համակ կյանք ենք դեռ, համակ երիտասարդություն, համակ երջանկություն...

Եվ մենք դեռ պիտի երկար ապրինք, դեռ պիտի ըլլանք երջանիկ, այնպես չէ՛ իմ սիրելի և շատ սիրելի Յաննի՛ս...

Հազար անուշ համբույր բու **Ռուբինսեդ**:

Նոյեմբեր 5, 1908

Սիրելի Յաննի,

Լսե տարաբախտ Իլսա Ակունյանին պատմությունը: Երեկ և առջի օր բոլոր թերթերուն մեջ «Միացած՝ մահվան մեջ» խորագրով հոդվածներ կարդացի: Կուզեի թերթերը դրկել քեզի, բայց հետո մտածեցի, թե շատ կազդվիս: Ասոր համար է, որ լռություն կպահեի: Այս առավոտ Նույնիսկ ուրախ նամակ մը գրեցի քեզի. պարզապես թացցնելու համար խորունկ վիշտս: Կշտապեմ պատասխանել նամակիդ, քանզի կտեսնեմ, որ գերմանական թերթերը վատոգի են բացատրած եղելությունը (ձեր թերթերուն սովորությունն է այդ):

Ահա ճշմարտությունը. Իլսա Ակունյանը իր հիվանդությունը բուժելու համար ժընև կուգա: Այնտեղ կապրի արվեստագետ նկարչուհիի մը հետ (ժընևցի), որուն կկապվի բարձր ու իտեալական բարեկամությամբ մը: Դժբաղդաբար բժիշկը կհաստատե, թե այդ հիվանդությունը բուժելի չէ բնավ. **ստամոքսի քաղցկեղ**: Եվ տիկին Իլսայի եղբորը նամակ մը կգրե (Գերմանիա), թե քույրը կգտնվի հուսահատական վիճակի մեջ, և թե անխուսափելի է մահը: Եղբայրը անհապաղ կուգա ժընև և գիշերն ի բուն՝ մինչև առտվան ժամը չորսը, կմնա իր քրոջ սնարին:

Հաջորդ առավոտ կբախեն տիկին Իլսայի դուռը: Լռություն: Կկտրեն դուռը և տիկին Իլսան մեռած կգտնեն անկողնին մեջ, իսկ ընկերուհին՝ Նույնպես մեռած, մահճակալին տակ, ատրճանակը ձեռքին: Կգտնեն նաև նամակներ, ուր այս երկու անմեկին ընկերուհիները կխոստանան իրարու միասին մեռնիլ: Քաջ և իտեալական կինը գնդակ մը կպարպե տիկին Իլսայի գլխուն և հատ մըն ալ՝ իր ճակտին...

Վեհ և տխուր բարեկամություն: Ի՞նչ ճաջության տեր պետք է ըլլար ընկերուհին նվիրվելու համար տիկին Ակունյանին, ինքը, որ ոչ մեկ հիվանդությամբ կտառապեր: Այս անձնագոհությունը խորապես անկեղծ է, ճանգի խեղճ Իլսան այնքա՛ն բարի, այնքա՛ն ճաղր (տարապայմանորեն ճաղր) սիրտ մը ուներ, որ ընկերուհին չէր կրնար բաժնվիլ անկե:

Հայ ժողովուրդը (տառացիորեն ամբողջ ժողովուրդը) սուգի մեջ է իր ամենահավատարիմ բարեկամուհիին՝ տիկին Ֆրափանի մահվան առթիվ: Մենք անչափ, անչափ կսիրեինք զինքը, ճանգի այդ կինը իր ամբողջ կյանքն էր նվիրեր հայ ժողովուրդին:

Ի՞նչ սոսկալի բան է կույր բախտը: Ինչո՞ւ ստամոքսի ճաղցկեղը՝ բոլոր հիվանդություններն ամենաքստմնելին, բաժին հանել կնոջ մը, որ միայն բարիք էր գործած աշխարհի բոլոր դժբաղդներուն:

Ահա՛: Կյանքը տխմար բան է, իսկ Աստվածը (եթե գոյություն ունի) ամենադաժան հիմարությունն է, զոր կարելի է երևակայել...

Սիրտս կտոր-կտոր կըլլա: Զարհուրելի է ճակատագիրը այս երկու խեղճ ու անմեղ ընկերուհիներուն, որ անձնասպան կըլլան:

Անզուգական սիրելիս,

Օհ, Յաննի՛, օ՛հ, օ՛հ... Ինչպե՛ս կձանձրանամ, ինչպե՛ս կձանձրանամ... Հազարապատիկ գերադասելի է մեռնիլ, քան ապրիլ իրարմե բաժան, այնպես չէ՛: Օհ, Յաննի՛, ա՛լ չեմ կրնար: Օ, ինձմե ավելի զորավոր է այս սերը... Յաննի՛, ի՞նչ ցրիր զիս... ի՞նչ ցրիր զիս, Յաննի՛...

Ես, միևնա՛կ, կքալեի կյանքիս ճամբեն: Երջանի՛կ էի: Բան չեմ գիտեր: Սակայն գիտեմ, որ այսքան սաստիկ չեի տառապեր: Միևնա՛կ, կքալեի կյանքիս ճամբեն...

Եվ ահա դիպվածը, անհասկնալի խորհուրդով մը, զիս հանդիպեցուց թեզի: Եվ դուն սիրեցիր զիս, և ես սիրեցի թեզ ու կորսվեցա, կորսվեցա հավիտյան...

Ո՛ր է կյանքիս մենավոր ճամբան, ո՛ր է: Օհ, ահռելի կտառապիմ, ահռե՛լի... Թերևս դուն ալ գիշերային այս ժամուն կտառապիս ինձի համար հոգիիդ անիուն առանձնության մեջ:

Ինչո՞ւ է կյանքը այսքան դառնագին: Ինչո՞ւ է երջանկությունն այդքան կարճատև և տառապանքն այդքան երկար... Ինչո՞ւ, Յաննի՛:

Դեռ քանի մը օր առաջ թևերուդ մեջն էի, կծպտեի, և դուն կծպտեիր ինձի հետ: Կերագեի, և դուն աչքերուս մեջ կկարդայիր երազս: Կհամբուրեի թեզ, և դուն կյանք կքաշխեիր ինձի, համբուրելով զիս... Սիրելի՛ս, իրակա՛ն էր, իրակա՛ն էր այդքան երջանկությունը...

Հիմա այնքան հեռու եմ քեզմե (օհ, այնքան հեռու, այնքան հեռու...): Ին-
ծի կթվի, թե բավականաչափ քնքուշ չեղա հետոյ, թե պետք եղածին չափ չհամ-
բուրեցի քեզ. թե ավելի տարփոտ ու գորովալի պետք է ըլլայի...

Օհ, որքան իրավունք ունեիր դու, որ կողոյայիր մեն մի վայրկյանի վրա,
ազատորեն, խենթի պես սիրելու համար զիս: Օհ, որքան իրավունք ունեիր
դու, իմ Յաննի'ս... Հիմա կզգամ, որ չափազանց խիստ եղա հետոյ, խեղճ
Յաննի', եղա քիչ մը չափազանց լրջմիտ: Բայց հիմա շատ ուշ է արդեն ուղ-
ղելու համար սխալս... Ահ, Յաննի', աղվորս, եկո՛ւր, ես կնվաղիմ, կմեռնիմ,
ա՛լ ուժ չունիմ, մի՞թե վերջն է կյանքիս: Ինչո՞ւ այս խորունկ սերը: Ինչո՞ւ այս
անհուն տխրությունը: Շտապե, փութա Յաննի', եկո՛ւր քուս, ահ, ահ, դիր
շրթներդ աչքերուս վրա, սեղմե՛ զանոնք ուժգին, շատ ուժգին, որովհետև ահա
կոսսին արցունքները, արցունքներս կոսսին, կոսսին... Առաջին անգամն է, որ
սերեն կուլամ... Ահ, Յաննի'ս, ա՛լ չեմ կրնար, ա՛լ չեմ կրնար: Ինչո՞ւ չես ուզեր
փութալ քուս... Ձգե, ձգե զիս իյնամ բարձիս վրա ու արտասվեմ հեծկտալով,
հեծկտալով անվերջ...

Ինե՛նթ եմ արդյոք: Մանո՛ւկ եմ միթե: Թշվառ արարած մը չե՛մ, որ այսպես
կուլամ...

Ահ, ձգե, որ լամ: Արցունքն այնքան կամոքե զիս: Երկար տարիներե ի վեր
չեմ լացած տակավին: Օհ, լա՛մ: Օհ, լա՛մ...

Օ, գոնե տրվեր ինձի, փոխանակ այս բարձին վրա լալու, ծունկերուդ վրա
արտասվել, Յաննի'ս... Ո՛ւր ես դու. կքնանա՛ս, կերազե՛ս արդյոք իմ մասիս:
Չե՛ս խորհիր, չե՛ս կարծեր, թե այս երջանկությունը շատ կարճատև եղավ, ահ,
շա՛տ կարճատև... Կուլա՛մ, թերևս...

Յաննի', սիրելիս, չեմ գիտեր արդեն, թե ի՛նչ պետք է գրել: Կնախքնտրեմ
լռել և ձեռքերովս ծածկել աչքերս: Յաննի', սիրելիս, կհասկնա՛ս այն մեծ սերը,
զոր կտածեմ քեզի հանդեպ: Կհասկնա՛ս զիս: Եվ պիտի սիրե՛ս զիս, Յաննի',
այնքան ատեն, ինչքան պիտի ապրինք... Օհ, մի՛ պատասխաներ, աղվո՛րս,
գիտեմ, որ միշտ պիտի սիրես զիս և պիտի սիրես ավելի, քան թույլ կուտան
ուժերդ: Գիտեմ, բայց կուզեմ լսել քու բերնեդ: Ի՛նչ երանություն ամեն անգամ,
երբ կխոսիս ինձի քու մեծ սիրուդ մասին:

Յաննի', քույր իմ Յաննի': Պահե այս նամակը առանձին տուփի մը մեջ,
քանզի ասիկա միակ նամակն է, որ զիս այսքան լացուց և կլացնես կրկին ու
կրկին...

Ա՛լ չեմ կրնար գրել, ափերես դուրս եմ հորդած: Ձեռքս ուժ չունի: Յաննի',
եթե հոս ըլլայիր, պիտի գթայիր վրաս, չքնա՛ղ քույրս...

Կսպասեմ, անհամբերությամբ կսպասեմ այն օրվան, երբ պիտի միասին
ըլլանք ընդմիջտ, ընդմիջտ, ընդմիջտ... Ո՛չ ոք պիտի կրնա մեզ բաժնել, ո՛չ
մարդերը, ո՛չ Աստված, ո՛չ մահը... Օրինա՛լ ըլլա օրն այդ հեռավոր: Եվ

օրինյա՛լ ըլլա երկինքը, որ քեզ դրկեց ինծի, քանզի չեմ գիտեր՝ ի՛նչ կըլլայի առանց քեզի...

Գիտե՛ս, Յաննի՛, քեզի հանդեպ զգացածս սեր չէ, այլ ավելի զորավոր է, քան սերը...

Սպասենք, սպասենք դեռ, երեք ամիս հետո միասին պիտի ըլլանք երկար կյանքի մը համար, այնպես չէ՛, Յաննի՛:

Եվ քեզի հետ, բաց պատուհանին առջև, կեսգիշերին, ինչպես Ծնունդի օրը, պիտի լսենք մայր եկեղեցիին զանգակատունեն Ջատիկն ավետող ղողանջները:

Ղողանջեցե՛ք, ղողանջե՛ցե՛ք, զանգե՛ր մեր երջանկության, ղողանջեցե՛ք ի բարձունս երկնից և ավետեցե՛ք արար աշխարհին, որ մենք կսիրենք զիրար...

Հունվար 9, 1909

Քու տխուր, տխուր Ռ. Չիլինկո

Հ. Գ. Ստացա նամակդ և բացիկդ: Շատ բարևներ հայրիկին ու մայրիկին: Ռուբինա:

Իմ մեկ հատիկ Յաննիս,

Այս իրիկուն նորեն կարդացի առաջին նամակդ: Ինչո՛ւ այդքան տխրությամբ կգրես ինծի, Յաննի՛: Եթե գիտնայիր, թե ինչպես կտոր-կտոր կըլլա սիրտս ամեն անգամ որ կկարդամ այս նամակը... Կարծես անսպառ տրտմության հորդահոսան աղբյուր մը ըլլա: Ինչո՞ւ կուզես արտասվել: Ինչո՞ւ: Երջանիկ չե՛ս ինծի հետ: Սիրելի՛ս: Կկարծե՛ս, թե կրնա գոյություն ունենալ քեզի չափ երջանիկ ուրիշ աղջիկ մըն ալ: Քեզի չափ գեղեցիկ: Քեզի չափ իտեալական: Քեզի չափ սիրված: Ո՛չ: Ի բաց վանե տխրությունն ու արտասուքը, մոռցիր մռայլ մտքերը, վճիտ աչքերով նայե, որպեսզի հստակ տեսնես մեծ երջանկությունը: Եվ հետո, ամեն անգամ, երբ թախծագին բաներ կուզես գրել ինծի, մտածե, որ նամակդ սուգի կմատնե սիրտս, և մեղմադձիկ բառերդ կուրծքիս ուղղված սուրեր կդառնան աչքիս:

Մի՛ մոռնար, որ քեզմե եկած այս առաջին նամակը օրեր շարունակ այնքա՛ն տխրեցուց զիս, այնքա՛ն տխրեցուց...

Այնուհետև, Յաննի՛, ինչո՛ւ այս տրտունջք ու դժգոհությունները բաղդեդ: Քանի-քանի անգամ ըսած եմ քեզի, թե աշխարհի մեջ կարելի չէ գտնել ավելի կատարյալ ընտանիք մը, քան ձերը: Դուն պետք է հավատաս ինծի, ի վերջո: Ես շատ եմ ապրած ու շատ տեսած, ուստի կրնամ վստահեցնել քեզի: Ունիս բացառիկ անձնվեր մայր մը, իսկ հայրդ՝ ամենասիրալիկ մարդն է, զոր կարելի է երևակայել: Ահա թե ինչու ես քեզ կհամարեմ աշխարհի ամենաերջանիկ աղջիկը: Ճիշտ չէ՛ ըսածս:

Նամակս վերջացնելէ առաջ Ներողամտութիւնդ կիսնդրեմ երկար լռությանս համար: Պատճառն այն է, որ հարբուխ ունեի:

Այս իրիկուն կշարունակեմ:

Քույր՝ Ռուբինս:

Հունվ. 14, 1909

Առավոտ

Հունվար 14, 1909

Գիշեր

Պաշտելիս,

Ահա, վերջապես, քիչ մը ավելի լավ կզգամ զիս: Այս զգվելի հարբուխը խեղճ բանտարկյալի մը պես սենյակիս չորս պատերուն մեջ պահեց զիս շաբաթ մը ամբողջ: Ասով կբացատրվի լռությունս: Կներես ինձի: Սիրելիս:

Այսօր մեր Նոր տարին է: (Գիտես, չէ՞, որ բոլոր ուղղափառները՝ ռուսները, հույները և հայերը, 13 օր ուշ կտոնեն Նոր տարին: Ահա թե ինչու քաղաքակիրթ աշխարհին համար այսօր հունվար 14 է, իսկ մեզի համար՝ միայն հունվար 1: Ուրեմն՝ շնորհավո՛ր Նոր տարի:

Սակայն ի՛նչ տխուր տոն: Ցավագնորեն կհիշեմ Նոր տարվան այն սքանչելի գիշերը, զոր անցուցի ձեր հարկին տակ: Ի՛նչ քաղցրություն: Տոնածառի լույսերը կվառեին միամիտ պայծառությամբ մը, մենք գլուխ գլխի կեցած էինք բաց պատուհանին առջև: Գիշեր էր, լուռ ու ճերմակ, ձյունի մեծկակ փաթիլներով: Փողոցներուն մեջ հեռվէ հեռու հասնող ճիչեր ցնծության, իսկ խաղաղավետ ուլորտին մեջ՝ մայր եկեղեցիի փառահեղ զանգին ծանր ղողանջը, որ շեն ու զվարթ երկրին վրա կիջներ երկնային անհուն օրհնության մը պես... Եվ դեռ՝ իրար մոտեցող մեր շրթունքները խորհուրդին մեջ անծանոթ տարվան, որ համրորեն կհառաջանար դեպի մեզ, ի բաց վանելով հին տարին մեր բոլոր հիշատակներուն հետ... Եվ հետո (չնախանձիս հանկարծ)՝ հայրիկիդ ու մայրիկիդ համբույրները, որ հոգիս լիացուցին լրջախոհ և քնքուշ օրհնությամբ...

Հիմա ալ Նոր տարի է: Բայց ի՛նչ տխրություն: «Կյուժել» պանդոկին մեջ կծխեն, կբարբաջեն, կխմեն: Ամբողջ ջուլի մը ձանձրացող մարդոց: Ո՛ր է մյուսը: (Պետք է ըսել նաև, որ երեկ ուղղափառ ուսանողները ամանորյան մեծ երեկույթ մը սարքեցին, բայց ես չգացի հարբուխիս պատճառով): Ո՛ր էք, ղողանջներ՝ փառահեղ զանգի: Եվ ո՛ր ես դուն, չքնաղազեղ Յաննի՛: Կուզե՛ս

Գրուած է մտորման

շնորհավորանքի քաղցրիկ համարուր մը դրոշմել այտիս: Կուզե՞ս: Այն ատեն հատ մըն ալ, հատ մըն ալ... ճո՛ւփ, հատ մըն ալ անուշ պաշիկ¹...

Քու Չիլիակ

Սիրելի Յաննի՛: Հազար ներողություն կխնդրեմ քեզմե և սիրելի ժողովուրդս մեծ լուռության համար: Պատճառը քննություններս էին: Քանի այստեղ եմ, օր մը հանգիստ չեմ ունեցած: Մեր Նոր տարվան առթիվ, կխնդրեմ, շնորհավորանքներս հաղորդե մեծարգո ժողովուրդի, իսկ քեզի՝ բյուր բարև:

L. Ազնավուրյան

Ես սկսա լրջորեն աշխատիլ: Կապրիմ վերի սենյակին մեջ (այնտեղ, ուր կքնակեին երկու անգլիացի թուրքերը): Մեր տան մեջ կան երկու մանչուկներ: Կա անգլիացի ամուլ մը երկու աղջիկներով, որոնք պիտի տեղավորվին ժերան (Ռուլլ) գիշերօթիկնոցը: Ես առաջվան պես կհագնեիմ իմ գոպս (գլխարկ) և միշտ կիիշեմ... Յաննի Ապպելը: Անմիջապես գրե ինձի, կսպասեմ երկար նամակիդ: Դուն ավելի գեղեցիկ ես, քան լուսանկարդ:

Հազար համարուր:

Ռ. Չ.

Սիրելի Յաննի,

ես երջանիկ եմ, երջանկությամբ եմ լեցուն այս իրիկուն: Ինչո՞ւ: Ես ալ չեմ գիտեր: Կկարծեմ, թե, գուցե, դուն ինձդ ես երջանիկ այս երեկո, և թու երջանկությունդ է, որ անծանոթ ու հզոր մագնիսականությամբ մը փոխանցվեցավ ինձի:

Այո՛, երջանիկ եմ քեզմով, քեզի համար:

Խե՛ղճ Յաննի: Կհարցնես, թե իրո՞ք իմ աչքերս չեն սխալած իրենց ընտրության մեջ, և թե դուն, գուցե, այնքան ալ գեղեցիկ չես ինձի համար... Ինձի՛ խեղճի՛ս:

Ես երբեք չեմ մտածած գեղեցկությանս մասին: Երբե՛ք: Միշտ զիս համարած եմ այնպիսի մեկը, որ տգեղ ու վանող չէ առանձնապես: Եվ, ո՞վ գիտե, եթե կա գեղեցիկ բան մը իմ մեջս, ատիկա, ըստ իս, ավելի շուտ արտահայտությունն է ներաշխարհիս: Քանզի (ինչո՞ւ չըսել) ես այն կարծիքին եմ, թե ոչ ոք իմիսս ավելի գեղեցիկ ներաշխարհ ունի: Անտարակույս, չափազանցություն կա հոս, բայց ես կհավատամ, ամբողջ սրտով կհավատամ ատոր:

¹ Հայերեն՝ բնագրին մեջ:

Գալով ձեզի, Յաննի՛, դուն շատ միամիտ ես, եթե կկարծես, թե այնքան ալ գեղեցիկ չես նշանածիդ համար:

Նշանածդ չի գիտեր բնավ, թե ինչպես բացատրե ձեզի իր զգացածը: Բայց գիտե, թե դուն չափազանց գեղեցիկ ես, այնքան, որ ան թու կողքիդ ամենախոնարհ մարդը կհամարե ինքզինքը:

Եվ ըստ եւթյան, Յաննի՛, չե՞ր դուն ինքդ ալ չես կրնար հիացմամբ չդիտել այնքան արտահայտիչ աչքերդ, Նրբագույն շրթունքներդ, այնքան կանտոնավոր ու մեղույշ դիմագիծերդ, ի բնե այնքան վայելուչ հասակդ, թու ամբողջութունդ, ամբողջությունդ...

Հապա ներաշխարհդ... Ի՞նչ կա ավելի գեղեցիկ, քան թու ներաշխարհդ: Ո՛վ ունի թու երազներեդ ավելի վսեմ երազներ: Ո՛վ այնքան անբիծ սեր ունի, այնքան քնքուշ խանդաղատանք, այնքան նրբին խոսել: Չե՞ս հավատար, որ այս բոլորը կարտացոլան հրեշտակային դեմքիդ վրա: Չե՞ս տեսներ: Ինչո՞ւ կուզես զիս չարչրկել հարցոմաներով, որ կտառապեցնեն զիս, մտածել տալով ինձի հեռավոր, հեռավոր գեղեցկությանդ մասին...

Յաննի՛, կսիրեմ ձեզ: Եվ դուն գիտես որ կտվայտիմ այս սիրով: Արդյո՞ք գեղեցկությունդ կտառապեցնես զիս, արդյո՞ք սիրտդ: Չեմ կրնար ըսել: Ո՛վ գիտե, թերևս երկուքն ալ:

Ես շատ երկիրներ եմ տեսած և շատ գեղեցկություններ: Բայց դուն գեղեցկություն մըն ես բոլորովին տարբեր: Բոլորովին թափանցիկ է անձդ, մարմինդ նման է մարմարե ու զազե արձանի մը, ուրկե իր երկնային գեղեցկության ամենադուրյալ մանրամասնություններով կերևա ներաշխարհդ: Կարծես նյութեղեն չես դուն, ամեն ինչ հոգի է վրադ, ինչպես լիձերու, գետերու և ծաղիկներու, ալիքներու և մայրամուտներու վաղեմի աստվածուհիները...

Թևերուս մեջ ձեզ սեղմելով, միշտ այն տպավորությունն ունիմ, թե կզրկեմ հոգիդ: Այնքան թեթև եմ ու անզայտ համբույրներդ, որ ինձի մտածել կուտան անդրժիրիմյան գերագույն երանության մասին: Իսկ թու ձայնդ կուրծքիդ այնքան խորունկ ալքերեն կթխի, որ ինձի կթվի, թե կլսեմ ամառնային գիշերվան մը մեջ շնչավորված ծաղիկներուն երգերը...

Օհ, Յաննի՛, միթե արժանի՞ էի ես այսքան երջանկության, այսքան՝ երջանկության...

Թու Ռուբինադ

23. 1. 09

Ձաղըր նշանածս,

Այսօր միջօրեին հասա Լոզան, ուր առաջուց ճաշի էի հրավիրված բարեկամ ընտանիքի մը թով: Հիմա որ գիշեր է արդեն, և ես մինակ եմ սենյակիս մեջ,

անհուն տխրություն մը կխռովե զիս: Այնքան հեռու կզգամ զիս քեզմե և այնքան մոտիկ՝ մեռնելուն... Ոչինչ կա ավելի դժբաղդ, քան ավարտը երջանկության... Այնքան ցանկություն ունիմ մայրիկին հետ Պեռն գալու այս իրիկուն և վերջին անգամ մըն ալ գրկելու քեզ... Հապա հիվանդանոցը, դասընթացքները, բժշկությունը: Անգամ մը համբուրե զիս մտովի, կուզե՞ս... Եվ իմ կողմես համբուրե հայրիկդ, որ իսկապես չափազանց բարի է, և Միննան, որուն այնքան երախտապարտ ենք մենք: Կվերջացնեմ երկտողս, որովհետև պետք է կայարան շտապեմ մայրիկը դիմավորելու համար: Տոնություն, կսիրեմ քեզ մեռնելու աստիճան...

Քու Ռուփինոյ

31. 1. 09

Յանսիին

Պեռն

Փետրվար 7, 1909

Լոզան

Սիրելի և շատ սիրելի Յանսի,

Բացիկի մը հետ նամակ մը պիտի գտնես ներփակ: Բացիկը գրեցի անցյալ շաբաթ, բայց չուղարկեցի, մտածելով, թե դուն ճամբու վրա ես տակավին: Կջնջեմ ատենին գրածս, որ շատ հին է, ուրեմն՝ անմիաստ: Կհասկնաս զիս:

Գալով նամակին, Ազնավուրը Պեռն էր ուղարկած զայն շնորհավորելու համար ծնողքիդ Արծաթե հարսնիքը, բայց սխալ հասցեի պատճառով նամակը ետ վերադարձավ: Ազնավուրը սիրելի ծնողքեդ ներողություն կխնդրե (քանի որ չէր գիտեր պանդոկին անունը):

Կաղը կուզեմ դրկել քեզի քանի մը հայկական ժողովրդական երգեր, զոր Կոստանդնուպոլսեան բերել տվի: Փորձե երգել զանոնք (այնտեղ կա նաև հայերեն բառերուն ֆրանսերեն տառադարձությունը):

Սթրասպուրկ-Էրֆուրտ շոգեկառքեն դրկված բացիկեն ասդին բան չեմ ստացած քեզմե: Շատ կվախնամ, որ անկողին ինկած ըլլաս ճամբու հոգնության հետևանքով: Գրե՛ ի՛նչ ունիս:

Մինչև օրս չէի գրեր քեզի, մտածելով, որ դեռ Էրֆուրտ չես հասած:

Թերթերուն մեջ կարդացի Գերմանիո անբարենպաստ եղանակի մասին...¹

¹ Մեծ Բրիտանիայի Կառավարության կողմից Գերմանիայի դեմ հարկադրված դրամական պարտավորումների մասին հրատարակված հոդված:

² Անընթացիկ: Ընդհանուր առմամբ, Գերմանիայի դեմ հարկադրված դրամական պարտավորումների մասին հրատարակված հոդված:

հեղեղումները, Թյուրինժի փոթորիկը և այլն: Իսկ Էրֆուրտի մեջ: Մի՞թե դուք
ալ ահարկու ձմեռ մը կանցընեք հիմա: Այստեղ՝ Լոզանի մեջ, շաբաթե մը ի վեր
սքանչելի է եղանակը: Կարծես գարուն ըլլա:

Ինչպե՞ս է սիրտդ: Ջգացումներդ: Սե՛րդ: Շատ կձանձրանա՞ս:

Ես առաջին օրերը սոսկալի կտառապեի բացակայութենեդ: Մանավանդ
առաջին կիրակնօրյա գիշերը, ուր քեզ Լոզանին այնքան մոտիկ կզգայի, իսկ
ինձմե՛ այնքան հեռու... Կարելի էր մեռնիլ:

Բայց հիմա քիչ մը վարժված եմ արդեն բացակայությանդ, և այն երազը, թե
ի մոտո պիտի կարենամ քեզ տեսնել, շատ կուրախացնե գիս:

Ի՛նչ անսովոր է մեր սերը, մենք միշտ երջանկութենեն դեպի տխրություն
կերթանք և տխրութենեն դեպի երջանկություն... Մեր տխրությունները կարծես
դիտմամբ կհարուցվին, որպեսզի ահազնացնեն մեր երջանկությունը, այնպես
չէ՛ Յաննի՛:

Կվերջացնեմ գիրս, հազար երանելի համբույր դրոշմելով աջ ականջիդ
«բայց կամաց, շա՛տ կամաց...»:

Ջերմ բարևներս հաղորդե հայրիկին ու մայրիկին:

Քու Ռուբինսոդ

Միրելի Յաննի՛, գիտե՛ս, ես կսկսիմ վախնալ քեզմե: Ուղևորությանդ պատ-
ճառով ուզեցի առժամապես ընդհատել թղթակցությունս, բայց ահա բացիկ
բացիկի ետևեն կուղարկես գիս սաստելու համար: Այս պարագային ինժի միայն
«շնորհակալ եմ» ըսել կիյնա, որովհետև կկարծեի, թե դուն առնվազն իրա-
վունք չունիս տրտնջալու իմ թղթակցութենես: Կկարծեի, ընդհակառակը, թե ես
նամակ գրելու իմաստով ամենաջանադիր նշանածն եմ աշխարհի: Այսօրվընե
իսկ պիտի ջանամ անգամ մըն ալ ապացուցել զայն: Գո՛հ ես:

Էի ուրեմն, հիմա քեզի պիտի ըսեմ, թե այդ ինչպես մեկ տարվան մեջ երկու
տարիով մեծցա: Ծնողքիս հարցուցեր էի ծննդյանս ճիշդ թվականը: Նոր ստա-
ցա անոնց պատասխանը, ես ծնած եմ 1886 թվականի փետրվարի 28-ին:
Կկարծեի, թե քսաներկու տարեկան եմ: Պարզվեցավ՝ ո՛չ: Տասնյոթը օրեն ես
պիտի բուրեմ իմ 23 տարիս:

Սակայն գեղեցիկ ամսաթիվ մըն է փետրվար 28-ը. այդ օրն է, որ կվերջանա
ձմեռը և կսկսի գարունը: Եվ կարելի է ըսել, որ ես այդ երկուքն ալ ունիմ: Իմ
մեջս կզգամ ձմեռը իր լրջախոտ ու սառուցիկ թափորով. խաղաղության սիրով,
դատողություններով, կամքով, մեղությամբ: Իմ մեջս կզգամ նաև գարունը
զվարթության ու կյանքի իր ամբողջ շքերթով, սիրով ու հավերժական երիտա-
սարդությամբ, երջանիկ գոյության գինովությամբ, քաղցրությամբ, ծաղկած
երազներով, իտեալով...

Օհ, փետրվար 28, բախտավոր ամսաթի՛վ, որ տվիր ինձի կյանքը, զոր կանգիտանայի. հիմակվընե իսկ դուն պիտի ըլլաս ինձի համար օրինյալ, սիրելի օր մը, պիտի ըլլաս տոն:

Ճիշդ է, որ մինչև հիմա այնքան ալ ուշադրություն չէի դարձներ ծննդյանս տարեդարձին, քանզի կյանքն ինքնին մեծ կարևորություն չուներ աչքիս, ուստի ինչո՞ւ տոնել կյանքի սկիզբը:

Բայց հիմա ուրիշ բան է արդեն. ախորժ կզգամ կյանքեն: Սկսա զայն սիրել այն վայրկյանեն իսկ, երբ դուն սիրեցյալս դարձար: Սիրեցի զայն քեզմով, քու պատճառովդ: Եվ պիտի միշտ սիրեմ զայն քեզի համար: Եվ ա՛յն օրը (պիտի գա՞ երբեք, այդ օրը), երբ այլևս պիտի չըլլաս դուն, պիտի չըլլամ նաև ես...

Միտելի՛ս այսօրվան սքանչելի նամակիդ մեջ («սքանչելի»-ն քիչ է) նշանտուրի դժբաղդ պատմություններ կընես ինձի: Ես ուրիշ մը գիտեմ... Առջի տարիս Լոզանի մեջ ճանչցա երեսուննոց շատ գեղադեմ և շատ բարի հայ մը: Երկար առեներ ի վեր նշանված էր հայ աղջկա մը հետ: Բայց հետո իր թոքերուն մեջ բույն դրավ այն սարսափելի հիվանդությունը, որ չի ներեր երբեք: Եվ հյուժախտավոր ընտանիք մը չունենալու համար գրեց իր նշանածին, լրիվ ազատ կացուցանելով զայն: Նշանածը ամուսնացավ ուրիշի մը հետ: Տարի մը ետքը տեսա իմ ծանոթս: Տժգույն էր մահվան պես և կուլար մանուկի մը նման: Խեղճը ուրիշի հետ ամուսնացած իր նշանածին մահվան գույժն էր ստացած:

Ահա կյանքը:

Թող խաղաղության մեջ ննջեն հանգուցյալները: Ամեն անգամ, որ իրենց մասին կխոսինք, անոնք, թերևս կսարսռան իրենց գերեզմանին մեջ:

Մտածենք միայն կյանքի, և սիրո, և համբույրներու երանության մասին...

Կարելի՞ է այսքան երջանիկ ըլլալ: Միթե երկրավոր մարդը իրավունք ունի՞ ըլլալու այնքան մաքուր, այնքան խտեալական, այնքան սիրատարփ ու հավերժական, որքան մենք երկուքս: Չե՞ս կարծեր, իմ գիշերվան սիրելի և հեռավոր աստղ...

Դուն աղբյուր ես, որ կհոսի ու կերգե, աղբյուր սիրո, անվախճան ու կենարար: Ձգե, որ սիրատոչոր շրթունքներս մոտեցնեմ քեզի և չնաշխարհիկ հոգիեդ ըմպեմ քանի մը կաթիլ...

11. 2. 09

Ռուբինս:

7. III 09

Յաննի՛, ահա այսօր (կիրակի) ճշտիվ շաբաթ մըն է, որ թուրթի կտոր չեմ առած քեզմե: Շնորհակա՛լ եմ: Անցյալ կիրակին, որ իմ ծննդյան տարեդարձի

տոնն էր, թղթակցությանդ վերջին օրը եղավ: Շնորհակալ եմ: Հիմա կտեսնեմ, թե ինչպես կսիրես զիս: Ամեն ինչ կհասկնամ հիմա: Այո՛, այո՛: Կա միայն բան մըն ալ, զոր ի վիճակի չեմ ըմբռնելու. այդ ինչպե՛ս կրնաս ութ օր շարունակ լռել... Եթե ես փորձեի նման բան մը, վիշտես կմեռնեի: Իսկ դուն... Մարդ ինչպե՛ս հիմարաբար կսխալի եղեր աշխարհիս երեսին: Ես քեզ այնքա՛ն զգայուն կկարծեի, այնքա՛ն քնքուշ, այնքա՛ն խոնավական (խկապես խոնավական), իսկ հիմա, ավա՛ղ...

Անկասկած, այս պատահարը կրնա անցնիլ, ինչպես այնքան ուրիշներ: Բայց սրտիս մեջ միշտ պիտի մնա այս մահացու լռության ծանր հիշատակը: Երբեք պիտի չկրնամ ջնջել զայն հիշողութենես, երբե՛ք, ավա՛ղ...

Ես, որ միշտ կերազեի քեզի հետ սեր մը անբիծ, առանց որևէ ջղայնացուցիչ պատահարի, առանց դուլյոյ տհաճության... Ինծի կըսեին, թե անկարելի է մերինին պես խոնավական սեր մը: Բայց ես միշտ կհավատայի անոր, միամտորեն: Միամտորեն... Ավա՛ղ, և արևելքի՛ որեն... Հիմա կմտածեմ քրոջս մասին, թերևս ան իրավունք ուներ, սիրելի մեծ քույրս: Բայց ես չլսեցի զինքը ու լացուցի քու պատճառովդ:

Գիտես, որ ես վտանգեցի ամեն ինչ, և ամեն ինչ կորսնցուցի քեզի համար: Դուն շատ լավ գիտես իմ «ամեն ինչ»-ը: Իսկ հիմա...

Գիշեր մը, էրֆուրտի թատրոնեն դուրս գալու ատեն, շատ տխուր էի ես: Դուն ինծի հարցուցիր պատճառը: Ըսի քեզի, թե չես կրնար հասկնալ զիս: Այս խոսքիս վրա՝ դուն լացիր... Եվ հիմա կտեսնեմ, որ հակառակ ամեն բանի, բնավ չես հասկնար անսահման սիրույս մեծությունը:

Ո՛չ: Չհասկցար, դեռ չհասկցար զիս այնպես, ինչպես կցանկանայի:

Հակառակ ամեն, ամեն ինչի, միշտ ստվեր մը պիտի մնա քու և իմ միջև: Դուն զիս սիրեցիր միայն աչքերուս և գեղեցկությանս համար: Բայց բնավ չիմացար, որ ես բանի տեղ չէի դներ արտաքին գեղեցկությունս, և որ իմ մեջս կար այնքա՛ն գեղեցիկ, այնքա՛ն մեծ, այնքա՛ն բարձր բան մը, զոր դուն, ավա՛ղ, չհասկցար երբեք. իմ մեծ սերս քեզի հանդեպ...

Եվ ի՛նչ. դուն խոցեցիր այդ սերը, արյունեցիր զայն ութ օր շարունակ...

Աշխարհի օրե՛նքն է արդյոք, սիրո կարգ ու կանո՛նն է միթե. ան, որ ավելի կսիրե, ավելի է բազմատանջ...

Հիմա՛րս, հիմա՛րս, հիմա՛րս: Ահ, սարսափելի է. ինչպե՛ս եմ հիմարացած սերեն: Բայց մի՛ կարծեր, թե զայրացած եմ քու դեմ. ո՛չ: Ես զայրացած եմ միայն իմ դեմ, որ այնքան հիմար եղա կուրորեն խաբվելու համար:

Չեմ գիտեր՝ ի՛նչ ըսեմ: Ինծի կթվի, թե գուցե, անօգուտ է գրել քեզի այս նամակը. գուցե վաղը նամակ մը ստանամ քեզմե... Բայց թերևս չափազանց ուշ ըլլա այն ատեն... Չափազանց ուշ:

Կկրկնեմ քեզի նախորդ նամակիս մեջ գրածս. պիտի գա օր մը, երբ պիտի

ըսես ինծի. «Ռուբի՛նս, հիմա է որ կհասկնամ քեզ ու կսկսիմ սիրել... Բայց ինծի կթվի, թե դարձյալ չափազանց ուշ պիտի ըլլա...

Վերջացուցի:

Ն. Գ. Պառկած հիվանդ եմ ես:

Քույրդ՝ Ռուբինս

Ապրիլ 6, 1909

Օ՛ իմ սիրավոր Յաննի,

Ինչպե՛ս կսիրեմ քեզ, ինչպե՛ս կպաշտեմ: Քու մաքրությանդ, պարզությանդ, ըու գեղեցկությանդ մեջ հափշտակյալ վիճակ մը ունիմ, ինչպես դյութախաղի անսովոր տեսակի մը առջև: Օհ, կպաղատիմ քեզի, սիրեցյալս ու աստվածուհի՛ս, բանտե զիս թևերուդ մեջ, բարձրացուր դեպի հոգիիդ ոլորտները, առաջնորդե սրտիդ մուտք ու մենավոր արահետներեն, ցույց տուր ինծի հարստությանդ գեղեցկությունները և ըսե՛՜ արժանի՛ եմ ես քեզի, օ՛ Յաննիս, արարի՛չս...

Ուրկե՛՛ կուգաս դուն, դո՛ւն, որ այնքան մաքուր ես... Ուրկե՛՛ կիջնես դուն, դո՛ւն, որ բարձր ես այնքան... Ուրկե՛՛ ծնունդ կառնեն աստպները, դուն որ աստղ մըն ես վսեմափայլ...

Սիրելի՛ս, ուրեմն իրա՛վ է, որ ձեռքերուս մեջ ունիմ հոգի մը այնքա՛ն նուրբ ու վեհ, այնքա՛ն զգայուն և լուսեղեն... Ուրեմն իրա՛վ է, որ քե՛զ ունիմ զույգ ձեռքերուս մեջ...

Օ դո՛ւն, որ հեռվե հեռու հավերժական խնդություններ կերգես և անմահական սերեր... Օ դո՛ւն, որ պաղպաջուն աղբյուրի մը պես կհոսեցնես հոգիդ անհագ սրտիս մարգերուն մեջ... օ դո՛ւն, Յաննի՛ս...

Եվ ահա կտեսնեմ քեզ, որ կծպտիս քնքուշ ու խորունկ ժպիտով, ժպիտով մը, որ մշտնջենական երջանկության պատկերն է ճշմարիտ: Օ դո՛ւն, մի՛թե մշտնջենական սիրո ճշմարիտ դիմանկարը չես դուն... Օ դուն, քաղցր Յաննի՛ս, սիրաջեր Յաննի՛ս, իմ քույր և իմ սիրեցյալ Յաննի՛ս...

Ըսե, երգե, խոսե ինծի սիրահար հոգիներու մասին, դուն, որ ունիս ձայն մը, համակ սեր ու տարփանք: Բա՛ց շրթունքներդ և գուցե կոպերդ մթին և հեռարձակե ինծի բառ մը, բոլոր դարերու և համայն մարդկության մեծ բառը, պզտիկ բառը, որ կապրեցնե ու կմեռցնե իսպառ... Ըսե ինծի այդ քնքշավետ բառերը. «Կսիրեմ քեզ...»:

Եվ ես կսիրեմ քեզ սիրով մը այնքա՛ն բարձր ու այնքա՛ն հեշտագին, որ գլխու պտույտ կուտա ինծի: Կզգամ, թե քեզի հասնելու և հպարտ էտվելոյսի մը պես քեզ քաղելու համար այնքա՛ն եմ բարձրացած և այնպիսի՛ վերելքներ ու սլացիկ գագաթներ եմ խիզախած, որ ահեղ անդունդ մը կտեսնեմ ոտքերուս տակ, վիհ մը սարսռազդեցիկ, որմե կդողդոջեն քայլերս... Եվ տրտմորեն

կմտորեմ. «Իսկ եթե հանկարծ գահավիժի՞մ...»

Օհ, այո՛, եթե հանկարծ գահավիժի՞մ... Ինձի համար չէ, որ պիտի լամ, այլ միմիայն դժբաղդ էտըլվեյսի ի խնդիր, որ ինձի հետ պիտի գայթի անդունդն ի վար, քանզի այդ էտըլվեյսը դուն ես, Յաննի՛ս...

Բայց ո՛չ, ո՛չ: Մենք երբեք չպիտի սայթաքինք: Հակառակ բոլոր դժվարություններուն ու վտանգներուն, մենք կուզենք միշտ ելլել ու ելլել, մինչև որ հասնինք Իտեալականության գերագույն բարձունքը, ուր պիտի հյուսենք մեր պզտիկ բույնը, ինչպես ամենավես գագաթներուն վրա իրենց բույնը դնող զույգ արծիվներ, և հոն պիտի ապրինք բացարձակ երջանկության ու անսման սիրո մեր կյանքը:

Օհ, oh, oh,... Ինչպե՛ս կգինովցնե, կօրորե զիս մեր ապագա պզտիկ բույնին պատկերը: Ի՛նչ կյանք: Ի՛նչ բերկրանք: Ի՛նչ անձնվիրություն: Որքա՛ն համբույրներ ցերեկն ի բուն, որքան քնքշություն ու գորով գիշերն ի լույս:

Եվ այս երազը այնքա՛ն է գեղեցիկ, որ թեպետև հեռու է տակավին, մենք համբերությամբ և զմայլանքով կսպասենք իրեն... Քանզի գիտենք, թե այդ ապագա կյանքը պիտի ըլլա այնքա՛ն երանավետ, որ պսակադրության մեր առաջին իսկ համբույրին մեջ պիտի մոռնանք մեր չարչարագին բոլոր տարիները երկար...

Օհ, դուն, Յաննի՛:

Կհավատա՞ս հրաշքներու: Բայց դուն ինքդ հրաշք մըն ես: Կույր բնությունը այդ ինչպե՛ս կրցավ քեզի տալ ձև մը այնքա՛ն կատարյալ, աչքեր այնքա՛ն ցնորաբեր, շրթներ այնքա՛ն արբեցուցիչ, հույզեր այնքա՛ն վսեմական, հոգի մը այնքա՛ն մաքուր և այնքա՛ն անապակ... Հրաշքներ՛: Բայց չե՛ որ մեր սերը հրաշքներու շարան մըն է միայն: Թեև կսիրենք զիրար այնպիսի մեծ սիրով մը, որ անզոր ենք ավելի մեծ սեր երևակայելու. սակայն կզգանք, որ այդ սերը, միևնույն է, կահագնանա օր ավուր... Այս զգայությունն ալ հրաշք մը չե՛ միթե:

Եվ հրաշքներու փայլուն շարահարումները չե՛ն արդյոք մեր հանդիպումը, սերը, մեր դժվարություններն ու մեր հաջողությունները:

Բայց... Բայց հրաշքներեն ամենամեծ, ամենախորունկ, ամենաիրական հրաշքը մեր համբույրն է մտերմիկ... Ահ, ես կյանքիս մեջ չեմ ճանչնար բան մը այնքա՛ն կենդանարար ու իտեալական, որքան քու շրթունքներուդ և իմիններուս հպանցումը հեշտագին... Ահ, կմռնիմ քաղցրութենե ու երազանքե...

Քու Ռուբինադ

Ապրիլ 9, 1909

Թանկագին սիրեցյալս,

Ավագ ուրբաթի առավոտն է: Ցնծալից օր: Արևն այնքան է պայծառ և լիճն՝

այնքան կապույտ, որ պիտի ուզեի, գլխարկս ու գավազանս առնելով, պտույտի ելլել: Բայց ո՛չ, եկուր այս առավոտ քիչ մը զբոսնունք մեր սիրո պատմության մեջ: Կուզե՛ս:

Ավագ ուրբաթ, ժամը ինն ու կեսն է առավան: Տարի մը, ճշտիվ տարի մը առաջ այսօր, այս ժամուն ես կանցնեի Էյզենախի առջևն: Շոգեկառքին մեջ կային երկու երիտասարդ գերմանացիներ, որոնք կուզեին իրենց աղքատիկ ֆրանսերենով խոսիլ ինձի հետ: Բայց եթե կկարծես, թե ես դույզն փափաք ունեի խոսելու... Գլխուս մեջ հազարավոր մտքեր կդարձնարձեին: Ի՛նչ կսպասե զիս: Պիտի մերժվիմ և դժբա՛ղդ ըլլամ ամբողջ կյանքիս մեջ: Վշտառիթ խզման մը պատճառ չպիտի՞ դառնամ ջու և ծնողքիդ միջև: Քանի մը ժամեն պիտի որոշվի երիտասարդ կյանքիս ապագա ընթացքը: Իսկ եթե խնդիրը գեշ վախճան ունենա՞... Շուրջս ամեն բան հուսահատությամբ կողողեր զիս: Առաջին անգամն էր, որ Գերմանիա ոտք կոնեի: Եվ այնքան մինակ, այնքան միևնա՛վորիկ կզգայի զիս այնտեղ... Բոլոր մարդերը, ամբողջ երկիրը լրջախոհ, լուռ, պաղ, օհ, մանավանդ պա՛ղ երևույթ մը ունեին: Մտովի կվերադառնայի դեպի Նիսի տաք ծառուղիները, արմավենիներով եզերված: Եվ գործարաններու սև ծխնելուզներ կտեսնեի միայն...

Ահ, արևելքցիի կրակոտ սի՛րտ իմ, դուն առաջին անգամն էր, որ այնքան միայնակ էիր աշխարհիս մեջ, Հյուսիսի ցրտաշունչ մարդոցմով շրջապատված...

Այսպես կխորհեի, երբ շոգեկառքը հանկարծ կանգ առավ: Էրֆուրտ...

Նույն գիշերն իսկ ջու պատուհանիդ տակ ես կսուլեի մեր սքանչելի «Թորե-ատոր»-ը... Մնացյալը գիտես:

Եվ սակայն, անկեղծ ըլլալու համար ըսեմ, որ ծնողքդ, հակառակ իրենց հանկարծական զայրույթին, այնքան ալ պաղ չթվեցան ինձի: Տաք, սիրալիր բան մը կար թեզմե անոնց մեջ: Մյուս մարդոց պես չէին բնավ. և ատիկա արդեն մխիթարություն մըն էր ինձի համար:

Եվ յուրովի կըսեի. «Ակսելու համար ամեն ինչ լավ է, բարեհաջող»:

Եվ անկեղծորեն, լավ էր ամեն ինչ:

Ու ահա հիմա ճշտիվ մեկ տարի է: Մտովի կշրջիմ այդ անցած տարվան մեջ և կտեսնեմ, որ մեր հարաբերությունները, ջու և իմ միջև, արտակարգորեն փոխված են, դարձած են մտերմիկ, ջերմ, սերտ և մանավանդ՝ իտեալական... Մինչդեռ իմ և ծնողքիդ հարաբերությունները, դժբաղդաբար, մնացած են իրենց նախնական վիճակին մեջ, ո՛չ մեկ փոփոխություն:

Անցյալ տարի, Զատիկին, շատ ավելի ջերմությամբ ընդունեցին զիս, քան այս տարի: Ամեն ինչ մնացած է այնպես, ինչպես առաջին օրը: Մենք նույնիսկ նշանածներ չենք իրենց աչքին:

Հիմա պիտի ըսես, թե այդ ամենը կարևորություն չունի: Բայց ես կուզեմ, որ սիրեն զիս: Եվ դուն զիս կվստահեցնես, թե կսիրեն: Սակայն այդքանը բավական չէ: Կզգամ, թե զիս պետք է ավելի սիրեին: Իրենց սերը մնացած է այն աստիճանին վրա, ինչ որ էր առաջին այցելությանս ատեն, ո՛չ ավելի, ո՛չ պակաս: Մեկ տարվան նշանտուբը ոչինչ փոխեց իրենց սրտին մեջ:

Եվ ինչո՞ւ: Քեզի կհարցնեմ՝ դուն ինչո՞ւ կսիրես զիս, աղվճո՞րս: Ըսե ծնողքիդ, մեր սերը խենթություն էր: Իսկ ես կըսեմ՝ ո՛չ, խենթություն չէ: Քանզի եթե խենթություն ըլլար, արդեն շատոնց սովեր իսկ չէր մնար անկե, մինչդեռ մեր զգացումը ավելի ու ավելի կսաստկանա... Դուն որքան կճանչնաս զիս, այնքան կսիրես: Ուրեմն՝ ոչ խենթությունը գործ ունի այստեղ, ո՛չ գեղեցկությունը. դուն իմ բնավորությանս համար կսիրես զիս: Բայց ինչո՞ւ ծնողքիդ սերը չավելնար իմ բնավորությանս պատճառով: Մի՞թե ըստ բավականին չեն ճանչնար զիս տակավին: Սակայն չէ՞որ շատ դյուրին է զիս ճանչնալը. այնքան վճիտ է իմ բնավորությունս. այնտեղ կարելի է ամեն ինչ տեսնել, ինչպես բաժակ մը ցինջ ցուրին մեջ:

Բայց վերջացնենք: Միշտ կհուսամ, որ կբարվոքի ամեն բան, և իրենց սերը կավելնա տակավ: Քանզի չեմ ուզեր, որ մտածեն, թե դժբաղդություն բերի իրենց ընտանիքին մեջ: Ընդհակառակը...

Եվ հիմա նորեն վերադառնանք անցյալ տարվան մեր Ջատիկին: Այս նամակը պիտի ստանաս Ջատիկի առավոտը, կիրակի: Անշուշտ պիտի հիշես անցյալ տարին, մայր եկեղեցին, ձյունի մեծկակ փաթիլները, «Օթել տը վիլ» այցելությունը, մեր ճաշը և ամբողջ մնացյալը... Քիչ մըն ալ պիտի հիշես զիս, ծնողքե և նշանածե հեռու խեղճուկրակ Ջատիկս... Իսկ ես պիտի կիսեմ իմ մտածումներս բու և ծնողքիս միջև, բանի որ (պատահմամբ) նույն օրը կուզա նաև հայկական Ջատիկը:

Երեկ նամակ մը ստացա իրենցմե, ուրախ Ջատիկ կմաղթեին ինձի: Չեն գիտեր, որ քեզմե հեռու ուրախ Ջատիկ չկա ինձի համար...

Աղվճո՞րս, կսիրեմ, կսիրեմ, կսիրեմ քեզ: Չեմ կրնար առանց քեզի, չե՛մ կրնար...

Համբուրե զիս հեռուեն:

Քու Ռուբենդ

ՎԾ

Միակ հրեշտակս,

Հիմա որ կգրեմ քեզի, կեսգիշերն անց է, կիրակի, գրեթե Ջատիկ:

Կհարցնես, թե ի՞նչ ըրի այս իրիկուն: «Կյուժել» պանդոկն էի զացած: Երեք հոգի էինք: Մեզմե մեկը քանի մը օրեն Լոնտոն պիտի երթար և կխմեր: Մյուսը

Լևոնն էր և կիսմեր: Իսկ երրորդը սիրահար մըն էր և կիսմեր (այդ երրորդը կկոչվի Ռուբեն):

Նախ՝ շիկավուն գարեջուր, հետո՝ հավկիթներ, ետքը՝ թխագույն գարեջուր, վերջը՝ սև սուրճ և հուսկ ապա՝ «Տեսզալե» գինի: Կերևակայե՛ս խառնուրդը:

Այս կոնծաբանության ավարտին ինքնաշարժ մը մեզ փոխադրեց մեր տուները: Ճամբուն վրա քիչ մնաց Լևոնը իյնար մեքենայեն: Ճիչեր, աղաղակ, ամեն ինչ բարեհաջող վերջացավ:

Տուն վերադառնալուս պես (ժամը մեկն էր գիշերվան, այսինքն՝ կիրակի, Զատիկ) առաջին գործս եղավ հագուստս փոխել և նստիլ սեղանիս առջև թեզի քանի մը բառ գրելու համար: Եվ ահա ես ալ զարմացած եմ սաստիկ, որ կրնամ այսքան լավ գրել...

Գիտեմ, որ Լևոնն ու մյուսը ադեն խորունկ կքնանան իրենց սենյակներուն մեջ: Մինչդեռ ես թեզի գրելու վրա եմ: Ահա թե ո՛րն է սիրահարներուն տարբերությունը:

Սիրելի թանկագին Յաննի, Յաննիս, չքնաղ Յաննի՛ս, շատ կսիրեմ քեզ, շատ, շա՛տ, աղվո՛րս:

Ուստի սիրո բոլոր պատմությունները մեծ հաճույք կպատճառեն ինձի: Այսօր այդպիսի պատմություն մը լսեցի, և այդ պատմությունը այնքա՛ն է գեղեցիկ, այնքա՛ն միամիտ, այնքա՛ն իտեալական ու մանկական, որ զայն թեզի պատմելու փորձության չեմ կրնար դիմանալ:

Շատ գեղեցիկ, շատ լուրջ ու ազնիվ աղջիկ մը կապրեր Լոզան և ուներ իր սիրեցյալը: Երկուքով դրամ կխնայեն և կորոշեն փախչիլ Լոզանեն: Գիշերը աղջիկը կսկսի պարանով իջնել գիշերօթիկնոցի պատուհանեն, որուն տակ կսպասե սիրահար տղան: Բայց հանկարծ խեղճ փախստականը վար կիյնա ու կպոռա... Կարթնանա և զայն կըզտնեն գետնին վրա, նվաղած... Ես շարունակությունը չեմ գիտեր, բայց հետաքրքրականն այն է, որ աղջիկը Լոզան չէ արդեն...

Այս տարօրինակ պատմությունը ինձի հիշեցուց Կրանսի դոյակին համար քու երևակայած աստիճանավոր պարանը... Ի՛նչ գեղեցիկ հիշատակներ:

Գիշեր բարի, սիրելի՛ս, ա՛լ կուզեմ անկողին մտնել: Բայց նախքան քնանալս, կուզեմ թեզի ըսել, որ շատ, շա՛տ կսիրեմ քեզ:

Եվ այնքան կսիրեմ, որ եթե ինձի ըսեին, թե պետք է մեռնիլ թեզի համար, կմեռնեի... Օհ, բայց ես կփափաքեմ ապրիլ, Յաննի՛ս, և ապրիլ միայն ու միայն թեզ համբուրելու և երջանկացնելու համար... Եվ կփափաքեմ ապրիլ միայն թեզի հետ, քանզի դուն իմ Յաննին ես, նազելի Յաննիս, հրեշտակ Յաննիս, անմահ ու անհուն... Օհ, իմ գեղեցիկ ու բարի Յաննի՛ս, կսիրեմ քեզ, կսիրեմ, կսիրե՛մ...

Գիշեր բարի, երազիդ մեջ տե՛ս զիս:
Առտուն կշարունակեմ:

Քու Ռուբինոյ

Ջատկական համբույր
Շաբաթ, ապրիլ 10, 1909
Կեսգիշերեն հետո

Ջատիկ, առավոտ

Այս առավոտ քեզի կղրկեմ նամակս և ներփակ՝ բացիկ մը, զոր երեկ պետք է ղրկէի: Նշանտուքի հազար համբույր: Մի՛ մոռնար, որ ապրիլ 17-ին մեր նշանտուքի տարելիցն է: Այս վայրկյանին նամակաբերը Ջատիկի առթիվ առաքումներ բերավ ինձի: Քեզմե՛ ոչինչ: Անծանոթուհի մը հասցեիս ուղարկած է բացիկ մը, ուր գրված է. «Գորովալի հիշատակ անկե, որ քեզ չի մոռնար: Պ. Ա. Մ.»:

Սակայն անծանոթուհիի մը այս հիմար բացիկին տեղ շատ կուզեի նամակ ունենալ քեզմե:

Քու Ռուբինոյ

Ապրիլ 17, 1909

Նշանտուքի առաջին տարելից

Իմ խեղճ, խե՛ղճ Յանիս,

«Իսկ ինչո՞ւ խեղճ», — պիտի ըսես հիմա: Ահ, այո՛, խեղճ: Խեղճ՝ սիրո մեջ: Ինչո՞ւ ճանչցար զիս, Յաննի՛: Ինչո՞ւ սիրեցիր զիս: Անկասկած, դուն ավելի երջանիկ կըլլայիր ուրիշի մը հետ: Ավելի երջանիկ, աշխարհի ամենաերջանիկ էակը ըլլալու արժանի էիր դուն, իմ խեղճ Յաննի՛ս: Քանզի կատարյալ ես դուն: Իրենց վեհութեամբ իրար չեն զիջիր քու գեղեցկությունդ, հոգիդ, իտեալդ, մտածելակերպդ, և ես չեմ գիտեր, թե ասոնցմե որուն վրա ավելի հիանամ: Միայն գիտեմ, որ քու ընտիր բարեմասնություններովդ աշխարհի ամենաերջանիկ նշանածը ըլլալու արժանի էիր դուն:

Ուրեմն ինչո՞ւ ճանչցար զիս ու սիրեցիր: Ես, ավա՛ղ, չափազանց դժբաղդ ազգի մը մեկ դժբաղդ մասնիկն եմ միայն: Մենք միայն փոքրիկ ժողովուրդ մըն ենք մեծ իտեալներով: Դուն բարձրեն կուզաս: Դուն շառավիղն ես ցեղի մը, որ իր սոսկավիթխար ուժով կողորդացնէ աշխարհը: Արդ, ինչպե՛ս կսիրես զիս, իմ խեղճ, խե՛ղճ Յաննիս:

Եվ ինչո՞ւ կնախընտրես դժբաղդ ըլլալ ինձի հետ, քան երջանիկ՝ ուրիշի մը կողքին: Ինչո՞ւ որպէս ամուսին չնախընտրել մեծ արոյունաբերող մը իր գոր-

ծարանին հսկա ծխնելույզներով, ուրիշ մը՝ ոսկի ուսադիրներով և գոտիին արծաթե սուրով, կամ ուրիշ մը, ուրիշ մըն ալ...

Ահա գարնան նաշխուն թռչնակ մը կթառի պատուհանիս առջև սիրո գողտրիկ երգ մը կտուցին... Այնպիսի տեսք ունի, կարծես ծաղրի կառնե թե՛ հսկա ծխնելույզները և թե՛ ուսադիրները ոսկի: Ինծի կթփի, թե «Սե՛ր, սե՛ր» կճռվողե... Այո՛, Սե՛ր, Սե՛ր: Եվ ես այն տպավորությունն ունիմ, թե քու հոգիդ է այս զարմանազեղ թռչնակին մեջ, և որ դուն ես եկած ինծի մնչելու, որ ես այլևս պետք չէ գրեմ ո՛չ հսկա ծխնելույզներու, ո՛չ ալ ոսկի ուսադիրներու մասին:

«Սե՛ր, Սե՛ր...» — կերգես դուն ինծի:

Օհ, այո՛, Յաննի՛ս, Սե՛ր, Սե՛ր:

Ուրեմն ինչո՛ւ կչարջրկեն մեզ այսպես: Ինչո՛ւ այսքան դժվարություններու կենթարկեն մեզ: Ինչո՛ւ մեզ կիյուծեն ու կարյունեն մեր սիրտը: Մեր մե՛ղքն է միթե, որ ճանչցանք իրար ու սիրեցինք: Ո՛վ է մեղավոր: «Մեղավոր»-ը այն անծանոթ ուժն է, որ մեզմե ամեն մեկը առաջնորդեց դեպի մյուսը: Նույն վայրկյանին, որ տեսանք իրար, սիրահարներ էինք արդեն: Կայծակի հարված ըլլար կարծես: Այդ վայրկյանն է ի վեր անցած բոլոր երկար տարիները, ոսոխի թունավոր նետերուն պես մեր կուրծքը խոցող բոլոր թշվառությունները, բոլոր անարգ խոչընդոտները, զոր մենք հաղթահարեցինք զազիր ճահիճներու նման, այս բոլոր ծառայեցին միայն մե՛կ բանի. սաստկացուցին մեր սերը սիրո մեր անբասիր իտեպիին հանդեպ... Եվ մենք կբարձրանանք ու կբարձրանանք... Քանզի վստահ ենք, որ օր մը պիտի հասնինք ձյունածածկ գագաթներու հավերժական շլացքի սպիտակափայլ մաքրության...

Յաննի՛, ես քեզ «խեղճ» կոչեցի: Ես նո՛ւյնքան խեղճ եմ, ինչքան դուն: Բայց զիս մխիթարողը իմ անսասան հույսն է, թե պիտի հաջողիմ օր մը երջանիկ, երջանիկ դարձնել քեզ... Երջանիկ, ինչպես տվեցյան լույսը, երջանիկ, ինչպես գարնան ծաղիկն ու թռչունի մը երգը... Օհ, երջանիկ պիտի դարձնեմ, ավելի երջանիկ, քան երջանկությունն ինքը... Եվ այն ատեն դուն սիրո սաստկութենն պիտի խենթենաս, շնչելով բույրը մեր երանավետ ամուսնական կյանքին, ուր պիտի թնդան բերկրության երգեր և անվերջ կրկնվող համբույրներու շշուշներ...

Հիմա, երբ կգրեմ այս տողերը քեզի, պատուհանիս առջև երկու հայ ընտանիքներ հանդիպեցան իրարու: Մեկը մեծ նկարիչ Տամատյանն է իր ֆրանսուհի կնոջ հետ (որ ժամանակին Փարիզի օփերայի երգչուհին էր և Առեյինա Փաթթիի մրցորդը): Անոնք այնքա՛ն ծեր են, այնքա՛ն ծեր: Ամուսինն մեծ հարստության շնորհիվ իրենց ամբողջ կյանքը անցուցին աշխարհի չորս անկյունները և հիմա կհանգստանան Լեմանի ափին վրա: Երջանի՛կ ծերություն:

Մյուսը գիտնական, ժընեցի նախկին դասախոս, Լոզանի հայկական ճեմարանի տնօրեն Նալպանտյանն է (հայ), որ Լոզանի մեջ հիմա կիրատարակե հայերեն գիտական լրագիր մը: Ամուսնացած է շատ ազնիվ ու շատ խարտյաշ հոլանտուհիի մը հետ (թագավորական գերդաստանեն):

Եվ այստեղ վար կընեն գրիչս, նամակս շարունակելու համար երկուշաբթի, կեսօրեն ետքը, քանզի ահա բարեկամներս դեպի սենյակս կուղղվին:

Երկուշաբթի

«Շատ ազնիվ և շատ խարտյաշ հոլանտուհի մը» կըսեի քեզի: Եվ ահա անոնք կահ-կարասիի բոլոր պատրաստությունները տեսեր են արդեն և իրենց երկու մանչուկներուն հետ այս ուրբաթ Կոստանդնուպոլիս պիտի մեկնին: Բարի՛ երթ...»

Բայց դեռ այս չէ բոլորը: Ահա ուրիշ զույգ մըն ալ: Շատ գեղեցիկ հայ երիտասարդ մը հինգ տարիէ ի վեր նշանված էր լոզանցի սիրունիկ աղջկա մը հետ: Բոլորը կըսեին, թէ երբեք չեն ամուսնանար: Բայց ահա քանի մը օրեն ճամբա կելլեն դեպի Կովկաս (Թիֆլիս): Լոզանի մեջ նշանտուքի իրենց վերջին օրերը հաճելի անցնելու համար մեքենայով կսուրան, և ես պատուհանես երջանկութենեն ճառագայթող իրենց դեմքերը տեսնելով, մեծ հաճույք կըզգամ: Երանելի՛ ամուսնություն: Մանավանդ աղջիկը երջանիկ կերևի: Աչքերուն մեջ արտասովոր փայլ մը կա: Արար աշխարհին կըսե կարծես. «Ահա տեսե՛ք, ես երջանիկ եմ, երջանի՛կ...»

Եվ դուն, աղվորիկ Յաննի՛ս, պիտի գա օր մը, երբ ա՛լ ավելի երջանիկ պիտի ըլլաս, հպարտ, հրեշտակային, ճառագայթուն, քաղցր, այնքա՛ն քաղցր:

Եվ բոլոր ֆիզիքական անհանգստությունները հրաշքով մը պիտի անհետանան, և անկարելի երջանկության անհուն արբշռանքի պիտի վերածվին բոլոր տխրություններդ ու տժգունությունդ:

Սիրելի՛ս, երկնային հա՛րսս, երբ օրը տարածամի, երբ իրիկունը իջնէ, և երբ մենակ զգաս դուն քեզ աշխարհիս երեսին, սրտիդ անհունության մեջ շատ փոքրիկ հույսի մը նշույլով, ինչպես կրակի կայծ մը մոխիրներու շեղջի մը մեջ, այն ատեն, Յաննի՛, մտածէ իմ մասիս... Մտածէ, որ կսիրեմ քեզ և որ կաշխատիմ, կապրիմ ու պատրաստ եմ մեռնելու քեզի համար...

Ո՛վ ենք մենք: Երկու տկար արարածներ աշխարհի հանդեպ: Այդ ինչպե՛ս կհամարձակինք մարտնչիլ իրապաշտ բնության, մարդոց, ամեն բանի դեմ: Ըսե, վսեմ չե՛ միթե այս սերը: Փոխանակ հուսահատելու, մենք ավելի ու ավելի կհուսանք: Մարդկային օրենքին ենթարկվելու տեղ, կուզենք հասնիլ խոտեփին:

Երախտապարտ եմ քեզի, օ կյանքի քաջարի ուղեկի՛ցս: Տո՛ւր ձեռքդ, որ անհուն բարեկամությամբ սեղմեմ և անհուն սիրով համբուրեմ զայն...

Օրհնյա՛լ ըլլաս դուն:

Քու Ռուբինայ

Ապրիլ 25, 1909

Յաննիս,

Շատ երջանիկ եմ այսօրվան գորովոտ նամակներուն համար: Ահա, վերջապես, կդադրեցնես սաստերդ: Այնքա՛ն կսիրեմ, երբ զվարթ ռճով կգրես ինձի:

Նախ. ըստ հնարավորին շուտ դրկե լուսանկարները: Կուզեմ զանոնք ցույց տալ ազգականներուս, որոնք այստեղ են, բայց քանի մը շաբաթեն կուղևորվին:

Շատ գոհ եմ որ, վերջապես, կհետևիս խոհարարության դասերուն: Բայց ինձի տարօրինակ կթվի, երբ «կերակուրները» չափազանց արձակունակ կկոչես: Ինչո՞ւ արձակունակ, Յաննի՛: Իհարկե գեշ խոհարարությունը արձակունակ է, սակայն համադամ խորտիկները (երբ պաշտելի ձեռքեր կպատրաստեն զանոնք) ավելի քան բանաստեղծական են: Չե՞ս կարծեր:

Անշուշտ դուն չէ, որ պիտի աշխատիս մեր խոհանոցին մեջ: Բայց պետք է ամեն ինչ գիտնալ և լավ գիտնալ:

Շատ գոհ եմ նաև, որ առողջությանդ համար կուզես ուշադիր հետևիլ իմ երեք խորհուրդներուս: Չես կրնար երևակայել, թե ինչ մեծ օգուտ պիտի քաղես անոնցմե, և այդ ձևով մասնագիտական գործունեությանս մեջ իմ բժշկելիք առաջին հիվանդը պիտի ըլլաս...

Կհասկնա՛ս, թե ինչ երջանկություն է ինձի համար մասնագիտությունս քեզմե սկսիլը: Ի՛նչ բախտաբեր համայիլ և ի՛նչ փայլուն գործունեություն:

Ատացա փոքրիկ լուսանկարները: Բավական սիրուն են:

Դուն այնքա՛ն խելացի ես, պզտիկ Յաննի՛ս: «Ապացո՛ւյցը»,— պիտի հարցնես դուն: Ապացույցն այն է, որ նամակներուդ էջերը լեցնելու համար լուսնի չափ մեծ համբույրներ կդնես այնտեղ... Բայց չկարծես, թե կբարկանամ: Ոչ, ընդհակառակը: Չեմ ուզեր, որ ամբողջ ամիս մը դուն քեզ հոգնեցնես ընթերցանությամբ և նամակ գրելով: Ասոր համար է նաև, որ այս անգամ ես ինձի թույլ կոտամ գրելու քեզի չորս էջնոց այս փոքրիկ նամակը: Ներփակ կուղարկեմ նամակի պահարան-հիշատակ մը իմ վենետիկյան վերջին ուղևորութենես: Չեմ գիտեր՝ քեզ կհետաքրքրե՞, թե ոչ: Այս լուսանկարները քաշեցի Վենետիկի Սուրբ Մարկոսի հրապարակի սրճարանին մեջ սուրճս խմելու ատեն

(այդ հրապարակը նման է Լոզանի Սուրբ Ֆրանսուային): Այս առավոտ պատահմամբ գտա զանոնք ճամբորդական հագուստիս գրպանը:

Ինչպես կտեսնես, պարապ տեղը կշատախոսես: Այդ կնշանակե, որ գրեկիքի պակասեն կտառապիմ: Վերջացնենք, քանի որ մասնավոր նորություն չկա:

Կրետեի հարցը հետաքրքրական չէ մեզի՝ հայերու համար: Բազում աղմուկ վասն ոչնչի: Բայց վստահ կարելի է ըսել, թե թուրքերը երբեք չեն պատերազմի կղզիի մը համար, որ յոթը տարի առաջ ձեռքե գացած էր արդեն: Բայց ըսածս կբացառե Եվրոպայի մեծերուն ակործակը, քանզի անոնցմե ամեն մեկը պիտի ուզեր շահ մը ապահովիլ անկե:

Իսկ Պարսկաստանի խնդիրը կարելի է բարվոք համարել: Անոր գահին վրա բազմեցուցին յոթնամյա թագավոր մը, որ կըսեն, շատ կուլա իր գահընկեց եղած հայրիկին համար: Խեղճ կորած գլուխ: Եվ խեղճ ժողովուրդ: Եվ ես կմտածեմ բոլոր միապետներու մասին, որոնք իրենց ոտքին տակ միլիոնավոր հպատակներ ունին, զոր կրնան, ըստ քմաց, պատերազմի տանիլ կամ մահվան: Ինչ կատակերգություն: Մանավանդ ինչ ողբերգություն: Բարեբաղդություն է, որ մենք հասարակ մահկանացու ենք ծնած և ոչ թագավոր, այլպես ինչ կըըլար մեր սերը:

Սիրո բյուր համբույր քու Ռուբինսեդ:

Մայիս 9, 1909

Սիրելի և պաշտելի Նշանածս,

Նախ և առաջ ջերմագին բարևս հաղորդե Միննային որպես շնորհավորանք գթության քրոջ իր գործունեությունը ավարտելուն առթիվ:

Հետո, ահա քեզի հետաքրքրական պատմություն մը. երեկ և առջի օր հիվանդանոցին մեջ մեծ հաճույք զգացինք մեր մեջ ունենալով գերմանացի Ռուսանոզ մը, որ քննություն տվավ բժիշկ Ռուին: Միայն երևակայե, որ ուսանողը ավելի տարիքոտ էր, քան դասախոսը: Ամբողջովին լերկ էր գլուխը, հայելիի մը պես փայլուն, և ամեն հարցումին շեկ մորուքը ձեռքին մեջ կառներ ու կխորհեր ծեր փիլիսոփայի մը նման: Իսկ մեր մեծ Ռուն իր կարճիկ հասակով պզտիկ լակոտ մը կթվեր անոր կողքին: Եվ մեզ մեծապես կզվարճացներ կյանքի և իմացականության այս ակնառու հակադրությունը: Ռուն չափազանց ազնիվ գտնվեցավ անոր հանդեպ. թեև ուսանողը առջի օր ձախողեցավ քննության մեջ և միայն այսօր կրցավ տալ զայն, Ռուն հաճությամբ հանձնեց անոր վկայականը: Խեղճ մարդ: Մեկ ոտքն արդեն գերեզմանին մեջ է... Եվ մտածել, որ այդ տարիքին բժշկություն պիտի ընե դեռ, պիտի սիրե,

նշանվի, ամուսնանա և ահա արդեն մահը... (Անոր հետ բաղդատած՝ ես) ¹ միայն քիչ մը ավելի զգայուն եմ և ավելի գաղափարապաշտ: Ահա իմ ամբողջ տարբերությունս:

Բայց և այնպես կա բան մը միայն, որ կտխրեցնե գիս. ինչո՞ւ այդքան անծանոթ մարդիկ կրնան կարդալ ու ըմբռնել իմ ամենանուրբ զգացումներս, իսկ դուն զուրկ ես այդ երջանկութենեն: Քանզի բոլոր մարդոց շնորհավորանքները ոչինչ կարծես իմ աչքիս: Միայն դուն կարևորություն ունիս ինձի համար... Ուստի պիտի ուզեի, որ դուն ընդունակ ըլլայիր ճանչնալու հոգիիս բոլոր հույզերը (հոգիիս, որ քուկդ է, քո՛ւկդ), քանի որ չեմ կրնար արտահայտել ներաշխարհս ինձի բոլորովին օտար լեզուներով: Ո՛չ, անգամ մը որ միանաք, այս ամենը հիանալիորեն կարգի կդրվի, և պետք ալ չենք ունենար ֆրանսերենով (կամ ուրիշ լեզվով մը) բացատրվելու, քանի որ շատ լավ և միշտ կրնաք արտահայտվի... համբույրներով...

Եվ հիմա անցնինք ուրիշ խնդրի մը (զոր պիտի ուզեի բնավ չքրքրել):

Միրելի՛ս, առողջության վկայագրի պատմությունը սոսկալի տհաճ է ինձի: Արժանապատվության և հպարտության հարց կա այստեղ: Անծանոթ սինլքոր մը մայրիկիդ գրեր է, թե ես թոքախտավոր եմ, կոկորդի հյուծախտ ունիմ, թե ամբողջ տարի մը դարմանվեր եմ Լեյզենի բուժարանին մեջ և այլն, և այլն: Ես պատասխանեցի մայրիկիդ, թե բացարձակ զրպարտություն է այդ, բայց ան բնավ չուզեց հավատալ ինձի, կույրզկութայն կառչելով քանի մը տասնյակ մարք ստանալու համար այդ հրեշային սուտը հնարած անծանոթ տխմարի «իրազեկության»...

Սակայն ես ո՛չ անծանոթ մեկն եմ, ո՛չ թափառաշրջիկ, ո՛չ ալ թշվառական ոճրագործ, այլ ծանոթ, բարեկիրթ և ժողովուրդես սիրված անձնավորություն: Ես իմ անունն ունիմ և հպարտությունս:

Եվ քանի որ մայրիկդ վստահության նշույլ չուներ ինձի հանդեպ և կկարծեր, թե ես ստախտս եմ ու ոճրագործ (քանզի սոսկալի ոճիր է գիտակցաբար թոքախտով վարակել երիտասարդ աղջիկ մը), ես կրնայի ընել մեկ բան միայն. անմիջապես «մնաք բարով» ըսել և այլևս ոտք չդնել այդ տունը... Եվ այս որոշումը փայլակորեն հաճախեց ուղեղս, երբ մայրիկդ այդ բոլորը կթափեր աջես: Եթե որոշումս գործի չդրի, պատճառն այն է, որ չափազանց բարի սիրտ ունիմ: Քանզի իսկույն մտածեցի, որ եթե ես տեղվուն վրա և հավիտյանս երթամ, դուն անպայման սարսափելի խենթություն մը կընես և ընդմիշտ կդժբաղդացնես ընտանիքդ:

Եվ այսպես, իմ սեփական հպարտությանս և բնատուր բարությանս միջև

¹ Ենթադրյալ ընթերցում:

դժնակ պայքար մը մղվեցաւ: Եվ վերջ դնելու համար այդ ներքին անդոհանքին, մայրիկիդ խոստացա, թե վկայագիր մը կ'ներկայացնեմ թոքերուս մասին... Թեև ինծի տհաճ է այդ ակամա խոստումը, բայց պիտի կատարեմ զայն, որովհետև պատվո խոսք տվի: **Չորս տարի է**, որ ես բժիշկի չեմ գացած (ամբողջ կյանքիս մեջ միայն երեք անգամ եմ եղած բժիշկներու մոտ), ահա թե ինչու բնավ հաճելի չէ ինծի երթալ և ողջ-ամողջ թոքերս ի ցույց դնել դասախոսիս՝ Ռոփն առջև, որ, իրոք, արդեն իսկ քիչ մը բժիշկ ըլլալս նկատի ունենալով, բավական մը ծիծաղելի և ապուշ պիտի համարե զիս: Ահա թե ինչու այդ խնդիրը խիստ տաղտուկ կ'պատճառե ինծի:

Եթէ մայրդ նորեն պնդե, թե ես պետք է շտապեմ, դուն կրնաս իրեն կարողալ այս գրածս և ըսել, որ եթէ իսկապէս հիվանդ ըլլայի, իրմե ավելի կ'փութայի բժիշկի մը քով (քանզի կյանքս թանկ է ինծի): Իրեն ըսե նաև, որ եթէ անգամ մըն ալ էրֆուրտ գամ, իմ վկայագիրս ինձմե առաջ եկած կըլլա արդեն, և թե հիմա շատ շուտ է դեռ:

Օհ, Յաննի՛, **հոգնած եմ** այս **այնքան քիչ սիրալիք** հարաբերություններն, հոգնած եմ, շատ հոգնած... Մինչդեռ միշտ ուզած եմ սիրել զինքը հարազատ մորս պէս...

Վերջացնենք այս տխուր պատմությունը:

Եվ հիմա գանք բժշկության: Կհարցնես, թե երբ պիտի ավարտեմ ուսումս: Ըսեմ. ուսանողի կյանքս վերջ կ'գտնե տարիէ մը, Ծնունդին: Շուտ չէ՛: Գո՛հ ես: Այո, թե ոչ:

Կուզեի ավելի երկար գրել քեզի, բայց ժամանակ չունիմ: Պիտի գրեմ վաղն ալ, մյուս օրն ալ և միշտ, միշտ, մինչև մեր նվիրական միությունը, որ շուտով պիտի իրականանա:

Նամակիս շարունակությունը ներփակ բացիկն է, ուր պիտի գտնես սիրո ամբողջ խտեալն ու այն նրբագույն զգացումները, զոր կուզեի գրել քեզի: Արվեստագետը կրցած է խտեալի, Հեշտանքի և անհունության որպէս խորհրդանիշ միացնել իրար այս երկու բերանները...

Միայն ինծի կթվի, թե մենք ավելի **քնքշագին սիրով** կրնայինք միաձուլել մեր շրթունքները... Օհ՛ մեր համբույրներ՛րը, միշտ ավելի ու ավելի գորովանեով ու գրկանքով համբուրվելու մեր **ներքին մղումները...**

Քու հավերժական նշանածո և եղբայրդ՝
Ռուբինս:

Լոզան, մայիս 15, 1909

Օ՛ Յաննի, որ երագուն կդարձնես զիս,

Քու մասիդ կմտածեմ: Քանզի այս տարաբաղդ աշխարհին մեջ ոչինչ այնքան

քաղցր է, այնքան սփոփիչ, որքան թու, քո՛ւ, այսինքն՝ բոլոր արարածներն ամենաերկնայինի մասին մտածելը: Եվ արդարև, կկարծե՛ս, թե քիչ մը կչափազանցնեմ: Օ, ո՛չ: Որքան կմտածեմ, այնքան կսքանչանամ վրադ: Եվ որքան կհիննա մեր սերը, այնքան ընտիր կդառնա, ինչպես գինին (զոր կսմեմ հիմա կենացդ), որ ժամանակի ընթացքին գերազանց որակ կստանա: Ի՛նչ կըսես ասոր:

Թանկագին սիրեցյա՛լս, իսկապես բացառիկ է և հրաշալի մեր սերը: Կըսեն, թե հրաշք գոյություն չունի: Բայց մեր սերը հրաշք մըն է միայն:

Հրա՛շք: Ահ, այո՛: Առանց այս սիրո դուն թերևս մեռած ըլլայիր արդեն: Իսկ ես: Համենայն դեպս եթե ես կապրիմ հիմա, պատճառն այն է, որ երկրորդ անգամ ծնա: Եվ այդ «երկրորդ անգամ»-ը իմ վերջին ուղևորությունս էր դեպի էրֆուրտ: Մեռած էի և ծնա: Մեր սերն էր, որ սպաննեց զիս և մեր սերն էր, որ վերստին ծնավ... Եվ մի՛թե հրաշք չէ ասիկա: Ըսե, հրա՛շք սիրելի:

Կմտածեմ այսօրվան բացիկիդ մասին, լեցուն տարփանքով, լեցուն խենթ սիրով: Ի՛նչ ընեմ, Յաննի՛ս: Ես անզոր եմ որևէ բան ընելու: Դուն կուզես տեսնել զիս: Տեսնելը շատ քիչ է: Դուն կուզեիր համբուրել զիս: Համբուրվիլը շատ քիչ է: Կուզեիր խոսիլ, խոսիլ, խոսիլ կամ, ավելի շուտ, լռել, ոչինչ ըսել, այլ մնալ կողքիս օրն ի բուն, հետո՞ գիշերն ի լույս, հետո դարձյալ օրն ի բուն, հետո՞ հավիտենություն մը ամբողջ, մինչ ի մահ և մահեն ալ անդին...

Օհ, Յաննի՛, կարելի՞ է միթե, կարելի՞ է միթե այսքան երջանկություն... Այս մասին մտածելն իսկ բավ է, որպեսզի մեռնիմ, որպեսզի հառնեմ սիրահեղջ մահվան, կենդանարար մահվան երազանքին մեջ... Քանզի դուն ավելի հզոր ես, քան Կյանքն ու Մահը և ավելի քաղցր, քան երջանկությունը...

Եվ մենք կթիավարենք, միշտ կթիավարենք դեպի Ընտանեկան երջանկության ափերը... Կթիավարենք, դուն ու ես՝ Յաննի Ապպել (շուտով՝ Չիլինկ) և Ռուբեն Չիլինկ:

Մայիս 20, 1909

Սիրելի Յաննի,

Ներփակ կուղարկեմ նամակ մը, որ ամսույս 15-ին գրված է «Կյուծել» պանդոկին մեջ: Կկարծեի, թե արդեն ղրկած եմ զայն, բայց այսօր բաճկոնիս զըրպանեն ելավ: Թեև շատ հին է, բայց և այնպես կարդա զգալու համար... գինիին ներգործությունը:

Սիրելի՛ս, շնորհակալ եմ շատ սիրուն բացիկներուդ համար: Սակայն բացառապես անգամ մը կմտածեմ բարեմտորեն պզտիկ ապտակ մը տալ քեզի: Դուն շատ անհամբեր կդառնաս և ջղային կընես զիս... Առաքումներդ կարդալես

ետքը այլևս չեմ կրնար բժշկական գրքի երեսը տեսնել. չափեն ավելի կջերմանա սիրոս: Պզտիկ սիրելի՛, այնքան ալ անհամբեր մի՛ ըլլար, կուգա օրը և կհասնինք երջանկության: Բայց հիմա կրնանք սպասել տակավին:

Դուն ինքդ գրեր էիր... (1) ... մխիթարություն ես գտած...

Յաննի՛, ուրեմն կուզես անպայման զիս տեսնել: Բայց ինչպե՛ս, աղվո՛րս: Մի՛թե այդքան երախա ես: Անկարելի է: Կվտանգենք մեր ապագա ամբողջ երջանկությունը: Ամեն բան տակնուվրա կըլլա: Սիրահարի խենթություն է, կըսես: Շատ կսիրեմ այդ խենթությունը, բայց պետք է մտածել, պետք է միշտ կշռադատել: Պարանով իջնելէ առաջ պետք է ի մտի ունենալ, որ պարանը կըրնա փրթիլ... Այն ատեն ի՛նչ... Մեր ապագա երջանկությունն այնքա՛ն ծանր է, իսկ մեր միջոցներուն պարանն այնքա՛ն բարակ, որ վերջինս կրնա փրթիլ... Ջգո՛ւյշ:

Եվ հետո, դուն այդքան անհամբեր ըլլալու իրավունք չունիս: (Իհարկե ունիս, բայց ինծի կիյնա այսպես ըսել...) Քանզի ես այնքա՛ն կսիրեմ քեզ, որ հոգիով միշտ կփոխադրվիմ քովիկդ:

Բայց ահա տխուր դիպված մը պատահեցավ... շրթունքներուս: Անցյալ օր Կոստանդնուպոլսէն հայ բանաստեղծ մը ինծի այցելելու եկավ Լոզան: Երեկ ժամը 6. 30-ին մեկնեցավ Փարիզ (անկէ ալ՝ Նյու Յորք): Կայարանին մեջ, ըստ մեր անհարկի սովորության, համբուրվեցանք... Եվ քու համեղ շրթներուդ դրոշմը անհետացավ... Թեպետ շատ կսիրեմ այդ բանաստեղծը, սակայն չափտի ներեմ իրեն...² որ ամեն օր երեք ժամ գրեթե... կմեռնիմ:

Այսօր պիտի երթամ մազերս կտրել տալու: Գլուխս ուղղակի կրակներուն մեջ կայրի: Իսկ երբ գլուխդ կրակներուն մեջ կայրի, և երբ ամեն օր կրակ ու բոց նշանածե մը կրակէ բառեր կստանաս, սերը պարզապես կրակարան կդառնա:

Ուրեմն, ահա քեզի բոլորովին պաղ, բոլորովին պաղ համբույր մը, որպէսզի... զովանաս:

Երեքշաբթի, մայիս 25, 1909

Իմ խեղճ պզտիկ սիրելիս,

Այսօր ստացա զմայլելի նամակդ: Քիչ է «զմայլելի» բառը: Ֆրանսերենը չունի բառը մը, որ արտահայտէ այս արտասովոր նամակին գեղեցկությունը:

¹ Անընթեռնելի

² Անընթեռնելի

Յաննի՛, դուն այնպես կընես, որ ես երջանկութենես կբրջամ և տխրութենես կարտասվեմ: Ինչո՛ւ կուզես այսպես տանջել զիս: Չե՛ս գիտեր, որ չափազանց դժբաղդ եմ քեզմե հեռու: Դուն զիս կրակ ու բոցի կվերածես: Ահ, Յաննի, կինդրեմ, սիրելի՛ս, այդ վտանգավոր խաղը մի՛ խաղար գլխուս: Մի՛ մոտեցներ կրակը վառողին, որ կրնա բոցավառիլ, կրնա պայթիլ: Զգո՛ւյշ: Սուկալի է այն զոր կփորձես:

Անկեղծորեն, չեմ հասկնար այս հանկարծահայտ փոփոխությունը: Դուն այնքան տոկուն կամք ունեիր, այնքան կորովի դատողություն, այնքան հեզ էիր ու համբերատար ապագայի հանդեպ, այդ ինչպե՛ս եղավ, որ «Մայիս ամիսը» կրցավ խորտակել բոլոր ուժերդ, հոգեկան թափդ, ամբողջ ողջամտությունդ, ամեն ինչ, ամեն ինչ: Դուն այնքան դյուրին պարտվեցար... Ավա՛ղ, Յաննի՛, ես շատ, շա՛տ լավ կհասկնամ հոգիդ, որպեսզի ամեն բան ներեմ անոր: Կհասկընամ, թե ինչպես Բնության խոլ պոռթկումն ու հրայրքը և սիրույդ խենթությունը հաղթեր են սիրահար թռչունի փոքրիկ սրտիդ... Ահ, այո՛, միշտ դուն ես, որ իրավունք ունիս, և միշտ ես եմ, որ կուզեմ պարտկել ճշմարտությունը: Եվ ճշմարտությունն այն է, որ մենք իսկապես չափազանց կսիրենք զիրար կարենալ հանդուրժելու համար քաղաքակիրթ մարդկության տխմար պահանջներուն, օրենքներուն, կարգ ու կանոնին: Քանզի (պետք է նաև խոստովանիմ քեզի) չեմ կրնար ըմբռնել, որ մարդիկ կանոններ են հնարած սիրո համար: Բայց ինչպե՛ս կարելի է օրենքներու և ծրագիրներու ենթարկել վայրի թռչուն մը, որ կճախրե ոլորտին մեջ... Սերն է այդ վայրի թռչունը: Ինչպե՛ս մարդիկ ըստ բավականին հիմար են եղած Սիրույն նախօրոք օրենքներ սահմանելու համար... Եվ քու վայրի հոգիդ կըմբոստանա: Դուն կնայիս Բնության, կհասկընաս, կսիրես զայն, կուզես նմանիլ իրեն, երթալ հեռու, հեռու, հոն, ուր սիրահարի ոտքերդ բնազդաբար կառաջնորդեն քեզ, հեռու, դեպի այն եակը, որ կսիրե քեզ և նույն պահուն կմտածե քու մասիդ... Օ, ինչո՛ւ այս կյանքը: Ինչո՛ւ այս անհեթեթ կանոնները, դաժան խոչընդոտները, ընտանեկան օրենքները, զրկանքները: Ինչո՛ւ խույս չտալ ընդմիշտ նետվելու համար քեզի երկարած թևերուն մեջ: Ինչո՛ւ ահուղողի, զրգռություններու, տագնապներու, չարչարանքներու, արցունքներու այս կյանքը, երբ այնտեղ, հեռուն, շրթունքներ կան, որ ծարավի են քեզի... Ինչո՛ւ այս բոլոր մարդկային հիմարությունները: Ինչո՛ւ թաքցնել Բնությունը: Ինչո՛ւ երկաթե ծանր շղթաներ դնել մարդու ոտքերուն... Հեռուն, հեռուն քեզ կսպասեն գզվանքներ, համբույրներ, հեշտանքներ, սիրային հանկուցիչ գիշերներ՝ ամբողջ երջանկությունը... Դուրս կնայիս. գիշերը սիրո արբշտությամբ է տոգորուն, ազատ են թռչունները, ծաղիկները երջանիկ են կարծես. ի՛նչ քաղցրագին է ամեն բան... Եվ դուն կմտածես հեռավոր սիրույդ մասին, որ ավելի՛ է քաղցրագին... Կմտածես ու կուլաս... Կուլաս, և քեզի բրոմ կուտան...

Հ. Գ. Շնորհակալ եմ լուսանկարներուն համար, որ շատ լավ են և շատ զվարթ:
Համբույր մը:

Չորեքշաբթի առավոտ
[1 հունիսի, 1909]

Սիրելի՛ս, երեկ տխրորեն քեզի հաղորդելէ ետքը զգացումներս, հիվանդանոց գացի: Գիշերվան մեջ Դժբաղդության այդ տունեն ավելի տխուր բան անկարելի է երևակայել: Այս միտքը միաժամանակ տրտմեցուց զիս և մխիթարեց. մտածեցի քու մասիդ, որ կարտասվես սիրահարի փոքրիկ սենյակիդ առանձնության մեջ և մարդկային էակներեն ամենադժբաղդը կկարծես քեզ... էի, սիրելիս, ո՛չ. ես տեսա հարյուրավոր շատ ավելի դժբաղդ մարդիկ, որ հեռու իրենց հոգեհատորներեն, երկար գիշերվան մթության մեջ կտառապին միասին, լուռ վկաները դառնալով ամեն օր իրենց աչքին առջև մեռնողներուն, որոնք բարեկամ հոգի մը անգամ չունին իրենց կողքին, անոր ձեռքը սեղմելու և մեծ «Մնաս բարով»-ը շշնջելու համար... Սոսկալի՛ մահ ապրողներու հսկա գերեզմանոցին մեջ... ժամը ինն էր իրիկվան, երբ ես ներս մտա: «Իսկ ինչո՞ւ»,— պիտի հարցնես դուն: Հիվանդի մը սնարին հսկելու համար: Ահա այդ հիվանդի պատմությունը.

Կովկասահայ դասախոս մըն էր ան, որ սարքոմ (քաղցկեղի բույրը) ուներ ողնաշարին մեջ: Հինգ տարի շարունակ սարսափելի տառապեր էր: Եղեր էր բոլոր նշանավոր բժիշկներու և վիրաբույժներու մոտ: Անոր նիհարությունը տեսնելով չէին համարձակած վիրահատել: Բժիշկ Ռուն ըսավ, թե ինքը հոժար է վիրահատելու, բայց չի կրնար երաշխիք տալ, որ հիվանդը, թմրադեղի ազդեցությունը թոթափելով, ի վիճակի կըլլա արթննալու նման վիրահատութեն մը հետո: «Մտածեցե՛ք»— ըսավ անոր: Ի՞նչ մտածել, երբ այնքան մոտիկ ես մահվան ու այնքան հեռու ընտանիքեդ, երբ, դողդոջուն, գրեթե դիմացն ես հավերժական Խավարին, ալ ո՛ւժ կունենաս մտածելու...

Մենք ալ մտածեցինք, մենք՝ Համալսարանի բժշկական բաժնի հայ ուսանողներըս, և համաձայն եղանք վիրահատության:

Վերջին պահուն, շրջապատելով զինքը, կխոսեինք, նույնիսկ կծծաղեինք (ցույց տալու համար, որ այնքան ալ վտանգավոր բան չկա), երբ վիրահատական կառքը եկավ, և հիվանդը դրին վրան: Ես կյանքիս մեջ այդքան տակնուվրա չէի եղած... Այնպես գույնը նետեց ու տժգունեցավ, կարծես գերեզման իջեցուցին իրեն... Եվ մեղմորեն լացավ. «Երեկ,— ըսավ,— մահճակալիս կող-

քին ծեր հիվանդ մըն էր պառկած, գիշերը մեռավ, և որևէ մեկը չկար քովը: Ես անոր պես պիտի մեռնիմ...»: Արցունքի կաթիլներ հոսեցան աղ-պղպեղ մորուքին մեջ: Գրկեց մեզ. «Մնաք բարով, մնաք բարով...»:

Վիրահատությունը տևեց մեկ ժամ: Ես ներկա էի: Անգամ մը իր շնչառությունը կանգ առավ, հիվանդը մեռավ գրեթե: Արհեստական շնչառությամբ կյանքին վերադարձուցին զինքը և վիրահատությունը շարունակեցին: Ռուն ինքն ալ շատ էր հուզված. ձայնը սաստիկ կողողար: Ըսավ, թե իր կյանքի ամենադժվար վիրահատությունն է ասիկա: Մեծկակ նշտրակներ, սղոցներ, մուրճեր ոսկոր սղոցելու և ջարդելու համար... Մեկ ժամ աշխատել էտքը Ռուն գետին նետեց հիվանդին մեկ ոտքը, ինչպես նաև մաս մը կռնակեն... Շատ տխուր էր տեսնել գեղեցիկ մեծ սրունքը, որ վայրկյան մը առաջ կենդանի էր, կզգար, կցավեր, կապրեր վերջապես, իսկ հիմա՝ բաժնված մարմնեն, բաժնված կյանքեն, գետին նետված...

Ոտքը կտրված էր, բայց մարդը՝ փրկված...

Այս հիվանդին վրա հսկելու համար է, որ երեկ իրիկուն հիվանդանոց գացի: Քովը, աթոռի մը վրա նստած՝ աչքս վրան պահեցի ամբողջ գիշեր: Այնքան գունատ էր, այնքան անվրդով ու անշարժ, որ կվախնայի, թե կմեռնի: Բայց առտուն բացավ աչքերը, նույնիսկ թեթևակի ժպտեցավ: Դուրսը արշալույսի առաջին շողերը կասղնտեին կիսամուրթ, կերգեին թռչունները, Կյանքն էր...

Շուրջս բոլորը տառապյալներ էին, վիրահատվածներ, որոնք, դժոխային ցավերու մեջ, կպոռային, կխորդային ամբողջ գիշեր, որ երկար էր, երկար, երկար... Մեկուն ոտքն էին կտրած, մյուսին գլուխը վիրակապերով էր փաթթված, երրորդը ենթարկված էր ստամոքսի վիրահատության, չորրորդը հրացանի հարված մըն էր ստացած թևին, և ահավոր էր լսել, թե ինչպես բոլորը, անկողնին գամված՝ կհառաչեին և Աստված կկանչեին:

Եվ ես հոն էի, աթոռիս վրա, ջարացած, դալկադեմ, առողջութենես և երջանկութենես ամոթահար: Քանզի միակ երջանիկն էի և միակ առողջը այդ երկրային դժոխքին մեջ... Եվ երկարորեն մտածեցի Կյանքի, Մարդու, Դժբաղդության, Ճակատագրի, կարծեցյալ Քաղաքակրթության, Եսասիրության, մութ ու անարդար Աստուծո և Մահվան, Մահվան մասին: Իսկ շուրջս կտառապեին, հուսահատական խուլ ճիչեր կարձակեին, ինչպես խավարչտին գիշերով պատած մարտադաշտի մը մեջ, և կսպասեին մահվան, որ կուշանար... Բայց ահա տակավ պատուհանները ճերմկցան, թռչունները արթնցան միահամուռ: Հեռուն կտեսնեի արդեն Ալպյան լեռները, երջանիկ ու լուսահեղջ: Ավելի հեռուն, շատ ավելի երջանիկ ու լուսահեղջ, կտեսնեի անորոշ պատկեր մը կարծես... Այդ պատկերը Հույսն էր, իսկ Հույսը՝ Դո՛ւն...

Ռուբինս

Սիրելի և պաշտելի Յաննի, Նշանա՛ծս,

Այս առտու ստացա նամակդ, շատ շնորհակալ եմ: Վստահ եղիր, որ ի՛ սրտե կսիրեմ և միանգամայն կհավատամ բոլոր ըսածներուդ: Ուրեմն՝ վերջ տանք այդ տաղտկալի երգին: Ըսենք՝ «ամոթ» էր, և անցնինք: Անգամ մը արդեն ըսած եմ քեզի, թե ինչ կմտածեմ այդ մասին, այլևս ավելցնելիք ոչինչ ունիմ: Քանզի դուն խելացի ես (և ինձմե ավելի) և ինքդ կրնաս կշռադատել: Մնաս բարո՛վ, միալար ե՛րգ...

Սիրելի՛ս, վերջերս շատ հոգնած կերևիս: Ահա արդեն երկու շաբաթե ի վեր կա՛մ բացիկով քանի մը բառ կուղարկես, կա՛մ հազիվ չորս էջնոց նամակ մը: Մնաք բարո՛վ, անցյալ տարվան քսան էջնոց նամակնե՛ր... Ըստ երևույթին ամեն ինչ հոգնեցուցիչ է, նույնիսկ սերը... Ես ստեպ կգրեմ քեզի և եթե ավելի հաճախ չեմ առներ ձեռքս գրիչը, պատճառը լուրջ զբաղումներս են: Դուն գիտես՝ հիվանդանոցը թե՛նիսի պես բան չէ, չե՛ս կարծեր: Մյուս կողմեն բոլոր առեւելի ջարդերը զիս այնքան տխրեցուցին, որ ինձի համար նողկալի է երգե-րու մասին մտածելը... Վերջ ի վերջո դուն այնքան ալ մեղավոր չես: Մեղավորը բարձրաշխարհիկ ընտանիքներե սերած այն ազնվական պարոնայք են, որոնք փողոցին մեջ կրնան ուղղակի մոտենալ, ցերեկը ծանոթություն հաստատել և կտիություններ երգել գիշերը...

Աղվո՛րս, դուն ինձի «հազար արցունքաշաղախ համբույր» կուղարկես... Չեմ գիտեր ինչո՛ւ համար է այդ առաքումը: Ես բնավ վշտացած չեմ քեզմե: Բնավ: Դուն պետք է վստահ ըլլաս, շա՛տ վստահ, Յաննի՛ս: Սակայն քեզի գրած էի, թե պետք է լավ կշռադատես, ըլլաս հպարտ, չափազանց հպարտ և հարաբե-րություն չունենաս ո՛չ ապուշներու, ո՛չ տմարդիներու, ո՛չ ալ անբաններու («արքունական խեղճերու» հետ, ինչպես կըսես): Ահա իմ ցանկությունս:

Բնավ չկարծես, թե նախանձությունը մտքեր է հարուցած մեջս: Բնավ: Բայց ես այնքան լավ կճանչնամ այդ մարդիկը, երիտասարդներն ու անոնց ամբողջ ներաշխարհը, որ կուզեմ մերթ ընդ մերթ քեզի ցույց տալ չարն ու բարին և գործնական կյանքի մասին որոշ դատողություններ ընել: Քանզի մինչև հիմա դուն կյանքը ճանչցած ես միայն դպրոցի, գրքերու, վեպերու, թատրոնի, սիրո և իտեալի մեջ... Արդ, քու մտածողությունդ մաքուր է, բարձր, վսեմ, հողեն ու մարդոցմե շատ վերացած... Սակայն կյանքը երազ չէ, կյանքը գործնական է և երբե՛ք իտեալական: Եվ պետք է որ դուն քիչ մը ճանչնաս գործնական կյանքը: Կո՛ւզես, սիրելի՛ս: Ուրեմն՝ լսե՛. դուն ինձի գրեր էիր մենամարտի կա-պակցությամբ և առանց սպասելու իմ պատասխանիս, արդեն գայն առաջարկեր ես «ոչխարին»... (Առաջին անխոհեմություն): Պետք է ո՛չ խոսեիր այդ լըր-ճուկներուն հետ, ո՛չ բարևեիր զանոնք, ո՛չ ալ անոնց ներեիր այդքան ծանր նախատիք մը, մինչդեռ դուն առաջարկեր ես, որ Սթյուկկենը քեզմե ներո-ղություն խնդրե... (Երկրորդ անխոհեմություն): Պետք է գիտնայիր, որ նշան-

ված սիրահար աղջիկ մը ուրիշ պաշտպան չունի, բացի զինքը սիրող նշանածեն: Բայց «ոչխարը» զիս փոխարինեց քու կողքիդ, ըսելով, թե ավելի լավ է մենամարտիլ...» (Երրորդ անխոհեմություն): Գիտեիր, որ թագավոր մը երբեք չի խնդրեր իր խենթեն մենամարտիլ իր փոխարեն: Գիտեիր նաև, որ երգելու այդ խայտառակությունը ամոթալի գաղտնիք մըն էր, դուև զայն չուզեցիր հայտնել նույնիսկ ծնողքիդ, մինչդեռ ըսիր «ոչխարին»... (Չորրորդ անխոհեմություն) Բայց գիտեիր, որ ամեն մարդ բարեկամ ունի և բարեկամն ալ՝ բարեկամ... Այսպիսով, ապուշ «ոչխարը» անպայման պիտի ըսե իր բարեկամին, թե ամոթալի երգ մըն են երգած քեզի, և թե դուև խնդրեր ես իրմե մենամարտիլ... Բարեկամը պիտի հայտնե իր բարեկամին, ուստի բոլորը ծածկաբար պիտի իմանան պատմությունը, զոր ոչ ոք պետք է գիտնար... (Վերջին և մեծագույն անխոհեմություն):

Այս բոլորը այնքան պարզ, այնքան բնական ու անժխտելի հետևություններ են, որ ա՛լ չեմ ուզեր քննության առնել զանոնք:

Սակայն պետք է միշտ կշռադատել, կյանքին մեջ փիլիսոփայություն մը ունենալ:

Բայց մի՛ կարծեր, թե ջղայնացած եմ վրադ: Երբե՛ք, երբե՛ք: Գիտեմ, որ չափազանց խտեալական ես դուև, իսկ մարդիկը՝ չափազանց չար ու երկրային: Գիտեմ, որ, եթե կողքիս ըլլայիր, բնավ նման բաներ չէին պատահեր:

... Դեռ կուլա՛ս դուև: Բայց կտեսնես, որ ամեն բան կներեմ քեզի, սիրելի՛ս: Արցունքներովդ տաղտուկ մի՛ պատճառեր ինձի. անոնք տխուր նվերներ են: Ես, ընդհակառակը, կուզեմ սիրային նամակներուդ ընդմեջեն տեսնել ժպիտդ:

Պաշտելի հրեշտակ, ըսե ծննդյան տարեդարձդ հունիս 16-ին: Բարեհաճ եղիր շուտ պատասխանելու այս մասին:

Գրե նաև, թե լավ կվարձանա՛ս: Գրե մանավանդ առողջութենեդ, զբաղումներեդ, ընթերցումներեդ, օրերեդ ու գիշերներեդ, մեկ խոսքով՝ քեզի վերաբերող ամեն ինչե:

Եվ, գիտե՛ս, ոչինչ գրեցիր ինձի, թե ինչպես երգեցիր համերգին: Ի՛նչ շուտ կմոռնար: Մեծ հաջողություն ունեցա՛ր: Քիչ մը կվախնայիր, չե՛ առաջին անգամ հասարակության առջև երգելեն:

Ներփակ պիտի գտնես Կոստանդնուպոլստ երիտթուրքական բանակի պատկերը ներկայացնող երկու հին բացիկներ, զոր Հրանդն ու Լեւան դրկեր են քեզի ի հիշատակ իրենց անցուցած թատմնեցուցիչ օրերու: Պիտի գտնես նաև Ծուլլ կինը հյուրասենյակին մեջ գեղեցիկ բացիկը: Կուղարկեմ զայն քեզի, որովհետև իսկապես ծուլլ է դեմքի արտահայտությունը: Ի՛նչ կկարծես, քեզի նման չե՛, ծուլլ մժղո՛կ:

Երեկ գիշեր կյանքիս մեջ առաջին անգամ անչափ երջանիկ, անչափ երջանիկ երազ մը տեսա: Դուև ինձի սիրային նամակ մըն էիր գրած, և ամբողջ

Նամակը հայերեն էր, առանց որևէ ֆրանսերեն տառի... Եվ որքան երջանիկ էի և ինչպե՛ս մեկեն դուրս թռա անկողնես (այնքան տաք կընե, որ անկարելի է քնանայ), յուրովի ըսելով. «Ի՞ զուր չէր, որ Կոստանդնուպոլսեն և հետո՝ հայերեն բոլոր գիրերուն դասերը դրկեցի իրեն...» Բայց, ափսո՛ս, մամառային գիշերվան երազ էր միայն: Եվ ահա այս առավոտ ստացա այնքան տխուր և կարճ նամակդ...

Սիրելի՛ս, հաջորդ նամակիդ մեջ մի՛ մոռնար գրելու տարելիցիդ օրը:
Տոտեսություն, վազեմ հիվանդանոց, շատ ուշ է արդեն:

Քու Ռուբենդ

Հունիս 9, 1909

Քաղցր ու թաց աչքերուդ,
Նուրբ շրթներուդ
ամառնային հազար տաք համբույր:

Հունիս 14, 1909

իրիվան ժամը 6-ին
Վիլլա-Ռոզիթա, Լոզան

Պաշտելիս,

Եկո՛ւր թովս, թովիկս, այս փափուկ բազմոցին վրա (քու այնտեղի բազմոցը շատ ավելի փափուկ է), դիր գլուխդ ուսիս, և մենք միայն քանի մը վայրկյան կզրուցենք իրարու հետ: Նախ մեյ մը, եթե կհաճիս, չորս կողմդ նայե: Այնտեղ իմ մեկտեղանի մահճակալս է (ամեն գիշերվան շիրիմս), վերը՝ քու դիմանկարներդ: Սա՛՝ գրական և գիտական գրքերով լեցուն գրադարանս, վերը՝ դիմանկարներդ: Այստեղ՝ հայելին և բազմաթիվ հիշատակ-առարկաներ, որոնց մեջ՝ քու սքանչելի լուսանկարներդ: Այստեղ՝ իմ տխուր ու լուռ մանտոլինս, ասիկա՝ երազանքի բարձս, թիկնաթոռս: Եվ ամեն տեղ՝ օդին ու պահարաններուն մեջ, պատերուն վրա և սրտիս հազարավոր մանրիկ անկյունները և շրթներուս հազարավոր աննշմար ծալքերուն մեջ, ամեն տեղ՝ հիշատակներդ, համբույրներդ և սիրտդ, որ կթռչկոտի... Ահ, ինչպե՛ս կսիրեմ սենյակս, ուր քե՛զ կտեսնեմ միայն: Իսկ դուն որքան գոհ պիտի մնայիր, եթե անգամ մը գայիր ու տեսնեիր սենյակս: Ուրեմն՝ եկո՛ւր, ահա այսպես, կամացուկ, խելոքիկ (համբույրներու ճամբով), և մենք քիչ մը կզրուցենք:

Հիմա լսե, թանկագի՛նս:

Երեկ, կիրակի, Կոստանդնուպոլսեն ստացա արևելյան հողաթափերը, զոր պատվիրեր էի ծննդյան տարեդարձիդ համար: Միայն այնքան են նուրբ, որ

երկար ճամբու ընթացքին ավրվեր են քիչ մը: Ուրիշ պակասություն չունին: Կարվածքը այնքան ալ ամուր չէ, որովհետև գործարանի կամ կոշկակարի աշխատանքը չեն, այլ երիտասարդ աղջիկներու, որ **ձեռքով** կգործեն զանոնք: Վնասվածքը վերացնելու համար նրբաճաշակ կոշկակարի մը կուզեի տանիլ, բայց երեկ կիրակի էր, իսկ այսօր ահա կուղարկեմ քեզի: Ուրեմն՝ եթե հարկ սեպես, կրնաս պետք եղածը ընել տալ հոն՝ Էրֆուրտ: Ի դեպ, պետք չէ տուկունության ուշադրություն դարձնել, կարևորը անոնց տեսքն է, անոնց վրա թափված քմածին աշխատանքը: Ուստի, երբ հագուրդ տաս երազանքիդ, հազնելու ատեն մի՛ մոռնար, որ ես նախօրոք համբուրած եմ ոտքերուդ տեղերը...

Սիրելի՛ս, կուզեի ավելին դրկել քեզի՝ ամբողջ ունեցած-չունեցածս, այնքան որ կսիրեմ քեզի հաճույք պատճառել, բայց այս օրերը շատ են մեր ծախսերը:

Չար Յաննի՛, թեև դուն ծածկեցիր տարեդարձիդ ճշգրիտ ամսաթիվը, սակայն ես իմացա, որ հունիս 16-ին է, ամենայն վստահությամբ:

Արդ, կուզես, որ երկար-բարակ բարեմաղթություններ ընեմ տարելիցի այդ խորհրդավոր տոնի առթիվ: Ո՛չ, մաղթանքները հասարակ տեղիք, ծթած բաներ են: Ճշմարիտ, ամենախորունկ, ամենակարճ և նաև ամենաթանկագին մաղթանքը պիտի ըլլար պզտիկ, պտղիկ համբուրիկ մը...

Կուզե՛ս: Ձախ, թե աչ այտիդ, շրթներո՛ւդ, վիզի՛դ, ականջի՛դ (մեղուի բզզ-զյուն՝ բզզզզ...), գուցե թևիդ: Ո՛ր կուզես: «**Ամեն տեղ**»,— պիտի ըսես դուն: «Ոչ մեկ տեղ»,— պիտի ըսե բաղդը:

Օհ, շատ տխմար բան է այդ «բաղդ» կոչեցյալը: Ես լավ գիտեմ, բայց պետք է ենթարկվինք անոր: Բաղդը Աստվածն է ինքնին:

Եվ որքա՛ն անկարելի է համբուրել քեզ հիմա: Խոսք կուտամ քեզի (մի՛ մոռնար այս խոստումս), մեր Ամուսնութենեն ետքը ամեն տարեդարձիդ տոնին պիտի քեզ համբուրեմ գիշերվընե մինչև առավոտ...

Գո՛հ ես: Ալ ուրիշ ի՛նչ կուզես: Ի՛նչ: Կժպտի՛ս: Կհասկնամ քեզ: Կըսես. «**Հերիք չէ...**»: Ի՛նչ: **Հերիք չէ՛:** Այն ատեն, եթե ուզես, ծննդյան տարեդարձդ կտոնենք երեք օր ու գիշեր, ինչպես արևելյան հեքիաթներուն մեջ: Մեր տունը կունենանք զուտ արևելյան հյուրասենյակ մը (գորգեր, գործվածքներ, ցած բազմոց, բուրվառ, արվեստի իրեր, ոսկեղեն զարդարանքներ, ամեն բան): Այդ հյուրասենյակին մեջն է, որ կտոնենք քեզ: Եվ դուն կունենաս **Արևելքի թագուհիի** մը բոլոր քմայքները (ինչպես հինավուրց բանաստեղծություններու մեջ): Ահա այսպես երեք օր ու գիշեր կապրինք անխառն երջանկության, հավերժական համբույրներու երազային մթնոլորտի մը մեջ:

Եվ ահա այսպես կսիրենք զիրար:

Սիրելի՛ս, երբ կարդաս այս բոլորը, մի՛ ըսեր. «**Չափազանց գեղեցիկ է այս ամենը, չափազանց իտեալական, ուստի երբեք չպիտի իրագործվի**»:

Այո՛, այո՛, օր մը պիտի իրագործվի ասիկա ամենայն մանրամասնությամբ, և դուն այնքա՛ն գոհ պիտի ըլլաս, որ աչքերդ պիտի թրջվին երջանկութենէն:

Օհ, Յաննի՛, պիտի գա այդ օրը, պիտի գա՛ շուտո՛վ, և դուն այլևս արցունք չպիտի ունենաս վաղնջուց աստվածուհիի չքնաղ աչքերուդ մեջ ու չպիտի երագես իմ մասիս, քանզի ես քեզի հետ պիտի ըլլամ, կողքիդ, օր ու գիշեր, կյանքի և մահվան մեջ:

Ի՛նչ քաղցր է ապրիլ, ապրիլ, ապրիլ սիրով արբշիռ... Եվ որքա՛ն ավելի քաղցր է դեռ, ճեփ-ճերմակ մազերով, բուրբուրովին ծեր, ննջել թով-թովի գեղեցիկ բնության մեջ հավիտյանս հավիտենից... Յաննի՛...

Քու Ռուբենդ

Շնորհավորելու համար
1909 թվականի Հունիս 16-ը,
աչքերուդ

և

հմայագեղ շրթունքներուդ՝
միակ ու հավերժական
աղբյուրին...¹

Հուլիս 23, 1909,

առտուն

Իմ պաշտելի սիրելիս,

Վերջապես մեր տունն եմ: Վարը՝ հյուրասենյակին մեջ, Հայկանույշ քույրիկս կերգե և քնարով կնվագակցի ինքն իրեն: Դուրսը՝ մեր հորենական տան դիմացը, վաղեմի մայր եկեղեցիի մը հռչակավոր ավերակներն են, հին-հին դարերու և մեռած մարդոց ամբողջ խորհուրդովը օծուն: Ավելի հեռուն անծիր, ոսկեգույն, անհունությունը խմող, հմայքներե գինով, պայծառությամբ ծանրերեր դաշտերու համապատկերը կտարածվի: Քիչ մը ավելի անդին հորիզոնն է, որ կփախչտի երագի մը նման և հավերժորեն կմխա, ինչպես վիթխարի բուրվառի մը մեջ: Այստեղ, վարը, շատ վարը՝ իրենց կատարին վրա վաղնջական Սիլվիոյի կրող ժայռերու ստորոտին, բուրբուրովին խորքը, անսահման ծովն է, որ կփշրվի և անցած ժամանակներու հին հիշատակ մը կմռնչե: Եվ ամենուրեք՝ երկինքին մեջ, որ կարծես կմեռնի, երկրին վրա, որ կարծես կապրի, քաղաքին մեջ, որ կարծես կերագե՝ հարատևող երջանկության մը, զվարթութենեն ավելի

¹ Շնորհավորանքը պակասավոր է:

բաղր տրտմության մը, մտածում են ավելի խորունկ անհոգության մը շունչը կա... Եվ այս տեսարանին, այս հմայքին, այս վիթխարի երազին, այս հին ժամանակին, այս տխուր բաղրության ընդմեջ են կմտածեմ էակի մը մասին, որ կարենա իր անձին մեջ մարմնացնել այս ամենը, այս ամենը, ինչպես **Կենդանի Արևելքի** բուն հոգին, որուն աչքը կարենա ցոլացնել մեր մայրամուտները, որուն ձայնը կարենա արձագանքել մեր մռչյուն ծովին, որուն հասակը կարենա ներկայացնել մեր հեթանոս արձաններուն խոհուն գեղեցկությունը, որուն շրթունքներն ըլլան բաղրորեն տրտում և որուն շարժուձևը կարենա խորհրդանշել մեր արևելյան գոյության երեկի, այսօրվա և վաղվա բովանդակ կյանքը... Ես կմտածեմ այդ էակի մասին և կհամբուրեմ զայն հեռուեն... Աստված գիտե... Արևելքի, անոր ամբողջ խորունկ պարզությամբ, անոր ամբողջ իմաստությամբ միամիտ...

Կյանքը: Արևմուտքին մեջ այս բառին առջև կդնեն խոշոր **հարցական նշան մը (?)**, իսկ Արևելքին մեջ՝ **կախման երեք կետեր անմոռնչ (...)**: Ահա տարբերությունը: Մինչ այնտեղ կպոռան, կփնտրեն, կփիլիսոփայեն, կվազեն, մենք՝ արևելքցիներս, կերագենք... Քանզի գիտենք, որ կյանքի միակ ճշմարտությունը Մահն է վերջնական... Եվ որ ամեն ինչ անօգուտ է, բացի երագեն, գուցե...

Ահա այսպես, Յաննի՛ս, ես քեզ կսիրեմ իմ երագովս և կախման երեք կետերովս անմոռնչ... Ի՛ զուր իմ աչքերուս մեջ մթին հարցական նշան մը պիտի փնտրես... Պիտի այնտեղ գտնես միայն իմ Հավատքս քեզի հանդեպ, և իմ Սերս քեզի հանդեպ, և իմ Կյանքս քու մեջդ... Եվ կկարծեմ, թե մեր սիրո մեծ գրքին և աշխարհի մյուս բոլոր սերերուն միջև կա միայն մե՛կ տարբերություն. այն, որ ոչ մեկ **հարցական նշան** գոյություն ունի այնտեղ... Այնտեղ ամեն ինչ գեղեցիկ է և ճշմարիտ և արևելյան...

Համբույր մը քու Ռյուֆինսեն

Սիրելի Յաննի, քեզի կուղարկեմ **Խպենի՛**՝ հյուսիսի մեծ մտածողին, հզոր գործը: Անոր ընթերցումը կամքի գիտակցությունը պիտի զորացնե մեջդ: Պետք չէ հապճեպ կարդալ: Ընտրիակալ եմ **Բաքոսուհիին** համար, որ հոյակապ բացիկ մըն էր, մինչև հիմա ուղարկածներեդ լավագույնը: Քանի մը օրեն ինձմե կստանաս թանգարանային բացիկներուս փոքր, գեղեցիկ ալպոմը: Ահա ցանկը.

Գեղեցիկ դպրություն. (կանաչ) կանաչ-կարմիր-կանաչ: Վոցի ուսանողներ:

Ցոֆինկենցիներ. (ճերմակ) կարմիր-ճերմակ-կարմիր. զվիցերական-ֆրանսական:

Սթելլա. (ճերմակ) կապույտ-ճերմակ-կապույտ: Մեքենագետ ուսանողներ:

Երեքշաբթի

3.8.1909

Սիրելի նշանածս,

Երեկ քեզի նամակ մը և բացիկ մը դրկեցի: Այսօր ահա Պոլսո թրքական թաղէն ասիական բացիկներու շարք մը քեզի: Հոն պիտի տեսնես մեր շուներն ու մեր թուրքերը: Հոն պիտի տեսնես **Մեծ Շուկան**, քաղաքի մը չափ ընդարձակ, և վերը, անձրևի ու ձյունի դեմ, քարե պատերով և մարմարե կամարներով փակված փողոցները: Այնտեղ է որ կծախեն արևելյան գոհարեղենն ու հնությունները: Հոն պիտի տեսնես դեպի հրդեհը վազող թուրք ջրհանկիրներ: (Բայց զինվորական ջրհանկիրներ ալ կան): Եվ **Շահ-Ջատե** փողոցն իր սքանչելի մարմարե քոշքով, ուր ջուր կխմեն ձրի՛: Եվ **Թրքական սրճարանը**, ազգային տարազ հագած իր հանձնակատարներով, որ բարբարոս կերպարանք ունին, բայց իսկապես հիանալի սիրտ: Հոն ալ պիտի տեսնես **Լազերուն** պարը, զոր հետաքրքրասերներու ամբոխ մը կդիտես: (Լազերը թրքական փոքրիկ ցեղ մըն են, շատ ուժեղ և շատ գեղատեսիլ): Դեռ հոն պիտի տեսնես երկու մելամաղձոտ եզ լծած հինավուրց կառքով **թրքական հարեմի զբոսանք** մը: Եվ այս ամենը քեզի գաղափար մը պիտի տա, թե ինչ բան է ասիական Պոլիսը: Քանզի նորօրինակ քաղաք մըն է ան: Այնտեղ կարելի է գտնել Եվրոպայի ամենաարդիական նորություններն ու Ասիայի հնագույն բարքերը: Այնտեղ արևելյան հազվագյուտ բաներուն թովիկը կարելի է սքանչանալ փարիզյան ճարտարապետության, բոլոր երկիրներու գեղեցկություններուն և ամենահրաշալի հրաշքներուն վրա: Ես կյանքիս մեջ շատ քաղաքներ եմ տեսած, բայց երբեք ոչ մեկ քաղաք այնքան հետաքրքրական է, այնքան բարձրարվեստ, այնքան լայնատարած, այնքան ուրախ, ինչքան Պոլիսը: Եվ ինչ ալ ըսեն, հավատալէ չեմ դադրիր բնավ, որ այստեղ է **աշխարհի ամենահանգիստ ժողովուրդը**: Հակառակ ջարդերուն, հակառակ խժոժություններուն, հակառակ ամեն ինչի, այստեղ ամենաչար մարդը սիրելի բան մը ունի: Ամեն ոք, նույնիսկ հանձնակատարը, որ հանդարտորեն իր հինգ սանթիմնոց սուրճը կխմէ, քիչ մը երազ ունի իր աչքերուն ետև: Իսկ այդ երազը Արևելքն է ամբողջ: Այստեղ ուրիշ փիլիսոփայություն մը կծփա ուղեղներուն մեջ. **ճակատագրապաշտ** փիլիսոփայությունը: Ամենուր կհանդիպիս Ուժի մը հետքերուն, անսահման ու բարի

ուժի մը, որով ժողովուրդները կապրին խաղաղորեն: Այդ ուժը ճակատագրապաշտութիւնն է, իսկ այդ ճակատագրապաշտութիւնն ալ անոնց կյանքն է բովանդակ: Ասոր համար է թերևս, որ տրտմութիւնը անոնց ուրախութիւն իսկ մաս կկազմէ:— Բայց այսքանն արդէն հերիք է Պոլսո մասին: Հիմա քիչ մըն ալ քեզմէ խոսինք: Դու, սիրելի՛ս, կկարծես, թէ իմ ծնողներս ատելութիւն ունին քեզի դեմ, դու կվախնաս անոնցմէ, կդողաս նույնիսկ մտածելով անոնց մասին: Կհարցնեմ քեզի, թէ ինչո՞ւ է այդ վախը: Ուրեմն կմոռնաս, որ անոնք իմ ծնողներս են և ունին նույն արյունը, ինչ որ ես, և նույն բնավորութիւնը: Արդ, կրնան քեզ ատել: Ո՛չ Յաննի՛, հանդարտե, անոնք շատ կսիրեն քեզ և կկարծեն, թէ դու կավագույն հոգին ես, որ կրնա արժանի ըլլալ իրենց զավկին: Եվ մեր ապագա ամուսնութիւնը կարգադրված, վերջացած գործ է: Այլևս ո՛չ մեկ կասկած: Իսկ միակ կասկածը... դուն ես, քանզի միշտ կկասկածիս, ատիկա քու հիվանդութիւնդ է: Դու բնավ պետք չէ արտասվես: Բայց եթէ կուզես, որ ծնողներս քեզի նամակ մը գրեն, կսխալիս: Քանզի նախ անոնք հայերեն գիտեն միայն, և հետո մեր բարբերը քիչ մը խիստ են. մեր ծնողները նամակ, բան չեն դրկեր, նախքան պաշտոնական նշանտուօքը, բայց ինծի կթույլատրեն թղթակցել քեզի հետ, և ասիկա արդէն բավական բան է: Ես իրենց ցույց կուտամ քու լուսանկարներդ, նամակներդ, բացիկներդ. անոնք գոհունակ կծպտին: Եվ անշուշտ, անգամ մը որ ամուսնանանք, դու կտեսնես, որ աշխարհի լավագույն ծնողներն են անոնք:— Այստեղ կվերջացնեմ նամակս, հազար անգամ համբուրելով քեզ և ողջույններս հղելով հայրիկին, մայրիկին և Միննային:

Նշանածո՝ Ռուբեն

Հինգշաբթի, Օգոստոս 5, 1909

Սիրելի նշանա՛ծս,

Երեկ զիս սքանչացուց նամակդ և մանավանդ հոյակապ, հոյակապ անակընկալը: Յաննի՛, որքա՛ն արվեստագետ ես դու, և խելացի և բանաստեղծ: Սիրո և Արվեստի ինչպիսի՛ անսխալ զգայարան ունիս: Եվ ինչպե՛ս գիտես այն ամենը, որ հաճույք կպատճառէ ինծի: Ահ, այդ չքնաղ ձեռքը, այնքա՛ն շնորհալի, այնքա՛ն շարժուն, այնքա՛ն սիրագորով: Այդ այնքա՛ն պաշտված, համբուրված խորհրդավոր ձեռքը, որ երկու տարի առաջնորդէ զիս և պիտի առաջնորդէ կյանքի աղջամուղջին մեջեն: Այդ ձեռքը, որ հազար-հազար թռչնած վարդերով և բյուրավոր նվաղկոտ համբուրներով է բուրումնավետված: Այդ ձեռքը, որ օրինութեան շարժուձևն ունի և սիրո դողը: Այդ ձեռքը, քո՛ւ ձեռքդ... Ես

զայն դրի սեղանիս վրա, և ամեն անգամ շրթունքներս անհուն ցանկությամբ կուզեն հանգչիլ այնտեղ, մատի մը փոսիկին վրա, Յաննի՛ս...

Միրելի՛ս, ներե ինծի, ինչպե՛ս կամչնամ ինքզինքես: Ահա երեք շաբաթ անցավ, և ես դեռ չկրցա դրկել նվերդ: Լսե, քեզի համար հայկական գլխարկ մը պատվիրեցի արևելյան գործարանի մը, բայց ահա ամիս մըն է՝ կուշացնեն: Միշտ բան մը կպակսի. այսօր այս գույնի ժապավեն չկա, վաղը՝ ծոպ, մյուս օր՝ այսինչ նորաձևության եզրագարդ... Ես ալ չեմ գիտեր, թե երբ կվերջանան այս բոլորը:

Քանի մը օրեն կուզեմ սիրո երկար նամակ մը գրել: Առ այժմ գոհացիր այս բանի մը բացիկներով, որոնցմե մեկուն վրա կտեսնես Բըթի-Շանը, ուր ամեն իրիկուն ժամը վեցեն յոթը ես ճաշարանի մը առջևն եմ շատ ուրախ տրամադրությամբ: Իսկ երբեմն գիշերները պարտեզ կերթամ, ուր 60 երաժիշտներե բաղկացած նվագախումբ կա միշտ: Երեկ իրիկուն թատրոն գացի փարիզյան թատերախումբի մը ներկայացման: Վաղը երեկոյան ալ Օտտոն պիտի երթամ գերմանացի դերասաններուն խաղը դիտելու («Չղջիկը»): Եվ գուցե վաղն ալ այցելեմ Յըլտըզ-պալատը (նախկին Սուլթանի), ուր Հանդիսություն մը տեղի պիտի ունենա, իսկ կիրակի օր՝ Իշխանաց կղզիները: Հիմակուհիմա ցտեսություն, սիրելի՛ս, և հազար շնորհակալություն, սքանչելի նվերիդ համար:

Նշանածո՛ Ռուփինս

Օգոստոս 12, 1909

Յաննի՛ս: Երեկ երկար նամակով մը ամեն ինչ բացատրեցի քեզի: Այսօր շատ գրելիք չունիմ: Միայն Կոստանդնուպոլսո կյանքիս բանի մը հատկանշական կետերուն պիտի անդրադառնամ: Ուրեմն՝ կապրիմ Բերա: Ամեն օր կարթննամ ժամը յոթին և առտվան սուրճս խմելու համար կերթամ Կալաթայի (Ոսկեղջյուր) քարափը, որ ամբողջ Կոստանդնուպոլսո սիրտն է: Կալաթայի քարափին վրա է, որ Արևելքն ու Արևմուտքը կհանդիպին, կբախին իրարու, կգրկվին զմայլագին, ինչպես երկու հորձանապտույտ գետեր: Ոչինչ ավելի զվարճալի է, բան երկու ումպ սուրճդ խմելով, այդ գրկախառնումը դիտելը: Տարօրինակ բան մը կա այդ եռուզեռին մեջ. արտասովոր են հեռավոր Համպուրկեն, Ամերիկայեն ու Ասիայեն եկող այդ նավերը, զբոսաշրջիկները, գլանաձև բարձր գլխարկները, ասիացիները, շուները, սքանչելի երկինքը, Ոսկեղջյուրի կոհակները, թըրքական մինարետներուն ուրվագիծերը, նավերուն ծխնելույզները, հարեմներուն վայելչագեղ գայլզները... Տնորեցուցիչ է և արտասովոր այս ամենը: Այս ամենը հրա՛շքն է տիեզերական:

Կալաթայի քարափեն թրքական գայլըզով մը կանցնիմ Ոսկեղջյուրը և կհասնիմ Սթամպուլ: Այստեղ բոլորովին տարբեր աշխարհ մըն է. առտտուրի, խանութներու, կրպակներու, արևելյան շուկաներու, ամբողջ թաղ մը բռնող հնավաճառներու աշխարհն ու կյանքը:

Այնտեղեն, օրս անցընելու համար, կամ Իշխանաց կղզիները կերթամ, կամ Կոստիոր (դեպի Սև ծով), կամ ալ Մարմարայի ափը:

(Հոս նամակն ամբողջ էջ մը կպակսի):

... շուտով Լոզանեն հոս պիտի գա, և, հուսամ, լավ ժամանակ պիտի անցընենք... Ի՛նչ խոսք, որ պիտի նախընտրեի... քեզ հրավիրել, ցույց տալ քեզի մեր տունը, պարտեզը, ընտանիքը, այգիները, սենյակները, ամեն, ամեն ինչ և ըսել քեզի, թե դուն ես այս բոլորի տիրուհին, թե այս բոլորը քեզի կպատկանին, և որ ես քու ստրուկդ եմ խոնարհ... Բայց, ըսե՛, ո՞վ կրնա փշրել ստրկության շղթաները և ի չիք դարձնել մեր քսաներորդ դարու քաղաքակիրթ սովորությունները... Դուն պետք է այնտեղ հառաչես, իսկ ես տառապիմ այստեղ, միևնա՛կ: Եվ եթե այս վիճակը մեզ հիվանդ դարձնե ու սպաննե, ավելի գեշ (կամ ավելի լավ), միայն թե բան մը չընենք քաղաքակրթության և պատշաճության դեմ... Որքա՛ն ծիծաղելի են մարդիկ, ողբերգականորեն ծիծաղելի...

Անցնի՛նք:

Կըսեմ «անցնի՛նք», բայց այս միտքը այնպես կչարչրկե զիս, որ չեմ կրնար անցնիլ...

Հիմա, երբ կգրեմ քեզի այս տողերը, լսեցի, որ պրն. Ահարոնյանը (կովկասահայ մեծագույն բանաստեղծը) մեռեր է բանտին մեջ: Խեղճ, խեղճ ընկեր: Եվ ըսել, որ այնքա՛ն հեզահամբույր էր, այնքա՛ն խոհուն ու բարի: Ան նման էր ծաղիկի մը երազուն: Ցարը, առանց որևէ պատճառի, բանտ նետել տվավ զինքը, կես տարի առաջ: Եվ ան կին ուներ և զավակներ: Օհ, խեղճ, խեղճ ընկեր, ինչպե՛ս պիտի ուզեի մեռնիլ

(Նամակին շարունակությունը չկա բանաստեղծի բուղթերուն մեջ):

Օգոստոս 14, 1909

Պաշտելի՛ էակ,

Եվ ահա նախանցյալ օրվընե ի վեր Սիլիվրի եմ արդեն: Կոստանդնուպոլսեն քանի մը նամակ և բացիկ դրկեցի հասցեիդ և հուսով եմ, որ ստացած ես զանոնք: Հիմա, որ հոգերե ազատ եմ, հայրիկիս խանութին մեջ ձեռք կառնեմ գրիչը, որպեսզի քանի մը տող գրեմ քեզի: Նախ ըսե՛. հիվանդկախ վիճակդ կշարունակվի՞ տակավին: Չեմ գիտեր, թե ինչ ունիս դուն. կձանձրանաս, կուլաս, կտժգունիս և այլն, և այլն: Ի՛նչ է այս: Լսե՛, Յաննի՛, արդարև, կսիրե՛ս

զիս թե՛ ոչ: Եթե, ըստ եուրոյան, այնքան ալ սեր չես տածեր ինծի և մեր ապագա միատեղ կյանքին հանդեպ, մեկընդմիջտ վերջացո՞ւր ամեն բան: Թող կամքդ ըլլա: Բայց եթե քչիկ մը կսիրես քեզ ու զիս, այն ատեն պետք է հոգ տանիս առողջութեանդ: Առողջութիւնդ լավագոյն նվերն է, զոր կրնաս ընել ինծի: Մի՞թե աշխարհիս բոլոր դժբաղդութիւնները միայն քեզի են տրված: Մի՞թե երջանիկ ըլլալու որևէ բան չունիս: Ինչո՞ւ այսքան տխրութիւն, Յաննի՛: Ի՞նչ կնշանակէ այս: Խելքս բնավ բան չի կտրեր: Սիրելի՛ս, ահա ես՝ թու սիրահարդ, ստորուկդ, որ միայն թու մասիդ կմտածե, որ պիտի ուզեր մեռնիլ քեզի համար: Ահա ես՝ մեծ թե փոքր, թուկդ եմ միայն: Ահա ես՝ հավիտյանս հավիտենից քեզի նվեր, ի՞նչ կուզես դեռ: Հերիք չե՛մ քեզի, Յաննի՛, ըսե՛:

Գալով ինծի, ես սքանչելապէս լավ կզգամ զիս, միայն քիչ մը անտրամադիր եմ որկրամոլութեանս հետևանքով: Չեմ գիտեր՝ ինչն է պատճառը՝ այս երկրին օ՞ղջ, թե՛ ջուրը, բայց ինծի կթվի, թե հաճախակի ուտելու ցանկութիւն կա մեջս: Եվ այս ցանկութիւնը, առակի գորտին պէս կդարձնէ զիս. ստամոքսս կուռի շարունակ: Եվ (Աստված վկա) եթե հիմա մեկնամեկը տեսնէ զիս այսպէս՝ սպիտակ տաբատով, հսկա փորով, մեկ կողմ ծռած գլխարկով, երբեք չի մտածեր, որ... սիրահար մըն եմ ես: Գրողը տանի, եթե մարդ կսիրէ, պետք է տառապի՞ միայն: Օ, ո՛չ: Ես ի սրտե գոհ եմ իմ սերես ու սիրածես: Եվ այս է, որ կգրգռէ այսորժակս: Խելքի մոտ չե՛ք ըսածս, մժղո՛ւկ...

Եվ ահա Սիլվիոյի կյանքիս մեկ ուրիշ հատկանշական կողմը: Ամեն օր երկու-երեք աղքատ հիվանդներ կուզան քովս քննվելու: Յուրաքանչյուրին խորհուրդ մը կուտամ, և բոլորն ալ չափազանց գոհ են, որ Եվրոպա ուսած բժիշկ մըն է ընդունած զիրենք... Պետք է հոս ըլլայիր զիս տեսնելու համար այդ խեղճ մարդոց հետ. օհ, ես կպաշտեմ թշվառները, և եթե մեծ հարստութեան մը տեր ըլլայի, ինչպէս...¹, սիրով կբաժնեի զայն աղքատներուն:

Եվ այսպէս՝ ամեն Աստուծո օրը:

Ահա նամակիս նոր էջը կսկսիմ և նոր էջին հետ կանցնիմ նոր նյութի, որպէսզի նորանոր գլխու պտույտներ չպատճառեմ քեզի... Քանզի դուն այնքան զգայուն ես, որ դուրսագոյն բանէ մը կազդվիս, թունդ կելլես, կզայրանաս ու կտաքնաս այս տոթակեզ եղանակին: Ահ, իմ սուկալի մժղո՛ւկս:

Սիրելի՛ս, հաջորդ նամակիդ մեջ նկարագրէ ինծի օրդ, աշխատանքներդ, զվարճանքներդ, պատմէ հոգերդ ու երազներդ: Կշարունակվի՞ն տակավին թե-նիսի աղմկոտ խաղերը: Դեռ այն սպան կմասնակցի՞ անոնց: Ինչպէ՛ս կդիմանաք տաքերուն: Ինծի ոչինչ գրեցիր. այս ամառ Թապարկ պիտի երթաք, թե ուրիշ տեղ: Դուն այնքան կարիք ունիս օգափոխութեան ու հանգիստի, որ

¹ Անընթեռնելի

պետք է անպայման գյուղ մը երթաս քանի մը շաբթվան համար: Առանց ատոր հիվանդանալդ կասկած չի վերցնեն:

Ինծի կմնա քանի մը տող ալ գրել, թուղթս լեցնելու համար: Եվ կուզեմ այդ քանի մը տողը նվիրել համբույրներուն, բանալ համբույրներու գլուխը: Եվ ի՞նչ համբույրներու, Յաննի՛: Եթե տեսնեիր, զգայիր ու համտեսեիր հոս՝ Սիլիվրի, քեզի տալիք համբույրներս, կխենթենայիր, այո՛, այո՛, իրոք կխենթենայիր: Այնքան քաղցր, այնքան բարի, այնքան տաք ու կրքոտ, այնքան ասանկ, այնքան անանկ, որ կզմայլեիր ու կըսեիր ինծի. «Ի՛նչ խենթ ես, Ռուբեն՛»: Եվ ես կպատասխանեի քեզի. «Ի՛նչ խենթ ես, Յաննի՛»: Եվ ես՝ խենթ, դուն՝ խենթ, մենք թերևս ըլլայինք աշխարհի երջանկագույն զույգը: Այնպես չէ՛...

Քու հավերժական

Ռուբենդ

Սիրելի, պաշտելի նշանածս,

Ահա ստացա մեծ կարևորություն ունեցող նամակդ: Չեմ ուզեր բացե ի բաց գրել քեզի. դուն արդեն գիտես իմ պատասխանս, քանզի քաջ ծանոթ ես բոլոր մտքերուս: Լավ լսե, Յաննի՛: Ես երբեք հին գլուխ մեկը չեմ. շատ կսիրեմ թատրոնը, բայց պիտի չուզեի, որ իմ կինս նվիրվեր այդ կյանքին: Շատ լավ կհասկնամ, որ ամեն մեկն իր կոչումն ունի և իր տաղանդը. մարդ կամ արվեստագետ կծնի, կամ վաճառական: Բայց արվեստագետ ըսելով, միայն դերասան չենք հասկնար. արվեստագետ է բանաստեղծը, արվեստագետ է քանդակագործը, արվեստագետ է երաժիշտը, նկարիչը, երգիչը և այլն: Իսկ դուն արվեստագետի այս բոլոր ձիրքերը միաժամանակ ունիս. շատ լավ կրնաս խորունկ բանաստեղծ ըլլալ, հմուտ քանդակագործ, հռչակավոր երաժիշտ կամ վարպետ երգչուհի: Դուն արվեստի ասպարեզին վերաբերող ամեն բանի ձիրք ունիս: Սակայն երբ կուզես երեսիս պոռալ, թե դուն միայն դերասանուհիի ձիրք ունիս, այն ժամանակ ես կպատասխանեմ քեզի, թե չարաչար կսխալիս... Ո՛չ, բնավ չէի ուզեր հավատալ ատոր: Ես քեզ ավելի լավ կճանչնամ, քան դուն: Գիտեմ քու խորություններդ, սրտիդ խորշերը, գաղտնիքներդ, մթություններդ. ես քեզ կատարելապես կճանչնամ, Յաննի՛ս:

Շատ կուզեմ, որ դուն թատերական արտասովոր հակամներ ունենաս: Ես իրոք մեծապես հիացած եմ, որ դուն շատ բան կհասկնաս թատրոնեն և գիտես ճշտորեն քննադատել: Ասիկա ցույց կուտա ինծի, որ դուն բնավ սովորական աղջիկ մը չես: Եվ ասիկա ուրիշ ոչինչ ցույց կուտա:

Այո՛, ես թատրոն շատ կսիրեմ և շատ հաճախ կերթամ թատրոն: Երբեք չեմ մտածած դերասան ըլլալու մասին... Եվ եթե դուն ալ թատրոն շատ կսիրես, քեզի կմնա ավելի հաճախ երթալ: Եվ լմնցավ-գնաց...

Բացի անկե, անկեղծ ըլլալու համար ըսեմ, թե դուն արվեստի ասպարեզին վերաբերող ամեն բանի ձիրք ունիս, բայց դերասանուհիի՝ բնա՛վ, բնա՛վ, բնա՛վ... **Ճշմարիտ դերասանուհի է ան, որ կարտահայտե առանց զգալու** (կուլա առանց տխուր ըլլալու, կծիծաղի նույնիսկ տխուր սրտով, կսիրե առանց այդ մասին մտածելու), **մինչդեռ դուն կարտահայտես զգալով** (լալու ատեն տխուր սիրտ ունիս, ծիծաղելու ատեն՝ ուրախ և չես կրնար սիրահար կնոջ ձևեր առնել առանց մեկնումեկը սիրելու) : **Դուն բնա՛վ դերասանուհի չես, դուն բանաստե՛ղծ ես**: Ահա թե ինչ կուզեմ ըսել քեզի, առանց հաճոյախոսություններու:

Համենայն դեպս, եթե կսխալիմ համոզմանս մեջ, և եթե դուն իրոք կրնաս որևէ բան արտահայտել **առանց զգալու զայն** (կամ վայրկենաբար զգալով), այն ժամանակ ատիկա կըլլա շատ դաժան հարված մը սրտիս, քանզի ես կունենամ այն ողորմելի կասկածը, թե գուցե ինծի համար քու բոլոր ըրածներդ ուրիշ բան չէին, եթե ոչ դերասանուհիի մը հավերժական տեսարանը... Ավա՛ղ, Յաննի՛, ի՛նչ կընես ինծի...

Երեկ Հրանտին հետ կխոսեի դիտավորություններուդ մասին: Աջքերը արցունքով լեցվեցան: «Ա՛ն ալ...»,— ըսավ ինծի: Եվ ես չէի գիտեր՝ ի՛նչ պատասխանեմ...

Քու՛ Ռուբեն

Օգոստոս 20, 1909

Պոլիս

Քաղցրագույն Յաննի՛ս

Այսօր օգոստոսի 30-ն է, 1909, երկուշաբթի, վաղորդայն: Ահա արդեն քանի մը օր է, բան չեմ գրեր: Միշտ այսպես կպատահի: Ծուլություն է իջած վրաս: Դուն երկու շաբաթ շարունակ կսաստես զիս, մինչդեռ անցյալ շաբաթ ամեն օր նամակ մը դրկած եմ քեզի, և այսպես կգլորի ամբողջ ամիսը, և հաջորդն ալ նույն ձևով պիտի սկսի: Պատիկ զվարճություն մըն է այս, որպեսզի ամիսը անցնի, սակայն քիչ մը ողբերգական զվարճություն, քանի որ քեզ ուղղակի հիվանդ կդարձնես: Ահա թե ինչու կխնդրեմ, որ չհուզվիս, երբ ծուլությունս բռնես: Պատճառը ո՛չ սիրո պակասն է, ո՛չ ալ ժամանակի, այլ պարզապես քու պակասդ... Այո՛ քո՛ւ պակասդ, քանզի ամեն անգամ որ կգրեմ քեզի, ցավազնորեն կզգամ հեռավոր բացակայությունդ, կերևակայեմ սերեն տոգունած դեմքդ, անձկութենեն թարթափող աչքերդ և շրթներդ՝ ցանկութենեն դողդոջուն... Եվ իրոք պետք է մեծ արիություն ունենալ ամեն անգամ կարենալ մտածելու համար այս բոլորի մասին և քու սիրոդ չխոցելու սիրույն չհամարձակվիլ բռն

չըսել քեզի այդ առնչությամբ... Ասոր համար է, որ քանի մը ամիսներե ի վեր տափակություններ կպատմեմ քեզի: Եթե շատ կփափաքես, կրնամ այս նամակով ալ ուրիշ հասարակ տեղիք բաներ գրել: Ահավասի՛կ.

Նախ և առաջ, այն Նշանավոր արևելյան գլխարկը, որ ամբողջ երկու ամիս մեզ զբաղեցուց, ուղարկված է արդեն: Հրանդին գրեցի, որ երթա առնե զայն, քանի որ պատրաստ էր, և ճամբու դնե: Վերջապե՛ս: Ծանր բեռ մը ինկավ ուտերես. այնքան սպասցուցի քեզ: Գոհ եմ հիմա: Փոխանակ հուլիսի 17-ին ստանալու զայն, պիտի ստանաս սեպտեմբերի 17-ին (Ռուլլեն Լոզան գալուդ տարեդարձը, այնպես չէ՛...):

Ես հիմա գրեթե մինակ եմ հոս, հայրիկիս, մայրիկիս, երեց եղբորս՝ Քերոբին, իր Զապել կնոջ և Պատրիկ մանչուկին հետ: Մնացյալները քանի մը շաբթվան համար Ռոտոսթո մեկնեցան (քաղաք՝ Մարմարա ծովու ափին): Կուզեին անպայման զիս ալ տանիլ հետերնին, բայց ես կնախընտրեմ մնալ Սիլիվրի, որովհետև դժվար թե աշխարհիս մեջ գտնվի ուրիշ ծովափնյա քաղաք մը, որ ավելի լավ դիրք ունենա: Ճիշդ ու ճիշդ Մոնթե-Քառլոյին դիրքը, բայց շատ ավելի գեղեցիկ: Եվ զիս չափազանց երջանիկ կզգամ նման քաղաքի մը մեջ ծնած ըլլալուս համար: Սակայն, երբ դուն զայն տեսնես, կըսես ինծի, թե ես իրավունք ունի՛մ այսքան հպարտանալու իմ ծննդավայրովս:

Այստեղ կավարտեմ նամակս: Կխոստանամ ավելի հաճախ գրել քեզի:

Մանավանդ մի՛ բարկանար լռությանս համար: Չես բարկանար, չէ՛, մժղո՛ւկ:

Անուշ համբույր մը քեզի: Հազար բարև հայրիկին, մայրիկին և Միննային:

Նշանածո՛ւ Ռ. Չիլինկ

Սեպտեմբեր 5, 1909

Անուշ սիրեցյա՛լս,

Միշտ մեծագույն հաճույքով կստանամ նամակներդ: Բայց այսօրվանը հատկապես ընտիր էր... Սիրելի Յաննի՛, ես կատարելապես համաձայն եմ քեզի հետ մեր ապագային վերաբերյալ: Ո՛չ մեկ կասկած, որ մենք շատ երջանիկ և շատ համերաշխ զույգ մը պիտի ըլլանք: Միայն դեռ քիչ մը պետք է սպասենք: Ի՛նչ փույթ: Ես սպասելուն վարժվեցա արդեն. համբերելը քաղցր ու ամոքիչ դարձավ ինծի համար: Այլևս չունիմ նախկին փութկոտ ջղագրգռությունը, քանզի լիովին վստահ եմ, օր մը պիտի միանանք ու երջանիկ ըլլանք: Եթե ոչ վաղը, անպայման մյուս օր, այնպես չէ՛, սիրելի՛ս...

Եվ ես ավելի ևս երջանիկ եմ, որովհետև քու երջանկությանդ հավատքն ունիմ: Որքան ուրախ ես դուն, այնքան լավ կզգամ ես զիս: Եվ պետք է ըսել,

որ դուն շատ, շատ երջանիկ ես այս օրերս: Քանզի բավական ծիծաղելի բաներ կպատմես ինձի. կխոսիս...¹ սիրարկածներուն, վեհ հոգիներու ազատության, արվեստագետներու կատարյալ անձնիշխանության մասին...

Պե՛տք է որ պատասխանեմ ասոնց:

Յաննի՛ս, արդի մարդկությունը չափազանց առաձգական լեզու մը կբանեցնե: «Սիրարկած» կկոչեն ամեն տեսակ անբարոյականությունն ու սրտի աղտեղությունը... Սիրարկած: Աղվոր բառ, որ ամեն ինչ կարդարացնե: Քիչ մը մտածեցի այդ...² սիրարկածներուն մասին և ըստ բավականին գարշելի գտազանոնք: Եթե այդ աղջիկը չի սիրեր իր նշանածը, ինչո՛ւ կամուսնանա հետը: Իսկ եթե կսիրե, հապա ինչո՞ւ սիրարկածներու ետևեն կիյնա...

Նամակներուդ քանի մը բառերեն զգացի, որ «արվեստագետներու» մասին ալ տարօրինակ ըմբռնում ունիս... Այո՛, կընդունիմ, որ արվեստագետը իր արվեստը ունի, բայց բնավ խելքիս չի պառկիր, որ ան կատարելապես ազատ է և անձնիշխան: Ես ալ արվեստագետ եմ, բաներ մըն ալ ես գիտեմ: Պետք չէ մոռնալ, որ արվեստագետը մարդ է և իբրև մարդ՝ միշտ անասուն: Ի՞նչ կըլլար մարդկության ճակատագիրը, եթե ամեն արվեստագետ իր ազատ քմահաճույքով գործեր... Եվ ի՞նչ կըլլար քու ճակատագիրդ, եթե ես խելքս փչածն ընեի... Արվեստագետը արվեստագետ է իր «արվեստին» մեջ, իր արվեստեն դուրս ան սովորական մահկանացու մըն է, ունի իր պարտականությունները, ինչպես բոլոր մարդիկը, ունի իր սահմանները, բարոյականությունը, իր կարգ-կանոնը: Ես բանաստեղծ եմ: Ես «ազատ» եմ բանաստեղծության մեջ, բայց կյանքին մեջ միշտ մահկանացու մարդ մըն եմ և պետք է կատարեմ իմ պարտականություններս բոլոր մարդոց պես: Բացի ասկե, եթե կուզես բուն կարծիքս ունենալ, կըսեմ. ինձի կթվի, թե «արվեստագետները» մարդոց հոռեզույններն են, լավագույնները պարզ հոգիներն են: Մտածե այս մասին, թերևս համաձայն ըլլաս հետս: Բայց դուն երիտասարդ ես դեռ, «արվեստագետի» գաղափարը աստվածային կթվի քեզի, կփայլի, կշլացնե աչքերդ, գլխու պտույտ կուտա քեզի, աստղերու պես բան մը կերևակայես զայն և ամեն ինչ կուտայիր, որպեսզի այդ աստղերուն մեջ ըլլայիր... գոնե օր մը...

Կկրկնեմ. մարդոց լավագույնները պարզ Հոգիներն են: Ինձի համար ամենախտեալական մարդը եղած է Հիսուսը: Եվ Հիսուսը բնավ արվեստագետ մը չէր: Ան ըսած է. «Երանի հոգիով աղքատներուն»:

Երբ մենք կարենանք պարզ Հոգիներ դառնալ, այն առեն է, որ աշխարհի

¹ Անընթեռնելի:

² Անընթեռնելի:

ամենաերջանիկներն ու ամենախտեալականները կըլլանք: Կըլլանք Հիսուսի
և աստվածներու պես: Կըլլանք աստվածները Սիրո...
Քու հավերժական
Ռուբենդ

Իմ շատ աղվոր, թանկագին Յաննիս և սիրելի բարեկամուհիս,
Այս իրիկուն, երագիս մեջ, քեզի հետ էի: Ես շատ քիչ անգամ երագ կտեսնեմ:
Իմ ջունս սովորաբար հանգիստ է, անխռով, ժպտուն: Հագիվ թե ամիսը անգամ
մը երագ տեսնեմ, և իմ երագներս միշտ ալ երագանքներ են քաղցր ու երկար,
ինչպես իտեալական ու մաքուր ուրիշ աշխարհի մը մեջ. ես երբեք սարսափելի
ու մոռալ երագ չեմ տեսած: Ինծի կթվի, թե ասոր պատճառը մարդու հոգեհա-
տակն է, քանզի, հակառակ իրական կյանքի բոլոր ցավերուն, իմ հոգիս միշտ
խաղաղ է, հույսերով օրորուն, պատրանքներով սնած, իտեալեմ հափշտակյալ,
մոգական աստղերով լուսավորված, թարմ, հեզահամբույր...

Ուրեմն, երեկ իրիկուն քեզի հետ էի: Հիմա պիտի չկրնամ վերադառնալ այն
ամենը, զոր դուն ըսիր ինծի, զոր ես ըսի քեզի երեկ իրիկուն մեր փոքրիկ սեն-
յակին անվորով կիսասովորին մեջ... Միայն կհիշեմ, որ երկար ու անվերջ ու
անորակելի բաներ կըսեիր ինծի կիսաձայն, և կհիշեմ նաև, որ ես կլսեի քեզ,
հավատարիմ, ժպտուն, ինչպես անկարելի դյուրանքի մը մեջ... Եվ գիշեր էր,
հեշտագին, և շոյիչ ու տաք գիշեր մը, մեծ Արևելքի Հազար ու մեկ գիշերներեն
մեկը... Եվ արբեցուցիչ կախարդանքն էր բաներու, զոր անհնար է արտահայ-
տել: Եվ գեղեցկության անհամար, պաղպաջուն աստղերու բյուրավոր երգերն
էին լռելյայն: Եվ ծանրերեր հեշտանքն էր, որ կիշներ Արևելքի արտասովոր
անհունությամբ երկինքեն: Եվ աներևակայելի շքեղության գիշերային հեքի-
աթն էր, որ կննջեր անզուգական Վոսփորը... Այն ժամանակ մենք, դուրս
գալով մեր փոքրիկ սենյակեն, կքալեինք գիշերվա և երագի մեջ, և կքալեինք
անծպտուն, և մեր շունչը տոգորուն էր հազարավոր քաղցրություններով, զոր
չէինք ըսեր իրարու... Այն ժամանակ, օ՛, սիրահարի երագներու աստվածային
պատրանք, այն ժամանակ, ես զզացի, որ կքալեմ միս-մինակ՝ գիշերվա և երա-
գի մեջ, և որ դուն անհետացած ես, ինչպես ոսկեփոշիի մը մեջ, ինչպես ճա-
ռագայթի ու լույսի հափշտակության մը, ինչպես դեպի իտեալը սլացած ճախրի
մը մեջ... Եվ ես կքալեի միս-մինակ, միս-մինակ, և ոտքերուս տակ այնքան
տխուր էր երկիրը, այնքան տխուր... Բարեբախտաբար... Քանզի երագ էր
միայն...

Քու նշանածդ և բարեկամդ՝ Ռուբինս

Սեպտեմբեր 30, 1909

Պոլիս

Սիրելի և հմայիչ բարեկամուհիս, ահա երկու օր է լուրի կտոր չունիմ քեզմե, սակայն միանգամայն կներեմ քեզի, քանի որ երկարատեն է Վեր ես այնքան ծույլ եղա քեզի նկատմամբ: Ուրեմն դուն կատարելապես իրավունք ունիս: Դուն պետք է պատժես զիս, քանզի ես երես առած մանուկ մըն եմ (չափազանց երես առած), և լավ է, որ ժամանակ առ ժամանակ թեթև պատիժներ կստանամ (ահ, շատ թեթև, առանց ստոնց կվիրավորվեի...):

Բայց այս ամենը, Յաննի՛, այս ամենը պարապ խոսք է միայն և զվարճալի շաղակրատանք: Դուն պիտի չհավատաս անշուշտ, որ ես արժանի եմ պատիժներու, այնպես չէ՛: Ատիկա չափազանց կըլլար... Օ՛հ, ո՛չ... Դեռ պետք չէ սկսիլ պատիժներու գլուխը. այն ժամանակ ի՛նչ պիտի ընենք ավելի ուշ, ամուսնութենեն ետքը, սիրո 20, 30, 50, 80 տարիներու ընթացքին... Ի՛նչ կըսես, պզտիկ ծույլ բզեզիկ...

Վերջացնենք այս անհոգ պատմությունները: Ես քեզի գրելիք ուրիշ գործ մը ունիմ, շատ ավելի կարևոր: «Այդ ի՛նչ գործ է», — պիտի հարցնես ինձի... Էհ, ուրեմն, այդ գործը **զինվորականությունն է**: Քանի մը օրե ի վեր կաշխատիմ, որպեսզի անցագիր մը ձեռք բերեմ Զվիցերիա մեկնելու համար: Աչքերուս մեջ կնային և «Զավա՛կս, — կըսեն ինձի,— դուն աղվոր զինվորական մը կըլլաս, պետք է ըլլաս, դուն չես կրնար մեկնիլ...»: — «Բայց, սիրելի՛ս, ես բժիշկ եմ, հիվանդանոցը գործեր կան, պետք է մեկնիմ, դասեր ունիմ, նշանած ունիմ...»: Օհ, ինչպե՛ս կժպտիս...

Բայց այս ամենը զվարճալի չէ, բնավ: Քանզի հույժ հոգնեցուցիչ է ինձի համար: Ես գրասենյակե գրասենյակ կվազեմ, կբողոքեմ, արդարութենե և օրենքե կխոսիմ, կպահանջեմ: Բայց որո՛ւ կըսես: Միևնույն պատասխանը կուտան ինձի, թե ես «շատ աղվոր սպա մը» կըլլամ:

Սակայն վստահ եմ, որ անցագիր մը ձեռք կբերեմ և անպայման կմեկնիմ Ծովային թղթատարության «Սաղալիեն» շոգենավով, որ Պոլիսեն դուրս կուգա հոկտեմբեր 21 1909 և ութ օրեն կհասնի Մարսել: Ուրեմն՝ բարի՛ ճամբա: Դեռ երեք շաբաթ կմնամ հոս, Թուրքիա:

Սիրելի Յաննի՛, թերևս այս բոլորը ոչինչ կըսեն քեզի: Թերևս այս նամակս կձանձրացնե քեզ: Թերևս դուն լավագույնս սեպեիր, որ ես քեզի գրեի Կապույտ սիրո և Վարդագույն համբույրներու մասին: Թերևս ուզեիր հեշտագինորեն նվաղիլ տաքուկ թևերուս մեջ... Թերևս, ահ, դեռ ինչքան «թերևս»-ներ: Եվ, Յաննի՛ս, դուն կատարելապես իրավունք ունիս, կատարելապես, կատարելապես... Բայց ի՛նչ ընել: Պիտի չուզեի քեզ գրգռել տխուր առանձնությանդ մեջ: Պիտի չուզեի քեզ նեղացնել, փճացնել ջիղերդ, ունայն հառաչանքներով վառել սիրտդ... Ես քեզ այնքան կսիրեմ, այնքան կխնայեմ, այնքան կպաշտեմ, սիրելի՛ս...

Երջանիկ կըլլայի, եթե այս շատ պարզ և շատ հասարակ բառերուն մեջ

կարենայիր խորունկ սեր մը տեսնել քեզ հանդեպ, իմ պաշտելի Յաննիս...

Ուրախ եղիր:

Քու հավիտենական Ռուբենդ,

Հոկտեմբեր 2, 1909

Կ. Պոլիս

Պաշտելի բարեկամուհիս: Ստացա նամակդ, երեկվան կարճ, բայց զմայելի նամակդ: Սիրելիս, այդ որքան ընթշություն, որքան քաղցրություն գրչեդ կաթած խել մը բառերուն մեջ: Երբ մարդ կսիրե, ինչքան երջանիկ է ու բանաստեղծ: Բայց դուն բանաստեղծ ես եղած զիս ճանչնալեդ ու սիրելեդ ալ առջ: Սակայն հիմա արդեն ունիս համբուլրին բանաստեղծության ամենա-ընթշագին նրբությունը: Դուն ավելի ես, քան բանաստեղծ. դուն բանաստեղծությունն ես ինքնին: Աչքերդ, այնքան հանկուցիչ բերնակդ, գիրգ ձեռքերդ, թրթռուն կուպերդ, հոգիդ, որ կերևի մաշկիդ ընդմեջեն... Ամեն ինչ, քու ամբողջությունդ այնքան հմայագեղ է, այնքան ընթուշ, այնքան ընարական. բանաստեղծությունն է բովանդակ...

Սիրելիս, քեզի հաղորդելիք շատ ուրախ լուր մը ունիմ. արդեն ստացա անձնագիրս: Ես զինվորական չպիտի ըլլամ ո՛չ հիմա, ո՛չ ալ ուսումս ավարտելես և վկայվելես հետո: Չի՞ք զինվորականություն ինծի համար... Ահա այսպես: Գո՛հ ես, աղվճո՛րս: Երջանի՛կ ես: Կուզե՛ս համբուրել զիս հիմա: Հա՛, մտղո՛ւկ:

Հիմա կխնդրեմ, որ ամենամեղուշ արտահայտությունը տաս աչքերուդ, կխնդրեմ, որ ըլլաս երջանիկ, այնպես չէ՛: Քանզի վերջապես ազատ եմ հոկտեմբեր 21-ին մեկնելու համար... Կմտածե՛ս Ծնունդի մասին...

Սիրելի և քաղցր Յաննի՛, վաղը նորեն Սիլվիոյի կերթամ, ուր կմնամ երկու շաբաթ, կհանգստանամ և կվերադառնամ հոս՝ Կոստանդնուպոլիս, հետո «մնաս բարով, Թուրքիա՛...»: Ինծի կթվի, թե նոյեմբեր մեկին (կամ մոտավորապես) արդեն իսկ Լոզան կըլլամ, և մեր թղթակցությունը ըստ հնարավորին ավելի կաշխուժանա:

Ինձմե լուսանկար մը կխնդրես: Բայց գրե՛ր-եմ քեզի, որ զայն կստանաս 1910 թվականի հունվար 1-ին, գուցե և ավելի առաջ: Սակայն ո՛չ հիմա, համաձայն ես: Նոր լուսանկար չունիմ, սիրելիս:

Իսկ գալով արևելյան ոսկի մատանիին, զայն հետո կբերեմ Ծնունդին: Ավելի շուտ սարքել տալ չեմ կրնաք: Հուսով եմ, որ կներես ինծի: Եվ հետո, որևէ նամակաբերի ձեռքեն զայն ընդունելու փոխարեն, թերևս ավելի լավ ըլլա սիրող Չիլինկի մը ձեռքեն ստանալ...

Ահա ինչ որ կուզեի ըսել քեզի: Ճիշդ է, որ դեռ հազար ու մեկ գրելիք բաներ

ունիմ, բայց անոնք չեն կրնար բառերով ու գրիչով արտահայտվիլ: Միայն շրթունքներով է, որ Սիրո այդ հազար ու մեկ բաները կրնամ ըսել ականջիդ, կզակիդ, դեմքիդ, մատներուդ ծայրերուն... Բայց սպասելով առոնց, ընդունե թղթեղեն պզտիկ համբույրներ այս էջին տակը...

Քու հավերժական
Ռուբինսո

Հոկտեմբեր 4, 1909

Կոստանդնուպոլիս

Քաղցր Յաննի,

Նախանցյալ օր երեկոյան էր, որ այստեղ՝ Կոստանդնուպոլիս, ստացա երկար նամակդ: Այնպես որ Սիլիվրիի բացիկները անհնար է ճարել արդեն, բայց լոխում կարելի է դեռ հոս գնել: Երեք օրեն կմեկնիմ այստեղեն և հոկտեմբեր 21-ին կըլլամ Մարսեյ՝ ճիշդ այն օրը, երբ Միննան կթողու ժընը: Եթե Միննային հետ ըլլայիր, ես շատ դյուրությամբ կրնայի ժընն հասնիլ քեզ տեսնելու համար, բայց, դժբաղդաբար, դուն նույն օրն իսկ, իրիկունը, պարահանդեսի պիտի երթաս: Իսկ էրֆուրտը շա՛տ է հեռու...

Սիրելի՛ս, ինչպե՛ս պատասխանել քու այնքա՛ն քաղցր, այնքա՛ն հուզիչ ու սիրատենչ նամակիդ: Դուն, ինչպես կըսեն, **Բառի արվեստն ունիս...** Քեզի համար բառերը նուրբ շնչավորներ են, քնքշություններ, կենդանի զգայություններ, ոգեղինություններ, հոգիներ: Եվ դուն զանոնք կմիախոսես քմածին երևակայությանդ, անոնցմե սիրո ամբրոս կթամես, կհորինես լույսի խաղեր, շատրվաններ, խանդաղատանքի հրաշքներ... Եվ այս ամբողջ պայծառափայլության մեջ ես զիս կզտնեմ բոլորովին հափշտակյալ, գեղեցիկ, կախարդված... Յաննի՛, միշտ կըսես, թե գեղեցիկ է սերը: Բայց ես այնքան ալ լավ չեմ գիտեր, արդոյ՞ք Սերը ինքն է այդքան գեղեցիկ, թե դուն ես, որ այդչափ գեղեցիկ կդարձնես զայն...

Եվ հիմա, որ ալ ոչ մեկ ստվեր կա մեր միջև, հիմա, երբ այնքա՛ն լավ կճանչանաք զիրար, որ լույսի երկու աղբյուրներու պես կնայինք մեկզմեկու, հիմա, սիրելի Յաննի՛, մեր սերը ավելի գեղեցիկ է, քան երբեք: **Հրաշալիք է այսպիսի սեր մը կարենալ իրագործել...**

Եկուր վերջացնենք զզվանքի այս պատմությունը, որ քեզ զգվելու ցանկություն կհարուցե մեզս... Իսկ այնքա՛ն տարորեն ցավագին է անկարելի ցանկությունը...

Յաննի՛, եթե ժընն նամակ գրես, ըսե քրոջդ, թե ի սրտե կբարևեմ իրեն (ամենայն անկեղծությամբ) և կնախանձիմ իր ամուսնության: Ըսե նաև Յան-

նիին, թե կմաղթեմ, որ ինքն ալ շատ շուտով նույն բաղդին արժանանա...
Հավնեցա՛ր, պզտիկ մժղո՛ւկ...

Երբ այս տողերը կգրեմ, մայրս քնքշությամբ ու թախսծով կնայի ինձի: Հետս Կոստանդնուպոլիս եկավ, որպեսզի նավի մեջ իսկ բարի ճամբա մաղթե իր զավկին:— «Որո՞ւն կգրես այդ նամակը, որդի՛ս»:— «Միշտ նույն աղջկան, մայրիկ»:— «Որքան շուտ-շուտ կգրես անոր»:— «Բայց ան միշտ կըսե, թե քիչ անգամ կգրեմ իրեն... Իրավունք ունի՛, մայրի՛կ»: Եվ մայրս կժպտի երիտասարդական ժպիտով մը, որ ինձի մտածել կուտա իր սիրո օրերու մասին... Թռչնա՛ծ վարդ... Եվ ըսել, թե օր մը մենք ալ անոր պես պիտի ըլլանք...

Բարևներս հաղորդե հայրիկին ու մայրիկին և ընդունե ամենատաքուկ համբույրներս այտերուդ:

Ռուբեն

Հոկտեմբեր 18, 1909

Կոստանդնուպոլիս

Սիրելի պզտիկ Յաննիս,

Այս առավոտ հասավ նամակդ: Կարդալով զայն, խորապես զարմացա, որ չեմ ստացած Կոստանդնուպոլիս դրկած երկու երկար նամակներդ և Լոզան ուղարկածներեդ մեկը: Հուսով եմ, որ շուտով զանոնք ստանալու հաճույքը կունենամ և այն ատեն մանրամասնորեն կպատասխանեմ քեզի:

Սիրելի Յաննի՛, ահա միայն երկու ամիս կմնա մեր տեսության: Երկու ամիսը թե՛ շատ կարճ է, թե՛ շատ երկար... Կնախանձիմ, սակայն, քեզի, պզտի՛կս... Սիրույդ առանձնության մեջ և զգացումներուդ կատարին դուն քեզի պարտադրեցիր հիանալ վրադ և ժպտիլ տարփանքիդ... Աղվճո՛րս, որքան մաքուր ես դուն, որքան կատարյալ... Եվ ինչպե՛ս գիտես արտաբերել սրտասարսուռ բառեր: Եվ ինչպե՛ս կրնաս գտնել ճշգրիտ արտահայտություններ, որոնք դողահար նամակներուդ վրա հեծկտացնելու աստիճան թունդ կհանեն հոգին: Դուն այնքան քնքուշ սիրտ ունիս, այնքան երազուն նայածք, որ կարելի է սիրո թղթիկներուդ ընդմեջեն տեսնել զանոնք: Եվ սակայն այնքան իտեալական ես և այնքան ամպային, որ մարդ չի ուզեր հավատալ կատարյալ իրականությանդ և յուրովի հարց կուտա, թե իսկապես գոյություն ունի՞ս դուն...

Բայց և այնպես գոյություն ունիս:

Եվ գոյություն ունիս միայն ինձի՛ համար... Ինձի համար, միայն ինձի, ինձի՛... Ի՛նչ տարապայման **եսասիրություն** ուրիշի մը հոգիին տեր դառնալու զգացումը: Զգալ, թե երկրիս վրա, միլիարդավոր ասուններու և անասուններու մեջ կա հոգի մը, որ կպատկանի քեզի, որ պիտի ուզեր մենսիլ քեզի համար, որ պիտի կարենար ներաշխարհ հասկնալ և սիրել վաղանցիկ գոյությունդ, — Ի՛նչ հարստություն, ի՛նչ բախտ, ի՛նչ երանություն:

Ուրեմն այսպես, քաղցրիկ բարեկամուհի՛ս, մենք երկուստեք սիրո այդ եսասիրությունն ունինք, մեկս մյուսին տեր դառնալու երջանկությունը: Դուն իմս ես, իսկ ես՝ թուկդ: Աշխարհին մեջ չկա մեկը, որ կարենա խառնվիլ մեր գործերուն: Ես թու գերիդ եմ, և սակայն անգուք տիրուհի մը չես դու: Ես թու մեկ իրդ եմ, կրնաս զիս սիրել և կրնաս ջարդել: Կրնաս ինձմե դափնեպսակ մը հյուսել ճակտիդ համար կամ կերտել պատվանդան մը արձանացմանդ ի խնդիր:

Ի՛նչ լավ է ըլլալ երկուք և ըլլալ միմիայն մեկ...

Սիրելի՛ս, անշուշտ, քեզի գրելով այս բանի մը հպանցիկ բառերը, ես դույզն հավակնություն չունիմ խորաչափելու մեր սերը: Օ, ո՛չ: Մեր սերը չափազանց գեղեցիկ է անոր մասին կարենալ խոսելու համար, և չափազանց խորունկ, կարենալ խորաչափելու համար զայն: Եվ հետո, որքան խոսիս անոր մասին, այնքան ցանկություն ունիս խոսելու... Ապարդյուն ջանք պիտի ըլլար անհրապույր անկյուն մը, փշոտ մացառներ, մթաստվեր խորշեր, արյունոտ հետքեր որոնելը անոր մեջ... Նման ոչինչ պիտի գտնես այնտեղ: Ոչին՛չ, բացի մաքրամաքուր գեղեցկութենն: **Իրագործված եղեմն է այս սերը...**

Եվ որքան երջանիկ ենք, որ մենք ինքնին և միայն մեզի համար իրագործեցինք այս եղեմը:

Կժպտի՛ս, Յաննի՛: Կըսես, որ «դեռ շատ հեռու է մեր սիրելի եղեմը»: Ի՛նչ փուլթ: Ավելի բան երկու տարիե ի վեր մենք կքալենք դեպի մեր եղեմը և պիտի քալենք տակավին:

Մեզի ի՛նչ դժվարությունները, ուրիշներու վատություններն ու չարությունները: Ահա երկու տարիեն ավելի է, որ կխոսինք անոր մասին, կնկարագրենք ու կըղձանք զայն, և դեռ ծայրը չի երևիր: **Մեր սերը մոգական զուլալ բյուրեղ մըն է անթիվ երեսակներով...** կարելի է ամեն կողմե դիտել զայն և ամեն կողմե վսեմ է ան: Եվ ահա այս է մեր Սիրո մեծությունը: Մինչդեռ այլոց սերը գեղեցիկ է միայն մեկ կողմեն, մերը բոլոր կողմերեն գեղեցիկ է հավասարապես... Ջգացական գեղեցկություններու անպարագիծ դաշտանկար մըն է ան, ուր զբոսնելեն չես հոգնիր բնավ: Ամեն անկյուն հմայիչ է այնտեղ:

Մենք կքալենք ուղիդ, անվրեպ, արիաբար: Մեր ճանապարհը շիտակ է և լուսավոր: Չենք սիրեր խաբեական քայլեր առնել, կեղծ ու պատիր շարժամներ ընել մութին մեջ, որպեսզի ավելի շուտ հասնինք մեր երազած դրախտին... Եվ ընդսմին ուրիշ սիրողներեն մեր մեծագույն տարբերությունն այն է, որ **մենք ուղիդ կքալենք:**

Ո՛չ մեկ գայթակղություն, ո՛չ մեկ տգեղություն, ո՛չ մեկ դավաճանություն: Քանզի մենք քաջ վստահ ենք մեր լուսավետ վաղվան:

Ուստի, սիրելի՛ս, երբ կթոտության, խոնջենքի, հուսահատության ու տկարության պահեր ունենաս, խորիե, որ **Աստված** մը ունիս թու մեջդ... Դուն սո-

վորական մահկանացու մը չես բնավ, ուստի իսկապես չափազանց ցավալի է որ կլքես աստվածային աթոռդ բանեցնելու համար կնոջական արհեստը...

Եվ ի՞նչ արհեստ...

Մեկ կողմ ձգե այդ միամիտ խելագարությունը, որ կկոչվի Փառք: Մեկ կողմ ձգե այդ մարդկային կատակերգությունը, որուն անունն է Քատրոն, և ասեղնագործե լռելյայն այն խոնարհ շապիկը, զոր պիտի հագնինք մենք երկուքով և որ պիտի կոչվի Սիրելու Երջանկություն...

Քու Ռուբենդ

1909, Նոյեմբեր 2

Նոյեմբեր 7, 1909

Սիրելի Յաննի,

Մեծ հանդիպումի օրերը կմոտենան:

Վերջապէ՛ս, երեք շաբաթեն, պիտի միանանք իրար: Եվ ինչ բաղդը երազ պիտի իրագործվի:

Բայց մտածա՛ծ ես երբեք, որ ես հսկա զոհողություններ հանձն կառնեմ հանուն այս տեսության:

Գիտես արդե՛ն (Ջատիկին եմ ըսեր քեզի), թե ես Ծնունդին չէի կրնար գալ: Ավելորդ է հարցնել՝ ինչո՞ւ: Հիվանդանոցին պատճառով: Բայց ի գին մեծ զոհողություններու, կարելիս ըրի, որպէսզի հաջողի Ծնունդի ընթացքին թողուլ Լոզանն ու բժշկական ուսումս: Եվ հուսով եմ, որ շատ քիչ ատենն կտեսնվինք Նորեն:

Եվ այս անգամ շատ համբույրներ ունինք բաշխելու իրար և ահագին խոսելիքներ: Քանզի պետք է հիմակվընե իսկ ըսեմ, թե Ջատիկին չպիտի կարենամ գալ: Անկարելի է, կատարելապես և վերջնականորեն անկարելի...

Բայց, փոխարենը, հույս ունիմ, որ բախտը կժպտի մեզի, և մենք կրնանք ամառը տեսնվիլ կրկին: Աքանջելի կըլլար, այնպես չէ՛:

Արդե՛ն իսկ Ծնունդի իբրև նվեր ես բաներ մը պատվիրեր եմ հայրիկի, մայրիկի և քեզի համար:

Իսկ դուն անշուշտ կփափաքիս գիտնալ, թե ես ի՞նչ կուզեմ ստանալ քեզմէ: Սիրելի՛ս, արդե՛ն ըսած եմ քեզի և բազմիցս կրկնած. ես քեզմէ միայն համբույր կուզեմ: Եվ եթե համբույրի արժանի չեմ այս տարի, այն ատեն ամենայն սիրով պիտի ուզեի քանի մը բարերար ապտակիկներ ստանալ... Բայց եթե կցանկանաս անպայման բան մը տալ ինձի, որ ըլլա միաժամանակ իրեղեն և խտեալական, քեզի կմնա մտածել և ընտրություն կատարել: Միայն, քանի որ շատ ճնշում բանեցուցիք կամքիս վրա, ըսեմ. թող այդ նվերը խորհրդանշական ըլլա, որպէսզի կարենամ զայն կրել ամեն օր, ցմահ, և թող չփոխվի ու չփճանա երբեք: Ահա բաղձանքս: Ընտրությունը կթողում քեզի:

Իսկ դուն գիտե՛ս, թե ինչու կհայտնեմ այս ցանկությունները: Քանզի չեմ ուզեր, որ ի զուր ճիգ ու ջանք թափես: Լսե, տված փողկապներդ մաշեցան արդեն, բաճկոնակը ամեն օր հագնելիք չէ, քանի որ կաղտոտի ու գույնը դուրս կուտա, իսկ փողպատը կկապվի միայն ձմեռը (և, բացի ատկե, կնախընտրեմ չկրել զայն ու պահել որպես հիշատակ քեզմե), բայց այս բոլորը ըսելով հանդերձ, չեմ ուզեր քննադատել քեզ (կարգիլեմ այդպես մտածել), այլ կփափաքեմ խնայել քեզի տարապայման պրպտուրը, չարչարանքն ու հոգևությունը:

Բայց այս բոլորը ձգենք Ծնունդին և խոսինք բոլորովին ուրիշ բաներ: Պատմե ինձի քիչ մը երեքշաբթի օրվան համերգեն, ուրուն հայտագիրը ստացա շնորհակալությամբ: Գրե հաջողութենեդ ու տպավորություններդ: Պատմե ամեն ինչ: Քանզի գիտեմ, Ծնունդին ժամանակ չենք ունենար զրուցելու նման բաներու մասին (չէ՛ որ անհուն ցանկություն ունինք շարունակ համբուրվելու) և հետո, դուն բնավ չպիտի ուզես երգել ինձի այդ երգերը: Պզտիկ մժղո՛ւկ...

Քաղցրի՛կս, եթե քեզ կհետաքրքրե, ահա քանի մը բառ ուսումնական ծրագրիս կապակցությամբ: Ձմեռնային այս կիսամյակի ընթացքին կանցնիմ. 1. Հիվանդի քննում, 2. Մաքրություն, 3. Դիագնություն, 4. Կիրահատական ծնընդաբերություն, 5. Բուժարանային գիտելիքներ, 6. Մաշկի հիվանդություններ, 7. Ուղեղի հիվանդություններ (խենթություններ), 8. Աչքի հիվանդություններ:

Կտեսնես, որ հսկա բան կա գլուխ ճայթեցնելու համար... Պետք է շատ ու շարունակ աշխատիլ:

Կավարտեմ նամակս, անթիվ համբույրներ դրոշմելով սիրելի դեմքիդ, իմ այնքա՛ն համավոր ու այնքա՛ն պաշտելի Յաննիս...

Քու հավերժական Ռուբենդ

Հ. Գ. Կուզեի ավելի երկար գրել, բայց մտածեցի, որ թերևս կարդալու ժամանակ չունիս փորձերուդ պատճառով, և այն ատեն շատ ցավալի կըլլար, այնպես չէ՛:

Ռուբեն

Անուշ սիրեցյալս,

Կեսգիշեր է: Մինակ եմ, ավա՛ղ, այնքա՛ն միևնալ: Եվ ինձի կթվի, թե չափազանց դժբաղդ եմ արդեն: Եվ ինձի կթվի, դե դուն արդեն այնքան հեռու ես ինձմե, հեռու և ժպտուն, ինչպես հանգուցյալի մը դեմքը, և թե առանց ուզելու, առանց թումբ կանգնելու, կթողամ, որ հոգիս տապալի երեկվան սիրո մը ավերակներուն վրա...

Երե՛կ: Ուրեմն երեկ էր այն ամենը, զոր զգացինք, կատարեցինք, նվիրագործեցինք, խոստացանք, ամենը: Ուրեմն երեկ էր մեր սերը: Իսկ վա՛ղը: Ի՛նչ պիտի բերե մեզի վաղվան օրը: Ավա՛ղ, ինչպե՛ս կվախնամ այդ վաղվընես:

Աստված իմ... Կարելի՞ է միթե: Բայց և այնպես: Կարելի՞ է միթե...

Բայց լսե՛ք զիս, սիրեցյալս, քաղցրի՛կս, պզտի՛կս, սիրելի՛ս, պաշտելի՛ս: Լավ լսե՛ք դժբաղդի մը ձայնը գիշերվան ընդմեջեն...

Ինչպե՛ս մարդ կրնա սեր մը սպաննել: Կհանդգնի՞, իրավունք ունի՞ նման արարքի մը: Եվ եթե նույնիսկ ցանկանա, կրնա՞ գործադրել զայն: Կրնա՞ արդյոք: Սակայն Սերը (մերինը) ավելի զորավոր է, քան մենք: Ավելի զորավոր է, քան ձակատագիրը: Ավելի զորավոր է, քան Մահը: Մեզմե ո՛վ պիտի կարենար կործանել զայն ընդմիջտ...

Օ, Յաննի՛, կտեսնե՛ս զիս այնտեղեն, սիրելի՛ս: Կարտասվե՛ս դուն ալ, այս գիշեր, սենյակիդ ցրտին առանձնության մեջ, դեմքդ թաղած սիրո կարմիր բարձիկներուն մեջ:

Սե՛րը: Ի՛նչ ըրինք մենք, Յաննի՛: Կարելի՞ էր միթե: Չափազանց էր սերը (առնվազն իմ կողմես), այդ պատճառով ալ այսպես եղավ:

Չափազանց էր Սերը...

Ես երևակայեցի այն բոլոր անխորժությունները, զոր դուն պետք է մտովի բերեիր աչքիդ առջև. մարդկային բոլոր փոքրոգությունները, փարիսեցիական պայքարները, զազրելի աղտեղություններն ու հասարակաց նախատիքները, որոնց անհրաժեշտաբար և անպայմանորեն պետք է ենթարկվեիր քու նախընտրած արհեստիդ մեջ: Այս բոլորը, իմ այնքան սիրելի Յաննիս, ինձի սոսկում, սոսկում առթեցին: Կհասկնա՞ս, սիրելի Յաննի՛, Սոսկո՛ւմ...

Եվ ես ամչցա մարդ ըլլալես և հանուն Արվեստի կատարվող բոլոր աղտոտություններուն դիմանալ կարենալես: Ահ, Յաննի՛, որքան կուզեի քեզի նման ըլլալ. վարդագույն տեսնել իրերն ու էակները, ամենուրեք հավատալ երազի թագավորության և ունենալ միայն մեկ հորիզոն՝ Իտեալը... Որքան երջանիկ պետք է ըլլա մարդ, ունենալով քու այնքան զուլալ խղճիդ անհուն հանգըստությունը և մաքրություն մը, ջուկինիդ չափ շուշանային:

Ավա՛ղ, Յաննի՛, (իմ Յաննիս), աշխարհը բոլորովին այնպես չէ, ինչպես կպատկերացնեն զայն: Եվ փռքի մյուս երեսը ահավոր է իսկապես...

Ուրեմն ինչո՞ւ զոհաբերել Սեր մը, այնքան երկնային: Ինչո՞ւ կորստյան մատնել հոգիիդ այնքան հրաշափառ մաքրությունը: Ինչու պատահականության թողուլ հույժ իտեալական երազներդ: Ինչո՞ւ կորսնցնել կյանքի և հոգիի խաղաղությունը: Ինչո՞ւ: Խաղալու և զվարճացնելու համար տխմար մարդոց ջուլիրը, որ կուգա մեկ-երկու մարքով հաճույք ու վայելք գնելու ի խնդիր, ինչպես պանիր ու միս կզնեն...

Օհ, այո՛, գիտեմ. եթե մարդիկ քեզի չափ իտեալական ըլլային, ջստիք չէի ունենար... Բայց կմոռնաս, որ մենք դեռ կապրինք քսաներորդ դարուն մեջ, ուր միահեծան կիշխեն Նյութապաշտությունը, առուտուրը, արդյունաբերությունը, դրամն ու գարշանքը...

Եվ այս ամբողջ գետնաքարշության մեջ դեռևս երազելու և խտեալին նվիրաբերվելու նպատակով մաքրության պտղիկ անկյուն մը գտնելու համար պետք պիտի ըլլար ապավեն որոնել ինչ-ինչ մենավոր լեռներու բարձունքներուն վրա:

Այդ ի՞նչ կընես, Յաննի՛...

Դուն կնետվիս այնտեղ, ուր կվիտան բոլոր վատառողջ ու հոռեգույն վալեյները մեր դարու:

Կթողուս, որ սերդ, իտեալդ, երազդ, մաքրությունդ երթան ու մեռնին տեղ մը, անանուն ու լքալ...

Իմ այնքա՛ն քաղցր Յաննիս, այնքա՛ն սիրված ու սիրող աղվորս, իմին Յաննիս, լսե, բայց և այնպես մենք այնքա՛ն լավ էինք քեզի հետ: Աշխարհիս մեջ այնքա՛ն մենավոր կզգայինք մենք մեզ, այնքա՛ն իտեալական ու միաձուլ, այնքա՛ն լավ, այնքա՛ն լավ: Եվ դուն միշտ կըսեիր, թե իմ կողքիս ոչ ոքի և ոչինչի կարիք ունիս, թե չկա բան մը որ դուզն կարևորություն ունենա աչքիդ, թե պիտի ուզեիր մեռնիլ այդպես...

Իսկ հիմա՛... ահա կուզես ապրիլ (և ի՞նչ կյանք), կուզես գոչել ու գոչեցնել, ունենալ բարձրաշխարհիկ շրջանակ (երազային առանձնության փոխարեն), ունենալ ի՞նչ. ամենաանկարգ ու ամենաաղմկոտ կյանքը:

Յաննի, խելքի եկուր ու ձգե այդ արհեստը անոնց, որ կուզեն վաստկիլ իրենց կյանքը, կուզեն իրենց ունեցած-չունեցածը վաճառել լայն հասարակության...

Դուն ատոր համար չես ստեղծված:

Դուն բոլորովին ուրիշ ես: Դուն քեզ չես ճանչնար:

Եվ ես շատ լավ գիտեմ, որ եթե այնտեղ ըլլայի հիմա, դուն շատ շուտով պիտի տեսնեիր Երջանկության ու ճշմարտության երկնային լույսը և ոտքերուս պիտի իյնայիր, արտասվելով. «Ռուբե՛ն, միայն դուն ես իմ կյանքն ու էությունը, միայն դուն ես, որ կառաջնորդես ու կթևարկես զիս, և ես անձնավորյալ Բանաստեղծությունն եմ, միայն ու միայն քեզի համար: Այլևս լայն հասարակություն չեմ ուզեր, միայն քեզ, քե՛զ է, որ կուզեմ: Կուզեմ առանձնություն, ուր կարենայինք սիրել ու մարդու երես չտեսնել: Երթանք, Ռուբե՛նս, ես միայն քեզ կուզեմ. ապրինք մեր լուռ Իտեալի և մեր փոքրիկ տնտեսության մեջ: Ես կուզեմ միայն քեզ, միայն քեզ, Ռուբե՛նս...»:

Դո՛ւն ես արդյոք, որ կըսես այս բոլորը, Յաննի՛ս:

Ինձի կթվի, թե կլսեմ հեծեծանքե հատկոյալ բառերդ: Կթվի, թե կաթկթող արցունքներու հծծյունը կլսեմ գիշերվան մեջ: Եվ ականջս կխոսի: Դո՛ւն ես արդյոք...

Ես այստեղ եմ, քաղցր Յաննի՛ս: Կսպասեմ քեզ: Պատրաստ եմ քեզի համար: Եվ պիտի ուզեի մեռնիլ ի սեր քեզ: Ուրեմն ես դուն եմ: Քու կեսդ և ամբողջդ...

Իրա՛վ, կուզե՛ս լքել զիս, Յաննի՛ս...

Եվ ի՛նչ պիտի ըլլա մեր Սերը այսուհետև:

Եվ ի՛նչ պիտի ըլլան մեր խեղճ համբույրները, որ այնքա՛ն ծարավի են մեր շրթներուն...

Եվ ի՛նչ պիտի ըլլան մեր սրտերը, այնքա՛ն նման և խտեալական, այնքա՛ն մտերմիկ ու սիրաջեր...

Կարելի՞ է սպաննել Սերը, Յաննի՛ս...

Հապա եթե Սերը մեզ սպաննե՛ր...

Ահ, ի՛նչ կըսեմ. կարելի՞ է միթե, կարելի՞ է միթե, Աստվա՛ծ իմ:

Եվ ի՛նչ լավ կսիրեհիք մենք զիրար, իմ այնքա՛ն քաղցրիկ սիրեցյալս...

Նոյեմբեր 9, 1909

Քու Ռուբենդ

Իմ մեկ հատիկս,

Նորեն կեսգիշեր է, և նորեն կգրեմ քեզի:

Ինչպիսի՛ նամակ էիր դրկած այսօր, Յաննի՛ս: Ի՛նչ կսկծալի, ի՛նչ ողբեր-գական նամակ:

Եվ ինչպե՛ս խոցեցիր զիս, կոպտորեն, անխոհեմաբար:

Բայց այդ բոլոր խոցերը միայն ու միայն բարիք բերին ինձի...

Երևակայե. փոթորիկեն հետո անդորրություն: Հիմա խաղաղած և իր հանդարտությամբ ծանրերեր ծովուն պես է հոգիս...

Ու եթե դուն ավելի հանգիստ ու ավելի խոհուն ըլլայիր, պիտի տեսնեիր, որ ես ո՛չ կարծածիդ չափ «հիմար» եմ, ո՛չ ալ «չար»:

Ահա երկու խոսքով ամբողջ բացատրությունը...

Բոլոր երիտասարդ զգացական աղջիկները, հանուն «Անձնավորյալ բանաստեղծության», բեմ ելլելու փափաք ունին: Բայց տակավ առ տակավ կմոռնան իրենց առաջին ցանկությունը, և եթե նույնիսկ ստիպեիր անոնց շարունակելու այդ արիեստը, պիտի սաստիկ շփոթեին:

Կկարծեի, թե դուն ալ կմոռնաս քնքուշ ու միամիտ երիտասարդության այդ երազները: Եվ այս պատճառով չուզեցի նախօրոք սիրտդ կտրել: Ընդհակառակը: Ի՛նչ օգուտ արգիլելեն,— կըսեի յուրովի:— Պիտի գա օր մը, երբ ինքն իսկ ձեռք պիտի քաշե այդ ցանկութենեն»:

Բայց, ցավոք սրտի, տեսա, որ դուն ավելի ու ավելի կխրվեիր թատերական դիտավորություններուդ մեջ... Եվ սակայն, քու տարիքիդ, մարդ երախա չէ այլևս... Այն ատեն բարեկիրթ ըլլալու ցանկությամբ հարկ համարեցի ազդարարելու քեզի, որ եթե դուն դերասանուհի դառնալ կփափաքես, ես քու ամուսինդ չեմ ըլլար...

Այսպես կիրամայեր պարտականությունը և այս էր ճշմարտության ձայնը:

Ինչո՞ւ ի զուր քեզ պտըղցնել պատրանքի պարտեզներուն մեջ... Դուն այն տարիքն ունիս, երբ բացե ի բաց կարելի է ամեն բան ըսել: Իսկ ճշմարտությունը քեզմե թաքցնելը իմ ձեռքով գործված ոճիր մը պիտի ըլլար:

Ես չուզեցի գործել այդ ոճիրը:

Եվ գիտցիր, Յաննի՛, այդ ամենը ըսի քեզի, որովհետև ես շատ լավ մարդ եմ, և քու անձդ սուրբ է ինձի համար:

Եթե չար մարդ ըլլայի ու չսիրեի քեզ, ինչո՞ւ պիտի արգելք դառնայի ծրագիրներուդ: Ինչո՞ւ պիտի զայրացնեի քեզ և այնքան ցավ պատճառեի սրտիդ: Պարզապես կըսեի. «Թող ուզածն ընե, ինձի ի՛նչ... Թող դերասանուհի դառնա կամ լարախաղաց, հո՛գս ալ չէ... Ինձ վայելքները գիշերվան, իրեն՝ գիտնալ ի՛նչ կամենալ... Բոլոր մարդիկ ազատ են, և ես՝ նույնպես...»:

Բայց և այնպես չըսի այս բոլորը:

Քանզի բոլոր մարդիկ ազատ չեն:

Եթե նշանված չըլլայիր, քեզի խորհուրդ կուտայի դերասանուհի դառնալ, փառքի և հարստության տիրանալու համար: Բայց քանի որ նշանված ես, ազատ չես այլևս: Ես ալ ազատ չեմ: Մենք գերին ենք մեկս մյուսին: Պետք է վերջ տանք մեր քմայքներուն և երբեմնի ծրագիրներուն: Պետք է միշտ նկատի առնենք մյուսի երջանկությունն ու հոգեկան անդորրը: Ահա թե ինչ մոռցար դուն...

Եթե վաղը քեզի ըսեմ, թե որոշած եմ քահանա դառնալ, ի՛նչ կպատասխանես ինձի. «Բայց ո՞ր է իմ երջանկությունս...»:

Իսկ եթե դուն որոշես դերասանուհի դառնալ, ես պարզապես կհարցնեմ քեզի. «Բայց ո՞ր է իմ երջանկությունս...»:

Դուն լուրջ սխալ մը գործեցիր. թեթևամտորեն դատեցիր և շարժեցար այնպես, կարծես միս-միսակ ըլլայիր ամբողջ աշխարհին մեջ:

Եթե ես միսակ ըլլայի երկրի երեսին, եթե անձս խոստացված չըլլար որևէ մեկուն, եթե ոչ նշանված ըլլայի, ոչ սիրահար, կրնայի ամեն ինչ դառնալ՝ դերասան, քահանա, գիշերահաճ ծեր անառակ, սրճարանի երգիչ կամ թափառաշրջիկ ոճրագործ, քմածին արվեստագետ, մեկ խոսքով, ինչ որ խելքս փչեր: Եվ ոչ ոք ոչինչ կրնար ըսել ինձի: Բայց հիմա բոլորովին ուրիշ է: Ես նշանված եմ, խոստացված, գերի, ես պատասխանատու մարդ եմ և նախքան որևէ բան որոշելը, պետք է միշտ հարցնեմ ինքզինքիս, թե այդ բանը բարիք կերե՞մ՝ մեր ապագա ընտանիքին...

Բայց այս ամենը չի նշանակեր, որ ես կստիպեմ քեզի թողուլ բեմը: Բնավ երբեք: Ընդհակառակը: Կընդունիմ, որ ազատ ես, կրնաս ուզածդ ընել, և որ ես արդեն ամեն ինչ կներեմ քեզի (նախօրոք): Ոչ մեկ սպառնալիք կկարդամ և նույնիսկ կխոստանամ շարունակել քեզ սիրել, որովհետև սիրեցի քեզ, իսկ

մարդ կսիրե միայն մեկ անգամ:

Միայն թե քու մեջդ պիտի միշտ սիրեմ հին Յաննին, այն, որ պարզ աղջիկ մըն էր և ուներ մեկ ու միակ հավակնություն՝ իր սերը, մեկ ու միակ մտածում՝ իր ապագա փոքրիկ տնտեսությունը, մեկ ու միակ փառք՝ իր սիրահարը...

Պիտի սիրեմ մեջդ այս հին քույրը, այնքան բնական ու անկեղծ, այնքան պարզ ու հուզիչ:

Ինձի կըսես, թե պետք է քեզ ատրճանակի հարվածով սպաննեմ: Հանուն ինչի՞:

Դերասանուհին դանդաղորեն պիտի սպաննե հին Յաննին:

Ես չպիտի թողում, սակայն, որ դուն ինքդ սպաննես մեջդ հին Յաննին:

Քանզի շատ սիրեցի իմ հին Յաննիս...

Եվ այնքան մաքուր ու այնքան պարզ այդ հին Յաննիին հիշատակը ինձի համար պիտի դառնա շարունակական սուգ մը և երբեք չպիտի թույլ տա, որ ամուսնանամ զվարճանքի և ազմուկի դուստր Յաննի դերասանուհիի մը հետ...

Ո՛չ, հակառակ ամեն ինչի, հակառակ սիրույս ու բարությանս, պիտի չուզեի ամուսնության դաշն կնքել աղջկա մը հետ, որ իր թատերական դաշինքը կկռե:

Ես կսիրեմ պարզ կյանքը (քանիցս ըսեր եմ քեզի): Կսիրեմ անշուք ու լուռ երջանկությունը: Կսիրեմ անտառի ստվերն ու մենության խորհուրդը: Կսիրեմ հոգեկան խաղաղությունը: Կսիրեմ սրտով աղքատները: Եվ քեզ սիրեցի, քանզի կարծեցի տեսնել մեջդ թե՛ խորհուրդը, թե՛ ստվերը, թե՛ սերը, թե՛ խաղաղությունը, թե՛ մենությունը սրտի, որ կհանգչի:

Ո՛չ, Յաննի՛: Նախատե զիս, եթե կուզես: Ըսե, որ ես «չար» եմ, «կոպիտ», «թշվառական»: Բայց երբեք մի՛ ըսեր, մի՛ կարծեր, թե այլևս չեմ սիրեր քեզ և թե պզտիկ պատրվակ մը կփնտռեմ քեզմե բաժնվելու համար:

Գիտեմ, որ կսիրես զիս, և որ առանց ինձի կյանքդ պիտի ըլլար մահ մը դանդաղ ու ցավազին:

Գիտեմ նաև, թե ես ինչպե՛ս կսիրեմ քեզ և ինչպե՛ս պիտի ուզեի ավելի շուտ ինքս կորսվիլ, քան քեզ կորսնցնել:

Կմտածեմ միայն, թե այդ ի՞նչ քմայք դրոցեք քեզ, մեզ՝ երկուքս ալ, կարենալ դժբաղդ դարձնելու համար:

Ինձի կըսես, թե քմայք չէ, այլ տաղանդ:

Ամեն պարագային շատ ողբերգական տաղանդ մը պետք է ըլլա այդ, երկուքս ալ սպաննել կարենալու համար...

Բայց կսիրեմ, կսիրեմ, կսիրեմ քեզ, իմ այնքան քաղցր Յաննիս...

Քու Ուրբենդ

Նոյեմբեր 10, 1909

Սիրելի Յաննիս: Եթե ըստի թեզի, թե այլևս չպիտի կրնամ թեզ սիրել, պիտի հավատալի՞ր իրոք: Մի՞թե: Ես՝ ո՛չ: Ջիս թեզմե բաժնելու համար ամեն ինչ ապարդյուն է, ամեն ինչ՝ անզոր: Մեր միաձուլումը շաղախված է բազմաթիվ հույժ դժոխակ փորձություններով: Եվ այսուհետև, առանց դույզն չափազանցության, կրնանք ըսել, թե մենք այլևս մեկ ու միակ անձնավորություն ենք: Ահ, սիրելի Յաննիս, կըմբռնես բովանդակ քաղցրությունը, որ կա թեև երկու, բայց միայն մեկ ըլլալու այս զգացման մեջ... Եթե երեք տարի առաջ մեկնումեկը ըսեր ինձի, թե ես պիտի դառնամ սիրահար, գերի, խենթ, թե հեռավոր աղջկա մը համար պիտի կորսնցնեմ ազատությունս ու զվարճանքներս, թե այլևս չպիտի ըլլամ քմայքոտ երևակայության մարդը, թե ա՛լ չպիտի ունենամ այնքան մեծ ու մանկական հոգիիս ամբողջ հանգստությունը, թե բնավ չպիտի ըլլամ գլխուս տերը.— ես պարզապես կժպտեի ժպտով մը թերահավատ...

Սակայն ահա՛: Եղավ չըլլալիքը: Մեջն եմ անոր: Եվ այնքան բնական, այնքան հեշտին կթվի ինձի այս ճակատագրական գերությունը... Եվ չեմ զղջար, որ ամեն բան կորսնցուցի թեզի համար: Եթե ավելին ունենայի, սիրով պիտի կորսնցնեի: Ամեն ինչ թեզի համար: Եվ ոչինչ առանց թեզի...

Բայց և այնպես տարբերություն մը կա երեկվան սիրո և այսօրվան սիրո մեջ: Ինչո՞ւ այս տարբերությունը: Սիրո Աստվածուհին կփոխվի՞ միթե... Մի՞թե երեկ ավելի կսիրեի թեզ, քան այսօր: Կամ մի՞թե այսօրվընե նվազ կսիրեի թեզ երեկ: Ուրեմն՝ կա՞ փոխված բան մը արդյոք: Եվ ինչ է այդ փոխվածը:

Երբ ավելի քան երկու տարի առաջ, գիշեր մը, համբուրեցի թեզ Կրանսի դղակի սեմին վրա, ես կրակ ու բոց էի միայն, կեռայի, և սերը ամեն ինչե զորավոր էր և ուժգին: Հստակ չէի տեսներ շուրջս... Ամենուր քու դեմքդ էր աչքիս առջև, ամենուր՝ իմ սերս, ամենուր վարդերանգ համբույրի մը հիշատակը, ամենուր՝ երազ ու մառախուղ: Եվ այս հոգեմիճակը կշարունակվեր ակամա, անգիտակ, անուղեցույց, կույրվկուրային:

Իսկ հիմա՞...

Որքան փոփոխություններ: Հոգիի և սիրո որքան այլակերպումներ...

Ուրեմն՝ մնաս բարո՛վ, Շամբերիի՛ Ռուբեն: Մնաս բարո՛վ, Դյուլիի՛ Ռուբեն: Մնաս բարո՛վ, Ռուլի մեջ, Լեմանի վրա ծիպացող գիշերվան Ռուբեն: Մնաս բարո՛վ, Պուրկ փողոցի ձեղնահարկի՛ Ռուբեն: Մնաս բարո՛վ հավիտյանս հավիտենից: Ես թեզ կթաղեմ հին Հիշողության դեղին տերևներուն տակ...

Իսկ հիմա՞...

Մնաս բարո՛վ, սե՛ր: Ո՛չ: Հիմա Սերն է, որ կծնի... Սերը մաքուր, Սերը գիտակից, Սերը անձնվեր, Սերը խաղաղավետ ու խորունկ, Սերը վճիտ... Քանզի երեկվան սերը սերն էր մեկ օրվան, սերը կիրթերու, սերը միգամած... Հիմա Սերն է Հավերժության, որ կհառնե... Հստակորեն կտեսնեմ ամբողջ ապագան:

Կտեսնեմ զայն առջևս, շոշափելի, իրական: Անոր գալուստը կզգամ: Եվ քեզ կզգամ իմ մեջս, իմ մեջս կզգամ ամբողջ Հավերժությունն ու Տարածությունը... Երեկվան ոստոստուն սերը չէ ասիկա, այլ Սերը Հոգիներու, զոր ոչ մեկ մարդկային հոգի հղացած է ցարդ...

Ահա թե ի՞նչ է փոխված երեկվան և այսօրվան միջև: Աննշան կթվի, բայց հսկայական է, **անհավատալի** այն փոփոխությունը, որուն ենթարկվեցանք այս երկուք ու կես տարիներու ընթացքին...

Եվ, անկասկած, այս անհուն փոփոխությունը չէր կրնար անցավ տեղի ունենալ: Ծնունդը պետք է ցավագին ըլլա: Այս է Տիեզերքի մեծ օրենքը:

Մենք այդ ցավերը բաշեցինք անտրտունք, համակերպիկ:

Այդ ցավերուն նայեցանք իբրև անմեկին բարեկամներու:

Բոլորով սրտիվ երախտապարտ եղանք այդ ցավերուն:

Եվ հիմա մեծ անդորրության, երկնային խաղաղության, **անդրաշխարհային** Իտեալի էջքը կզգանք մեր մեջ...

Սիրելի՛ս:

Եղև՛: Ահա հասեր ենք մարդկային երևույթներեն **անդին, անդին՝** երկրայիններեն...

Մենք այլևս չենք կրնար վերադառնալ անկե: Անկարելի է: Մանավանդ որ ա՛լ չենք ուզեր վերադառնալ: Երբ խիզախ ալպինիստը կմազլցի երկնաբերձ լեռներն ի վեր և երբ արդեն կհասնի գերագույն բարձունքներուն, ետև նայելով, տեսակ մը գլխու պտույտ կզգա, կարծես կմշուշվին աչքերը, և դողդողալով կհարցնե ինքնին. «Ինչպես՞ իջնել...»:

Բայց մենք այդ վախը չունինք: Մենք այլևս չենք ուզեր իջնել: Պիտի միշտ բարձրանանք և առանց ետև նայելու: Եվ այնտեղ՝ մեր հաղթահարած ծայրագույն բարձրության վրա, փոքրիկ ժայռածերպի մը մեջ պիտի իջևանինք: Եվ պիտի ապրինք այնտեղ ու այնտեղ ալ մեռնինք:

Ահա թե ինչու երբեք պետք չէ ափսոսանք այն ամենը, զոր հարկ էր թողուլ վարը: Եվ եթե պետք է տակավին, պիտի թողունք դեռ բոլորը, որպեսզի բարձրանանք Տլյանս:

Պետք է ջնջել ամեն ինչ մեր ետև: Պետք է մոռնալ ամեն ինչ վարը: Մեծ զոհաբերությունն է այս:

Բայց, անտարակույս, կան տկարության պահեր, դժբաղդաբար:

Ահա թե ինչու դուռն ըսիր ինձի, թե վարը, շատ վարը թատրոններ կային: Թե կսիրեիր զանոնք: Թե պիտի չուզեիր բաժնվիլ անոնցմե...

Այն ատեն ես պատասխանեցի քեզի, թե կրնայիր իջնել: Քեզի երբեք չէի արգիլեր: Եվ ես կուզեի բարձրանալ միս-միսակ, ավելի ու ավելի վեր, դեպի դժբաղդ ու վսեմ սիրո մը ցնորաբեր գագաթները...

Բայց դուռն բնավ չուզեցիր իջնել, ուզեցիր շարունակել ինձի հետ: Այնու-

հանդերձ, ինծի կթվի, թե դուև սրտիդ մեջ շատ ավստասացիր վարը գտնվող սիրելի թատրոններդ: Կարծեցիր, թե կապառնայի քեզի, որ չիջնես այնտեղ: Դուև արտասովեցար կորսված չքնաղ երազներուն և անցյալի գեղեցիկ հույսերուն վրա: Թերևս նույնիսկ հարցուցիր յուրովի, թե կարժե՞ր միթե զոհաբերել ամեն բան հանուն վտանգավոր ու մենիկ կատարներու վերելքին...

Թող արցունքներդ ամոքանք բերեն քեզի, Յաննի՛ս, և թող օրհնեն քեզ զղջումներդ:

Ես քեզ կղջունեմ անմահ գեղեցկությանդ մեջ, օ՛ մաքուր ու պարկեշտ հոգի:

Նոյեմբեր 20, 1909

Քույր՝ Ռուբեն

Նոյեմբեր 23, Երեքշաբթի, 1909

Սիրելի Յաննի,

Ահա ստացա այս առտվան նոր նամակդ, որուն կշտապեմ պատասխանել: Թանկագին Յաննի՛, կըսես, թե ուշ-ուշ կգրեմ քեզի: Մեյ մը ըսե, խնդրեմ, թե մեզմե ո՞վ ուշ-ուշ կգրե, դո՞ւն, թե ես:

Ես ամեն օր հիվանդանոց կերթամ: Եվ երբ հիվանդանոց չեմ, տունն եմ ու կաշխատիմ: Ի՞նչ է աշխատանքիս անունը: Բժշկություն: Եվ միայն բժշկություն: Ահա ամիս մըն է, որ մեկ հատիկ բանաստեղծություն չեմ կարդացած, ոչ ալ գրած: Բոլորովին ժամանակ չունիմ: Բայց և այնպես ժամանակ կգտնեմ, որպեսզի բարեկամության ու սիրո քանի մը տող գրեմ քեզի: Հավատա՛, դեռ երեկոյթե մը ներս ոտք չեմ դրած:

Իսկ դուև: Երեկ համերգի էիր, այսօր թատրոն պիտի երթաս, վաղը՝ երեկոյթի և այսպես շարունակաբար՝ ուրախ-զվարթ հայտագիր մը ամբողջ...

Ուստի և ինծի գրելու ժամանակ չես գտներ: Չափազանց զբաղած ես: Միայն (այնպես չէ՛) պտղիկ տարբերություն մը կա քու զբաղումիդ և իմինիս միջև, կենթադրեմ...

Եվ կարծես այս բոլորը բավական չըլլային, ուզեցիր նաև «Վաճառք»-ին մեջ դեր ունենալ: Խեղճ սիրունիկ: Ուրեմն արյուն-քրտինք կմտնես գլխուդ մեջ տեղավորելու համար այն բոլոր հիմարությունները, զոր միամիտ բանաստեղծ մը ոտանավորի է վերածեր, որպեսզի օրիորդներ բեմ հանեն զանոնք: Բնավ չեմ զարմանար, որ պառա՛վ աղջիկներ ալ կփափաքին խաղալ: Բայց դո՞ւն: Դուև, որ օժտված ես թե՛ գեղեցկությամբ, թե՛ խելքով և թե՛ կսիրես, դուև ինչի՞ պակաս կզգաս: Ի՞նչ կուզես դեռ: Ի՞նչ հաճույք կառնես անկե: Եթե ես հոն ըլլայի, գոնե կրնայիր ըսել, թե կուզես քու տաղանդն ու արվեստը ցույց տալ ինծի: Արդ, որո՞ւն կուզես ցույց տալ զանոնք, այն մարդո՞ց, որ «սոսկալի հիմար են»,— կըսեիր միշտ...

Հիմա որ կգրեմ այս քանի մը հպանցիկ դատողությունները, չեմ գիտեր, թե ինչ պիտի մտածես անոնց մասին: Գուցե ըսես, թե ես չափազանց չար եմ (բնավ պիտի չըսես այդ), կամ չափազանց նախանձոտ (երբեք թույլ չեմ տար քեզի, որ նման բան ըսես), կամ չափազանց հիմար (հավանաբար), կամ ալ չափազանց ձանձրալի (շատ հավանաբար) ...

Իսկ եթե կուգես, որ գրեմ քեզի, թե այս պահուս ինքս ի՛նչ կմտածեմ իմ մասիս, ահա՛. **ինձի կթվի, թե ես չափազանց անկեղծ եմ:** Իմ տեղս ուրիշ նշանած մը պիտի արտասաներ ճշտիվ հետևյալ բառերը. «Ահ, սիրելի՛ս, ես քեզ կպատկերացնեմ իշխանի դերերովդ, երբ, հազած քու թավիշե ոսկեճամուկ թիկնոցն ու ասպետական գլխարկը՝ սիրահարական շարժումներ կընես: Ծունկի կուգամ քու արփիաճաճանչ գեղեցկությանդ և աստվածային արվեստիդ առջև ու մեղմորեն շրթներուս կտանիմ ծայրը խորհրդավոր թիկնոցիդ, որ կսքողե, ոչ թե դերի իշխանը, այլ իմ իշխանուհի սիրեցյալս...»

Կգրես, թե մելամաղձոտ ես: Ըստ իս, այդ պայմաններուն բնական հետեւանքն է մելամաղձոտությունդ... Բայց ծուռ նստինք, շիտակ խոսինք, Յաննի՛, ո՛վ կստիպեր քեզի գոց սորվելու այդ տխմար խոսքերը: Եթե խելացի, զգացական, շատ երևելի բաներ ըլլային գոնե (ինչպես, օրինակ, «Արծվիկը» թատերակին մեկ մասը), կարժեր գլուխ ցավցնել և սորվիլ: Քանզի հետագային զայն հաճախ արտասանելու առիթ պիտի ունենայիր կյանքին մեջ (իմ շրջանակիս մարդոց առջև, օրինակ):

Արդեն իսկ հոգնած ես դուև, քայքայված են ջիղերդ, սիրտդ բերնե բերան լեցուն է տենչերով ու տխրությամբ, ամբողջ էությունդ հալումաջ է եղած սիրային սպաննիչ ապրումներեն: Եվ դեռ այդ աշխատանքը, որ իսկապես չափազանց է (և մանավանդ անօգուտ քեզի համար):

Եվ սակե զատ, որո՞նք են խաղընկերներդ: Դոմագլուխ սիրողներ: Աղջիկներ, շատ ավելի հիմար (կենթադրեմ), պառավ օրիորդներ, պարտապանաց մատակ ուղտեր:

Այդ շրջանակը քեզի համար չէ: Բայց, դարձյալ, կամքը քուկդ է, ես առարկելիք չունիմ: Եթե բռնած գործդ հաճույք կպատճառե քեզի, շատ ուրախ պիտի ըլլամ:

Հույս ունիմ, սակայն, որ օր պիտի գա, երբ այդ տղայական հովերդ ծաղրելու լայնախոհ փիլիսոփայության պիտի կրնաս հանգիլ:

Կան աղջիկներ, որոնք իրենց անձնական կյանքին մեջ ոչինչ ունին. ո՛չ գեղեցկություն, ո՛չ խելք, ո՛չ սեր: Ուստի կհասկնամ անոնց խաղալու ցանկությունը առնվազն փառքի տիրանալու միսիթարության մը համար (‘‘‘):

Եվ դեռ այնքա՛ն ճամարտակություն, զոր դուև կփափաքիս: Բայց ես չեմ գիտեր ճամարտակել: Իմ մտածածս և անկեղծորեն զգացածս կըսեմ: Եվ հատկապես կուգեմ, որ բարին իջնե վրայ:

Ինչ կվերաբերի ինձի, քեզ պաշտելու համար ես կարիք չունիմ քեզ բեմի վրա տեսնելու: Եվ իմ սերես մազ չի փոխվիր, եթե դուն աստվածորեն լավ խաղաս թե սատանայորեն գեշ...

Առհասարակ ես այն կարծիքին եմ, որ երիտասարդ աղջիկ մը պետք է մեկ հոգ ու հետաքրքրություն ունենա. **զվարթությունը:**

Եվ միշտ ըսեր եմ քեզի, որ զվարթ ըլլաս, ուրախ, մանկունակ, զվարճասեր ու ծիծղուն:

Իսկ դուն **գլխովին հակառակը** կընես. կջղայնանաս այսինչ դերասանուհիի, այսինչ ճամարտակի վրա, քննադատ կդառնաս, կբարկանաս վասն ոչինչի և բոլորովին աննշան բաներու համար **հոգի կմաշես:**

Եվ **շատ ու շատ գեշ է** այն, զոր այնտեղ բան ու գործ ես դարձուցած քեզի համար: Պետք է գիտնաս, որ թույլ առողջություն ունիս, հյուժած ջիղեր, հոգնած սիրտ: Եվ եթե դուն քեզի չխնայես, ուրախ ու անփույթ չդարձնես կյանքդ, ի՛նչ պիտի ըլլանք օրին մեկը: Ո՛չ համբույրներս պիտի կարենան կյանք ու երջանկություն տալ քեզի, ո՛չ ալ բժշկությունս:

Դուն սովորական աղջիկ մը չես բնավ: Պետք է գիտնաս այս բանը: Պետք է հանգստանաս, հանդարտեցնես ջիղերդ, պարապ բաներու համար շատ չվըժտանաս: **Պետք է զվարթ ըլլաս**, կհասկնա՞ս՝ ինչ կըսեմ:

Եթե Ծնունդին վտիտ ու գունատ տեսնեմ քեզ, գիտցի՛ր, **լրջորեն** պիտի սրդողիմ, փոխանակ երջանիկ ըլլալու: Սիրունի՛կ...

Շնորհակալ եմ սիրելի հայրիկի երկտողին համար: Շատ բարևներ մայրիկին ու հայրիկին: Կհամբուրեմ քեզ, սիրելագույն Յաննիս՛...

Ռուբեն

Հ. Գ.— Կհարցնես, թե ի՛նչ կփափաքիմ Ծնունդի առթիվ. արժանավայել ապտակ մը...

Կիրակի, դեկտ. 5, 1909

Սիրելի բարեկամուհիս,

Շնորհակալ եմ գողտրիկ նամակիդ և թատերական հայտագրին համար, զոր ստացա այս առավոտ: Երախտագիտական հույզերով լեցուցին սիրտս լավ խոսքերդ և տաքուկ զգացումներդ:

Ներողամտությունդ կխնդրեմ նամակս ուշացնելու համար: Պատճառը զբաղումներս էին:

«Նախկին արիությունս չունիմ արդեն»,— կգրես: Իսկ ես պատճառ մը չեմ տեսներ, թե ինչու արիություն չպիտի ունենամ ուսումս շարունակելու համար: Կսիրեմ դասերս և միշտ ավելի հաճույքով կսերտեմ զանոնք:

Եվ եթե քեզի գրեցի, թե կսկսիմ ձանձրանալ, դասերս չէ, որ տաղտուկ կառթեն ինձի, այլ ուրիշ բաներ: «Իսկ ի՞նչ բաներ»,— պիտի հարցնես: Չեմ գիտեր, բայց կտեսնեմ, որ 1908-1909 ժամանակաշրջանի երջանիկ սիրահարը չեմ արդեն: Կզգամ, որ այս աշունեն ի վեր, այն մեղամաղձիկ օրերեն ասդին, երբ կսկծայի և ապերջանիկ նամակներ գրեցինք իրարու (օհ, ի՞նչ թղթակցութիւն), տխուր բան մը բույն դրած է մեջս: Ինձի այնպես կուգար արդեն, թե ամեն ինչ վերջ է գտած, և թե հոգեկան խաղաղութիւնն ու սիրային անդորրը պատրաստ են պարուրելու սիրոս: Բայց, ո՛չ, ավա՛ր, այդ հոգեվիճակը կհամենա շարունակ: Եվ անոր սպասման մեջ կխռովի ներսիդիս: Քանզի կտեսնեմ, որ շատ մը բաներ կան, զոր չեմ կրնար հասկննել քեզի, բայց դուն պետք է զգայիր, ըմբռնեիր զանոնք և ատով կռահեիր դժբաղդ ըլլալս:

Ընդհակառակը, դուն ամեն անգամ (առանց ուզելու և գիտակցելու) կխոցես զիս ու կխոցես: Կկարծեի, թե նամակներեն ետքը (ամիս մը առաջ) փոխեր ես մտադրութիւններդ, ձգտումներդ, ապագայի ծրագիրներդ, արհեստ մը սորվելու ցանկութիւնդ, որ շատ տհաճ էր ինձի, կքայքայեր ջիղերս (դուն հիանալի գիտեիր, այնպես չէ՞) և խորապես դժբաղդ կդարձներ զիս: Բայց, ավա՛ր, ոչ: Շաբաթներ անցան, արցունքները չորցան, նամակները մոռցվեցան (թերևս), և ահա կտեսնեմ, որ բացարձակապես բան չէ փոխված. մտադրութիւնները նույնն են, ծրագիրները կհառաջդիմեն և միշտ ավելի ու ավելի արագ...

Եվ, իմ խեղճ Յաննիս, յուրաքանչյուր նամակովդ անգիտակցորեն արյուն է, որ կհոսեցնես իմ հին վերքերես:

Ներե, Յաննի՛, ալ չեմ գիտեր, թե ինչ կգրեմ. մշուշներու մեջ եմ, գրեթե լքված ու դրժված կզգամ զիս, կզգամ, որ դժբաղդ եմ արդեն:

Ուրեմն, աշխատե լավագույնս հասկնալ այն ամենը, զոր գրած եմ քեզի վշտամորմոք նամակներուս մեջ: Աշխատե զիս երջանկացնել, քիչ մը, իմ այնքա՛ն սիրելի Յաննիս:

Եվ սակայն վերջին հույս մը կնշույլե մեջս. ինձի կթվի Մուսնդին թերևս կարենանք հասկնալ իրար և ընդմիշտ միացնել մեր ձեռքերը:

Ես քուկդ եմ, սիրելի Յաննի՛ս, ես քու մեկ իրդ եմ, սիրահարդ եմ, գերիդ և ան եմ, որ դժբաղդ է քեզ չափազանց սիրած ըլլալուն համար:

Քու Ուրբենդ

Վերջին նամակ

Սիրելի Յաննի,

Հակառակ անոր, որ վճռած էի թատրոնին առնչությամբ բան չգրել քեզի (քանզի շարադրած եմ արդեն բոլոր մտածումներս), սակայն գերագույն պար-

տականությունս կհամարեմ անգամ մը ևս գրել, շատ լավ գիտնալով հանդերձ, որ ինչպես նախկին նամակիս, ասոր ալ ոչ մեկ ուշադրություն պիտի դարձնես:

Կըսեմ «գերագույն պարտականություն»:

Ահա թե ինչու:

Կյանքին մեջ օրենք մը գոյություն ունի: Մարդ չի կրնար տեսնել այն վիճակը, որուն մեջ կգտնվի, բայց մեկ ուրիշը կտեսնե: Չի կրնար տեսնել, թե ինչ դեմք կառնե, բայց մեկ ուրիշը կտեսնե (և կուղղե զայն...): Ի վիճակի չէ գիտակցելու, թե ինչ խենթություն կընե, բայց մեկ ուրիշը կգիտակցի (և կըսե անոր): Շոգեկառքի ուղևորը չի զգար արագությունն ու չի կրնար տեսնել առջևը, բայց ուրիշ մը, որ պատուհանեն դուրս կնայի, կզգա արագությունն ու կտեսնե առջևի անդունդը: Անոր գերագույն պարտականությունն է նախագուշացնել, թե անդունդ մը կա ճամբուն վրա:

Դուն կրնաս հավատալ իմ անկեղծությանս: Էհ ուրեմն, ես երկու ամիսե ի վեր կմտածեմ (և կմտածեմ օր ու գիշեր) թու վիճակիդ մասին: Եվ կըսեմ, թե չափազանց վտանգավոր է ան: Դուն կրնաս զիս բողոքովին չլսել: Հնազանդությունը լավ է այն ատեն, երբ կամավոր է: Բայց երբ բռնի է հնազանդությունը, բան մի սպասեր անկե: Արդ, մինչև օրս ես խոսեցա քեզի, բայց երբեք չլսեցիր զիս: Իմ գերիս չես դուն (թեև սիրո մեջ գերիներ ենք), ուստի բացարձակապես ազատ ես զիս լսելու կամ ոչ:

Ես արդեն նշմարեր էի, որ ջղային խառնվածքի տեր էիր դուն (ջղագար): Այս բանը ըսեր եմ քեզի և մայրիկիդ: Բայց ինքդ չես տեսներ ու չես կրնար տեսնել թու հիվանդությունդ, քանի որ այդ վիճակին մեջ կգտնվիս:

Սակայն ահա քանի մը նշմարներ, որոնց վրա ուշադրությունդ կիրավիրեմ.

1. Այն աղջիկը, որ գեղեցիկ է, բայց չի գիտեր իր գեղեցիկ ըլլալը, որ խելացի է, բայց չի պոռար այդ մասին, իտեալական աղջիկ մըն է: Եվ դուն այսպիսին էիր: Սակայն ահա երկու ամիսե ի վեր ամեն նամակի մեջ (և նույն նամակին մեջ հարյուր անգամ) կպոռաս երեսիս, թե շատ գեղեցիկ ես, շատ ակնառու և շատ տաղանդավոր... Այս ձևով դուն կկորսնցնես թու մեծագույն հմայքդ. համեստությունը: Ես չեմ համարձակիր այդ նամակները կարդալ որևէ մեկուն (ո՛չ ալ լավագույն բարեկամներուս), քանզի անոնք կրնան մտածել, որ դուն հիվանդ ես...

2. Քանի մը շաբաթ առաջ գրեր էի քեզի, որ տնօրենին դիմես: Անմիջապես պատասխանեցիր, թե «Ո՛չ, երբե՛ք, տնօրենին խորհուրդը բնավ կարևորություն չունի ինձի համար. քեզ, միմիայն քեզ է, որ կլսեմ, թու խորհուրդդ ամեն ինչ է իմ աչքին: Երբեք տնօրենին չեմ դիմեր: Զիս որո՞ւ տեղ կդնես», և այլն, և այլն: (Այս տողերը բառ առ բառ թու նամակեդ են ընդօրինակված): Իսկ ահա հիմա ազատորեն կդիմես տնօրենին, նույնիսկ զիս կիրավիրես այնտեղ...

3. Թատերական փորձերը դռնփակ կկատարվին և շատ գաղտնի: Դերասանուհիին մայրն իսկ չի կրնար ներկա գտնվիլ անոնց: Ամեն պարագային ես երբեք չեմ ճանչցած ընտանիքի աղջիկ մը, պատվավոր և լուրջ, որ փորձերուն զացած ըլլար: Բայց և այնպէս դուն կերթաս (չեմ հասկնար՝ ինչո՞ւ) և հետո միայն ինձմէ թույլտվություն կխնդրես...

4. Երեք շաբաթ առաջ գրած ես ինձի. «Բայց ինչո՞ւ կիռուզիս ոչինչ բանի համար: Ես պայմանագիր չեմ կնքած: Եվ երբեք չպիտի խաղամ, հետաքրքրության համար է, որ ներկա եղա փորձերուն: Խոսք կուտամ քեզի, սիրելի՛ս. երբեք բեմ չպիտի ելլեմ: Իմ միակ ցանկությունս դուն ես, ուրիշ ոչինչ...», և այլն, և այլն, և այլն: Իսկ հիմա կխոսիս պզտիկ դերերու, Մուննդի հավերժահարսի մը մասին (լավ կհասկնամ. բնականաբար չէիր կրնար սկսիլ մեծ դերերն: Բոլոր դերասանուհիներն ալ իրենց արհեստը սկսած են, Մուննդի հավերժահարսեր խաղալով...) Գալով պայմանագրին, հավատալով կհավատամ, որ չես կնքած զայն, որովհետև չես կրնար. որբուհի չես, հանրակին չես, չափահաս չես...

5. Կըսես. «Տնօրենը ինձի թույլ տվավ ներկա գտնվելու փորձերուն և պզտիկ դերեր խաղալու»: Բայց կմոռնաս, որ նախ ես պետք է թույլ տայի քեզի, եթէ նշանածդ եմ տակավին և փոքր ի շատե կարևորություն ունիմ քեզի համար...

6. Այն օրը կգրեիր. «Ի՛նչ խոսք: Ես չեմ ուզեր խաղալ մեր ամուսնութենեն հետո: Բայց հիմա կուզեմ կատարելագործվիլ միայն: Ահա եղած-չեղածը»: Եվ այս ձևով դուն զիս երախայիդ տե՛ղ կդնես: Կատարելագործվիլ վասն ինչի՞, եթէ չես ուզեր խաղալ մեր ամուսնութենեն հետո... Ի՛նչ կնշանակե այս... Եվ կատարելագործվելեն ետքը ինչո՞ւ չխաղալ մեր ամուսնութենեն հետո: Շատ հիմար բան պիտի ըլլար առիկա, Աստված վկա...

7. Երկու ամիս է ի վեր ահա թէ ի՛նչ ոճ կգործածես. «Այսօր փորձի մը մասնակցեցա: Դերասանուհին այսպէս ըսավ... Բնությունը մատը դրեր է վրաս, ոչինչ կրնա փոխել ճակտի այդ գիրը: Դերասանուհին կնախանձի: Տնօրենը խոսեցավ հետս: Կտեսնե՛ս: Կսիրեմ քեզ, կմեռնիմ քեզի համար», և այլն, և այլն:

Բայց, սիրելի Յաննի՛, իրոք չե՛ս տեսներ, որ այս ամենը ծիծաղելի է, ջղալին, անմիտ, մանկունակ, հիվանդագին...

Ըսե. ո՞ր են քու երբեմնի նամակներդ, լեցուն սիրահեղջ բանաստեղծությամբ, խորունկ հանդարտությամբ, զարմանալի խելքով, իսկապէս խտալական կատարելությամբ: Ո՞ր են այդ փիլիսոփայական ու համեստ (ահ, մանավանդ համեստ) նամակներդ, որոնց երբեմն կընկերանային գողտրիկ ոտանավորներ, և ուր դուն ի հայտ կբերեիր վեհ հոգի մը, բնավ չմտածելով երկրային կյանքի մասին և քեզ զգալով բարձր ու վսեմ... Իսկ հիմա կըսես. «Հակառակ

բոլոր դժվարություններուն, որքան դառն է կենսազվարթ դերասաններ տեսնելն ու անոնց մեջ չըլլալը...»: Ուրեմն այն է քու ամբողջ խոնարհ հիմա... Թատերական քսություններն են, որ քեզ կմագնիսեն...

Կտեսնես (եթե պաղարյունությամբ կարդաս), որ իսկպպես կգտնվիս նյարդային ծանր վիճակի մը մեջ: Պետք է զգուշ ըլլալ: Այս կյանքը չի կրնար քանի մը ամիս ալ տևել: Եթե ես քեզ չկարենամ բուժել, քեզի վիճակվելիք դժբաղդ վախճանի մը վախը պիտի կրեմ իմ մեջ...

Եվ ահա թե ի՛նչ կուզեի ըսել քեզի վերջնագույն անգամ.

Ես չեմ ուզեր, որ դուն բեմ ելլես ոչ ամուսնութենեն առաջ, ոչ ալ հետո, ԵՐԲԵՔ, ՈՉ ՄԵԿ ԱՆԳԱՄ (քանզի եթե անգամ մը խաղաս, մեջդ ցանկություն կհառաջանա նորեն ու նորեն բեմ ելլելու, և ասիկա քեզ կըսպանեն):

Կուզեմ նաև, որ անմիջապես խզես բոլոր հարաբերություններդ տնօրենին, դերասաններուն ու դերասանուհիներուն հետ:

Անշուշտ կրնաս ըսել ինծի, թե խզած ես բոլոր հարաբերություններդ, բայց առոք-փառք շարունակես զանոնք, առանց բառ իսկ գրելու ինծի... Այն ատեն պետք է գիտնաս միայն, որ ըրածդ ԽԱԲԵՈՒԹՅՈՒՆ Է, ԿԵՂՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆ, ՈՃԻՐ: Ուստի ավելի լավ է սիրոյն վերջ տալ անկեղծորեն, քան շարունակել զայն վատորեն:

Այս է իմ կամքս:

Եվ եթե ինծի հարցնես. «Ինչո՞ւ», կպատասխանեմ. «Քու բարիքիդ համար»:

Եթե կուզես արվեստով թաթավուն կյանք ունենալ, ինծի ձգե այդ հաճելի պարտականությունը, և ես բերնե բերան արվեստով հորդուն, երևակայելի և աներևակայելի կյանք մը կստեղծեմ քեզի համար: Եվ դուն զոհ կմնաս, կհմայվիս ու երախտապարտ կըլլաս ինծի:

Այս է ապագայի խոստումս:

Եվ ահա վերջին նամակս թատրոնին վերաբերյալ: Այս մասին այլևս ոչինչ կուզեմ գրել: Վերջ:

1. Չխաղալ ո՛չ ամուսնութենեն առաջ, ո՛չ ալ հետո:

2. Խզել բոլոր հարաբերությունները:

(համբուրե զիս այստեղ, եթե համաձայն ես խորհուրդներուս, եթե ոչ, մի՛ համբուրե):

Դուն շատ հիվանդ ես, խեղճ Յաննի՛ս, հանդարտե, և ես կուզեմ անպայման քեզ բուժել: Քու բարեկամդ և փրկիչդ՝

Ուրբեն:

Սիրելի Յաննի,

Ստացա պատասխանդ: Բայց ներե, որ ըսեմ. պատասխան չէ ասիկա:

Ես գրեցի «վերջին նամակ», որպեսզի հարցնեմ քեզի՝ կուզե՞ս խաղալ բեմի վրա (ամուսնութենեն առաջ թե հետո, միևնույնն է ինձի համար) այո, թե ոչ:

Դուն ոչ այո ես ըսած, ոչ՝ ոչ:

Լավ չէ ըրածդ, անկեղծ չէ, սիրային չէ:

Ինձի կխոսիս Ծնունդի ծառեն, զայն զարդարող մոմերեն և անոնց լույսեն: Մինչդեռ այդ չէր կարևոր հարցը:

Երկու ամիս շարունակ անգիտակցաբար և առանց ուզելու ամեն ինչ ըրիր, որպեսզի պաղ ջուր թափես սիրույս վրա: Այն օրը, որ վերջնականապես պաղեցնես զայն, շատ դժբաղդ պիտի ըլլաս:

Գալով ինձի, ես արդեն իսկ այդպիսին եմ:

Հազար համբույր:

Քու Ռուբենդ

Հ. Գ.

Կսպասեմ քու «այո»-իդ կամ «ոչ»-իդ: Եվ այդ «այո»-ն և «ոչ»-ը պիտի դառնան մեր սիրո «այո»-ն ու «ոչ»-ը: Լավ մտածե: Քեզի կմնա որոշել մեր Սիրո բախտը:

Ռ. Չիլինկիրյան

Յաննի,

Ի՞նչ ըրինք: Ի՞նչ դարձանք: Ի՞նչ պիտի դառնանք: Ահա դժբաղդ եմ ես, ջախջախված, կործանված:

Ավա՛ղ:

Հիմա, երբ կգրեմ այս նամակը, կեսգիշեր է:

Այս իրիկուն Օլտ-Ինտիա էի, մտախոհ, ինչպես շուն մը թշվառ: Հետո Լևոնը եկավ, հարցուց, թե ինչու եմ այդքան տխուր ու միս-մինակ:

Պատմեցի ամեն բան: Ըսի, թե խոցված եմ սրտես:

«Իսկ ո՞վ խոցեց»,— հարցուց ինձի:

«Ավա՛ղ,— ըսի,— զիս խոցողը ան է, զոր շփարհիս մեջ ամեն բանն ավելի սիրեցի»:

Հասկցավ զիս, լռեց, և մենք, դեմ-դիմաց նստած՝ ժամեր շարունակ մնացինք գլխիկոր, առանց բառ արտասանելու:

Հետո ամերիկացիներ եկան:

«Է՛տ՛, Ռուբի՛նս,— դիմեցին ինծի, — դուն այնքան տխուր ես, այնքան մռայլ: Ի՛նչ է պատահած: Ահ, սիրահարություն: Քանի-քանի անգամ ըսեր ենք քեզի, որ սերը սուտ է, կյանքը՝ դժվար և կինը՝ թեթևամիտ: Ի՛նչ, դժբա՛ղդ ես արդեն: Ժամանակն է, որ ա՛լ սորվիս չար ըլլալ, զվարթ ու շվայտ: Դուն մեր «իշխանն» ես: Կեցցե՛ իշխանը: Մոռցի՛ր դժբաղդությունդ և ժպտե՛»:

Ես սարսռացի:

Անհուն ցրտություն մը կար մեջս, կյանքը սառած ըլլար կարծես: Այնքան մոտիկ կթվեր մահը: Դեհ, բավական է: Հիմարություն է լալը:

Եվ մենք զրուցեցինք և ուրախ ու բարեկամական մթնոլորտի մը մեջ անցուցինք երեկոն:

Հիմա կեսգիշեր է: Վերադարձած եմ տուն: Բայց ինչո՛ւ կողովամ:

Կխորհիմ վաղվան, մյուս օրվան մասին: Եվ կվախնամ:

Այս առավոտ, վերջին նամակիս մեջ, հարցուցի քեզի՝ կուզե՞ս բեմի վրա խաղալ. «այո» թե «ոչ»:

Եթե վաղը «այո» պատասխանես, ամեն ինչ կվերջանա: Կվերջանա ընդ-միշտ:

Բայց դուն կկարծես, թե վերջացած չէ տակավին:

Ջիս լքելէ, դժբաղդ դարձնելէ և Սերս ջախջախելէ հետո, երբ խաղաս բեմերու վրա և շարժիս ըստ քմածին երևակայությանդ, դուն դեռ պիտի մտածես, թե «երբեք շատ ուշ չըլլար», և թե կուզաս ներողություն խնդրելու ինձմէ, և մենք կվերսկսինք երջանիկ ըլլալ և սիրել զիրար...

Որքա՛ն միամիտ ես, Յաննի՛:

Իսկ որմե՛ ներողություն պիտի խնդրես, եթե ես հեռացած ըլլամ կյանքեն:

Եվ որո՞ն և պիտի դիմես ցույց տալու համար անոր քու դերասանական ունայն փառքդ:

Վստա՛հ ես, որ ես դեռ ամիս մը կրնամ ապրիլ:

Միամի՛տ երախս, ի՛նչ է, մարդոց կյանքը խաղալի՞ք է քեզի համար:

Չե՛ս տեսներ, որ այդ բոլոր պատմությունները խորունկ ցավ կպատճառեն ինծի:

Ահ, վա՛ղը...

Իսկ եթե վաղվան նամակիդ մեջ գրես. «Այո՛, պիտի խաղամ բեմի վրա», իմ հարաբերություններս վարկենապես պիտի խզվին: Ամբողջ Սերը պիտի կործանի: Ապագան փոշի պիտի դառնա: Սիրտս կանգ պիտի առնե, դրժված Սերեն և խողխողված այն ձեռքով, զոր հոգևին պաշտեցի:

Ի՛նչ պիտի ըլլամ ամիս մը հետո: Դժբաղդ, միս-մինակ, դժնետեսիլ, պժգացած ամեն ինչէ, ամեն ինչ ատող, կույր, խուլ, դաժան, սարսափազդու, սոսկալի, սրսփուն ու խենթ: **Բայց պիտի ըլլա՛մ դեռ կենդանի...**

Այսօր առաջին ձերմակ մագս տեսա և սոսկացի: Ուրեմն, մնաք բարո՛վ,

երիտասարդութիւնն ու սե՛ր...

Եվ այս բոլորը թու մեկ թեթևամտությանդ երեսեն... Ի՛նչ է, չէ՞իր կրնար որոշումդ փոխել...

Իսկ ես այնքա՛ն կհավատայի թու սիրույդ: Եվ սակայն...

Ռութեն

Դեկտ. 14, կեսգիշեր, 1909

Սիրելի Յաննի,

Դուև իմ վերջնական պատասխաններս կխնդրես հետևյալ հարցերուն շուրջ.

1. Ես սիրո խոսք էի տված:

2. Խոսք էի տված քեզի, թե կրնաս դերասանուհի դառնալ:

3. Խոսք էի տված ցկյանս ծառայել քեզի:

Արդ, կուզե՞մ արդոյք այս խոստումներս հարգել, թե **դրժել** զանոնք:

(Նախ քեզի չեմ ներեր «դրժել» բառը: Պետք է լավ կշռադատեիր, որ ես ոչ թե դրժել կուզեմ, այլ ուրիշ բան):

Այո՛, ես եմ խոստացած քեզի այդ բոլորը և դեռ չեմ մոռցած: Ընդհակառակը, կշանամ իրագործել զանոնք: Եվ ահա թե ինչպէս:

Շամբերիին մեջ, զրուցելով, մենք բավական խենթ ու արբեցուցիչ բաներ ըսինք իրարու: Ի միջի այլոց, դուև հայտնեցիր նաև, թե կուզեիր դերասանուհի դառնալ: Առաջին անգամ չէ, որ ես նման բաներ կլսեի: Գրեթե բոլոր տասնվեցամյա աղջիկները խոստովանած էին ինձի, թե կսիրեն երազներու աշխարհը, թե Իտեալին ծառայելու, մարդկությունը դաստիարակելու, մարդիկը հիացնելու և դեռ չեմ գիտեր ի՛նչ խենթ ու խելառություններու համար կփափաքին նվիրվել բեմին: Պատանության, նորաձևության հատուկ խոսքեր են ասոնք: Ժամանակի ընթացքին մարդ կմոռնա այս բոլորը և երկրային ու անցողիկ կյանքին մեջ ընտանեկան բարեկեցիկ օջախ մը ստեղծելով կգոհանա...

Կարծեցի, թե դուև ալ պիտի մոռնաս: Այն ատեն չուզեցի քեզ վշտացնել, ուստի դեմ չգացի բաղձանքիդ, քանզի կտեսնեի, որ շատ ջղային ես և հոգիով հիվանդ: Խնայեցի քեզի:

Ահա եղած-չեղածը:

Սիրո երկուք ու կես տարիներու ընթացքին դուև այլևս բերանդ չբացիր պնդելու համար, թե կուզեիր անպայման դերասանուհի դառնալ: Միակ բանը, զոր միշտ, ամեն վայրկյան և բացարձակորեն ցանկացած ես, իմ կինս ըլլալդ է եղած:

Ճի՛շդ է, թե ոչ:

Բայց ահա երկու ամիս է ի վեր դժբաղդացուցիր զիս հազար ու մեկ անգամ կրկնված միակ նախադասությամբ. «Կուզեմ դերասանուհի դառնալ, կուզեմ դերասանուհի դառնալ, կուզեմ դերասանուհի դառնալ...»:

Այն ատեն ես ուզեցի երրորդ խոստոման հարգել. «Ցկյանս ծառայել քեզի»:

Ի՞նչ պետք է ընեի քեզի ծառայելու համար: Եթե միամտորեն քաջալերեի քեզ դերասանուհի դառնալու ցանկությանդ մեջ, մինչև ավարտն օրերուդ քեզ ԱՆԴՈՒՆԴԻՆ մեջ հրած պիտի ըլլայի:

Եվ ամեն ինչ ըրի գահավիժելուդ արգելք հանդիսանալու համար:

Չարություն՞ն կկոչես ասիկա: Կկոչես դրժո՞մ:

Էհ ուրեմն, կեցցե՛ս, Յաննի՛:

Հիմա որ բացատրեցի ամբողջ հարցը, կուզեմ ավելցնել մեկ հատիկ կետ մըն ալ, զոր դուն կանգիտանաս:

Գիտես, որ ծնողքս շատ կսիրեն զիս, և որ ես ալ ամբողջ սրտով կսիրեմ զիրենք: Բայց ճշտիվ չես գիտեր, թե քու պատճառովդ ի՞նչ անցավ-դարձավ իմ և ծնողքիս միջև (Չվշտացնելու համար սիրտդ երբեք չէի ուզեր խոսիլ քեզի այս մասին): Միայն գիտցիր, որ ես նախընտրեցի բաժնվիլ ծնողքես, քան քեզմե...

Բայց ահա հիմա կհարցնեմ ինքզինքս. ահա աղջիկ մը, զոր կսիրեմ: Իր գեղեցկության համար չէ, որ կսիրեմ զայն (քանզի ճանչցած եմ ավելի գեղեցիկներ, որ կսիրեին զիս): Չեմ սիրեր դրամին համար (չէ՛ որ այնքան հարուստ հարսնացուներ մերժեցի): Չեմ սիրեր ազգային զգացումիս պատճառով (քանզի դուն գերմանուհի մըն ես միայն): Ուրեմն կսիրեմ պարզապես ԻՏԵԱՒԱԿԱՆ ՍԻՐՈՒ համար: Արդ, ի՞նչ կտեսնեմ: Կտեսնեմ, որ այդ աղջկան պատճառով բացարձակապես դժբաղդ դարձուցի ծնողքս ու զիս: Բայց այս հանգամանքը չէր երևեր աչքիս: Կուզեի ամեն ինչ զոհել հանուն այս Սիրո: Հիմա կհարցնեմ ինքզինքիս. ինչո՞ւ զոհեմ ծնողքս ի սեր աղջկա մը, որ չի ուզեր նույնիսկ թատերական քմայք մը զոհել ինձի համար...

Ուրե՛մն...

Եվ հետո դուն կմոռնաս ուրիշ բան մըն ալ: Գրեթե ամեն նամակիդ մեջ կգրեիր, թե կարելիդ պիտի ընես երջանկացնելու համար ծնողքս:

Դերասանուհի դառնալո՞վ կուզես երջանկացնել զանոնք...

Ավարտելու համար ուշադրությունդ կիրավիրեմ ամենակերևոր կետին վրա: Եթե դերասանուհի ըլլալ պնդես, կդառնաս աշխարհի ամենաեսասեր արարածը: Քանզի ուշադրության չես առներ որևէ մեկը, բացի քեզմե: Ուշադրության չես առներ հարազատ ծնողդ (քանզի շատ դժգոհ են), ուշադրության չես առներ իմ հարազատ ծնողքս (որ այդ պատճառով շատ դժբաղդ պիտի զգան իրենք զիրենք) և բնավ ուշադրության չես առներ զիս, որ ահա երկու ամիս է ի վեր կաղաղակեմ, թե այդ մտադրությունդ զիս չափազանց կվշտացնես...

Կտեսնես, որ այս պայմաններուն մեջ ՍԵՐԸ անկարելի կդառնա կատարելապես եսասեր եակի մը հետ:

Սերը զոհողություն կպահանջե, իսկ դուն չես ուզեր ոչինչ զոհաբերել:

Հիմա շուտ պատասխանե ինձի. կուզե՞ս դերասանուհի ըլլալ, այո, թե ոչ:

1. Եթե ըսես. «Այո՛, հակառակ ամեն ինչի, կուզեմ դերասանուհի ըլլալ», ինձի համար կդառնաս ահռելի եսասեր մը, իսկ ես չեմ կրնար եսասեր աղջիկ մը սիրել:

2. Բայց ծնողքիս և իմ մասին վերոգրյալները կարողալե՞ղ հետո, եթե լավ մը մտածես և անմիջապես պատասխանես ինձի. «Գրողին ծոցը թատրոնները: Ես չեմ ուզեր վատահոգի դառնալ: Իմ հետաքրքրություններուս պատճառով չեմ ուզեր դժբաղդացնել այդքան մարդիկ: Եվ ես կուզեմ միայն իմ նշանածիս ՎՍԵՄ ՍԵՐԸ», այն ատեն մեկ շաբաթեն նշանածդ քովդ կըլլա, կհամբուրե քեզ, կներե քեզի այն բոլոր դժբաղդությունները, զոր պատճառեցիր իրեն, և հավիտյանս երջանիկ կդարձնե քեզ: Եվ այսպիսով կվերսկսինք Սեր մը ավելի վսեմ, քան մինչև այսօր:

Քու Ռուբենդ

Դեկտ. 15, 1909

Լոզան

Հ. Գ.— Այս վերջին պայմանով կրնաս նվիրել ինձի այն մատանին, զոր կփափաքիս, և որուն չափը կգտնվի այս նամակին մեջ (պզտիկ ժապավենը): Սկզբնատառերը՝ լատիներեն:

Ռ. Չիլինկիրյան

Քաղցր Յաննիս,

Անչափ երջանիկ եմ, ստանալով երեկ առավան ուրախ նամակդ: Եղիր երջանիկ ու հանգիստ, իմ պզտիկ աստվածուհիս: Եվ թող զիշերը բարեհոգի ըլլա վրադ...

Յուրաքանչյուր քայլ մեզ ավելի կմոտեցնե իրարու: Մենք ուրախության բարեկամներ չենք միայն (ինչպես ուրիշներ), այլ նաև բարեկամներ ցավի: Շըղթան, որ կզոդե մեզ, բաղկացած է փոխն ի փոխ ժպիտներու և արյուն-արտասուքի օղակներեն... Սեր ճակատագիրն է այդ և մեր մեծությունը... Քանզի եթե ուրախությունը կիջեցնե մարդը, ցավը, վիշտը վեհանիստ բարձունքներուն կտանի զայն...

Եվ զիս բերկրանքով ավելի ու ավելի պարարողն այն է, որ մենք երթալով առավել ևս կհասկնանք զիրար: Որքան կմոտենանք իրարու, այնքան կտես-

նենք...¹ օրավուր ավելի լավ կճանչնանք զիրար: Եվ որքան կճանչնանք, այնքան փոխադարձաբար կսրբագրենք մեկզմեկու:

Սրբագրելը ճիշդ բառը չէ: Ավելի շուտ պետք էր ըսել արարել: Քանզի, Յաննի՛, առանց նշմարելու, նույնիսկ առանց ուզելու մենք մեզ կարարենք:

Այսօրվան Ռուբենը հեռու է Կոստանդնուպոլսո Ռուբենն ըլլալեն: Եվ Կոստանդնուպոլսո Ռուբենը հեռու է ըլլալե այն, որ Շամբերիինն էր... Առանց դուռ բեզի հաշիվ տալու, առանց խորհելու, առանց ուշադրություն դարձնելու, թու անմռունչ հրամանովդ արարեցիր զիս...

Եվ ժամանակ առ ժամանակ, մտածելով իմ հին երազներուս, երբեմնի ծրագիրներուս, վաղնջուց տենչանքներուս մասին, կկարծեմ, որ ոչ թե իմ, այլ ուրիշի մը վրա կխորհիմ... Այնքան որ փոխված կգտնեմ ես զիս թու հոգիիդ լուռ կոհակներուն հոսանքին մեջ...

Ու երբ (մոտավորապես երկուք ու կես տարի առաջ) խենթ սիրո երջանիկ գիշերվան մը մեջ, ամառնային ցայգերուն անամպ երկինքը ակոսող սլացիկ լեռնազագաթներուն առջև դուռն կխոսեիր ինձի երբեմնի տարտամ ըղձանքներու՝ բեմի, թատերական փայլուն արվեստներու, փառքի և սրտիդ հազար ու մեկ նկրտումներուն մասին, ես, հափշտակված՝ կլսեի թեզ, բայց հետո կկարծեի, թե երեսուն ամսվան մեր ցավագին արարման ընթացքին այդ բուրբ արդեն իսկ թաղված են հոգիիդ մեջ, այնտեղ բուրբովին նոր էակի մը արարչագործության ի խնդիր:

Եվ եթե այդ նոր էակը դեռ չէր ծնած թու մեջդ, կհավատամ, որ հիմա՝ վերջին շաբթվան դժնդակ երկունքեն տեքը, դուռն ինքդ վերստին ծնար, նոր աշխարհի մը մեջ, նոր հորիզոններու համար:

Քանի որ դուռն հիմա ուրիշ մեկն ես և էակ մը նոր, մոռցի՛ր երեկվան վշտերը և ժպտե աշխարհին, արևին, որ կծագի մինչև մայր մտնող արևը...

Թու հավերժական բարեկամդ և սիրահարդ՝
Ռուբեն

16, Երկուշաբթի, 1909

Հունվար 6, 1910

Սիրելի Յաննի,

Երեկ (չորեքշաբթի) ճիշդ կեսօրին հասա Լոզան: Այնքան հոգնած էի և

¹ Անընթեռնելի:

այնքան անտրամադիր, որ քեզի ավելի շուտ գրելու ուժ չգտա մեջս: Երեք հարցումներ կհաճախեն ուղեղս, երբ գրիչս կառնեմ քեզի գրելու համար. 1. Մատանիները քո՛վդ են: 2. Ամեն առավոտ կխմե՞ս հավկիթո: 3. Առո՞ղջ ես:

Հուսով եմ, որ այս երեք հարցումներեն ամեն մեկուն երկարորեն պիտի պատասխանես: Եվ (եթե կուզես) չորրորդ հարցում մըն ալ. Ե՛րբ պիտի սկսիս դաշնամուրի դասերդ: Պիտի ըսես, թե ուսուցիչ չունիս տակավին, բայց այդ կարևոր չէ, պետք է միշտ մատներդ ստեղներուն վրա ըլլան, պետք է կտորներ, վարժություններ նվագես և վերջապես մեծ դաշնակահարուհի մը դառնալու տրամադրես քեզ (կընդգծեմ այս բառերը, որովհետև իրոք կհավատամ, որ շատ աչքառու երաժիշտ մը պիտի ըլլաս քու չափազանց զգայուն սրտովդ և չափազանց նուրբ մատներովդ: Խորապես կհավատամ ըսածիս):

Գալով ինձի, ես բուրրովին լավ եմ: Անհուն ուրախություն մը կա սրտիս մեջ, որ դուն, 1910 հունվար մեկեն սկսած՝ կատարելապես բուժվեցար և դարձար իսկապես իտեալական: Հիմա կրնանք ըսել, թե երկրիս վրա ոչ ոք ի վիճակի եղած է այնքան լավ սիրելու, որքան մենք:

Եվ հետո, հունվար մեկեն ասդին անհետացավ տխրությունդ: Ահա երեք տարիէ ի վեր կսիրես զիս, բայց քու սիրույդ մեջ միշտ, ամեն ատեն տարտամ տխրություն մը կար, մեղամաղձոտության շամանդաղի մը պես, արցունքի ամպի մը նման: Սակայն հունվար մեկի իրիկվընեն ի վեր ամեն ինչ փոխվեցավ: Այլևս չկա այդ տխրությունը, մեղամաղձոտության այդ շամանդաղն ու արցունքի ամպը: Դարձար երջանիկ, սրտաբաց, և լուսերես, և ճառագայթուն:

Որովհետև ճշմարիտ սերը տխուր չի կրնար ըլլալ: Ճշմարիտ սերը անհուն ու անպատում ուրախության աղբյուր է: Ճշմարիտ սերը մեր սերն է 1910 հունվար մեկեն ասդին:

Ասոր համար մեր ամուսնութենեն հետո հունվար մեկը մեզի համար պիտի դառնա ընտանեկան մասնավոր տոն մը, տոն մը սիրաբուխ ու խորհրդավոր: Եվ այսպես, մենք Նոր տարին չպիտի տոնենք (ինչպես մյուս բոլոր ընտանիքները) ըստ սովորության, այլ որպես ճշմարիտ, երջանիկ սիրո մեր տոնը: Ուրեմն՝ հուլիս 17 մեր տոնն է Սիրո, իսկ հունվար մեկը՝ մեր տոնը երջանկության:

Այս երկուքեն զատ, պիտի ունենանք քու տարեդարձիդ, իմ տարեդարձիս և մեր ամուսնության տարեդարձին տոները:

Բացի ասոնցմէ, բոլոր գիշերները տոներ պիտի ըլլան մեզի համար...

Այնպես չէ՞ քաղցր Խտե՛ալս:

Հազար համբույր քու մեկ հատիկ Ռուբենեդ:

Շատ սիրելի նշանածս,

Ստացա երկար նամակդ: Կարդալով զայն, մտածեցի, որ լավ եք ըրեր մայրիկը հիվանդանոց փոխադրելով: Այդ ձևով դուն վտանգեն բուրորովին հեռու պիտի ըլլաս: Միայն, կխնդրեմ, սիրելի Յաննի՛, բժիշկի գնա, ըսե, որ կհազաս. ըստ հնարավորին շուտ պետք է հոգ տանիս առողջությանդ, կհասկընա՛ս, աղվո՛րս: Մի՛ մոռնար ողողել կոկորդո: Եվ մանավանդ, մանավանդ, սիրելի Յաննի՛, պետք է կանուխ պառկիս, ամեն գիշեր ժամը 10-ին: Չեմ ուզեր, որ ինձի երկար նամակներ գրելու համար մինչև կեսգիշեր և ավելի ուշ, անքուն մնաս: Շատ գեշ է այդ սովորությունը: Երբ մարդ կհազա, անքնությունը առավել ևս կհազացնե: Ուրեմն՝ պետք է կանուխ անկողին մտնես:

Ինչ կվերաբերի դրամին, կուզեմ երկու-երեք օրեն դրկել զայն քեզի, անպայման:

Սիրելի Յաննի, ահա երկրորդ նամակն է, զոր կգրեմ քեզի Օլտ-Ինտիայն: Այստեղեն իսկ կտեսնեմ, թե ի՛նչ դեմք կառնես: Կկարծե՛ս, թե ես ծուլ մտղուկ մըն եմ և օրս իրիկուն կընեմ հրուշակեղենի խանութներուն մեջ: Օ, ո՛չ: Զարմանալի զուգահիստությամբ մը Համալսարանի երկու դասախոսները մեկը մյուսին ետևեն մեռան: Ուստի երկու օր արձակուրդ ունինք: Եվ այդ հանգուցյալներուն սուզը բռնելու համար է, որ իրիկունները (միայն երկու իրիկուն) ես Օլտ-Ինտիա եմ: Տխուր չե՛մ միթե...

Պզտիկ սիրելի՛ս, այնքա՛ն քաղցր ու խտելական, ինչպե՛ս քեզի պատմեմ սերս: Ինչպե՛ս բացատրեմ սիրտս: Ինչպե՛ս հայտնեմ քեզի շնոհակալությունս երջանկությանս համար: Ինչպե՛ս հմսկցնեմ, որ օր ու գիշեր միայն ու միայն թու մասիդ կմտածեմ: Ինչպե՛ս, Յաննի՛, ըսե ինձի: Չեմ գիտեր՝ ինչպե՛ս գրեմ: Այնքա՛ն բարի ես դուն, այնքա՛ն հեշտագինորեն ու երկար կգրես ինձի, այնքա՛ն ես նվիրված, որ թու սիրույդ թով անչափ փոքր կերևի իմ սերս: Աշխարհին մեջ դուն միակ արարածն ես, որ գիտե այսքան սիրելի: Աստված քեզ առանձնակի խորհուրդով է ստեղծած, ցույց տալու համար Մարդկության, որ Իտեալը բառ չէ միայն, այլ գո՛ւ է, կա՛: Եվ Իտեալը դուն ես:

Քու սերդ ճանչնալես ի վեր ես Մատերիալիստ չեմ այլևս: Գիտնականները կկարծեն, թե հոգի չկա, և թե մենք Նյութ ենք միայն: Ես ալ կհավատայի ասոր: Բայց հիմա որ կճանչնամ քեզ, յուրովի կհարցնեմ, թե այդ ինչպե՛ս Նյութը կրնա այնքա՛ն անուշ ըլլալ, անմահ, գիրգ, անձնվեր, խտելական, սիրազեղ, զգայուն, վսեմ, գեղեցիկ ու բարի, որքան դուն... Կարելի՞ է, արդարև: Եվ կարելի՞ է նաև, որ իրական ըլլաս: Երազն ես, գուցե: Դուն ի՛նչ կըսես:

Առաջին բանաստեղծությունը, զոր քեզի եմ ձոնած, այսպես կսկսի.

«Դուն Հրա՛ջքն ես, դուն Երա՛զն ես, դուն Սե՛րն ես»:

Եվ երեք տարի շարունակ ես ինձի կհարցնեմ, թե իսկապես գոյություն ունի՞ս դու, երազ մը չե՞ս արդյոք...

Բայց այո, կհավատամ քեզի, դուն գոյություն ունիս և գոյություն ունիս միայն ինձի՝ համար... Օհ, ի՛նչ երջանկություն, ի՛նչ երջանկություն:

Նշանածո՝
Ռուբեն

Իմ շատ սիրելի Իտեալս,

Այսօր չորեքշաբթի է, հունվար 12, 1910, հետմիջօրե, ժամը 4.30:

Վերջապես, ահա, խույս տալով հիվանդանոցեն, ազատ պահ մը գտա, սենյակիս մեջ քանի մը տող գրելու համար քեզի:

Եվ եթե տաղտուկ չեմ պատճառեր, քեզի կպատմեմ առաջին ծննդաբերությունեն ստացած տպավորություններս:

Ուրեմն, երկուշաբթի առավոտ սկսա «Մայրություն» բաժնի գործնական աշխատանքս:

Մեզի հայտնեցին («մեզի» կըսեմ, որովհետև ինձի հետ բժշկության ուրիշ թեկնածու մըն ալ կար), թե քաղաքին մեջ աղքատ կին մը պիտի զավակ ունենա, և թե մենք պետք է կեսօրեն ետքը ժամը երկուքին ծննդաբերության ներկա գտնվինք: Բայց ժամը երկուքին կհեռաձայնեն, թե պետք է ժամը չորսին երթալ: Ժամը չորսին հեռաձայնով կրկին կհաղորդեն մեզի, թե կարիք չկա հինգեն առաջ երթալու: Սակայն մինչ այդ մենք ուրիշ դարմանատուն մը պիտի այցելեինք, ուստի երբ աղքատ ծոցվորին տունը հասանք, ժամը վեցն անց էր արդեն: Բայց չենք գիտեր, թե ո՞ր դուռն են պետք է ներս մտնել, ո՞ր հարկը բարձրանալ, ո՞ր բնակարանին զանգակը հնչեցնել: Տունը հին տուփ մըն է, չափազանց մութ ու խղճուկ: Ես կըսեմ, թե շատ ուշ է արդեն, և թե երախան, գուցե, աշխարհ է եկած... Բարեկամս կըսե, թե արդեն կլսե նորածինին ճիչը... Մինչ այս մինչ այն տեսանք, որ կարճահասակ ու ժպտուն կին մը կբարձրանա սանդուղքի աստիճաններեն, մեկ ձեռքին՝ պարկ մը գետնախնձոր, մյուսին՝ ջուրով լեցուն դուլ մը...

— Բարի իրիկուն, տիկի՛ն,— կըսեմ ես:— Գիտե՞ք՝ ուր կապրի տիկին Մենյուն (այսպես կկոչվեր հղի կինը):

— Մեր մոտ, պարո՛ն:

— Իսկ ո՞ր է «ձեր մոտ»-ը:

— Ահա՛,— կպատասխանե կինը, մտնելով դուռնե մը ներս:

— Այն ատեն կուզենք տեսնել տիկին Մենյուն:

— Տիկին Մենյուն ե՛ս եմ, որ կամ:

Այս խոսքին վրա, երևակայե, թե ինչ դեմք առի ես: Մեկ վայրկյանն մյուսը

պետք է ծննդաբերեր և արդեն իսկ կթքներ իր ցավերուն վրա:

Բնականաբար մենք հիվանդանոց վերադարձանք:

Այնտեղ կար կին մը, որուն ցավերը երկու օրվընէ ի վեր բռնած էին արդեն:

Շատ դժվար պարագա մըն էր: Եւրոպական մահվան վախ կար:

Եվ ահա իրիկվան ժամը իննի առեւտները ցավերը անտանելի կդառնան:

Խեղճ ծննդկանը անընդհատ կպոռա. «Մեռցուցէ՛ք զիս, բժի՛շկ, սաստիկ կտանջվիմ: Մեռցուցէ՛ք զիս: Մեռցուցէ՛ք զիս»:

Գործը ինծի կհանձնեն:

Ի՛նչ կկարծես, մեռցուցի՛:

Էհ ուրեմն, լսե՛:

Ժամը 9.30-ին կընդունիմ առողջ երախա մը:

Ժամը 9.45-ին կընդունիմ երկրորդ երախա մը:

Ժամը 9.52-ին ամեն ինչ վերջացած էր, լվացված, կարգի դրված:

Նորածինները (երկուքն ալ տղա) բարձի մը վրա կսիրվըտեին վաղեմի բարեկամներու նման:

Իսկ կինը երջանկութենէն ու Կյանքին վերադարձած ըլլալու երանութենէն լայն կծպտեր և չէր գիտեր, թե ինչպես արտահայտե ինծի իր երախտագիտությունը...

Ես ալ ուրախ էի, քանզի փրկած էի կինն ու երկու երախաները և գործնական աշխատանքիս մեջ գլուխ էի բերած առաջին ծննդաբերությունը, այդ ալ երկվորյակներ ընդունելով (բան մը, որ բաղդաբեր նշան՝ համայիլ, կսեպվի բժշկության մեջ):

Այնուհետև երկու հղի կիններու վիրահատումը կար տակավին, այնպես որ կպառկինք գիշերվան ժամը երկուքին միայն:

Հազիվ կգոցենք կոպերնիս, երբ տիկին Մենյուին ամուսինը կուգա մեր ետևէն: Կերթանք չորսով (մանկաբարձուհի մը օգնական աղջկան հետ, բարեկամս ու ես): Այս անգամ արդեն կարճահասակ, ժպտուն կինը պառկած էր իր անկողնին մեջ և կպոռար ծեծ կերած կատվիկի մը պես... Պետք եղածը կընենք և կծնցենք երախա մը, շատ բարվոք վիճակին մեջ: Բայց այս ամենը կտևէ քիչ մը երկար, և մենք անկողին կմտնենք վաղորդյան ժամը հինգին:

Ահա ծննդաբերության իմ առաջին օրս:

Հաջո՞ղ է:

Չախա՛վե՛ր:

Միայն գիտեմ այն, որ շատ է հոգնեցուցիչ:

Երեկ և այսօր ծննդաբերության ու վիրահատման նոր պարագաներ ունեցանք, բայց ես կուզեի քեզի հաղորդել առաջին ծննդաբերության առաջին տպավորությունները:

Առանց այս մասնավոր հանգամանքին, սոսկալի պիտի ձանձրանայիր, կեն-

թաղում, և պիտի նախընտրեիր, որ քիչ մը խոսեի մեր սիրո մասին:

Նախ և առաջ պետք է ըսեմ քեզի, որ ամեն առավուտ ու իրիկուն կկատարեմ մարմնամարզական այն երեք վարժությունները, զոր պատվիրեցիր ինձի: Գալով գլանակներուն, պետք է ըսեմ, սիրելի՛ս, որ օրական չորս հատը իսկապես հերիք չէ: Երբ քովդ էի, կմտածեի միայն քու մասիդ և բուրդովին կմոռնայի ծխելը: Սակայն հիմա, առանձնության մեջ և ուսման առես, չորսեն ավելի պետք է ինձի՝ առնվազն հինգ հատ (և վեց, երբ բարեկամներու հետ եմ): Կհաճի՛ս արտոնել, Յաննի՛: Իրոք, շատ սիրալիրություն պիտի ըլլար քու կողմեդ: Այդքանը չափազանց չէ երբեք, շատ քիչ է նույնիսկ. կան, որ օրական 30-40 հատ կծխեն:

Ինչ կվերաբերի հավկթներուն, չեմ ուզեր ոչ մեկ կերպ թույլ տալ, որ դուն առավուտյան մոռնաս զանոնք: Հիշելու համար պետք է թղթիկի մը վրա գրես և գնդասեղով կախես ննջասենյակիդ պատեն: Այլապես լրջորեն կսրդողիմ:

Հապա դաշնամո՛րը:

Ինչո՛ւ բան չես գրեր այդ մասին: Բայց և այնպես ինձի կթվի, թե կսիրես զայն: Պետք է ամեն օր վարժություններ կատարես, ժամեր շարունակ, որպեսզի, երբ անգամ մըն ալ գամ քովդ, կարենաս գեթ գողտրիկ կտոր մը նվագել ինձի: Գիտես, որ դաշնամուրը իմ ամենասիրած բանն է աշխարհին մեջ: Եվ երբ ամուսնանանք, պիտի չուզեի (և դուն նույնպես) երթալ ուրիշ տուն մը դաշնամուր լսելու: Այդ նվագը պետք է ինձի ամեն օր, առու-իրիկուն: Իսկ երբ հառաջադիմես, թերևս նաև երգեր հորինես իմ սիրային բանաստեղծություններու բառերով... Ուրե՛մն: Չե՛ս կարծեր, որ հիանալի կըլլա, եթե օր մը արվեստագետ բարեկամներ հրավիրենք մեր ընտանեկան, գրական և երաժշտական երեկոյթին և հոն դուն ալ կարենաս նվագել գործերդ, երգել իմ քերթվածներես և արտասանել... Արդեն իսկ կերևակայեմ քեզ և չափազանց երջանիկ և փառավորյալ կզգամ զիս...

Օհ, Յաննի՛ս, հրեշտակս, սիրելի և հզոր Իտեալս, կսիրեմ քեզ, կսիրեմ քեզ, կսիրեմ՛մ...

Ամբողջ հասակդ ի վար բյուր քաղցրագույն համբույրներ քու նշանածե՛դ՝

Ռուբեն

Հ. Գ.— Գրե ինձի, թե ինչպես է մայրիկի առողջությունը: Շատ մտահոգ եմ: Խեղճ մայրիկ: Բարևներս հաղորդե հայրիկին:

Ռուբեն

19. 1. 1910

Շատ սիրելի Իտեալս,

իրոք կամչնամ, որ այսքան երկար առես լուրջուն պահպանեցի: Մինչդեռ

դուն այնքան հաճախ ու այնքան լավ գրեցիր: Յաննի՛ս, հույս ունիմ, որ այսուհետև պիտի կարենամ ավելի երկար գրել քեզի, որովհետև այսօր վերջացուցի գործնական աշխատանքս հիվանդանոցին մեջ:

Նախ պիտի ուզեի ըսել քեզի, որ կանոնավոր կերպով կկատարեմ թու պատվիրած մարզանքը: Եվ ամեն անգամ տասը վարժություն կընեմ (երեքի տեղ): Գիտե՛ս, նման բաները տաղտկալի էին ինձի համար, բայց հիմա հաճույքով կլծվիմ գործի, քանզի հնազանդած ըլլալու միտքն իսկ ուրախ ու երջանիկ կդարձնե զիս:

Կկարծեմ, թե դուն ալ ամեն օր կհնազանդիս ինձի (1. դաշնամուր, 2. հավկիթ, 3. պառկիլ ժամը 10-ին), և որ այդ հնազանդությունը քեզի ալ որոշ հաճույք կպատճառե, բնավ չեմ կասկածիր:

Շատ ճիշդ կհամարեմ կարծիքդ «Կղզի» բացիկի մասին, որ ծանոթ էր ինձի: Բայց գնեցի զայն պարզապես այն գաղափարին համար, որ **հանկարծ**, ի տես անոր, ծագեցավ մեջս. քեզ հետ մինակ ըլլալ այդ հրաշագեղ կղզիին վրա:

Արսլանյանին լուսանկարը կրնաս ավելի ուշ դրկել, երբ դրամ ունենաս. շտապելու բնավ կարիք չկա: Տեր և տիկին շատ գոհ էին նամակեդ, զոր ինձի ալ կարդացին: Եվ այնտեղ տեսա, որ դուն, երբ ուզես, ի վիճակի ես շատ լավ **գրելու**, քերականորեն **անախալ...** Մինչդեռ ինձի գրած ատենդ բնականաբար ավելի ուշադրություն կդարձնես սիրային հույզերուն, քան ուղղագրական սխալներուն, ինչ որ ավելի նախընտրելի է ինձի:

Հուսով եմ, որ մայրիկին առողջական վիճակը երթալով կբարվոքի: Կուզեմ, որ քաջառողջության իմ ամենասակեղծ մաղթանքներս գրես իրեն: Շատ մտահոգ եմ իրմով:

Ջերմ բարևներս տուր և խորին շնորհակալություն հայտնե հայրիկին իր մեծ բարեհաճության համար: Իրավամբ շատ բարի սիրտ ունի հայրիկը:

Սիրելի՛ս, այստեղ ալ անտանելի է եղանակը. հով, անձրև, ձյուն, ցեխ: Եվ ափսոս, որ անկարելի է վայելուչ հագվիլ այս անպիտան եղանակին պատճառով:

Էրֆուրտեն վերադարձիս որոշեցի անգամ մը Ուշի երթալ (Լեմանին ողջույններդ հաղորդելու համար), բայց հարբուխեն վախնալով, ուրիշ օրվան ձգեցի այցելությունս, չե՛ս նեղանար:

Հրատարակիչես նամակ մը առի, թե գրքիս տպագրությունը գրեթե վերջացած է: Երբ ստանամ օրինակները, հատ մը, բնականաբար, կդրկեմ քեզի:

Ի՛մ կողմես համբուրե «գիշերօթիկ աղջնակները» (եթե կրնաս...) և նաև «իմ ճերմակ, միշտ գոց նամակս»:

Գիտե՛ս, սիրելի պզտիկ Յաննի՛ս, մեր երկուքիս միջև գոյություն ունեցող մագնիսականության մասին գրածդ միանգամայն ճիշդ է: Ի՛նչ խոսք, որ թու անբուն գիշերներուդ պատճառը Ծննդատունը անցած իմ գիշերներս են և

քեզմով տոգորուն մտածումներու ուժն ու սաստկությունը: Այս իրողությունը կապացուցե, որ մենք երկուքս միահյուսված ենք հավիտյան: Եվ ոչ միայն միահյուսված, այլ նույն անձն ենք, նույն հոգին, նույն շքադրամին զույգ երեսները:

Ըսի նույն շքադրամին զույգ երեսները: Ինձի կթվի, թե ճիշդ չէ այս համեմատությունը... Քանզի, երևակայե, եթե նույն շքադրամին զույգ երեսները ըլլայինք, հավիտյանս հավիտենից չափտի կարենայինք տեսնել զիրար: Ի՛նչ դժբաղդություն. այնքա՛ն մոտիկ ըլլալ իրարու և չտեսնվիլ... Հազար համբույր քու

Ռուբենեղ:

Շաբաթ իրիկուն, 1910, հունվար 22

Իմ քաղցրիկ Թրավիաթա,

Ուրեմն, Թրավիաթա՛... Լավ կվայելե՛ քեզի... Կժպտիս: Կուլա՛ս: Գո՛հ ես... Սակայն եթե խոստովանեի, թե դուն ինձի համար ավելի ես, քան Թրավիաթան, ի՛նչ կըսեիր ինձի... Եթե խոստովանեի, թե դուն այն աղջիկն ես, որ ո՛չ երկրիս երեսին է գոյություն ունեցած, ո՛չ Կյանքին, ո՛չ Երևակայության, ո՛չ որևէ ընտանիքին, ո՛չ օփերաներուն, ո՛չ իսկ նախնադարյան Մարդկության կախարդական հեքիաթներուն մեջ: Եթե ըսեի քեզի, թե ես դեռ կկասկածիմ՝ գոյություն ունի՞ս դուն իրոք, թե իմ Երազիս մեջ կաս միայն: Ո՛վ գիտե, թերևս չափազանց գեղեցիկ Իտեալի մը հավերժական պատրանքը... Գոյություն ունի՞ս դուն: Չունի՞ս: Ըսե ինձի, Յաննի՛: Հպե՛ ինձի, զա՛րկ, արթնցո՛ւր զիս խորունկ քունես, հասկցո՛ւր, որ իսկապես գոյություն ունիս: Դուն իմ Թրավիաթան չես, ո՛չ: Դուն իմ Յաննին ես: Իմ քաղցր Յաննին: Յաննին, զոր ես պաշտեցի երեք տարի շարունակ: Յաննին, ամենազորն ու ամենախտեալականը: Արտիս Յաննին...

Բայց ի՛նչ ես դուն, վերջապես, Յաննի՛:

Գոյություն ունի՞ս: Չունի՞ս:

Այս երկբայանքը կչարչոկե, կմեռցնե զիս:

Ամեն անգամ, որ թևերուս մեջ ունեցա քեզ, ստիպված, հեռացա քեզմե...

Յաննին միշտ ինձի համար կնշանակեր «չափազանց գեղեցիկ Իտեալի մը հավերժական պատրանքը...»:

Յաննին եղանակ մըն է երաժշտական, զոր ոչ ոք երգած է տակավին...

Յաննին արձան մըն է սլացիկ, զոր ոչ ոք քանդակած է ցարդ...

Յաննին ծաղիկ մըն է չնաշխարհիկ, որ չէ բացված որևէ տեղ...

Յաննին քերթված մըն է, որ խույս է տված բանաստեղծական ներշնչումներն...

Յաննին բույր մըն է շատ հեշտագին, զոր չէ շնչած մարդ արարածը...
Յաննին Պատրանք մըն է, Երազ մը, Անկարելիութուն մը...
Յաննին իմ Յաննին է...

Քույր՝ Ռուբեն

Հ. Գ. Այս իրիկունն իսկ, այստեղ, կնվագեն Թրավիաթայի հրաշալի երաժըշտությունը (զոր կուղարկեմ քեզի): Այս նամակը գրեցի այդ երաժշտության ներգործության տակ:

Հենրիքեթան և Արսլանյանը (որ սեղանիս շուրջն են) իրենց ջերմագին բարևները կղրկեն քեզի:

Ռ. 2.

Սիրելի նշանածս,

Նոր ստացա այս առավան սքանչելի նամակդ: Շնորհակալ եմ, որ այսքան հաճախ և այսքան բարեմտորեն կգրես ինձի, սիրելի Յաննի՛ս: Դժբաղդաբար, ես, հակառակ կամքիս, նույն հաճախականությամբ չեմ կրնար գրիչ առնել ձեռքս (թեպետ ինձի համար լավագույն պարտականությունը քեզի անընդհատ գրելը պիտի ըլլար): Կհասկնաս, անշուշտ, բժշկության մեջ մարդ պարտավոր է լրջորեն աշխատիլ: Եվ ասիկա մեր օգտին համար, քանզի ես որքան շուտ վերջացնեմ ուսումս, այնքան շուտ կկայանա մեր միացումը:

Իրավ որ ապշեցուցիչ է քու հոգիիդ խորհրդավոր դյուրագագացությունը: Դուն կզգաս այն ամենը, զոր ես ուժգնորեն կզգամ:

Եվ վստահ եմ, որ նախանցյալ օր, երեկոյան (շաբաթ), երբ ներիակ նամակը կգրեի քեզի, նույն ժամուն դուն տարօրինակ զգայություն մը ունեիր, քանզի գրելու ատեն ջիղերու կծկումներ կունենայի...

Շատ ուրախ եմ, որ մայրիկը առողջ է արդեն: Հուսով եմ, որ վաղը մեր սիրելի հայրիկին երախտագիտական երկտող մը գրելու ժամանակ կունենամ: Մինչև օրս այնքան զբաղած էի հիվանդանոցին մեջ, որ իրեն թղթիկ մը ճամբելու պատեհ առիթ չգտա: Թող ներե ինձի:

Շատ սիրեցի դափնեպսակի գաղափարը: Քու կողմեդ ոչ միայն մեծ սիրալիրություն է այդ, այլ նաև շատ նուրբ զգացման մը առհավատչյան ծեր թատերագիրի մը զորավիզ կանգնելու համար:

Այստեղ կավարտեմ նամակս:

Ամենաքաղցր համբույրներս սերեն դողդոջուն շրթներուդ և ավելի ու ավելի վարդագունող այտերուդ... (Ամառը կտեսնենք, թե հավկիթներն ու խաղաղ քունը օգուտ տվե՞ր են քեզի, և թե այտերդ ավելի պիտի վարդագունի՞ն արդյոք...)

Ռուբեն

Հունվար 24, 1910, Երկուշաբթի

Ամենագոր նշանածս, Յաննի, Յաննիս,

Հինգշաբթի իրիկուն է, և ես Օլտ-Ինտիա եմ, համերգի: Երբ իրիկուն է, և երաժշտություն կա, ինձի համար ավելի մեծ հաճույք գոյություն չունի, քան առնել գլուխս ձեռքերուս մեջ և երկարորեն մտածել քու մեծ սիրույդ մասին, որ կպարուրե ու կպարապնո՞ւ գիս իր ոսկեղեն պատմութանին մեջ... Ա՛հ, քու Սերդ, Յաննի՛ս... Քու Սերդ, որ կշոյե, և կգրկե, և կբուրե, և ...¹, և կսպաննե հավերժորե՛ն, հավերժորե՛ն...

Երեկ իրիկուն կկարդայի Լամարթինի «Կրացիելլան», որ ֆրանսական «Վերթերն» է, բայց անհունորեն ավելի քաղցր: Ան սիրո մը պատմությունն է, պարզապես: Բայց ինչքա՛ն շատ երանգներ, ինչքա՛ն փոքրիկ, զմայլելի մանրամասնություններ, ինչքա՛ն կյանք և ինչքա՛ն երջանկություն: Կկարդայի, և դանդաղորեն տաք արցունքներ կհոսեին այտերս ի վար... «Կարելի՛ է միթե: Կարելի՛ է միթե,— կհարցնեի:— Այսքա՛ն քաղցրություն, այսքա՛ն լույս, այսքա՛ն զորգանք...»:

Բայց հետո, երբ ձեռքես ձգեցի գիրքը, նախանձի տարտամ զգայություն մը հառնեց հոգիիս մեջ: «Ասիկա մի՛թե ավելի խտեալական է, քան մեր սերը»,— կհարցնեի ինքզինքիս... Եվ ակամա աչքերս դարձան դեպի քեզ, ձեռքս երկարեցի և դիմանկարդ առի անկողնիս մեջ, զայն սեղմեցի կուրծքիս, գգվեցի շրթներովս, հպեցի խոնավ աչքերուս, և այն ատեն դու, քու լուռ խորհուրդիդ մեջ, կարծես սարսռացիր և հուշիկ հծծեցիր ինձ. «Ո՛հ, սիրելի՛ս, մեր սերն է ամենեն խտեալականը...»:

Օ՛հ, այո՛: Եվ այն ատեն է, որ ես մտածեցի, թե այդ գիրքը թուղթ էր միայն, և այդ սերը՝ երևակայություն, իսկ երևակայության մեջ կարելի է երազել ավենահեշտագին բաները...

Մինչդեռ մեր սերը թուղթ չէ, ո՛չ ալ երևակայություն... Բայց այնուամենայնիվ... Կարելի՛ է երևակայել սեր մը ավելի խտեալական, քան մերը... Եվ մեր սերն այնքա՛ն է խտեալական, որ երեք տարիէ ի վեր ես կհարցնեմ ինքզինքիս. «Կարելի՛ է միթե: Իրականությո՞ւն է այս, թե՞ հավերժական երազ, որ չափազանց իրական է իրական ըլլալու համար...»:

Կարելի՛ է պատկերացնել աչքեր ավելի սիրազեղ, քան քուկիներդ, ձեռքեր ավելի կսկծագին միացած, քան քուկիներդ, շրթունքներ ավելի խուլորեն դողդոջուն, քան քուկիներդ, արցունքներ ավելի տաք, քան քուկիներդ...

Եվ կարելի՛ է երազել սեր մը ավելի սիրատոջոր, քան մերը, վեպ մը ավելի

¹ Անընթեռնելի բառ:

վիպային, քան մերը, խորհուրդ մը ավելի խորհրդավոր, քան մերը, նվիրում մը ավելի նվիրական, քան մերը, զգայություն մը ավելի զգացական, քան մերը, իտեալ մը ավելի իտեալական, քան մերը:

Եվ ըսել, որ մենք վեպ մը չենք...

Ինչպե՞ս կարելի է երկրին վրա այսքան քաղցրորեն սիրել, Յաննի՛:

Ինչպե՞ս: Ինչպե՞ս: Ինչպե՞ս... Ըսե՛ ինձի: Ես ինքս չեմ կրնար հավատալ, չեմ կրնար հասկնալ...

Կապրի՛նք: Կերազե՛նք... Սիրելի՛ս, օգնե՛ ինձ, ես կմեռնիմ առանց քեզի:

Ռուբեն

Փետրվար, 3, 1910

Պաշտելի Թրավիաթա,

Այս առտու միայն ստացա այնքա՛ն գեղեցիկ նամակդ: Չեմ գիտեր՝ ուրկե սկսիմ, ո՛ւր վերջացնեմ: Արևելյան վարագույրներ, մատանի, ներկայացում մը Փարիզի մեջ, վեպը, արհեստական քամելիաներ,— սքանչելիքներու հավաքածո մը ամբողջ: Եվ առաջուց ըսեմ, որ շատ սիրեցի դեմ առ դեմ գտնվող օթյակներու գաղափարդ: Անպայման սքանչելի է միանալ, բայց պարզապես պայմանականությունները հարգելու սիրույն երեք ժամ բաժնվա՛ծ նստիլ թատրոնին մեջ, առանց կարենալու սեղմվիլ իրար... Կխոստովանիմ, որ այս ամենը ինքնատիպ է, զգայացունց, և ասոր իսկ համար պետք է հանդուրժենք օթյակներու այդ կարճատև բաժանումին, գիշերը մեր սենյակին մեջ ավելի լավ միանալու պայմանով...

Նույնքան գերազանց կհամարեմ արևելյան վարագույրներու գաղափարը, փոխանակ մատանիի (որ իսկապես չափազանց հասարակ տեղիք է): Այդ ձևով դու և պիտի կարենաս արդեն սենյակդ փոխակերպել արևելյան պզտիկ սրահի մը, վարագույրներով, պատի գորգերով, սիրաբույր բարձերով, արվեստի զգեստներով:

Ինչ կվերաբերի արհեստական ծաղիկներուն, Յաննի՛, պետք է ըսեմ, որ ես ընդհանրապես չեմ սիրեր շինծու բաներ, ո՛ւր մնաց արհեստական ծաղիկներ սիրելի: Ըստ իս, ծաղիկները (մանավանդ քամելիաները) բնության ամենա-նուրբ և ամենաքնքուշ հրաշալիքներն են: Նմանակել ծաղիկները կնշանակե նմանակել (և գռեհկացնել) Բնության մեծ արարչագործությունը:

Եվ եթե «Քամելիազարդ տիկինը» արհեստական քամելիաներ կրեր (երկվեցյակը 25 մարք), սիրելի է ինձի հավատալ, որ վեպը շատ կկորսնցներ իր

հմայքեն: Եթե թու տեղդ ըլլայի, ի՛նչ խոսք, կնախընտրեի բնական քամելիան. ավելի լավ է երկու-երեք հատ բնական, քան երկվեցյակ մը՝ արհեստական: Բայց եթե, այնուամենայնիվ, կուզես, կրնամ քեզի նվեր բերել Ջատիկին: Հաջորդ նամակիդ մեջ գրե ինծի:

Երբ ամուսնանանք, դուն ամեն օր իսկական քամելիաներ պիտի կրես: Եվ քամելիան պիտի ըլլա թու խորհրդանիշդ, միակ ծաղիկդ:

Իսկ այն գաղափարը, թե ատենոք, թերևս, դուն «Քամելիազարդ տիկինն» էիր, իսկ ես՝ թու սիրահարդ, քիչ մը մտացածին կթվի ինծի (չես նեղանար, չէ՛):

Եթե ծանոթ ըլլայիր վեպին, պիտի տեսնեիր, որ այդ «Տիկինը» սկիզբը հանրային կին մըն էր միայն: Եվ եթե ճանչնայիր իմ հոգիս, պիտի իմանայիր, որ ես, հակառակ ամեն ինչի, չեմ կրնար հանրային կին սիրել: Ուրեմն ատենոք իմ հոգիս պիտի չկրնար սիրել այդ «Տիկինը»: Ոչ միայն պիտի չկրնայի սիրել զայն, այլ ավելին. պիտի չկրնայի նույնիսկ հպիլ անոր:

Ինծի համար ավելի գարշելի բան չկա, քան այն աղջիկը, որ ինձմե առաջ պատկաներ է ուրիշներուն, համբուրվեր է ուրիշներն և որ...¹ իմ սերս:

Կխոստովանիմ, որ անսովոր բնավորություն մըն է իմինս, բայց ուրիշ կերպ չեմ կրնար:

Եվ պիտի ուզեի ըսել, թե չեմ սիրեր նույնիսկ սեղմել Լենայի ձեռքը, որովհետև ան ժամանակին դերասանուհի է եղած (և հետևաբար՝ ուրիշներու հետ):

Եվ եթե դուն կուզես ինծի հաճույք պատճառել, իմ սիրելագույն և քաղցրագույն Յաննի՛ս, մի՛ ըսեր ինծի, թե վաղնջական կյանքի մը մեջ «Քամելիազարդ տիկինն» ես եղած: Օհ, մի՛ ըսեր այդ բանը... Շաբաթ մը առաջ կգրեիր, թե թու հոգիդ չափազանց նման է Թրավիաթայի հոգիին: Ուրեմն, մնա՛ այդտեղ: Շատ ավելի սիրելի է ինծի այդ հոգին: Եվ ես կհավատամ, որ դուն երբեք «Տիկինը» չես եղած և որ միշտ եղած ես մաքուր, երկնային, սիրատոչոր, անհուպ, միշտ իտեալական, միշտ իտեալական, միշտ իտեալական, երբեք ուրիշ կերպ... Օհ, իմ քաղցրագույն Յաննի՛ս, քաղցրագույն, քաղցրագույն, քաղցրագույն, քաղցր, քաղցր, քաղցր, քաղցր Թրավիաթա՛:

Քու
Ռուբենդ

¹ Անընթեռնելի:

Օհ, Յաննիս, Յաննիս,

Ինչպե՛ս կսիրեմ քեզ, ինչպե՛ս կսիրեմ: Եվ ինչպե՛ս արտահայտել քեզի ամբողջ սերս, ամբողջ սերս: Ահ, սիրելի՛ս, այնքա՛ն անուշ է ու հզոր, այնքա՛ն բարի է ու ահեղ այս սերը, որ մեծ սրտիս մեջ է քեզի հանդեպ:

Ամեն առավոտ առաջին մտածումս դեպի հոգիդ կթռչի, և առաջին համբույրս՝ դեպի պատկերդ: Իսկ իրիկունը, անկողին մտնելով, կփայփայեմ լուսանկարդ, կհամբուրեմ զայն, կսեղմեմ կուրծքիս, կննջեմ՝ այտս վրան...

Օհ, սիրեցյա՛լդ իմ, որքա՛ն քաղցր է սիրելը, որքա՛ն քաղցր է սիրվիլը...

Եվ դուն ինձի այնքան հաճախ կգրես ու այնքան լավ, որ չեմ գիտեր, թե ինչպե՛ս արտահայտեմ երախտագիտությունս: Եթե այստեղ ըլլայիր, կվերանար այս «ինչպե՛ս»-ը. շնորհակալությունս արտահայտելու համար կհամբուրեի քեզ ամբողջ և խենթի մը պես: Բայց հիմա այդ բոլոր խոլ համբույրներն ու քնքուշ զգվանքները լուսանկարիդ բաժին կիյնան:

Ու եթե հաճախակի չեմ գրեր քեզի, քաղցր նշանա՛ծս, մի՛ կարծեր թե տկար է սերս: Ո՛չ, ընդհակառակը, իմ սերս լռութենես կտառապի: Եվ արդարև մեծ ցավ է սրտիս, որ ազատ օրերս տրամադրությանս տակ չեն, որպեսզի ուրիշ բան չընեի, բացի հավերժորեն ու հեշտագինորեն քեզի գրելեն...

Մանավանդ վերջին սիրազեղ նամակներովդ այնքա՛ն հուզեցիր զիս, որ պիտի ուզեի երկարորեն, երկարորեն գրել քեզի քիչ մը մեղմելու համար սրտիդ խռովքը, քանզի կտեսնեմ (այսքան հեռուն), որ անդորրանքի կարոտ է սիրտդ:

Ահ, այո՛:

Դուն քու սիրույդ ավունով այնքան բարձր կճախրես, այնքան բարձր, որ կսկսիս գլխու պտույտ ունենալ, կասկածիլ առած քայլիդ ճշտության, ապագայիդ, գալիք երջանկությանդ, սիրտդ պարուրող սիրային մեծ բերկրանքին և սարսափահար կգոչես. «Պիտի ապրի՛մ քիչ մըն ալ, որպեսզի տեսնեմ երազիս իրագործումը, թե պիտի մեռնիմ շուտով...»:

Այդ վսեմ գլխու պտույտի հուզիչ պահերուն է, որ պիտի ուզեի ըլլալ անկողնիդ քովիկը, հակիլ վարսագեղ գլխուդ վրա, առնել զայն դողահար ձեռքերուս մեջ և հծծել ականջդ ի վար. «Կսիրեմ քեզ, կսիրեմ, կսիրեմ, պաշտելի նշանա՛ծս, քու երազածեղ ավելի կսիրեմ քեզ, սիրահա՛րդ իմ քաղցրագույն, վստահե սրտիս, որ կտրոփե միայն քեզի համար, մի՛ տարակուսիր ապագային, որ պիտի բերե երջանիկ երազիդ մարմնացումը և մի՛ ըսեր, թե լոկ մեկ վաղրկյա՛նի միաձուլումը հավիտյանս պիտի բավեր քեզի, և թե այդ ձևով պիտի մեռնեիր ցնծուն հոգիով: Ո՛չ, այդ չի բավեր երբեք, երբեք, երբե՛ք: Ես քեզի

պիտի տամ ավելի, քան այդ մեկ վայրկյանի միաձուլումը, պիտի տամ բոլոր տարիներս և ամբողջ կյանքս մեր հոգիներու մտերմիկ միության մեջ: Ականջ մի՛ կախեր այդ Քամելիազարդ տիկնոջ, որ կհազա: Ան կրնա մեռնիլ: Այդ ամենը թուղթ է միայն... Մինչդեռ դուն պիտի ապրիս, ապրիս, ապրիս, ապրիս, ապրիս... Այսպե՛ս կցանկանամ ես»:

Քույր՝ Ռուբեն Չիլինկիրյան

Շամբերի, փետրվար 12, 1910

Քաղցր Յաննիս,

Եվ հիմա թափուր է սրահը...

Համերգը վերջացավ, պարահանդեսն ավարտվեցավ, զույգերը գացին...

Կախարդական լամպերու պայծառ լույսին տակ, սեղանին առջև նստած, մեղմիվ կտրոփեցնեմ գրիչս թուղթին վրա:

Չեմ գիտեր, թե ի՛նչ կուզեմ ըսել քեզի: Միայն կզգամ, որ պետք է բաներ մը ըսեմ քեզի, խոսիմ հետդ, պարպեմ սիրտս...

Եվ այնքա՛ն ըսելիք բաներ կան... Օ՛հ, սիրելի՛ս, այնքա՛ն բաներ, այնքա՛ն բաներ, և բաներ այնքա՛ն անուշ, այնքա՛ն տարապայման, այնքա՛ն քնքուշ, այնքա՛ն ցնորեցուցիչ:

Այս առավոտ, մութնուլուսուն, դուրս ելա պանդոկեն և լռության ու ձյունին մեջ ուղղվեցա դեպի Խաչելությունը: Խաչելությունը մեր սիրո... Գեղեցիկ իրիկուն մը... մենք հանդիպեցանք վերը՝ խորհրդավոր գագաթին վրա: Իրար ճանչցանք մեկ նայվածքով և սիրեցի՛նք... Հետո փոթորիկ մը պլլվեցավ մեզի, նետեց մեզ վար, բաժնեց իրարմե... Երեք տարի է ահա, որ մենք կճգնինք մագլցիլ դեպի գագաթը:

Տարի մըն ալ, և մենք կհասնինք գագաթին, կհաստատենք այնտեղ մեր սիրո բույնը: Եվ հետո հոն կսիրենք զիրար, կդողանք իրար վրա, կննջենք այնտեղ... Եվ ո՛չ փոթորիկը, ո՛չ Մահը այլևս չեն կրնար մեզ բաժնել...

Սիրտս, կիսովին տխուր, կիսովին երջանիկ այս երազներով լեցուն, ուղեղս, կիսովին խավարչտին, կիսովին լուսավետ այս մտածոմաներով ծանրացած՝ լուռ ու մունջ, մեքենայորեն կքալեի խորունկ ձյունին մեջեն, գլխահակ, նույնիսկ չհամարձակելով նայիլ (չճանչնալու համար զանոնք) դեպի պատուհաններն այն փոքրիկ ամառանոցին, որ մեր օրրանն եղավ ժամանակին...

Այսպես բարձրացա մինչև Խաչելությունը... Վեր առի գլուխս գոհությունս հայտնելու համար երկինքին, երկուղածորեն հանեցի գլխարկս և երկար, երկար ատեն մնացի հոն, կանգնած, սրսփուն, շրթներս հպած սառուցիկ քարե

այն մեծ խաչին, որ վերեն, անշարժ, կիշխեր գոլորշուտ հորիզոնի անսահմանության վրա...

Օ՛հ, այդ լեռները, ձյուները, գագաթները, ապառաժները, ամպերը, անտառները, սառցադաշտերը, անդունդները...

Հետո, ճգմված ու արյունոտ սրտով վար իջա... Եվ ապա, վախով ու տըրտմությամբ, գացի դեպի ամառանոցը, որ ձյունածածկ էր ամբողջովին: Բոլոր պատուհանները գոց էին: Եվ ջու պզտիկ պատուհանդ (ուրկե ատենոց սև ժպավեն մը իջավ վար, որպեսզի կպպե իմ ճակատագիրս ջուկինիդ...), և իմ պզտիկ պատուհանս (ուր ատենոց շրթունքներս հանգչեցան ջու խուսափուկ, խուսափուկ ու դեռ խույս տվող մազերուդ վրա), երկուքն ալ՝ գոց: Բայտեցի դուռը: Ո՛չ ոք, ո՛չ ոք: Կարծես գերեզման մը ըլլար...

Ետքը մտա փոքրիկ ամառանոցեն ներս, ուր ծունկի եկա աղոթելու, գրեթե ակամա...

Հետո ամբողջ օրը՝ տխրություն, մորմոք, սեր, երազներ... Եվ հետո՝ պարահանդես, ուր չպարեցի... Ու հիմա թափուր է սրահը... Եվ ես կուլամ...

Համբույր Շամբերին՝ Ռուբեն

Իմ հրեշտակային Յաննիս,

Որոշեցի. ես Էրֆուրտի մեջ չեմ ամուսնանար: Ահագին դժվարություններ կան Բրուսիո մեջ, և այդ բոլոր դժվարությունները միանգամայն ապուշ են ու ավելորդ: Հիմա, անմիջապես, մեծ ու ճերմակ թուղթի մը վրա գերմաներեն շատ մաքուր կգրես, թե կփափաքիս ամուսնանալ Ռուբեն Չիլինկիրյանին հետ Լոզանի մեջ: Պետք է ստորագրես, հետո թուղթը տանիս Էրֆուրտի քաղաքացիական վիճակի պաշտոնակալին կամ քաղաքագլուխին, որ պետք է նույնպես ստորագրե ի վավերացումն ջու ստորագրության:

Բացի ասկե, հայրդ ու մայրդ (երկուքն ալ) պետք է գերմաներեն ուրիշ վկայագիր մը գրեն ու ստորագրեն, թե իրենք համաձայն են, որ դու ամուսնանաս: Եվ հետո Քաղաքացիական վիճակի պաշտոնակալը կամ քաղաքագլուխը պետք է նույնպես ստորագրե:

Այս ամենը պիտի կատարվի մե՛կ օրվա մեջ:

Հետո այդ երկու վկայագիրներն ու ջու ծննդյան վկայականդ կուղարկեք ինձ:

Եվ ես այդ բոլորը իմ թուղթերուս հետ կհանձնեմ Լոզանի Քաղաքացիական վիճակի պաշտոնակալին:

Ես այստեղ խոսած եմ: Ամեն ինչ կարգադրված է:

Ոչ մեկ դժվարություն չեն տար:

Միայն այս ամենը, թերևս, երկու ամիս մը քաշե: Քանզի դուն Ջվիցերիայի քաղաքացի չես: Կարևոր չէ: Թերևս նույնիսկ մեկ ու կես ամիս քաշե: Ինչ փույթ: Էրֆուրտի մեջ, վստահ եմ, 5-6 ամիսն ավելի կուներ...

Հիմա պետք է անհապաղ ուղարկել ինձի այդ թուղթերը: Անհապաղ, անհապաղ...

Ես Էրֆուրտի մեջ չեմ ամուսնանար: Կերջացած է, վճռված:

Իսկ եթե, Լոզանի մեջ քաղաքացիական ամուսնությունն ենտքը, ծնողներդ ուզեն մեզ խաչ ու խաչվառով կարգել Էրֆուրտի մեջ, բնավ դեմ չեմ: Ավելի լավ...

Ուրիշ գրելիք չունիմ:

Համենայն դեպս, եթե ծնողներդ որոշեր են մեր ամուսնությունը, պետք է անհապաղ ինձի դրկեն այդ երեք թուղթերը: Եվ պետք է գիտնան, որ ես երբեք չեմ փոխեր Լոզանի մեջ ամուսնանալու որոշումս:

Այս բոլորի համար իմ հույսս դրած եմ քու արիությանդ, և խոհեմությանդ, և կորովիդ վրա:

Եվ հուսով եմ, որ 2-3 օրեն կունենամ այդ երեք անհրաժեշտ թուղթերը:

Կսիրեմ քեզ...

Կպաշտեմ քեզ...

Կհամբուրեմ քու հազար ու մեկ գեղեցկություններդ:

Տեսնություն:

Քու հավիտենական
սիրահարդ՝
Ռուբեն

Փետրվար 27, 1910

Կիրակի, Լոզան

Պաշտելի նշանածս,

Ահա հեռուն, անծայր ու սառուցիկ խավարին մեջ ժամացույցը կեսգիշերվան տասներկու հարվածները կհնչեցնե, և ես այստեղ՝ թուղթին վրա, կկեցնեմ իմ քսանչորսերորդ տարվան վերջին վայրկյանը:

Լռության ու առանձնության մեջ, հակած սեղանիս վրա, լեցուն տարտամ տխրությամբ, գրեթե դողդոջուն, քեզի կընծայեմ իմ քսանչորսերորդ տարվան վերջին վայրկյանի վերջին մտածոմները:

Որքա՛ն արագ կանցնին տարիները, և որքա՛ն ողորմելի է մարդը չկարենալ հրամայելու համար ժամանակին:

Ահա տարի մըն ալ ավելի:

Եվ ըսել, որ այդ ավելի տարին ավելի քայլ մըն է դեպի հավիտենական Մահը:

Աստված իմ, Աստված իմ...

Եվ ես յուրովի կհարցնեմ, թե ի՞նչ ըրի այս տարվան ընթացքն ի վար, ապրած ըլլալով զայն:

Սիրեցի՛...

Սիրեցի քեզ, քե՛զ, քաղցր բարեկամուհի՛ս, և այդ սերը ավելի ու ավելի մաքրեց զիս:

Սիրեցի ամեն ինչ. սիրեցի տառապակոծ մարդկությունը, սիրեցի շքեղաշուք տիեզերքը: Եվ կյանքիս մեջ առաջին անգամ խղճով ու հստակատեսությամբ սիրեցի զԱստված...

Ըստ կարելվույն բարի եղա բոլորի հանդեպ: Եվ, բացի ակամա սխալներն և իմ մարդկային բնության մեղքերն, խղճի մտոք կրնամ ըսել, որ չար չեղա բնավ:

Եվ հիմա, խորհուրդով ծանրաբեռն երկինքի մը տակ, կինչն Վերջին ժամերը մայր եկեղեցիին խավարչտին զանգակատունեն:

Մնաս բարո՛վ, իմ քսանչորսերորդ տարիս՛:

Մնաս բարո՛վ: Մենք այլևս չենք տեսներ զիրար, երբե՛ք...

Մնաս բարո՛վ, քաղցր ու բարի տարի՛ տակավ առ տակավ անհետացող երիտասարդության...

Եվ հիմա ի՞նչ պիտի բերե ինձի այս սկսող տարին:

Ապագան գիշեր մըն է, որուն անքթիթ նայելե կվախնամ:

Թող ինձի ուժ տա Աստված դիմակայելու համար կյանքի դժվարություններուն:

Երանի՛ կարենայի լավագույնս զոհաբերել Նոր տարին քեզ ավելի ու ավելի երջանկացնելու համար:

Երանի՛ կարենայի քայլ մը ավելի առնել դեպի Իտեալը երկնային:

Երանի՛ կարենայի բարի ըլլալ իմ եղբայր մարդոց հանդեպ և օգտակար անոնց:

Եվ երանի՛ այս Նոր տարվան ավարտին կարենայի հպարտությամբ գոչել. «Ավասիկ ե՛մ...»

Ռուբեն

Մարտ 3, 1910, Լոզան

առավոտ

Պաշտելի Յաննի,

Բոլոր առաքումներն ստացա: Եվ բոլորն ալ այնքան ուրախությամբ համա-

կեցին սիրոս, որ չեմ կրնար նկարագրել: Երեք բացիկներդ և երկար նամակդ թարգմանեցին ինձի զգացումներդ քսանչորսերորդ տարեդարձիս առթիվ: Փաթեթը մեծապես որկրամուլ դարձուց զիս: Թարմ ու քնքուշ ձևծաղիկներու, եղևինի ձյուղերու, մատղաշ վարունգներու ձևերով գեղագրված նուրբ զարդագրերը, զոր կպահեմ, այնքան անուշ ու ընտիր, համով թխված մեծ կարկանդակն ու փոքրերը զիս ցնծությամբ տոգորեցին: Եվ մանավանդ գլանակներու տուփը շատ սիրուն էր, իսկ ստորագրությունը՝ հույժ տպավորիչ: Այս բոլորին համար, աղվոր Յաննի՛ս, չեմ կրնար շնորհակալությունս հայտնել այլ կերպ, քան տեղվույն վրա պտղըիկ ու քաղցրիկ համբույր մը դրկելով:

Երկուշաբթի օրը շնորհավորական երկտող մը ուղարկեցի մայրիկին: Հուսամ, ավելի լավ է առողջությամբ: Ըսե, տուն վերադարձավ արդեն, թե հիվանդանոց է տակավին:

Միայն բան մը կպակսեր ինձի՝ քու հորինած երաժշտական կտորը: Չե՛ս ուղարկած զայն, թե կորսվեցավ: Կուզեմ երաժիշտի մը նվագել տալ (քանզի ես ձայնանիշերեն բան չեմ հասկնար), որպեսզի հասկնամ, թե ի՛նչ երաժշտական տաղանդ ունիս: Շատ լավ միտք ես հղացած, և ես պիտի ուզեի, որ երաժշտական հորինման դասեր առնեիր: Այդ ձևով պիտի կրնաս ստեղծագործական զբաղում մը ունենալ և գուցե օր մը փառքի հասնիս, բան մը, զոր ի սրտե կմաղթեմ քեզի:

Մոռցա ըսելու, որ տարեդարձի փաթեթին մեջ դրած գեղեցիկ լուսանկարդ չպահեցի ինձի (անկե հատ մը ունեի արդեն), այլ նվիրեցի Աննավուր մայրիկին, Աղեքսանդրիա: Ան շատ կսիրե քեզ և վաղուց կուզեր դիմանկարդ ունենալ:

Գալով տիկին Արսևանյանին, դեռ կրնա քիչ մըն ալ սպասել, կարծեմ:

Իսկ հիմա մոտեցիր ինձի, կամացուկ մը ըսե ականջիս, թե լավ կզգա՞ս քեզ, քաջառո՞ղջ ես, որևէ անհանգստություն չունի՞ս: Ամեն ինչ ըսե ինձի: Քանզի դուն ամբողջովին իմն ես լոկ, իսկ ես ամբողջովին՝ քուկդ միայն:

Միրելի՛ս, ներե երկու օր չգրելուս համար: Անհամբեր կսպասեմ երաժշտական կտորիդ, որպեսզի կարենամ գրել քեզի: Իսկ ան չկա ու չկա: Թերևս որպես քաղցրալուր ավարտ կուզես քանի մը գողտրիկ ձայնանիշեր ավելցնել: Ա՛լ աղեկ: Կքաջալերեմ և կշնորհավորեմ քեզ:

Դիմանկարիդ հազար քաղցրիկ համբույր քու հավերժական բարեկամ և սիրահար

Ռուբենեդ:

Նոր առի կարճ նամակդ և այնքան գեղեցիկ բացիկդ: Շնորհակալ եմ:

Հուսով եմ, որ ստացեր ես արդեն հինգշաբթի օրվան նամակս և կատարելապես հանգիստ ես հիմա: Սակայն կփափաքիս, որ բացատրեմ քեզի լուծաթանս պատճառը: Առկե դյուրին բան չկա: Երկուշաբթի, օրն ի բուն, ոչինչ ստացա քեզմե, բացի իրիկվան նամակեն: Երեքշաբթի հասավ փաթեթդ, որ մեծապես երջանկացուց զիս: Չորեքշաբթի կսպասեի երաժշտական կտորիդ (որ մինչև օրս չէ հասած): Անկեղծորեն, շնորհավորանքի բառ մըն ալ կակնկալեի ծնողքեդ (ինչպես սովորաբար), որպեսզի միաժամանակ պատասխանեի նաև իրենց: Ոչինչ հասավ: Այն ատեն հինգշաբթի առտվան նամակը գրեցի քեզի: Ահա այս է բոլորը: Բարեբախտաբար, ո՛չ հիվանդություն կա, ո՛չ տրտմություն, կամ ալ որևէ պատահար: Չարաչար կսխալիս կարծելով, թե դժգոհ եմ մնացած նվերներեն: Օհ, այո՛, շատ դժգոհ. չափազանց շատ էիր ուղարկած: Թղթիկի մը վրա դրոշմված թեթև համբույր մը անգամ կրնար սիրո տարեդարձի վերածել ծննդյան օրս... Այնքան համբույրներ էիր դրկած, այնքան ջերմիկ խոսքեր և այնքան բաներ... Կրնայի՞ դժգոհ ըլլալ, Յաննի՛:

Այս իրիկուն (շաբաթ), ըստ սովորության, պետք է ուշ վերադառնամ տուն, նույնիսկ շատ ուշ: Քանզի հայկական Մեծ երեկույթը տեղի պիտի ունենա «Ռուսայալ Բալաս» պանդոկին մեջ (Զվիցերիո գեղեցկագույն պանդոկը, զոր Ուշիի ճամբուն վրա անցյալ տարի կառուցեցին Հետեւլպերկի դոյակին ոճով): Բնականաբար պետք է հոն ըլլամ, թեև ոչ մեկ գործուն մասնակցություն բերի երեկույթի կազմակերպման, քանի որ կես տարի առաջ հայկական ընկերության հրաժարականս էի տված: Մենք ամեն տարի Լոզանի մեջ ամենեն բարձրաշխարհիկ երեկույթը կսարքենք, և կկարծեմ, թե այս տարվանը պիտի գերազանցե մյուսները:

Կավարտեմ նամակս, գեղեցկագույն համբույրներ դրոշմելով բոցավառող այտերուդ, իմ քաղցր, քաղցր, քա՛ղցր երագունս...

Քու Ռուբենդ

Մարտ 12, 1910

շաբաթ առավոտ

Պաշտելի Յաննի,

Ահա, վերջապե՛ս, նամակ մը:

Այնքան երկար ատենն է վեր սիրային երկտող չեմ դրկած քեզի, որ կամչնամ ինքզինքես:

Եվ ամենատարօրինակն այն է, որ լուրջությունս ոչ մեկ ներելի պատճառ ունի: Քերես միայն հոգևությունս չքմեղանք ծառայեր:

«Հոգևություն սիրո՞», — պիտի գոչես հիմա երեսիս:

Ո՛չ սիրելի՛ս: Հոգևություն ոտքերո՞ւ...

Վերջին օրերս, օգտվելով Ջվիցերիո շատ գեղեցիկ եղանակեն, հետիոտն երկար շրջագայություններ կատարեցի բարեկամներու հետ: Եվ քանի որ շատոնց պտույտի չէի ելած, հիմա ուղղակի ջարդված կզգամ զիս...

Գրեցի «ջարդված» և իսկույն միտքս ինկավ մայրիկը: Ինչպե՞ս է ոտքին վիճակը: Դեպի լավը կերթա՞, թե ոչ: Խե՞ղճ մայրիկ: Դժբաղդություն դժբաղդության ետևեն: Հուսամ, վերջինս է: Իսկ ինչպե՞ս է Միննան: Նոր նամակ ստացա՞ք իրմե: Ինձի կթվի, թե վտանգավոր բան չկա, և թե ամեն ինչ կանցնի շուտով:

Վերջին քանի մը շաբաթները ո՛չ դուն կրնաս հպարտանալ, ո՛չ ես, թե շատ ենք գրած իրարու... Ընդհանուր ծուլության ժամանակաշրջան մը կբուրերենք: Ես շատ հազվադեպ գրեցի քեզի, իսկ դուն՝ շատ քիչ, միայն երկու էջոնց նամակներ, լեցուն համբույրի շրջանակներով... Չեմ ուզեր ըսել, ինչպես ատենին. «Մնաք բարո՞վ, քսան էջոնց նամակներ...»: Ո՛չ: Գիտեմ, որ նորեն և առհավետ պիտի հառնե մեր մեջ նախկին ոգևորությունը: Բայց հիմակուհիմա կարծես թե սիրո քունի մեջ ըլլանք...

Սակայն պիտի փարատի այս թմբիրը, և նորեն լուսապայծառ սյրևը պիտի ծագի ու արթնցնե մեզ, և մենք երկար, շատ երկար նամակներով պիտի զրուցենք ու շաղակրատենք մինչև մեր ամուսնությունը, որ պիտի ըլլա մեր թըղթակցության վերջը և սկիզբը մեր երջանկության...

Ներփակ կուղարկեմ սիրողական պզտիկ լուսանկար մը, քաշված լուսանյան պտույտի մը ատեն: Բնավ հաջող չէ: Կղրկեմ առ ի հետաքրքրություն:

Կղրկեմ նաև լուսանկարչական թանթիկներու երկաթները, զոր ճաշասենյակին մեջ մեր լուսանկարվելեն հետո, Լևոնը բերած էր Էրֆուրտեն (1908 Ծուռուդին): Կկարծեր, թե վերադարձուցած է այս երկաթները: Բայց երեկ, երբ կարգի կբերեինք իր ճամբորդական իրերը, պահարանին խորքը գտանք զանոնք: Լևոնը ներողամտությունդ կխնդրե և հրաժեշտ կուտա քեզի, ծնողքիդ, շնորհակալություն հայտնելով անոնց իրենց սիրալիր ընդունելության համար: Երեկ շոգեկառքով մեկնեցավ Մարսեյ: Ես չուղեկցեցի իրեն:

Եվ ահա հիմա մինակ եմ Լոզանի մեջ, միս-մինակ: Ատեն մը չորս հոգի էինք այստեղ՝ Տյովլեթյանը, Ազնավուրը, դուն ու ես:

Առաջինը դուն մեկնեցար, Էրֆուրտ:

Հետո Մեծն Տյովլեթյանը՝ Պելճիքա:

Հետո Ազնավուրը՝ Ափրիկե:

Ջվիցերիո մեջ ես մնացի, մինա՛կ:

Բուրը ցրվեցան չորս հովերուն:

Բուրը հեռացան դեպի չորս ծագերն աշխարհի:

Մեծ տխրություն մը կճանրանա սրտիս: Առանց բարեկամներու տրտմալի պիտի ըլլա: Բայց ավելի լավ: Միայն քու Հիշատակովդ պիտի ապրիմ այստեղ: Դուն, միակ բարեկամուհիս:

Իսկ հիմա փակված են բուրը հաշիվները: Մնաք բարո՞վ, բարեկամներս:

Այնպիսի նախազգացում ունիմ, որ դուն քաջառողջ ես, երջանիկ և սրտիդ ուզածին չափ կզվարճանաս: Այս նախազգացումը շատ կուրախացնե գիս: Որքան զվարթ ես դուն, այնքան կցնծա հոգիս, Յաննի՛ անուշս: Աշխատե միշտ քաջառողջ ըլլալ և կենսասեր: Եվ անկողին մտիր տասն անց կեսին: Մի՛ մոռնար նաև առավոտվան երկու հավկիթները: Ահա թե ինչ պետք է լավ ինքնազգացողության համար:

Կտեսնես, որ ես չափազանց պահանջկոտ չեմ: Իմ ամբողջ պարտականությունս և բովանդակ կյանքս կամփոփվին երեք բառի մեջ. «Քեզ երջանիկ դարձնել...»: Այս է իմ նպատակս, կյանքիս իմաստը, հպարտությունը սրտիս, որ միայն քեզ կսիրե արար աշխարհին մեջ, և այս է ամբողջ երջանկությունս...

Ցտեսություն, սիրելի, պաշտելի եւ՛կ երազագույն մագերով...

Ռուբեն

Մարտ 17, 1910 հինգշաբթի
առավոտ

Շատ քաղցր Յաննի,

Այնքան երկար տևեց լռությունդ, նամակներդ այնքան օրերու ճամբան պահել տվին ինձի, որ ձանձրույթը համակեց սիրտս, և քիչ մը զայն պատրանքներով օրորելու համար որոշեցի կարդալ դերկոմս տը Վոկյուեի «Ժան տ'Ակրև» շատ նշանավոր սիրային վեպը, ուր մոտավորապես Կյոթի «Վերթեր»-ի զգացական մթնոլորտը կտիրե և քիչ մըն ալ Լամարթինի «Կրացիելա»-ի, որու մասին քանի մը շաբաթ առաջ գրեցի քեզի: Հերոսը խելացի, զգայուն, քիչ մըն ալ բանաստեղծ պարոն մըն է, որ իր երիտասարդությունը անցուցած է Փարիզի բարձրաշխարհիկ շրջանակներուն մեջ՝ երեկոյթ երեկոյթ և պարահանդես պարահանդես վազելով: Ձանձրացած այս կյանքեն՝ փոքրիկ կղզի մը կքաշվի, որպեսզի հոգեկան խաղաղություն գտնե, ապրելով միևնալ (քանի մը ձկնորսներու հետ): Բայց օր մը, պատերազմական նավի մը վրա տրված պարահանդեսի մը մասնակցելով, կճանոթանա Սանկտ-Պետերբուրգեն եկած ազնվազարմ տիկնոջ մը հետ, որ նոր է ամուսնալուծված: Կայծակնային հարված: Խենթի պես կսիրեն զիրար: Պարոնը կերթա իր կղզին,

իսկ տիկինը՝ Նիս: Կսկսին նամակներ գրել իրարու, լեցուն քնքշությամբ, խելամուռությամբ, ջերմագին զգացումներով: Բայց ըստ ինքյան, այդ նամակները ձանձրալի են ինծի համար, ինչպես Վերթերի նամակներուն մեծամասնությունը: Ինչո՞ւ: Որովհետև հնարովի նամակներ են: Երևակայական: Պիտի ըսեի՝ նույնիսկ ծիծաղելի: Այդ նամակները երբեք գոյություն չեն ունեցած: Հեղինակը ինքը գրած է զանոնք գիրք մը լեցնելու, հարստություն ու փառք վաստկելու համար: Որքա՞ն տարբեր է ճշմարիտ սիրային նամակը: Այս վերջինը թերևս խեղճ է որպես գրականություն, բայց արցունք կբերե մարդու աչքերուն: Եվ եթե ես ինծի իրավունք կուտամ քիչ մը քննադատելու համընդհանուր հիացման արժանացած այդ շատ հռչակված գրքերը, պատճառն այն է, որ մարդիկ մեծավ մասամբ չեն ճանչնար բուն սերը, երբեք չեն տեսած զայն, չեն զգացած, միայն գրքերուն մեջ են կարդացած սիրային նամակներ: Մինչդեռ ես գիտեմ, թե ինչ է բուն, ճշմարիտ սերը, և գիտեմ նաև, թե ինչպես կըլլա իսկական սիրային նամակը: Ես ունիմ քու հազար ու մեկ նամակներդ, որոնց վրա դողացած է քու պաշտելի ձեռքդ, կծկված են շրթունքներդ, չորցած են տաք արցունքներդ... Ինչպիսի՞ պարզ և խորունկ գրականություն, ինչպիսի՞ ապըրված զգացումներ, ինչպիսի՞ բառեր, որոնք թունդ կհանեն սիրտս, ինչպիսի՞ արտահայտություններ, որոնք սիրով ու հիացքով կլեցնեն ու կլացնեն զիս... Անոնք պզտիկ բաներ են, բայց հոգեկան մեծ մակընթացություններ ու տեղատվություններ կմատնեն, ըլլալով զգացված, ճշմարիտ, ապրված, ապրված, անկեղծ ու սրտահույզ...

«Ժան տ'Ակրև» գիրքը կբաղկանա չորս գլուխներե. «Արշալույս», «Միջօրե», «Իրիկուն» և «Գիշեր»: Ես առաջին երկուքն եմ կարդացած միայն և կվախնամ շարունակելե, քանզի սիրտս կվկայե, թե հերոսները գեշ պիտի վերջացնեն, և իրենց Իրիկունը տխուր պիտի ըլլա, իսկ Գիշերը՝ արյունոտ... Բայց որքա՞ն տարբեր է մեր Սերը: Մենք հակառակը կընենք: Սկսանք Գիշերեն, երեք տարի ապրեցանք մեր մեծ Գիշերվան ողբերգական խավարին մեջ, առանց կարենալ տեսնելու զիրար, սակայն հոգիով այնքա՞ն մոտիկ... Հիմա արդեն մեր Իրիկվան մեջ ենք քիչ մը լուսավոր, բայց դարձալ՝ բավական տխուր, երկար բաժանումներուն պատճառով: Քիչ ատենեն պիտի փռվի մեր Միջօրեն, մեր Սեծ Միջօրեն, լուսավետ, տաք, տրոփուն, անպարագիծ, արգասաբեր, ճառագայթուն, պերճավառ, ցնծությամբ ու տարփանքով հորդուն... Եվ որքան պիտի հառաջանանք տարիներու և Սիրո մեջ, այնքան պիտի մոտենանք լույսին, այնքան պիտի երջանիկ դառնանք: Եվ այդ պիտի ըլլա մեր Արշալույսը, անխռով, յաղաղ, երազուն, համբույրի պես ցողաթուրմ, սիրերգի պես երանալիս, անուրջի պես հեշտագին, և լուսողող, և սիրո ու գրգանքի շատ երկար ապրվածքով ծանրաբեռն մեր զույգ սրտերը տարուբերող... Երջանկության

Արշալույսը... Արշալույսը հավերժական... Մեր երկրային Կյանքեն շատ ավելի լուսապայծառ ուրիշ Կյանքի մը Արշալույսը... Անդենականի Արշալույսը...

Եվ երբ պիտի չըլլանք այստեղ, մեր զավակներն են, որ մշտնջենական շղթա մը պիտի դառնան մեր ու Կյանքին միջև: Եվ երբ անոնք գան միանալու մեզի, մեր զավակներուն զավակներն ու անոնց զավակներն են, որ մեզմե մասնիկ մը պիտի կրեն և միշտ պիտի շաղկապեն մեզ այս Կյանքին...

Ինչ հրաշալի շղթա Անդենականի և Երկրի միջև... Ու մտածե, որ մենք պիտի ըլլանք այդ մշտնջենական շղթային հավիտենապես շղթայված առաջին երկու օղակները...

Յաննի՛... Յաննի՛ իմ...

Ռուբեն

Մարտ 20, 1910

Սիրելի և պաշտելի Յաննի,

Վերջին օրերս քանի՛ զմայլելի նամակներ, քանի՛ բառեր ցնորաբեր, որքան՝ Սեր... Ինչ է, կուզես, որ մեռնիմ ուրախութենն ու զգվանքներե՛... Հզոր սիրովետ հոգի՛...

Ինչ ըսեմ: Ինչպե՛ս ըսեմ: Մնացեր եմ շփոթահար: Համրացեր եմ զմայլանքես ու պաշտումես: Չքացեր են բառերը: Ինծի կթվի, թե բառերը շատ են ճռզած, շատ են պայմանական, հասարակաց, չափազանց անիմաստ կարողանալ արտահայտելու համար այն, զոր կզգամ և ի վիճակի չեմ բացատրելու ես ինծի անգամ:

Եվ դուն կշարունակես ավելի ու ավելի սեղմել զիս հրաշագեղ թևերուդ և կյանքը մոռացության մատնող զրգանքներուդ մեջ: Կշարունակես պահել հոգիս զգացումներուդ «անձրևներուն» և մեծության ջախջախիչ սստվածացմանդ տակ...

Օհ, Յաննի՛, ահավասիկ ե՛ս: Ուզածիդ պես վարվե հետս: Ես քու ընտրյալդ եմ և երջանիկ եմ այդպիսին ըլլալով: Ընդունե զիս ամբողջովին ու հավիտյան: Առանց քեզի ոչ մեկ իմաստ ունիմ, ոչ մեկ արժեք, մինչդեռ քեզի հետ Աստուծո մը պես կզգամ զիս...

Բայց ինչպե՛ս հորդուն ես դուն սիրով, Յաննի՛դ իմ... Մտքիս մեջ կհառնեն արևելյան գիշերներ, երբ, դեռ պատանի, կերթայի նստիլ խոտերուն վրա, լսելու համար սոխակին երգը: Այստեղ, Արևմուտքի մեջ, երբեք սոխակի դայլայլ չեմ լսած տակավին և չեմ գիտեր՝ այստեղ ալ այդ թռչունները կերգե՞ն այնքան վշտագին, այնքան նվաղկոտ, այնքան սիրահեղց ու սիրաջեր, ինչպես մեր

կողմերը: Բայց այդ սոխակը (միշտ նույնը) այնքան զգվոտ կգեղգեղեր, այնքան ելևէջուն ու ներդաշնակ, այնքան մարդկային ու խորունկ, որ ես զիս հեղզ ու անխլիրտ բան մը կզգայի, խոտ մը՝ խոտերուն մեջ և հազիվհազ կշնչեի... Ես կորսնցուցի արևելյան այդ տաք գիշերները, պատանության տարիներն այդ, այդ սոխակը... Բայց ահա դուն ես հիմա, որ կերգես հեռուեն, Միրո գիշերներուդ մեջ, և քու երգդ այնքան է գերիչ, այնքան պեսպիսուն, այնքան ուժգին ու անմեղ, որ ես կարբենամ, ինչպես ատենոք, և չեմ գիտեր՝ ո՞րջ եմ, թե մեռած: Միայն գիտեմ, որ շատ գեղեցիկ է երգը, քաղցրահունչ, աստվածային...

Օ, աստվածային սիրեցյալս, ո՛վ սորվեցուց քեզի այս երգը... Քու Ռուբենդ

Մարտ 24, 1910

Պաշտելի Յաննի, քաղցր Բարեկամուհիս,

Ահավասիկ ե՛ս: Տրտմունակ, ջարդված, սիրավոր, լեցուն բաղձանքով ու թախիծով, ահավասիկ ե՛ս:

Հինգշաբթի իրիկուն է, ժամը իննի ատենները: Ամբողջ հետմիջօրեն երկարորեն պտտեցա Սոյի մեր անտառին մեջ... Մտածեցի Էրֆուրտի զովաշունչ ու խորհրդավոր թավուտին մեջ մեր ըրած պտույտներու, սլացիկ ու սիրագեղ հասակիդ մասին: Մտածեցի, որ մենք կրնայինք միասին ըլլալ այսօր, կողք կողքի, Էրֆուրտի մեջ: Օհ, այո՛, կրնայի՛նք... Եվ կըլլայինք երջանիկ: Երջանիկ, ինչպես երազի մեջ... Թերևս ավելի երջանիկ... Օհ, անուշ Յաննի՛ս, որքան քիչ բան է պետք մեզի երանությունն զգալու համար... Պզտիկ տեղափոխություն մը, մեկ գիշերվան կարճատև ճամբորդություն մը, և կըլլայի քովիկդ... Ավա՛րդ, ավա՛րդ: Ինչքա՛ն վաղանցիկ է կյանքը: Եվ ինչպե՛ս մարդիկ իրենց կարելին կընեն դժբաղդություն սերմանելու համար... Ինչո՛ւ այսքան տառապիլ: Ինչո՛ւ այսքան խորունկ սիրել և ըլլալ այսքան թշվառ: Կհասկնամ, որ երբ Սեր չկա, Դժբաղդությունն է ներկա: Բայց մենք, որ կսիրենք զիրար, ինչո՛ւ պետք է տխուր ըլլայինք համաշխարհային տոներու օրերուն...

Ինչո՛ւ այս բոլորը:

Ես շատ լավ կրնայի գալ քանի մը օրով, բայց Ծնունդին էի եկած, ուստի չհամարձակեցա Ջատիկին ալ ըլլալ քովդ...

Մեկ խոսքով, մեր ճակատագիրն է ասիկա: Պետք է համբերությամբ կրենք մեր լուծը: Սիրով ու վշտով պիտի մեծ ըլլանք:

Կմտածեմ նաև ծեր ծնողքիս մասին: Այնքան հեռու եմ անոնք և այնքան կսիրեն զիս: Այնպես կուզեի զատկական այս օրերուն անգամ մը համբուրել զիրենք:

Միտքս կուգան մանկությանս օրերը: Այնքան երջանիկ կըլլայի Ջատիկի օրերուն: Եկեղեցի, այցելություններ, նվերներ, համբույրներ. հին օրերու հուզումները վաղեմի հիշատակներուս մեջ կխորասուզեն զիս:

Օ, ի՛նչ բաղդավորություն է ունենալ բարի, բազմանդամ, համերաշխ ընտանիք մը, որ համակ Սեր է, Անձնվիրություն ու Քաղցրություն...

Ահ, Յաննի՛ս, այնպես չէ՛, մենք ալ քեզի հետ պիտի ունենանք համերաշխ ընտանիք մը, պզտիկ տուն մը, բույն մը խաղաղիկ, մեր փոքրիկ աշխարհը, ուր ամեն ինչ երջանկություն ու երազ պիտի բուրե... Ես կսիրեմ ընտանեկան կյանքը, կսիրեմ այն ընտանիքը, զոր պիտի կազմենք:

Հիմա երաժշտություն կա այստեղ: Ձեզունեն կախված ջահեր հոյակապ: Չորս բոլորտիքը՝ բազկաթռռներ, սեղաններ, մարդիկ: Բայց ես կձանձրանամ: Չեմ սիրեր այս բոլոր դեմքերը: Ինձի խորթ ու օտար է այս ամենը:

Եթե միայն դուն հոս ըլլայի՛ր... Քու ձայնդ՝ երկնային երաժշտության պես պիտի հնչեր: Դեմքդ երջանկության պատկերը պիտի դառնար: Պիտի ըլլայիր աշխարհս բովանդակ: Եվ ես երբեք, երբեք, երբեք չպիտի ձանձրանայի քովդ:

Բայց ինչո՛ւ պատմել քեզի այս աժան ու աննշան բաները: Ինչո՛ւ խռովել սիրտդ: Ինչո՛ւ փոխանցել քեզի այս տխուր ձայնանիշերը:

Ես գեշ նշանած մըն եմ, Յաննի՛: Պետք է քեզի բերկրալի, ժպտուն, երջանկաբեր բաներ պատմեի... Պետք է շնորհավորեի Ջատիկը և ամենայն բարիք մաղթեի քեզի... Անօգուտ են բոլոր բառերը: Համբույրի պես բան չկա:

Եվ ահա քեզի Ջատիկի բարի համբույրը...

Քեզ շատ սիրող Ռուբենդ:

Մարտ 26, 1910

Պաշտելի Յաննի,

Ներփակ կուղարկեմ «Առավոտ» թերթեն փոքրիկ կտրոն մը: Ըստ երևույթին էրֆուրտցիները շատ սիրահարկուտ են և շատ զգացական... Ահա տաք տարեկան գերմանացի տղեկ մը, որ կսիրահարի և անձնասպան կըլլա: Կերեվակայե՛ս: Եվ դեռ կըսես, թե գերմանացիք պաղարյուն են: Անոնք ավելի տաքարյուն են, քան արևելքցիները... Եվ եթե բոլոր գերմանուհիները քեզի պես ըլլային... Այն ատեն ամբողջ Գերմանիան Սիրո ճշմարիտ դրախտի մը կվերածվեր...

Անցյալ օր քեզի դրկեցի տեր և տիկին Փոլի նկարներուն հետ անոնց հնարած գնդիկախաղը: Այսօր կուղարկեմ վառյակ մը և հավկիթ մը: Այս հավկիթը հրաշալիք մըն է: Անոր մեջ է ամբողջ երկրագունդը: Կուզե՛ս Կոս-

տանդնուպոլիսը տեսնել: Դարձո՛ւր զայն դեպի Ասիա: Կուզե՛ս Միննան տեսնել: Դարձո՛ւր դեպի Օվկիանիա: Կուզե՛ս Չիլինկը տեսնել: Դարձո՛ւր դեպի Ալպյան լեռները: Կուզե՛ս մտածել մեր ապագա շուրջերկրյա ճամբորդության մասին: Դարձո՛ւր ամբողջ հավկիթը իր առանցքին շուրջ...

Կուղարկեմ նաև ուրիշ բաներ. լուսանկար մը, որ այնքան ալ գեշ չէ, կարծեմ: Այս ձևով կհուսամ պզտիկ անակնկալ մը ընել քեզի: Արևելյան ասեղնագործություն մը կոկիկ սենյակիդ համար: Կհավնիս: Օր մը այս բոլորը կրնան զարդարել մեր արևելյան փոքրիկ սրահը: Ժամանակ առ ժամանակ ուրիշներ ալ պիտի դրկեմ: «Ամեն թռչուն կամաց կամաց կհյուսե բույն»,— կըսեն ֆրանսացիք:

Եվ մենք ալ թռչունի պես պիտի ընենք:

Կամաց կամաց պիտի մեր բույնը հյուսենք: Եվ ի՞նչ բույն Սիրո... Եվ ի՞նչ բույն երագի... Եվ ի՞նչ բույն դրախտային...

Եվ դեռ ինչ: Եվ դեռ ինչ թռչուններ... Թռչուններ ճովողուն... Ի՞նչ ծուլ թռչուններ ենք մենք...

Հուսամ, կիրակի օրը կստանաս այս նամակը: Շատ, շատ, շատ բերկրանք կմաղթեմ քեզի: Եվ բազում ուրիշ բաներ: Իսկ ես իմ կողմես շատ, շատ, շատ համբույր կուտամ քեզի: Խորհե, որ թովիկդ եմ, և եղիր երջանիկ: Քու վրադ պիտի մտածեմ օր ու գիշեր:

Սիրահարդ, նշանածդ և բարեկամդ՝
Ռուբեն

Հ. Գ. Պիտի գրեմ նաև վաղը: Ցտեսություն, սիրելի՛ս:

Մարտ 29, 1910

Երեքշաբթի, հետմիջօրե

Սիրելի պաշտեցյալ,

Վերջապե՛ս: Կուզեի Ջատիկի կիրակին գրել քեզի, բայց ամբողջ օր այցելությունները գլուխ քերելու ատեն չձգեցին: Երկուշաբթի՝ նույնպես: Եվ միայն այսօր, վերջապես, կնստիմ գրասեղանիս առջև:

Եվ որպես սկիզբ նամակիս՝ խորին երախտագիտություն մը: Դուն այս անգամ շփացուցիր զիս. և չեմ գիտեր՝ ինչպես հայտնեմ շնորհակալությունս: Ամեն ինչ շատ բարեհաջող հասավ, հատիկ-շոքոլաները, խորոված պզտիկ բաղը (այնքան ծիծաղաշարժ և խելոք), շատ գեղեցիկ խոզանակը (անհուն շնորհակալություն) և նաև հոյակապ ժամացույցը,— բոլորն անխտիր մեծ հաճույք պատճառեցին ինձի: Պետք է ըսեմ, որ վերջին ժամանակներս ուղղակի

ապշեցուցիչ է թու սրտագին վերաբերմունքը... Ի՞նչ գեղեցիկ նամակներ, լեցուն սիրով: Ի՞նչ գեղարվեստական բացիկներ: Ի՞նչ անակնկալներ: Դուն այնքան գորովալից, այնքան գորովալից ու բանաստեղծ կրառնաս, այնքան անթերի ու հմայիչ, որ չեմ կրնար զարմանալե դադրիլ... Եվ եթե միշտ այսպես շարունակես թու այս նույն վերաբերմունքը, անկեղծորեն չեմ գիտեր, թե ո՛ր պիտի հասնիս...

Բայց ըստ բավականին սիրալիր պիտի ըլլաս ներելու համար ինձի հազար ու մեկ բաներ: Պիտի հարցնես՝ ի՞նչ: Օ, շա՛տ բաներ:

Նախ պիտի ներես, որ միշտ չեմ կրնար պատճառել թեզի իմ ի սրտե ցանկացած բոլոր հաճույքները և լավ անակնկալներու առջև դնել թեզ: Եվ հետո, պիտի ներես նաև, որ՝ հակառակ անհուն սիրույս, հակառակ կամքիս ամբողջ ուժին, հակառակ սրտիս ընդվզումին, ի վիճակի չեմ ըլլար միանգամայն խտեալական դառնալու, որպեսզի բաց ճակատով թու խտեալական սիրույդ արժանի համարեմ զիս...

Եվ պիտի ներես ինձի թեզ սիրած ըլլալու մեծ ոճիրս: Ինչո՞ւ սիրեցի թեզ: Ի՞նչ իրավունքով հափշտակեցի թու այնքան՝ երիտասարդ ու այնքան՝ հրեշտակային սիրտդ: Ո՞վ թույլ տվավ ինձի դառնալու թու ամբողջ անձիդ տերն ու տիրականը, ինձի, որ սպասավորներուդ վերջինն ըլլալու անգամ արժանի չեմ: Ո՞վ կրցավ հրամայել ինձի, որ կուպտորեն խուժեմ մտածումներուդ ու հոգիիդ հեզիկ պարկեշտության մեջ: Ի՞նչ իրավասությամբ կապեցի թեզ Սիրույս սյունին և կարգադրեցի, որ տարիներ շարունակ մնաս անշարժ, չունենալով ժպտելու սիրտ և արտասվելու թույլտվություն: Ի՞նչ իրավունքով տակնուվրա ըրի խաղաղիկ կյանքդ, քնասույզ երազներդ, ապագայի հեշտին հույսերով օրորուն սիրտդ, երիտասարդությամբ և խնդությամբ լեցուն հոգիդ... Թերևս ապագան ավելի շողշողուն բացվեր առջևդ: Թերևս Բախտը թեզ օծեր կախարդական խինդ ու խնձիղով...

Եվ հիմա, խե՛ղճ աղջիկ, դուն այդտեղ ես, արդեն երեք տարի ե ի վեր, մինակ, անընկեր, սպասելով զիս և աշխարհի մեջ որպես նեցուկ չունենալով ուրիշ բան, բացի խեղճ սիրահարե մը հեռավոր, հեռավոր... Ի՞նչ առելի ոճիր... Պիտի ներե՛ս ինձի զայն:

Եվ պիտի թույլ տա՛ս, որ թեզ կոչեմ «սիրելի», միակ ու պաշտելի սիրելի, իմ սիրելիս, խտեալական և հզորագուն սիրելի, իմ ամբողջ կյանքիս ու հոգիիս սիրելին... Պիտի թույլ տա՛ս ինձի զայն:

Եվ պիտի հավատա՛ս ինձի, եթե ըսեմ, թե որոշ ժամանակ հետո պիտի թեզ դարձնեմ այնքան՝ երջանիկ, այնքան՝ երջանիկ, որ պիտի մոռցնել տամ թեզի արցունքներդ և այժմյան երկար մարտիրոսությունդ: Եվ պիտի ընեմ ամեն ինչ և այնքան՝ լավ, որ քիչ մը արժանի պիտի դառնամ թու սիրույդ, թու մաքուր սիրույդ, թու բարձր սիրույդ, սիրույդ երկնային, զոր այնքան՝ ատեն լացուցի:

Քու թափած արտասուքդ խնդության կայծեր պիտի ցայտեցնեմ և երջանկության ծաղիկներ:

Պիտի հավատա՞ս ինձի...

Քու Ռուբենդ

Բացիկները դրկեցի Տ.-ին, Լ.-ին և Պիպիին: Ծնողդ Պա՛լ են: Ռուբեն:

Ապրիլ 11, 1910

Պաշտելի հրեշտակ,

Ինձի կթվի, թե քեզի բառ չեմ գրած շաբաթներ ամբողջ: Ինձի կթվի, թե երկար տարիներե ի վեր չեմ տեսած քեզ: Ինձի կթվի, թե քեզ մե՛կ անգամ միայն տեսած եմ կյանքիս մեջ, և թե այդ «մեկ անգամ»-ը եղած է այնքա՛ն փութանցիկ, այնքա՛ն փութանցիկ... Ինձի կթվի, թե դուն այլևս գոյություն չունիս երկրի երեսին, և որ ես միևնակ եմ կյանքին մեջ, թափառկոտ և ամեն ինչե փախչող, դժբաղդ ու խելագար... Ինձի կթվի, թե հեռու ես դուն, հեռու, շատ հեռու՝ լեռներեն ու դաշտերեն անդին, երկրեն ու Կյանքեն անդին և կժպտիս ինձի ժպտով մը խաղաղ ու հրեշտակային, ժպտով մը աստվածային, և որ ես բոլորովին դժբաղդ եմ ու տխուր քեզ անգամ մը միայն տեսած ըլլալուս համար... Ինձի կթվի, թե երջանկությունը այնքա՛ն մոտիկ է, և սակայն միշտ անկարելի պիտի ըլլա ինձի հասնիլ անոր... Ինձի կթվի, թե Աստված ստեղծեր է քեզ հանուն երջանկության, բայց ճակատագիրը մոլորեցուցեր է քեզ իմ մութ արահետներուս մեջ, և որ ես կարելիս ըրեր եմ քեզ դժբաղդ դարձնելու համար... Ինձի կթվի, թե ես չափազանց չար եմ, չափազանց անողոք, չափազանց անմարդկային քու հրեշտակային ու կատարյալ սրտիդ հանդեպ... Դեռ ինչե՛ր չեն թվիր ինձի... Ինձի կթվի, թե ամբողջ ուժովս կորզեր եմ քեզ անմեղ ու միամիտ երիտասարդության հրաշագեղ դրախտեն, թե երբե տարի շարունակ հոգեկան բոլոր կտտանքներով խոշտանգեր եմ քեզ, բզիկ-բզիկ եմ ըրած պզտիկ սիրտդ, և որ դուն ամեն ինչ հոժարակամ թույլ ես տված ինձի, մրմնջելով. «Սպաննե գիս, բայց ես կսիրեմ քեզ և կմեռնիմ ժպտուն...»:

Ի՛նչ է այս անագորույն տեսիլքը: Խի՞ղճն է արդյոք... Արդյոք պատի՛ծս... Քու ստվե՛րդ է միթե, որ կերևի ինձի ու կպատժե: Ո՛չ, ո՛չ: Ինձի կթվի, թե դուն միշտ այնտեղ ես եղած՝ հեռու, շատ հեռու, և թե կժպտիս ինձի քու մեղույշ ու սքանչելի ժպիտովդ... Ինձի կթվի, սակայն, թե այդ մեղույշ ու սքանչելի ժպիտը գիս կմեռցնե, կմեռցնե, կմեռցնե... Ահ, ինչո՛ւ ես դուն այնքան քաղցր ու զգլխիչ, և ինչո՛ւ եմ ես այսքան լեցուն վիշտ ու դառնությամբ... Ավա՛ղ, ինձի կթվի, թե երբեք, երբեք պիտի չհասնիմ քու սրբազան մաքրությանդ... Ինձի

կթվի, թե ես ոչինչ ունիմ քեզ երջանկացնելու համար, ո՛չ իսկ երգ մը միամիտ, ո՛չ իսկ բուրավետ ծաղիկներ, ո՛չ իսկ սիրտ մը անբասիր, որպեսզի նվիրաբերեմ զայն քեզի մեր վսեմական միության օրը... Որքա՞ն դժբաղդ պիտի ըլլաս դուն ինծի հետ, իմ խեղճ պզտիկ Յաննի՛ս: Եվ ինչո՞ւ կսիրես զիս: Ինծի կթվի, թե ես միշտ պիտի այսպես ըլլամ... Կուլա՛ս, սիրելի սիրող հոգի՛... Ո՛չ, մի՛ լար: Մենք կսիրենք, սիրված ենք, պիտի հավիտյան սիրված ըլլանք և հավիտյանս երջանիկ... Բայց ինծի կթվի, թե արցունք մը կիջնե այստ ի վար: Այս պզտիկ արցունքը իրավունք ունի՞ հոսելու: Ահ, անիծյալ արցո՞ւնք: Բայց և այնպես ինծի կթվի, թե սիրած եմ քեզ և կսիրեմ սիրով մը, զոր դեռ ոչ ոք զգացած է ոչ ոքի հանդեպ... Յաննի՛, Յաննի իմ, Յաննի՛ն...

Ռուբեն

Ապրիլ 15, 1910

Սիրելի բարեկամուհիս,

Ըստ խոստումիս, պետք է դեռ երեկ երկար նամակ մը գրեի քեզի, բայց ահա Մոնրյո եմ: Մի թթվեցներ երեսդ: Վաղն իսկ Լոզան պիտի վերադառնամ: Հոս սքանչելի է եղանակը, բնությունը՝ համակ գեղեցկություն, լիճը՝ փառահեղ, լեռները՝ արծաթապատ, և թռչունները կերգեն... Այսքանն իսկ բավական է երբեմնի հիշատակներով խոշտանգելու համար քեզ... Սիրելի, պաշտելի, գեղեցիկ, շա՛տ գեղեցիկ Յաննի, քիչ ատենեն մենք այստեղ պիտի հավերժացնենք մեր Մեղրալուսինը... Չեմ կարծեր, որ երկրի երեսին գտնվի անկյուն մը ավելի աղվոր, ավելի խոտալական, ավելի սիրահարույց... Կապույտ երկինքին տակ պիտի դնենք մեր կապույտ բույնը: Մեր բուրող այս վայրերուն մեջ առաջին անգամ իսկապես պիտի արբենանք իրարմով... Բայց ավելի երկար չեմ ուզեր գրել այս բոլորի մասին: Գիտեմ, որ կիռուզվի սիրտդ, կկարմրին աչքերդ: Մի՛ լար, հոգեհատոր հրեշտակ: Ճիշդ է, որ մեր սերը չափազանց գեղեցիկ է անոր վրա անլաց կարենալ մտածելու համար... Վաղը՝ երկար նամակ մը, իսկ այժմ՝ ցտեսություն և շատ անուշ համբույր մը ո՛ւր որ կուզես...

Քու բուրանավեր սիրահարդ՝

Ռուբինս

Լոզան, ապրիլ 27, 1910

Սիրելի նշանածս,

Տասներկու օրվան լուրթենեն հետո ահա նորեն ձեռք կառնեմ գրիչս քանի մը տող գրելու համար քեզի: Նախ պետք է բացատրեմ լուրթյանս պատճառը,

որ ահա՛: Ես տեսա, որ ավելի ու ավելի ծիծաղելի կդառնայի: Այս է ամբողջ պատճառը: Դուև գիտես, որ ես իմ հպարտությունն ունիմ և անձնական արժանապատվությունս: Ես մե՛կն եմ: Ոչ դատարկապորտ մըն եմ, ո՛չ կորած մարդ, ո՛չ ընկեցիկ երախա: Եվ կպահանջեմ, որ քիչ մը հարգեն զիս: Ահա ամբողջ ուզածս:

Գիտեմ, կփափաքիս մանրամասնություններ իմանալ: Խնդրեմ. մանրամասնությունները շատ չնչին են, շատ ճղճիմ, շատ հիմար, բայց ջիղերուս կդպնան, միշտ կվիրավորեն զիս: Ահա անոնցմե քանին.

Երկու ամիս առաջ ծննդյան տարեդարձն էր: Ատեն մը ծնողքդ (երկուքն ալ) գեթ շնորհավորական երկտող մը կգրեին, հիմա՝ ոչ իսկ մեկ բառ:

Գրեցի մայրիկի տարելիցին առթիվ. շնորհակալության ոչ մեկ խոսք:

Շնորհավորեցի իրենց Զատիկը. դարձյալ դամբանական լռություն: Բայց առաջ մերթ ընդ մերթ բացիկ մը կամ երկտող մը կգրեին ինծի: Հիմա՝ վերջ անոնց: Իսկ ինչո՞ւ: Բնավ չեմ հասկնար այս «ինչուն»:

Ատեն մը յուրովի կըսեի, թե այս ամենը կարևորություն չունի: Ես կսիրեմ քեզ և միայն քեզ: Ուստի միայն քեզմով ալ պետք է զբաղիմ: Աղեկ: Բայց ահա կսկսիմ ծիծաղելի դառնալ նաև քու առջևդ:

Հանուն առողջությանդ, հանուն մեր ապագա երջանկության, մեր ամուսնության, բայց մանավանդ հանուն առողջությանդ գրեցի քեզի, որ պառկիս ժամը 10. 30-ին և մեկ-երկու անգամ ալ երթաս թատրոն, օփերա կամ համերգի: Պատասխանեցիր, թե սքանչելի է այդ միտքը, թե դուև ուրախ ես, գոհ ես և շատ, շատ գոհ: Բայց եկուր տես որ օր մը օրանց ժամը 10. 30-ին չես պառկած... Դերասանուհիի մը պես կանոնավորաբար թատրոն կերթաս ու կուգաս, կգրես ինծի, թե սաստիկ հոգնած ես, հիվանդ, թե գրիչ ձեռք առնելու իսկ ուժ չկա վրադ... Իսկ հաջորդ օր՝ նույն բանը: Մյուս օր՝ դարձյալ, և այսպես անվերջ... Ու ամեն նամակիդ մեջ՝ ջարդված եմ, կիսամեռ, ուժ չունիմ երկար գրելու... Եվ այսպես ալ կշարունակվի...

Տե՛ր իմ Աստված: Ես շատ ընտանիքներ եմ ճանչցած, շատ աղջիկներ, բայց չեմ տեսած մեկը, որ ամեն իրիկուն դուրս գա: Նույնիսկ դերասանները ժամանակ առ ժամանակ կհանգստանան:

Անգամ մը գրեցի քեզի, թե ամեն չափ ու սահման կանցնես արդեն, բայց չուզեցիր լսել զիս: Բնա՛վ: Բնա՛վ: Չուզեցիր մտածել, որ երբ ես բան մը կըսեմ, և դուև «այո» պատասխանելիդ տեղը ճիշդ հակառակը կընես, ես կատարելապես ծիծաղելի կդառնամ:

Եվ հատկապես առողջությունդ: Ա՛խ այդ առողջությունը: Գլխու ցավերդ, ջիղերդ, հոգնածություններդ միշտ մտմտուք կպատճառեն ինծի: Խորիե, եթե հիմա ուշադրություն չես ըներ առողջությանդ, և ջուրի ձայն կթվին քեզի խորհուրդներս, ի՛նչ պիտի ըլլա, երբ ամուսնանանք...

Բայց ես այնքան համբերատար եղա ու բարի: Թեև սաստիկ զբաղած էի, կորսնցնելիք վայրկյան չունեի քննություններուս պատճառով (զոր շատ հաջող տվի), բայց և այնպես կգտնեի քանի մը ժամ, որպեսզի սիրով լեցուն նամակներ գրեմ քեզի: Իսկ դուն ինչպե՞ս կպատասխանեիր անոնց. ափիսփո, բացիկի մը վրա մատիտով գրված քանի մը բառեր... Եվ կըսեիր, թե օփերաներու պատճառով ժամանակ չունիս...

Տե՛ր ողորմյա:

Երեք շաբաթ առաջ գրեցի քեզի, թե չեմ ուզեր, որ խաղաս բարեգործական թատրոնին մեջ, ոչ իսկ մենախոսությունը: Ի՞նչ պատասխանեցիր ինձի: Այնքան երկար սպասեցի նամակիդ: Ո՛չ այո ըսիր, ո՛չ ալ ոչ: Լռություն: Իսկ ինչո՞ւ այդ լռությունը:

Բարի Յաննի՛ս, եկուր մեկընդմիջտ վերջ տանք այս տաղտուկներուն: Գիտեմ, որ դուն կսիրես զիս և կսիրես սաստիկ: Բայց իմ ինչուս է պետք թուղթին վրա եղող սերը... Եթե իրոք կսիրես զիս, պետք է քիչ մը հնազանդ ըլլաս (մանավանդ որ քու բարիքիդ համար կըսեմ միշտ, և ոչ թե իմ): Առանց ասոր միշտ պիտի դժբաղդ ըլլանք, անախորժություններու նշավակ:

Նամակի մը մեջ (12 օր առաջ) գրեր էիր, թե սերը անցողիկ զգացում մըն է, կրնա հանկարծորեն չքանալ, փոխվիլ, մեռնիլ:

Յաննի՛, ուրկե՛ կսորվիս այս բաները: Ուրեմն դուն չես գիտեր, որ մեր սերը թատրոնի սեր չէ, ուստի չի կրնար ո՛չ փոխվիլ, ո՛չ չքանալ, ո՛չ մեռնիլ... Եվ եթե պետք է մեռնինք, պիտի մեռնինք մեր սիրո հետ: Ինչո՞ւ նման բաներ գրեցիր ինձի...

Ի սեր Աստուծո, սիրելի նշանա՛ծ, վերջ տուր այսպիսի բաներուն, հանուն մեր երջանկության քիչ մը հնազանդ եղիր: Ա՛լ չեմ կրնար տառապիլ:

Քիչ մը երջանիկ ըլլանք:

Կուզե՛ս, թե ոչ:

Կսիրեմ քեզ:

Քու Ուրբե՛նդ

Ապրիլ 29, 1910

Յաննիս,

Հիմա ստացա նամակդ: Կխնդրեմ, որ քիչ մը փոխվիս: Կկարծես, թե քմայքը ամեն ինչ է, իսկ սերը, հավատարմությունը, հնազանդությունը՝ ոչինչ: Ահա իմ պատասխանս. ի սեր Աստուծո, ձեռք քաշե քմայքներեդ: Եթե քիչ մըն ալ այսպես շարունակելու ըլլաս, սիրտս այնպես կվկայե, թե ամեն ինչ գեշ պիտի վերջանա:

Դուև առաջ այսպես չէիր: Հիմա երթալով ուրիշ մեկը կդառնաս: Բայց ես կսիրեի երբեմնի Յաննիս, իսկ հիմա կտեսնեմ, որ դուև բնավ նույնը չես: Ահա թե ինչ կուզեմ ըսել քեզի. եթե կփափաքիս, որ քեզ սիրեմ, եթե գոհ ես իմ սերես, մեկ կողմ ձգե քմայքներդ: Իսկ եթե կուզես պաղծեցնել սերս ու անոր վերջը բերել, այդ արդեն ուրիշ բան:

Թատրոնը փճացուց իմ Յաննիս: Բոլորովին փճացուց: Առաջ իսկապես պաշտելի էր իմ Յաննին իր նվիրական զգացումներուն մաքրությամբ: Հիմա ան թունավորված է թատրոնի ժամանակակից ու սուտ գաղափարներով: Ես կգարչիմ դերասանուհիներեն: Դժբաղդաբար կտեսնեմ հիմա, որ քու հոգիդ դերասանուհիի սովորական հոգի մըն է դարձած:

Նախորդ նամակիդ մեջ գրած էիր. «Մերը անցողիկ զգացում մըն է, կրնա մեկ օրեն մյուսը մեռնիլ»: Իսկ այսօրվան նամակիդ մեջ կըսես. «Իտեալական կինը պետք է քմայքոտ ըլլա: Հնազանդությունը վայել է պանիրի վաճառականներուն»:

Ինչպե՛ս կգարչիմ նմանօրինակ խոսքերեն: Բայց դուև առաջ այսպես չէիր: Առաջ պիտի նախընտրեիր մեռնիլ, քան այսպիսի բաներ ըսել ինձի:

Չեմ ուզեր գայլի ավետարան կարդալ: Բայց պետք է գիտնաս արդեն, որ քմայքը կսպաննե սերը: Ասոնք երկու ոխերիմ թշնամիներ են: Եվ եթե օրինակ մը կուզես, ըսեմ. քու քմայքդ կսկսի հոգնեցնել սերս...

Երևակայե անգամ մը. եթե դուև թատրոն երթալու քմայքն ունիս, իմ քմայքս ալ քու հոն երթալդ արգիլելն է: Ուրեմն, ի՞նչ կըլլա ասոր հետևանքը. անհամաձայնություն ու կռիվ:

Բարեբաղդաբար ճշմարտությունը կարծածիդ պես չէ: Ճշմարտությունը ցնորակոծ քմայքներուն մեջ չէ, այլ Սիրո: Եվ հնազանդ Սերն է միակ ճշմարիտը:

Ես թքեր եմ մյուս բոլոր սերերուն վրա: Կհասկնա՛ս: Թքեր եմ: Թքե՛ր:

Քանիցս ըսած եմ քեզի ու գրած, քանիցս կրկնած եմ ու խնդրած (կհասկընա՛ս՝ խնդրած) դաշնամուրիդ կապակցությամբ... Այստեղ ես կլանված եմ գրքերով և կաշխատիմ հիվանդանոցներուն մեջ: Ինչո՞ւ. հանուն մեր պզտիկ բուլնի երջանկության: Իսկ ի՞նչ կընես դուև մեր ընտանիքին բարօրության համար: Գոց կտորվի ժուլիեթի դերը և ամեն իրիկուն թատրոն կերթաս (‘‘‘)...

Հազար անգամ խնդրած եմ քեզմե. «Յաննի՛, աշխատե դաշնամուր նվագելը կատարելագործել, աշխատե ամեն օր և ամեն իրիկուն մեկ-երկու ժամ, սկսե դասեր առնել: Ահա միակ բանը, զոր կրնաս ըսել մեր ընտանիքին երջանկության համար: Ասիկա իսկապես սիրանվեր միակ աշխատանքն է և քու միակ զոհողությունդ»:

Իսկ ի՞նչ ըրիր դուև: Ոչի՛նչ, ոչի՛նչ, ոչի՛նչ: Խոսք չկա. հնազանդ սիրո սքանչելի՛ օրինակ...

Եվ հազար ու մեկ այսպիսի բաներ:

Սակայն չեմ ուզեր քեզ ձանձրացնել: Որովհետև, ըստ քեզի, «այս ամենը չափազանց ձանձրալի է, իսկ ես՝ չափազանց միամիտ»:

Չեմ ուզեր ներկայացումներու խոսքն իսկ բանալ: Որովհետև վստահ եմ, որ զիս երբեք չպիտի լսես:

Ուստի կավարտեմ նամակս, ըսելով քեզի. «Ամեն ինչի մեջ թող քու կամքը ըլլա: Դուն քմայքներդ ավելի կսիրես, քան զիս: Ուզա՛ծդ ըրե: Այլևս ոչ մեկ թույլտվություն մի՛ խնդրեր ինձմե: Ուզա՛ծդ ըրե ամենայն ազատությամբ, որպես թե ես մեռած ըլլայի...»

Քու Ռուբենդ

Մայիս 2, 1910

Շատ անուշ Յաննիս,

Այսօր ստացա ուրբաթ և շաբաթ օրերը գրած զույգ նամակներդ: Տխրաթախիծ բառերդ խորապես հուզեցին զիս: Բայց, արդարև, շատ եմ զարմացած, որ ոչ մեկ պատասխան կուտաս բոլոր գրածներուս: Նմանօրինակ բաներ սաստիկ սրտնեղություն կպատճառեն ինձի: Պզտիկ Յաննի՛ս, եթե իրոք կուզես զիս կրկին երջանկացնել ու դարձնել նույն սիրահարը, պետք է ինձի ազնիվ խոսք տաս, որ այսօրվընե իսկ **հնազանդ** պիտի ըլլաս: Առանց ասոր, ամենաքնքուշ բառերն ու ամենատարփոտ նամակներն անգամ ոչ մեկ արժեք ունին: Ա՛յսչափ:

Եվ կուզեմ, որ մենք քիչ մը ավելի հարգանք ունենանք մեզի հանդեպ: Եթե ես քու նշանածդ եմ, այդ չի նշանակեր, որ ազատ եմ քեզ չլսելու: Նույնը քեզի համար:

Արդեն գրած եմ քեզի, կուզեմ վերջին անգամ մըն ալ գրել, թե դուն կրնաս աշխարհի ամենագեղեցիկ և ամենամեծ սիրող աղջիկն ըլլալ. **իմ ուզածս հնազանդ սերն է միայն:** Ծակ դահեկան իսկ չեմ տար մյուս բոլոր սերերուն:

Հաջորդ նամակիդ մեջ պատասխանդ տուր ինձի ժամը 10. 30-ին անկողին մտնելուդ, բարեգործական ներկայացումներուն և դաշնամուրի դասերուն վերաբերյալ:

Իմ ցանկությունս է, որ դուն անպայման, ամեն իրիկուն պառկիս ժամը 10.30-ին: Կուզեմ, որ լրջորեն դաշնամուրի դասեր առնես և չմասնակցիս բարեգործական ներկայացումներուն. ո՛չ նախերգանք, ո՛չ մենախոսություն, ո՛չ պառաված օրիորդի դեր:

Վստահ եմ, որ հնազանդ պիտի ըլլաս և ուրախ պատասխան մը դրկես ինձի: Բայց եթե կուզես անուշ համբույր մը ստանալ ինձմե, պետք է նամակիդ մեջ

գրավոր խոստում տաս ինծի, թե թու սիրույդ մեջ հնազանդ պիտի ըլլաս ինծի (և ոչ թե քմայքներուդ) : Այն ատեն հույժ իտեալական պզտիկ հրեշտակ մը կըլլաս, շատ գորովոտ և շատ ազնիվ, և ես քեզի կդրկեմ քաղցրագույն համբույրներս : Կուզե՛ս :

Չես կրնար երևակայել, թե ինչպես տառապեցա ամբողջ ապրիլ ամիսը թու անհնազանդությանդ պատճառով : Բայց հիմա հուսով եմ, որ միանգամայն պարտ ու պառոշան պատասխան մը պիտի տաս ինծի, և մենք նորեն պիտի ուրախ ու զվարթ ըլլանք : Քանզի պետք է, որ մենք ալ քիչ մը ժպտինք : Մայիս ամիսն է հիմա, բոլոր դեմքերեն գոհություն կճառագայթե, բովանդակ արարչությունը կխայտա, ինչո՞ւ մենք սրդողած մնանք : Վերջ տանք այս անհնազանդության խնդրին, մոռցի՛ր վրիպումներդ և նամակիդ մեջ ըսե, որ կատարյալ ես դարձած : Կուզեմ, որ կատարյալ ըլլաս դու : Պետք է ինքզ ալ ուզես նույնը : Կուզե՛ս :

Քու Ռուբենդ

Իմ շատ սիրելի և շատ կատարյալ սիրեցյալս, Յաննի՛ : Առտուն ըստ բավականին խիստ ու դաժան բաներ գրեցի քեզ : Բայց հիմա գիշեր է, իսկ ես չեմ կրնար աչքս գոցել : Քանզի կմտածեմ, որ վաղը առավոտ, երբ ես դեռ սեր ու երազ պիտի վայելեմ, դուն պիտի կարդաս դաժան նամակս և տապալկիս արցունքներու և հառաչանքներու մեջ : Օհ, նշանած իմ, նշանած իմ վշտահար... Գիշեր է, և ես չեմ կրնար քնանալ : Մայիսյան գիշեր է, այնքա՛ն խաղաղ ու բաբախուն, այնքա՛ն սիրահարույց ու իրական, այնքա՛ն գինով ու անբշուկ : Սիրահարներո՛ւ գիշեր... Եվ, ավա՛ղ, փոխանակ զիրար սիրելու, մենք մեր սրտերը կծվատենք և արյունոտ ու ահռելի վերքեր կբանանք...

Պատուհանիս տակ մարգագետինն է կանաչ ու փափուկ : Անդին արծաթյա լիճն է անծուփ : Ավելի հեռուն ձերմակ ու վեհանիստ Ալպյան լեռներն են : Վերը լուսինն է (հիշե Շամբերիի մեր լուսինը) : Իսկ վարը, բոլորովին վարը, և բոլորովին ճզմված՝ ե՛ս եմ, որ կգրեմ քեզի սիրով լեցուն այս բառերը : Ահ, Յաննի՛ս, այնքան հմայուն ու այնքան անուշ Յաննի՛ս, տարի մը ետքը, այստեղ՝ այս կանանչ ու փափուկ մարգագետինն և արծաթյա ու անծուփ լիճին վրա, այս ձերմակ ու վեհանիստ Ալպյան լեռներուն մեջ մենք երջանիկ պիտի ըլլանք, պիտի ըլլանք սիրով արբշիռ, պիտի ըլլանք իտեալական, պիտի ըլլանք թռչուններու պես, հրեշտակներու պես... Ահ, ահ, ահ...

Բայց ինչո՞ւ այսպես կխոցենք զիրար : Արդեն երեք տարի սպասեր ենք անձայն, անտրտունք, առանց որևէ դեպք ու պատահարի : Եվ հիմա, երբ մեզի կմտա տարի մը միայն հասնելու համար ԿԱՏԱՐՅԱԼ ԵՐՁԱՆԿՈՒԹՅԱՆ, ինչո՞ւ կվիատինք : Սիրելի՛ս, այս առտու շատ խիստ բաներ գրեցի քեզի և շատ հոռի

որոշումներ կայացուցի, բայց զիշեր է հիմա, և ես բոլորովին ուրիշ կերպ կմտածեմ: Կմտածեմ, թե կյանքին մեջ կա **Բարի ճակատագիր** և կա **Չար ճակատագիր**: Բարի ճակատագիրը մարդոց երջանկությունը կուզե, մինչդեռ Չար ճակատագիրը կստեղծե հազար ու մեկ խոչընդոտներ, մանրմուկ դաժանություններ, դժբաղդություններ, տաղտուկներ, հուսահատություններ, սուտեր, խարդավանքներ և ոճիրներ:

Մինչև հիմա մենք չմտածեցինք այս մասին: Ընդհակառակը, սխալեցանք և այդ ձևով Չար ճակատագրին զոհերը դարձանք: Ջղայնացանք իրարու վրա, պոռագինք, եղանք անհնազանդ, փոքր դժբաղդություններ բերինք մեր գլխուն: Բայց եթե այսպես շարունակենք, Չար ճակատագիրն իր հաղթանակը պիտի տոնե, ուստի (առանց ուզելու) մենք մեր Դժբաղդության պատճառ պիտի դառնանք... քիչ ատենեն:

Բայց եկուր այսօրվրեն իսկ ուժեղ ըլլանք, զարշինք Չար ճակատագրեն, փնտռենք բարեկամությունն ու անձնվիրությունը, հնազանդությունն ու մեղմությունը, **փնտռենք սերը**:

Քանզի մենք նախ սիրահարներ էինք, հետո մեռանք և կորսնցուցինք զիրար հազարավոր տարիներ շարունակ: Եվ հիմա՝ երեք տարի է ի վեր, մենք հանդիպած ենք իրարու: Բայց Չար ճակատագիրը միշտ կշանա մեզ բաժնել հավերժորեն: Սակայն ո՛չ: Մենք չենք ուզեր բաժնվիլ, կսիրենք զիրար, կուզենք երջանիկ ըլլալ, երջանիկ պիտի ըլլանք, **երջանիկ ենք մենք**, ամբողջ մնացյալը խարդավանք է և սուտ և սխալ: Միակ ճշմարտությունն այն է, որ կուզենք հավիտյանս երջանիկ ըլլալ... Ահա՛:

Եվ այժմ, սիրելի Յաննի՛, մոռնանք փոքր դառնությունները, քեները, չար պատահարները, մոռնանք բոլորը: Մենք թույր հոգիներ ենք, միաձույլ և անմեկին հոգիներ: Սերն ենք մենք:

Պատռե այս առավան նամակս: Եվ եթե կուզես, ես ալ կպատռեմ քուկինդ, զոր այս առավոտ ստացա: Այս ձևով կմոռնանք զանոնք: Կփոխվինք: Կդառնանք միանգամայն զվարթ ու կատարյալ:

Ուրեմն՝ եկուր, սիրելի՛ս, եկո՛ւր, որ համբուրեմ նուրբ շրթներդ: Կսիրեմ քեզ և գոհ եմ քեզմե: Եվ դուն ալ գոհ եղիր իմ սերես: Երեք տարի ոչ մեկ ուրիշ բարեկամ փնտռեցիր դու: Տարի մըն ալ մի՛ փնտռե: Եվ տարի է մը ես քեզի համար պիտի դառնամ սքանչելի բարեկամ, հեզահամբույր հայր, սիրող ամուսին և երջանիկ երախա: Պիտի ըլլամ ամեն ինչդ: Պիտի ամբողջ կյանքս անցընեմ, մեծագույն երջանկությունն ու նրբագույն հաճույքները դարբնելով քեզի համար: Պիտի ըլլամ **երջանկության ստրուկդ**:

Իսկ հիմա եկուր, որ համբուրեմ շրթներդ: Ես քուկդ եմ: Եվ եթե կվախնաս ապագայեն, **վաղն իսկ** կամ ուզած օրդ կամուսնանամ հետդ: Եվ եթե կփափաքիս զգվել զիս և զրկել խենթի պես, ես կրնամ գալ, երբ դո՛ւն կրնաս, երբ դուն

դուն կուզես, երբ դուն հրամայես ինձի: Այսօրվընե իսկ թու ծառայո՞ւ եմ և ստրուկդ: Հրամայե ինձի... Քեզ երջանիկ դարձնելու հաճույքը պիտի զգամ հրամանիդ մեջ: Ես թուկո՞ւ եմ, թուկո՞ւ, թուկո՞ւ, կհասկնա՞ս, պզտիկ նշանա՞ծս: Ես թուկո՞ւ եմ և երջանիկ եմ թեզմով: Հակառակ ամեն ինչի, գոհ եմ թեզմե և բուրդովին երջանիկ կզգամ զիս կյանքիս մեջ թեզ գտած ըլլալուս համար: Ուրեմն եկուր, որ համբուրեմ թեզ կաթոգին, սիրեցյալդ իմ, իտե՛ալս, կատարյալ աստվածուհի՛ս, իմ խելոքիկ Յաննի՛ս: Եկո՛ւր: Սիրե՛նք զիրար: Հավերժորեն թուկո՞ւ,

սիրահարդ՝ **Ռուբեն**

Երեքշաբթի, մայիս 10, 1910, կեսգիշեր

Հ. Գ.

Պահե այս բացիկը անկողնիդ վրա, ի հիշատակ մեր ԵՐՁԱՆԿՈՒԹՅԱՆ:
Կպաշտեմ թեզ: **Ռուբեն:**

Մայիս 13, 1910, առավոտ

Պաշտելի Յաննիս,

Առավան ժամը յոթն է, ուրբաթ: Ձեռքերուս մեջն է նամակդ: Կդողամ, կվարանիմ, կվախնամ բանալե: Սակայն բացված է ահա: Կսկսիմ կարդալ. «Սիրելի Ռուբենս...» և շարունակությունը, մինչև վերջ... Նամակը ծայրե ծայր այնքան լավ է, այնքան հանգիստ, այնքան գերմարդկային... Ասիկա ամենազետեմ նամակն է, զոր գրած ես ինձի մեր ծանոթության երեք տարիներու ընթացքին: Կարդացի զայն անգամ մըն ալ, անգամ մըն ալ: Իսկապես վսեմ նամակ: Ո՛չ դաժան բառեր, ո՛չ վիրավորանք, ո՛չ անազնվություն, ո՛չ կաթիլ մը արցունք, ո՛չ մեկ համբույր բաժանման: Ոչի՛նչ: Ոչի՛նչ: Բայց ես (որ թեզ կճանչնամ անձիս պես), ես ամբողջ նամակին մեջ զգացի ցավ մը ծանր, անմոռնչ ու համակերպիկ, ցավ մը սոսկալի... Ահ, Յաննի՛ս: Ինչպե՛ս կսիրեմ թեզ, այնուամենայնիվ... Ինչպե՛ս կսիրեմ թեզ... Նամակիդ մեծ հանգստությունը վախցուց զիս... Եվ թեպետ ինձի գրած ես թատրոնի, փառքի, ապագա ողբերգական դժբաղդություններու մասին, ես արդեն չմտածեցի ո՛չ փառքի, ո՛չ թատրոնի, ո՛չ ալ հեռավոր դժբաղդություններու վրա, որովհետև ես Մահը տեսա թու ետիդ ու սարսռացի...

Յաննի՛ս, եթե կշնչես դեռ, եթե կապրիս տակավին, լսե ձայնս, որ կդողա ու կպաղատի թեզի. կսիրեմ թեզ: Կսիրեմ թեզ, Յաննի՛ս: Ներե ինձի այն վերքերը, զոր հասցուցի ազնիվ սրտիդ: Պատճառն այն էր, որ չափազանց կսիրեի թեզ, կսիրեի մարդկային չափերեն և ուժերեն անդին... Իմ կույր սիրույս մեջ Աստված ըլլալ կկարծեի և կուզեի վեր, վեր, միշտ վեր տանիլ թեզ... Բայց ահա հոգնած

կզգաս քեզ, հոգնած ու չարչրկված երեք տարվան սերեն ու խտեալեն, և յըսես ինծի. «Այժմ արդեն... ցտեսություն... ես կին եմ... Կուզեմ քարի մը վրա քուն մտնել ու մնալ... և հոն ալ մեռնիլ գուցե...»: Թող կամքդ ըլլա, Յաննի՛ս, հրեշտակ Յաննիս, ննջե, սիրելի՛ս, ննջե խաղաղ ո՛ր որ կուզես: Ես պիտի սպասեմ քեզ, պիտի կանգուն մնամ կողքիդ, որպեսզի զերծ պահեմ քեզ վտանգներեն ու փորձանքներեն: Եվ պիտի սպասեմ այնտեղ, մինչև որ բանաս աչքերդ և ըսես ինծի. «Ռուբեն՛ս, այստե՛ղ ես... Կսիրեմ քեզ, Ռուբեն՛ս, սիրելի՛ս...»:

— Ահ, Յաննի՛, այո՛, ես այստեղ եմ, միշտ, միշտ: Այստեղ եմ դարերու սկզբնավորութենեն ի վեր: Քեզ կսպասեմ: Կուզե՛ս, որ երջանիկ ըլլանք: (Եվ ահա կուլամ ես տխրութենես: Ինչո՞ւ, ինչո՞ւ, ինչո՞ւ այսքան դժբաղդություն ամբ իսկ ցանկությամբ):

Յաննի՛, եկու՛ր, սիրելի Յաննի՛, ես քուկդ եմ: Բառեր չեմ գտներ, բայց դուն, որ ամբողջ էությունս կճանչնաս, պետք է գիտնաս, որ կսիրեմ քեզ... Նախանցյալ օր, երբ այդ սարսափելի նամակը գրեցի քեզի, օրն ի բուն տխուր էի ու գունատ... Բժիշկացու ընկեր մը հարցուց ինծի. «Ի՞նչ ցավ ունիս, Ռուբեն՛»: Ըսի, թե անարգեր եմ քեզ, վիրավորեր, վշտացուցեր: Ընկերս մեկեն ջղային դարձավ ու պատասխանեց. «Եթե դուն վաղը հրաժեշտի նամակ ստանաս, ուղղակի խելքդ կթոցնես: Կհասկնա՛ս: Ի վերջո ի՞նչ է պատահած: Այդպես է երիտասարդությունը, այդպես է կյանքը, սերը: Սիրեցյալդ կրնա վաղը միտքը փոխել...»: «Ո՛չ,— ըսի ես,— ո՛չ, ո՛չ: Լռե: Ո՛չ: Ես կճանչնամ զինքը: Ան նման չէ մյուս աղջիկներուն: Երկրային չէ մեր սերը, այլ բոլորովին ուրիշ բան: Խտեալն է մեր սերը»: Սակայն ընկերս տարիքոտ է արդեն, ամուսնացած է սիրելով, աղջնակներ ունի, կճանչնա կյանքը: Ով գիտե, իրավունք ունի գուցե: Ո՛չ, չունի: Միայն իմ սերն է, որ իրավունք ունի, այնպես չէ՛, Յաննի՛, այնպես չէ՛: Ես գիտեմ, որ դուն անկեղծ էիր, երբ արտասվելով, «հավերժական սեր» ուխտեցիր ինծի: Գիտեմ, որ եթե ուզեիր իսկ անկեղծ չըլլա, պիտի չկրնայիր: Գիտեմ, որ մեր Սերը ավելի զորավոր է, քան մենք, ավելի զորավոր է, քան Մահը: Եվ գիտեմ, որ դուն աղջիկ մըն ես խտեալական, բարի, հեզահամբույր և այնքան բարձր ու այնքան անըստզյուտ, որ այդքան դաժան արարքի մը անընդունակ պիտի ըլլայիր... Ո՛չ: Կարելի՛ է միթե: Կարելի՛ է միթե... Եվ սակայն... Երբ գրական բարձր երկեր կկարդայի, սիրային վեպեր, ի տես այնտեղ նկարագրված ստապատիր զգացումներուն և համբույրներուն, յուրովի կըսեի, թե այդ բոլորը ճիշդ չեն, կեղծ են, հերյուրածո, մտացածին, թե ճշմարիտ սերը հավերժական է ու բարի: Եվ Սիրո Արքան կկարծեի զիս: Արքան և Ստրուկը... Խեղճ խենթս: Եվ սակայն կարելի՛ է միթե, Յաննի՛ս: Ըսե ինծի, սիրելի Յաննի՛ս: Երջանիկ չէ՛ինք միասին: Մի՛թե չէինք երազած միասին, հանգչած, ժպտած ու արտասված միասին... Եվ այս ամենը պիտի վե՛րջ գտնե: Սո՛ւտ էր,

ուրեմն, այս ամենը... Ահ, խեղճ նամակներ սիրային: Նամակներ Ռոլլեն, նամակներ Լոզանեն, նամակներ Պեռնեն ու Էրֆուրտեն, ո՛վ գիտե, թերևս խաբուսիկ հույսեր էիք դուք, զոր պաշտելի ձեռք մը կողկեր ամեն օր, ամեն օր, երեք տարի շարունակ, որպեսզի մեղրածոր խոսքերով ընդարմացներ և իմ սիրույս ամենավեհ պահուն սպաններ զիս, սպաններ, սպաններ... Կուզե՞ք սպաննել զիս, քաղցր ու ազնիվ նամակներ: Ձեր անխլիրտ ու լուռ կույտին մեջն ահա ձայն մը կաղաղակե երեսիս. «Մեռիր, թշվա՛ռ...»: Եթե ձեզ զոհ բերեմ հոռոտիչ բոցին, ձայնը պիտի անթեղվի մոխիրին մեջ... Եվ եթե աշխարհի չորս հովերուն տամ մոխիրը, աշխարհի չորս ծագերեն պիտի գոռան ինձի. «Մեռիր, թըշվա՛ռ...»: Բայց, իմ քաղցր ու թանկագին նամակներ, ես չեմ ուզեր մեռնիլ, կուզեմ սիրել, կուզեմ երջանիկ ըլլալ և ըմբռնել երանությունը սիրո: Այնքա՛ն տանջվեցա կյանքին մեջ, կուզեմ ճանչնալ Բույնը սիրո, զոր միշտ փափաքեցա հյուսել: Կուզեմ, ի՛նչ փույթ, գեթ պահ մը հասնիլ անոր և, սիրով պարուրված, մեռնիլ այնտեղ՝ թներուն մեջ այն աղջկան, զոր սիրեցի առաջին ու վերջին անգամ, զոր պաշտեցի ամբողջ ուժովս և մարդկային ուժերեն գերիվեր սաստկությամբ: Ես կուզեմ մեռնիլ այնտեղ՝ ջու թներուդ մեջ, Յաննի՛ս, ջու թներուդ, թներուդ, թներուդ, թներուդ մեջ... Ահ, ա՛լ չեմ կրնար շարունակել: Թող որ սիրտս իջեցնելու համար արտասվեմ, արտասվեմ, արտասվեմ, արտասվեմ, արտասվեմ, արտասվեմ, արտասվեմ, ար...

Քու Ռուբենյ

Մայիս 13, Կեսգիշեր

Աստվածուհիս,

Այս իրիկուն, կյանքիս մեջ առաջին անգամ, Սավապլեն անտառը գացի: Ուղղակի հրաշալիք էր: Վերը, շատ վերը, Սինյալի կատարին, մենավոր թավուտներուն մեջ, շատ պզտիկ լճակ մը կա իր փոքրիկ շալեով: Ես այնտեղ էի: Գորտերը իրենց գիշերային աղոթքը կընեին միահամուռ: Լուսինը ակնախըտիղ էր իր գեղեցկությամբ ու պայծառությամբ: Ամեն ինչ այնքա՛ն հմայիչ էր, այնքա՛ն խորհրդավոր, այնքա՛ն վեհ ու սիրահորդ: Ներսերես արցունքներ կելլեին դեպի աչքերս: Կըրջեի լուռ ու անտարբեր: Եվ ինձի կթվեր, թե դազաղս կպտտոցընեմ... Ի՛նչ երանություն կըլլար քեզի հետ, միևսակ, լճափնյա այդ պզտիկ շալեին մեջ, կանանչ խոտերուն վրա, ուր ծղրիդները կերցեն, զլուխս ուսիդ դրած՝ լսել գորտերուն աղոթքը գարնանային գիշերամուտին մեջ... Բայց, ավա՛ղ, դուն այնքա՛ն հեռու կթվիս արդեն, այնքա՛ն անողորմ, այնքա՛ն անտարբեր... Եվ սակայն, Յաննի՛ս, մենք այնքա՛ն լավ էինք ու գեղեցիկ միա-

սին, այնքան երիտասարդ, այնքան բանաստեղծ ու տարփավոր: Հազվագյուտ զույգ մը՝ աշխարհին մեջ... Մենք երկինքն էինք երկրի վրա... Եվ պիտի ըլլայինք շատ ավելի գեղեցիկ ու երիտասարդ, շատ ավելի բանաստեղծ ու տարփավոր մեզի մնացող մեկ տարվան մեջ: (Ահ, մեկ տարին այնքան քիչ է, երբ երեք տարիներ ենք ձգած մեր ետին): Եվ կունենայինք մեր մանկիկը, որ կհանգչեր մեր լանջքին վրա, ժպտուն ու երջանիկ՝ առաջին ու գեղեցկագույն սիրո առջինները... Այդ ինչպե՞ս ուզեցիր դուն կործանել այս բոլորը, այս բոլորը... Ինչո՞ւ ուզեցիր, որ զրկվինք մեր երջանկութենեն, դառնալու համար վերջին դժբաղդները: Դժբաղդները: Այո՛: Այս իրիկուն առաջին անգամ ես գիտեմ դժբաղդ զգացի: Ի՛նչ խոսք, որ երբեմն փոքրիկ ցավեր, տրտում մտածումներ կտառապեցնեին զիս, բայց այս անգամ իմ մեջս զգացի Սիրո Վիշուղ: Սակայն հավատա՛ ինձի, Յաննի՛, ես քեզ կսիրեմ իմ վշտիս մեջ և միշտ պիտի սիրեմ, արտասվելով: Եվ երբ ուզես պոկոտել դժբաղդ սրտիս վերջին ծվենները, սիրով պիտի համբուրեմ ձեռքերդ... Թերևս այս վիշուղ հարատևե: Ի՛նչ փույթ: Պիտի միշտ սիրեմ քեզ: Եվ եթե բառ մը իսկ չգրես ինձի, ես պիտի քեզի ամեն օր գրեմ: Քանզի երբ կվերհիշեմ հրեշտակային դեմքդ, զոր այնքան համբուրեցի, բարակ շրթունքներդ, որ անհուն քաղցրություններ շնչեցին ինձի, նայվածքներդ, զոր աշխարհիս մեջ ամեն բանե ավելի սիրեցի, սիրագորով ձեռքերդ, որ այնքան երկար գգվեցին զիս, պերճ հասակդ, զոր բազմիցս սեղմեցի, քու ամբողջ անձդ, այնքան կատարյալ, ինչպես ծաղիկ մը տարերկրային ու ցնորեցուցիչ,— երբ կվերհիշեմ այս բոլորը, չեմ կրնար ամեն ժամ ու վայրկյան չհծծել քեզի. «Կսիրեմ քեզ...»: Ուզածդ ըրե ինձի՛՝ սաստե գիս, պատժե, խոշտանգե, մեռցուր, միևնույնն է, կսիրեմ քեզ, և ի՛նչ ալ ըլլա, պիտի սիրեմ քեզ, քանզի կյանքիս մեջ առաջին անգամ քու մեջդ ճանչցա ՍԵՐԸ, ԻՏԵԱԼԸ և կյանքիս մեջ միայն անգամ մը քու մեջդ հայտնաբերեցի ԲԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ՔԱՂՅՐՈՒԹՅՈՒՆԸ և ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ... Եվ հակառակ ամեն ինչի, շնորհակալ եմ քեզմե: Դուն հերոսական աղջիկ մը եղար այն հազար օրերու ընթացքին, որ սիրեցիր զիս: Գրեթե աստվածուհիս եղար... Ըրիր ավելի, քան կին մը ընդունակ է ընելու... Եվ հիմա, ի՛նչ, վերջացած է ամեն բան: Դուն կըսես... Ո՛չ: Յաննի՛, մի՛ ըսեր ատիկա: Ըսե, որ իմն ես, և այդ միակ բառը ցկյանս կբավե ինձի: Ըսե այդ բառը: Եվ եթե կուզես շատ բարի ու շատ քաղցր ըլլալ ինձի հետ, մոռցիր անախորժությունները և մտածե միայն, որ պատահածը գեշ երազ մըն էր, և որ միակ ճշմարիտ սերը մեր սերն է: Եվ ձգե, որ համբուրեմ ձակատդ, կուզե՛ս:

Հավերժորեն քույր՝
Ռուբեն

Սիրելի և պաշտելի Յաննի, Նշանածս,

Երբ բարկացկոտ նամակս գրեցի քեզի, հաջորդ առավոտ (մայիս 11) երկար նամակով մը ներողություն խնդրեցի քեզմե: Անկէ ետքը երեք թե չորս երկար նամակներ և քանի մը հատ ալ բացիկ դրկեցի, բայց բառ մը իսկ չստացա որպէս պատասխան: Անձկության մեջ եմ, թե բան մը պատահած է քեզի: Հիվանդ ես, սիրելիս: Ի՞նչ ունիս: Թե՛ չես ստացած նամակներս: Շատ, շատ կվախնամ քեզի համար: **Ըսե ինձի, որ առողջ ես, ա՛լ ուրիշ բանի պետք չունիմ:** Բայց եթե դիտմամբ չես ուզեր ոչինչ պատասխանել, այն ատեն պետք է քեզի հայտնեմ, որ վերջին նամակս է այս: Ուրեմն, եթե սեփական կամքովդ լռություն կպահպանես, կրնաս հավիտյանս պահպանել զայն: Միայն այս պարագային ոչ թե ես ի բաց կվանեմ քեզ, այլ դուն թու ցանկությամբդ կխորտակես մեր սերը: Քանզի ճիշդ է, որ զայրույթի մեկ պահուն կծու նամակ մը գրեցի քեզի, բայց չէ՛ որ հաջորդ օր, անպատասխան մնացած մյուս նամակներուս մեջ քանիցս ներողություն խնդրեցի քեզմե: Արդ, եթե հիվանդ չես (բայց կվախնամ, որ փորձանք մը եկած է զլխուդ) և եթե կուզես հատել մեր հավերժական սիրո ճակատագրական թելը, ամբողջ Պատասխանատվությունը կիյնա վրադ: Ես շատ կուզեմ սիրել ու կսիրեմ, կփափաքիմ կռել երջանկությունդ, բայց եթե լռություն կպահպանես, ո՛վ է մեղավորը: Ամեն պարագային, այս բանը չէի սպասեր քեզմե: Երեկ իրիկուն վերընթերցեցի ապրիլին գրած վերջին նամակներդ, ուր կըսես. «Առանց քեզի, չոր բույս մըն եմ ես, ո՛չ կրնամ ապրիլ, ո՛չ շնչել, ո՛չ շարժիլ»: Երկար մտածեցի և հարցուցի ես ինձի, թե արդո՞ք սովորական սուտեր են տարօրինակ խոսքերդ: Ո՛չ, ո՛չ, դուն չես կրնար ստել: Այն ատեն առանց ինձի ինչպե՞ս կրնաս ապրիլ հիմա: Փոխվա՛ծ ես միթե: Բայց ըսած ես ինձի, թե «իտեալը չի կրնար փոխվիլ»: Այն ատեն ի՞նչ բացատրություն տալ այս ամենուն, Յաննի՛: Ես ուղղակի շփոթության եմ մատնված: Չեմ գիտեր՝ ի՞նչ մտածեմ, ի՞նչ ընեմ, ի՞նչ ըսեմ... Բոլորովին կորսված կզգամ զիս: Սիրտս բաբախելե դադրած ըլլա կարծես: Օրս ձանձրալի է, գիշերս՝ անողորմ: Նախանցյալ գիշեր, կյանքիս մեջ առաջին անգամ, սոսկավիթխար օձ մը տեսա երազիս մեջ, ինչպէս դյուցազնավէպերու վիշապօձերը: Հսկա ծառի մը համեմատություններն ուներ: Սարսափեցա: Ուզեցի փախչիլ, բայց օձը բարեհաճ էր ու մեղմաբար: Ի՞նչ կնշանակե այս, Յաննի՛: Քստմնելի է: Ես չեմ հավատար այսպիսի մանկական բաներուն, բայց երազս կչարչրկե զիս: Երեկ գիշեր նորեն տեսա նույն օձը: Այս անգամ ի՞նչ եին նաև ձագերը: Դարձյալ քաղցրաբարո էր ու բարոյացակամ... Սակայն ես իրո՞ք երախա եմ, որ այսքան հիմար բաներ կգրեմ իմ վերջին նամակիս մեջ... Բայց ի՞նչ կուզես: Այնքա՛ն շփոթահար ու

այնքան խելացնոր եմ դարձած վերջին օրերը: Ավելի տանելի օրերու կսպասեմ: Եթե քիչ մըն ալ շարունակվի այս հոգեվիճակը, կորսը վաճեմ...

Ռուբեն

Երկուշաբթի, Փետրվար 19, 1912,

Իրիկվա ժամը 5

Սիրելի պզտիկ գանձս,

Մի՛ սաստեր. գիտեմ, որ հոգնած էի, ուստի և ծուլ: Սակայն, եթե թվարկեմ այն բոլոր ճամբաները, զոր մենք կտրեցինք անցած երկու օրվա ընթացքին, դուն անպայման կներես ինձի: Ուրեմն, հինգշաբթի իրիկունը, կայարանին մեջ թեզմե բաժնավելեն ետքը, մենք հաջորդաբար երեք պանդոկ այցելեցինք (կեսգիշերեն ետքը, երկու հարմար մահճակալ գտնելու համար): Հաջորդ օրը, առավոտյան ճամբա ելանք քաղաքը դիտելու: Տյովլեթյանը կըսեր, թե ինքը կճանչնա քաղաքը, և թե ինձի կմնա միայն հետևիլ իրեն: Եվ այսպես, վաղորդյան ցուրտի և մշուշի մեջ ժամ մը քալելե ետքը մենք մեզ գտանք... գերեզմանատան մեջ, փոխանակ կենդանաբանական պարտեզին, ուր կուգեինք երթալ. ի դեպ, ավելի ուշ գտանք զայն... կայարանին ճիշդ քովիկը: Այնուհետև պզտիկ, լավ ճաշարան մը փնտրեցինք մեր բերանը պատռա մը բան դնելու համար: Հետո հաջորդաբար փնտրեցինք, գտանք ու այցելեցինք Մյունսթեր գեղեցիկ մայր եկեղեցին, Քաղաքապետարանը, Թանգարանը (ուր հիացումով դիտեցինք Պյոքլինի սրահը), խեղճուկրակ թեյարան մը (որ, կարծեմ, միակն էր Պալի մեջ, քանզի փողոցեն անցնող ամեն զույգ կանգ կառներ մեր ցուցափեղկին առջև հիանալու համար կարկանդակներու գեղեցկության վրա), հետո՝ մեծ գարեջրատուն մը (ուր Տյովլեթյանը անգամ մըն ալ հիշեց Համպուրկի Էրիքսոն գարեջրատունը), պավարական ճաշարան մը, ուր բավական անպետք ընթրիք մը ըրինք, հետո՝ մեծ վարիեթե մը, իսկ գիշերը՝ նույն պանդոկին մեջ: Բայց դեռ այս չէ բոլորը: Լուսանկարչական թանթիկներ և ճախարակներ գնեցինք, գետեղեցինք գանոնք, նկարներ հանեցինք, և... Տյովլեթյանը լուսանկարել ձևացուց ինչ-ինչ մարդիկ, որոնք լրջորեն կկայնեին գործիքին առջև...

Հաջորդ օրը ոտքի կելլենք ժամը վեցին (ժամը վեցին դեռ մութ է), կմեկնինք Պեռն, ուր ընդհանրապես նույն բաները կընենք. ստեպլին կնետենք արջերուն, կայցելենք մայր եկեղեցին (որուն ձիավորը վար է ինկած), Քաղաքապետարանը և շատ ուրիշ տեղեր: Կեսօրին իշխանավայել ճաշ մը կընենք (երևակայե, խորոված վառյակներ) Քոռներհամի մեջ, հսկայական տակառով,

որուն վրա մենք անգամ մը միասին եղանք: Ճաշեն ետքը շրջագայություն մը կկատարենք Քուրթերի՝ պեռնական Ալպայաններուն վրա բացվող անհուն տեսարանով փոքրիկ բարձունքի մը վրա: Հետո՝ նորեն թեյարան (Պեռնի մեջ շատ թեյարաններ կան, նույնիսկ՝ պզտիկ Օլտ-Ռնտիա մը): Անկե ետքը կայցելենք Ֆետերալ պալատը, վերեն վար կդիտենք Միջազգային փոստատունը (հինգ ցեղերով), որ գլուխ-գործոց մըն է: Հազար անգամ կչափչփենք կամուրջները, կպտտինք գետափին, չարաչար կհոգնինք: Հետո կկարդանք գերմաներեն ազդագրերը, ուր ծանուցված է, թե այս իրիկունն իսկ **Վիվաթորը** հասած է վիեննական սրճարանը: Տյովլեթյանը կըսե, թե վարիեթեի խումբ մըն է այդ և այլն: Վիեննական սրճարանը գտնելու համար կվազվզենք ամենուրեք, վախնալով, որ կուշանանք և այլն: Կհասնինք. վիեննական սրճարանը ծակուռ մըն է, իսկ **Վիվաթորը**՝ պարզապես գերմանական գարեջուր մը (Սալվատորի տեսակեն), մինչդեռ մենք կկարծեինք, թե երգիչ-պարողներու խումբ մըն է: Խեղճե՛րս: Այնքան հոգնած էինք, փոշեթաթավ, այնքան անոթի: Աղջրած կաղամբի ապուրով մը կգոհանանք... (մինչդեռ կեսօրին պահանջած էինք վեց լավագույն ճաշարաններու խորտկացուցակները, որպեսզի տեսնեինք, թե ո՛ր կարելի է առք-փառք ուտել): Շոգեկառք կցատկենք ու կեսգիշերին կհասնինք տուն: Կկարծեի, թե որևէ բան կգտնեմ քեզմե. բան չկար: Բուրոսի թափուր սենյակը տեսնելով, տխրեցա, շատ տխրեցա: Հաջորդ օրը՝ երկար նամակ մը քեզմե: Ինչքան ուրախացա, Աստված իմ, որ դուն ողջ-առողջ տեղ ես հասեր: Կափսոսաս, որ վերջին պահուն լավ չես համբուրած զիս: Մի՛ ափսոսար. դուն զիս բավական պինդ համբուրեցիր, նույնիսկ ակամա կծեցիր, բան մը, զոր ես ավելի ուշ զգացի... Առավոտուն լավ նամակ մըն ալ քեզմե, ինչպես նաև թու սիրալիք ծնողներեդ նամակ մը, որուն համար շնորհակալությունս կհայտնեմ և ջերմագին բարևներ կուղարկեմ իրենց: Մտացա երեք ճախարակները, կսպասեմ մյուս երկուքին: Տասնվեց լուսանկար կդրկեմ հասցեիդ. քեզի պահե լավագույնները, մյուսները տուր բարեկամներուդ: Կրնամ ուրիշներ ալ դրկել քեզի, միայն գրե: Դուն պետք է ինձի ներես, եթե ամեն օր չկարենամ գրել քեզի. պետք է շատ խնայողություններ ընեմ կարենալ ապրելու համար այն դրամով, որ կմնա ինձի այս ճամբորդութենեն հետո: Մանավանդ որ երեկ ոստիկանությունը նորեն 14 ֆրանք տուրք պահանջեց ապահովագրյալ նամակով: Այս վոցիները չեն կրնար ապրիլ... առանց կողոպտելու մարդիկը: Ես լավ եմ՝ ո՛չ չափազանց տխուր, ո՛չ չափազանց ուրախ, և այն ներքին բերկրանքն ունիմ, որ քեզ... գիրցած պիտի տեսնեմ... Հազար քաղցրիկ համբույր

Քու Ռուբենդ:

Տյովլեթյանը կբարևե քեզի և ծնողներուդ. շնորհակալություն կհայտնե բացիկիդ համար:

Սիրելի պզտիկ Յաննի, իմին աղվոր կինս,

Ահա երկար ատենն է վեր քեզի խոստացված նամակը: Եվ որպես սկիզբ կուզեմ քեզի ըսել, թե անկեղծորեն շատ գոհ եմ, որ դուն այնքան ալ հաճախ չես գրեր ինձի, որովհետև այդ ցույց կուտա, որ լավ կզվարճանաս: Ա՛լ աղել կրցածիդ չափ օգուտ քաղե երիտասարդութենեդ և երբեք, երբեք մի՛ մտածեր, որ այդ ձևով վիշտ կպատճառես ինձի. այդպես մտածելը շատ հիմարություն կըլլար: Ես ինքս չեմ կրնար ըսել, թե կզվարճանամ, բայց մեծապես չափազանցել կըլլար ըսելը, թե կձանձրանամ: Այնքան լավ կզգամ զիս իմ տանս մեջ, որ միայն ուտելու համար դուրս կելլեմ և անմիջապես ետ կվերադառնամ: Տասը օրվա մեջ երկու անգամ եմ դուրս ելած գիշերը. անգամ մը ժողովրդական տան համերգին և անգամ մըն ալ Փրիմըրոզ երթալու համար: Չեմ կրնար ըսել՝ ավելի համերգի՞ն, թե՞ թատրոնին մեջ ձանձրացա, բայց կրնամ անկեղծորեն ըսել, որ ավաղեցի դրամս և երեկոս:

Իսկ եթե հարցնես, թե ամբողջ օրը ի՞նչ կընեմ տունը, դժվար թե կարենամ պատասխանել. զիտեմ, որ շատ կկարդամ, կգրեմ քիչ մը, կարգի կբերեմ հին բանաստեղծություններս, կհանգստանամ (և ինչպե՛ս...), կզվարճանամ միսմինակ, քառասուներորդ անգամ ըլլալով կլսեմ Տյովլեթյանի ողբերգակատակերգական պատմությունները (և միշտ նույն հուզաթաթա՞վ շարժուձևերով), կդիտեմ հին լուսանկարներդ, կնայիմ լեռներուն (որոնք շաբաթե մը ի վեր այնքա՛ն գեղեցիկ են), կլսեմ թռչուններուն երգն ու զարնան զարթոնքը, ձեռք կառնեմ ամիսներ շարունակ դարակիս մեջ անպատասխան մնացած նամակները: Մեկ խոսքով, կօգտվիմ արձակուրդիս վերջին օրերեն, քանզի կկարծեմ, թե շուտով տեղ մը կունենամ արդեն: «Հապա իրիկո՞ւնը,— կհարցնես ինձի,— ժամը վեցեն յոթը ի՞նչ կընես»: Այսպես ուրեմն. պետք է որ անգամ մը բանալիին անցքեն տեսնես, թե ինչ լավ տնարար է քու պարոնդ: Ան ամեն օր կփոխե խորակացուցակը: Երեկ չէ առջի օրը արքայավայել ապուր մը եփեց բրինձով, կարագով, հավկիթով և կիտրոնի քանի մը կաթիլով: Երեկ ձվածեղի գլուխ-գործոց մը պատրաստեց կարագով, ռոքֆոր պանիրով՝ վեց հավկիթ, շերտ-շերտ ուղեղ և... դեռ ուրիշ բաներ, զոր չեմ համարձակիր ըսել: Այս իրիկուն անհուն արվեստով և ուշադրությամբ կաթնով եփելու վրա է ահա: Ինչպես կտեսնես՝ շատ ալ ժամանակ չունի ձանձրանալու. թող ստոր ապացույցն ըլլա այն արտակարգ իրողությունը, որ ան իրար վրա երկու կիրակի Արսլանյանենց տունը ոտք չէ դրած. երեկ երկու անգամ հանդիպեցավ անոնց (Ուշիի և Սեն Ֆրանսուայի վրա) և բարև չտվավ, ինչ որ, ի վերջո, սոսկալի ջղայնացուց զանոնք, կարծեմ. պարզապես այնպես ձևացուց, թե չի նկատեր զիրենք: Քեզ ավելի զարմացնելու համար ըսեմ, որ դարձյալ շնորհակալական

երկար նամակ մը ստացա Տամատեն (օրացույցի մեջի իր լուսանկարին համար), քանի որ իր առաջին նամակին չէի պատասխանած: Անա թե ինչու այսօր նամակ մը դրկեցի, ներփակելով լուսանկար մը (երկուքս), և գրեցի, որ չորրորդ հարկեն և մեր պատշգամեն բարևներ կուղարկենք ժնև, և կկարծեմ, թե այս բանը արցունքի գետեր պիտի հոսեցնեն խեղճ տիկին Տամատի աչքերեն, և անոնք, պատմելով մեր սիրո պատմությունը, այդ բոլորը պիտի ցույց տան ժնևի գերմանացի հյուպատոսին... որ միշտ կպաշտպանե զիրենք լուտեններու դեմ... (— «Եվ մանրիկ արցունքով» «և խոնավությամբ» (մանրուքներու դեմ», — կըսե Տյովլեթյանը...):

Ա՛հ՝ նեղանար, որ այս թուղթին վրա կգրեմ քեզի. տպագրական թուղթը իրոք որ բնավ հարմար չէ սիրային նամակի համար: Այստեղ կավարտեմ նամակս, բայց երբեք՝ ամենաբաղդրիկ համբույրներս: Այն օրը մոռցա շնորհակալութիւնս հայտնելու քեզի անդրավարտիքին համար, զոր կազմ ու պատրաստ գտա պահարանիս մեջ, և որ հրաշալիորեն կվայլե ինծի: Եվ ճաշակելու համար անդրավարտիքին (իմ անդրավարտիքիս) և գիշերանոցին ամբողջ հաճույքն ու... հանգստավետությունը, ժամը ութին իսկ անկողին կմտնեմ և կկարդամ մինչև կեսգիշեր: Ուրքի կելլեմ առտվա ժամը յոթն ու կեսին, որպեսզի ջու դեռ փակ կպստեղդ դրկեմ բարի լույսի համբույրս... Ջերմագին բարևներ մայրիկին ու հայրիկին:

Քու՝ Ռուբեն:

Տյովլեթյանը արդեն իսպառ մոռցեր է իր Հայկանույշը: Երջանի՛կ արարած:

Չորեքշաբթի

Յաննի, սիրելի,

Շնորհակալ եմ նամակիդ համար, սակայն իրոք ինձ ցավ պատճառեցիր անբընութամբդ և գիշերային տաղտուկներովդ: Բայց դուև արձակուրդի գացիր, որպեսզի հանգստանաս ու թարմանաս, ջու կողմեդ շատ դաժան բան է ձանձրանալու մտքերով տարվիլը: Եվ սակայն չեմ կրնար հավատալ, որ իսկապես այդքան վատ կզգաս ու կնիհարիս: Երեկ իրիկուն երազ տեսա (ես, որ երբեք երազ չեմ տեսներ). դուև այնքա՛ն գեղեցկացեր էիր, այնքա՛ն սիրունիկ էիր դարձեր վարդագույն աղվոր այտերով, ինչպես ատենոք, գիշերօթիկնոցին մեջ, կիիշե՛ս...

Կիրակի իրիկուն թատրոն գացի. վերին պատշգամն էի: Երկու թատերակ կներկայացնեին. Պեռնշթեյնի «Հանկարծահողմը» և Շաթրիանի «Բարեկամ

Ֆրիցը»: Ջիս հատկապես հիացուց առաջինը, որ գլուխ-գործոց մըն է, ինչպես, առհասարակ, Պեռնշթեյնի բոլոր թատերակները: Ռեմին սքանչելի կխաղար, բայց զիս շատ վշտացուց այն իրողությունը, որ ան չէր խաղար իր ժիլտա կնոջ հետ (ինչպես ատեն մը, սիրային դերերուն մեջ): Պետք է ըսել, որ հայկական երեկույթեն ի վեր այդ խեղճ ժիլտան հայտագիրին վրա բնավ չերևաց: Եվ հետո ամուսինը (ինձի կթվի, թե սինլբորի մեկն է) սիրո ընտիր տեսարաններ կխաղա դ'Ասիլվային հետ (որ հավանաբար անոր խելքը տարեր է իր պճնագեղ արդուզարդով): Այս առթիվ ի՞նչ պետք է մտածե իսկական կինը: Նողկալի կյանք... Վաղը իրիկուն նորեն թատրոն պիտի երթամ Օքթավ Միրպոյի «Գործը գործ է» թատերակը դիտելու: Նորեն Ռեմին դ'Ասիլվային հետ...

Մայրիկս տաքուկ բարևներ է դրկած քեզի և խնդրած է, որ քեզ համբուրեմ իր կողմեն... Ինչքան բարի է մայրիկս: Բայց եթե կարելի ըլլար, այնքան կուզեի անգամ մը համբուրել քեզ ի՛մ կողմես...

Շաբաթ օրեն ասդին ահռելի վճիռ մըն եմ կայացուցած, պիտի ըսեի նույնիսկ՝ հերոսական: Կռահե, թե ի՞նչ: Այսպես ուրեմն, վերջնականապես ձգած եմ ծխելը... Ահա չորս օր է՝ ոչ մեկ գլանակ չեմ առած ձեռքս... և ասիկա ոչ միայն Առողջության պատճառով...

Ներքակ կգտնես Տամատի մեկ բացիկը, որով շնորհակալություն կհայտնես մեր լուսանկարին համար (պատշգամի վրա): Անկե զատ, հայերեն երկար նամակ մըն է գրած ինձի ըսելու համար, որ եթե մենք փափաքինք Լոզան մնալ, իրենք կուզեն վերադառնալ... Խեղճ մարդ, համենայն դեպս տխուր բան է...

Լևոնի քսանչորսամյա երեց եղբայրը (որդեգրյալ եղբայրը) մեռեր է քսանչորս ժամվա ընթացքին: Շո՛ւտ, ցավակցական բացիկ մը կամ նամակ մը գրե իրեն (նաև ծնողներուն ու քրոջը). Լ. Ազնավուրյան, Միտան, Աղեքսանդրիա (Եգիպտոս):

Բացի անկե, կըրկեմ բացիկ մը, որ քեզի հասավ մեկնելեդ օր մը ետքը... Ներե ծուլությանս համար: Կա նաև կնքված գերմաներեն նամակ մը (հարսանեկան, թե՛ նշանտուքի, կամ ասոր նման բան մը), չեմ գիտեր՝ որմե, և զոր բացեր եմ շատոնց:

Այնուհետև, մեր փոքրիկ գործիքով քաշված լուսանկարներեն քանի մը նմուշ կուղարկեմ: Հուսով եմ, որ պիտի... ապշիս...

Գալով ուտելուս, ըսեմ, որ մսեղենի այդ ամբողջ սննդակարգը սոսկալի գեշ անդրադարձավ վրաս: Հիմա վերադարձեր եմ իմ սիրելի պանիրիս. իրիկունը միայն հաց և զվիցերական պանիր կուտեմ:

Ինձի կթվի, թե հազար ըսելիք ունեի քեզի տակավին, բայց քանի որ ձեռքս դեռ նոր հասած նամակիդ մեջ այնքան անհամբեր կերևաս, ուստի կփութամ կարելվույն չափ շուտ հասնիլ կայարանին դուռը...

Սիրելի Յաննի, իմ շատ աղվոր Յաննիս, գեղեցիկ գարուն է այստեղ, գեղեցիկ երկինք մը կա մեր վերև, գիշերը՝ բյուրավոր աստղեր, սեր կա օդին մեջ, և եթե ես այս բոլորի մասին երկար չեմ գրեր, գիտցիր միայն, որ շատ երկար, շատ հաճախ, շատ քնքշորեն և նաև շատ անհամբերությամբ կմտածեմ: Ահ, կսիրեմ քեզ, իմ գա՛նձս, կուզեի ունենալ քեզ, ունենա՛լ, ունենա՛լ. կուզեի սիրել քեզ, սիրե՛լ քեզ...

Ռուբեն

Չորեքշաբթի իրիկուն

Յաննի, գա՛նձս,

Հիմա չեմ գիտեր՝ ինչո՛ւ միշտ կըսես, թե կմոռնամ քեզ: Այլևս այս մասին մի՛ խոսիր ինձի, կաղաչեմ: Արդեն ըսեր եմ քեզի, որ սերն ինձ համար մեծ, լուրջ, հավիտենական բան է: Անիկա միակ զգացումն է, որ մեզ կմոտեցնե աստվածներուն: Թեթև սերը, սերը, որ կմոռնա, այլևս սեր չէ իմ աչքիս, այլ զվարճանք: Կրնա ըլլալ, որ երբեմն կծուլնամ քեզի գրելու համար, բայց չեմ ուզեր, որ այդ արարքիս մեջ սիրո մոռացում տեսնես: Սակայն մինչև հիմա շաբաթը առնվազն երեք նամակ եմ միշտ գրած. եթե դուն ավելի քիչ կստանաս, հավանորեն կկորսըվին: Եվ հետո շատ լավ կրնայի բացիկներ գրել քեզի, ամեն օր: Վստահ եմ, որ բացիկը չափազանց քիչ է քեզի համար: Դուն կուզեիր, որ ես առտուն սկսիմ քեզի գրել և ավարտեմ կեսգիշերին, այնպես չէ՛, պզտիկ բզեզիկ: Հապա աշխատա՛նքը: Քանզի պետք չէ մոռնաս, որ ես ամեն օր ժամը ութեն մինչև 12-ը հիվանդանոցն եմ (և սոսկալի օգուտ կքաղեմ անկե): Իսկ հետմիջօրեները՝ կկարդամ: Շատ քիչ դուրս կելլեմ՝ վարի նպարավաճառին քով վազելու չափ միայն (միշտ պանիրի սննդակարգ...) Կրնայի շատ բաներ գրել գիշերը, բայց այդ անիծյալ Տյովլեթը չուզեր վերջակետ դնել իր համպուրկյան պատմություններուն և ապագայի ծրագիրներուն, ուր երթալով ավելի ու ավելի կխորի: Հազիվ կրցա երկու-երեք փոքրիկ բանաստեղծություն գրել՝ պարապ բաներ: Բայց միշտ կմտածեմ քու վրադ, և **Աստված գիտե՛ ինչպե՛ս**: Օրերը կհաշվեմ և հուսով եմ, որ այդ բանը տեղի կունենա ապրիլի մեկին, այնպես չէ՛: Բայց քանի որ գիտեմ, որ դուն ալ շատ անհամբեր ես, ուստի չեմ ուզեր քեզ ավելի ջղայնացնել: Ներփակ կուղարկեմ այն երկու բացիկները, զոր Լևոնն է դրկած քեզի, նաև ինձի հասցեագրված երկու նամակները: Կգրե, թե իր քրոջ հետ Լոզան պիտի գա մայիսին (այս անգամ արդեն անտարակո՛ւյս,— կըսե): Կգրե նաև, թե իր մայրիկին կողմե սքանչելի նվեր մը պիտի բերե քեզի, բայց չուզեր, որ այդ մասին առաջուց ըսեմ քեզի (կտեսնես, որ ես կըսեմ այնուամե-

նայնիվ, իսկ ինչո՞ւ ոչ) : — Եվ հետո խորհուրդ տվի Թագվորին, որ անմիջապես Պոլիս տանի իր եղբայրը. ավելի լավ է, որ իրենց տան մեջ մեռնի այդ խեղճ տղան: Ահա այն ամենը, որ կրնամ գրել այսօր: Վաղը չէ մյուս օրը ավելի երկար կգրեմ քեզի և գեղեցիկ լուսանկարներ կուղարկեմ: Կհամբուրեմ քեզ շատ մե՛ղմ, շատ մե՛ղմ, մե՛ղմ, մեղմորեն...

Քու Ռուբենդ, ցկյանս:

Ի՞նչ սիրելագույն կինս,

Այսօր կիրակի է. ո՛չ աղեկ, ո՛չ գեշ, այսինքն՝ գարշելի եղանակ: Ծանրաչափը շատ ցած է. քիթիս մեջ կզգամ... (Ես շատ գիտական քիթ ունիմ): Առավոտուն ժամը յոթեն առաջ ոտքի ելա, սոսկալի ցուրտ էր: Գլուխս գնաց կարդալով այնպիսի պատմություններ, որոնք բնավ չէին հետաքրքրեր զիս: Ժամը տասին Ազնիվը եկավ Պիպիին հետ քու հասցեդ առնելու (ան շատ է զգացված, որ գրեր ես իրեն): Հարցուց նաև, թե ինչու իրենց այլևս չենք այցելեր: Ես ըսի, թե քիչ մը անհանգիստ եմ (և ասիկա մասամբ ճիշդ է): Տասներկուքը քառորդ անցած Ուշի իջա: Ժամը մեկին ճաշեցի. շատ անհամ կերակուր մըն էր (այն օրեն ի վեր, որ այս ճաշարանին մեջ զզվելի աղցան մը կերցուցին ինձի, այլևս փսրոճակով չեմ ուտեր. ի դեպ, գինիին տեղ Ռոմանելի ջուր կիսեմ): Տուն վերադարձա և ձանձրույթս սանկ-նանկ երկարաձգեցի մինչև այս պահը՝ իրիկվա ժամը հինգը: Եվ ահա հիմա, գրիչը ձեռքս առած՝ քեզի կգրեմ: Խոստացեր էի հետաքրքրական նամակ մը ղրկել քեզի, սակայն... միշտ չէ, որ կրնաս ուզածդ ընել: Պիտի հարցնես, թե ինչու այդքան տաղտուկ կզգամ այսօր: Պատճառն այն է, որ Թագվորը (մուշտակի վաճառականը) Լեյզենեն գալով, պետք է այցելե ինձի: Որքան կատեմ այսօրինակ արարածները, այնքան կտեղան գլխուս: Եվ մտածել, որ երկրիս երեսին ապրող մարդոց մեծագույն մասը նման արարածներն են... Օհ, ի՛նչ տխուր է ապրիլ կյանքը այսքան արձակունակ աշխարհին մեջ: Եվ ինչքա՛ն քաղցր է ունենալ նազելի կին մը և պզտիկ, մենավոր օձախի մը մեջ ամբողջ աշխարհի մը ստեղծել: Ինչպես կտեսնես, ես ավելի ու ավելի մանուկ կդառնամ, Յաննի՛, ավելի ու ավելի կհամառիմ մեր փոքրիկ Տաճարն ունենալու երազիս մեջ (դուն գիտես, այն, որ մենք ծրագրեր ենք արդեն): Եվ հիմա, երբ վերջապես հասեր է գործնական կյանքին, դրամին, տիտղոսներուն, դիրքին, ապագային վրա մտածելու ժամը, հիմա ավելի քան երբեք երազող կզգամ ինքզինքս: Գործնական կյանքը կզզվեցնե գիս, մարդիկ սոսկում կառթեն ինձի, կուզեի մեկ բան միայն. Երջանկություն և Արև (գիտես, Փեբո՛սը...) Կհիշե՛ս, դուն ինձի կառաջարկեիր վեց ամիս միասին ապրիլ, վեց ամիս՝ առանձին (թատրոնի սիրույն): Ես քեզի

կըսեի, թե ատիկա անկարելի է ինձի համար: Եվ ինչքան իրավունք ունեի: Ահա ամիս մըն է միայն, որ բաժնված ենք իրարմե, և որքան գեշ կզգամ ինքզինքս... Եվ ինչպե՛ս կհաշվեմ օրերը, որ կանջատեն զիս քեզմե... Եվ ինչքան միևնա՛կ եմ, միևնա՛կ, միևնա՛կ, փհ, եթե գիտնայի՛ր... Ի՛նչ արժեք ունի կյանքը: Եթե ճշմարտապես կսիրենք զիրար, եթե կրնանք այսքան քիչով երջանիկ ըլլալ, Աստված իմ, ինչո՞ւ չըլլանք... Ի՛նչ գիտենք, որ դեռ երկար պիտի ապրինք (ես ինքս բնավ վստահ չեմ սրտի այս հիվանդությամբ, զոր շատոնց ունիմ արդեն): Ինչո՞ւ: Ուրիշներո՞ւն հաճույք պատճառելու համար: Իսկ որո՞նք են այդ ուրիշները: Եկո՛ւր, Յաննի՛ս, ես քեզ երջանիկ, երջանիկ կդարձնեմ: Ես զաղտնի գանձեր ունիմ, կախարդական աշխարհներ, անհուն բաներ, Հազար ու մեկ գիշերներու երազներ, քեզի կուտամ այդ բոլորը և միշտ ավելին կունենամ... Կսիրեմ քեզ, գա՛նձս, դու և միակ էակն ես, որ իրոք ընդունակ է անկեղծորեն և հավերժորեն զիս սիրելու... Կսիրեմ քեզ, հոգի՛ս... Կարոտագին կըղձամ գգվել քեզ, ունենալ, տրվիլ քեզի, սարսուռ սերեն, ապրիլ և զգալ, որ կապրիմ... Սիրելի՛ս...

Ռուբեն

Հինգշաբթի իրիկուն

Սիրելի Յաննի,

Գիշեր է: Օլտ-Ինտիայի թեյասենյակին մեջ եմ հիմա: Սիրային երազներու ժամն է: Նվագախումբը «Բանաստեղծն ու գյուղացին» կնվագե: Իսկ ես կմտածեմ քու վրադ... Ահա այն ամբողջ անհրաժեշտ պայմանը, որպեսզի դու և կարենաս երևակայել այս իրիկվա իմ գոյութենական հոգեվիճակս...

Սիրելի՛ս: Այս բոլորը լավ է անշուշտ: Բայց կա բան մը, որ կպակսի: Նամակներդ: Այսօր գրեթե տասը օր է, որ ես ոչինչ եմ ստացած քեզմե: Բացարձակապես ոչինչ: Ի՛նչն է պատճառը: Ազնիվ խոսք, բան չեմ գիտեր: Եվ սակայն շատ երջանիկ կզգայի զիս, գիտնալով թե միայն ծուլությունը արգելք կըլլա գրելուդ: Ամենայն անկեղծությամբ ըսե ինձի՝ արդյոք ունի՛ս ուրիշ պատճառ մը, որ կբռնե գրիչդ...

Երևակայե, Յաննի՛ս: Ահա տասը օր է արդեն: Եվ դու և ցպահանջ տող իսկ չես գրած իմ բացակայության ժամանակ:

Երևակայե մեկը, որ ծարավ է և մեկ շաբաթ շարունակ ոչինչ է ստացած իր ծարավը մարելու համար: Բայց կարելի է մեռնիլ այսպես... Եվ ես վստահ եմ, որ եթե իմ տեղս դու և ըլլայիր, սիրո դառն հանդիմանություններ կտեղայիր շուտով... Բայց, ինչպես կտեսնես, ես երկար համբերություն ունիմ, և այնքան սիրելի է ինձ ամեն անգամ քեզի ներելը:

Իմ պաշտելի կուռքս, քաղցրագույն բարեկամուհիս, վերջին հույսս և առաջին երջանկությունս, դու, Յաննի՛ս, բարի եղիր ուրեմն ինձի հանդեպ և եթե նույնիսկ լուրջ զբաղումներ կամ բոլորովին ուրիշ պատճառներ ունենաս, գեթ սիրո երկտող մը գրելու չափ բարի եղիր: Երբեք ավելորդ չըլլար...

Գալով ինձի, ես շատ լավ եմ, միայն քիչ մը հոգնած, ճամբորդության պատճառով: Արդեն ձգեցի անցյալ տարվա սենյակս (որովհետև հեռու էր հիվանդանոցեն) և հիմա Թամարեն ամառանոցն եմ, շատ լավ կահավորված գեղեցիկ ընդարձակ սենյակի մը մեջ: Ուրեմն դուն պետք է նամակներդ հասցեագրես այսպես. «Ռ. Չիլինկ, Թամարեն ամառանոց (պր. Ռոժիվյուկի տունը), Ուրս հրապարակ, Լոզան»:

Հույս ունիմ, որ այս հասցեն երջանկություն կբերե ինձի և որ այս տարվա թղթակցությունը շատ ավելի հաճախակի կըլլա:

Ընդունե ամենատաքուկ համբույրներս նուրբ շրթներուդ: Բյուր բարև սիրելի ծնողքիդ:

Քու հավիտենական Ռուբենդ

Ուրբաթ իրիկուն

Անուշիկ գանձս,

Շնորհակալ եմ նամակներուդ համար, զոր երկու օրը մեկ, առտուն կանուխ, կանոնավոր կերպով կստանամ: Շնորհակալ եմ նաև ծննդյանս օրվան առթիվ ըրած նվերներուդ համար: Դուն պզտիկ գանձ-կին մըն ես, որ շատ կսիրե իր ամուսինը և կուզե հաճույք պատճառել անոր, հակառակ ամեն ինչի: — Սիրելի՛ս, կարծեմ հետդ տարած ես փողկանի այն գնդասեղը, զոր անցյալ տարի ծննդյանս օրվան առթիվ ծնողների նվիրեցին ինձի և որու մարգարիտը իյնալու վրա էր: Կինդրեմ, վերանորոգել տուր զայն: Ի զուր փնտրեցի նաև սև գավազանս, որպեսզի վերջապես զողել տայի (երրորդ անգամ ըլլալով) կտորված արծաթը, բայց չգտա: Եթե կհիշես, թե ուր ենք դրած այն, գրե ինձի հաջորդ նամակիդ մեջ:

Ահա այսօր երկրորդ շաբաթն է, որ մեկներ ես քովես: Ջարմանալի է, չէ՛: Եվ մտածել, որ կան տարվա կեսը, երբեմն նույնիսկ տարիներ շարունակ իրարմե բաժնված ապրող մարդիկ: Իրոք սիրահարներ են անոնք...

Կուզես կարծիքս գիտնալ այն քանի մը կարասիներու մասին, զոր կկափաքին տալ քեզի: Սիրելի՛ս, վարվե ուզածիդ պես, մեր ճաշակները նման են իրար. այդ կարասիներուն մեջ դուն ինձմե ավելի պիտի ապրիս (քանի որ ամբողջ օրը տունը պիտի ըլլաս), այնպես որ կրնաս որոշել ըստ քու ցանկությանդ:— Իսկ գալով դաշնամուրին, եթե իսկապես խարխված է, որ դուն չես

ուզեր նվազել զայն, ուրեմն իրոք որ չարժեր ահագին դրամ վճարել էր ֆուրտեն Լոզան և Լոզանեն Պոլիս փոխադրելու համար: Ավելի լավ կըլլա (ինչպես կըսես) ծախել զայն և այդ դրամով Ցաբեքեն դաշնամուր մը վարձել:— Բայց շատ ավելի կարևոր հարց մը կա, զոր կուզեի այսօր գրել քեզի, և որու մասին շատ երկար եմ մտածած: Դուն գրեր էիր, թե ծնողներդ կուզեն Ջվիցերիա ապրիլ. սքանչելի գաղափար, և ահա թե ինչ կառաջարկեմ քեզի. եթե կուզեն Ջվիցերիա ապրիլ, ավելի լավ է, որ Լոզան գան, որովհետև չկա ավելի տխուր բան, քան օտար երկրի մը մեջ իրենց տունը միս-մինակ ապրող ծեր ամուլ մը (մտածե Տամատներու մասին. դրամ ունին, կահկարասի ունին, բայց կտառապին այն պատճառով, որ չափազանց մինակ են...) Եվ հետո մենք հավիտյանս Եվրոպա մնացողը չենք. օր կուգա (և այդ օրը հեռու չէ, թերևս), երբ կերթանք Պոլիս, այնտեղ ապրելու և այնտեղ մեռնելու համար: Այն ատեն հաճախակի կմտածես թու խեղճ, միայնակ ծնողներուդ մասին և կզղջաս, որ ըստ բավականին երկար ու քնքշորեն չես ապրած հետերնին ողորջելու համար անոնց ծերությունը (որովհետև ես ալ հաճախակի կմտածեմ ծեր ծնողներու մասին, շատ ավելի հաճախ, քան կկարծես):

Այն օրը սքանչելի ամառանոց մը տեսա Սըքրեթիան ծառուղիին վրա, աներևակայելի տեսարանով՝ պարտեզ, հարմարություններ, բոլորովին նոր, շատ գեղեցիկ և այնքա՛ն աժան: Բայց երկուքիս համար չափազանց մեծ էր: Կարելի է միասին ամառանոց մը վարձել, և մենք անոնց թով փոքրիկ հարկաբաժին մը կունենանք: Կկիսենք առտնին ծախքերը և այլն: Շատ ալ հարմար կըլլա մեզի համար, որովհետև, երբ ես գործի տեղ մը ունենամ, Լոզանեն դուրս գտնվող բնակարանի մը մեջ ամբողջ օրը մինակ մնալը վտանգավոր է երիտասարդ կնոջ մը համար: Եվ տխուր է նաև: Եվ հետո, շատ հաճախ, հիվանդի վրա հսկելու համար, պետք է որ ես հիվանդանոցին մեջ պառկիմ, այն ատեն բոլորովին մինակ ի՛նչ պիտի ընես Լոզանեն դուրս ելող ամառանոցին մեջ: Մինչդեռ եթե ծնողներդ երկրորդ հարկին վրա ապրին, չափազանց հարմար կըլլա: Եվ հետո գիտես, որ քանի մը ամիս ետքը մորդ կարիքը շատ պիտի զգաս, որովհետև չեմ ուզեր քեզ հիվանդանոց դրկել: Մեկ խոսքով, երկարորեն խորհելեն ետքը, եկա այն եզրակացության, որ միակ միջոցը այդ է:— Կխոստանանք լավ վարվիլ հետերնին: Վերջապես, կրնաս այս կապակցությամբ խոսիլ անոնց հետ և անմիջապես ինձ գրել լրջորեն:

Կհարցնես ինձի. «Լավ անցուցի՞ր ծննդյանդ օրը»: Ավելի շուտ տխուր անցուցի զայն: Քանի մը օրե ի վեր քիչ մը գլուխս կցավի՝ աննշան դժբաղդություն: Միայն ճաշելու համար է, որ տունեն դուրս կելլեմ, և այդ է իմ ամբողջ պտույտս:

Կշտապեմ, որ շուտ հասնիմ Պալի վերջին՝ 6. 40 մեկնող շոգեկառքին, այս իրիկունն իսկ առաքելու համար այս նամակը: Ցտեսություն, գա՛նձս, հա-

զար-հազար անուշ համբույրներ կուղարկեմ քեզի: Իսկ ծնողներուդ՝ բոլոր ողջույն:

Քու՝ Ուրբեն

Այս բոլոր լուսանկարները քաշված են մեր գործիքով:

Շարաք

Սիրելի, շատ սիրելի Յաննի,

Հիմա ինչպե՞ս պետք է ներողություն խնդրել քեզմե ծուլությանս համար: Երեկ խոստացա գրել և ոչինչ գրեցի: Տառապեցա՞ր այս լուրերեն: Շատ: Քի՛չ: Գիտեմ միայն, որ ես չափազանց տառապեցա քեզ սպասցնելուս համար: Սակայն ուրիշ բանի անցնիմք, այնպես չէ՛: Ի՞նչ կուզեի ըսել քեզի: Շատ մը բաներ, համենայն դեպս: Բայց գրեմ ըստ կարգի:— Նախ, ինձի նորեն գրեցիս, թե կուզեն գիս Սիլիվրիի և շրջակայքի պատգամավոր ընել, սակայն այն պայմանով, որ ես նախապես երթամ և այս ու այնտեղ քանի մը բանախոսություն կարդամ: Ես դեռ չեմ պատասխանած, բայց ըստ էության կկարծեմ, թե լավագույնը կտրականապես մերժելն է: Ցայժմ մենք ապրեցանք ըստ բավականին աղքատ, բայց և այնպես ըստ բավականին երջանիկ: Ինչո՞ւ փոխել կյանքը, ինչո՞ւ մեկենիմեկ նետովիլ անծանոթին գիրկը: Ճիշդ է, որ ամսական 1200 ֆրանքը լավ բան է, բայց ես չորս տարի հետո միշտ կընամ պատգամավոր ըլլալ:— Լավ ես ըրած Արսւլանյաններուն գրելով: Կկարծեմ, թե անոնք քիչ մը սրդողած են, որովհետև քու մեկնելեդ աղդին ես իրենց տունը ոտք չեմ դրած: Եվ վաղն ալ, կիրակի, միտք չունիմ երթալու: Կուզեմ հետիոտն պզտիկ շրջագայություն մը կատարել, քանզի պետք է օգուտ քաղել այն իսկապես սքանչելի եղանակեն, որ կընես հոս քու մեկնելեդ ի վեր. կարծես Ֆրանսայի Հարավն ըլլա, Կիսը:— Ես մանավանդ ուրախ եմ, որ դուն պիտի գաս: Ուրեմն ե՞րբ տեղի պիտի ունենա այդ երջանիկ ժամանումը: Միթե՞ կուզես ճամբորդել ծնողներուդ հետ, մի՞թե կուզես բերել մեր կահույքը: Եվ ի՞նչ կահույք: (Այնուամենայնիվ, պարապ-սարապ բաներ պետք չեն): Իսկ ե՞րբ պետք է ես հրաժեշտ տամ իմ սենյակիս: Հա՛րկ է, որ զբաղիմ գողտրիկ բնակարան մը փնտրելով: Ո՞ր ատենի համար: Ահա բազմաթիվ հարցեր, որոնց կընայիր պատասխանել, եթե ժամանակ ունենայիր:— Ջրամացնելու համար քեզ, թե ինչ կարելի է ընել քիչ մը համբերությամբ, քեզի կրկնեմ երկու լուսանկարներ, որոնցմե պզտիկը քաշված է քու փոքրիկ գործիքովդ: Սքանչելի են, չէ՞, կարծես նկար ըլլան: Բայց ավելի լավ լուսանկարներ եմ քաշած, զոր միշտ կպահեմ ծոցագրպանս բարեկամներու ցույց տալու համար: Եվ արդեն իսկ ես քիչիկ մը վարկ կվայլեմ, և բոլորը

կուզեն սենյակս գալ լուսանկարվելու, բայց ես չեմ ուզեր, որովհետև այդ բանը, այնուամենայնիվ, ծախսի դուռ է ինձի համար: Միայն երեկ լուսանկարեցի Քոչարյանը: Մեծապես գոհ մնաց, այնքան գոհ, որ ինքն ալ 50 ֆրանքնոց գործիք մը պիտի գնե... Ահա թե ինչու ես իրավացի էի, երբ կըսեի, թե մեր ապագա Յաննի ամամանոցին (ներողություն, Յաննի տաճարին) մեջ պետք է սև սենյակ մը ունենանք... Հիմակվընե իսկ մեր պաշտելի Փեքոսը լուսանկարել փորձելու հաճույքը կվայելեմ... թեպետ ճիշդ է, որ կարելի չէ լուսանկարել Արևը... Ես առաջուց վստահ եմ, որ քեզի և անոր հետ հիանալի, հիանալի բաներ պիտի գլուխ բերեմ... Համբուրե զայն իմ կողմես: Չես գիտեր, թե ինչքան երջանկացուցիչ զիս, անոր մասին խոսելով ինձի: Նամակդ ստանալես ի վեր գաղտնի բերկրանք մը, աստվածային բան մը կթափանցե տակավ հոգիես ներս, և միայն ու միայն քու մասիդ մտածելով հանդերձ, չեմ դադրիր մտածել երկուբիդ մասին...

Շատ ուրախ եղա նաև, որ հայրիկդ թանկարժեք իրեր է նվիրեր քեզի: Հայրիկդ շատ բարի է և շատ կսիրե քեզ: Ոչինչ այնքան հմայիչ է, ինչքան գեղեցիկ, թանկարժեք իրերով աղվոր ու երիտասարդ կինը (և ոչինչ այնքան տգեղ է, ինչքան շքեղ, թանկարժեք իրերով տգեղ կինը): Դուև հետզհետե ավելի պերճաշուք, ավելի հարուստ, ավելի մեծ տիկին կդառնաս, և ես քեզ ավելի ու ավելի կսիրեմ: Կպաշտեմ քեզ, թանկագին՛ս: Դուև ամենախոտելական պզտիկ կինն ես, զոր ես երբևէ ճանչցած եմ:

Միշտ քու՝ Ռուբեն

Մարտ 1

Օ, իմին աղվոր կինս,

Ամենապաշտելին, ամենահմայիչը, ամենասիրազեղը պզտիկ կիներուն մեջ: Եթե հիմա գիտնայիր, թե ինչքան կսիրեմ քեզ և ինչպե՛ս կտառապիմ քու բացակայութենդ: Եվ եթե գիտնայիր, թե ինչքան սիրատոչոր ու բարի պիտի ըլլամ քու վերադարձիդ: Եվ եթե գիտնայիր նաև, թե որքան կօրհնեմ այս կարճ բաժանումը... Մեծ գեղեցկությունները մեծ լեռներ են. երբ մարդ այդ լեռներուն վրա է, այնքան ալ չի նկատեր անոնց մեծությունը. պետք է որոշ տարածություն մը, կարենալ դատելու համար անոնց վսեմ գեղեցկության մասին: Իսկ ես ճամբորդի մը նման եմ, որ հեռուեն դատելե ետքը վեհանիստ գագաթի մը բարձրության մասին, պիտի ուզեր դարձյալ ըլլալ անոր վրա և այս անգամ արդեն ավելի լիաթոք ու ավելի խորունկ շնչել այդ կատարի զովասուն օդը... Դուև զիս կհասկնաս, այնպես չէ՞, քաղցրի՛կ: Եվ նաև կներես ինձի, եթե

երբեմն քիչ մը պաղ (քիչ մը ծեր, թերևս), քիչ մը մտախոհ եմ երևցած քեզի: Պատճառն այն է, որ սառնորեն դատող այս ճակտին տակ բոցեր կան, կրակներ, գաղտնի կայծեր, որոնք պիտի ուզեին վայրկենապես հրո ճարակ դարձնել իմ ամբողջ եւթյունս... Եթե գիտնայիր, թե ինչքան կսիրեմ քեզ իմ մեջս...

Մարտ 2

Թանկագին Յաննի,

Այն օրը, առտուն, Ազնիվը եկավ հարցնելու, թե դուն հիվանդ չե՞ս արդյոք: Ես պատասխանեցի, թե դուն 4-5 շաբաթով էր ֆուրտ ես մեկնած: Քեզի ջերմագին կբարևե, խեղճ աղջիկ: Բացիկ մը գրե իրեն և հատ մըն ալ Արսլանյաններուն: Ես անոնց չեմ այցելած տակավին: Ներե, որ այն օրը ոչինչ ըսի վառյակիդ մասին: Խնդիրն այն է, որ դեռ չէի կերած զայն (միշտ իմ գեշ տրամադրությանս պատճառով, որ երեք օր տևեց... ինչպես Լոզանի հյուսիսային հողմերը...): Երեկ, շաբաթ, սքանչելի արև մը կար հոս: Տյովլեթյանին հետ պզտիկ նավակ մը վարձեցինք և կեսօրին ճաշակեցինք վառյակը (1 ֆր. 35 տնտեսելու համար): Վառյակն իսկապես հիանալի էր, սրտի մը պես: Երբեք այդքան համեղ բան չէի կերած... Վերադարձիդ, երբ մենք մեր տունն ու տեղը ունենանք, դուն ինձի հաճախակի այդպիսի պատվական վառյակներ պիտի կերցնես, այնպես չէ՞... Բայց դարձյալ ու միշտ կըսեմ, թե լավագույն վառյակը զոր ես պիտի ուզեի անույշ ընել ամբողջ կյանքիս մեջ (և երբեք չկշտանալ անկե), դուն պիտի ըլլաս, իմ հրեշտակ Յաննիս: Սուսցա՛ր երեք մեծ լուսանկարով և ներփակ նամակով ծրարը: Երբ Լոզան գաս, ես քեզի համար սքանչելի լուսանկարներ կպատրաստեմ, որովհետև այնքան լավ սորվեցա նկարել:

Քու՛ Ռուբեն

Յաննի, գանձս,

Կգրեմ քեզի Օլտ-Ինտիայեն, ուր Տյովլեթյանի հետ եմ: Օրն ի բուն վազվզեցի պզտիկ, հարմարավետ բնակարան մը գտնելու համար: Նման բան չկա: Այո՛, կան բնակարաններ, բայց կա՛մ բանվորական տուներու մեջ, կա՛մ չափազանց հեռու, կա՛մ չափազանց սուղ: Բայց վերջապես գեղեցիկ բան մը գտա, Սըքրեթիանի ծառուղի (բարձրաշխարհի՛կ), թիվ 1, երրորդ հարկ: Անկյունի նոր տունը, ուր կապրեր Ահարոնյանը: Շատ մաքուր տուն մըն է, պատվարժան բնակիչներով, Սուրբ Ֆրանսուայի, հիվանդանոցի և Շառլիի քովիկը. միևնույն

243

ժամանակ՝ հանրակառք: Երկու մեծ պատշգամ, հիասքանչ տեսարան, ամբողջ օրը՝ արև: Միայն ահա թե ի՛նչ: Ամբողջ բնակարանն ու սանդուղքի վրա բացվող դռներով երկու բոլորովին առանձին սենյակները վարձողը ծեր մայր մըն է իր զավկին հետ: Ըստ անոնց, այս բոլորը շատ ու շատ է իրենց համար, ուստի իրենք պիտի ապրին դուրսի երկու առանձին սենյակներուն մեջ, իսկ մենք, միևնաչ, պիտի զբաղեցնենք **ամբողջ բնակարանը** (այսինքն՝ անկյունը, ընդարձակ պատշգամով շատ մեծ սրահը, լայն պատշգամով նույնպես մեծ ննջասենյակը, կահավորված, լուսավոր ու մեծ խոհանոցը, բոլոր հարմարութիւններով լուգարանը, աշխատասենյակը): Ելեքտրականություն և գազ: Մեկ խոսքով՝ **ամբողջ բնակարանը**: Եվ ամսական 45 ֆրանք, այսինքն՝ աժանեն ալ աժան: **Իրենք պիտի ապրին բնակարանեն դուրս** գտնվող երկու սենյակներուն մեջ, որոնք պզտիկ, առանձին բնակարան մը կկազմեն: Միայն մայրը իրավունք պիտի ունենա գալու մեր խոհանոցը (քանզի իրենք խոհանոց չունին): Բայց մենք բոլորովին **մենք մեզի կըլլանք**: Միայն թե պետք է շուտ պատասխան տալ՝ այդ թե ոչ: Ես ըսի, թե ինքս համաձայն եմ, բայց պետք է հարցնեմ կնոջս կարծիքը: Հիմա պատասխանելու կարգը քուկդ է: Հոն կմտնենք **ապրիլ 15-ին**:— Ամառայանը կճանչնա զիրենք, ապրեր է անոնց քով, և զիս կվստահեցնե, թե շենք շնորհքով մարդիկ են:

Ուրեմն՝ պատրաստե մեր կահույքը: **Բայց չեմ ուզեր, որ նոր դաշնամուր գնես**: Լոզան բեր հին դաշնամուրը... այստեղ ավելի սուղ կարելի է ծախել զայն, քան Էրֆուրտ, և այդ դրամով կարելի է սքանչելի դաշնամուր մը վարձել:

Պետք է վերջացնեմ նամակս: Ժամը վեցն է, և արդեն իսկ կսկսին ավելի սրահը: Հազար համբույր: Կսպասեմ պատասխանիդ:

Քու Ռուբենդ, ցկյանս

Շաբաթ, մարտ 23, 1912

Միրելի կատվիկ,

Ստացա երեկվա նամակդ և սաստիկ վշտացա իմանալով, որ կաշխատիս և շատ կջղայնանաս: Միշտ հիշե, որ այս շրջանին քու մեջդ մեծ պատասխանատվություն մը կկրես երրորդ անձի՝ հրեշտակի մը կյանքին ու երջանկության համար և որ եթե դուն այս քանի մը ամիսը ջղային ըլլաս ու դժբաղդ, ան ալ ջղային կըլլա ու դժբաղդ իր **ամբողջ կյանքին մեջ**... Լավ մտածե այս մասին և ամբողջ սրտով ժպտե կյանքին, երիտասարդության, գեղեցկության, արևին, եկող զարնան և Փեբոսին, որ նույնպես կուգա... Եվ եթե նույնիսկ չըլլար այդ երրորդ պարոնը, ես ինքս կսրդողեի, եթե վերադառնայիր վտիտ ու գունատ: Ես

քեզ էրֆուրտ դրկեցի՝ ծնողներուդ քով, որպեսզի երջանիկ ըլլաս, ապրիս անվրդով, հանգստացնես ջիղերդ (որոնք Աստված գիտե, թե ինչքա՛ն էին հոգնած): Եվ չեմ ուզեր, որ շատ ավելի ջղային վերադառնաս ինձի:

Երեկ հայտարարութիւն մը տվի «Ազդաթերթին» մեջ, թե հիվանդանոցի մոտակայքը (Շառլի, Սըքրեթիան ծառուղի, Ռոզիագ, Լա Սալագ, Մոն-Շարման կամ այլուր) խոհանոցով, հարմարութիւններով, տեսարանով երկու սենյակնոց բնակարան մը կփնտրեմ: Եվ ես ալ անձամբ բավական վազվզեցի գեղեցիկ մը գտնելու համար: Որովհետև հոսկե չափազանց դժվար է հեռու հիվանդանոց բարձրանալը, կեսօրին իջնելն ու երբեմն հետմիջօրեին նորեն վեր ելլելը: Մտադիր եմ բավական երկար մնալու հիվանդանոցին մեջ. երբ բոլորովին ավարտեմ հիմակվա աշխատանքս մաշկային հիվանդութիւններու և թոքախտի բուժման մեջ մասնագիտանալու ուղղությամբ, կմտնեմ մանկական և համաբուժական բաժինը: Եվ այսպես, եթե հիվանդանոցին կողմերը բնակարան մը ճարեմ, ամեն հետմիջօրե կրնամ երթալ ու աշխատիլ տոք. Սենյի առողջատան մեջ: Կարելիս պիտի ընեմ, որպեսզի մինչև քու վերադարձդ պզտիկ բնակարան մը գտնեմ, որովհետև զզվեր եմ անպետք կերակուրներեն (յոթը տարիէ ի վեր կշտացեր եմ ատոնցմե, և անհուն կարոտն ունիմ քու եփեղիք խորտիկները ուտելու, և ի՛նչ համեղ էր այն խեղճ վառյակը...): Եվ հետո պետք չէ մոռնալ. որոշ ժամանակ ետքը ոչ ոք պիտի ուզէ մեզ իր սենյակին մեջ տեսնել, և դուն գիտես, թե որու պատճառով... Ուրեմն, երբ բնակարան գտնեմ, պետք է ուղարկել կահկարասին, և ատոր համար պետք է, որ իրերը բոլորովին պատրաստ ըլլան:

Իսկ դաշնամուրը ծախեցի՛ն արդեն:

Աղվճ՛րս, օր ըստ օրե ավելի կսպասեմ քեզ և միշտ ավելի սաստիկ կսիրեմ: Հիմա կզգամ, որ բոլորովին անկարող կըլլայի քեզմե զատ ուրիշ մեկը սիրելու, ոչ իսկ մեկ վայրկյան: Հիմա կգնահատեմ քեզ ամբողջ արժեքովդ... Հազվագոր՛ւտ իր (բայց ոչ խոր Հնության, այնուամենայնիվ...): Եկո՛ւր, դուն իմն ես, սիրենք զիրար, փարվինք իրարու ընդմիջտ, անբաժա՛ն...

Միայն քու,
հավիտյանս քու՝
Ռուբեն

Փեքոսը քեզ պիտի ողջունէ Մայիսին: Ծաղիկներու և Արևի ամսույն...

Օրիորդ Յաննի Ապպել
 16 Շթայկերշթրասսե 16.
 Էրֆուրտ
 (Գերմանիա)

Յաննի՛ս,

Հապա դաշնամո՛րը: Պետք չէ որ անտեսես զայն: Ան ավելի անհրաժեշտ է, քան կարի դասը: Երեկ ստացա սիրով լեցուն աղվոր նամակդ: Կհարցնես, թե չե՞մ փափաքիր արդյոք քեզ անգամ մը տեսնել... Իրավ, խե՛նթ ես դուն... Այսպե՛ս կուզես վիրավորել զիս... Չես գիտեր ուրեմն, որ անհավատալի սիրով մը կսիրեմ քեզ...

Այս անգամ դեռ կներեմ քեզի, բայց ա՛լ պետք չէ կրկնես այս բանը: Քու հավատարիմ Ռուբինսդ:

Դեկտ. 16, 1908
 առավոտ

Սիրելի՛ս, ներփակ նամակը գրեթե քունի մեջ գրվեցավ: Այս առտու դեռ բառ չեմ ստացած քեզմե: Լո՛րք է ուրեմն: Է, այն ատեն... Քեզի գրելիք հետաքրքրական լուրեր չունիմ: Բավական նողկալի է եղանակը հոս, Լոզան: Մինչև ծունկերնիս ցեխի մեջ ենք: Երևակայե, ցարդ երբեք աչքիս չի նկան Սփիեն նշանավոր գիշերօթիկնոցն ու անոր տնօրենուհին: Կենդանի՞ ես, թե մեռած: Իսկ դո՛ւն: Կենդանի՞ ես մժղո՛ւկ: Գրե ինձի ճամբորդության վերջին պատրաստություններու մասին: Ի՛նչ կարգադրություններ: Հապա դեմքիդ այրվա՛ծը: Հետք չձգե՛ց բնավ: Քաջամո՛ղջ ես: Կուզե՛ս շուտով զիս տեսնել, թե ոչ: Անկեղծորեն: Քու հավատարիմ Ռուբինսդ:

Կբարևեմ սիրելի հայրիկին ու մայրիկին:

Հազար համբույր քեզի:

25 /XI/ 08

Սիրելի Յաննի,

Կուղարկեմ քեզի այս բացիկը ի նշան երախտագիտության այն բոլոր լավ գործերուն համար, զոր իրականացուցիր իմ տեղս: Համաձայն եմ ծրագիրներուդ: Արդարև, շատ երջանիկ եմ, որ ունիմ նշանած մը ավելի լուրջ, շրջահայաց

ու խելամիտ, քան իր նշանածը: Կզրեմ քեզ հավերժական բարեկամությամբ և կղրկեմ ամենատաք համբույրներս:

Ռուբինս

Օրիորդ Յաննի Ապպել
16 Շթայկերշթր. 16
Էրֆուրտ (Գերմանիա)

Սիրելի Յաննի,

Կեցցե՛ս: Երբեք չէի կարծեր, որ այսքան չար ես: Կուզե՛ս լռել տակավին: Ինչո՞ւ այս երկարաձգվող լռությունը: Կձանձրանամ, ինչպես կառքին ետևի այս խեղճ մարդուկը: Օրինակ, աղվոր բանը այսպես կըլլա: Գրելիք չունիմ քեզի, բացի անկե, որ եթե լռությունդ շարունակվի, վերջ ի վերջո, կբարկանամ: Կուզե՛ս: Մժղո՛ւկ: Ի՛նչ է եղած քեզի: Այսպիսի բան չեմ սիրեր: Ո՛չ:

Քու տխուր Ռուբինսդ

Օրիորդ Յաննի Ապպել
16 Շթայկերշթր.
Էրֆուրտ
Սթրասպուրկ
7 /1/ 09

Յաննի՛,

Շնորհավորելով Նոր տարիդ, քեզի կմաղթեմ, որ ըլլաս այնքան ուրախ, ինչքան այս սևամորթ լաճը:

Քու Ռուբինսդ

Օրիորդ Յաննի Ապպել
16 Շթայկերշթրասսե
Էրֆուրտ
(Գերմանիա)

10 /11/ 09

Սիրելի՛ս: Դիտե այս նկարը: Այս տունը մերը պիտի ըլլա: Մեզի պիտի գան այս խեղճերը: Մենք անոնց առաջություն պիտի պարգևենք ու կյանք: Ի՛նչ

կյանք... Եվ դուն տառապողներուն համար գթության հրեշտակ մը պիտի ըլլաս... Հրեշտակ: Մենք մեծագույն երջանկությունը պիտի ունենանք և մեր երջանկությունը պիտի բաժնենք դժբաղդներուն: Կարելի՞ է երևակայել իրական կյանք մը, որ ավելի իտեալական ըլլա, քան մերը: Կարելի՞ է հավատալ սիրո մը, ավելի հզոր, քան մերը: Եվ դուն՝ հոգիիդ ծաղկող գեղեցկության մեջ այնքան մաքուր, այնքան բարձր, այնքան հրեշտակային...

Որքան երջանիկ եմ ես...

Ռուբինս

Օրիորդ Յաննի Ապպել

16 Շթայկերշթր. 16

Էրֆուրտ

(Գերմանիա)

15 /11/ 09

Սիրելի անձկալիս,

Մխալեր ես հաշիվներուդ մեջ: Ես ծնած եմ 1886-ի փետրվար 28-ին: Ուրեմն 1909-ի փետրվար 28-ին պիտի մտնեմ 24-րդ տարվանս մեջ: Քիչ մը ավելի ուշադիր հաշվե: (Ուժե՞ր ես թվաբանության մեջ): Շնորհակալ եմ շատ գեղեցիկ բացիկներուդ համար: Այս անգամ քեզի կուղարկեմ ազնվագարմ եգիպտոհու մը (՝): Գեղադե՞մ է: Այդ ժողովուրդի կյանքին մեջ ավանակը իր օգտավետությամբ կփոխարինե ինքնաշարժ-թաքսին: Իսկ դուն լուսանկարիչին զացի՞ր արդեն: Լավ զգա երիտասարդությանդ բերկրանքը:

Միսս Յաննի Ապպել ¹

16 Շթայկերշթր. 16

Էրֆուրտ

(Գերմանիա)

15 /11/ 09

Սիրելի darling! ²,

Ցավոք սրտի չեմ կրնար օգտակար ըլլալ քեզի դիմակահանդեսներուն կա-

¹ Բնագրին մեջ՝ անգլերեն:

² Թանկագինս (անգլ.):

պակցությամբ: Բոլոր արևելյան զգեստները Պեռն են երեկույթի մը համար, ո՛չ շրջազգեստ կա, ո՛չ իսկ մեկ հատիկ թաշկինակ: Շատ պիտի ուզեի արևելյան հագուստ մը գնել քեզի, բայց հոս չկա: Սակայն և այնպես պետք չէ հագնիս քու ֆիկարոն դիմակահանդեսներու համար: Չեմ գիտեր՝ ի՛նչ ընեմ: Եկուր վանական սև-սպիտակ հագուստ մը ընտրե կամ Յոթը-վիրաց պատկեր՝ վըշտահար Մարիամ Աստվածածինի պարեգուտը: Այդ ձևով մոզիչ արտահայտություն մը կառնե հրեշտակային ու մեղամաղձոտ դեմքը:

Քու Ռուբինոյ

Օրիորդ

Յաննի Ապպել

16. Շթայկերշթր.

Էրֆուրտ (Գերմանիա)

18 /II/ 09 Լոզան

Սիրելի, սիրելի՛ Յաննիս,

Նայե այս աղքատ ձկնորսին. ան կքնանա, կերազե, ամեն կոհակին մեջ իր սիրեցյալին հայտնվիլը կտեսնե... Երջանիկ է այն մարդը, որ կսիրե... Այս ձկնորսը ե՛ս եմ. քեզ կտեսնեմ ամեն բանի մեջ: Կտեսնեմ, թե ինչպես կժպտիս, կձայնես, կուլաս, կվազես ինձի ընդառաջ: «Դո՛ւն ես, Ռուբի՛նս...»: Այո՛, ես եմ՝ երջանիկս, որ կսիրե քեզ... Օրինյա՛լ ըլլաս, խեղճուկ ձկնորս: Դուն կմոռնաս թշվառությունդ, քաղցդ, դժբաղդությունդ, երազելով բացակա սիրեցյալը... Օրինյա՛լ ըլլանք մենք, որ կսիրենք...

Քու Ռուբինոյ

Օրիորդ Յաննի Ապպել

16. Շթայկերշթր.

Էրֆուրտ

(Գերմանիա)

22 /III/ 09

Սիրելի՛ս: Այսօր առի Էրֆուրտ ուղարկված ցպահանջ նամակներն ու նաև թերթերու ստվար փաթեթ մը: Ուստի շնորհակալ եմ հասցեի փոփոխության

համար: Ստացած ըլլալով թու բացիկն ու նամակը, արդեն իսկ պատասխանեցի անոնց: Հուամ, ձեռքդ հասավ նամակս: Ընդունե ամենատաքուկ համբույրներս նուրբ շրթներուդ, կոպերուդ, միացման գիծին և այնքա՛ն սիրունիկ կզակիդ վրա: Օ՛ր իմ սքանչելիս...

Քու Ռուբինսդ:

Օրիորդ Յաննի Ապպել

16. Շթայկերշթրասսե

Էրֆուրտ

(Գերմանիա)

Երեքշաբթի առավոտ

Սիրելի Յաննի՛: Շնորհակալ եմ «Երկրպագություն» վեբմ բացիկին և մյուսին՝ գլխարկաձևին համար: Ինչո՞ւ կըսես, թե «շատ վատառողջ» կզգաս թեզ: Կրնա՛մ գիտնալ: Ուշադրություն ըրե առողջությանդ. ճամբորդություն, ցուրտ, համերգ, երեկույթ, այս ամենը քիչ մը շատ ու շատ է թու թույլ առողջությանդ համար, չե՛ս կարծեր: Կիսնդրեմ, գնա լուսանկարիչին: Այնքա՛ն անհամբեր եմ ունենալու քանի մը նոր լուսանկարներդ, նաև մեծցվածը:

Եվ անգամ մը նայե «Առաջին նախաճաշը» կոչվող այս բացիկին: Ո՛վ կրնար կոահել, որ մեր առաջին նախաճաշը Պեռնի մեջ պիտի կայանար... Քա՛ղցր հիշատակներ:

Հազար բարև սիրելի ծնողքիդ:

Քու Ռուբինսդ:

Օրիորդ Յաննի Ապպել

16. Շթայկերշթր.

Էրֆուրտ

(Գերմանիա)

Սիրելի՛ս, ահա թեզի իմ լավագույն բարեկամներես մեկը... Անգլիո թագավորը... Երեկ թերթի մը մեջ կարդացի, թե Էրֆուրտի մեջ քառասուն հոգի ժանտատենդով հիվանդ են կաթի պատճառով: Եվ դուն ինծի գրած էիր, թե հիվանդ պառկած ես: Ի՛նչ ունիս, սիրելի՛ս: Հուսով եմ, որ պարզապես երեկույ-

թի հետևանք է անհանգստությունը: Երկար գրե ինծի երեկույթի մասին: Ուրախ եր:

Սիրելի՛ս, ինծի կթվի, թե մոռցած ես հասցեի փոփոխությունը: Կիսնդրեմ, եթե առողջ ես, շուտ նամակատուն գնա և փոխել տուր հասցես (Ռյոմին, Լոզան, Ջվիցերիա):

Քու Ռուբինսոյ:

Օրիորդ Յաննի Ապպել
16. Շթայկերշթրասսե 16.
Էրֆուրտ
(Գերմանիա)

Երկուշաբթի

Սիրելի՛ս: Երեկ և առջի օր ոչինչ ստացա քեզմե, իսկ այսօր՝ բացիկ մը և նամակ մը: Շնորհակալություն: Երախտապարտ եմ նաև Ջատիկի ճագարին համար, զոր չես կրցած դրկել: Ես ալ մտածեցի ուղարկել քեզի ճագար մը և շոքոլայով լեցուն հավկիթ մը, բայց ետ կեցա այս մտքեն, քանզի խորհեցա, թե ինքնատիպ չեն,— բոլորն ալ նույնը կուղարկեն: Այն ատեն ուզեցի դրկել բան մը, որ կմնա և կարելի է պահել զայն: Այդ բանը կստանաս քանի մը օրեն:

Քու Ռուբինսոյ:

Օրիորդ Յաննի Ապպել
16. Շթայկերշթրասսե
Էրֆուրտ
(Գերմանիա)

Սիրելի՛ս, շնորհակալ եմ սքանչելի նամակիդ համար, այնքան անուշ, այնքան սիրագորով: Մի՛ նախանձիր այս գլխարկավոր ուսանողուհիներուն: Իրականությունը այս չէ: Ճիշդ է, որ Լոզանի մեջ կա գլխարկով, ժապավենով և դրոշով ուսանողուհիներու միություն մը, բայց անոնք ստուգապես չափազանց լուրջ են, խոհական... Կոստանդնուպոլսո դավադրության լուրը թուրքերուն հերյուրանքն է միայն, ցույց տալու համար եվրոպացիներուն, որ հայերս նողկալի հեղափոխականներ ենք... Մենք երբեք դավադրություն չենք նյու-

թած... Հրանդը ստացավ թերթը. շնորհակալություն: Սիրելի՛ս, ահա գեշ եղանակը նորեն սկսավ: Սոսկալի է: Ձանձրույթ կմեռնիմ: Շատ կսիրեմ քեզ: Հազար համբույր:

Քու Ռուբինսոյ:

Օրիորդ Յաննի Ապպել
16 Շթայկերշթրասսե 16
էրֆուրտ
(Գերմանիա)

Սիրելի՛ս: Կանոնավորաբար կստանամ բացիկներդ: Ի՛նչ խոսք, միշտ մեծ հաճույքով: Բայց դուն ինձի խոստացար «երկարորեն» գրել պարի մասին (այդ ո՛վ է «աղվեսը», որուն խոսքը կընես), սակայն բացարձակապես բան չգրեցիր: Եվ, արդարև, շատ ափսոս: Ես հետաքրքրասեր չեմ, բայց նշանածներուն միջև գաղտնիք պետք չէ ըլլա, այնպես չէ՛: Եվ ահա նորեն դուն կուզես ինձի խոսիլ հայ ստրուկներու մասին: Ես քեզի քանիցս ըսած եմ արդեն, որ այդպիսիք չկան: Եվրոպական երևակայության արգասիք են անոնք: Երբ ես քեզի կըսեմ «չկան», դուն պետք է ինձի՛ հավատաս և ոչ թե եվրոպական ստահող ցնորքներուն:

Քու Ռուբինսոյ

Օրիորդ Յաննի Ապպել
16. Շթայկերշթր. 16
էրֆուրտ
(Գերմանիա)

Սիրելի պզտիկ նշանա՛ծս: Կգարմանամ լռությանդ վրա: Կերևի, չափեն ավելի հոգնած ես պարելեն: Նախանցյալ օր ամերիկյան ազնվականությունը մեծ երեկոյթ մը սարքած էր Պո-Ռիվաժ-Բալասի մեջ տոնելու համար Ամերիկայի անկախության տարեդարձը: Ես ալ հրավիրված էի, բայց մեծ կողով մը ծաղիկ դրկեցի միայն ու չգացի: Քանզի նույն օրը Կոստանդնուպոլսո մեջ մեռած էր իմ ամենահռչակավոր բարեկամներես շատ հայտնի հայ փիլիսոփա մը, 45 տարեկան: Ես շատ էի տխուր այդ պատճառով:

Поэте հայերեն՝ բանաստեղծ:

Հազար անուշ համբույր կուղարկեմ քեզի: Բարևներ հայրիկին, մայրիկին,
Միննային:

Ուրբինս

Օրիորդ Յաննի Ապպել

16 Շթայկերշթրասսե

Էրֆուրտ

(Գերմանիա)

17 / / 09 կիրակի

Լոզան

Իմ ամենագորս,

Երեկվան բացիկիս ետևեն ահա հատ մըն ալ այսօր կուղարկեմ քեզի: Գերի
ինկած «Ֆետաքարանե»¹ խմբակցությունը թուրքական է և ոչ թե հայկական:
Ես արդեն կանոնավոր կերպով կհետևիմ հիվանդանոցի դասընթացներուն:
Այսօր հրաշալի է եղանակը. կարծես գարուն է արդեն: Ալայյան լեռները այն-
քան սպիտակ են, հեռաստանը՝ զարմանալիորեն խորունկ, լիճը՝ չքնաղ:
Մտածե քիչ մը մեր զմայլելի Ուշիի մասին: Այսօր ավելի քան երբեք սիրահար
եմ քեզի... Սիրելի՛ս: Այս վայելչագեղ բարձրաշխարհիկ տիկնոջ շրթներով
խոշոր համբույր մը կուղարկեմ քեզի:

Ուրբինս

Անուշ օրիորդ,²

Յաննի Ապպել

16 Շթայկերշթր. 16

Էրֆուրտ

(Գերմանիա)

Ապրիլ 2, 1909

Սիրուն³ Յաննի,

Քեզի կուղարկեմ աշխարհի գեղեցկագույն կինը: Բայց դուն ինձի կըսես, թե

¹ «Անձնագոհություն» (թուրք.):

² Բնագրին մեջ՝ հայերեն:

³ Բնագրին մեջ՝ հայերեն:

կա ավելի գեղեցիկը... Պելլան, իսկ ես կըսեմ քեզի որ դուն կսխալիս, կա շատ ավելի գեղեցիկը... Յաննին: Բարկացա՛ր ասոր համար: Կհուսամ, թե ոչ: Ըսեմ, թե դուն երբեք չպիտի կրնաս արգիլել զիս պնդելու և հավատալու, որ իմ նշանածս ավելի գեղեցիկ է, քան այս նշանավոր օրիորդ ձոյ Քլոսը... Ուրեմն՝ շնորհակալություն քեզի:

Ես հպարտ եմ քեզմով: Շնորհակալություն և հազար քաղցրագույն համբույր:

Ռուֆինս

Օրիորդ¹ Յաննի Ապպել
16. Շթայկերշթր. 16
Էրֆուրտ (Գերմանիա)

Ապրիլ 8, 1909

Սիրելի՛ս,

Վաղը Ավագ ուրբաթ է, եթե չեմ սխալիր: Անցյալ տարի, ճիշտ այս ժամուն, Նիսեն Լոզան հասա ու մեկնեցա Էրֆուրտ (կյանքիս մեջ առաջին անգամ): Արդեն գիտես ամբողջ մնացյալը... Երբ ստանաս այս բացիկը, քիչ մը մտածե 1908-ի Ավագ ուրբաթի գիշերվան մասին:

Տարեդարձի հազար համբույր: Քու

Ռուֆինսդ:

9 (ապրիլ), 1909

Սիրելի Յաննի,

Մետաքսե արևելյան գլխանոց մը կուղարկեմ մեր սիրելի մայրիկին համար: Նվերս մեծ արժեք մը չունի, բայց կկարծեմ, թե հաճույք պիտի պատճառե իրեն որպես նշան որդիական սիրույս: Ապրիլ 17-ը մեր նշանտուփի տարեդարձի օրն է: Կղրկեմ քեզի նվեր մը, զոր վստահորեն խորունկ գոհունակությամբ պիտի ընդունիս: Կղրկեմ նաև շատ ավելի թանկարժեք բան մը. կռահե՛ ի՞նչ...

¹ Բնագրին մեջ՝ հայերեն:

Պինդ, պինդ, պինդ համբույր մը Ջատկական...

Հազար բարեմաղթություններ մայրիկին ու հայրիկին:

Քու Ռուբինոյ

Օրիորդ Յաննի Ապպել
16. Շթայկերշթրասսե 16
Էրֆուրտ
(Գերմանիա)

Մայիս 27, 1909

Սիրելի Յաննի՛: Քեզի Պեթհովեն կուղարկեմ, զոր դուն շատ կսիրես, իսկ ես կպաշտեմ: Հրանդը կինդրե, որ իրեն դրկես «Wochenblatt» շաբաթաթերթի մեկ թիվը: Հուսամ՝ հանդարտած ես: Եղիր զվարթ, ինչպես մայիսյան ծաղիկները, ինչպես թռչնիկները: Տյովլեթյանը Լիեծեն բարևներ կդրկես քեզի: Ազնավոր մայրիկը Աղեքսանդրիայեն կհամբուրե քեզ, Լենան պաշիկներ կձամբե: Լևոնը ձեռքդ կսեղմե, իսկ Ռուբինսը քեզ իր կուրծքին կսեղմե ջերմորեն և իր տաք շրթունքներով տաք արցունքների կսրբե:

Ի՛նչ կուզես դեռ...

Քու Ռուբենոյ:

Օրիորդ¹ Յաննի Ապպել
16. Շթայկերշթրասսե
Էրֆուրտ
(Գերմանիա)

Հունիս 30, 1909

Սիրելի Յաննի՛: Այսօր ստացա բացիկդ: Իսկապես կմեղքնամ քեզի: Սիրելի՛ս, եթե հուլիս 17-ի առթիվ ինձի նվեր մը տալու համար պետք է ամեն ինչե

¹ Բնագրին մեջ՝ հայերեն:

զրկես քեզ և ահագին խնայողություն ընես, պիտի ըսեմ քեզի, որ քու ձեռքեր ստացված ամենաչնչին բանն իսկ մեծ նվեր է աչքիս, ուստի իմ պատճառովս պետք է չէ ավելորդ զոհողություններու դիմես: Հասկցա՛ր, ծուլլ մժղո՛ւկ: Վաղը քեզմե երկար նամակի մը պիտի սպասեմ: Լավ կաշխատի՛ս դաշնամուրդ կատարելագործելու ուղղությամբ: Որպես վերջաբան իազար քաղցր համբույր կուտամ քեզի: Քու Ռուբինսդ:

Օրիորդ Յաննի Ապպել
16. Շթայկերշթրասսե 16
Էրֆուրտ

Հուլիս 9, 1909

Կուղարկեմ քեզի, իմ գերպաշտելի նշանա՛ծս, համբույր մը նո՛ւյնքան բարի, նո՛ւյնքան մեծղի, ինչքան հին-հին դարերու այս մեծղի ավատապետը:

Բավական մեծղի՛.է:

Ահա, տե՛ս:

Ռուբինս

Օրիորդ Յաննի Ապպել
16. Շթայկերշթրասսե
Էրֆուրտ
(Գերմանիա)

Հոկտ. 23, 1909

Այս իրիկուն կմեկնիմ շոգեկառքով և երեք օրեն կհասնիմ Լոզան, ուրկե կգրեմ քեզի: Եղանակը լավ չէ, ահա թե ինչու նավով ճամբա չեյա:

Քու Ռուբենդ

Օրիորդ Յաննի Ապպել
16. Շթայկերշթրասսե
Էրֆուրտ (Գերմանիա)

Միրելի Յաննի՛: Ուրախությամբ ստացա քու երկար նամակն ու բացիկը: Հաճույքով թույլ կուտամ, որ դերեր խաղաս մասնավոր ընկերություններու

և ընտանեկան շրջանակներուն մեջ: Մեծագույն հաջողություններ կմաղթեմ քեզի: Շատ ավելի կշնորհավորեմ քեզ դժբաղդ մանուկներուն օգնություն ցույց տված ըլլալուդ համար: Այդ աշխատանքը օգտակար է թե՛ անոնց, թե՛ քեզի (քանզի բնավորությունդ կկոփե):

Հազար համբույր քու հավերժական Ռուբենեդ:

Նոյեմ. 5, 1909

Այս առավոտ նամակս գրած էի արդեն, երբ երկրորդ նամակ մը առի քեզմե: Պատասխանս կմնա նույնը. արհեստը գեշ է, ինքդ որոշում տուր: Ըսած ես ինձի, թե իսկական սիրող մը վտանգի պարագային պետք է պաշտպան կանգնի: Շատ աղեկ: Բայց մարդ չի կրնար նախօրոք պաշտպան կանգնիլ. այն, որ ես ըրի:

Կսիրեմ քեզ:

Նոյեմ. 10, 1909: Ռուբեն:

Օրիորդ Յաննի Ապպել
16 Շթայկերշթրասսե
Էրֆուրտ
(Գերմանիա)

Նոյեմ. 18, 1909

Սիրելի Յաննի,

Մեծ ցավեն հետո՝ մեծ հանգիստ: Ահա երեք-չորս օր է, որ տող չեմ ստացած քեզմե: Ճիշդ է, որ ես ալ բառ չգրեցի... Սիրելի՛ս, Կոստանդնուպոլսեն մեկնելու պահուն բոլորովին մոռցած էի լոխումներուդ առաքումը, բայց այստեղեն գրեցի, որ անմիջապես ուղարկեն քեզի, և հուսով եմ, որ արդեն իսկ ստացած ես զանոնք: Այսօր սկսավ ձյունել: Ձյունը երեկոյթներու բացումն է: Դեռ չեն սկսած: Հազար համբույր քու Ռուբենեդ:

Բարևներ հայրիկին ու մայրիկին:

Օրիորդ Յաննի Ապպել
16. Շթայկերշթրասսե 16
Էրֆուրտ
(Գերմանիա)

Դեկտ. 20, 1909, երկուշաբթի

Սիրելի Յաննի՛: Ի՛նչ է պատահած քեզի: Հիվանդ ես դեռ: Ի՛նչո՞ւ չես գրեր ինձի: Շատ մտատանջ եմ: Շտապե շուտ կազդուրվիլ: Հավաքե ուժերդ և ծպտե

գալստյան ընդառաջ անոր, որ կսիրե քեզ և անհամբեր է հասնելու միայն քեզի ամբողջ հավերժության համար: Ուրեմն... Դեռ հիվանդ...

Քու Ռուբենդ

Օրիորդ Յաննի Ապպել

16. Շթայկերշթր. 16

Էրֆուրտ

(Գերմանիա)

Սիրելի՛ Յաննի: Այս քիչ մը արտասովոր բացիկը կգրեմ քեզի, որպեսզի գոնե պահ մը ժպիտ խաղա երեսիդ: Քանզի վերջին օրերս շատ տխուր դեմք կառնես, կարծեմ: Համաձայն չե՞ս: Մի՞թե պատմելիք ուրախ բան չկա Էրֆուրտի մեջ: Այստեղ՝ ինչքա՞ն ուզես: Նախ, եթե կփափաքիս, կսկսիմ Ափիես գիշերօթիկնոցեն և իր 13 բավական գեղեցիկ երիտասարդ աղջիկներեն, հետո կանցնիմ Օլտ-Ինտիային իր five o'clock-ի համերգով և անկե ետքը՝ Սուրբ Ֆրանսուայի հրապարակին իր հազար ու մեկ թավիշե գլխարկներով ու հողմածածան ճերմակ շրջագեստներով (մենք այսպես կկոչենք գիշերօթիկնոցներու օրիորդները): Որպես հազվագյուտ երևույթ քեզի ներկայացնեմ Պո-Ռիվաժ-Բալասեն ամերիկացի ծեր միլիոնատեր մը, որ համալսարանի ուսանող է (գրականության բաժին): Ծերունին ութսուննոց է արդեն ուսերուն վրա ինկող երկար ու ձյունասպիտակ մազերով: Սուրբ Ֆրանսուայի հրապարակին վրա բոլորը կնային իրեն այնպես, ինչպես ուղտի մը... Արտառոց է նաև գերմանացի ուսանողներուն ոչ այնքան ակնահաճո գլխարկը, որ նման է հողմացույցի: Բոլորը կխնդան վրանին, բայց անոնք չափազանց լուրջ են... Այսօր կեսօրեն ետքը պիտի երթամ լսելու գերմանացի շատ երիտասարդ սպայի մը երաժըշտական մեկ գործը: Սպան ատենե մը ի վեր կապրի Լոզան (ճիշդ իմ տան դիմացը): Բոլորը կճանչնան զինքը իր մազերեն ու պեխեն, այնքա՛ն խարտյաշ, որ չես տեսներ զանոնք... Ահա քեզի խել մը զվարճալի բաներ և քաղցրիկ համբույրներ:

Ռուբինս

Օրիորդ Յաննի Ապպել

16. Շթայկերշթրասե

Էրֆուրտ

(Գերմանիա)

Անուշ Յաննի՛, ստացա սքանչելի նամակներդ: Ընորհակալություն և հազար համբույր: Նախանցյալ օր սիրուն շնիկ մը դրկեցի քեզի: Եթե չհավնեցար, ահա

ուրիշ մը, ավելի սիրուն: Հույս ունիմ, որ կհամբուրես (իմ տեղս) անոր անուշիկ դնչիկը: Ուրեմն, Յաննի՛, քեզի կթվի, թե ես չափազանց ծո՛ւյլ եմ: Ահ, ո՛չ, այդպես մի՛ կարծեր: Ավելի շատ մտածե, որ ես բնավ ազատ ժամանակ չունիմ: Այս աշխատանքը զիս սաստիկ կհոգնեցնե: Բայց կխոստանամ վաղը երկար նամակ մը դրկել քեզի ներփակ բացիկով մը («Համբույրը»): Մանրամասնորեն պիտի անդրադառնամ ամեն մեկ կետին: Այսօրվան Սուլթանը շատ զվարճալի է. ճշտով նույնը ես էի գնած քեզի դրկելու համար: Ի՛նչ ծիծաղելի դիպված սիրային... Միայն կուզեմ քեզի ըսել, որ դուն կսխալիս հայ ստրուկներու վերաբերյալ: Հայ ստրուկ գոյություն չունի բնավ: Ո՛չ կին, ո՛չ այր մարդ: Բոլոր ստրուկները իսկական թուրքեր են: Հայերը ամենևին ստրկություն չունին: Բարեբաղդաբար հիմա այդ խնդիրը լավ ջուրերու վրա է Թուրքիո մեջ: Դժբաղդությունները վերջ գտան, և հույս ունինք, որ ա՛լ չեն վերադառնար: Գալով Լոզանին, զզվելի է եղանակը. միշտ անձրև ու փոթորիկ: Պատուհաններն անգամ կարելի չէ բանալ: Իսկական ջրիեղեղ: Ավելի լավ. ծարավեն չենք մեռնիր...

Համբույր մը քու Ռուբինսեդ:

Օրիորդ Յաննի Ապպել
16. Շթայերշթրասսե 16
Էրֆուրտ (Գերմ.)

1000 պաշիկ¹ Լենայեն և Հրանդեն:

Մեր խեղճ Հայաստանը
Անիի ավերակները

Գերառողջ կլիմա և կապույտ ծով, իր վեհացնող գեղեցկությամբ զգլխիչ երկինք և դեռ հազարավոր բաներ, զոր մարդ չի տեսներ, կզգա միայն...

Յաննի՛ս, իմ քաղցր ու արբեցուցիչ Յաննի՛ս, մեծ ու գեղեցիկ, ինչպես սիրահույզ բույրերով անսովոր ծաղիկ մը շնչավոր... Այդ ի՛նչ կա իմ մեջս, որ շարունակ կտանջե սիրտս: Ի՛նչ կա իմ մեջս, Յաննի՛: Ահ, քու անուշ աչքերուդ

¹ Բնագրին մեջ՝ հայերեն:

խորունկ մեղամաղձոտությունն է, որ կհետապնդե ու միշտ կթափանցե զիս և ամենուր, ինչպես հազարավոր հանկուցիչ հիշատակներով թաթավուն անկարելի ուրտոի մը մեջ... Գիտեմ, պիտի գա օր մը (և այդ օրը հետու չէ), երբ դուն պիտի ըլլաս հոս, ինձի հետ, իմ մեջս, իմինս... Եվ պիտի գեղեցիկ ըլլաս այստեղ, և՛ ուժեղ, և՛ երագուն, ինչպես մեր հրացայտ հորիզոններուն տաք մայրամուտները... Ահա, ահա, իմ ամենագոր աստվածուհի՛ս, ահա երջանկությունը, որ դժբաղդության երկարատև ժամանակաշրջաններն հետո կսպասե մեզի... Եվ պիտի ըլլանք ուրախ, ինչպես ոչ մեկ բան աշխարհի երեսին, և մեր զրույցը փոքրիկ առվակի մը զվարթ երգը պիտի դառնա (կհիշե՛ս Շամբերիի Վիեժը: Ան պիտի ըլլա մեր երջանկության խորհրդանիշը...)

Ն.Գ.— Այս բացիկները գրած էի երեք-չորս օր առաջ: Բայց հետո Իշխանաց կղզիները գացի և այդպես ալ չկրցա ուղարկել զանոնք: Հազար ներողություն: Ինչպե՛ս է առողջությունդ:

Շնորհակալ եմ բոլոր նամակներուդ և գեղեցիկ բացիկներուդ համար:

Քու Ռուբինայ

Օրիորդ Սիրելիս¹ Braûte²
կատվիկ Յաննի Ապպել
16. Շթայկերշթրասսե
Էրֆուրտ

Սիրելի նշանածս, Յաննի՛...

Պետք է մեծ ուշադրություն դարձնես հավիտենական հարբուխիդ, անձրեվոտ եղանակին դուրս չգաս (մանավանդ պետք չէ թատրոն երթալ, գիշերը, երբ կանձրևե կամ կձյունե): Ուրեմն, շատ լուրջ է: Զգույշ եղիր, սիրելի Յաննի՛ս: Չախ կուրծքդ դեռ կցավի՛: (Շուտ գրե այս մասին): Արդ, պետք է երթալ բանիմաց բժիշկի մը, գիտնալու համար, թե ինչն է կուրծքիդ ցավը: Անհրաժեշտ է: Լուսանկարին համար պետք է քիչ մը համբերես: Ինչո՞ւ կուլաս, կատվի՛կ³: Իրոք որ չափազանց շատ արցունք վասն լուսանկարի մը: Գիշերօթիկ աղջիկ տեսնելով, մտովի քեզ կհամբուրեմ...

Քու զվարթ Ռուբենդ

¹ Բնագրին մեջ՝ հայերեն:

² Նշանած (գերմ.):

³ Բնագրին մեջ՝ հայերեն:

Սիրելի Յաննի՛, կուղարկեմ քեզի Իպսենի՝ Հյուսիսի մեծ մտածողին հզոր երկը: Անոր ընթերցումը պիտի ավելցնե մեջդ կամքի ուժը: Պետք չէ շտապ կարդալ: Շնորհակալ եմ «Բագոսուհի»-ին համար, որ հիանալի բացիկ մըն է, մինչև հիմա ուղարկածներեդ լավագույնը: Քանի մը օրեն ինձմե պիտի ստանաս թանգարանային բացիկներուս պզտիկ ակումը: Ահա ցուցակը.

Գեղեցիկ դարությունք (կանանչ) կանանչ-կարմիր-կանանչ: Վոցի ուսանողներ...¹ (սպիտակ) կապույտ-սպիտակ-կապույտ: Ճարտարագետ ուսանողներ, Հելվետիա (կարմիր) սպիտակ-կարմիր-սպիտակ: Զվիցերացի հայրենասերներ, Լեմանիա (նարնջագույն) կանանչ-սպիտակ-նարնջագույն: Կաթոլիկ ուսանողներ, Հայաստան (մանիշակագույն) կանանչ-սպիտակ-կարմիր: Հայ ուսանողներ, Միներվա (կապույտ) կապույտ-սպիտակ-կապույտ: Հույն ուսանողներ, Եգիպտոս (սպիտակ) կարմիր. եգիպտացիներ, թուրքեր, պարսիկներ: Պրասլավ (նռնագույն) սպիտակ-կարմիր-կանանչ: Պուլդարացի ուսանողներ, Ռոմանիա. (մոխրագույն) կապույտ-դեղին-սպիտակ, ռոմանացի ուսանողներ:

Ետ մի՛ դրկեր ինձի գրքերը: Կվախնամ, որ դրոշմաթուղթերը փճանան:

Մագբերուդ համար, երազի գույն... չէ՛: Առո՞ղջ ես: Հազար համբույր: Քու նշանածո՛

Ռուբինս

Յաննի գեղեցկուհի՛ս,

Ինչպե՞ս գրեմ: Ինչպե՞ս խոսիմ քեզի իմ հոգիես: Ահա նորեն կգրեմ քեզի, և ահա նորեն բառերս չափազանց չոր են պատմելու համար սիրահար սրտիս հազար ու մեկ մուք ցավերը... Սիրահար: Ինչպե՞ս կգինովցնե զիս այս միակ բառը՝ «սիրահար»... Կար ժամանակ, երբ ես կասկածով կվերաբերեի սիրույն, չէի հավատար համբույրի կսկծագին ուժին և թերահավատ էի ամեն բանի հանդեպ: Հիմա, իմ միակ Յաննի՛ս, հիմա ոճիդ պիտի ըլլար կասկածով վերաբերիլ սիրույն, քանզի ահա մենք կտառապինք և դեռ ու միշտ ու կրկին կսիրենք զիրար...

Սիրելի՛ս, անզուգական սիրելի՛ս, ըսե ինձի այն բառը, որ կրնա զիս ողորբել

¹ Անընթեռնելի:

և արտահայտել մեկը մյուսին մեջ սրսփացող զույգ հոգիներու խորհուրդը... Ես կարիք ունիմ մե՛կ բառի, քու շրթներեդ արտաբերվող բառի մը, բառի մը քաղցր ու կարծր, որ կրնա սորվեցնել ինձի մեռնիլ ի սեր սիրո, ի սեր քու սիրույդ... իմ խեղճ ու երազուն Յաննի՛ս...

Մանկությանս օրերուն ես միշտ կերազեի ունենալ զիս նասկցող ընկերուհի մը, քանզի իմ...¹

Օրիորդ Յաննի-Սիրական²

Ապպել

16. Շթայկերշթրասսե 16

Էրֆուրտ

(Գերմանիա)

Զքնաղ սիրելի՛: Շնորհակալ եմ...³ համար: Հիմա հետաքրքրաշարժ պատմություն մը քեզի. երեկ Վիլլա-Շոմոնի տերը տեսավ զիս և պատմեց, թե 1908-ի ամառը գերմանացի պարոն մը և տիկին մը եկեր են զիս տեսնելու: Խնդրեր են իմ ճիշդ հասցես: Մարդը ըսեր է, թե ես կա՛մ Շամբերի եմ, կա՛մ Կոստանդնուպոլիս: Հարցուցեր են, թե ես պատվավո՞ր մարդ եմ, լո՞ւրջ, աշխատասե՞ր, ազնի՞վ և դեռ հազարավոր բաներ: Հիմա չեմ գիտեր այդ գերմանացիներուն ինչացու ըլլալը: Առեղծվա՛ծ... Դուն բան մը կհասկնա՛ս այս պատմութենեն: Ես՝ բացարձակապես ոչինչ: Զույգ մը համբույր քու **Ռուբինսեդ**:

Մարտ 5, 1910

Կուղարկեմ քեզի այս ռուսական նկարը, որ կմարմնավորե տառապակոծ ծովու Հոգին: Նավաբեկություն: Ասիկա թերևս ամենահզոր նկարն է, զոր տեսած եմ կյանքիս մեջ: Ի՛նչ շարժուձևեր, ի՛նչ աչքեր:

Ռուբեն

Համբույր մը⁴ լուրթենես խռոված սիրտդ մեղմելու համար:

¹ Նամակին շարունակությունը չկա բանաստեղծի թուղթերուն մեջ:

² Բնագրին մեջ՝ հայերեն:

³ Անընթեռնելի:

⁴ Այս բառերի միջև համբույրը խորհրդանշող մի օղակ է գծված:

Հանգչե հիմա սիրույդ քնարին վրա: Օր մը կարթնցնեմ ես քեզ, և դուն
խնդրության երգերով կթրթռացնես քնարդ:

Օ՛ր իմ սիրեցյալ Յաննի:

Ռուբեն

Մարտ 29, 1910

Մայիս 4, 1910

Շատ անուշ նշանա՛ծս,

Այս առավոտ առի բացիկդ և համբույրներդ: Հուսով եմ, որ վաղը կստանամ
նամակդ: Ես շատ լավ եմ և, կկարծեմ, դուն՝ նմանապես: Վաղը Համբարձման
տոնն է: Համալսարանը՝ գոց: Կրնամ երկար նամակ մը գրել քեզի:

Այնքա՛ն գեղեցիկ են առավոտները: Ամեն առտու ժամը վեցեն մինչև յոթը
պտույտ մը կընեմ դաշտերուն և անտառներուն մեջ: Ե՛րբ պիտի միասին ընենք
այս պտույտները: Ի՛մ սիրելագույն Յաննի՛: Ես քուկդ եմ:

Ռուբեն

Մայիս 6, 1910

Պահե, Յաննի՛, քեզի հանդեպ զգացած սիրույս այս հիշատակը:

Միայն քեզի

Եվ հավերժորեն քեզի հանդեպ:

Ռուբեն

Քաղցր նշանա՛ծս,

Ահա քեզի առաջին և տարփազին համբույրս:

Ռուբեն

Մայիս 7, 1910

(Լուսանցքի վրա) Եվ քանի մը տարի հետո դուն այս պզտիկ մայրիկին չափ
բարեհամբույր պիտի դառնաս:

Մայիս 7, 1910

Յաննի սիրելի՛ս: Այս առավոտ առի նամակդ: Շատ շնորհակալ եմ: Բայց երբեք չէի կարծեր, թե դուն այսքան կամակոր ես (ներե ինձի այս բառը): Կըսես, որ հիմա չափազանց ուշ է խաղալեն հրաժարիլը: Սակայն ես քեզի երկու-երեք շաբաթ առաջ էի գրած այդ մասին: Ամեն պարագային, դուն հոժար ես խաղալու: Ատոր համար չեմ ուզեր քեզ պատժել, միայն գիտցիր, որ կխաղաս առանց իմ թույլտվության, առանց իմ կամեցողության, առանց իմ հաճության: Ասիկա առաջին անհավատարմությունն է սպիտակ նամակեն ետքը: Մյուս բոլոր խոստումներուն համար խորին շնորհակալություն: Շատ երջանիկ եմ այսօրվան նամակիդ պատճառով և կուղարկեմ քեզի իմ առաջին անուշ համբույրներս ամիսե մը հետո: Քուկդ եմ մարմնապես, իմ գերպաշտելի Յաննի՛ս:

Շատ սիրահարական պաշիկ մը ¹:

Ռուբեն

Իմ խեղճ Յաննի՛ս: Հոգնած ես դուն, դժբաղդ, պետք է որ օգնեմ քեզի: Կոթնե կուրծքիս, ուժով բռնե ձեռքս, և ես քեզ հուշիկ ու ապահով պիտի տանիմ դեպի մեր ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ:

Նայե այս արձանին: Տե՛ս, աղջիկը որքան է հոգնաբեկ: Բայց սիրեցյալը կօգնե անոր: Ես պիտի օգնեմ քեզի: Պիտի սիրեմ քեզ ցկյանս: Եկուր, կոթնե ինձի: Եվ գիտցիր, որ կսիրեմ քեզ:

Ռուբեն

Սիրո գերագույն համբույրս:

Մայիս 10, 1910

¹ Բնագրին մեջ՝ հայերեն:

Օրիորդ Յաննի Ապպել
16. Շթայկերշթրասսե 16
Էրֆուրտ (Գերմանիա)
Հունիս 1, 1910

Շնորհակալ եմ, Յաննի հրեշտակս, քաղցր նամակներուդ համար, որոնք սպասելու ուժ տվին ինձի, ամեն առավոտ: Անհամբերությամբ և հեշտագին սարսուռներով կսպասեմ մեր վսեմ միության: Երեկ ուղարկեցի մեր ամուսնության անհրաժեշտ բոլոր թուղթերը: Շուտափույթ պատասխանի մը կսպասեմ: Օր պետք չէ կորսնցնել: Կորովամիտ և ուրախ ես արդեն: Հանգիստ կքնանա՛ս: Լավ կսնանի՛ս: Ըստ ամենայնի երջանիկ, երջանիկ, երջանի՛կ ես... Միշտ ավելի ու ավելի կսիրեմ քեզ: Ցտեսություն: Անուշ համբույր մը

քու Ռուբենեդ:

Հունիս 2, 1910

քու շրթներուդ*

Այսպես է, որ ամեն առավոտ, արշալույսին, զիս կպահես, քու քաղցրահունչ և գորովոտ բառերովդ օրորելու համար: Շնորհակալություն:

Ռուբեն

Հունիս 6, 1910

Եվ դուն ալ այսպես պիտի ըլլաս Լեմանի եզերքը: Միայն թե դուն շատ ավելի գեղեցիկ տեսք պիտի ունենաս... Եվ պիտի դառնաս Կարապետուն Ընկերուհին: Եվ ոստելիք պիտի տաս անոնց:

Ռուբեն

Քու պաշտելի բերնակիդ*

Հունիս 8, 1910, շրեքշաբթի

Պաշտելի Յաննի՛,

Ստացա թուղթերդ: Դրի զանոնք իմիններուս հետ: Անկե զատ, քեզի պես

* Համբույր խորհրդանշող օղակներ:

ստորագրեցի՝ ամուսնական ուխտը, որ վաղը պիտի ազդարարվի: Ամեն ինչ լավ է: ԱՄԵՆ ԻՆՉ կարգադրված: Բոլոր դժվարությունները հարթված են: Եվ արդեն ոչ ոք կրնա խափանել մեր ամուսնությունը: Ես բոլորովին երջանիկ եմ:

Ամուսնությունը տեղի պիտի ունենա հուլիս 17-ին: Կհամբուրեմ թեզ:

Քու Ռուբենդ

Հունիս 9, 1910

Պաշտելի նշանա՛ծս,

Կսիրեմ, կպաշտեմ թեզ, Յաննի՛ս: Ես ուրիշ ոչինչ կընեմ, բացի թու և մեր ամուսնության մասին մտածելեն: Քեզ ամեն բանե գերիվեր կսիրեմ: Քեզ կսիրեմ իմ Աստուծմես գերիվեր...

Եվ գիտեմ նաև, որ դուն զիս կսիրես իտեալական և գերմարդկային սիրով: Սիրով մը աստվածային և անպատում:

Սիրելի՛ս, դեռ բան չգրեցի տիկին Պերրային: Եվ չպիտի ալ գրեմ: Հուլիսի սկիզբը ինքս կերթամ ու կխոսիմ:

Օժիտդ կպատրաստե՛ս արդեն: Շրջագգեստնե՛րն ալ: Ամեն օր գրե ինձի այս մանրուքներու մասին: Հազար անուշիկ համբույր:

Քու Ռուբենդ

Անուշիկ Յաննի Ապպել ¹

16. Շթայկերշթրասսե 16

Էրֆուրտ (Գերմանիա)

Հունիս 11, 1910

Սիրելի Յաննի՛: Ընորհակալություն երկտողիդ համար: Հայտարարությունը տրված է արդեն: Ամեն ինչ լավ հունի մեջ է: Շուտ պատրաստվե և ծուլ մի՛ ըլլար: Կարծիքս կհարցնես շրջագգեստներուդ մասին: Բայց դուն ինձմե լավ կհասկնաս այդ բաները: Ըրե սրտիդ ուզածին պես: Եվ ամեն բան ըրե գե-րազանց: Եթե կուզես կարծիքս ունենալ, պետք է ինձի ղրկես շրջագգեստնե-

¹ Բնագրին մեջ՝ հայերեն:

րուն ձևվածքն ու նորաձևությունները և ըսես, թե ո՛րը կնախընտրես: Հինգ շաբաթ կմնա միայն: Հինգ շաբաթ տոն ու խնդության:

Քու Ռուբենդ

Օրիորդ¹ Յաննի Ապպել
16. Շթայկերշթրասսե
Էրֆուրտ (Գերմանիա)

Հունիս 12, 1910

Բարի լույս, պզտիկ mamacinil²...

Երջանի՛կ ես: Շա՛տ... Հարսնիքը հայտարարված է և որպես հասցե տրված «Օթել տը Վիլ»-ը: Մեյ մը երևակայե. հայտարարութենեն ի վեր ամեն օր կահ-կարասիի, կարի մեքենայի, խոհանոցային պիտույքներու և այլն ցուցակներ կստանամ. մարդիկ կկարդան անունս ու հասցես և իրենց ծառայությունը կառաջարկեն... Օ, ինչպե՛ս կխնդամ... Շատ գոհ եմ, որ քեզի գեղեցիկ բաներ կգնես: Ե՛րբ պիտի ապսպրես ճաշակավոր այցազգեստները և լայն, երկար ու վայելուչ վերնազգեստը իրիկնային պտույտներու համար: Շատ կարևոր են: Հազար համբույր քու

Ռուբենեդ:

Ազնիվ օրիորդ³ Յաննի Ապպել
16. Շթայկերշթր. 16
Էրֆուրտ (Գերմանիա)

Հունիս 13, 1910

Պաշտելի Յաննի՛: Ընորհակալություն Իենայեն դրկած բացիկիդ համար: Բայց մոռցած էիր գրելու, թե ինչու ես բժիշկի գացած: Երբ մանրամասն գրես այս մասին, այն ատեն կրնամ ըսել, թե պե՛տք է արդյոք քանի մը օր Իենա

¹ Բնագրին մեջ՝ հայերեն:

² Մայրիկ (իտալ.):

³ Բնագրին մեջ՝ հայերեն:

մասս: Վաղը իրիկուն փաթեթ մը պիտի դրկեմ քեզի: Հուսով եմ, որ հունիս 16-ին կստանաս զայն: Գրե ինձի, թե ինչպես է առողջությունդ: Եվ հատկապես հիմա Իենա մի՛ երթար Նորեն: Հիշե թուղթերը (հունիս 15): Նախորդ նամակիս մեջ գրած եմ ասոր մասին:

Քու Ռուբենդ

Անուշիկ¹ Յաննի Ապպել
16. Շթայկերշթրասսե 16
Էրֆուրտ (Գերմանիա)

Հունիս 15, 1910

Սիրելի Յաննի: Շնորհակալություն աղվոր բացիկիդ համար: Բայց ինձի կթվի, թե գործերը շատ դանդաղ հառաջ կերթան: Ես դեռ նույնիսկ չեմ ստացած նշանտուքի վկայագիրները: Ինչո՞ւ քիչ մը չեք աճապարեր: Եվ մոռցա՞ր արդեն մեր փաստաթուղթերուն կապակցությամբ քեզի գրածս: Պետք է արագ գործել, արագ, արա՛գ: Դրկեցի քեզի փաթեթները: Այսօր մեծկակ համբույր մը վարդագույն բերնակիդ: Շնորհավո՛ր տարեդարձ:

Քու Ռուբենդ

Խմ բաղցր Յաննի Ապպել
16. Շթայկերշթրասսե 16
Էրֆուրտ (Գերմանիա)

Հունիս 16, 1910

Պաշտելի Յաննի՛ս: Ահա վերջին անգամն է, որ գրավոր կշնորհավորեմ տարեդարձդ: Հետագա տարեդարձները բոլորովին տարբեր կերպով պիտի ըլլան: Եվ թերևս միայն ես չեմ, որ պիտի շնորհավորեմ քեզ... Քանզի մինչ ես պիտի համբուրեմ աչքերդ, գուցե մանչուկ մըն ալ ձեռքերդ պաչիկ ընե... Եվ դուն պիտի արտասվես երջանկութենեդ... Եվ օր պիտի գա, երբ մամիկ պիտի դառնաս (ո՛չ ասոր պես...) Բայց մինչև այդ օրը մենք ժամանակ ունինք խենթի պես սիրելու զիրար...

Անուշ համբույր մը շրթներուդ:

Ռուբեն

¹ Բնագրին մեջ՝ հայերեն:

Հունիս 29, 1910

Պաշտելի Յաննի՝: Շնորհակալություն այս առավան նամակիդ համար: Բայց պեռլինյան նամակիս պատմությունը շատ անհավատալի կթվի ինձի: Բան մը կա ատոր տակը: Ատկե զատ, կզարմանամ, որ ծնողքդ չեն ուզեր պատասխանել նամակիս: Ավելի վատ: Շատ կարևոր գրելիքներ ունի իրենց, բայց հիմա չեմ գրեր: Արդարև, շատ ծիծաղելի է ամուսնութենեն հետո ծանուցագիրներ դրկելը: Անգամ մը որ դուս իմ կինն ես, կկոչվիս տիկին Չիլինկ, և որ ամեն ինչ վնցած-վերջացած է, ինչի՞ կծառայե ծանուցագիրը: Ամեն տեղ ամուսնութենեն երկու շաբաթ առաջ կընեն այդ բանը, և ես անպայման այդպես կուզեմ:

Ուրեմն, ամուսնութենեն երկու շաբաթ առաջ դուք պետք է արդեն դրկած ըլլաք ծանուցագիրները: Հետո, վերջին օրը, դուս պետք է բարեկամուհիներդ և ծնողքդ հրավիրես թեյի կամ ընթրիքի: Անկե ետքը կուզաք հոս: Արդեն չորս-հինգ անգամ գրած եմ ասոնք: Այս պատմությունը կսկսի տհաճություն պատճառել ինձի: Եվ, վերջապես, ուղարկվա՞ծ են թուղթերը:

Հազար համբույր քեզի:

Ռուբեն

Հուլիս 3, 1910

Ուրախ ըլլանք մինչև հուլիս 17-ը, թող ո՛չ մեկ օր տխրության ստվերն իսկ չանցնի մեր վրայեն:

Քու սիրահարդ՝ Ռուբեն

Հուլիս 9, 1910

Իմ անուշիկ ² Յաննիս,

Այսօր կուղարկեմ քեզի սպանական այս երեք նկարները, զոր անկասկած

¹ Բնագրին մեջ՝ հայերեն:

² Բնագրին մեջ՝ հայերեն:

պիտի սիրես: Կուզեմ վաղը դրկել արևելյան երկու պատկերասրահներուն ցուցակները: Սիրելի՛ս, պաշտելի և սքանչելի սիրելի՛ս, գո՛հ ես վերջապես: Երջանի՛կ ես հիմա: Խոսք՝ կուտա՛ն ինձի, որ այլևս չես ըլլար¹... Այլևս չես արտասվեր: Այլևս չես հառաչեր բնավ: Կուզե՛ս: Այնքա՛ն հաճույք պիտի պատճառես ինձի: Կուզեմ զվարթությամբ և երջանկությամբ թրթռուն նամակներ ստանալ քեզմե: Չորս-հինգ օր կմնա միայն: Ի՛նչ խայտանք... Բայց պետք չէ շատ ուշ գալ: Պետք է որ դուն **հինգշաբթի** օր Լոզան ըլլաս, անպայմա՛ն: Այսօր գրեցի տիկին Պերրային գիշերօթիկնոցի համար:

Հույս ունիմ, որ վաղը պատասխան մը կստանամ: Կուզեի անձամբ Շամբերի երթալ, բայց բազմաթիվ զբաղումներս արգելք եղան: Միննա՛ն ալ Լոզան պիտի գա: Կուզեի, որ մեր հարսնիքին ներկա ըլլար: Բայց դուք չեք կրնար տիկին Մորֆոյին քով իջնանիլ. ան այդքան տեղ չունի: Պսակադրությունը պետք է կատարել Պանդոկին մեջ, որովհետև հարկավոր էր տաաը օր առաջ իմաց տալ եկեղեցիի վարչության, և ես այս բանը գրեցի մայրիկին, բայց ան չուզեց պատասխանել ինձի: Հիմա չափազանց ուշ է արդեն: Եվ եթե դուն եկեղեցական ամուսնության սպիտակ հագուստդ պատրաստելու ժամանակ չունիս, ավելի լավ: Այդ պարագային եկեղեցական ամուսնություն չենք կատարեր:

Սիրելի՛ս, իմ աղվոր, շա՛տ աղվոր սիրելիս, կսիրեմ քեզ, կպաշտեմ քեզ, կսպասեմ քեզ, կսպասեմ, կսպասեմ, կսպասեմ...²

Անգամ մը որ միասին ըլլանք, և երբ որ դուն համավոր պզտիկ տիկին մը դառնաս, ամբողջ խոնջենքդ և բոլոր հիվանդություններդ պիտի չքանան, և մենք երջանիկ պիտի ըլլանք, երջանիկ, երջանի՛կ, այո՛, շա՛տ երջանիկ... Հազար պաչիկ² Յաննիին Ռուբենեն:

Անուշիկ, Աղվորիկ, սիրունիկ³

Յաննի Ապպել

16. Շթայկերշթր. 16

Էրֆուրտ

(Գերմանիա)

Հուլիս 10, 1910

Շատ քաղցր Յաննի՛: Ընորհակալ եմ «Տեսություն» շատ գեղեցիկ բացիկիդ համար: Էհ, ուրեմն, մեր Տեսությունը պիտի կայանա չորս օրեն... Հիշե, որ

¹ Անընթեռնելի:

² Բնագրին մեջ՝ հայերեն:

³ Բնագրին մեջ՝ հայերեն:

ինծի գրած էիր. «Ջրհեղեղը պիտի փարատի...»: Ի՞նչ խոսք, այդ օրեն ասդին ջրհեղեղը փարատած է արդեն... Եղանակը պայծառ է; պայծա՛ռ, պայծա՛ռ... Սխրալի է ամեն բան: Եվ բնությունը կպատրաստվի մեր հարսանեկան հանդեսին...

Կսպասեմ քեզ, կսպասեմ, կսպասեմ... Շո՛ւտ եկուր... Հազար համբույր քու հավերժական Ռուբենեդ:

Օրիորդ Յաննի Ապպել
16. Շթայկերշթրասսե
Էրֆուրտ (Գերմանիա)

Երկուշաբթի, հուլիս 11, 1910

Շատ սիրելի Յաննի՛,

Ամուսնությունը տեղի պիտի ունենա հուլիս 16-ին, առտուն ժամը 11-ին: Անգամ մըն ալ կկրկնեմ, որ դուն մայրիկին հետ պետք է հոս ըլլաս հինգշաբթի: Անպայմա՛ն: Եթէ հայրիկը ժամանակ չունի, կրնա գալ ուրբաթ օր: Շաբաթ իրիկուն մենք պիտի մեկնինք Շամբերի և հոն մինակնիս պիտի շարունակենք մեր տոնը Սիրո... Յաննի՛: Հինգշաբթի կսպասեմ քեզ, անպայման: Քույր՝

Ռուբեն:

Երեքշաբթի, հուլիս 12, 1910

Սիրելի Յաննի, իմ աղվորիկ Յաննի՛ս,

Շնորհակալություն այս առավան նամակիդ համար: Կգրես, թե տենդ կունենաս: Ի սեր Աստուծո, մոռցի՛ր այդ հիվանդություններն ու տենդերը: Եղիր զվարթ և ուժեղ: Այլապես ինչպե՛ս պիտի բարձրանանք լեռն ի վեր: Ինչպե՛ս պիտի երթանք մրտավարդ քաղելու, սիրո տոնիդ առթիվ կարմիր պսակ հյուսելու համար: Ինչպե՛ս պիտի մազլցինք վեր (դուն գիտես), ջրվեժին քով, որպեսզի հովվական հյուղակին մեջ սիրենք զիրար... Քանզի այն, որ երազ էր մինչև հիմա, իրականություն պիտի դառնա... Ահա թե ինչու պետք է ուժեղ ըլլաս, շատ ուժեղ և շատ զվարթ... Շամբերի հասնելունս պես կոշել պիտի տամ քեզ և ես վստահ եմ, որ Շամբերիեն վերադարձին հինգ քիլոյն ավելի պիտի գիրնաս... Մանկիկ մը պես առույզ պիտի ըլլաս և քարայծի նման թեթև... Պզտիկ կապի՛կ¹... Եվ իրիկունները պիտի քալենք սիրո ջրվեժներուն մեջեն,

¹ Բնագրին մեջ՝ հայերեն:

իսկ գիշերները պիտի քաշվինք մեր բույնին մեջ սիրո: Միայն ու միայն սեր պիտի ըլլա, ուրիշ ոչինչ... Եվ դուն ի սրտե գոհ պիտի մնաս, փոքրիկ մժղո՛ւկ... Հետո, գիտե՛ս, Լոզանի մեջ (ժամանակ անց), իրիկնային պտույտներու համար, այս բացիկի վրայինին պես, կորնթոսցի պերճադիճի շրջազգեստ մը կարել պիտի տամ քեզի: Օհ, հմայիչ պիտի ըլլաս, հմայի՛չ... Եկո՛ւր, եկո՛ւր, եկո՛ւր, կսպասեմ քեզ: Կսիրեմ քեզ: Ես այնքա՛ն երջանիկ եմ, այնքա՛ն երջանիկ: Կհամբուրեմ քեզ՝ ո՛ւր որ ուզես... Ա՛ն իմ սիրտս... Քու սիրահարդ՝

Ռուբեն

Վաղը՝ վերջին նամակս:

Օրիորդ Յաննի Ապպել

16. Շթայկերշթրասե 16

Էրֆուրտ (Գերմանիա)

Շաքաթ

Միրելի Յաննի՛: Աշխարհի ամենահաղթանդամ կնոջմեն ետքը քեզի կրկնեմ մարդկային ցեղի ամենաբարձրահասակ այրը. 2 մեթր 50: Երբ առաջին անգամ տեսա զայն այստեղ, թեև գեղեցիկ՝ մարդ էր, կպժգայի անոր նայելե, քանզի այնքան էր մեծ, կարծես անասուն ըլլար:

Ծննդյանս տարեդարձը փետրվարի 28-ին է: Ինծի կթվի, թե դաշնամուր նվագել չես սորվիր տակավին: Ով գիտե, թերևս կսորվիս, բայց ինծի այդպես կթվի: Ուրախ և հաճոյալի երեկույթ մը կմաղթեմ քեզի: Հազար համբույր...

Ռուբեն:

Օրիորդ Յաննի Ապպել

16. Շթայկերշթր. 16

Էրֆուրտ

Չորեքշաբթի

Միրելի Յաննի՛,

Մի՛ վիատիր, սիրելի՛ս: Կսիրեմ քեզ: Չեմ կրնար քեզ մոռնալ: Չեմ կրնար ապրիլ առանց քեզի: Ես կրնամ միայն սիրել քեզ... Քուկդ եմ ցկյանս:

Քու Ռուբենդ:

Տիկին Բժ. Յաննի Չիլինկիրյան-Ապպել

Լոյզենշթրասսե 4.

Էրֆուրտ (Գերմանիա)

Հինգշաբթի

Սիրելի գա՛նձս,

Շատ շնորհակալ եմ երկու գեղեցիկ նամակներուդ համար, որոնք անհուն հաճույք պատճառեցին ինձի: Ներե, որ նամակ չգրեցի այսօր: Վաղը կունենաս զայն, անպատճառ: Այս օրերը չափազանց զբաղած էի, իսկ հիմա պետք է վազեմ, որպեսզի 6. 40 շոգեկառքին հասցնեմ այս երկտողը, թեև սուսկալի փոթորիկ է դուրսը... Պըռռ: Ձմեռը կվերսկսի, և ես, միս-մինակ, այնքա՛ն կմըսիմ գիշերը: Կսպասեմ քեզ... Հերի՛ք է ամեն օր ամանեղեն լվամ... Հազար համբույր...

Ռուբեն

Տիկին Բժ. Յաննի Չիլինկիրյան-Ապպել

4. Լոյզենշթր.

Էրֆուրտ (Գերմանիա)

Շաբաթ

Սիրելի Յաննի,

Ես Պեռն եմ: Գացինք ու լուսանկարեցինք արջերը, Տյովլեթյանն ալ անոնց հետ: Այսօր իսկ կմեկնիմ Լոզան, ուր հուսով եմ, որ բացիկ մը կգտնեմ քեզմե և լուսանկարման տոպիերը: Լուսանկարներդ կուղարկեմ վաղը: Ջերմ բարևներ մայրիկին և հայրիկին: Հազար համբույր:

Ռուբեն

Տիկին Բժ. Յաննի Չիլինկիրյան - Ապպել

4. Լոյզենշթր.

Էրֆուրտ (Գերմանիա)

Շաբաթ իրիկուն

Սիրելի Յաննի՛: Այս իրիկուն քիչ մը տխուր եմ, ուստի չեմ ուզեր գրել այն նամակը, զոր այսօրվան համար խոստացած էի քեզի: Այն բարակ մահիկը, զոր

դուն տեսեր ես հինգշաբթի իրիկուն, մտածելով թու մեկնումիդ մասին, ես ալ տեսա նույն օրը երեկոյան իմ պատշգամբս և ըսի Տյովլեթյանին (ինչպես դուն) . «Այս իրիկուն Յաննիի մեկնելուն շաբաթ մը կըլլա...»: Հետո տխուր էի, և մենք խմելու գացինք Ուշիի մեկ համեստ գինետունը: Լավ զվարճացիր, կսիրեմ քեզ: Անջատումը մեզ ավելի մոտեցուց... Վաղը՝ նամակն ու լուսանկարները: Տարօրինակ է կյանքը: Բարևներ ծնողքիդ: Հազար համբույր թու սիրելի Ռուբենդ:

Ասիկա հիշատակ մըն է Պապի թանգարանեն և գործն է այն հեղինակի, որուն «Նուպիացի կինը» կտավը կա Լոզանի թանգարանին մեջ:

Հունիս 17, 1915

Սիրելիս,

Երեքշաբթի հասա Չանդըրը: Համբորդեցի վեց օր: Շատ հանգիստ եմ: Բժ. Տինանյանին հետ նույն տան մեջ կապրիմ: Տան առջև պարտեզ կա և անտառ: Մի՛ մտահոգվիք ինձի համար: Շնորհոքն Աստուծո քիչ ատենեն արդարությունը կվերականգնվի և մենք միասին կըլլանք: Միշտ գրեցեք ինձի:

Իմ հասցես.

Բժ. Չիլինկիրյան

Չանդըրը:

Կրնաք ֆրանսերեն գրել, բայց հասցեն՝ թրքերեն:

Բժշկության մասին գիրք մը դրկեցեք ինձի: Կհամբուրեմ երախաները:

Ձեր ամուսինը՝ Ռուբեն

15 /28/ հուլիս, 1915

Սիրելի կինս

Երեկ ապահովագրված նամակնիդ առի: Այսօր ալ Ռեծիի միջոցավ 11 Հուլիսին, ձեր դրկած երեք ոսկին ալ առի: (...)

Կալթաթայի վարժարանեն (Կեդրոնական) ամառվան արձակուրդի երկու ամսվան ամսաթոշակս եղող ինը ոսկին գանձելով ինձի դրկեցեք: (...) Այստեղ օդերը շատ տաք են: Առտվնե մինչև գիշեր հիվանդներուն ետևեն կվազեմ: Առողջությանս մասին բնավ մի մտահոգվիք, հանգիստ եմ: Ձեզի ամեն շաբաթ 3 քարտ կգրեմ: Դուք ալ գոնե շաբաթը երկու նամակ դրկեցեք:

Վարուժանը ընտանիքեն նամակ չստանար եղեր. ինձի տեղեկացուցեք:

Ամուսինդ՝ Ռուբեն

Պոլիս, Բանկալթի Նալպանտ փողոցը բնակող Տիկին Չիլինկիրյանին:
Վարուժանին հետ Այաշ պիտի երթանք. նամակնիդ հոն ղրկեցեք:

Ռուբեն

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռ. Սևակի նամակագրությունը ծավալով մեծ է և, որոշ իմաստով, առանձնանում է ընդհանրապես հայ գրողների նամակագրության ժառանգության մեջ: Այս հարցում, իհարկե, որոշակի դեր են խաղացել ոչ միայն նրա տաղանդը կամ հետաքրքիր կապերը, այլ ավելի շատ նրա մարդկային-ստեղծագործական նկարագիրը: Չնայած այդ նամակների գեղարվեստական-ճանաչողական մեծ նշանակությանը, դրանց մի չնչին մասն է առայժմ տպագրվել մամուլում և հատուկեւտ հավաքածուների մեջ: Ռ. Սևակի նամակներից մի ծաղկաքաղ ներկայացված էր մեր կազմած ժողովածուի մեջ՝ 1985 թ., որոնցից առանձնապես աչքի էին ընկնում Յաննի Ապպելին գրած նամակներից մի քանիսի թարգմանությունները: Ներկա հատորն անհամեմատ ավելի հարուստ է, նույնիսկ կարելի է ասել, որ Ռ. Սևակի նամակագրական ժառանգությունը ներկայացված է առավել ամբողջությամբ:

Ֆրանսերեն նամակների ինքնագրերի մեծ մասը պահպանվում է հեղինակի ֆոնդում (ԳԱԹ, ՌՍՖ, չմշակված բաժին):

Հրանտ Նազարյանին (էջ 5) — Հր. Նազարյանը Ռ. Սևակի մտերիմ բարեկամներից էր (տե՛ս Ռ. Սևակ, Երկեր, հ.1, 1995 թ. «Լեման» բանաստեղծության ծանոթագրությունը): Ներկայացվող նամակները վերցված են Թեոդիկի «Ամենուն Տարեցույցը»-ից, որտեղ տպագրվել են առաջին անգամ (1928, էջ 368-369):

Եղիշե Արք. Դուրյանին (էջ 8) — Առաջին անգամ տպագրվել է Փարիզի «Հայ միտք» պարբերականում (Ա Տարի, 1955, թիվ 9-10):

Թեոդիկին (էջ 8) — Ինչպես երևում է Ռ. Սևակի և Տեր և Տիկին Թեոդիկների միջև աշխույժ նամակագրություն է եղել: Այստեղ ներկայացված են նրանց ուղղված Ռ. Սևակի մի քանի նամակների հատվածները: Առաջին հատվածը վերցրել ենք «Ամենուն Տարեցույցը»-ի 1911 թ. գրքից (էջ 218), մնացածները՝ 1916-1920 թթ. գրքից (էջ 21-22):

Նամակներ Պ. Մ.-ին (էջ 10) — 1928 թ. հունվարի 25-ից մինչև նույն տարվա փետրվարի 7-ը «Հայրենիք» օրաթերթը ներկայացնում էր «Ռ. Սևակի անտիպ նամակները»: Այդ նամակները հավանական կորստից փրկել և հրապարակել էր Տիգրան Չիթունին (Չիթճյան): Հրապարակմանը նախորդող՝ հունվարի 24-ին լույս տեսած «Անհայտ դամբանականին առջև» հոդվածում Տ. Չիթունին պատմում է, թե ինչպիսի արտակարգ պայմաններում է հայտնաբերել այդ նամակները. «Երրորդ անգամ էր թաքստոց կփոխելի (դեպքը, հավանաբար, տեղի է ունեցել 1915-ի ապրիլին հաջորդած ամիսների ընթացքում — Ա. Թ.)

և այս անգամ Գատրգյուղ ազգականի մը տունին մանսարեի մեջ էի, հոն դիզված փոշեծածկ գիրքերուն և ձեռագիրներուն մեջէն ելան Սևակի ձեռագիր 14 նամակները Լոզանէն ի Պոլիս և 6 քերթվածները» (այդ «6 քերթվածները» անտիպներ չեն - Ա. Թ.):

Սակայն Տ. Չիթունին հասցեատիրոջ անուն-ազգանվան փոխարեն ինչո՞ւ է սկզբնատառեր դրել: «Հիշված անձերուն անուններէն հատկապէս Մ. Պ. (որուն ուղղված են նամակները) լրիվ չտալուս արդարանալի պատճառն այն է, որ հիշյալը կ'ապրի վտանգավոր միջավայրի մը մեջ և իր անունին հրապարակումը կրնա գուցե դժվարություններ փարթել իր գլխին»:

Յուրաքանչյուր նամակի վերջում Տ. Չիթունին դրել է իր՝ հրապարակողի ծանոթագրությունները: Երկա հատորից դուրս թողնել դրանք, կնշանակեր խաթարել առաջին հրապարակման ամբողջականությունը: Մեր ծանոթագրություններն առանձնացված են աստղանիշով:

1906 մարտ 9, Լոզան (էջ 10) — «Գեղամը... Զարֆճյանը... Աշոտը...», ինչպէս և հասցեատերը՝ Պ. Մ.-ն, ամենայն հավանականությամբ, Ռ. Սևակի դասընկերներն են Պերպերյան վարժարանից:

1906, Ապրիլ 2 (էջ 12) — «abatjour» (ֆր.) - լուսամփոփ, «armoir» (ֆր.) - զգեստապահարան, «dejeuner» (ֆր.) - նախաճաշել, «diner» (ֆր.) - ճաշել, «souper» (ֆր.) - ընթրել, «abonné» (ֆր.) - այստեղ՝ նախապէս վճարածները, «pension» (ֆր.) - այստեղ՝ վարձու բնակարան, ուր նաև կանոնավորապէս կերակրում են. «chef de pension» (ֆր.) - վարձու բնակարանի տերը:

1906 մայիս 11, Լոզան (էջ 16) — «douche» (ֆր.) - ցնցուղ:

1 հուլիս (էջ 19) - «étudiant» (ֆր.) — ուսանող:

12 փետրվար 1907 (էջ 24) — «originalité» (ֆր.) - ինքնատիպություն: «Եղբայրս բոլորովին ապացինված է» - Հավանաբար Հայկի մասին է (տե՛ս Ռ. Սևակ, Երկեր, հ.1, 1995 թ. «Ահավոր տարակույսը» պատմվածքի և «Գիշերին մեջ» բանաստեղծության ծանոթագրությունները), «... չէ՞ որ մի Առվեր իր մեկ sonnetովը անմահացավ» — տե՛ս Ռ. Սևակ, Երկեր, հ.1, 1995 թ. «Պատասխան Առվերի ձայնակին» թարգման. ծանոթագրությունը:

1907 օգոստոս 26 (էջ 30) — «humeur» (ֆր.) — տրամադրություն:

1907, հոկտեմբեր 7 (էջ 32) — «Պերպերյան մեռավ, Եղիա հիվանդ է, Զոհրապ լռեց, Սիպիլ պռոպագանդ, հրապարակը... Պարսամյան և ընկերության մնաց...» — «Շանթ»-ի խմբագիր, բանաստեղծ Մերուժան Պարսամյանի եղբայրը՝ Սկրտիչ Պարսամյանը, «Հայրենիք» օրաթերթի 1928 թ. օգոստոսի 7-ի համարում տպագրել է «Ռ. Սևակի անտիպ նամակները» հոդվածը, որտեղ փորձում է ցրել այս նախադասության որոշ բացասական տպավորությունը: Հոդվածը հետաքրքիր և արժեքավոր է նրանով, որ այնտեղ ընդարձակ մեջբերումներ են արված Ռ. Սևակի՝ Մերուժան Պարսամյանին ուղարկված նամակներից: «cousin» (ֆր.) - զարմիկ, ազգական:

Անթվակիր նամակը (էջ 35) — «Գիտե՞ք, որ Զունդյան կտակին candidat երկայացա...» — Մեծահարուստ վաճառական Աստվածատուր Զունդը, ժա-

ռանգ չունենալու պատճառով, իր կնոջ՝ Նեկտար Զունդի մահից հետո որոշում է իր հարստության մի մասը հատկացնել Եվրոպայի համալսարաններում սովորող չքավոր, սակայն ընդունակ հայ երիտասարդներին, որոնց թվում էր Նան Ռուբեն Զիլինկիրյանը: «Մեծ եղբորս հիվանդությունը...» — Խոսքը հավանաբար Հայկի մասին է (տե՛ս Ռ. Սևակ, Երկեր, հ.1, 1995 թ. «Ահավոր տարակուսյալ» պատմվածքի և «Գիշերն իջավ» բանաստեղծության ծանոթագրությունները): «ՕՆՆիկ Պերպերյան կկոչվի» — ՕՆՆիկ Պերպերյան (1887-1959) — Ռ. Պերպերյանի որդին: «Մեծ-Մարդուն մահվան հեռագիրը...» — Խոսքը Ռ. Պերպերյանի մասին է:

25 դեկտ. 1907 (էջ 37) - Տ. Զիթունու ծանոթագրությունների մեջ այսպիսի տողեր կային, որոնք դուրս թողեցինք տեքստից. «1908-ին տապալեցավ համիտյան բռնակալությունը և Օսմ. Սահմանադրության հռչակումովը երջանիկ դարագլուխ մը բացվեցավ Թուրքիո Հայերու համար, որ այդպես ալ պիտի շարունակեր ըլլալ, եթե աղետաշունչ պատերազմը չմրկեր մեր երկիրը» - արևմտահայ գրողներից ոմանց հատուկ քաղաքական միատուրության և կուրության տիպական օրինակ: Նախ՝ «Թուրքիո հայերու համար» բացված «երջանիկ դարագլուխը» ազդարարվեց ավելի քան 30.000 զոհ տված Կիլիկիո ջարդերով և հետո, պատերազմը պայթեր թե ոչ, երիտթուրքերը պիտի որևէ կերպ իրագործեին հայերի, հույների, քրդերի և այլ ոչ թուրք ազգությունների մեթոդիկ և բազմապլան ցեղասպանությունը: Եվ ցավալիև ու տարօրինակն այն է, որ Տ. Զիթունին այսպես է մտածում 1928 թ., Մեծ եղեռնից հետո:

Ենովք Արմենին (էջ 41)

Այս նամակներն առաջին անգամ տպագրվել են Գ. Ազնավուրյանի «Արևմտահայ գրողների նամականի»-ում: Տեքստը վերցրել ենք Ենովք Արմենի ֆոնդից (ԳԱԹ, ԵԱՖ):

1906, ապրիլ 9 — «հելվետոսի» այսինքն, շվեյցարուսի: Լատիներեն Helvetia բառից: Հռոմեացիք այդպես էին անվանում ներկայիս Շվեյցարիայի տարածքը՝ այդտեղ բնակվող կելտական ցեղախմբի՝ հելվետների անունով:

Հունվար 26, 1907 (էջ 42) — «Մասիս»-ի մեջ մրցումի ենթարկված «Առվերի ձայնյակին պատասխանը» թարգմանելով ղրկեցի քեզի» — Տե՛ս Ռ. Սևակ, Երկեր, հ.1, 1995 թ. «Պատասխան Առվերի ձայնյակին» թարգմանության ծանոթագրությունը: «Ինչպե՛ս չչնորհավորել Նան այն հսկա հաջողությունը, որ ունեցար ձեռք անցընելով «Մասիսը...» — Ե. Արմենը 1906 թ. դեկտեմբերից մինչև 1908 թ. խմբագրում էր «Մասիս» շաբաթաթերթը: «Գաղղիական արդի գրականության հետ շփման մեջ ըլլալ» - «Մասիս»-ի 1907 թ. թիվ 14-ում տպագրվել է Լեկոնտ դը Լիլի «Տորեկ» բանաստեղծությունը՝ Ռ. Զիլինկիրյանի թարգմանությամբ: «Tant mieux, ma foi» (Ֆր.) - ավելի լավ: «... և շնորհավորել զքեզ «Կին»-ի համար...» - Ռ. Սևակը նկատի ունի Ե. Արմենի «Կինը» (1906) պատմվածքների ժողովածուն:

1907, 20 հունիս (էջ 51) — «Պիտի խնդրեի, որ մասնավոր ուշադրությամբ մը հրատարակեիր այս քերթվածս...» — Խոսքը, հավանաբար, «Գինով սեր»

բանաստեղծության մասին է, որ լույս է տեսել «Մասիս»-ի 1907 թ. թիվ 34-ում: «Հրանդին միջոցով» — նկատի ունի Հր. Նազարյանին: «Դրամին աղոթքը» և «Լեման» վերնագրով երկու քերթված» — Այս բանաստեղծությունները լույս են տեսել ոչ թե «Մասիս»-ում, այլ «Արևելյան մամուլ»-ում: «Entrefilet» (Ֆր.) — հոդվածիկ: «... գոր ալնքան լավ կերպով զետեղած էիր «Մասիս»ի դ վերջին երեսը» — Երևի նկատի ունի «Մասիս»-ի 1907 թ. թիվ 27-ում լույս տեսած գրախոսականը Ե. Ա. ստորագրությամբ:

1907, Հոկտեմբեր 2 (էջ 51) — «... ինչպես որ գրեր էիր «Ջունդյան սան»ի դ մեջ»: - «Մասիս»-ի 1907 թ. 1 սեպտեմբերի թիվ 36-ում տպագրվել է Ե. Արմենի «Ջունդյան սան» առաջնորդողը: «Նույնինքն Պերպերյանի կողմե պաշտպանվիս...» — Ռ. Պերպերյանի մասին է: «Իտատիե» — թուրքական միջնակարգ դպրոց: «...ԲՅՈՒՋԱՆԻՈՆ» այս մասին լուր մը զետեղեց...» — Կ. Պոլսի «Բյուզանդիոն» օրաթերթի 1907 թ. սեպտեմբերի 15-ի համարում տպագրված է Աշոտ Բ. Քեչյանի «Հուշեր ու նիշեր» նյութը, ուր խոսվում է Ջունդյան կտակի առթիվ սկսած վեճի մասին: Այնտեղ ակնարկ կա բժիշկ ուսանողի մասին (ակնարկը, հավանաբար, վերաբերում է Ռ. Չիլինկիրյանին):

9 մայիս, 1908 (էջ 54) - «... ինձ անջատաբար դրկած ՄԱՄՈՒԼԻ հոդվածը» — Խոսքը, հավանաբար, Մ. Մեծարենցի «Նոր տաղեր»-ի առթիվ՝ Ե. Արմենի գրած հոդվածի մասին է, որը տպագրվել է «Արևելյան մամուլ»-ի 1908 թ. թիվ 15-ում՝ «Ճշմարտության վարագույրը» վերնագրով: «Հարկ կա՞ ըսելու, որ Մեծարենցին, Մարլյանին և իրենց ընկերներուն տված շառաչուն դասերը անմոռանալի պիտի մնան...»: — Այս նախադասությունը դուրս է մնացել Գ. Ազնավուրյանի հրապարակած տեքստից (տե՛ս «Արևմտահայ գրողների նամականի», Երևան, 1972, էջ 364): «...ապահովել կարենալու համար «Մասիս»ի գոյությունը» - 1908 թվականից «Մասիս»-ը, նյութական միջոցների բացակայության պատճառով, դադարեց լույս տեսնել:

Ծնողներին (էջ 54)

Առաջին անգամ տպագրվել է «Արևմտահայ գրողների նամականի»-ում (էջ 365): Ներկա ժողովածուի մեջ զետեղված է ինքնագրի տեքստը (ԳԱԹ, ՌԱՖ):

Կարեն Միքայելյանին (էջ 55)

Տպագրվում է առաջին անգամ՝ ըստ ինքնագրի (ԳԱԹ, Կարեն Միքայելյանի ֆոնդ): — «ինձմե բանաստեղծություն մը (անտիպ) տպեր էիր...» — Խոսքը «Ինչպես երբեմն» բանաստեղծության մասին է, որը, սակայն, անտիպ չէր, քանզի «Գարուն» ավանախից առաջ տպագրվել էր «Ազդակ»-ում:

Միրելի Գարեգին (էջ 55)

Տեքստը տպագրվում է ըստ առաջին հրապարակման («Նոր շարժում», 28 ապրիլի, 1923, էջ 109-110): Գարեգինը, հավանաբար, Սևակի՝ ուսանողական ընկերներից է: «terre à terre» (Ֆր.) - առօրյա, հասարակ: «sentimental» - զգայական, սենտիմենտալ: «prosaique» - անշուք, պրոզայիկ:

Միրելի Տիկին և Պարոն (էջ 57)

Տպագրվում է առաջին անգամ: Նամակը գրվել է ֆրանսերեն: Այս և հա-

ջորդ՝ ֆրանսերենով գրված բոլոր նամակների թարգմանությունը՝ ԱՐՐԱՀԱՍ ԱԻՔՅԱՆԻ: Ռ. Սևակի ֆրանսերեն գրված բոլոր նամակները թարգմանվել են արևմտահայերեն: Ըստ երևույթին այս քայլը դեռ որոշ ժամանակ կարոտ կլինի բացատրության, մինչև որ *ընտելանանք* այն պարզ տրամաբանությամբ, որ եթե Ռ. Սևակը ցանկանար միևնույն նամակները թարգմանել մայրենի լեզվով, ապա պիտի օգտագործեր միմիայն հարազատ արևմտահայերենը:

Սիրելի ծնողներս (էջ 59)

Նամակը հասցեագրված է Յաննի Ապպելի ծնողներին:

ՆԱՄԱԿՆԵՐ ՅԱՆՆԻ ԱՊՊԵԼԻՆ (ՍԵՎԱԿ) - (էջ 59-275)

Յաննի Ապպել (ամուսնությունից հետո՝ Սևակ) - Ռ. Սևակի կինը: Ազգությամբ գերմանուհի, սակայն ամուսնանալով Ռ. Սևակի հետ, վերցրեց ոչ միայն նրա գրական ծածկանունը, այլև արիաբար կիսեց հայ ժողովրդին բաժին ընկած պատուհասները և երբեմն ավելի հայ եղավ, քան շատուշատ ծնունդով ու արյունով հայորդիներ: Ծնվել է 1890 թ. Էրֆուրտում: Նախորդ նամակից իմանում ենք, որ Ռ. Սևակի հետ ծանոթացել է 1907 թ. հուլիսին՝ շվեյցարական լեռնային ամառանոց Շամբերիում: Այնուհետև, մինչև ամուսնությունը (1910 թ.) և որոշ շրջան դրանից հետո, նրանց միջև ծավալվել է ընդարձակ մի նամակագրություն, որն իր տեսակով անկրկնելի է հայ գրականության մեջ և որն առանց վարանելու կարող ենք համեմատել Չայկովսկու և Ֆոն Մեկկի, Բերնարդ Շոուի և Քեմբլեյի, Տուրգենևի և Սավինայի նամակագրությունների հետ: Ռ. Սևակը նույնքան մեծ է այս նամակներում, որքան իր լավագույն պատմվածքներում և բանաստեղծություններում: Բարեբախտաբար, պահպանվել է կնոջը հասցեագրված նամակների մեծ մասը: Դրանց թիվը երկու հարյուրից ավելի է: Պահպանված նամակների երեք քառորդից ավելին թարգմանված և զետեղված է այս ժողովածուի մեջ:

Յաննի Սևակը ամուսնու նահատակումից հետո հրաժարվեց ոչ միայն այցելել իր հայրենիքը՝ Գերմանիա, այլև, ականատեսների վկայությամբ, դադարեց խոսել գերմաներեն: Սա յուրատեսակ բողոք էր ընդդեմ Գերմանիայի, որն, ինչպես հայտնի է, անօրինակ ցեղասպանության ուղղակի հովանավորն էր: Յաննի Սևակը ֆրանսիական բեմի ճանաչված դերասանուհի էր, հրատարակել է բանաստեղծական մի շարք ժողովածուներ: Մահացել է 1967 թ. Նիցցայում և այդտեղ էլ թաղվել: Երկայումս Ֆրանսիայում են բնակվում բանաստեղծի որդին՝ Լևոն Չիլիսկիրյանը, Լիոն քաղաքում, ծնված 1912 թ., իսկ Նիցցայում դուստրը՝ Շամիրամը (Սեմիրամիս Ֆոլկոն), ծնված 1914 թ.:

1907 սեպտեմբեր (էջ 59) — «Percussion-ի և auscultation-ի դասընթացքներ: Ատկե զատ կհետևիմ obstétrique normale-ի դասընթացքներուն...» — Պերկուսիա, բախազննում (հիվանդի զննում մատների կամ փոքրիկ մրճիկի միջոցով): Աուսկուլտացիա, բուժունկնդրում: Մանկաբարձություն:

Սեպտ. 25 (էջ 67) - «Հայ նշանավոր դերասան մըն էր անոր խաղընկերը...» — Սառա Բեռնարի հետ իսկապես երկու հայ նշանավոր դերասաններ են

խաղացել: Հայկական Սովետական Հանրագիտարանն այդ մասին գրում է. «Հայ դերասաններից Ա. Արմենյանը Փարիզում մեկ թատերաշրջան աշխատել է Բ-ի (այսինքն՝ Բեռնարի,— Ա. Թ.) թատրոնում, իսկ Մ. Մաքսուտյանը «Էլիզաբեթ, Անգլիայի թագուհին» ֆիլմում նրա հետ խաղացել է գլխավոր դերերից մեկը» (հատոր 2, էջ 406): Սակայն հայտնի է, որ Մաքս Մաքսուտյանը Ա. Բեռնարի խաղընկերն է եղել նաև բեմում: Նա մի քանի տարի շրջագայել է Ս. Բեռնարի խմբում և կատարել գլխավոր դերեր, այնպես որ, ամենայն հավանականությամբ, Ռ. Սևակը նկատի ունի Մ. Մաքսուտյանին:

Դեկտ. 12 (էջ 80) — «Ասիկա շրթներուդ համար, որ վառեցին սիրտս: Ասիկա ուսերուդ համար, զոր օրորեցի թևերուս մեջ»:— Ռ. Սևակը իր գրեթե բոլոր նամակների վերջում կլոր օղակներ է գծել, այսպես ասած, իր համբույրներն է ուղարկել ավելի տեսանելի ձևով:

1908, Հունիս 27, Շաբաթ իրիկուն (էջ 97) — «Տան տյու Միտիի վես գագաթներուն առջև միս-մինակս տոնեմ այդ անմահական հուլիս 17-ը...»— 1907 թվականի հուլիսի 17-ին Ռ. Սևակը և Յաննի Ապպելը ծանոթացել են շվեյցարական ամառանոց Շամբերիում: Սևակն այնուհետ այդ օրը պիտի համարի իր կյանքի ամենաերջանիկը: «Տան տյու Միտի» Շվեյցարիայի միջին բարձրության գագաթներից է: Ինչպես երևում է նամակներից, Ռ. Սևակը բավական լրջորեն հրապուրված է եղել ալպինիզմով: Տես «Նամակներ Պ. Մ.-ին», «1907, օգոստոս 26» նամակը:

Հուլիս 20 (էջ 106) — «Հուլիս 14-ի մեծ տոնը» — Ֆրանսիայի ազգային տոնի՝ Բաստիլի գրավման օրը: «... և անոնք ինձնե խնդրեցին, որ անհապաղ երթամ Նիս և պարզեմ խնդրի էությունը» — Ռ. Սևակը փաստորեն շարադրում է իր արձակ երկերից մեկի՝ «Կես խենթը», ստեղծագործական նախապատմությունը: «Մայլենտ» — իտալական Միլան քաղաքի գերմաներեն արտասանությունը:

Հուլիս 27 (էջ 111) — «Թյուրինժի անտառները...»— Թյուրինգիայի ֆրանսերեն արտասանությունը:

1909, Ապրիլ 17 (էջ 137) - «... ինչո՞ւ սիրեցիր զիս» — Ռ. Սևակի «Ինչո՞ւ» բանաստեղծության նախնական տրամադրությունը:

Մայիս 20 (էջ 144) - «Անցյալ օր Կոստանդնուպոլսեն հայ բանաստեղծ մը ինձի այցելելու եկավ Լոզան» - Խոսքը, հավանաբար, Սիամանթոյի մասին է, որը 1909 թ. եվրոպայով մեկնեց Միացյալ Նահանգներ:

Հունիս 9 (էջ 149) - «Հրանդն ու Լենան...» - «Հրանդը» Հրանտ Նազարյանն է, իսկ «Լենան», հավանաբար, Հր. Նզարյանի կինն է:

Հուլիս 23, 1909, առտուն (էջ 153) — «Աստված գիտե...» — Այստեղ նամակից մի էջ պակասում է, որը հնարավոր չեղավ գտնել Ռ. Սևակի թղթերի մեջ: «Կյանքը: Արևմուտքին մեջ այս բառին առջև կոչեն խոշոր հարցական նշան մը (?), իսկ Արևելքին մեջ՝ կախման երեք կետեր անմուռնչ (...):» — Այս միտքը կրկնվում է Ռ. Սևակի «Մարդերգություն» պոեմի «Գյուղական ճամփուն վրա» գլխի մեջ (Գ. հատված, 1-4 տողերը): «Համբույր մը բու Ռյուբինսեն» — Յաննիին գրված նամակներից շատերը Ռ. Սևակը ստորագրել է՝ Rubins.

Երեքշաբթի 3.8.1909 (էջ 155) — «Մեծ շուկան, Շահ-Ջաուե փողոցն, Թըրքական սրճարանը... Լազերուն պարը... Թրքական հարեմի գրեսանքը...» — Այս նամակը գրված է մի քանի բացիկների վրա, որոնք պատկերում են թվարկված տեսարանները: «Եվ ինչ ալ ըսեն, հավատայե չեմ դադրիր բնավ, որ այստեղ է աշխարհի ամենահանգիստ ժողովուրդը: Հակառակ ջարդերուն, հակառակ խճճություններուն, հակառակ ամեն ինչի, այստեղ ամենաշար մարդը սիրելի բան մը ունի»:— Ռ. Սևակի և այդ տարիների արևմտահայ մի շարք գործիչների միամիտ լավատեսության օրինակներից մեկը: Ի դեպ, այս նույն՝ 1909 թ. է ստեղծվել «Կարմիր գիրքը», «ՌՎ իմ Հայրենիքս...» և «Կիլիկյան երգեր» բանաստեղծությունները, որոնք Կիլիկիո ջարդերի անմիջական ծնունդն էին: Դժվար է բացատրել այս լավատեսության պատճառները, հատկապես Ռ. Սևակի պարագայում: Գուցե չի ցանկացել իր նշանածի, ապագա կնոջ աչքերում աննպաստ կարծիք ստեղծել այն քաղաքի մասին, որտեղ մտադիր էր նրա հետ անցկացնել իր հետագա կյանքը:

Նոյեմբեր 23, Երեքշաբթի, 1909 (էջ 179) — «Հույս ունիմ, սակայն, որ օր պիտի գա, երբ այդ տղայական հովերդ ծաղրելու լայնախոհ փիլիսոփայության պիտի կրնաս հանգիլ» — Ինչպես երևում է այս և հետագա մի շարք նամակներից, Յաննիի դերասան դառնալու լուրը ձգտումների շուրջ ծավալվել է մի իսկական բանավեճ, որը տեղ-տեղ, քիչ է մնում խզումի տանի այս մաքուր սերը: Սակայն ինչպես երևում է նամակներից և ժամանակակիցների մի շարք վկայություններից, Յաննին, հանուն ընտանեկան երջանկության, Ռ. Սևակի կենդանության օրոք իր մեջ պարզապես խեղդել է թատրոնի սերը:

Հունվար 8, 1910 (էջ 193) — «Առաջին բանաստեղծությունը, զոր քեզի եմ ձոնած, այսպես կսկսի» — «Դուն Հրա՛ջքն ես, դուն Երա՛զն ես, դուն Սե՛րն ես» — Ռ. Սևակի «Գինով սեր» բանաստեղծության առաջին տողը:

19.1.1910 (էջ 196) — «Հրատարակիչես նամակ մը առի, թե գիրքիս տպագրությունը գրեթե վերջացած է...» — Խոսքը «Կարմիր գիրքը»-ի մասին է:

Հունվար 27, 1910 (էջ 200) — «Օլտ-Ինտիա» եմ...» - Տե՛ս Ռ. Սևակ, Երկեր, հ.1, 1995 թ. «Իտեալ կինը» բանաստեղծության ծանոթագրությունը:

Մարտ 12, 1910, շաբաթ առավոտ (էջ 209) - «...լեցուն համբույրի շրջանակներով...» — Տե՛ս 1907 թ. դեկտ. 12 նամակի ծանոթագրությունը:

Մարտ 17, 1910, հինգշաբթի առավոտ (էջ 211) — «... Դերկոմս տը Վոկյունեի «Ժան տ'Ակրև» — Դերկոմս կամ Վիկոնտ Եոժեն Մելքիոր դը Վոգյունեն (1848-1910), ֆրանսիական գրականությանը հայտնի է ավելի շատ որպես ռուս գրականության պրոպագանդիստ («Ռուսական վեպ» 1886 թ., «Մաքսիմ Գորկի» 1905 թ. մենագրություններ): Նշված վեպի վերլուծությունը և համառոտ վերապատմումը, ըստ էության, ակամա բանավեճի է վերածվում Ռ. Սևակի կողմից: «Բայց ըստ ինքյան, այդ նամակները ձանձրալի են ինծի համար ինչպես Վերթերի նամակներուն մեծամասնությունը: Ինչո՞ւ: Որովհետև հնարովի են: Երևակայական: Պիտի ըսեի՝ նույնիսկ ծիծաղելի: Այդ նամակները երբեք գոյություն չեն ունեցած: Հեղինակը ինքը գրած է զանոնք գիրք մը

լեցնելու... համար»։ Կարող է նույնիսկ մեծամիտ թվալ այս դիտողությունը, բայց Ռ. Սևակն ինքը շտապում է բացատրել իր այս դիրքորոշումը. «...Եթե ես ինծի իրավունք կուտամ քիչ մը քննադատելու համընդհանուր հիացման արժանացած այդ շատ հռչակված գրքերը, պատճառն այն է, որ մարդիկ մեծավ մասամբ չեն ճանչնար բուն սերը,... միայն գիրքերուն մեջ են կարդացած սիրային նամակները»։ Կենդանի սիրով ապրող բանաստեղծը հրաշալի գիտակցում էր, որ իր նամակագրությունն ակամայից դառնում է մի սիրավեպ և, բնականաբար, ակամա բանավեճի մեջ մտնում «գրական» սիրավեպերի հետ։

Ապրիլ 11, 1910 (էջ 218) — «Որքան դժբախտ պիտի ըլլաս դուն ինծի հետ, իմ խեղճ պզտիկ Յաննիս: Եվ ինչո՞ւ կսիրես զես» — Մշտական գործող մի օրինաչափություն կա Ռ. Սևակի՝ Յաննիին գրած նամակներում. ամեն ինչ միշտ ներկայացնել երջանկության, բախտավորության, սիրո գեղեցիկ ու անսպասելի կարևորների մեջ։ Բնավ պատահական չէ, որ, օրինակ, Կիլիկյան թեման (որն, ինչպես գիտենք, լիովին շրջեց ու փոխեց բանաստեղծին) գրեթե ոչ մի բառով չի արտահայտվել իր նշանածին գրած նամակներում։ Սևակն ամեն կերպ խնայել է նրան պատուհասի և դժբախտության նկարագրություններից։ Անգամ արյունոտ թուրքական իրականությունը ցանկացել է ներկայացնել տարաշխարհիկ Արևելքի նպաստավոր լույսի ներքո։ Այսբանից հետո անվազն տարօրինակ է նման նախադասության ներկայությունը այս նամակում, այն էլ ամուսնությունից երկու ամիս առաջ։ Հիշենք, որ «Ահազանգերը» բանաստեղծությունը գրվեց դեռևս Կիլիկյան դեպքերից առաջ։ Բանաստեղծի մեջ արդեն խոսում էր ապագա արհավիրքները տեսնող մարգարեն, և որքան էլ ձգտեր իր սիրեցյալին խնայել հայտնության պատկերներից, այնուամենայնիվ, մեկ-երկու նախադասություն պիտի սպրդեր։ Թերևս այս լույսի ներքո պետք է կարդալ «Ինչո՞ւ» բանաստեղծությունը. մեղքի զգացում նախապես կործանված մատղաշ ճակատագրի համար, արհավիրքների կանխատեսում և իր ողբերգական սերն այդ արհավիրքների մեջ։

Մայիս 13, 1910, առավոտ (էջ 226) — «... որովհետև ես Մահը տեսա քու ետիդ ու սարսռացի...» — Միևնույն տրամադրությունը, ինչ Ապրիլ 11-ի նամակում էր։

Երկուշաբթի, Փետրվար 19, 1912 (էջ 231) — «Տյովլեթյանը...» — Ռ. Սևակի ուսանողական ընկերներից մեկը, որի անունը հաճախ է հիշատակվում նամակներում։ «Պյոթլին» — Աննուլո Բյոթլին (1827-1901), շվեյցարացի նշանավոր նկարիչ, որի ստեղծագործությունների հետ որոշ առնչություններ ունի Ռ. Սևակի պոեզիան (մահվան մոտիվը)։ «Պալ» — շվեյցարական Բազել քաղաքի ֆրանսերեն արտասանությունը Bâle.: «Այս վոցիները...» — շվեյցարական Վո (Vaud) կանտոնի բնակիչները։

Փետրվար 26, 1912, Երկուշաբթի և Ուրբաթ իրիկուն (էջ 233 և 239) - Այս նամակները արևելահայերեն թարգմանությամբ առաջին անգամ լույս են տեսել «Արևմտահայ գրողների նամականի»-ում (էջ 371-373 և 365-367)։

Չորեքշաբթի (էջ 234) — Առաջին անգամ, արևելահայերեն թարգմանությամբ, լույս է տեսել «Արևմտահայ գրողների նամականի»-ում (էջ 367-368)։

«Պեռնշթայն» — Հանրի Բերնստայն (1876-1953), ֆրանսիացի դրամատուրգ:
«Շաթրիան» — Պետք է լինի Էրկման-Շատրիան: Այս անվան տակ հանդես էին
գալիս ֆրանսիացի երկու գրողներ՝ Էմիլ Էրկմանը (1822-1899) և Ալեքսանդր
Շատրիանը (1826-1890):

«Ռեմին... Ժիլտա... դ'Ասիլվան»... — Ամենայն հավանականությամբ, այդ
տարիների ճանաչված դերասաններ: «Օքթավ Միրպո» — Օկտավ Միրբո
(1848-1917), ֆրանսիացի վիպասան, թատերագիր: «Լ Ազնավուրյան» — Լե-
վոն Ազնավուրյան, նկարիչ, Ռ. Սևակի մտերիմ ընկերներից մեկը: Շնորհիվ Լ.
Ազնավուրյանի պահպանվել են Ռ. Սևակի մի շարք լուսանկարներ (տես Կ.
Գեորգյանի «Ամենուն Տարեգիրքը», 1965, էջ 126-130):

Իմ սիրելիագույն կինս... (էջ 237) — Առաջին անգամ տպագրվել է «Արև-
մտահայ գրողների նամականի»-ում (էջ 369-370): Գոհար Ազնավուրյանի են-
թադրությամբ այս նամակը գրվել է 1912 թ. ապրիլ-մայիսին: «Փեբոս» - Ապոլ-
լոնի մակդիրը, լույսի, արվեստի աստված:

Հինգշաբթի իրիկուն (էջ 238) - Առաջին անգամ տպագրվել է «Արևմտահայ
գրողների նամականի»-ում (էջ 373-374):

Շաբաթ (էջ 241) — «...մեր պաշտելի Փեբոսը» - Ռ. Սևակը նկատի ունի իր
զավակի սպասվելիք ծնունդը:

Շաբաթ, մարտ 23, 1912 (էջ 244) — Առաջին անգամ տպագրվել է «Արև-
մտահայ գրողների նամականի»-ում (էջ 370-371): «Փեբոսը քեզ պիտի ողջունե
Մայիսին...» - Դարձյալ ակնարկում է որդու սպասվող ծնունդը:

Հունիս 17, 1915 (էջ 274) — Առաջին անգամ տպագրվել է 1985 թ. ժո-
ղովածուկի մեջ: Ինքնագիրը պահպանվում է հեղինակի ֆոնդում (ԳԱԹ, ՌՄՏ,
չմշակված բաժին): Ռ. Սևակի վերջին նամակներից մեկն է՝ ուղարկված աքսո-
րավայրից, Չանդրըրից: Յաննիի նամակից իմանում ենք, որ Սևակն աքսորա-
վայրից կնոջ հասցեով ուղարկել է տասը քարտ:

15/28 հուլիսի, 1915 թ. (էջ 274) - Աքսորավայրից ուղարկած նամակ:
Տեքստը վերցրել ենք Հովհաննես Չիլինկիրյանի «Ռուբեն Սևակ և «Փրցվելիք
ուղեղներ» գրքից (Փարիզ, 1985 թ., էջ 65): Այս, ինչպես մյուս նամակները՝
ուղարկված Չանդրըրից, գրված են թրքերեն: «Վարուժանը ընտանիքեն նա-
մակ չստանար...» — Դանիել Վարուժանը ևս Չանդրըր էր աքսորված:

«Պոլիս, Բանկալթի Նալպանտ փողոցը բնակող՝ Տիկին Չիլինկիրյանին
(էջ 275) — Ռ. Սևակի ձեռքով գրված վերջին տեքստն է: Հեռագիրը՝ թրքե-
րեն, ուղարկվել է նահատակումից մեկ օր առաջ: 1915 թ. օգոստոսի 17/30-ին,
այսինքն, Ռ. Սևակի բարբարոսական սպանությունից չորս օր հետո, Յաննի
Սևակը պատասխան էր ուղարկում իր ամուսնուն, չիմանալով, որ այդ նամակը
տեղ չի հասնելու. «Բանկալթի, 17 օգոստոս, 1915, Պաշտելի Ռուբեն, Ստացա
տասներորդ քարտդ: Բայց ինձի կթվի, թե դուն չես ստացած իմ բոլոր նա-
մակներս կամ քարտերս, զորս միշտ բըքումանտե (պատվիրված — Ա. Թ.)
կղրկեմ քեզի: Եթե ասիկա այսպես շարունակվի, պիտի բողոքեմ նամակատան
կամ կառավարության: Գոհ եմ որ լավ ես: Ես, շաբաթե մը ի վեր, շատ վատ

կզգամ ինքզինքս: Պատճառը հուսահատությունն է, որ կողողե գիս: Հոս շատ մը բաներ տեղի կունենան: Կերջապես կհուսամ, որ թշնամին պիտի բնացնջվի շուտով, որպեսզի միանգամընդմիշտ վերջանա այս պատերազմը: Ռեժիսն ստացա՞ր 9 թրքական ոսկին: Գրեցի՞ր Կեթրմայանին: Գրեցի՞ր Օսման պեյին, ափարթըմանին համար: Ես կձգեմ այս ափարթըմանը, տասնոց չունիմ վարձքը վճարելու համար: Դեռ չեմ գիտեր, թե ինչ պիտի ընեմ փոքրիկներուն հետ: Հոգ մի ընե: Ես միշտ կխորհիմ, որ մեր կառավարությունը չի կրնար այսպես պատժել այսքան անմեղ մարդիկ, որոնք իրեն հնազանդելեն զատ ուրիշ բան չեն ըրած և որոնք հանդարտ ու խելացի մարդիկ էին, ինչպես մենք ենք: Ջարհուրեյի է տառապանքս: Բարեբախտաբար տղաքը բան չեն գիտեր և առողջ են ու զվարթ: Եվ շատ մը ուրիշներու հետ բաղդատելով, մենք տակավին ամենեն դժբախտները չենք:

Ա՛խ, Ռուբեն, սիրույն պետք է կառչիլ, ան է միայն, որ կրնա մեզ պահել: Կպաշտեմ քեզ, իմ շնտ սիրելի Ռուբենս և կորկեմ հազար քաղցր համբույրներ Լևոնին և Շամիրամին կողմե, որոնք երկուքն ալ կքնանան հիմա, հրեշտակներու պես, սերերու պես: Քու Յաննիդ» (տեքստը վերցված է Կարո Գեորգյանի «Ամենուն Տարեգիրքը»-ից, 1965, ԺԲ Տարի, Պեյրուօ, էջ 129-130):

Յ. Սևակը պատկերացնել անգամ չէր կարող, թե ինչ է կատարվել իր ամուսնու հետ, ուստի այս նամակից չորս օր հետո, 21 օգոստոսին, գրում էր մեկ ուրիշ նամակ. «21 օգոստոսի /3 սեպտեմբերի, 1915 թ. Շատ սիրելի Ռուբենս, ահա կրկին շաբաթ մը ևս քեզմե առանց լուրի: Հուսամ թե հանգիստ ես սակայն: Եթե երկու ամիս ևս հեռու մնաս ինձմե, թոքախտ պիտի ըլլամ, այնքան որ հոգնած եմ: Լևոնը շատ լավ է, սանտալներ կհագնի առանց գուլպայի, թուրքերենը և գերմաներենը շատ լավ կխոսի հիմա և այնքան ուժեղ է, որ Շամիրամը կշակե արդեն: Այս վերջինը շատ համառ է, բայց շատ գեղեցիկ: Իրենք երկուքն ալ քու աղվոր աչքերդ ունին: Մավրոբուլոսին հետ կարգադրեցինք (տերն այն բնակարանի, որը վարձում էր Սևակ ընտանիքը — Ա. Թ.): Դուն գրեցի՞ր Կեդրոնականին: Մայրս կհամբուրե քեզ. մենք բոլորս ջերմ համբույրներ կորկենք քեզի:

Շատ գեղեցիկ բանաստեղծություններ կգրեմ և այնքան կցավիմ, որ չես կրնար թարգմանել:

Պատիկները միշտ պարտեզն են: Կ'ապրինք այսպես ու այնպես: Կհուսամ քեզ վերստին տեսնել. թող Աստված այդ շնորհը ընե՝ մեզի: Միշտ պիտի սիրեմ քեզ, Աստված ալ: Քու Յաննիդ» (Տեքստը վերցված է «Հուլիաննես Չիլինկիրյան. Ռուբեն Սևակ և...» Փարիզ, 1985 թ. էջ 70): Տիկին Սևակի այս վերջին քարտը՝ գրված իր ամուսնուն, վերադարձել է հետևյալ վերտառությամբ. «Մեկնած է առանց հասցե ձգելու» (Parti sans laisser d'adresse): Երիտթուրքերի կառավարությունը դիմում էր ամեն տեսակ կեղծիքների՝ ծածկելու համար իր ռճրագործության հետքերը:

Իսկ իրողությունը հետևյալն էր: Օգոստոսի 26-ին Ռուբեն Սևակին, Դանիել Վարուժանին և ուրիշ երեք հայ աքսորյալների (Օննիկ Մաղազաճյան, Վահան

Քեհյայան և Հարություն անունով մի հացթուխ) Չանդըրըից մեկ այլ տեղ տանելու պատրվակով կառք են նստեցնում: Թյունեյի մոտ գտնվող Թեքե Բուրնույ ձորում, երիտթուրքերի կողմից վարձված տասը մարդասպաններ գազանաբար մորթում են նրանց: Պահպանվել են մի շարք փաստաթղթեր ու վկայություններ, որոնցում անհերքելիորեն ապացուցվում է այս ոճրագործության կանխամտածված բնույթը (Մ. Շամտանճյան. Չանդըրըն վերհուշումներ. Հուշարձան Ապրիլ Տասնմեկի. 1920, 4. Պոլիս, «Կառապանի մը պատմությունը». «Հայկաշեն տարեգիրք». 1922, էջ 319, Արամ Անտոնյանի վկայությունները. Կարո Գեորգյանի «Ամենուն Տարեգիրքը». 1959, էջ 134 և 1960 թ. հատորը՝ էջ 223, Բյուզանդ Քեչյան. Դրվագ աքսորի շրջանեն. Թեոդիկ. «Ամենուն Տարեցույցը». 1922, էջ 41, Հովհան Կարապետյան. «Էջ մը աքսորի հիշատակներես». «Զվարթնոց». Նոր շրջան. Բ. տարի. 1957, թիվ 1-2, 3-4, 5-6): Ռ. Սևակի նահատակման փաստերին է անդրադառնում նաև Կ. Պոլսի գերմանական դեսպանատան զեկուցագիրը՝ հասցեագրված կայսերական վարչապետին (ռայխսկանցլերին): Այդ փաստաթուղթը որոշ կրճատումներով տպագրված է Յոհաննես Լեպսիուսի «Deutschland und Armenien. 1914-1918. Sammlung diplomatischer aktenstücke. 1919» գրքի մեջ (էջ 163): Ահա այդ փաստաթուղթը՝ արևմտահայերեն թարգմանությամբ.

«Առ Կայսերական Վարչապետ

ԱՅ1521 (Մուտքի թիվ՝ Նախարարության)

111/18547 (Ելքի թիվ՝ Դեսպանատան)

Գերմանական կայսերական դեսպանատուն

Բերա, 5 հոկտ. 1915

Բժիշկ Ռուբեն Չիլինկիրյանը, որ այստեղի հայ շրջանակներու մեջ ծանոթ անձնավորություն մըն է, ուրիշ շատ մը հայերու հետ Ապրիլ 24-ին ձերբակալվեցավ Անատոլու աքսորվելու նպատակով (դեսպանատունը սխալվում է, Ռ. Սևակը ձերբակալվել է ավելի ուշ — Ա. Թ.): Նախապես որոշված էր, որ ան Անքարայի մոտ՝ Այաշ աքսորվի, տեղ մը, ուր կպահվին և մասամբ ոստիկանական հսկողության տակ կգտնվին ավելի ծանր կերպով մեղադրվողները: Դեսպանատան միջամտության շնորհիվ ան Չանդըրըի (Անքարա) մեջ արգելափակվեցավ, ուր արգելակյալները կրնան ազատ կերպով ման գալ և իրենց արհեստները կիրարկել:

Տիկին տոքթ. Չիլինկիրյան և մայրը՝ Տիկ. Աբել այնուհետև աշխատեցան ենթակայի վերադարձը՝ և ապա իր Գերմանիա հաստատվիլը ապահովել: Թուրք կառավարական պաշտոնյաները երկու առաջարկներն ալ մերժեցին, սակայն այն առարկությամբ, որ (ինչպես կհետևի խնդրո առարկա պաշտոնյաներու արտահայտություններեն) տոքթ. Չիլինկիրյան կնկատվի իբրև մեկը այն մտավորականներեն, որուն՝ զանգվածներու վրա ունեցած ազդեցութենեն կվախցվի: Տիկին Աբել դեսպանատան մեջ պնդած էր, որ ոստիկանական ընդհանուր

տնօրեն Պետրի պեյ ըսած էր, թե ապահով պայմաններու տակ Գերմանիա ճամփորդելու արտոնություն կրնար տրվիլ իրեն՝ Տոբթորին: Երբ Կայսերական դեսպանատունեն պաշտոնյա մը Պետրիի հարցուց, թե իրա՞վ էր ասիկա, ան բացարձակ կերպով հերքեց այդպիսի արտահայտություն մը ունեցած ըլլալը:

Վերջապես երկու տիկիները փորձ մըն ալ ըրին տոբթ. Չիլինկիրյանի Անքարա մնալու արտոնություն ձեռք ձգելու ուղղությամբ՝ այն պահուն, երբ իրմե 26 օգոստոսին հեռագիր մը ստացան, ուր կծանուցաներ, թե զինքը նույն օրը Այաշ պիտի փոխադրեին: Դեսպանատան գրավոր դիմումին վրա, ներքին գործոց նախարարությունը հեռագիրով հրահանգ տվավ, որ վերոհիշյալը Չանդըրըի մեջ թողուն և եթե ճամփա հանված է՝ զինքը հող վերադարձնեն: Այս հեռագրին ի պատասխան, օգոստոս 30-ին, Չանդըրըի կառավարիչը կծանուցաներ, թե տոբթ. Չիլինկիրյան ամսույն 26-ին Չանդըրեն մեկնած, Գալեճիքի մոտերը ասպատակներու կողմե հարձակոմի ենթարկված և սպաննված էր և թե 12 ասպատակներեն 4-ը իշխանություններու կողմե ձերբակալված էին»:

Այստեղ վերջանում է Լեպսիուսի գրքում բերված փաստաթուղթը: Սակայն, Հովհ. Չիլինկիրյանի պրպտումների շնորհիվ պարզվեց, որ այս փաստաթուղթը ունի շարունակություն, որը դուրս է մնացել վերոհիշյալ ժողովածուից. «...ասոր վրա, Կայսերական Դեսպանատան ընծայած օգնությամբ, որուն համար Դեսպանատունը Կայսերական ընդհանուր Հյուպատոսարանի հետ շփման մեջ մտած էր, Տիկին Չիլինկիրյանը իր մորը՝ Տիկ. Աբելի և երկու զավակներուն հետ նախորդ ամսու 16-ին, առանց թուրք իշխանություններեն նեղություն կրելու, Գերմանիա մեկնեցան:

Դեսպանատան դիմումին վրա ներքին գործոց նախարարությունը հրահանգ ուղարկեց ստուգելու համար մեռյալի մոտ գտնված արժեքավոր իրերը և առարկաները և այրիին վերադարձնելու նպատակով՝ հոս դրկելու ինչ որ կարելի ճլլար տակավ ձեռք ձգել:

Երբ Տիկ. Աբել իր ամուսնույն դրկած տեղեկություններուն մեջ կ'ակնարկե, թե Դեսպանատունը «որոշ չափով», ըստ իր ըմբռնումին, ոչ գոհացուցիչ կերպով օգնություն ընծայած է իրեն և դստեր, ան աննկատ կթողու այն պարագան, որ Դեսպանատունը իր դստեր և փեսային համար միայն անպաշտոն սահմանափակումներու կրնար դիմումներ ընել թուրք կառավարության մոտ, քանի որ երկուքն ալ թրքահպատակ էին: Այս ուղղությամբ Դեսպանատունը ոչ մեկ բան զանց առած է, և մինչև իրենց մեկնումը, Տիկ. Աբել և իր դուստրը, իրենց բոլոր գործառնությանց մեջ, թե խորհրդով և թե գործով օգնություն ստացած են:

Փոխանորդաբար
Ֆրայիեր Ֆոն Նոյրաթ

Պերլին, 27 հոկտ. 1915

Լոզանի Կայսերական Հյուպատոսին ի գիտություն կիսնդրվի նաև, որ հանգստյան կոչված՝ թոշակավոր Ֆրանց Աբելին (Յաննի Ապպելի հայրը — Ա. Թ.), որ անցյալ ամսույն մեզի դիմած էր և ներփակյալը ուղարկած ու ատոր վերադարձվիլը խնդրած էր, տեղյակ պահեք իր ազգականներուն ի նպաստ՝ Պոլսո Կայսերական Դեսպանատան առած քայլերեն և եթե հնարավոր է, արդյունքը իրեն բերանացի հաղորդեք:

Կայսերական Կարչապետի հանձնարարությամբ
Շմիթ-Տարկից»:

Այս փաստաթղթերի պաշտոնական գրանցման թիվը և վայրը հետևյալն է.
Turkei 183. Band 39. A 31521. von Neurath to (կամ) a Reichskanzler.
Oct. 5-1915 (Bonn, Auswärtiges Amt. Politisches Archiv):

Դիվանագիտական այս խաղի աստառը իսպառ բացելու համար, գուցե պետք է համառոտակի պատմել «համեստ» մասնակիցներից մեկի՝ Ֆրայիեր Ֆոն Նոյրաթի կյանքի և հետագա գործունեության մի շարք դրվագները: Մինչև 1922 թ. այս ազնվական դիվանագետը դեռևս մնում է Գերմանիայի արտաքին քաղաքականության համեստ սպասավորներից մեկը: Այնուհետև անհետանում է ասպարեզից: Տասը տարի անց, Հիտլերի հայտնվելուց հետո, հայտնվում է և Ֆոն Նոյրաթը՝ ոչ ավելի, ոչ պակաս, որպես ֆաշիստական Գերմանիայի արտաքին գործոց նախարար: Այնուհետև իր կարևոր պաշտոնը զիջում է Ռիբենտրոպին, քանզի հովանավորը նոր, ոչ պակաս կարևոր գործի է նշանակում Ֆոն Նոյրաթին՝ Բոհեմիայի և Մորավիայի գառուլայտեր:

Սա 1938-ին էր, այսինքն, Չեխոսլովակիան դավադրաբար նվաճելուց հետո: Կապույտ արյուն ունեցող այս դիվանագետը գուցե ընդմիջտ թաղվեր պատմության վարի շերտերում և, չնայած իր կարևոր պաշտոններին, չհիշվեր, մոռացվեր ու գնար: Սակայն Ֆոն Նոյրաթն այստեղ հանդես եկավ մի նոր մասնագիտությամբ, որը եթե հիշենք Ռ. Սևակի պատմությունը, այնքան էլ նոր չէր. ամբողջ մարդկությունը գիտի չեխոսլովակյան Լիդիցե գյուղի ողբերգությունը: Այդ ողբերգության հեղինակն է Ֆրայիեր Ֆոն Նոյրաթը: Այս «սխրանքի» համար ազնվական դիվանագետն ու դահիճը ընդամենը տասնըհինգ տարվա բանտարկություն ստացավ Նյուրնբերգի դատավարությանը: Հիշենք, որ Ֆոն Նոյրաթի ուսուցիչները՝ երիտթուրքերը, այդ դատարանում մեղադրվողի դերում չէին:

Բովանդակություն

Նամակներ	5
Դանոթագրություններ	276

ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿ

ԵՐԿԵՐ

Հատոր 2

Խմբագիր՝ **Հ. Խ. Բողարյան**
Տեխն. խմբագիր՝ **Ռ. Ե. Ախիրյան**
Սկզբիչ՝ **Խ. Հ. Գյուլամիրյան**
Գեղ. խմբագիր՝ **Գ. Խ. Գյուլամիրյան**

Հանձնված է շարվածքի 23. 10. 1996 թ.: Ստորագրված է տպագրության 12. 12. 1996 թ.:
Չափսը՝ 60x84 1/2, Թուղթ՝ օֆսեթ: Տառատեսակը՝ «Արարատ»: Տպագրությունը՝ օֆսեթ: Պայմ.
16.74 մամ., հրատ. 15,56 մամ.: Տպաքանակը 1000: Պատվեր 3:

«Լույս» հրատարակչություն, Երևան - 9, Իսահանյան - 28

Աշտարակի տպարան

CONFÉDÉRATION SUISSE



CANTON DE VAUD

Arrondissement d'Etat civil de Lausanne

EXTRAIT DU REGISTRE DES MARIAGES



le seize juillet mil neuf cent dix
à Lausanne.

Schilinkirian, Nupen

Etudiant domicilié à Lausanne

- sujet ottoman
catholique

Apell, Hélène - Maria - Anna

domiciliée à Exfel

le seize juin mil huit cent quinze vingt dix

à Lausanne
Pour copie conforme:
le 19 juillet 1910



L'OFFICIER DE L'ETAT CIVIL

[Signature]